

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013

ՀԱՏՈՐ VII

Երևան  
Փրինտինգ  
2014

ՀՏԴ 347(479.25) : 342.9(479.25)  
ԳՄԴ 67.99(2Հ)3 + 67.99(2Հ)1  
Հ 247

Հ 247 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի  
քաղաքացիական և վարչական գործերով որոշումների ընտրանի  
(հունվար-դեկտեմբեր 2013). -Եր.: Փրինթինֆո, 2014.  
Հատոր VII. –712 էջ:

Կազմող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական  
փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ **Աշխեն Ղարսյան**

Որոշումների դասակարգումները տրամադրվել են **ARMLAW** դատական ակտերի  
որոնման համակարգի կողմից

ՀՏԴ 347(479.25) : 342.9(479.25)  
ԳՄԴ 67.99(2Հ)3 + 67.99(2Հ)1

**ISBN 978-9939-831-63-3**

© Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան, 2014  
© Աշխեն Ղարսյան (բովանդակության համար), 2014



german  
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

**giz** Deutsche Gesellschaft  
für Internationale  
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Հարավային Կովկասում իրավական և դատական  
բարեփոխումների համար խորհրդատվություն»  
ծրագիր

**Programm "Rechts- und Justizreformberatung im Südkaukasus"**

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային  
համագործակցության ընկերության (GIZ)  
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,  
որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները

---

---

# ՆԱԽԱԲԱՆ

*Նախադեպը հավերժացնում է սկզբունքը:  
Բենջամին Դիզրայելի*

Արդարադատությունը յուրաքանչյուր պետության անսասան հիմքն է, իսկ կանխատեսելի արդարադատությունն իրավական պետության կարևորագույն նախապայմանը:

Որքան էլ օրենսդիրը կատարելապես իրացնի իրեն վերապահված օրինաստեղծ գործառույթը, օրենքների մեկնաբանման անհրաժեշտությունն անխուսափելի է: Այն անմիջականորեն թելադրված է հասարակական հարաբերությունների շարունակական զարգացման գործընթացով, որը, որպես կանոն, բացառում է որևէ հարցի վերաբերյալ սպառիչ իրավակարգավորումը: Մյուս անհրաժեշտությունը պայմանավորված է նաև օրինաստեղծ գործընթացում գնահատողական բնույթի (օրինակ՝ բարելսիդճ, ողջամիտ, ծանր գույքային դրություն, անհրաժեշտ շրջահայացություն, էական շահ, պատահական կորուստ, կեղծ փաստաթուղթ և այլն) հասկացությունների առկայությամբ, ինչը իրավակիրառ պրակտիկայում, հատկապես դատական գործերով բավականին խնդրահարույց է: Օրենսդրական կարգավորման բացթողումները, անորոշ ձևակերպումները կամ երկակի մոտեցումները, սակայն, չեն կարող ստվերել անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացումը, որպիսի խնդրի լուծումը ժամանակակից քաղաքակիրթ պետությունները փորձում են իրականացնել բարձրագույն դատական ատյանների բուն արդարադատության իրականացումից զատ օրենքների միատեսակ կիրառության և միասնական դատական պրակտիկայի ապահովման գործառույթ վերապահելով:

Հայաստանի Հանրապետությունը ևս, համընթաց քայլերով ժամանակակից աշխարհի իրավաքաղաքական փոփոխություններին, 2005 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում Վճռաբեկ դատարանին, որպես ՀՀ բարձրագույն դատական ատյանի, վերապահեց օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթ, որը ենթադրում է համապատասխան նյութական կամ դատավարական իրավանորմի կիրառման հարցում միասնական դիրքորոշման ձևավորում, որը նույնանման փաստական հանգամանքներով գործերի քննության ժամանակ պարտադիր է ստորադաս դատարանների համար:

Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթից բխում է նաև իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը, որն առաջնահերթ դրսևորվում է նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների հետագա զարգացմամբ:

2013 թվականն այս առումով շրջադարձային էր: Քաղաքացիական գործերով նախկինում կայացրած բազմաթիվ որոշումներում Վճռաբեկ դատարանը հանգամանակից անդրադարձել էր ձեռքբերման վաղեմության ինստիտուտին՝ վերլուծելով այն նախապայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է նշված հիմքով սեփականության իրավունքի ծագման համար: Հաշվի առնելով, սակայն, նմանատիպ քաղաքացիաիրավական վեճե-

րով դատական պրակտիկայի որոշ առանձնահատկություններ՝ 2013 թվականին կայացված մի շարք որոշումներում Վճռաբեկ դատարանը վերանայեց բարեխղճության պայմանի վերաբերյալ նախկինում արտահայտած իր դիրքորոշումը՝ ժամանակակից իրավական իրականությանը համահունչ զարգացնելով վերջինիս բովանդակությունը և սահմանելով նշված պայմանի գնահատման լրացուցիչ չափանիշներ:

Անցած տարին նշանավորվեց նաև ընդհանուր սեփականության ինստիտուտի առանձին հիմնախնդիրների վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների հետագա զարգացմամբ: Մասնավորապես, մատնանշվեցին այն պայմանները, որոնք պետք է հաշվի առնեն դատարաններն ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու քաղաքացիաիրավական վեճերով սեփականատիրոջ բաժնի չափի անշունչ լինելու հարցը որոշելիս: Գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում, վերահաստատելով ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ մյուս ամուսնու համատեղ սեփականության իրավունքի ճանաչման համար անհրաժեշտ վավերապայմանների վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը համակողմանիորեն մեկնաբանեց այդ վավերապայմաններից յուրաքանչյուրի բովանդակությունը, ինչն անշուշտ ուղղորդող նշանակություն է ունենալու իրավակիրառ դատական պրակտիկայի համար: Մեկ այլ խնդրահարույց՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն ընդհանուր սեփականության մեջ պարտապան մասնակցի, պարտատիրոջ, ինչպես նաև՝ մյուս սեփականատերերի շահերի հաշվառմամբ սահմանեց այն պարտադիր նախադրյալները, որոնց առկայության դեպքում միայն պարտատիրոջ պահանջով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հրապարակային սակարկություններով:

Վճռաբեկ դատարանը նախորդ տարիներին կայացրած բազմաթիվ որոշումներում անդրադարձել է նաև գործարքների անվավերության խնդրին, սակայն նշված իրավական խնդիրը լիովին սպառված չէ և դեռևս իրավական մեկնաբանությունների կարիք ունի: Հաշվետու տարում Վճռաբեկ դատարանը որոշումներից մեկի շրջանակներում դիրքորոշում արտահայտեց այն մասին, որ գործարքների անվավերության պահանջներով կարևորվում է ինչպես հայցի փաստական հիմքը, այնպես էլ՝ իրավական հիմքը: Մասնավորապես, եթե հայցվորը փաստական հանգամանքները նշելուց հետո վկայակոչել է նաև այն իրավական հիմքը, որի հիման վրա վերջինիս կարծիքով գործարքն անհրաժեշտ է անվավեր ճանաչել, ապա հայցի հիմքը որոշվում է փաստական հանգամանքների և կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի համադրության հիման վրա:

Վիրավորանքի կամ զրպարտության միջոցով անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորելու հետևանքով պատճառված վնասի հատուցման գործերով 2013 թվականին խնդրահարույց էր պատասխանատվության սուբյեկտի հարցը: Վճռաբեկ դատարանը որոշումներից մեկում իրավական դիրքորոշում հայտնեց առ այն, որ յուրաքանչյուր դեպքում անձին վիրավորանքի համար պատասխանատվության ենթարկելիս դատարաններն առաջնահերթ պետք է պարզեն վիրավորական արտահայտությունները վերջինիս կողմից կատարած լինելու, այսինքն՝ տվյալ սուբյեկտի՝ վիրավորանք

---

կատարած անձ հանդիսանալու հանգամանքը: Ընդ որում, սուկ անշարժ գույքի սեփականատեր լինելու փաստի ուժով անձը չի կարող պատասխանատվություն կրել վիրավորանք հասցնելու համար, քանի դեռ չի ապացուցվել, որ նա է կատարել վիրավորանք հասցնելուն ուղղված գործողություններ (պատասառը շենքի պատին փակցնելու տեսքով): Մեկ այլ գործով, անդրադառնալով իրավաբանական անձի կողմից վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվություն կրելու հարցին, Վճռաբեկ դատարանը նախկինում արտահայտած դիրքորոշումների համատեքստում արձանագրեց, որ վիրավորանքի կամ զրպարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության սուբյեկտների շրջանակի սահմանափակում օրենսդիրն արդարացիորեն չի նախատեսել, և այդպիսիք կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Առանձնահատուկ պետք է համարել հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասի գումարը տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջի իրավաչափության հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները և մեկնաբանությունները, որոնք նպաստեցին նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող գործերով միասնական դատական պրակտիկայի ձևավորմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձավ և գնահատման առարկա դարձրեց նաև այն դեպքերը, երբ տնտեսվարող սուբյեկտի տնօրենի նկատմամբ քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական դատավարության տարբեր փուլերում և տարբեր համաներման ակտերի կիրառմամբ:

Հատկանշական է նաև ժառանգության տրանսմիսիայի կանոնների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը: Մասնավորապես, համաձայն այդ դիրքորոշման՝ տրանսմիսիայի կանոնները գործում են այն դեպքում, երբ տրանսմիտենտը մահացել է մինչև ժառանգությունն ընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու համար սահմանված ժամկետի ավարտը՝ չհասցնելով այն ընդունել կամ դրանից հրաժարվել: Որոշումներից մեկի շրջանակներում էլ Վճռաբեկ դատարանն արձանագրեց, որ մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները՝ ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

Դատավարական իրավունքի առանցքային տարրերից է ապացուցման ինստիտուտը, որը պայմանավորում է յուրաքանչյուր գործի օբյեկտիվ և հիմնավորված լուծումը: Նախորդ տարվա ընթացքում Վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է քաղաքացիաիրավական տարբեր վեճերով (պայմանագրային, վնասի հատուցման, գույքն ուրշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու և այլն) ապացուցման առարկայի սահմանման առանձնահատկություններին, փորձագետի եզրակացության գնահատման խնդրին, ապացույց պահանջելու ընթացակարգի իրավակարգավորման առանձնահատկություններին:

Նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև փաստաբանի վարձատրության՝ որպես դատական

ծախսի բաշխման համար անհրաժեշտ ապացույցների ներկայացման հարցին՝ արձանագրելով, որ այն դեպքում, երբ հանձնարարության պայմանագրի պայմաններով հանձնարարողը հանձնակատարին վարձատրությունը պետք է վճարի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ որոշակի ժամանակ անց, ապա նման պայմանի առկայությունը կատարվելիք վճարումը հաստատող բավարար ապացույց է:

2013 թվականն առանձնացավ նաև վարչական գործերով կայացված որոշումների քանակով, ինչպես նաև այն իրավական խնդիրների բազմազանությամբ, որոնց անդրադարձ կատարվեց այդ որոշումներում: Մասնավորապես, կարևորվեց վարչական պատասխանատվություն սահմանող նորմերի՝ ժամանակի մեջ գործողության խնդրի հստակեցումը: Նշված հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ Սահմանադրության, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան իրավանորմերի համակարգային վերլուծության արդյունքում անդրադարձավ և գնահատման առարկա դարձրեց հնարավոր այն իրավիճակները, երբ վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող և իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենսդրական կարգավորումները տարբեր են:

Վճռաբեկ դատարանը բացահայտեց նաև «վարչական վարույթի վերսկսում» ինստիտուտի բովանդակությունը՝ նշելով, որ վարչական վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի վերաբացումն է, նորոգումն է, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

Վարչական գործերով կայացված մի շարք որոշումներ ոչ միայն ուղղորդող նշանակություն ունեցան դատական պրակտիկայի համար, այլև կանխորոշեցին խնդրահարույց որոշ հարցերի վերաբերյալ օրենսդրական կարգավորման հեռանկարները (*տե՛ս, օրինակ, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 19.06.2013 թվականի ՀՕ-94-Ն օրենքի 5-րդ հոդվածը*): Այս առումով հատկանշական է գործերից մեկով կայացված այն որոշումը, որով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է առանց ԱՊՊԱ կտրոնը սահմանված տեղում փակցնելու տրանսպորտային միջոց վարելու և կեղծված, չգործող կամ այլ տրանսպորտային միջոցի համար տրված ԱՊՊԱ կտրոնով տրանսպորտային միջոց վարելու զանցակազմերի տարանջատման խնդրին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ զանցակազմերից առաջինի օբյեկտիվ կողմը դրսևորվում է առկա գործող ԱՊՊԱ կտրոնը սահմանված վայրում չփակցնելով, իսկ երկրորդ զանցակազմի պարագայում պայմանագիրն ու կտրոնն ընդհանրապես գոյություն չունենալով:

Հիշատակման արժանի է նաև առողիտորների որակավորման քննությունների անցկացման կարգի վերաբերյալ գործերից մեկով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը: Վճռաբեկ դատարանը, համակողմանիորեն վերլուծելով վիճելի իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրությունը, արձանագրել է, որ առողիտորների որակավորման քննություն անցկացված չլինելու և համապատասխան վկայական տրամադրված չլինելու պարագայում առողիտորի որակավորում շնորհված համարելու

---

պահանջը ենթակա չէ դատարանում քննության:

Հաշվետու տարում դատական պրակտիկայում խնդրահարույց էին նաև աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման կապակցությամբ որոշ հարցեր: Հարկ է առանձնացնել գործերից մեկով կայացված այն որոշումը, որով Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ բնակարանի ամրացման թերթիկն ինքնին չի կարող հավաստել երկրաշարժի պահին բնակարան ունենալու փաստի առկայությունը: Որպես այդ փաստը հիմնավորող բավարար ապացույց կարող է դիտվել բնակարանի օրդերը, որն իր էությամբ հանդիսանում է իրավահաստատող փաստաթուղթ:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև զինծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու խնդրին՝ արձանագրելով, որ սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակ կարող է նշանակվել միայն զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում:

Առանցքային նշանակություն ունեցան նաև հարկային և մաքսային օրենսդրության առանձին խնդրահարույց հարցերի վերաբերյալ 2013 թվականին արտահայտած իրավական դիրքորոշումները: Վերջիններս վերաբերում են տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային հաշիվների պահպանման ժամկետների խնդրին, եկամտահարկի և գույքահարկի գծով արտոնությունների կիրառման նախապայմաններին, ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքի վճարման անձնական օգտագործման ավտոմեքենան ներմուծելու պայմանների հարցին, գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման համար անհրաժեշտ հիմքերին և դրանք հաստատող ապացույցները չներկայացնելու իրավական հետևանքներին և բազմաթիվ այլ հարցերի: Հատկանշական է որոշումներից մեկում արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ հայտարարագրումն իրականացնում է ապրանքներ տեղափոխող անձն անձամբ կամ լիազորված անձի միջոցով:

Ուշագրավ է նաև գործերից մեկով կայացված այն որոշումը, որով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ի թիվս այլնի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումն ապահովող իրավական երաշխիք է նաև այդ ակտի պահանջները դիտավորությամբ չկատարելու համար սահմանված վարչաիրավական պատասխանատվությունը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ պատասխանատվության այդ միջոցը ենթակա է կիրառման դատական ակտի հարկադիր կատարման վարույթ հարուցված լինելու պարագայում, միաժամանակ մանրամասն վերլուծել է նման պատասխանատվության համար հիմք հանդիսացող զանցակազմի տարրերը:

Վարչական դատավարության առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալի հարցին՝ նշելով, որ վարչական դատավարությունում գործի նոր քննությունը պետք է իրականացվի վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատճառաբանությունների և եզրահանգումների շրջանակներում: Մեկ այլ որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ վիճարկվող վարչական ակտի բացակայությունն ընդհանրապես բացառում է այդ ակտի իրավաչափություն:



նը գործում առկա ապացույցների միջոցով գնահատելու հնարավորությունը: Վերաքննիչ վարույթում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցների ընդունելիության հարցի վերաբերյալ էլ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանն իրավասու է ընդունել դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված միայն այն ապացույցները, որոնք վերաբերելի են և գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Իհարկե, վերը թվարկված որոշումներն ամբողջը չեն և առկա են նաև բազմաթիվ այլ գործեր, որոնցով կայացված որոշումներն ուղղորդող նշանակություն են ունեցել և ունենալու դատական պրակտիկայի ձևավորման համար: Դրանք առավել ամփոփ ձևով ներկայացված են սույն ընտրանում:

Այս ընտրանին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով որոշումների թվով յոթերորդ ժողովածուն է և բովանդակում է նաև գրքում ընդգրկված դատական ակտերի համառոտագրերը: Ժողովածուն ներառում է նաև լազերային սկավառակ, որում ամրագրված է գրքի էլեկտրոնային տարբերակը:

Կարծում եմ, որ սույն ժողովածուն, ինչպես և նախորդները, շարունակելու է նպաստել կայացված նախադեպային որոշումների կիրառության ապահովմանը, հանրության իրավագիտակցության և արդարադատության արդյունավետության բարձրացմանը, դատական իշխանության նկատմամբ հասարակական վստահության ամրապնդմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ Ե. Հ. Խունդկարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Թիվ 7

Հունվար-դեկտեմբեր 2013

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

<b>Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ .....</b>	<b>1</b>
Ձեռքբերման վաղեմություն .....	1
Ընդհանուր սեփականություն .....	8
Բնակելի տարածության սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ .....	43
Ընդհանուր դրույթներ գրավի մասին .....	53
<b>Գործարքներ .....</b>	<b>61</b>
<b>Հայցային վաղեմություն .....</b>	<b>69</b>
<b>Պարտավորություններ կատարելը .....</b>	<b>76</b>
<b>Պայմանագրերից ծագող պարտավորություններ</b>	
Ընդհանուր դրույթներ պայմանագրերի մասին .....	86
Ապրանքների մատակարարում .....	97
Նվիրատվություն .....	106
<b>Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ</b>	
Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին .....	120
Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները .....	139
<b>Մտավոր սեփականություն .....</b>	<b>194</b>
<b>Ժառանգման իրավունք .....</b>	<b>202</b>
<b>ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....</b>	<b>244</b>
<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....</b>	<b>250</b>
<b>ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>256</b>
<b>ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	
Ապացույցներ և ապացուցում .....	283
Դատական ծախսեր .....	320

Դատական ծանուցումներ.....	326
<b>Վարույթն ընդհանուր իրավասության դատարանում</b>	
Հայցի հարուցումը .....	348
<b>Վարույթը վերաքննիչ դատարանում.....</b>	<b>354</b>
<b>Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր</b>	
<b>հանգամանքներով .....</b>	<b>366</b>
<b>Դատական ակտերի հարկադիր կատարումը .....</b>	<b>373</b>

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	387
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ.....	403
ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	456
ՄԱՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	485
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ.....	532
ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	540

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.**

<b>Ընդհանուր դրույթներ</b>	
Գործերի ընդդատությունը.....	547
Ապացույցներ և ապացուցում .....	561
<b>Գործի քննությունը և լուծումը վարչական դատարանում</b>	
Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները .....	586
<b>Դատական ակտերի հարկադիր կատարումը .....</b>	<b>593</b>

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

#### Ձեռքբերման վաղեմություն

05.04.2013թ.

1. Գայանե Խաչատրյան և Նորայր Սարգսյան v. Բուրաստան Դավթյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԱՐԱԳ/0084/02/12

Էջ  
1-7

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանն անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ բարեխղճության պայմանի դրսևորման առանձնահատկություններին:

**Վճարել դատարանի դիրքորոշումը.** Վճարել դատարանն արձանագրել է, որ նման իրավահարաբերություններում առավել կարևորվում է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքը տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ:

Վճարել դատարանը նշել է, որ օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեխղճության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավագործության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում որևէ սուբյեկտի համար: Նման մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից:

Միաժամանակ Վճարել դատարանը նշել է, որ անշարժ գույքի գրանցված սեփականության իրավունք ունեցող անձի վարքագիծը և վերաբերմունքն առանց օրենքի և պայմանագրի հիման վրա գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման նկատմամբ էական է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար, քանի որ հիշատակված հոդվածը որպես սեփականությունից հրաժարվելու հիմք կարևորում է ոչ միայն գրավոր փաստաթղթի առկայությունը, այլ նաև սեփականատիրոջ գործողությունները (անգործությունը):

Վճարել դատարանը գտել է, որ անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ընթացքում՝ մինչև գույքի փաստացի տիրապետողի կողմից ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելը: Միաժամանակ Վճարել դատարանը նշել է, որ ժառանգման կարգով իրականացված իրավահաջորդության դեպքում գույքի նկատմամբ ժառանգների սեփականության իրավունքի ծագումը ինքնըստինքյան չի վերացնում անշարժ գույքի փաստացի տիրապետողի մոտ առկա տիրապետման բարեխղճությունը:

Վճարել դատարանը եզրափակել է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման համար գույքն այլ անձի անցնելու ձևերը, որոնք էլ պայմանավորում են ձեռք բերողի մոտ բարեխղճության առկայությունը կամ բացակայու-

թյունը, տարբեր են: Ինչպես կամահայտնության գրավոր կամ բանավոր ձևերը, այնպես էլ անձի գործողությունները և հավասարապես անգործությունը կարող են վկայել տիրապետման բարեխղճության մասին:

Բարեխղճության ծագումը, ինչպես և մյուս պայմանները, կարևորվում են գույքի փաստացի տիրապետման անցնելու պահին: Այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը գտել է, որ առանձին ղեպքերում բարեխղճությունը ժամանակագրական և առումով կարող է չհամընկնել գույքի փաստացի տիրապետման անցնելու պահի հետ: Այլ կերպ՝ գույքը փաստացի տիրապետման անցնելու պահին այն ձեռք բերողի մոտ կարող է բացակայել բարեխղճությունը և ծագել ավելի ուշ: Մյուս ղեպքերում ինքնին չպետք է բացառել ձեռքբերման վաղեմության առկայությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման ղեպքերում տասը տարվա ժամկետի հաշվարկի հոսքը սկսվում է ոչ թե գույքի փաստացի տիրապետման անցնելու պահից, այլ տիրապետման ընթացքում բարեխիղճ դառնալու պահից: Վերջինս էլ ըստ էության նշանակում է, որ գույքն այդ պահից է անցել անձի տիրապետմանը և անցման պահին անձը եղել է բարեխիղճ:

## Ընդհանուր սեփականություն

04.10.2013թ.

2. Նելլի Հարությունյան v. Աղաջան և Հնազանդ Ավագյաններ, քաղ. գործ թիվ ԵԷԴ-1661/02/09 Էջ 8-18

**Խնդիր.** Ինչպիսի պայմաններ պետք է առկա լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերով նախատեսված բաժնետնային առանձնացնելու համար:

*\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու իրավաչափության հարցին այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանի կարծիքով անհրաժեշտ է գործի նոր քննության իրականացում առաջին արյանի կարգով, և չնայած վերաքննիչ դատարանի կողմից բավարարվել է վերաքննիչ բողոքը, և գործն ուղարկվել է նոր քննության, այնուհանդերձ վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական նորմի խախտում վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին չանդրադատնալու տեսքով:*

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը զարգացրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ՝ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնետնային նկատմամբ դադարում է: Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնություն:

Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է հետևանքներ այն դեպքերի համար, երբ կոնկրետ տեսակի գույքը բաժանելու հնարավորությունը սահմանափակված է օրենքով կամ անհնար է առանց այդ օրենքի անհամաչափ վնաս պատճառելու: Այդպիսին կարող են համարվել այն դեպքերը, երբ կոնկրետ գույքի կամ գույքի որոշակի տեսակի համար

օրենքով, իսկ եթե օրենքում հղում է կատարվում այլ իրավական ակտի, այդ ակտով նախատեսված է բաժանման արգելք, կամ գույքն ունի պատմական նշանակություն կամ մշակութային արժեք և բաժանման դեպքում այն կկորցնի իր նշանակությունը: Յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործի փաստերից ելնելով՝ դատարանները նշված պայմանների հաշվառմամբ պետք է գնահատեն գույքի բաժանման հնարավորությունը: Եվ միայն նշված պայմանների բացակայության դեպքում է առանձնացող սեփականատերը իրավունք ստանում բաժնային սեփականության մյուս մասնակիցներից պահանջելու վճարել իր բաժնի արժեքը: Ընդ որում, այդ արժեքի վճարումը հնարավոր է միայն բաժնային սեփականության մյուս մասնակիցների **համաձայնությամբ**, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի **կամրի ինքնավարության և գույքային ինքնուրույնության** սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա **համաձայնությամբ**, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ սեփականատիրոջ բաժնի չափի աննշան լինելը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն ոչ միայն այդ բաժնի և ընդհանուր գույքի մակերեսների չափերի հարաբերակցությունը, այլև այն հանգամանքը, թե արդյոք տվյալ բաժնեմասը հնարավոր է օգտագործել ինքնուրույն՝ իր նպատակային նշանակությանը համապատասխան: Ինքնին բաժնեմասի հարաբերականորեն փոքր լինելը չպետք է մեկնաբանվի որպես աննշան քննարկվող հողվածի իմաստով:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ բաժնի առանձնացման պայմանի ստուգման համար դատարանները պետք է նշանակեն փորձաքննություն այն հաշվով, որպեսզի ստանան մասնագիտական եզրակացություն՝ վիճելի գույքն իրապես առանձնացնելու հնարավորությունը պարզելու համար:

Ընդհանրացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատարաններն ընդհանուր գույքի օգտագործման մեջ էական շահ ունենալը պարզելիս պետք է հաշվի առնեն անձի գույքային շահը տվյալ տարածքի նկատմամբ: Էական շահ չունենալը չի կարող պայմանավորված լինել բաժնեմասի չափի աննշան լինելու հետ, այլ դրանք պետք է գնահատվեն ինքնուրույն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ նմանատիպ գործերի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ պայմաններին դատարանները պետք է անդրադառնան առանձին-առանձին: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում հիշյալ իրավադրույթը կիրառման ենթակա չէ:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 3-րդ կետը և 240-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավադրույթները մի կողմից ապահովում են գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի կայունությունն անկախ ոչ էական, ձևական և դատական ակտի վրա ազդեցություն չունեցող դատավարական խախտումների առկայությունից, մյուս կողմից ապահովում են ցանկացած դատական ակտի վերացում (բեկանում) այն դեպքերում, երբ դատավարական խախտումների հետևանքով գործը սխալ է լուծվել:

Վերադաս դատական ատյաններում բողոքների քննությունը ենթադրում է նաև բողոքում ներկայացված փաստարկների գնահատում: Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի խնդիրն է պարզել ոչ միայն ստորադաս դատարանի կողմից թույլ տրված խախտման առկայությունը, այլև այդ խախտման ազդեցությունը գործի ելքի վրա: Այս առումով կարևորվում են այն դեպքերը, երբ բողոքի հիմքերը և դրանցում տեղ գտած փաստարկները վերաբերում են ապացուցման ընթացքում տեղ գտած սխալներին (ապացույցների ոչ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի գնահատում և այլն): Դատավարական այս խախ-

տումների առկայությունն ինքնին չպետք է հանգեցնի վերանայվող ակտի անվերապահ բեկանման, եթե այդ ապացույցներն առերևույթ չեն կարող ազդել գործի ելքի վրա: Մնան իրավիճակներ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ, օրինակ՝ ներկայացվել են ապացույցներ այն փաստերի հիմնավորման համար, որոնք ապացուցման առարկայում չեն ներառվել: Եթե դատավարական նման խախտումը ստացել է գնահատական վերաքննիչ առայանում, ապա նույն խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի ներկայացումն արդարացված չի կարող համարվել և ազդել ստորադաս ատյանի որոշման վրա: Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ բողոքում ապացույցների հետազոտման և գնահատման վերաբերյալ ներկայացված հիմքում ներառված փաստարկները վերաքննիչ դատարանի կողմից չդարձվեն քննության առարկա, սակայն բողոքն այլ հիմքով բավարարվի և գործն ուղարկվի նոր քննության: Մնան մոտեցումը Վճռաբեկ դատարանը կարող է համարել արդարացված և չբեկանել ստորադաս ատյանի որոշումը զուտ այն պատճառաբանությամբ, որ բողոքի հիմքերում ներառված փաստարկներին անդրադարձ չի կատարվել, եթե օբյեկտիվորեն անհրաժեշտ է նոր քննության ընթացքում գնահատել ապացույցները:

**29.11.2013թ.**

**3. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ v. Դերենիկ Մարգարյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԳԴ-4/0306/02/11**

**Էջ 19-25**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու քաղաքացիաիրավական վեճերի առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերի, 200-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգը գուճակցում է ինչպես ընդհանուր սեփականության մեջ պարտապան մասնակցի, պարտատիրոջ, այնպես էլ՝ մյուս սեփականատերերի շահերը: Մասնավորապես, վերջիններիս շահերից ելնելով սահմանված է, որ բաժնի վրա բռնագանձում տարածելը հնարավոր է միայն պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում: Ընդհանուր սեփականության մասնակիցներն իրավունք ունեն շուկայական գնով գնելու գույքի այն բաժինը, որի վրա բռնագանձում է տարածվում: Ընդ որում, վաճառքից ստացված գումարը կուղղվի պարտքի մարմանը: Իսկ պարտատիրոջ շահերի պաշտպանության համար սահմանված է, որ վերջինս իրավունք ունի պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել պարտապանի բաժինը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար, ինչպես նաև իրավունք ունի առաջարկել ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներին գնել պարտապանի բաժինը, իսկ վերջիններիս կողմից հրաժարվելու դեպքում՝ պահանջել ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը վաճառել հրապարակային սակարկություններով:

Վերոգրյալից հետևում է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,
2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,
3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,
4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բե-

րել պարտապանի բաժինը:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածներով սահմանված կարգավորումների համադրված վերլուծությունը նույն օրենսգրքի 192-րդ և 195-րդ հոդվածների հետ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ելնելով ընդհանուր սեփականության բնույթից և դրա մասնակիցների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ օրենսդիրը սահմանել է համապատասխան երաշխիքներ այն դեպքերի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակիցներից որևէ մեկը նպատակ ունենա օտարելու իր բաժինը: Այն է՝ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս վերջիններս ունեն վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք, **բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի:**

26.12.2013թ.

4. Լուսինե Ապանյան v. Գագիկ Ապանյան, քաղ. գործ թիվ ԿԳ1/0415/02/11

Էջ  
26-33

**Խնդիրը.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն վավերապայմաններին, որոնց առկայության դեպքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը՝ հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) *Ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը.*

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ներդրումները կարող են դրսևորվել դրամական միջոցներ տրամադրելով, գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը հանգեցնող բնեղեն միջոցներ տրամադրելով, ինչպես նաև սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնող ամուսնու անձնական աշխատանքի միջոցով, որի արդյունքում առկա դրամական կամ այլ ռեսուրսների հետ միասին իրականացվել է հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ դատարանները վերոնշյալ նորմը կիրառելիս պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքի վրա, որ ներդրումները պետք է կատարված լինեն՝

- ամուսնության ընթացքում և ամուսինների ընդհանուր գույքի հաշվին կամ
- ամուսնության ընթացքում և մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին:

Ընդ որում, առաջին դեպքում խոսքը վերաբերում է այն գույքի հաշվին կատարված ներդրումներին, որն ամուսինները ձեռք են բերել համատեղ ամուսնության ընթացքում և որը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը: Երկրորդ դեպքը վերաբերում է այն գույքին, որն ամուսիններից մեկը ստացել է մինչև ամուսնությունը կամ ամուսնության ընթացքում որպես նվեր կամ ժառանգություն:

բ) *Գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը.*

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը կարող է դրսևորվել գույքի վրա կատարված որոշակի փոփոխություններով, որոնք ավելացնում են գույքի որակական (շահագործման, սպառողական և այլ) հատկանիշները և, հետևաբար, նաև գույքի արժեքը:

Օրենսդիրն ընդհանուր կերպով թվարկում է այն գործողությունները, որոնք կարող են հանգեցնել գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը: Դրանք դրսևորվում են հիմնական վերանորոգման, վերակառուցման, վերասարքավորման ձևերով, որոնք, սա-



կայն, սպառիչ չեն:

Վճռարեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ պայմանի ապահովման համար անհրաժեշտ է որոշել գույքի շուկայական արժեքը մինչև ներդրումները կատարելը և դրանից հետո:

Վճռարեկ դատարանը հարկ է համարել նաև հավելել, որ գույքի արժեքի ավելացումը **պետք է լինի նշանակալի**, ինչը յուրաքանչյուր գործով գնահատման ենթակա հանգամանք է:

*գ) Կապարված ներդրման և արժեքի նշանակալի ավելացման միջև պարճառահերկանքային կապի առկայությունը*

Վճռարեկ դատարանը գտել է, որ երրորդ պայմանը վերը նշված երկու պայմանների տրամաբանական շարունակությունն է, ուստի միայն վերը նշված երկու պայմանների առկայությունից հետո դատարանը պետք է քննարկի պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վճռարեկ դատարանն արձանագրել է, որ ներկայացված հայցի հիմքի շրջանակներում յուրաքանչյուր գործով դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն ամուսիններից մեկի ներդրման առկայությունը, դրա արդյունքում գույքի արժեքի նշանակալի չափով ավելացումը կամ ամուսինների ընդհանուր գույքի հաշվին ներդրման առկայությունը և դրա արդյունքում գույքի արժեքի նշանակալի չափով ավելացումը:

Վճռարեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ է հիմնավորել, որ գույքի արժեքի նշանակալի ավելացումը պայմանավորված է ներդրումներով, որոնք հանգեցրել են գույքի շուկայական արժեքի բարձրացմանը: Հետևաբար, գույքի արժեքի ավելացման (թելուզն նշանակալի) այլ գործոններն առանձին չեն կարող հիմք հանդիսանալ վերոնշյալ հոդվածի կիրառման համար (օրինակ՝ գույքի շուկայական արժեքի բարձրացումը՝ պայմանավորված տնտեսական գործոններով (գնաճ)):

Վճռարեկ դատարանը հարկ է համարել նաև նշել, որ վերոնշյալ երեք վավերապայմանների առկայությունը կարող է հիմնավորվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցներով՝ հաշվի առնելով դրանց թույլատրելիության և վերաբերելիության կանոնները: Միաժամանակ, դատարանները պետք է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնեն կոնկրետ փաստը համապատասխան ապացույցներով հաստատելու առանձնահատկությունները:

05.04.2013թ.

5. Լյովա Նավասարդյան v. Նաիրա և Վարդուհի Նավասարդյաններ, քաղ. գործ թիվ ԵԱԴԴ-1229/02/10

Էջ  
34-42

**Խնդիր.** Արդյո՞ք ամուսինների համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված անշարժ գույքը նրանց է պատկանում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, եթե այդպիսի գույքի նկատմամբ իրավունքը ձեռք է բերվել դատական ակտով կամ մեկ այլ գույքի վաճառքից ստացված միջոցներով:

**Վճռարեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռարեկ դատարանը նախ վերահաստատել է նախկինում արտահայտած իր դիրքորոշումն ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը՝ ամուսինների համատեղ սեփականությունը հանդիսանալու (*յո՛ւս Ռաֆայել Աբազյանը և Անժիկ Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Կենպրոն» նույրարական փարածքի նույրարի թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռարեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*) և այդ հարցում առկա բացառությունների (*յո՛ւս Ռուզաննա Ծալուրյանն ընդդեմ Գևորգ Սաղումյանի և այլոց թիվ ԵԱԴԴ/2304/02/08 քաղաքացիական գործով Վճռարեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը*) վերաբերյալ:

Սույն գործով Վճռարեկ դատարանը գտել է, որ Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեում գտնվող 80,3 քմ մակերեսով կառույցի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով Լյովա Նավասարդյանը սեփականության իրավունք է ձեռք բերել 24.09.2002 թվականի թիվ 2-1325 օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, այսինքն՝ Սիլվա Մար-

---

գարյանի հետ ամուսնության ընթացքում, և այն չի հանդիսանում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույք: Բացի այդ, Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում որպես վաճառողներ, այսինքն՝ գույքի սեփականատերեր, հանդես են եկել Լյովա Նավասարդյանը և Սիլվա Մարգարյանը: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանը գնվել է Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեի անշարժ գույքի վաճառքից ստացված գումարով, թե ամուսինների այլ միջոցներով, բոլոր դեպքերում այն համարվում է համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին կետը, գտել է, որ նշված իրավադրույթը, ըստ էության, ամրագրում է խնամարկյալ քաղաքացու՝ անձամբ տնօրինման ոչ ենթակա գույքն ի շահ այլ անձի օտարելու արգելք: Ունենալով համապարտադիր (խնայերատիվ) ուժ՝ նշված դրույթը, որպես երաշխիք, ապահովում է խնամարկյալների գույքի նկատմամբ վերջիններիս իրավունքների պահպանումը՝ նախատեսելով երկու պայման՝ գույքի օտարումը բացառապես ի շահ խնամարկյալի և գույքի օտարման վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածում օգտագործված «ի շահ» եզրույթը ենթադրում է գույքի օտարումից խնամարկյալի համար որոշակի բարիքների ստեղծում, որպիսին կարող է դրսևորվել ստացված դրամը խնամարկյալի կարիքների համար օգտագործելով, մեկ այլ համարժեք գույք ձեռք բերելով և այլն:

Համադրելով նշված մեկնաբանությունը գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքը թեև Լյովա Նավասարդյանը ձեռք է բերել Սիլվա Մարգարյանի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով չի կարող դիտվել որպես ամուսիններին համատեղ սեփականությամբ պատկանող գույք, քանի որ այն ձեռք չի բերվել ամուսիններից որևէ մեկի միջոցներով, ուստի բացակայում է այն նախապայմաններից մեկը, որն անհրաժեշտ է գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունքի ծագման փաստը հաստատելու համար: Նշված գույքը Լյովա Նավասարդյանը գնել է Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի 24.03.2006 թվականի թույլտվությունից հետո՝ իր խնամարկյալներ Ռուզաննա և Գարեգին Նավասարդյաններին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանի առուվաճառքի գումարով 30.10.2006 թվականին: Այլ կերպ՝ 13.10.2006 թվականին վաճառելով Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանը և ձեռք բերելով Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքը, Լյովա Նավասարդյանը գործել է ի շահ իր խնամարկյալների՝ ունենալով նաև գույքն օտարելու և նոր անշարժ գույք ձեռք բերելու վերաբերյալ Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի թույլտվությունը: Վերոնշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը հանգել են ճիշտ հետևության և գտել, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում Լյովա Նավասարդյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքը չի կարող համարվել ամուսինների համատեղ սեփականություն և Սիլվա Մարգարյանի մահվան պահին չէր կարող հանդիսանալ նրա ժառանգական զանգվածի մեջ մտնող գույք, քանի որ Լյովա Նավասարդյանի կողմից վերջինիս խնամարկյալներին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանը վաճառելուց հետո խնամակալի՝ Լյովա Նավասարդյանի գործողություններն ուղղված են եղել խնամարկյալների համար անշարժ գույք ձեռք բերելուն:

## Բնակելի տարածության սեփականության և այլ գույքային իրավունքներ

04.07.2013թ.

6. Վորոդյա Հայրապետյան v. Վանիկ Ֆաֆուրյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԱՎԳ-1/0276/02/11

Էջ  
43-52

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է բնակելի տարածության նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքը սեփականատիրոջ պահանջով փոխհատուցում տրամադրելու միջոցով դատական կարգով դադարեցնելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

\* Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահասարակել է փաստի նախադասելիության վերաբերյալ նախկինում արտահայտված իր դիրքորոշումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենքով սահմանված կարգով գրանցված բնակելի տարածության օգտագործման իրավունքը դատական կարգով փոխհատուցում տրամադրելու միջոցով դադարեցնելը չի կարող պայմանավորված լինել սեփականության իրավունքում բաժինը որոշված լինելու կամ գույքից բաժինն առանձնացված լինելու հանգամանքով հատկապես այն պարագայում, երբ բնակելի տարածության օգտագործման իրավունքը գրանցված է կոնկրետ մակերեսների նկատմամբ:

## Ընդհանուր դրույթներ գրավի մասին

04.10.2013թ.

7. «Ամերիաբանկ» ՓԲԸ v. Գագիկ Միմոնյան, Լիլիթ Սարգսյան, քաղ. գործ թիվ ԵԿԳ-1010/02/12

Էջ  
53-60

**Խնդիր.** Արդյո՞ք բանկն իրավունք ունի իր պահանջի բավարարման նպատակով դիմել դատարան գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու համար այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է գրավառուի պահանջի բավարարման նպատակով առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետը, 248-րդ հոդվածը, 249-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 249<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրավառուի պահանջները բավարարելու համար օրենսդիրը նախատեսել է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու երկու եղանակ՝ առանց դատարան դիմելու և դատարանի վճռի հիման վրա: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարվում են դատարանի վճռով գրավառուի և գրավատուի միջև գրավոր համաձայնության բացակայության դեպքում, այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ նման համաձայնության առկայության դեպքում գրավառու իրավունք չունի օգտվելու դատական կարգով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իրավունքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի, 14-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավադրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել՝ գրավառուի պահանջները բավարար-

րելու համար: Ընդ որում, գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով առանց դատարան դիմելու իրավունք ունի գրավի վրա բռնագանձում տարածելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով կամ գրավատուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնությամբ: Բացի այդ, Բանկն իրավունք ունի նաև պահանջ ներկայացնել դատական կարգով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու համար: Տվյալ դեպքում գրավատուի իրավունքն է ընտրելու իրավունքի պաշտպանության եղանակներից մեկը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ նույնիսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով անձին իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ եղանակ ընձեռելու պայմաններում վերջինս իր հայեցողությամբ է իրականացնում իր իրավունքների պաշտպանությունը, հետևաբար նյութական իրավունքի որևէ տրոմ (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը) չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող դրույթ (յուև «Արդշինհավատարման» ՓԲԸ-ն ընդդեմ Սպարտակ Մկրտչյանի և մյուսների թիվ 3-678(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

## ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

24.05.2013թ.

8. Սերժիկ Մկրտչյան v. Սարգիս Հովհաննիսյան և Վարդան Բարսեղյան, քաղ. գործ թիվ ՍԴ-3/0010/02/12

Էջ  
61-68

**Խնդիր.** Որո՞նք են գործարքների անվավերության պահանջների քննության ժամանակ դատարանի կողմից հայցապահանջի շրջանակներում գործի քննությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմանները:

\*Միաժամանակ **Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ կրկնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:**

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ գլխի 2-րդ պարագրաֆը կանոնակարգում է գործարքների անվավերությունը: Օրենսդիրը մի դեպքում նախատեսել է գործարքի անվավերության ընդհանուր հիմք՝ օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդված), այլ դեպքերում նախանշել է կոնկրետ հիմքեր, որոնք հանգեցնում են գործարքի անվավերության (յուև, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-315-րդ հոդվածները):

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ նյութական իրավունքը հստակ նախատեսել է այն հանգամանքները՝ իրավաբանական փաստերը, որոնք, գործարքի անվավերության պահանջ ներկայացված լինելու դեպքում, կարող են կազմել հայցի փաստական հիմքը և դրանց շրջանակներում դատարանը կարող է որոշել ապացուցման առարկան:

Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքն անմիջականորեն չի սահմանում **հայցի փաստական և իրավական** հիմքերի տարբերակիչ հատկանիշները, այնուամենայնիվ, այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ նորմերից: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հայցի իրավական հիմքը կազմված է այն իրավական նորմերից, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ հայցվորը, բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հի-

ման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (*յրև՝ ս Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԴ/0473/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ կանոնները գործարքների անվավերության նկատմամբ կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գործարքների անվավերության դեպքում հայցի հիմքի և առարկայի որոշման համար էական նշանակություն ունի ոչ միայն փաստական հանգամանքը, այլև այն իրավական հիմքը, որի հիման վրա հայցվորը ցանկանում է գործարքն անվավեր ճանաչել: Մասնավորապես, եթե հայցվորը փաստական հանգամանքները նշելուց հետո վկայակոչել է նաև այն իրավական հիմքը, որի հիման վրա վերջինիս կարծիքով գործարքն անհրաժեշտ է անվավեր ճանաչել, ապա հայցի հիմքը որոշվում է փաստական հանգամանքների և կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի համադրության հիման վրա:

## ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ

04.10.2013թ.

9. Գագիկ Հարությունյան v. Արա Նահապետյան, քաղ. գործ թիվ ԵՉ ԱՎԳՅ/0144/02/12

Էջ 69-75

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայցվորի անձի հետ կապված հանգամանքները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի իմաստով որպես բացառիկ դեպք գնահատելու և այդ հիմքով հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածը, 335-րդ հոդվածի 2-րդ կետը, 337-րդ հոդվածի 1-ին կետը, 342-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական այն դիրքորոշումը, որ վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Հատկանշական է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համապատասխան դրույթով դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ճանաչել հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Ավելին, հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե բացթողման պատճառները տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ընթացքում (*յրև՝ ս Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի թիվ ԵՇԴ/0723/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «հայցային վաղեմության ժամկետի վերականգնում» եզրույթը նշանակում է ոչ թե հայցային վաղեմության ժամկետի հոսքի վերսկսում, այլ անձի խախտված իրավունքների պաշտպանության տրամադրում՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի առկայության դեպքում:

Հայցային վաղեմության ժամկետի վերականգնումը կիրառելի է որպես բացառիկ միջոց, և եթե առկա են մի շարք հանգամանքներ.

**Առաջին՝** հարգելի համարելու պատճառները պետք է կապված լինեն հայցվորի անձի հետ: Բոլոր այն հանգամանքները, որոնք կապված են այլ անձանց հետ և թեկուզ իրականում խոչընդոտել են հայցվորի՝ իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն, չեն կարող համարվել հարգելի:

**Երկրորդ՝** որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք: Նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքների բնույթով, որոնք օրենսդիրը համարել է հարգելի ճանաչելու հիմք: Դրանք բոլորն էլ բնորոշ են ֆիզիկական անձանց:

**Երրորդ՝** հարգելի ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքները պետք է լինեն այնպիսին, որ գրկեն անձին դատարան դիմելու հնարավորությունից: Ընդ որում, նշված շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձն ի վիճակի չլինելով դատարան դիմել անձամբ՝ ունեցել է ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորություն:

**Չորրորդ՝** վերը նշված հոդվածի հիշատակված դրույթում ամրագրված հանգամանքները պետք է տեղի ունենան հայցային վաղեմության վերջին վեց ամիսների ընթացքում և տևեն մինչև ժամկետի ավարտը: Այլ կերպ՝ եթե հարգելի հանգամանքներն ի հայտ են եկել վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, սակայն վերացել են մինչև ժամկետի ավարտը և անձն ունեցել է հայց ներկայացնելու ժամանակ, սակայն բաց է թողել այն, ուրեմն բացթողումը հարգելի համարվել չի կարող:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ որպես ապացուցման առարկա կազմող փաստեր, ենթակա են գնահատման ապացուցման քաղաքացիադատավարական կանոններին համապատասխան:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածում ամրագրված հանգամանքների բնույթը պարզելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հիվանդության ծանր լինելը, անօգնական վիճակում գտնվելը, անգրագիտությունը և այլն, ենթակա են պարզման յուրաքանչյուր կոնկրետ գործով:

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

24.05.2013թ.

10. «ԴՎին կոնցեն» ՓԲԸ v. Հայկանուշ Գ-րիգորյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԿԳ/1060/02/09

Էջ  
76-85

**Խնդիր.** Այս դրոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դեպոզիտ վճարելու միջոցով դրամային պարտավորության կատարման ձևին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի, 347-րդ հոդվածի, 366-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 411-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտավորությունը պետք է կատարվի պատշաճ: Այսպես՝ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Հակառակ դեպքում՝ պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Մասնավորապես՝ եթե այդ պարտավորական հարաբերություններն ունեն դրամային բնույթ, և դրա ուժով պարտապանը պարտավոր է վճարել դրամ, ապա այդ դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշ-

վին անհիմն ստանալու կամ խնայելու համար այդ գումարին վճարվում են նաև տոկոսներ: Միաժամանակ, պարտապանի կողմից իր պարտավորությունը որոշակի պայմանների առկայությամբ պայմանավորված պատշաճ կատարելու անհնարինության դեպքում վերջինիս իրավունք է վերապահված իրենից գանձվելիք գումարը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքում՝ նաև դատարանի դեպոզիտ:

Վճարել դատարանն արձանագրել է, որ պարտապանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իր իրավունքից չօգտվելու պայմաններում վերջինս չի կարող ազատվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների վճարման պարտականությունից:

## ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ընդհանուր դրույթներ պայմանագրերի մասին

05.04.2013թ.

11. Ռաֆայել Ավետիսյան v. Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյաններ, քաղ. գործ թիվ ԿԴ1/0133/02/09

Էջ  
86-96

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանն անդրադարձել է անշարժ գույքի վերաբերյալ նախնական պայմանագրի՝ դատական կարգով վավեր ճանաչման իրավաբանական հնարավորության հարցին:

\* Միաժամանակ Վճարել դատարանն անդրադարձել է ապացույցների զանգվածում ներառված փորձագիտական եզրակացությունների գնահատման խնդրին՝ հաշվի առնելով առանձին գործերով այս ապացույցների կարևորությունը և դրանց գնահատման առումով միասնական դատական պրակտիկայի ձևավորման անհրաժեշտությունը:

**Վճարել դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ կետերի, 562-րդ հոդվածի 2-րդ կետի վերլուծության հիման վրա Վճարել դատարանը եզրահանգել է, որ անշարժ գույքի առուվաճառի նախնական պայմանագիրն այնպես, ինչպես և հիմնական պայմանագիրը, ենթակա է նոտարական վավերացման, որպիսի պահանջը չպահպանելը հանգեցնում է նախնական պայմանագրի առոչչություն: Միաժամանակ, հիմնական պայմանագիրը պետք է կնքվի նախնական պայմանագրով սահմանված ժամկետում, իսկ նման ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ մեկ տարվա ընթացքում: Ավելին, եթե նախնական պայմանագրով նախատեսված ժամկետում կողմերը հիմնական պայմանագիր չեն կնքում կամ կողմերից մեկը մյուսին առաջարկ չի ներկայացնում այն կնքելու մասին, ապա նախնական պայմանագրով նախատեսված պարտավորությունները դադարում են:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածը՝ Վճարել դատարանը նշել է, որ օրենսդիրը գործարքը կատարած կողմի պահանջով գործարքը վավեր ճանաչելու համար սահմանել է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը՝

1) կողմերից մեկի կողմից գործարքի լրիվ կամ մասնակի կատարված լինելը,  
2) մյուս կողմի խուսափելն օրենքով նախատեսված կարգով գործարքի վավերացումից:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 5-րդ կետի, 461-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության հիման վրա Վճարել դատարանը գտել է, որ օրենսդիրը նախնական պայմանագիր կնքած կողմի պահանջով գործարքը կնքելուց խուսափող կողմին պայմանագիր կնքելուն հարկադրելու համար սահմանել է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը՝

- 1) պայմանագրի կնքելն օրենքին համապատասխան պարտադիր է,
- 2) պայմանագրի կնքելու պարտավորություն ունեցող կողմը խուսափում է այն կնքելուց:

Հիմք ընդունելով վերոգրյալ կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրի կողմից սահմանվել են «գործարքը վավեր ճանաչելու» և «պայմանագիր կնքելուն հարկադրելու» իրարից էականորեն տարբերվող իրավական ռեժիմներ: Ընդ որում, դատական կարգով կարող է վավեր ճանաչվել գործարքի կողմերի միջև արդեն իսկ կնքված ինչպես նախնական, այնպես էլ հիմնական պայմանագիրը, որի նոտարական վավերացումից կողմը խուսափում է, այսինքն՝ օրենքը չի բացառում նախնական պայմանագրի վավեր ճանաչման հնարավորությունը:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վկայակոչված հոդվածում խոսքը գնում է փորձագետին առաջադրված հարցերի վերաբերյալ **հետևությունների** և դրանց հիման վրա **հիմնավորված պատասխանների (եզրակացության)** մասին: Հետևաբար, փորձագիտական եզրակացության արդյունքում տրված **հավանական եզրահանգումները** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի և 62-րդ հոդվածի ուժով չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի առկայությունն ապացուցելու առումով: Փորձագետի հետևությունների ձևը չի որոշում եզրակացության դերը և տեղը ապացուցման պրոցեսում: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու բաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ոչ հավանական եզրակացությունն ինքնին և ոչ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն: այդպիսին չեն համարվում նաև հիպոթեթիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ շատ դրանք լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն: հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը: Հետևաբար, փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց:

## Ապրանքների մատակարարում

05.04.2013թ.

12. «Ստանդարտ Էներժո» ՍՊԸ ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3094/02/11

Էջ  
97-105

**Խնդիր.** Մատակարարման պայմանագրից բխող հարաբերություններում ինչպես կարող է դրսևորվել ապրանքի չընդունումը կամ այն ընդունելուց հրաժարումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի, 521-րդ հոդվածի 1-ին կետի և 528-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ մատակարարման պայմանագրի կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի մատակարարը գնորդին հանձնի պայմանագրով նախատեսված ապրանքները, իսկ գնորդը դրանք ընդունի: Ընդ որում, պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու պարագայում ապրանքը հանձնելու պարտականությունը համարվում է կատարված, եթե ապրանքը փաստացի հանձնվել է գնորդին: Ինչ վերաբերում է գնորդի կողմից ապրանքն ընդունելուն, ապա այն ներառում է վերջինիս կողմից այնպիսի գործողությունների կատարում, որոնցով պետք է ապահովվի մատակարարված ապրանքները փաստացի տիրապետման ընդունելը, ինչպես նաև պարզվի ապրանքի համապատասխանությունը պայմանագրով նախատեսված պայմաններին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այդ գործողությունների ծավալը կախված է ապրանքները գնորդին հանձնելու վայրից և այն եղանակից, որով պետք է իրականացվի հանձնումը:



Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 529-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ապրանքի համար վճարելու պահանջի իրավունքը մատակարարի մոտ առաջանում է այն դեպքում, երբ գնորդը, առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված հիմքերի, մատակարարից չի ընդունում ապրանքը կամ հրաժարվում է այն ընդունելուց: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում գնորդի կողմից ապրանքից հրաժարվելը պետք է արտահայտվի հստակ և լինի որոշակի: Այսինքն՝ գնորդը պետք է կատարի այնպիսի գործողություններ կամ դրսևորի այնպիսի անգործություն, որոնք օբյեկտիվորեն վկայում են ապրանքը չընդունելու կամ այն ընդունելուց հրաժարվելու մասին:

## Նվիրատվություն

24.05.2013թ.

13. Արարատ Արշակյան v. Կարինե Տոնոյան, քաղ. գործ թիվ ԵՄԴ/0250/02/12

Էջ  
106-112

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է անշարժ գույքի նվիրատվության խոստման՝ որպես նվիրատվության պայմանագրի և նվիրատվության նախնական պայմանագրի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 595-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Այսինքն՝ նվիրատվության պայմանագրի կնքման պահը կարող է չհամընկնել այդ պայմանագրով տրամադրվող գույքի նկատմամբ իրավունքի փոխանցման հետ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, որի բովանդակությունն է կազմում նվիրատուի պարտականությունն ապագայում ավելացնել նվիրառուի գույքն իր գույքի նվազման հաշվին մի կողմից և նվիրառուի՝ գույքը պահանջելու իրավունքը մյուս կողմից:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նախնական պայմանագրի առարկան ապագայում գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին հիմնական պայմանագիր կնքելու պարտավորությունն է: Ի տարբերություն հիմնական պայմանագրի, որով անմիջականորեն առաջանում են գույք հանձնելու, ծառայություն մատուցելու և այլ քաղաքացիաիրավական հարաբերություններ, նախնական պայմանագիրն ուղղված է նման հարաբերություններ առաջացնող պայմանագրի կնքմանը:

Մույն գործի փաստերի համաձայն՝ 12.03.2011 թվականին նոտարական կարգով վավերացված «Անշարժ գույքի բաժնի նախնական նվիրատվության պայմանագրի» կնքմամբ Կարինե Տոնոյանը պարտավորվել է **ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո** Արարատ Արշակյանին անհատույց, որպես սեփականություն հանձնել Երևան քաղաքի Դ.Վարուժան փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի իրեն հասանելիք ժառանգությանը ձեռք բերվող սեփականության 1/2 բաժինը:

Վերոնշյալ իրավադրույթների մեկնաբանման լույսի ներքո անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կողմերը նպատակ են ունեցել ապագայում կնքել նվիրատվության պայմանագիր: Այսինքն՝ կողմերի իրական կամքն ուղղված է եղել ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո Դ.Վարուժան փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի՝ Կարինե Տոնոյանին հասանելիք բաժնի 1/2-ի նկատմամբ սեփականության իրավունքն Արարատ Արշակյանին նվիրատվության պայմանագրի հիման վրա փոխանցելու: Հետևաբար կողմերի միջև առաջացած հարաբերությունները

նվիրատվության նախնական պայմանագրից բխող հարաբերություններ են, որոնք կողմերի մոտ առաջացնում են հիմնական պայմանագիր կնքելու փոխադարձ իրավունքներ և պարտականություններ:

Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նվիրատվության նախնական պայմանագիր կնքելու և հետագայում հիմնական պայմանագրի կնքումից խուսափելու փաստերի առկայությունը պայմանագրի կողմի մոտ առաջացնում է պայմանագիրը կնքելուց խուսափող կողմին պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջ ներկայացնելու իրավունք:

Ինչ վերաբերում է նվիրատվության նախնական պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ այդ ժամկետի հաշվարկման խնդրին՝ հիմք ընդունելով պայմանագրի մեկնաբանության կանոնները:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով պայմանագրի կատարման ժամկետը՝ 30.07.2011 թվականը, ինքնին հանդիսացել է լրացուցիչ պայման, այն հիմնականում պայմանավորված է եղել **Ժառանգման իրավունք ձեռք բերելու հետ** և կողմերի մեղքի բացակայության պայմաններում պայմանագրում նշված ժամկետի լրանալը չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրի էական և հիմնական պայմանը չկատարելու համար, քանի որ պայմանագրի էական պայման է հանդիսացել ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո գույքի նվիրատվություն կատարելը, և այդ իսկ պատճառով կողմերի միջև կնքվել է նախնական նվիրատվության պայմանագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կողմերի միջև կնքված անշարժ գույքի բաժնի նվիրատվության նախնական պայմանագիրը հանդիսացել է կողմերի կամքի ազատ արտահայտումը, որում ամրագրվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, այն վավերացվել է նոտարական կարգով, և վերջիններիս կամահայտությունն ուղղված է եղել հիմնական նվիրատվության պայմանագիր կնքելուն: Ինչ վերաբերում է նշված պայմանագրի 2-րդ կետով սահմանված պայմանագրի կատարման ժամկետին, ապա այն բաց է թողնվել կողմերի կամքից անկախ հանգամանքներում և ունի անանցյալ բնույթ ժառանգման իրավունք ձեռք բերելու պայմանի նկատմամբ:

24.05.2013թ.

14. Հենրիկ Աբովյան v. Հաբեթ Աբովյան, քաղ. գործ թիվ ԳԳ/0217/02/10

Էջ  
113-119

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նվիրատվության պայմանագիրը նվիրատուի փոխարեն այլ անձի կողմից ստորագրելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 596-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի վերլուծության արդյունքում գտել է, որ վկաների ներկայությամբ կատարված գործարքներն ամբողջությամբ ընթերցում է նոտարը, և եթե անձը ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող ստորագրել փաստաթուղթը, ապա նրա հանձնարարությամբ, նրա ու նոտարի ներկայությամբ փաստաթուղթը կարող է ստորագրել այլ անձ, իսկ վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով փաստաթուղթը չէր կարող ստորագրել նոտարական գործողություն կատարելու համար դիմած անձը: Հաշվի առնելով այն, որ նշված կանոններն ընդհանուր են նոտարական կարգով վավերացվող պայմանագրերի համար՝ դրանք կիրառելի են նաև նվիրատվության պայմանագրի կնքման դեպքում: Հետևաբար նվիրատվության պայմանագիրը նվիրատուի փոխարեն այլ անձի կողմից ստորագրելը չի հանգեցնում այդ պայմանագրի անվավերության, եթե պահպանված են վերոնշյալ կանոնները:

**ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Ընդհանուր դրույթներ վնասի հատուցման մասին**

05.04.2013թ.

15. ՀՀ գլխավոր դատախազություն v. Վալենտինա Մկրտչյան, քաղ. գործ թիվ ԵԿԳ/3058/02/11

Էջ  
120-129

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն անդրադարձել է հարկային պարտավորությունները տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջի իրավաչափության հարցին:

**Վճարելի դատարանի դիրքորոշումը.** Վճարելի դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետը, 17-րդ հոդվածի 1-ին կետը, 1058-րդ հոդվածի 1-ին կետը, նախ վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (*տե՛ս Նապոլյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԳ3/0016/02/08 քաղաքացիական գործով Վճարելի դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշման հիման վրա Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ որոշմանը: Մասնավորապես, դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավաբանական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի քննության ընթացքում: Իրավական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի ապացուցման առարկան: Ապացուցման առարկան որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավաբանական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը: Վնասի հատուցման գործերով փաստերի իրավաբանական նշանակություն ունենալու հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական, ինչպես նաև դատավարական իրավունքի նորմերով, որոնցում նշված են տվյալ իրավահարաբերությունը և կողմերի իրավունքներն ու պարտականությունները պայմանավորող իրավաբանական փաստերը:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը և 1058-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճարելի դատարանը գտել է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավաբանական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- վնաս պատճառող անձի առկայությունը,
- պատճառված վնասի առկայությունը,
- վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,
- պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև:

Միաժամանակ Վճարելի դատարանը նշել է, որ ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված պետական շահերի պաշտպանության իրավասությունը կոնկրետացվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում, որտեղ ամրագրված են դատախազության այն լիազորությունները, որոնցով իրականացվելու է

պետական շահերի պաշտպանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պետական շահերի պաշտպանության իրականացումը կախված լիազորությունների բովանդակությունից, ունի իրականացման տարբեր մեխանիզմներ: Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն օգտվում է դատավարական այն իրավունքներից և կրում է այն պարտականությունները, որոնք ունենալու էր պետական այն մարմինը, ով հայց ներկայացնելու պարտականություն ուներ: Հետևաբար դատախազությունը գրկված չէ վարչական դատավարության կարգով տնտեսվարող սուբյեկտի դեմ հարկային պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու հայց ներկայացնելու հնարավորությունից, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ:

Վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված դատախազության լիազորությունը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայց հարուցելու լիազորությամբ օժտված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Նշված դրույթի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ դատախազության՝ հայց հարուցելու դատավարական պարտականության իրացման նախապայման է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորության բացակայությունը: Նշված կանոնակարգումը քննարկելով չվճարված հարկային պարտավորությունների արդյունքում պետությանը պատճառված վնասը բռնագանձելու հարցի համատեքստում, նախ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք կունկրետ վիճելի իրավահարաբերության առկայության պարագայում բացակայում է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորությունը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հիման վրա հարուցված քրեական գործի կարճման պարագայում, արարքի՝ որպես հանցագործության վերաբերյալ խոսք լինել չի կարող, մինչդեռ քաղաքացիաիրավական հարաբերությունը (վնաս պատճառելու հիմքով ծագող հարաբերությունը), որի ծագման պայմանները կարող են համընկնել քրեական պատասխանատվության ծագման պայմանների հետ, շարունակում է գոյություն ունենալ: Նման իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում պետությանը պատճառված վնասը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից բռնագանձելու պահանջ ներկայացնելու լիազորությամբ որևէ պետական մարմին օժտված չէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված է դատախազության լիազորությունը հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու հայց ներկայացնելու մասին, որպիսի լիազորության իրականացումը պայմանավորված է երկու փաստերի առկայությամբ՝

1) հանցանքի կատարում, որը կարող է հաստատվել միակ թույլատրելի ապացույցով, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով և

2) հանցանքի արդյունքում պետությանը պատճառված գույքային վնաս:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ հարկերի և (կամ) տուրքերի չվճարման կամ պակաս վճարման համար դատախազությունը գործում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված լիազորությունների շրջանակում, ապա հայցապահանջը պետք է վերաբերի կունկրետ տնտեսվարող սուբյեկտին **հարկային պարտավորությունները կատարելու պարտավորեցնելուն**: Մինչդեռ չվճարված հարկերը կամ տուրքերը, որպես **պետությանը պատճառված վնաս** գանձելու համար կարող է առկա լինել ինչպես հանցագործություն կատարելու փաստը և վնաս պատճառելը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), այնպես էլ առանց հանցագործության փաստը հիմնավորող թույլատրելի ապացույցի առկայության վնաս պատճառելը և համապատասխան լիազոր մարմնի բացակայությունը կամ այդպիսի մարմնի մոտ համապատասխան լիազորության բացակայությունը: Ընդ որում, նշված

դեպքում որպես պատասխանող հանդես է գալիս այն անձը, ում լիազորությունների շրջանակում է եղել հարկային հաշվետվությունների ներկայացումը, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով չկատարելու արդյունքում պետությունը կրել է գույքային կորուստ:

Համադրելով վերոնշյալ հոդվածները չվճարված հարկերը կամ տուրքերը որպես **պետությանը պատճառված վնասի** հատուցման վերաբերյալ մեկնաբանության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու հայցը դատասխանությունը կարող է ներկայացնել քրեական գործի դատավարության ընթացքում քաղաքացիական հայցի ձևով կամ քաղաքացիական դատավարության կարգով:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն դեպքերում, երբ **պետությանը պատճառված վնասի** հատուցման հայցը ներկայացվել է տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի դեմ, ում լիազորություն է հարկային հաշվետվությունների ներկայացումը, անհրաժեշտ է ապացուցել տվյալ անձի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության կատարած լինելու փաստի առկայությունը, որպիսին հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցներով:

Վերոնշյալ եզրահանգումների համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած քաղաքացիական պատասխանատվության ծագման պայմանները հանգամանքների բերումով կարող են որոշ դեպքերում համընկնել քրեական պատասխանատվության առաջացման պայմանների հետ, այդուհանդերձ քաղաքացիաիրավական հայցը պետք է լուծվի քաղաքացիական պարտավորական իրավունքի սկզբունքների հիման վրա: Քրեական գործով իրականացված դատավարության արդյունքը որոշիչ չէ վնասի հատուցման վերաբերյալ գործով: Տուժողն իրավունք ունի պահանջել վնասների հատուցում անկախ այն հանգամանքից պատասխանողը դատապարտվել է, թե՛ արդարացվել, և փոխհատուցման հարցը պետք է դառնա իրավական ինքնուրույն գնահատման առարկա, որի պարագայում ապացուցման չափորոշիչներն էականորեն տարբերվում են քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերից: Դատարանի կարծիքով այն, որ միևնույն արարքը կարող է առաջացնել քրեական գործի հետևույնական (ընդհանուր) հանգամանքներից (փաստերից) բխող վնասը հատուցելու քաղաքացիաիրավական պարտականություն, բավարար հիմքեր չի ստեղծում անձի նկատմամբ կիրառված քաղաքացիաիրավական պատասխանատվությունը դիտել նաև «քրեական պատիժ» (*լուս Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 11.02.2003 թվականի վճիռը, պարբ. 38*):

Միաժամանակ, հաշվի առնելով նմանատիպ գործերի քննության ընթացքում առկա իրավակարգավորման առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ համաներում կիրառելու, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հիմքով ազատելու պարագայում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-145-Ն և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ ՀՕ-214-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո նշված գումարների վճարված լինելը պարզելու հարցը քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից՝ օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում ազատվելու պայմանը կոնկրետացված է նույն օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասում, որի համաձայն (մինչև 2013 թվականի փետրվարի 5-ի դրությամբ գործող ինկորպորացիայով)՝ **սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ, 205-րդ և 206-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում**

---

**Է հանցագործությանը պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:**

Օրենսդրական գործող կարգավորումը հնարավոր է համարում նաև չվճարված կամ պակաս վճարված հարկերն ու տուրքերը գանձելու հարցին անդրադառնալու հնարավորություն մինչև համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը չիրականացնելու, կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: **Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ:** Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու դեպքում դրանք տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից որպես պետությանը պատճառված վնաս քաղաքացիական հայց հարուցելու միջոցով կարող են գանձվել մինչև ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերջ նշված փոփոխությունների կատարումն իրականացված հակաիրավական արարքների արդյունքում պատճառված վնասի համար, քանի որ *Նշված փոփոխություններից հեջո համաներման ակտերի ընդունման և համաներում կիրառելու մասին որոշման առկայության կամ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որոշման* առկայության պարագայում գործում է պատճառված վնասի հատուցված լինելու կամ վնասի հետ կապված վեճի բացակայության կանխավարկածը: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև Գարիկ Ղազարյանի վերաբերյալ որոշումն արտահայտված իրավական դիրքորոշումը (*յրև Գարիկ Ղազարյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0088/01/11 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2012 թվականի որոշումը*):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ իրավակիրառ պրակտիկայում քաղաքացիական գործերով տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձանցից չվճարված կամ պակաս վճարված հարկերը և տուրքերը որպես պետությանը պատճառված վնաս քաղաքացիական հայց հարուցելու դատախազության լիազորությանը տրվող ոչ միանշանակ մեկնաբանություններին:

Դատախազության կողմից ներկայացված հայցերում և բողոքներում հիշատակվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դրույթները, որոնցում ամրագրված են դատախազական մարմինների լիազորությունները պետական շահերի պաշտպանության հարցում: Նշված լիազորություններից յուրաքանչյուրը պայմանավորում է դատախազության՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով հայց հարուցելու իրավասությունը: Այս առումով լիազորություններն ամրագրող կոնկրետ դրույթների հիշատակումը հայցում կամ բողոքում չեն կարող դիտվել որպես հայցի հիմք (իրավական հիմք), քանի որ այսից հիմքը նյութական իրավունքի այն նորմն է, որի վրա հիմնվում է ներկայացված պահանջը: Հաշվի առնելով նմանատիպ գործերի առանձնահատկությունը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիշատակված հոդվածի դրույթների գնահատումը կարող է տեղի ունենալ պատշաճ հայցվորի հարցը քննարկելու համատեքստում: Հետևաբար, դատարանը պարտավոր է ստուգել դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու

իրավասության առկայությունը, անկախ նրանից նշվել է լիազորություններից մեկը, թե մյուսը կամ էլ որևէ մեկը չի նշվել:

Վերը նշված պատճառաբանությունները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հնարավոր են դեպքեր, երբ միևնույն գումարը, տույժերի հետ միասին, բռնագանձվի նաև տնտեսվարող սուբյեկտից: Այդ նկատառումից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը նմանատիպ գործերով կրկնակի բռնագանձումը բացառելու համար հարկ է համարել արձանագրել, որ այդ գործերի քննության ընթացքում անհրաժեշտ է գնահատել այն հանգամանքը, թե արդյոք վեճի առարկա՝ պետությանը վճարման ենթակա հարկային պարտավորությունների, ինչպես նաև տույժերի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանի կողմից կայացվել է բռնագանձման վճիռ, որը փաստացի կատարվել է (գումարը բռնագանձվել է տնտեսվարող սուբյեկտից): Նման դատական ակտի առկայությունը և այն կատարված լինելու հանգամանքն արգելք կհանդիսանա քաղաքացիական գործով հայցի բավարարման համար՝ անկախ կողմերի տարբերությունից, քանի որ սույն գործով վեճի առարկա՝ պետությանը պատճառված վնասները վարչական դատավարության կարգով քննվող գործի արդյունքում հատուցված լինելու պայմաններում սույն գործով ներկայացված պահանջը կդիտվի առարկայազուրկ, քանի որ կբացակայի պետությանը որևէ կերպ վնաս պատճառելու փաստը: Այսինքն՝ երկու տարբեր հայցերի դեպքում էլ նույն հիմքով առաջացած գումարները պետության օգտին կրկնակի բռնագանձելն ուղղակիորեն կենթադրի կրկնակի պատասխանատվություն կատարված արարքի համար: Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված ապացուցման և ապացույցները գնահատելու կանոններին համապատասխան դատարանները պետք է հաշվի առնեն հարուցված քաղաքացիական գործերին զուգահեռ քննվող վարչական գործերի առկայության կամ բացակայության փաստը, գումարի բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի առկայությունը, ինչպես նաև այդ ակտերի փաստացի կատարված լինելը:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն դեպքերին, երբ տնտեսվարող սուբյեկտի կողմից վիճարկվել է հարկային մարմնի կողմից կազմված վարչական ակտի (ստուգման ակտի) իրավաչափությունը: Այս դեպքում ևս վարչական ակտի վիճարկման վերաբերյալ գործով հայցը բավարարելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, որպես կանոն, արգելք է տնտեսվարող սուբյեկտի դեկլարացիոն գումարի բռնագանձման վերաբերյալ գործի քննության համար: Ընդ որում, նման դեպքում էլ անհրաժեշտ է գնահատել այն, թե արդյոք հայցի փաստական հիմքում դրվել է միայն ստուգման ակտը:

04.10.2013թ.

16. ՀՀ գլխավոր դատախազություն v. Արմեն Պետրոսյան, քաղ. գործ թիվ ԿԳ/0190/02/12

Էջ  
130-138

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է գնահատման առարկա է դարձրել նաև այն դեպքերը, երբ տնտեսվարող սուբյեկտի տնօրենի նկատմամբ քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական դատավարության տարբեր փուլերում և տարբեր համաներման ակտերի կիրառմամբ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-145-Ն օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարվել է լրացում, համաձայն որի՝ «Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով (ընդունվել է համաներման ակտ) գործի հարուցման մեթոմ, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ: Դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը հետադարձ ուժ չունի և չի տարածվում մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելն սկսված վարույթի վրա:

Զարգացնելով Ա. Հարությունյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժամանակի մեջ քրեադատավարական իրավունքի նորմերի գործողության առանձնահատկությունն այն է, որ գործի քննության կոնկրետ փուլում կիրառման ենթակա են տվյալ պահին գործող քրեադատավարական օրենքի դրույթները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ քրեադատավարական օրենք է գործել հանցանքը կատարելու պահին: Ժամանակի մեջ քրեադատավարական օրենքի գործողության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնից միակ բացառությունը նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասով, որը վերաբերում է դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեադատավարական օրենքի հետադարձ ուժի արգելքին: Նշված արգելքի իմաստով սկսված վարույթի ընթացքում կիրառման ենթակա չէ դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը: Այլ կերպ՝ սկսված վարույթը շարունակվում է քրեադատավարական հին օրենքին համապատասխան, եթե նոր օրենքով վերացվում, սահմանափակվում են դատավարության մասնակցի իրավունքները կամ այլ կերպ վատթարացվում է նրա վիճակը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարության մասնակցի իրավունքները և կարգավիճակը կապված են քրեական դատավարության կոնկրետ փուլում որոշակի իրավահարաբերությունների առկայության հետ: Նշված իրավահարաբերությունների առկայությամբ պայմանավորված՝ քրեական գործով վարույթի ընթացքում դատավարության մասնակիցը ձեռք է բերում տվյալ փուլին բնորոշ կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ: Ուստի, քրեադատավարական օրենքի փոփոխության հետևանքով անձի իրավունքների սահմանափակման կամ նրա վիճակի վատթարացման մասին դատողություններ անելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե նախքան քրեադատավարական օրենքում փոփոխություն կատարելն անձն արդյոք օժտված է եղել որոշակի իրավունքով, որը սահմանափակվել է, կամ ունեցել է որոշակի կարգավիճակ, որը վատթարացել է օրենքի փոփոխության հետևանքով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով արգելվում է կիրառել դատավարական այն օրենքը, որը վերացնում կամ սահմանափակում է այդ օրենքի ուժի մեջ մտնելու պահին դատավարության մասնակցի ունեցած իրավունքը, ինչպես նաև այլ կերպ վատթարացնում է նրա՝ այդ պահին ունեցած կարգավիճակը:

Վերջ նշված քրեական գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գործով քննարկման առարկա հանդիսացող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման վերլուծությունից երևում է, որ այն ուղղակիորեն կապված է համաներման ակտի հետ և սահմանում է դրա կիրառման արգելք: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման համաձայն՝ արգելվում է համաներման հիմքով գործի հարուցումը մերժել, վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Հետևաբար, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-145-Ն օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացումը փոխկապակցված է համաներման կոնկրետ ակտի հետ և առանց դրա կիրառվել չի կարող:



«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-145-Ն օրենքն ընդունվել է 2011 թվականի մայիսի 23-ին, «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» հրապարակվել է 2011 թվականի մայիսի 24-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 25-ին: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 26-ին:

Մեջբերված ժամկետների հետ համադրելով վերոնշյալ վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է, և դրանից բխող իրավահարաբերությունները ծագել են «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Այլ կերպ՝ այն պահին, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում համաներման կիրառման համար սահմանվել է լրացուցիչ արգելք, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներումը դեռևս ընդունված չի եղել, և դրա հետ կապված որևէ իրավահարաբերություն գոյություն չի ունեցել:

Վերոնշյալ դիրքորոշումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածի գործելու հնարավորության այն դեպքերում, երբ տնտեսվարող սուբյեկտի տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական դատավարության տարբեր փուլերում և տարբեր համաներման ակտերի կիրառմամբ:

**Նախաքննության փուլում քրեական հետապնդումը չիրականացնելը կամ դադարեցնելը համաներման ակտերի կիրառմամբ**

1) Դատարանները նմանատիպ գործեր քննելիս պետք է անդրադառնան այն հանգամանքին, թե նախաքննության փուլում քրեական հետապնդումը չիրականացնելու կամ դադարեցնելու համար հիմք է հանդիսացել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման, թե «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման կիրառումը:

Ըստ այդմ, եթե քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է մինչև վերոնշյալ օրենսգրքում փոփոխության կատարումը և կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը, ապա չի կարող գործել պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը, քանի որ հետապնդումը դադարեցնելու պահին գործող քրեադատավարական օրենսգիրքը չի նախատեսել համաներման ակտի կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում նյութական վնասի հատուցված լինելու պայման: Իսկ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետը թեև պարունակում է համաներման ակտի կիրառման արգելք, այնուամենայնիվ դա վերաբերում է այն դեպքերին, երբ հատուցված չէ **օրինական ուժի մեջ մտած դատական ակտով** սահմանված տուժողին հասցված նյութական վնասը: Այլ կերպ՝ այս դեպքում խոսքը չի վերաբերում նախաքննության փուլում քրեական հետապնդումը չիրականացնելուն կամ դադարեցնելուն և կիրառելի է այն դեպքերի համար, երբ համաներումը կիրառվում է դատապարտյալների նկատմամբ:

- Այն դեպքերում, երբ քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված վերոնշյալ փոփոխությունից հետո, սակայն կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը, ապա անձի վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ արտահայտված վերոնշյալ դիրքորոշմամբ չի գործում պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը:

- Իսկ այն դեպքում, երբ քրեական հետապնդումը նախաքննության փուլում չի իրականացվել կամ դադարեցվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման կիրառմամբ, գործում է պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը:

**Դատական քննության փուլում քրեական հետապնդումը դադարեցնելը համաներման ակտի կիրառմամբ.**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝ (...) քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական քննության փուլում դատարանի կողմից քրեական հետապնդումը համաներման ակտի կիրառման հիմքով դադարեցնելու դեպքում սույն բողոքի շրջանակներում քննվող հարցի համատեքստում իրավակարգավորման առանձնահատկությունները չեն տարբերվում նախաքննության ընթացքում նույն հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու իրավակարգավորումից, հետևաբար վերոնշյալ մեկնաբանությունները հավասարապես կիրառելի են նաև այս դեպքում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ համաներման ակտի կիրառման վերը նշված դեպքերից տարբերվում է այն դեպքը, երբ անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս կամ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կիրառվում է համաներում՝ պատժաչափի կրճատման, պատիժը կրելուց ազատելու ձևով: Նման դեպքերի համար կիրառելի չէ պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը, քանի որ այս իրավիճակում տեղի չի ունենում քրեական հետապնդման դադարեցում:

## **Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները**

05.04.2013թ.

17. Հայկ Հարությունյան և մյուսներ v. «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ, Մանվել Տեր-Առաքելյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3246/02/11

Էջ  
139-146

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է վիրավորանք կատարած անձ հանդիսանալու հանգամանքի ապացուցման բեռի բաշխման, ինչպես նաև վիրավորանքի հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման կանոնների կիրառման հարցերին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝ ա) անձին վիրավորանքի համար պատասխանատվության ենթարկելիս առաջնահերթ պետք է պարզել վիրավորական արտահայտությունները վերջինիս կողմից կատարած լինելու, այսինքն՝ տվյալ սուբյեկտի՝ վիրավորանք կատարած անձ հանդիսանալու հանգամանքը,

բ) տուժողի կողմից որևէ անձի որպես վիրավորանք հասցրած անձ որակելը պետք է կատարվի այնպիսի կոնկրետ ապացույցների մատնանշմամբ, որոնք վկայում են վիրավորական արտահայտությունները տվյալ անձի կողմից կատարած լինելու մասին,

գ) ենթադրությունների հիման վրա անձին վիրավորանք հասցրած անձ դիտարկելը թույլատրելի չէ,

դ) նշված փաստերը չապացուցելու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է հայցվորը:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ վիրավորանքի կամ գրպարտության միջոցով անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորելու հետևանք-

քով պատճառված վնասի հատուցման գործերով անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ անձը վնաս կարող է պատճառել ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդավորված՝ այլ անձի կամ անձանց միջոցով: Հետևաբար նման դեպքերում վնասի հատուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի ուժով պետք է դրվի ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված վնաս պատճառողների վրա: Հետևաբար վերջիններս տուժողի առջև կրեն կրեն համապարտ պատասխանատվություն:

Վերը նշված դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սուկ գույքի սեփականատեր լինելու փաստի ուժով պատասխանող Մանվել Տեր-Առաքելյանը չի կարող պատասխանատվություն կրել վիրավորանք հասցնելու համար, քանի դեռ չի ապացուցվել, որ նա է կատարել վիրավորանք հասցնելուն ուղղված գործողությունները:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետը, 1071.1-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1071.1-րդ հոդվածները կարգավորում են անձին (նրա կյանքին, առողջությանը) կամ նրա գույքին պատճառված գույքային վնասի հետ կապված հարաբերությունները, որոնք պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով կարգավորվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետով, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով կարգավորվում են անձի անձնական ոչ գույքային իրավունքի խախտմամբ պատճառված ոչ գույքային վնասի (փոխհատուցման) հետ կապված հարաբերությունները, այսինքն՝ կարգավորվող հարաբերությունների առարկան և էությունը տարբեր են: Հետևաբար վիրավորանքի հետևանքով պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հարցը լուծելիս վերը նշված իրավադրույթները կիրառման ենթակա չեն:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ վերահաստատել է պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով գույքային վնասի հատուցման վերաբերյալ արտահայտած իր այն դիրքորոշումը, համաձայն որի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դրամական հատուցումներն իրենցից ներկայացնում են ոչ նյութական վնասի հատուցում և պայմանավորված չեն իրական վնասի կամ բաց թողնված օգուտի առկայությամբ կամ բացակայությամբ: Նշված վնասները, եթե այդպիսիք կան, հատուցման ենթակա են առանձին կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի հիման վրա: Այսպես՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի՝ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ գրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով իրեն պատճառված **գույքային վնասները**, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև նշել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում ամրագրված դրամական փոխհատուցման, երբ դատարանը կարող է մերժել դրամական փոխհատուցումը՝ հիմք ընդունելով պատասխանողի գույքային դրությունը, նույն հոդվածի 12-րդ կետում ամրագրված **գույքային վնասը** ենթակա է փոխհատուցման ամբողջ ծավալով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վնասի ինստիտուտը կանոնակարգող նորմերին համապատասխան: Հաշվի առնելով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը «վնաս» եզրույթն օգտագործում է իրական վնաս և բաց թողնված օգուտ իմաստներով և օրենսգրքում որևէ այլ տեղ, բացի 1087.1-րդ հոդվածից, չի կիրառվում «գույքային վնաս» եզրույթը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «գույքային վնաս»-ը պետք է մեկնաբանվի որպես անձին պատճառված իրական վնաս և/կամ բաց թողնված օգուտ: Վնասում ներառվում են նաև **ողջամիտ** դատական ծախսերը, որոնք անձը կատարել է կամ կատարելու է իրավունքները վերականգնելու համար, ինչպես նաև ցանկացած այլ ծախս, որն ուղղակիորեն կատարվել է յուստված իրավունքների վերականգնման համար (*լրե՛ս Թաթույ Մանասեթյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

04.07.2013թ.

18. Մարգարիտա Խաչատրյան v. «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0807/02/11

Էջ  
147-158

**Խնդիր.** Արդյո՞ք ներողություն խնդրելը կիրառելի է որպես պատասխանատվության միջոց գրապարտության համար:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գրապարտության դեպքում որպես ներազդման միջոց նախատեսված են երկուսը՝ *գրապարտություն համարվող տեղեկագրության հերքումը* և *ոչ նյութական վնասի դրամային հատուցումը*: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ գրապարտության դեպքում դատարանը կկիրառի որևէ այլ միջոց, քան վերոնշյալները, պետք է արձանագրել խոսքի ազատության իրավունքի միջամտություն, որը նախատեսված չէ օրենքով: Ման միջամտությունը հանգեցնում է սահմանադրորեն ամրագրված հիմնարար իրավունքի խախտման:

04.10.2013թ.

19. Վարդան Աթայան v. «Արգար Հինգերորդ» ՍՊԸ, Մանվել Տեր-Առաքելյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/3260/02/11

Էջ  
159-165

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է իրավաբանական անձի կողմից վիրավորանքի կամ գրապարտության համար պատասխանատվություն կրելու հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերահաստատելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ վիրավորանքի կամ գրապարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության սուբյեկտների շրջանակի սահմանափակում օրենսդիրն արդարացիորեն չի նախատեսել, և այդպիսիք կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ **իրավաբանական անձինք** (*զե՛ս Վանտ Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սլիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԼԿ/0749/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*), Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ նշված դիրքորոշման հիմքում ընկած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ տրված իրավակարգավորումը, համաձայն որի՝ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրապետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ Քաղաքացիներ) ու **իրավաբանական անձինք են**, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (հոդված 128):

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետով հատկապես նախատեսված է անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի՝ իբրև ոչ նյութական բարիքների դատական կարգով պաշտպանության հնարավորությունը ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ իրավաբանական անձանց կատարած խախտումներից:

Սույն գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև այն խնդրին, թե ինչ ապացույցներով կարող է հիմնավորվել իրավաբանական անձի՝ վիրավորանք կամ գրապարտություն կատարած անձ հանդիսանալու փաստը:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ան-

ծի պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության գործերով ևս կիրառելի են ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության վերաբերյալ օրենսդրական ընդհանուր կարգավորումները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

ա) վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից,

բ) գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

05.04.2013թ.

20. «ԿԱ ընդ ԿԱ» ՍՊԸ v. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2780/02/09

Էջ  
166-176

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից գույքին պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավաչափության և իրական վնասի գնահատման հարցերին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքի վարձակալը՝ որպես վարձակալության պայմանագրի հիման վրա գույքը տիրապետող և օգտագործող անձ, օրինական (տիտղոսային) տիրապետող է: Վարձակալության պայմանագրի ուժով գույքը վարձակալած անձի մոտ ծագել են այդ գույքի օգտագործման և տիրապետման գույքային իրավունքներ: Այդ իրավունքները ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են գույք: Ուստի, գույքային իրավունքներին պատճառված վնասը ևս ենթակա է հատուցման այդպիսի իրավունքներ կրող անձին՝ վարձակալին:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև վարձակալած անշարժ գույքին պատճառված վնասի հատուցման պահանջը սեփականատիրոջ կողմից ներկայացվելու խնդրին:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ սեփականության իրավունքը՝ որպես բացարձակ իրավունք, պարտավորեցնում է յուրաքանչյուրին ձեռնպահ մնալ սեփականատիրոջ իրավունքների խախտմանն ուղղված գործողություններից: Հետևաբար, իրավունքի խախտման յուրաքանչյուր դեպքում սեփականատերն այն կարող է վերականգնել՝ հակաիրավական արարք կատարած անձի դեմ հայց հարուցելով: Վարձակալության հարաբերությունների դեպքում գույքի սեփականատիրոջից բացի գույքի օրինական տիրապետող է հանդիսանում նաև վարձակալը, ով ևս պաշտպանված է իր գույքային իրավունքի նկատմամբ ցուցաբերվող հակաիրավական արարքներից:

Այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարձակալի կողմից իր խախտված իրավունքները վերականգնելը, տվյալ դեպքում գույքին պատճառված վնասի հատուցում ստանալը, վերացնում է վնաս պատճառողից հատուցում պահանջելու սեփականատիրոջ իրավունքը: Նման դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետի կանոնակարգումը, որի ուժով վարձակալը պարտավոր է վերականգնել վնասված գույքը մինչև վարձատուին հանձնելը: Վարձակալած գույքին պատճառված վնասի դիմաց ստացված հատուցումը վարձակալը պետք է ուղղի գույքի վերականգնմանը, հակառակ դեպքում կրում է այդ արժեքը գույքի սեփականատիրոջը հատուցելու պարտականություն:

04.07.2013թ.

21. Ա/Ձ Նունե Հովհաննիսյան v. Վարդան Պետրոսյան, քաղ. գործ թիվ Էջ 177-184  
ԱՎԴ/0306/02/11

**Խնդիր.** Գույքը տիրապետելու և օգտագործելու սեփականատիրոջ իրավունքները խախտելու հետևանքով գույքին պատճառված վնասի և վնաս պատճառած անձի գործողությունների միջև պատճառահետևանքային կապն արդյո՞ք առկա է այն դեպքում, երբ այդ նույն գույքի վրա այլ քաղաքացիական գործով որպես հայցի ապահովման միջոց արգելանք է դրվել:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Սույն գործի փաստերի համաձայն՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2009 թվականի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և 9.746.000 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք է դրվել Սիմոն Սարգսյանին և Ա/Ձ Նունե Հովհաննիսյանին պատկանող անշարժ, շարժական գույքերի և դրամական միջոցների վրա:

ՀՀ ԱՆ ԳԱՀԿ ծառայության Արարատի բաժնի հարկադիր կատարողի 01.12.2009 թվականի որոշմամբ արգելանք է դրվել Ձեռնարկատիրոջը պատկանող շարժական և անշարժ գույքերի վրա՝ արգելելով դրանց տնօրինումը:

Սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված փաստական հանգամանքների առկայությամբ, մասնավորապես՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2009 թվականի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման առկայության պայմաններում, ուղղակիորեն հերքվում է 25.11.2009 թվականից հետո Վարդան Պետրոսյանի որևէ գործողության հետևանքով Ձեռնարկատիրոջ կողմից վնասներ կրելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում Վարդան Պետրոսյանի մեղքը, վնասի և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապն առկա է 05.07.2009 թվականից, երբ վերջինս փակել է վարձակալությամբ Ա/Ձ Նունե Հովհաննիսյանին հանձնած խանութը մինչև 25.11.2009 թվականը, երբ այլ քաղաքացիական գործի քննության ընթացքում Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և արգելանք է դրվել Ձեռնարկատիրոջը պատկանող գույքի վրա: Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստորադաս դատարանն իրավացիորեն հանգել է այն հետևության, որ 2.030.700 ՀՀ դրամը՝ որպես ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառված վնաս և 2.872.500 ՀՀ դրամ բաց թողնված գուտ եկամուտները, ենթակա են բավարարման մասնակիորեն՝ 2009 թվականի հուլիս ամսից մինչև 2009 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում պատասխանողի ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի չափով, որը կազմում է 424.375 ՀՀ դրամ գումար:

04.10.2013թ.

22. Նելլի Մկրտչյան v. «Երևան հյուրանոց» ԲԲԸ, քաղ. գործ թիվ Էջ 185-193  
ԵԿԳ/2600/02/10

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատանքային հարաբերություններում աշխատողի նյութական պատասխանատվության հիմքերին ու պայմաններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատանքային հարաբերություններում վնասի հատուցման հարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված վնասի ինստիտուտի ընդհանուր կանոնները, եթե ՀՀ աշխատանքային օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր իրավական դիրքը-

րոշումները, անհրաժեշտ է համարել առավել մանրամասն անդրադառնալ պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին.

**Վնասը** քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

**Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է**, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

**Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը** ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

**Վնաս պատճառող անձի մեղքը** նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում:

Վերը նշված դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկություններին: Սասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 232-րդ, 237-րդ հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկությունները հանգում են հետևյալին՝ պատճառված վնասի համար պատասխանատվության վերը շարադրված պայմաններին ավելանում են ևս երկու պայման, այն է՝ **վնաս պատճառողն ու տուժողն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ, և վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:** Ընդ որում, պատճառված վնասի համար պատասխանատվության մյուս տարրերն աշխատողի կյուրական պատասխանատվության դեպքում հարկ է դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համատեքստում, որը թվարկում է աշխատողի կյուրական պատասխանատվության դեպքերը՝ սպառիչ սահմանելով վնաս պատճառելուն ուղղված հակաիրավական վարքագծի դրսևորումները:

## ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

05.04.2013թ.

23. «Դոուլ Ֆուլ Քամփրնի» ինք. ընկերություն v. «Պաստիչերիա Քեյք» ՍՊԸ, Եջ  
 քաղ. գործ թիվ ԵԿԴ/2221/02/10 194-201

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապրանքային նշանի գրանցումը որպես անբարեխիղճ մրցակցության գործողությունն անվավեր ճանա-

չելու պահանջներով ապացուցման առարկան կազմող փաստերի շրջանակին:

\* Միաժամանակ *Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այն հարցին, թե ում դեմ պետք է ներկայացվի ապրանքային նշանի գրանցումը որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն անվավեր ճանաչելու պահանջը:*

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 13-րդ հոդվածի 1-ին մասի, 14-րդ հոդվածի 1-ին մասի, 15-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ **ձեռնարկատիրական գործունեության ընթացքում** իրականացվող ցանկացած գործողությունը կամ վարքագիծը, որը հակասում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության, այն է՝ ազնվության, արդարության, ճշմարտության և անաչառության սկզբունքները, **համարվում է անբարեխիղճ մրցակցություն**, որն արգելված է օրենքի ուժով:

Անբարեխիղճ մրցակցության գործողություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընթացքում դրսևորվող ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը՝

1. առաջացնում է կամ կարող է առաջացնել **շփոթություն** այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, կամ

2. **մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել** հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, կամ

3. շփոթություն առաջացնելուց անկախ վնասում է կամ կարող է վնասել **տնտեսվարող սուբյեկտի համբավը կամ վարկաբժեքը (ոչ նյութական ակտիվը)**,

4. իրենից ներկայացնում է **ձեռնարկատիրական գործունեության** վերաբերյալ ցանկացած **կեղծ կամ անհիմն հայտարարություն**, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել տնտեսվարող սուբյեկտին, նրա գործունեությունը կամ առաջարկած ապրանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, 72-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության ձեռնարկատիրական բնույթը որոշելու համար անհրաժեշտ է ոչ միայն գնահատել այդպիսի գործունեության առանձին հատկանիշները, այլև հաշվի առնել տնտեսվարող սուբյեկտի կազմակերպահրավական ձևը: Կազմակերպահրավական ձևը կանխորոշում է տնտեսվարող սուբյեկտի գործունեության բնույթը: Մասնավորապես՝ տնտեսական ընկերությունները և ընկերակցություններն իրենց ստեղծմամբ հետապնդում են շահույթ ստանալու նպատակ՝ տնտեսության որոշակի ոլորտում գործունեություն ծավալելով: Հետևաբար, եթե քաղաքացու կողմից իրականացվող գործունեության ձեռնարկատիրական բնույթի պարզման համար, ի թիվս այլ հատկանիշների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև շահույթ (եկամուտ) ստանալու նպատակը (*իրավական հիմնավորումները տե՛ս Նունե Սահակյանն ընդդեմ «Իրարկո Զոնաթրաքշն» ՓԲԸ-ի թիվ 3-1161(SԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.08.2007 թվականի որոշումը*), ապա տնտեսական ընկերությունների կամ ընկերակցությունների դեպքում այդպիսի նպատակը կանխորոշված է նրանց կազմակերպահրավական ձևով: Վճռաբեկ դատարանը վերահաստատել է *Նունե Սահակյանն ընդդեմ «Իրարկո Զոնաթրաքշն» ՓԲԸ-ի* գործով գործունեության ձեռնարկատիրական բնույթը պարզելու վերաբերյալ արտահայտած իր դիրքորոշումը, մասնավորապես՝ այն, որ այդպիսի գործունեությունը, բացի շահույթ ստանալու նպատակ հետապնդելուց, պետք է կրի նաև պարբերական բնույթ և կատարվի անձի նախաձեռնությամբ (ռիսկով):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված բոլոր հատկանիշներն էլ վերաբերելի են տնտեսական ընկերակցություններին կամ ընկերություններին: Այդուհանդերձ, այլ է խնդիրը, երբ տնտեսվարող սուբյեկտը, ունենալով համապատասխան կազմակերպահրավական ձև, փաստացի չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ:



Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման փաստի ապացուցումը կարող է իրականացվել հարկային մարմինների կողմից ընկերության գործունեության կասեցման վերաբերյալ ներկայացված համապատասխան ապացույցով:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն անհիմն է, քանի որ Ընկերության կողմից իրականացված որևէ գործողության կամ վարքագծի անբարեխիղճ մրցակցություն (անբարեխիղճ մրցակցության գործողություն) համարվելու համար նախ անհրաժեշտ էր, որպեսզի այն դրսևորվեր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս, ինչպես նաև պարունակեր «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով անբարեխիղճ մրցակցությանը (անբարեխիղճ մրցակցության գործողությանը) ներկայացվող պարտադիր տարրերը: Նշված փաստերն էլ կազմում են տույժ գործով ապացուցման առարկան, մինչդեռ որևէ ապացույց առ այն, որ Ընկերությունն օգտագործել է վիճարկվող ապրանքային նշանը ձեռնարկատիրական գործունեության ընթացքում, Կազմակերպության կողմից չի ներկայացվել: Հետևաբար, զուտ ապրանքային նշանի գրանցման փաստը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի համարվում իրավաբանական անձի կողմից թույլ տրված անբարեխիղճ մրցակցության գործողություն: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համատեքստում գործողության կամ վարքագծի՝ որպես անբարեխիղճ մրցակցություն համարվելու համար անհրաժեշտ էր նախ և առաջ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստի հաստատումը:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ ապրանքային նշանների պետական գրանցման իրականացման գործառնությունը վերապահված է բացառապես պետական լիազոր մարմնին (Գործակալությանը): Պետական լիազոր մարմնի կողմից ապրանքային նշանի պետական գրանցում իրականացնելու պահից տվյալ նշանի նկատմամբ ծագում է այդ նշանի իրավատիրոջ իրավունքը, և քանի դեռ ապրանքային նշանի գրանցման փաստը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 22-րդ կամ 23-րդ հոդվածներով սահմանված կարգով չի վիճարկվել կամ իրավատերը չի հրաժարվել ապրանքային նշանի նկատմամբ իրավունքից, գործում է այդ ակտի իրավաչափության կանխավարկածը: Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նաև *Կարեն Մազականյանն ընդդեմ Սեդա Ներսիսյանի և այլոց* գործով արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական մարմնի կողմից իրավունքի գրանցման վերաբերյալ ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում: Հետևաբար պետք է եզրակացնել, որ նշված ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմին, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը (*Կարեն Մազականյանն ընդդեմ Սեդա Ներսիսյանի և այլոց թիվ ԱՎԴ1/0098/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Կազմակերպության կողմից ապրանքային նշանների գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջի ներկայացումը ենթադրում է հենց վարչական ակտի (ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի պետական գրանցման) վիճարկում: Մինչդեռ, նման պահանջ չի կարող ներկայացվել ապրանքային նշանի իրավատիրոջ՝ Ընկերության դեմ, քանի որ ապրանքային նշանների գրանցումն իրականացնում է Գործակալությունը: Փաստերի դասավորվածության նման պայմաններում գործում է Ընկերության անվամբ թիվ 12544 «DOLE» (Դոլ) և թիվ 13301 «DOLE & SUN Design» (Դոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանների գրանցումների իրավաչափության կանխավարկածը:

## ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

05.04.2013թ.

24. Մուսանա Նենյիսյան v. Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար  
Էմմա Շարոյան, Սուրեն Առաքելյան, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2472/02/08

Էջ  
202-210

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանն անդրադարձել է ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

**Վճարել դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185, 1187, 1188, 1216, 1225, 1226, 1227 հոդվածները՝ Վճարել դատարանն արձանագրել է, որ **ժառանգության ընդունումը ներկայացուցչի միջոցով հնարավոր է, եթե լիազորագրում հատուկ նախատեսված է այն ընդունելու լիազորությունը:** Միաժամանակ նշել է, որ վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգության ընդունումն իրականացվում է երկու եղանակով՝ ըստ կտակի և ըստ օրենքի: Ընդ որում, ժառանգման երկու եղանակի դեպքում էլ ժառանգի կողմից ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից **վեց ամսվա** ընթացքում: Հատկանշական է, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է **վեցամսյա ժամկետ, որը** հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից: Օրենսդիրը նախատեսել է նաև ժառանգի կողմից դիմումը նոտարին անձամբ չհանձնելու դեպքում կատարել հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը, կամ
- նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը:

Նշված պայմաններից բացի օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգին ժառանգությունն ընդունել ներկայացուցչի միջոցով, և այն էլ մեկ պայմանով, որ **լիազորագրում հատուկ նախատեսված լինի ժառանգությունն ընդունելու լիազորությունը:**

Փաստորեն, օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին **վեցամսյա** ժամկետում հանձնելը, հետևաբար ժառանգի կողմից ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու դեպքում լիազորագիրը ևս պետք է ժառանգի կողմից ներկայացուցչին տրամադրված լինի ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված **վեցամսյա** ժամկետում:

Վճարել դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի և 290-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով ժառանգության ընդունումը դիտվում է միակողմ գործարք, գտել է, որ վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին կետի իրավական կարգավորումը և հաշվի առնելով ժառանգական իրավահարաբերությունների առանձնահատկությունը՝ Վճարել դատարանն արձանագրել է, որ ժառանգի անունից լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ (օրինակ՝ լիազորված է ընդունելու միայն ըստ օրենքի ժառանգությունը, բայց ընդունել է ըստ կտակի ժառանգությունը) ներկայացուցչի կողմից գործելու դեպքում վերջինիս գործողությունների արդյունքում իրավական հետևանքներ չեն առաջանում ներկայացվողի՝ ժառանգի համար: Այդպիսի հետևանքներ չեն առաջանում նաև լիազորությունների բացակայությամբ դիմում ներկայացրած անձի նկատմամբ: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կանոնների կիրառմա-

նը, ապա ներկայացուցի գործողություններին ապագայում հավանություն տալը կարող է տեղի ունենալ միայն ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված **վեցամսյա ժամկետի ընթացքում**, ինչը հավասարազոր է ժառանգի կողմից անձամբ ժառանգությունն ընդունելուն, այնքանով, որքանով նման հավանություն տալու համար ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ընթացակարգը:

04.07.2013թ.

25. Օֆելյա Խաչատրյան v. ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ԵԱԲԴ/0554/02/11

Էջ  
211-218

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդադարձել է մինչև 1999 թվականի հունվարի մեկը բացված ժառանգության դեպքում նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրության, ինչպես նաև՝ ժառանգական գանգվածում ներառված գույքի մի մասի փաստացի տիրապետման դեպքում ժառանգության ընդունման հարցերին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ որպեսզի կիրառելի լինեն ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի նորմերը, Օրենքը նախատեսում է մի քանի պայման:

Նախ՝ ժառանգությունը պետք է բացված լինի մինչև ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դնելը: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 1999 թվականի հունվարի 1-ից:

Երկրորդ՝ ժառանգությունը չպետք է ընդունված լինի որևէ մեկի կողմից: Այսինքն պետք է բացակայի ժառանգական գանգվածում ներառված գույքի՝ իրավահաջորդության կարգով անցումը այլ անձանց՝ ժառանգներիին:

Երրորդ՝ ժառանգությունը որևէ մեկի կողմից ընդունված չլինելու դեպքում այն չպետք է դարձած լինի պետության կամ համայնքի սեփականությունը:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ երկրորդ և երրորդ պայմանները չպետք է տարանջատել, քանի որ դրանք գործում են միաժամանակ՝ հաշվի առնելով այն, որ ժառանգությունը չընդունվելու դեպքում այն դառնում է պետության կամ համայնքի սեփականությունը: Ընդ որում, այդ պայմանները պետք է առկա լինեն մինչև 1999 թվականի հունվարի մեկը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախկին՝ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի ժառանգման հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել, եթե ժառանգությունը բացվել է մինչև 1999 թվականի հունվարի 1-ը, և բացակայում են վերոնշյալ պայմանները:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով պրակտիկայում ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի կիրառման և մեկնաբանման միասնականությունն ապահովելու անհրաժեշտությունը, արձանագրել է, որ դատարանները ժառանգման հարաբերությունների հետ կապված այնպիսի վեճեր լուծելիս, որոնց դեպքում կիրառման է ենթակա հիշատակված հոդվածը, պետք է հաշվի առնեն այն, որ ժառանգման հարաբերությունները կանոնակարգող դրույթները նպատակ են հետապնդում պահպանել անձանց սեփականության իրավունքը, որոնց օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխանցվում է մահացած անձի գույքը (ժառանգությունը): Այս առումով ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածն ուղղակիորեն չի նախատեսում դրույթ, որն ամրագրված է ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետում, այն է՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Այդու-

հանդերձ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի հիշատակված դրույթն ուղղակիորեն ամրագրում է «ժառանգության ընդունում», «ժառանգական գույք» եզրույթները, առանց տարանջատելու ամբողջ ժառանգության կամ դրա մասի ընդունումը: Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ ժառանգի կողմից ընդունված գույքը կազմել է ժառանգական զանգվածի միայն մի մասը, այն չի դադարում ժառանգական գույք լինելուց, ժառանգը պետք է համարվի ժառանգությունն ընդունած:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ժառանգության ընդունման ընդհանուր ժամկետների վերաբերյալ նախկին և գործող օրենսդրական կարգավորումները նույնն են՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածով նախատեսված ժառանգության ընդունման ժամկետի հաշվարկի և այդ ժամկետը բաց թողնելու իրավական հետևանքների հարցի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպեսզի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն ընդունած (*լուճա Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռախա Հաբեշյանի և մյուսների թիվ ԵՄԴ/0235/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

04.10.2013թ.

26. Սամվել Հովհաննիսյան v. Լիդա Հովհաննիսյան և մյուսներ, քաղ. գործ թիվ ԱԲԱԳ-2/0420/02/11

Էջ  
219-226

**Խնդիր.** Ժառանգման իրավունք ունեցող անձի կողմից մինչ ժառանգատուի մահը նրան պատկանող որևէ գույքի փաստացի տիրապետումը և կառավարումը ժառանգության բացումից հետո շարունակելը կարող է համարվել ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորում, թե՛ անհրաժեշտ են նաև այլ կանխամտածված, ակտիվ գործողություններ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերահաստատելով նախկին որոշումներում (մասնավորապես՝ թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը, թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը, թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը, թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը) արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունված ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր: Ընդ որում, ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը,

որ ժառանգը գույքը տիրապետել և կառավարել է նաև մինչև ժառանգատուի մահը: Ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ժառանգության գանգվածի մեջ մտնող որևէ գույք ժառանգման իրավունք ունեցող անձի փաստացի տիրապետման և կառավարման ներքո կարող է գտնվել նաև մինչև ժառանգության բացումը: Ման պարագայում ժառանգության ընդունման համար էական է այն փաստը, որ ժառանգը ժառանգատուին պատկանող գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները շարունակի կատարել նաև ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում: Այլ է իրավիճակն ըստ կտակի ժառանգման պարագայում, քանի որ այդ դեպքում ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգը պետք է հիմնավորի, որ իր գործողությունները միտված են եղել հատկապես ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն (*յրես Գևորգ Բերբերյանն ընդդեմ Մարինե Բերբերյանի թիվ ԵԱԶԳ/1018/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*): Ըստ կտակի ժառանգության դեպքում օրենքով սահմանված ժամկետում կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն ինքնին չեն վկայում այն մասին, որ ժառանգն ընդունել է **ըստ կտակի** ժառանգությունը, այդ դեպքում գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները կարող են վկայել **ըստ օրենքի** ժառանգությունն ընդունելու մասին (եթե ըստ կտակի ժառանգը պատկանում է ըստ օրենքի ժառանգների թվին), իսկ **ըստ կտակի** ժառանգությունն ընդունելու համար անհրաժեշտ են գիտակցված, ակտիվ գործողություններ: Ըստ էության, դրանք հանգում են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելուն:

29.11.2013թ.

27. Տաթևիկ Մուշեղյան v. Վաչե Մուշեղյան և մյուսների, քաղ. գործ թիվ ԳԳ4/0191/02/11

Էջ 227-238

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելու (ժառանգության տրանսմիսիա) ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ նշված դրույթով օրենսդիրը նախատեսել է այնպիսի դեպքեր, երբ ժառանգը (ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի), չհասցնելով ընդունել ժառանգությունը, մահանում է մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Ման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ժառանգության տրանսմիսիայի ինստիտուտը, ըստ որի՝ նշված իրավիճակում մահացած ժառանգի ժառանգը ձեռք է բերում ժառանգի այն իրավունքը, որը վերջինս չի հասցրել իրականացնել: Այսինքն՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի ժառանգի չիրականացված իրավունքի փոխանցումը վերջինիս ժառանգներին: Ընդ որում, ժառանգը, որը իրավիրված էր ժառանգության և չհասցնելով ընդունել ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից, մահանում է ժառանգությունը բացելուց հետո, քաղաքացիական իրավունքի տեսությունում անվանվում է **տրանսմիտենտ**, իսկ այն անձինք, որոնց փոխանցվում է ժառանգությունն ընդունելու իրավունքը՝ **տրանսմիսարներ**:

Ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով և ծագում է հետևյալ պայմաններում.

- **Ժառանգը**, որը իրավիրված է ժառանգության և ունի ժառանգելու սուբյեկտիվ իրավունք (իրավասու է ընդունելու ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից), ժառանգությունը բացելուց հետո, չհասցնելով այն ընդունել կամ հրաժարվել ժառանգությունից, **մահացել է.**

- **Մահացած ժառանգը (տրանսմիտենտ)** կարող է լինել ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգ.

- **Ժառանգը** մահանում է ժառանգության բացումից հետո մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը լրանալը.

- **Ժառանգելու իրավունքը**, որը պատկանում էր մահացած ժառանգին, փոխանցվում է նրա ժառանգներին: Ընդ որում, առաջին ժառանգը կապված է երկրորդ ժառանգի հետ այնպես, ինչպես ժառանգատուն և ժառանգները.

- **Մահացածի ժառանգը (տրանսմիսաբը)** իրավասու է ընդունելու ժառանգությունը լիազորությունների այն ծավալով և բովանդակությամբ, որին հրավիրված էր մահացած ժառանգը, կամ հրաժարվելու այդ ժառանգությունից:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերության վերը նշված առանձնահատկությունները և ծագման հիմքերը, անհրաժեշտ է համարել անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի կանոնակարգմանը ժառանգական իրավունքի նորմերի լույսի ներքո:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետը, 1187-րդ հոդվածի 1-ին կետը, 1188-րդ հոդվածի 1-ին կետը, 1216-րդ հոդվածը, 1225-րդ հոդվածի 1-ին կետը, 1226-րդ հոդվածի 1-ին կետը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է **վեցամսյա ժամկետ, որը** հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից (*տե՛ս Մուսաննա Նեմչինովայի հայցն ընդդեմ Կենտրոն նուրաբական գրասենյակի նուրաբ Էմմա Շաբոյանի, Սուրեն Առաքելյանի թիվ ԵԿԴ/2472/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ չի կարող խոսք լինել ժառանգության տրանսմիսիայի մասին այն դեպքում, երբ ժառանգը ժառանգության բացման օրվանից **վեց ամսվա** ընթացքում չի արտահայտել իր ցանկությունը ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, և մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո: Պետք է ի նկատի ունենալ, որ կենդանության ընթացքում ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը պայմանականորեն նշանակում է իրավունքի կորուստ, քանի որ ժառանգն այնուամենայնիվ կարող էր ընդունել ժառանգությունը սահմանված ժամկետում, մինչդեռ այն չի իրականացրել մինչև ժամկետի ավարտը: Ընդ որում, եթե ժառանգը մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո, ապա ժառանգի այդպիսի իրավունքի կորուստն ունի բացառիկ նշանակություն, քանի որ ոչ ոք բացի անմիջապես ժառանգից չի կարող հարց բարձրացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

**Այսինքն՝ ժառանգության տրանսմիսիայի կանոնները գործում են այն դեպքում, երբ տրանսմիսիանը մահացել է մինչև ժառանգությունն ընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու համար սահմանված ժամկետի ավարտը՝ չհասցնելով այն ընդունել կամ դրանից հրաժարվել:**

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 3-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված նորմով օրենսդիրը կտակի ազատությունը սահմանափակել է պարտադիր բաժնի իրավունքով, որը կտակի առկայության պայմաններում համարվում է ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից՝ վերջինիս շնորհիվ հատուկ սուբյեկտի կարգավիճակ: Մինչդեռ, կտակի առկայության պայմաններում ժառանգության տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցվելու դեպքում առկա է սահմանափակում՝ **մահացած ժառանգի** (տրանսմիսիանտի) ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի փոխանցումը վերջիններիս ժառանգներին (տրանսմիսաարներին) արգելվում է: Այսպիսի սահմանափակումը պայմանավորված է կտակի ազատության, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը միայն այդ անձին անմիջականորեն պատկանելու սկզբունքով, ինչպես նաև պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգի՝ հատուկ սուբյեկտ լինելու հանգամանքով: Հետևաբար, ժառանգության պարտադիր բաժինը չի

կարող փոխանցվել այլ անձի, ով անմիջականորեն չունի պարտադիր բաժնի պահանջի իրավունք:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է կտակում նշել այլ ժառանգի (ենթաժառանգի) այն դեպքի համար, եթե նրա նշանակված ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները:

Նշված նորմով ամրագրված են այն դեպքերը, երբ կտակարարն իրավունք ունի կտակում ոչ միայն նշել հիմնական ժառանգին կամ ժառանգներին, այլև ենթանշանակել այսպես կոչված պահեստային ժառանգ այն դեպքի համար, եթե ժառանգության բացման պահին մահացած լինի կտակում սկզբնապես նշված ժառանգը՝ չհասցնելով այն ժառանգել:

Մտանանշված իրավահարաբերության դեպքում չի կարող գործել տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցելու ընթացակարգը, ինչն ուղղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի իրավակարգավորումից:

Տրանսմիսիայի հիմքով ժառանգությունն ընդունելու իրավունքը կարող է իրականացվել ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-1228-րդ հոդվածներին համապատասխան:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն անձինք, որոնց համար ժառանգության իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում ժառանգության տրանսմիսիայի կարգով ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել ժառանգության ընդունման ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Ընդ որում, մահացած ժառանգի ժառանգները ժառանգությունն ընդունելու համար ընդհանուր հիմունքներով սահմանված կարգով պետք է իրականացնեն ակտիվ գործողություններ, ինչպես նաև՝ ժառանգությունն իրենց կողմից ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում իրավասու են դիմելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու կապակցությամբ:

Հատկանշական է, որ **մահացած ժառանգի** (տրանսմիստենտի) այլ ժառանգների (տրանսմիսարների) կողմից ժառանգությունն ընդունելու պարագայում վերջիններիս համաձայնության առկայության դեպքում ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգը (տրանսմիսար) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ևս կարող է ընդունել ժառանգությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտել զուգահեռներ անցկացնել տրանսմիսայի իրավունքով ժառանգությունն ընդունելու և ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտների միջև:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ, 1219-րդ, 1221-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրը նախատեսել է նաև այնպիսի դեպքեր, երբ ըստ օրենքի ժառանգը մահանում է մինչև ժառանգատուի ժառանգության բացումը: Ման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտը, որը ենթադրում է, որ ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է վերջինիս երեխաներին, որոնց միջև այն բաշխվում է հավասարապես: Ընդ որում, ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել:

Փաստորեն, ըստ օրենքի ժառանգների շրջանակն ընդարձակվել է նաև ներկայացման իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակով, այսինքն՝ ներկայացման իրավունքով ժառանգման հրավիրվող անձինք դասվում են ըստ օրենքի ժառանգների թվին: Ի դեպ, օրենսդիրը հստակ սահմանել է, թե ովքեր կարող են ներկայացման իրավունքով

համարվել ժառանգներ՝ ամրագրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում:

Համեմատելով ժառանգության իրավունքի վերոնշյալ երկու ինստիտուտները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

առաջին. տրանսմիսիայի իրավունքով ժառանգումը տեղի է ունենում ինչպես ըստ օրենքի, այնպես էլ՝ ըստ կտակի, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգումը տեղի է ունենում միայն ըստ օրենքի:

երկրորդ. տրանսմիսիայի իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակը սահմանափակված չէ, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգել կարող են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում ամրագրված ժառանգների զավակները:

երրորդ. տրանսմիսիայի իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է ժառանգատուից հետո՝ չհասցնելով ընդունել ժառանգությունը: Մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է մինչև ժառանգությունը բացվելը, այսինքն՝ ժառանգատուից առաջ:

29.11.2013թ.

28. Արթուր Վարտանով v. Մարինա Եգիևա, քաղ. գործ թիվ ԵՇԳ/1050/02/12

Էջ  
239-243

**Խնդիր.** Ուլբեր են հրավիրվում ժառանգման մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում նրանք **մահացած են ճանաչվում միաժամանակ** և ժառանգման են հրավիրվում **նրանցից յուրաքանչյուրի** ժառանգները՝ **ժառանգության բացման օրը կենդանի**, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

05.04.2013թ.

29. Անուշ Գևորգյան ընդդեմ Լուսիկ Պետրոսյան, քաղ. գործ թիվ ԼԳ/0023/02/12

Էջ  
244-249

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայրության ճանաչման հարցին, այն պարագայում, երբ իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձը մահացել է:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ ընտանեկան օրենսգրքի 34-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի 3-րդ կետի, 36-րդ, 37-րդ հոդվածների վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 9-րդ գլխով ամրագրված է **երեխաների սերման փաստի հաստատման** հետևյալ դեպքերը՝ երեխայի սերման փաստի հաստատման (հոդված 35-րդ), հայրությունը դատական կարգով որոշելու (հոդված 36-րդ) և **հայրության ճանաչման փաստի դատական հաստատման** (հոդված 37-րդ):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ **երեխաների սերման փաստի հաստատման յուրաքանչյուր դեպքի** համար օրենսդիրը սահմանել է պայմաններ ինչպես միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանց, ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից երեք հարյուր օրվա ընթացքում երեխա ծնվելու դեպքում, այնպես էլ երեխայի մոր հետ ամուսնության



մեջ չգտնվող անձի դեպքում: Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում օրենսդիրը նախատեսել է նաև երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող **անձի մահվան** պարագայում երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը հաստատելու պայման դատական կարգով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 36-րդ և 37-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որն ստույգ հաստատում է, որ իր կենդանության ժամանակ հոր կողմից ճանաչվել է **երեխայի հայրությունը**:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

26.12.2013թ.

30. Էդգար Գրիգորյան v. «Ազադ Ֆայն Քեմիքալ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ Եջ ԵԱՔԳ/1066/02/11

Էջ 250-255

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելու հարցին ընդհանրապես, ինչպես նաև գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ մինչև կարգապահական տույժ կիրառելը գործատուն աշխատողից չի պահանջել խախտման մասին գրավոր բացատրություն:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 226-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է, միաժամանակ վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ գործատուն աշխատանքային կարգապահության խախտման մասին գրավոր բացատրությունը պետք է աշխատողից պահանջի **մինչև կարգապահական տույժի կիրառումը**՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ (*տե՛ս Մանյա Գալուստյանն ընդդեմ «Հայկական ապրումային էլեկտրոնայան» ՓԲԸ-ի թիվ 3-357(ՎԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի որոշումը*):

Վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու հիմքով դատարան դիմելու դեպքում դատարանը վերականգնում է աշխատողի խախտված իրավունքները, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով:

## ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

05.04.2013թ.

31. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ v. «ԻՎ-Տրանս» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/0103/04/11

Էջ 256-264

**Խնդիր.** Ինչպիսի պայմաններում և ինչպիսի հանգամանքների առկայության դեպքում են հիմքեր առաջանում հարգելի համարելու սնանկ ճանաչված պարտապանին պահանջ ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասը, արձանագրել է, որ բոլոր դեպքերում բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական

ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Դա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր դատական վեճ ունի իր առանձնահատկությունները և յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ հանգամանքներից՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքերն էապես կարող են տարբերվել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց պարագայում: Ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է ամիջականորեն տվյալ իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատական պրոցեսին մասնակցելը կամ պահանջը և այն հիմնավորող ապացույցներ ներկայացնելը: Ընդ որում, եթե մի դեպքում նշված հանգամանքը ֆիզիկական անձանց պարագայում կարող է դիտվել հարգելի, ապա իրավաբանական անձանց դեպքում կարող է հարգելի չհամարվել: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործառնական մեջ գտնվելու պատճառով, ինչն օբյեկտիվորեն հարգելի ճանաչելու հիմք է, ապա նույն հիմքը չի կարող կիրառվել իրավաբանական անձի (տնօրենի կամ գործադիր մարմնի ղեկավարի) նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար **ընդհանուր կանոնն այն է**, որ թե՛ ֆիզիկական անձը և թե՛ իրավաբանական անձը պարտավոր են ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել են իրենցից կախված **ողջամիտ ու բավարար** միջոցներ դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու ուղղությամբ, սակայն իրենց կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սնանկության վարույթի այն առանձնահատկությունը, որ մեկ պահանջատիրոջ շահը մշտապես առնչվում է այլ պահանջատերերի շահերին, վերջիններիս իրավունքների պաշտպանության տեսանկյունից նշել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու սահմանները չպետք է շատ լայն լինեն: Մասնավորապես ողջամիտ կարող է համարվել սահմանված ժամկետում պահանջը ներկայացնելուն խանգարող համապատասխան խոչընդոտները վերանայուց հետո բացառապես մեկամյա ժամկետում պահանջը ներկայացնելը՝ նշված խոչընդոտի առաջացման և ավարտի պահը հավաստող համապատասխան հիմնավորումներով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ սնանկության վարույթի բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվում է արդեն իսկ ներկայացված սկզբնական պահանջի լրացում, ապա ժամկետը բաց թողնելու, առավել ևս այն հարգելի ճանաչելու վերաբերյալ խնդիր չի առաջանում: Իսկ այն դեպքում, երբ ներկայացված պահանջը, ըստ էության, իրենից ինքնուրույն պահանջ է ներկայացնում, այսինքն՝ բխում է այլ հիմքերից, քան առաջինը, դրանց առաջացման աղբյուրները տարբեր են, ապա նման դեպքերում այն համարվում է նոր պահանջ, հետևաբար այն պետք է բավարարի այն նույն պայմաններին, ինչ առաջին անգամ ներկայացված պահանջը: Այսինքն՝ նման դեպքերում առաջանում է պահանջը ներկայացնելու համար սահմանված մեկամյա ժամկետը պահպանելու, իսկ այն չպահպանելու դեպքում՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջորդություն ներկայացնելու պահանջատիրոջ պարտականությունը:

29.11.2013թ.

32. Մարիետա Գրիգորյան v. Համլետ Գևորգյան, քաղ. գործ թիվ ԵԶ ԵԿԴ/0282/02/12

Էջ 265-271

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է պարտապանի

մասնակցությամբ դատավարություններում սնանկության ժամանակավոր կառավարչի ներգրավման իրավական խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերաբնիչ բողոքարկման իրավունք վերապահել է միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց **իրավունքների և պարտականությունների վերաբերյալ**, սակայն վերաբնիչ բողոքարկման իրավունքի իրացման համար անձը նախ և առաջ պետք է օժտված լինի վարույթի կողմ լինելու ունակությամբ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքը սնանկության վարույթի տարբեր փուլերում նախատեսել է սնանկության ժամանակավոր կառավարչի և կառավարչի մասնակցությունը, որոնք սնանկության իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտներ են՝ ինքնուրույն գործառնություններով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 21-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ սնանկության ժամանակավոր կառավարիչը սնանկության վարույթին մասնակցում է մինչև կառավարչի նշանակումը կամ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի, 29-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ սնանկության ժամանակավոր կառավարչի լիազորությունները, ի տարբերություն սնանկության կառավարչի, սահմանափակ են և կրում են սպառիչ բնույթ: Մասնավորապես, սնանկության ժամանակավոր կառավարիչն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝ **կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար, ինչպես նաև վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում:** Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է մինչև սնանկ ճանաչվելը և սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով: Մինչև սնանկ ճանաչվելը պարտապանն ինքնուրույն է իրացնում իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ դատավարական, հետևաբար օրենսդիրը սնանկության ժամանակավոր կառավարչին վերապահել է սահմանափակ լիազորություններ: Մինչդեռ, սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի որոշ իրավունքներ, այդ թվում նաև՝ դատավարական, իրացնում է կառավարիչը: Մասնավորապես, վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Վերը շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության ժամանակավոր կառավարիչն **օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օժտված** չէ դատավարական իրավունակությամբ, հետևաբար նաև՝ վերաբնիչ բողոք ներկայացնելու իրավունքով, և պարտապանի մասնակցությամբ դատավարություններում նրան ներգրավելու անհրաժեշտությունը բացակայում է:

26.12.2013թ.

33. Մարինե Ավետիսյան v. Արտեմ Ավետիսյան, քաղ. գործ թիվ ԵՉ ԵՄԴ/1140/02/12

ԵՉ 272-276

**Խնդիր.** Արդյո՞ք ամուսիններից մեկի սնանկ ճանաչվելուց հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով համատեղ սեփականության իրավունքի ճանաչման պահանջ կարող է ներկայացվել դատարան, իսկ ներկայացման դեպքում գործի վա-

րույթը կարող է կարճվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի կանոններով:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը: Դա այն է, որ պարտապանի և պարտատերերի շահերից ելնելով՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից օրենքով նախատեսված պահանջներով քաղաքացիական գործերի վարույթները պետք է կենտրոնանան մեկ վարույթում, այն է՝ սնանկության վարույթում: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ նշված հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է կյուրախրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոխդրության:

Սույն գործով ներկայացվել է ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ համասեփականատեր ճանաչելու պահանջ, որն իրենից ներկայացնում է իրավունքի ճանաչման հայց: Ման հայցի նպատակն իրավունքի վիճելիությունը կամ անորոշությունը վերացնելն է, նման հայցի հիմք է ծառայում վիճելի իրավունքը հայցվորին պատկանելը: Այդպիսի հայցով դատարանը պատասխանողի վրա որոշակի պարտավորություններ չի դնում, այլ հաստատելով հայցվորի իրավունքը՝ որոշակիացնում է այն, կանխում այդ իրավունքի ապագա խախտումները: Հետևաբար այդպիսի հայցի քննությունը և լուծումը որևէ կերպ չի կարող առաջացնել սնանկ ճանաչված պարտապանի գույքային զանգվածի նվազում: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 5-րդ կետի իրավակարգավորումից, ըստ որի՝ ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև **ամուսինների ընդհանուր գույքում՝ նրա բաժնի վրա** միայն: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածը, ամրագրելով ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի համատեղ սեփականություն հանդիսանալու կանխավարկածը, միաժամանակ ամուսնու, այդ թվում նաև՝ սնանկ ճանաչված, պարտավորությունների համար բռնագանձում տարածելու կամ սնանկության վարույթում հավաքագրելու հնարավորություն նախատեսում է միայն նրան պատկանող գույքի կամ այդ գույքի բաժնի մասով:

05.04.2013թ.

34. «Յունիբանկ» ՓԲԸ ընդդեմ Գևորգ Հարոյան, քաղ. գործ թիվ ԵՇԴ/0009/04/12

Էջ  
277-282

**Խնդիրը.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի մեկնաբանմանը՝ հաշվի առնելով նշված դրույթի միատեսակ կիրառման անհրաժեշտությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առկազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար: Վճարային պարտավորության անվիճելիությունը առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը,

այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Մնան պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «դ» ենթակետի համատեքստում: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ

05.04.2013թ.

35. Միսակ-Նուբար Թերեղեկյան ընդդեմ Ռուբեն Քոչար, քաղ. գործ թիվ ԵԿԳ/0805/02/10

Էջ  
283-289

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է պայմանագրի լուծման, ինչպես նաև գույքն ապօրինի տիրապետումից հետ վերադարձնելու պահանջ ներկայացված լինելու դեպքում ապացուցման բեռի բաշխման հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն հետևյալ երեք դեպքերում՝

1. մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման առկայության դեպքում կամ
2. օրենքով նախատեսված դեպքում կամ
3. պայմանագրով նախատեսված դեպքում:

Վերոնշյալ երեք հիմքերից որևէ մեկով պահանջ ներկայացված լինելու դեպքում պայմանագրի փոփոխման կամ լուծման պահանջ ներկայացրած կողմը պետք է ապացուցի իր համար այնպիսի բացասական հետևանքի (վնասի) առաջացումը, որը զգալիորեն զրկում է վնաս կրած կողմին (պայմանագրի լուծման պահանջ ներկայացրած կողմին) ստանալ այն, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս: Հետևաբար պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած հանգամանքի ապացուցման բեռը կրում է այդպիսի պահանջ ներկայացնող կողմը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վերը նշված դրույթում վնաս եզրույթը ենթադրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված իրական վնաս, բաց թողնված օգուտ կամ խախտված իրավունքների համար կատարված ծախսեր: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկան են կազմում պայմանագրի խախտման փաստը (կամ օրենքով նախատեսված դեպքը կամ պայմանագրով նախատեսված դեպքը), այդ խախտումը պայմանադիր կողմի կողմից կատարելը, խախտման արդյունքում վնասի առաջացումը: Նշված փաստերի հաստատումից բացի դատարանի կողմից ինքնուրույն գնահատման են ենթակա խախտման էական լինելը և վնասի այնպիսին լինելը, որը պահանջ ներկայացրած կողմին զրկել է պայմանագրով ստացվող ակնկալիքից:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դա-

տարանը նախ վերահաստատել է գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու վերաբերյալ նախկինում արտահայտած իր դիրքորոշումը (*յո՛ւս Արմենուհի Թադևոսյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ՇԴ/0613/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*), ապա նշել, որ ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքն ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը:

26.12.2013թ.

36. Մելրան Քոչարյան v. Օնիկ Մալաքյան, Շուշիկ Ալեքսանյան, քաղ. գործ **Էջ**  
թիվ ԵԱԲԴ/0232/02/11 **290-297**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ինքնական կառույցը քանդել պարտավորեցնելու հայցերով ապացուցման առարկան կազմող փաստերին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան ձևավորվում է ոչ միայն հայցի կամ դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերից, այլև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածը, սահմանելով ինքնական կառույցի հասկացությունը, թվարկում է այն խախտումները, որոնցից որևէ մեկի առկայությունը պայմանավորում է կառույցի ինքնական բնույթը: Մասնավորապես, ինքնական կարող է համարվել այն շենքը, շինությունը կամ այլ կառույցը, որը *կառուցվել* կամ *վերակառուցվել* է.

օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում (հողահատկացում չի կատարվել կամ հողամասը տրամադրված է եղել այլ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար), կամ առանց թույլտվության (քաղաքաշինական փաստաթղթերի բացակայությամբ), կամ թույլտվությամբ սահմանված պայմանների խախտմամբ, կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:

Վերլուծելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ինքնական կառույցը քանդել պարտավորեցնելու պահանջներով դատարան կարող է դիմել այն սուբյեկտը, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտում է ինքնական կառույցը պահպանելը, իսկ ինքնական կառույցը քանդելու պարտավորություն կարող է դրվել այդ կառույցով զբաղեցված հողամասի սեփականատիրոջ վրա:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- վեճի առարկա կառույցը ինքնական է, թե ոչ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ նշված փաստը ենթակա է պարզման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորման համատեքստում.

- ում է պատկանում հողամասը, որի վրա գտնվում է ինքնական կառույցը.

- արդյոք ինքնական կառույցը պահպանելը խախտում է դատարան դիմած շահագրգիռ անձի որևէ իրավունք և օրենքով պահպանվող որևէ շահ:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարել նշել, որ վերոնշյալ փաստերը կարող են հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ

հողվածով սահմանված կարգով ձեռք բերված բավարար ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության և գնահատման արդյունքում:

24.05.2013թ.

37. «Օրինք Սթոն» ՍՊԸ v. «Վազ քար» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԱՎԴ-1/0074/02/11

Էջ  
298-306

**Խնդիր.** Արդյո՞ր դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում փորձագետի եզրակացությամբ այդ որոշումն անկատար թողնելու, այսինքն՝ փորձաքննությամբ դատարանի որոշմամբ սահմանված հարցերը պարզաբանված չլինելու պայմաններում դատարանն իրավասու է, վերսկսելով գործի վարույթը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի, 48-րդ հոդվածի 2-րդ կետի, 53-րդ հոդվածի 1-ին կետի, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի, 62-րդ հոդվածի 4-րդ կետի, 106-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, 107-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգման, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը, իսկ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանն իրավունք ունի նաև նշանակել լրացուցիչ փորձաքննություն: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ: Դրա արդյունքների նկատմամբ դատարանը պարտավոր է լինել հետևողական, որպիսի հետևողականության դեպքում դատարանը չի կարող փորձաքննություն նշանակելու վերաբերյալ իր իսկ որոշմամբ սահմանված հարցերը պարզաբանված չլինելու պայմաններում, վերսկսելով կասեցված գործի վարույթը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ, քանի որ այդ դեպքում հատուկ գիտելիքներ պահանջող հարցերը կմասնապարզաբանված:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նման սխալից խուսափելու նպատակով դատարանը պետք է ակտիվորեն օգտագործի իր դատավարական լիազորությունները՝ գործով լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասով: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված լրացուցիչ փորձաքննության նշանակումը թեև դատարանի բացառիկ լիազորությունն է, սակայն դատարանն իր այդ լիազորությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել և երաշխավորել նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմանը հանգելու պարտականության լիարժեք իրականացումը: Հակառակ դեպքում՝ փորձաքննություն նշանակելու հիմքով մինչև փորձագիտական եզրակացություն ստանալը գործի վարույթի կասեցումն ըստ էության կկրի ձևական բնույթ և չի ծառայի իր նպատակին: Արդյունքում նման իրավիճակը կարող է հանգեցնել անձի՝ ողջամիտ ժամկետում իր գործի քննության սահմանադրորեն երաշխավորված իրավունքի խախտմանը:

04.10.2013թ.

38. Հենրիկ Երիցյան v. Մերուժան Դզրոյանի և մյուսների, քաղ. գործ թիվ ՇԴ-3/0325/02/11

Էջ  
307-313

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույց պա-

հանջելու ընթացակարգի իրավակարգավորման առաձնահատկություններին, ինչպես նաև՝ վկա կանչելու միջնորդությունը մերժելու որոշման իրավաստության հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 7-րդ կետերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու պարտականությունը կրում են կողմերը՝ ապացուցման բեռի բաշխմանը համամասնորեն: Դատավարական օրենքը դատարանին պարտավորեցնում է միայն կողմերի միջնորդությամբ օժանդակել ապացույցների ձեռքբերման հարցում: Նման միջնորդության ներկայացման համար նախապայման է հանդիսանում այն, որ միջնորդող կողմը պետք է հիմնավորի (ապացուցի), որ չունի հնարավորություն ինքնուրույն ձեռք բերելու ապացույցները: Միջնորդությունը պետք է պարունակի կոնկրետ տեղեկություն հայցվող ապացույցի, ապացուցման ենթակա փաստի, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև ապացույցի գտնվելու վայրի վերաբերյալ: Միջնորդությունը ոչ հստակ լինելու դեպքում դատարանը, ելնելով գործի քննության արդյունավետությունից, կարող է պահանջել միջնորդություն ներկայացրած կողմին հստակեցնել այն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետը, արձանագրել է, որ վկայի ցուցմունքի՝ որպես ապացույցի հետազոտումն իրենից ներկայացնում է միջնորդավորված դատավարական ընթացակարգ, երբ կողմի՝ իր դատավարական իրավունքի իրացումը՝ ապացույց ներկայացնելը, ուղղակիորեն պայմանավորված է դատարանի լիազորությամբ՝ բավարարել կամ մերժել վկա հրավիրելու միջնորդությունը: Բացառություն է կազմում առանձին դեպքերում դատարանի նախաձեռնությամբ վկա կանչելը: Որպես կանոն, նախ և առաջ անհրաժեշտ է հայցվորի կամ պատասխանողի միջնորդությունը, որում պետք է նշվի այն փաստը, որը, ըստ կողմի, կարող է հաստատվել վկայի հարցաքննությամբ: Որպեսզի վկան հարցաքննվի, նման միջնորդությունը դատարանը պետք է բավարարի: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ միջնորդությունը մերժելիս դատարանի պատճառաբանությունը կարող է պայմանավորված լինել միջնորդության մեջ կոնկրետ փաստի բացակայությամբ, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվեր կամ եթե նշված չեն վկայի տվյալները (անունը, ազգանունը, հասցեն): Միջնորդության մերժումը կարող է հիմնավորված համարվել նաև այն դեպքում, երբ միջնորդությունում վկայակոչված փաստը վերաբերելի չէ գործին, ինչպես նաև, երբ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով, արձանագրում է, որ վկայակոչված փաստն օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվի որոշակի ապացույցներով՝ նշելով, թե որոնք են այդ ապացույցները: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև իր որոշումներում ձևավորած դիրքորոշումը (*ի թիվս այլ որոշումների փն և Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանման թիվ ԱՎԴ/0235/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում չհիմնավորված պետք է համարել այնպիսի մերժումը, որը պատճառաբանված չէ՝ նշված չեն մերժման հիմքերը:

29.11.2013թ.

39. Էռնան Ջեմիլի v. Ռ-աֆիկ Ռ-ուշանյան, քաղ. գործ թիվ ԾԳ/0377/02/12

Էջ  
314-319

**Խնդիր.** Արդյոք պարտքային փաստաթուղթը դրանում նշված անձանց կողմից կազմված ստորագրված լինելու հանգամանքը կարող է հաստատվել վկայի ցուցմունքներով:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածում ամրագրված «գործարքի հասարակ



գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից» իրավադրույթը, գտել է, որ կողմերը գրկված են ի հաստատումն գործարքի՝ վկայի ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից, երբ օրենքով սահմանված դեպքերում գործարքը չի կնքվել գրավոր ձևով: Մինչդեռ այն դեպքում, երբ առկա է գրավոր ձևով կազմված և ստորագրված փաստաթուղթ և վիճարկվում է դրա իսկությունը, ապա որպես ապացույց կարող են ներկայացվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցները, այդ թվում՝ վկայի ցուցմունքներ:

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

04.10.2013թ.

40. «Բրենդ Լիդեր» ՀԶ ՍՊԸ v. «Օլիմպուորդ» ՍՊԸ, քաղ. գործ թիվ ԵՉ ԵԿԳ/2043/02/12

ԵՉ  
320-325

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է փաստաբանի վարձատրության՝ որպես դատական ծախսի բաշխման համար անհրաժեշտ ապացույցների ներկայացման հարցին՝ նմանատիպ գործերով նախկինում արտահայտած դիրքորոշումների համատեքստում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածը, 73-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենքի ուժով **փաստաբանի խելամիտ վարձատրությունը** ևս հանդիսանում է դատական ծախս, ինչից հետևում է, որ այն սահմանված կարգին համապատասխան ենթակա է բաշխման գործին մասնակցող անձանց միջև:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել վերահաստատել նշված իրավաբանության վերաբերյալ ձևավորած դիրքորոշումը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերոնշյալ իրավական նորմերը, փաստել է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի, փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախ և առաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս՝ **թե՛ հայցվորը, և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հաստատող ապացույց:** Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման պահանջի առկայությունից վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը՝ որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար (յրե՛ս Ա/Ձ Նարինե Ռոստոմյանն ընդդեմ «ԱրմենՏեյ» ՓԲԸ-ի թիվ ԵԱԶԳ/1401/02/11 գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը, 782-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 783-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանձնարարության պայմանագրի ուժով հանձնակատարը հանձնարարողի անունից և նրա հաշվին պարտավոր է կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, պայմանագրում կարող է նշվել նաև այն ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից: Միաժամանակ, ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ հանձնարարության պայմանագիր կնքելիս կողմերը՝ հանձնակատարը և հանձնարարողը, չփոխելով օրենսգրքի իմպերատիվ դրույթներով ամրագրված պայմանները, ազատ են որոշելու պայմանագրի պայմաններն իրենց հայեցողությամբ, այդ թվում՝ նաև՝ հանձնարարողի կողմից հանձնակատարին վարձատրելու չափը և վճարման ժամկետը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ հանձնարարության

պայմանագրի պայմաններով հանձնարարողը հանձնակատարին վարձատրությունը պետք է վճարի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ որոշակի ժամանակ անց, ապա նման պայմանի առկայությունը կատարվելիք վճարումը հաստատող բավարար ապացույց է:

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

05.04.2013թ.

41. «Կոնվերս բանկ» ՓԲԸ ընդդեմ Արսեն Ումուրշատյան, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2561/02/08

Էջ  
326-330

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցելու վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի իրավաւորումը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (*տես Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*):

05.04.2013թ.

42. Լիլիթ Գևորգյան v. Սվետլանա Միքայելյան, քաղ. գործ թիվ ԵԿԳ/1730/02/11

Էջ  
331-335

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործի քննության ընթացքում հասցեն փոխելու և դրա մասին դատարանին ու գործին մասնակցող անձանց չհայտնելու դատավարական հետևանքների հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ Սահմանադրության 19-րդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 28-րդ, 80-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Նման կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերը ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից: Դրանով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրն իր դատավարական իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվող կողմի վրա է թողնում հետևանքները կրելու ռիսկը, այն է՝ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու կամ գտնվելու հանգամանքից:

04.07.2013թ.

43. Արմինե Հարոյան v. Կարեն Համբարձումյան, քաղ. գործ թիվ ԵՉ ԵԴԴ/0402/02/12

ԵՉ  
336-342

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն անդադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ և 117-րդ հոդվածների փոխկապակցված մեկնաբանությանը:

**Վճարելի դատարանի դիրքորոշումը.** Վճարելի դատարանն արձանագրել է, որ եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը նախատեսում է դատարանի պոզիտիվ պարտականությունը պատշաճ ծանուցման հարցում, ապա նույն օրենսգրքի 117-րդ հոդվածը նախատեսում է այն դատավարական ձևը, որով դատարանը վերջնականապես համոզվում է անձի՝ պատշաճ ծանուցված լինելու մասին: Այլ կերպ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի խախտումը տեղի է ունենում նույն օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածների հետ զուգորդված, երբ դատարանը պատշաճ չի ծանուցում գործին մասնակցող անձին և չունենալով հավաստի ապացույց՝ շարունակում է գործի քննությունը՝ այդ անձանց բացակայությունը գործի քննության համար արգելք չհամարելով:

Միաժամանակ Վճարելի դատարանը վերահաստատել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում հայտնած հետևյալ դիրքորոշումը. պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինությանը դատաքննության մասին ծանուցելու օրենսդրի տրամաբանությունը կայանում է նրանում, որ այս երկու սուբյեկտների ենթադրյալ կապը պատասխանող ֆիզիկական անձի հետ հնարավոր է և իրատեսական, և ողջամտորեն ենթադրելի է, որ այս սուբյեկտներից որևէ մեկը կարող է անձի համար տեղեկատվության աղբյուր հանդիսանալ դատաքննության մասին: Սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելիս դատարանը պետք է ողջամտորեն գնահատի օրենսդրի այս կարգավորման նպատակի իրագործելիության հնարավորությունը՝ տվյալ գործի փաստերից ելնելով: Նման գնահատման ողջամիտ չափորոշիչներ կարող են լինել, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի և դրա բնակիչների համայնքային կապերի ակտիվության մակարդակը, վերջին հայտնի աշխատավայրից անձի հեռանալու ժամկետը և այլ հանգամանքներ: Բոլոր դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը չպետք է և չի կարող սահմանափակել ու ի չիք դարձնել անձի՝ արդար դատաքննության սահմանադրական իրավունքը (յո՛ւ է ս Արմինե Մարգարյանն ընդդեմ Աշոտ Մարգարյանի թիվ 3-24(Ա) գործով Վճարելի դատարանի 26.01.2007 թվականի որոշումը):

29.11.2013թ.

44. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ v. ««ՀԱՆ-ՔԱՎԱՆ» հանրային ջրերի գործարան» ԲԲԸ, քաղ. գործ թիվ ԳԴ-4/0069/02/13

ԵՉ  
343-347

**Խնդիր.** Արդյո՞ք դատարանը, գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելով դատական նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն այն սկսելով ուշացմամբ, խախտում է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքները:

**Վճարելի դատարանի դիրքորոշումը.** Վճարելի դատարանը, վերահաստատելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ, ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցու-

մը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (*յուևս Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*), արձանագրել է, որ նախագահողը **դատական նիստը բացում է գործի քննության համար նշանակված ժամին**: Այսինքն՝ դատական նիստը սահմանված ժամին սկսելը գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ տեղեկացված լինելու տարրերից է:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական նիստը նշանակել է 21.08.2013 թվականին՝ ժամը 12:15-ին, որի վերաբերյալ վերաքննիչ բողոք բերած անձ Կազմակերպությունը պատշաճ ձևով ծանուցվել է: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը դատական նիստը սկսել է 21.08.2013 թվականին՝ ժամը 13:10-ին, այսինչ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Վերաքննիչ դատարանը կողմերին պատշաճ ձևով տեղեկացրել է 21.08.2013 թվականի ժամը 13:10-ին տեղի ունենալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ, 79-րդ և 218-րդ հոդվածների պահանջները, գործը քննել է վերաքննիչ բողոք բերած անձ Կազմակերպության բացակայությամբ, ինչը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով արձանագրված կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում:

## **ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

### **Հայցի հարուցումը**

**04.10.2013թ.**

**45. ԱՉ Էդմոնդ Ասատրյան և Կարինե Բաղջյան v. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, քաղ. գործ թիվ ԵԿԴ/2924/02/11**

**Էջ  
348-353**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայցի իրավական հիմքի շրջանակներից դուրս գալու հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը վերահաստատել է հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում ձևավորած դիրքորոշումն այն մասին, որ հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիա-

կան դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (յուև Վիզեն Ուրուշյանին ընդդեմ Մուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԳ/0473/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հավելել է, որ հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը մինևույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետ):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով ապացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից:

## ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔԵՆԵՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

24.05.2013թ.

46. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջ Իջևանի տարածքային հարկային տեսչություն v. Արտաշես Մատինյան, քաղ. գործ 354-359 թիվ ՏԳ-1/0011/04/12

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապահին սնանկ ճանաչելու մասին վճռի դեմ այլ պարտատիրոջ կողմից՝ որպես գործին մասնակից չդարձված անձ վերաքննիչ բողոք բերելու խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը, 46-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով սեփական նախաձեռնությամբ՝ կամավոր սնանկության դիմումի հիման վրա, կամ պարտատիրոջ պահանջով՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա: Կամավոր կամ հարկադրված սնանկության դիմում ներկայացնելու հիմքեր կարող են առաջանալ նաև կատարողական գործողությունների ընթացքում պարտապանի գույքի անբավարարության դեպքում: Նման դեպքերում հարկադիր կատարողն այդ մասին տեղյակ է պահում պարտատիրոջը և պարտապանին, որպեսզի նրանցից որևէ մեկը

պարտապանին սնանկ ճանաչելու հայց ներկայացնի դատարան: Մի քանի պարտատերերի առկայության դեպքում միայն մեկի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու հայց ներկայացնելը չի զրկում մյուս պարտատերերին սնանկության վարույթի մյուս փուլերին մասնակցելու, մասնավորապես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով համապատասխան պահանջները դատարան ներկայացնելու իրավունքից: Վճարքեն դատարանը գտել է, որ սնանկության վարույթի ընթացքում առաջացող հարաբերությունների իրավակարգավորումը ենթադրում է այնպիսի կառուցակարգ, որն ուղղված է բոլոր պարտատերերի պահանջների համաչափ բավարարմանը: Անկախ այն հանգամանքից՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը որ պարտատերն է ներկայացրել, մնացած բոլոր պարտատերերը պարտապանի գույքի հաշվին կարող են ստանալ հավասարաչափ բավարարում՝ սնանկության մասին հայտարարությունից մեկ ամիս հետո իրենց պահանջները դատարան ներկայացնելով: Սնանկ ճանաչելու դիմումի վարույթի քննության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վարույթի այս փուլում դատարանը քննում է պարտապանի դեմ դիմում ներկայացրած պարտատիրոջ պահանջը՝ անկախ այն հանգամանքից՝ առկա են արդյոք նույն պարտապանի նկատմամբ այլ պարտատերեր, թե ոչ: Միայն սնանկության հիմքերի առկայության դեպքում և սնանկ ճանաչելու վճիռ կայացնելուց հետո վարույթին ներգրավվում են սնանկ ճանաչված անձի մյուս պարտատերերը: Նման կարգավորվածությունը մի կողմից ապահովում է դիմումի քննության արագությունը և արդյունավետությունը, քանի որ դատարանը չի քննում բոլոր հնարավոր պարտատերերի պահանջները և չի անդրադառնում դրանցից յուրաքանչյուրի հիմնավորվածությանը, իսկ մյուս կողմից երաշխավորում է բոլոր հնարավոր պարտատերերի իրավունքների (պահանջի իրավունքի) պաշտպանությունը՝ նրանց հնարավորություն տալով գրանցելու իրենց պահանջները և այդ կերպ ներգրավվելու սնանկության վարույթին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանը 17.11.2010 թվականին վճռել է անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.253.792 ՀՀ դրամ, որից ապառք՝ 943.200 ՀՀ դրամ, ապառքի նկատմամբ հաշվարկված տույժ՝ 286.008 ՀՀ դրամ, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքը՝ 24.584 ՀՀ դրամ: Նշված կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 11-47/11 կատարողական վարույթը: 19.06.2012 թվականին կատարողական վարույթը կասեցվել է 60-օրյա ժամկետով, և կողմերին առաջարկվել է սնանկության հայց ներկայացնել դատարան: Տեսչությունը դիմում է ներկայացրել Դատարան՝ անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու համար: Գործով հաստատված չէ փաստ, որ անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու համար Բանկը դատարան է դիմել: Դատարանի 18.09.2012 թվականի վճռով անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանը ճանաչվել է սնանկ:

Վերաքննիչ դատարանը, քննելով նշված վճռի դեմ Բանկի՝ որպես գործին մասնակից չդարձված անձի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության՝ պատճառաբանելով, որ Արտաշես Մատինյանը դրամային պարտավորություն ունի Բանկի նկատմամբ, որի հիման վրա պարտապանից Բանկի նկատմամբ ունեցած պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ, ավելին, ի կատարում վերջինիս՝ հարուցված է կատարողական վարույթ, որը կասեցնելու հիմք է հանդիսացել բողոքարկվող դատական ակտը: Հաշվի առնելով այն, որ սնանկության վարույթի և Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի հետևանքներն ուղղակիորեն ազդում են բողոքաբերի իրավունքների և օրինական շահերի վրա, բողոքաբերը գործին մասնակից չի դարձվել, վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է պարտապանի գույքային դրության վերաբերյալ ապացույցներ, որոնք էական նշանակություն ունեն պարտապանի սնանկության հարցը լուծելու համար:

Հաշվի առնելով սնանկության վարույթի մասնակիցների դատավարական կարգավիճակի առանձնահատուկ բնույթը, որով նրանք տարբերվում են քաղաքացիադատավարական այլ բնույթի գործերով մասնակիցների դատավարական կարգավիճակից, ինչպես նաև սնանկության վարույթի ընթացքում ծագող հարաբերությունների վերը նշված

առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել վերահաստատել նախկինում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ (*լեւս ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մայիսայանի թիվ ԱՐԱԳ/0242/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*): Սույն գործով Բանկին գործի քննությանը մասնակից չդարձված անձ դիտարկելու համար անհրաժեշտ էր, որպեսզի ծանրակշիռ հիմնավորմամբ հաստատվեր, որ սնանկ ճանաչելու վճիռն ուղղակիորեն վերաբերում է Բանկի իրավունքներին և պարտականություններին: Այլ կերպ՝ պետք է հիմնավորվեր այն փաստը, որ Բանկի վրա այդ վճռով դրվել են պարտականություններ, կամ սահմանափակվել են Բանկի իրավունքները՝ առանց վերջինիս մասնակից դարձնելու գործի քննությանը:

Մասնկության վարույթի իրավակարգավորման վերաբերյալ վերը նշված դիրքորոշման համատեքստում անդրադառնալով գործի փաստերին և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս պարտատիրոջը (պարտատերերին) նշված հոդվածում շարադրված պայմանների առկայության դեպքում պարտապահին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան՝ այդպիսով իսկ ձեռք բերելով դիմողի կարգավիճակ: Բանկն իր այդ իրավունքից չի օգտվել՝ բաց թողնելով սնանկության վարույթի այդ փուլին մասնակցելու իր հնարավորությունը: Այդուհանդերձ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը հնարավորություն է տալիս բոլոր պարտատերերին նույն հոդվածով սահմանված կարգով իրենց պահանջները ներկայացնելու դատարան: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանում անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատիկյանին սնանկ ճանաչելու գործին Բանկին մասնակից չդարձնելը չի զրկում վերջինիս սնանկության վարույթի այդ փուլին հաջորդող համապատասխան այլ փուլում մասնակցելու և իր պահանջները ներկայացնելու իրավունքից:

**05.04.2013թ.**

**47. Վարդան Պողոսյան ընդդեմ Տիգրան Արշակյան, քաղ. գործ թիվ ԵՁ ԵՇԳ-0021/02/12**

**ԵՁ 360-365**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է առաջին առյառ-նի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետների հաշվարկման հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ, 75-րդ, 140-րդ, 207-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե ներկայացված չէ նվազագույն աշխատավարձի հիմնապատիկը չգերազանցող գումարը բռնագանձելու մասին պահանջ կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում այդ չափը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նշված ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Նշված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ժամկետների հաշվարկի դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել քաղաքացիական դատավարությունում ժամկետների հաշվարկի համար նախատեսված ընդհանուր կանոններով, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներում:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ Վերաքննիչ բողոք բերելու ժամկետները բաց թողնելու կամ բաց թողած ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու դեպքում օրենսդիրը նախատեսել է որոշակի իրավական հետևանքներ: Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության 213-րդ, 214-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, իսկ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում վերաքննիչ դատարանը կարող է կայացնել այն դեպքում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը:

Վերը նշված վերլուծության համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Դատարանը վճիռը կայացրել է **22.06.2012 թվականին**, իսկ այդ վճիռի դեմ վերաքննիչ բողոքը Վարդան Պողոսյանը ներկայացրել է **24.07.2012 թվականին**: Փաստերի նման դասավորվածության դեպքում վերաքննիչ բողոք բերելու ժամկետի հաշվարկը սկսվում է Դատարանի վճիռը կայացնելու հաջորդ օրը՝ 2012 թվականի հունիսի 23-ին և լրանում 2012 թվականի հուլիսի 23-ին: Հետևաբար Վարդան Պողոսյանը, վերաքննիչ բողոքը ներկայացնելով 2012 թվականի հուլիսի 24-ին, բաց է թողել օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը: Ունենալով հնարավորություն՝ Վարդան Պողոսյանը չի ներկայացրել միջնորդություն բաց թողած ժամկետը վերականգնելու մասին: Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված հանգամանքը, 30.07.2012 թվականին որոշում է կայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի վերը նշված նորմերի խախտման ձևով, որը հետագայում ազդել է գործի ելքի վրա՝ 28.09.2012 թվականի որոշմամբ բավարարել է Վարդան Պողոսյանի վերաքննիչ բողոքը, Դատարանի 22.06.2012 թվականի վճիռը բեկանել է և գործն ուղարկել է նոր քննության:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Վերաքննիչ դատարանը, վարույթ ընդունելով օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված բողոքը, խախտել է իրավական որոշակիության սկզբունքը: Նշված սկզբունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած դիրքորոշման համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է, որ երբ համապատասխան ժամկետն անցնելուց հետո դատարանի կողմից որևէ հարցի տրված լուծումը դարձել է վերջնական, ապա այն այլևս չի կարող կասկածի տակ դրվել (լրև և Բրունսդեյկոն ընդդեմ Ռուսիայի, 1999 թվականի հոկտեմբերի 28, գանգադ թիվ 28342/95, պարբ. 61):

## **ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ**

**05.04.2013թ.**

48. Տիգրան Կովկասյան և Կարինե Հարությունյան ընդդեմ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն, քաղ. գործ թիվ ԵԿԳ/2017/02/11 Էջ  
366-372

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման ՀՀ քաղաքացիական դատա-



վարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետում նշված հիմքին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի իրավադրույթի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայվում է, եթե բողոք բերած անձն ապացուցում է, որ՝

1. այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2. այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3. այդ հանգամանքներն էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի տասներորդ մասը համադրելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետում նշված հիմքի վերաբերյալ մեկնաբանության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար բողոք բերած անձը պետք է միաժամանակ ապացուցի ինչպես այն, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, այնպես էլ՝ որ այդ հանգամանքներն էական նշանակություն ունեն գործի լուծման համար, իսկ դատարանն իր հերթին պետք է ապացուցված համարի այդ հանգամանքների միաժամանակյա առկայությունը:

## ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ

**05.04.2013թ.**

**49. Սուսաննա և Համիկ Փոթոյաններ v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, քաղ. գործ թիվ ԵԷԴ/1130/02/10** **Էջ 373-380**

**Խնդիր.** Արդյո՞ք հարկադիր կատարողը պարտավոր է կատարողական վարույթում ներգրավել և կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկել այն անձին, ով կատարողական թերթում նշված չէ որպես պահանջատեր կամ պարտապան:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության, 7-րդ հոդվածի 1-ին պարբերության, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերության, 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի վերլուծության հիման վրա եզրահանգել է, որ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը դատարանի կողմից տրված կատարողական թերթն է, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի մասնակիցները կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը, և (կամ) նրանց ներկայացուցիչները, որոնց վերաբերյալ էլ նշումը կատարվում է հենց կատարողական թերթում: Միաժամանակ, հարկադիր կատարողը պարտավոր է կատարողական գործողությունների ընթացքում իր կողմից կայացված որոշումների պատճենները դրանց կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկել պահանջատիրոջը և պարտապանին: Հետևաբար, հարկադիր կատարողը կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան չնշված անձին այդ որոշումներն ուղարկելու որևէ պարտավորություն չունի, և դա չի կարող դիտվել որպես վերջինիս կողմից թույլ տրված օրենքի խախտում: Այսինքն՝ կատարողական վարույթում ներգրավվում և կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկվում են բացառապես կատարողական վարույթի կողմերին՝ կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան նշված անձանց:

04.10.2013թ.

50. քաղ. գործ թիվ 2-4247/2004թ.

Էջ  
381-386

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի իրավական վերլուծությանը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

1. առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և

2. դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից քննարկվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն է դատական կարգով վերականգնել պատասխանողի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք խախտվել են բեկանված դատական ակտով: Բեկանված դատական ակտի փոխարեն համապատասխան դատարանի կողմից կայացվում է գործն ըստ էության լուծող այլ դատական ակտ՝ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին, որից հետո պարտապանը (գույքի նախկին սեփականատերը) իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով նշված «պարտապան» եզրույթը մեկնաբանելիս պետք է հասկանալ ոչ միայն պարտավորախրավական հարաբերությունների կողմերին, այլ նաև քաղաքացիաիրավական հարաբերության այն մասնակցին, որը վճռի առարկա գույքի նկատմամբ ունեցել է կոնկրետ իրավունքներ:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

05.04.2013թ.

51. Հովհաննես Նահապետյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչ. գործ թիվ ՎԴ/4969/05/11

Էջ  
387-393

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է չգործող ԱՊՊԱ կտրոնով տրանսպորտային միջոցներ վարելու և առանց ԱՊՊԱ կտրոնի տրանսպորտային միջոցներ վարելու գանգակազմերի տարանջատման խնդրին՝ հաշվի առնելով այդ իրավախախտումների տարածվածությունը և իրավական որոշակիություն ապահովելու անհրաժեշտությունը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ունեն տարբեր գանգակազմեր, որոնց օբյեկտիվ կողմն իրարից էապես տարբերվում է, ուստի տարբեր են նաև նշված մասերից յուրաքանչյուրի խախտման համար նախատեսված սանկցիաները: Մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվությունը վրա է հասնում առանց ԱՊՊԱ կտրոնը սահմանված տեղում փակցնելու տրանսպորտային միջոց վարելու համար: Առանց ԱՊՊԱ կտրոնի տրանսպորտային միջոցի վարումը կարող է դրսևորվել երկու պարագայում՝ նախ կնքված է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայ-

մանագիրը, առկա է գործող կտրոնը, որը սակայն փակցված չէ սահմանված տեղում: Այս դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար:

Երկրորդ՝ պայմանագիրն ու կտրոնն ընդհանրապես առկա չեն, ինչի պատճառով էլ կտրոնը փակցված չէ սահմանված տեղում: Այս դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի շրջանակներում, որտեղ անձը ցուցաբերում է անգործություն և չի կնքում ԱՊԳԱ պայմանագիր՝ այդ կերպ ոտնձգելով ճանապարհային երթևեկության ոլորտում առաջացող հարաբերությունների նկատմամբ:

**Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում կտրոնը սահմանված տեղում փակցված չլինելու հանգամանքի պարզումը: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանն առկա կտրոնի կեղծված, չգործող և տվյալ տրանսպորտային միջոցի համար տրված չլինելու հանգամանքի պարզումն է:**

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը միասնական դատական պրակտիկա ապահովելու նկատառումով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածը մեկնաբանել է երկու և ավելի վարչական իրավախախտումների համար պատասխանատվության իրավակարագավորման համատեքստում:

Վկայակոչելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված իրավադրույթն առավելագույնի սկզբունքի դրսևորման ձևերից է, որը վարչական մարմինների կողմից կամայականությունների զսպման կամ կանխարգելման գործառույթ է իրականացնում: Սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ նույն անձի կողմից մեկից ավելի վարչական զանցանքներ կատարելու դեպքում առավել վտանգավոր կամ առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիան իրենում ներառում է առավել նվազ զանցանքների համար սանկցիաները: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հնարավոր են դեպքեր, երբ երկու զանցանքների զուգորդումը լինի նվազ հանրային վտանգավորություն առաջացնող, թեկուզև դրանում ներառված լինեն առավել և նվազ հանրային վտանգավորություն ունեցող զանցակազմեր:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված զանցանքն օրենսդիրը նախատեսել է այն հաշվով, որ պատասխանատվության ենթարկվեն բոլոր այն սուբյեկտները, ովքեր, կնքելով ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր սպահովագրության պայմանագիր, ձեռք են բերել կտրոն, սակայն այն չեն փակցրել ավտոտրանսպորտային միջոցի դիմապակու: Հարկ է նկատել, որ այս դեպքում զանցանք կատարող սուբյեկտը ցուցաբերում է դիտավորություն առ այն, որ ունենալով գործող ԱՊԳԱ կտրոն՝ այն չի փակցնում տրանսպորտային միջոցի դիմապակու: Այնուամենայնիվ, զանցանքի սուբյեկտիվ կողմի դրսևորման օրենսդիրը նշանակություն չի տվել և անկախ այն հանգամանքից՝ արարքը սուբյեկտիվ կողմի առումով ինչպես է դրսևորվել, անձը ենթակա է պատասխանատվության: Մյուս կողմից նշված զանցանքը չունի հանրային մեծ վտանգավորություն, քանի որ անձը փաստացի կնքել է երրորդ անձանց հանդեպ իր պատասխանատվության սպահովագրման պայմանագիր և ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում տուժողը կստանա համապատասխան փոխհատուցում:

Նույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված զանցանքը և դրա համար սահմանված սանկցիան շատ ավելի խիստ է, ինչը պայմանավորված է արարքի հանրային վտանգավորության առավել բարձր աստիճանով: Ի տարբերություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատես-

ված արարքի՝ այս դեպքում անձը չի ապահովագրում երրորդ անձանց հանդեպ իր պատասխանատվությունը և շարունակում է երթևեկել չգործող (ժամկետանց) կտրոնով կամ կեղծում է կտրոնի վրա առկա թվանշաններն այնպես, որ արտաքուստ տպավորություն ստեղծվի, թե կտրոնը գործում է, և կամ էլ տրանսպորտային միջոցի դիմապակուն փակցնում է մեկ այլ տրանսպորտային միջոցի համար տրամադրված կտրոն: Ակնհայտ է, որ այս դեպքում անձը միջոցներ է ձեռնարկում խուսանավել իր պատասխանատվությունն ապահովագրելուց, ինչը ենթադրում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի վրա հասնելու դեպքում տուժող կողմի վրա է ընկնում ապահովագրական հատուցում չստանալու ռիսկը:

Վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի արարքները գուցարդմամբ կատարելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ոչ թե վարչական հարաբերություններում գործող առավելագույնի սկզբունքով, այլ համաձայնության սկզբունքով, երբ նպատակին հասնելու համար օգտագործվող միջոցները կլինեն ոչ միայն պիտանի, այլև անհրաժեշտ և չափավոր: Մասն եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել այն, որ երկու արարքների գուցարդման դեպքում նվազում է այն հանրային վտանգավորությունը, որը կարող էր առկա լինել բացառապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի դեպքում:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն իրավիճակներում, երբ անձը վարում է տրանսպորտային միջոցը, որի դիմապակուն փակցված է չգործող ԱՊՊԱ կտրոն, և միաժամանակ անձի մոտ է գտնվում ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի հիման վրա տրված **գործող ԱՊՊԱ կտրոնը**, սակայն այն փակցված չէ սահմանված տեղում, ապա արարքը պետք է որակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նշել է, որ նման դեպքերում վարչական մարմինը չպետք է սահմանափակվի տրանսպորտային միջոցի դիմապակուն փակցված կտրոնի գործող լինելու փաստը պարզելով, այլ ելնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից՝ պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ **բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:**

#### **04.07.2013թ.**

52. «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերության տնօրեն Ալեքսանդր Աբրահամյան v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԳ/8645/05/11

Էջ  
394-402

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է՝

1. վարչական պատասխանատվություն սահմանող նորմերի՝ ժամանակի մեջ գործողության խնդրի հստակեցմանը.

2. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի բովանդակության մեկնաբանությանը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** 1. ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասի, 42-րդ հոդվածի 3-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի, նույն հոդվածի 3-րդ մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ.

- եթե վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքը նախատեսում է ավելի խիստ պատասխանատվություն (պատասխանատվությունը խստացնող օրենք), քան նախատեսված

էր իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքով, ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա անձը ենթակա է պատասխանատվության վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև վարչական իրավախախտում կատարելու ժամանակը որոշելու խնդրին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ և 255-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական իրավախախտումը կատարելու ժամանակը որոշելու համար հինք պետք է ընդունվի իրավախախտման վերաբերյալ արձանագրությունում նշված՝ իրավախախտման կատարման ժամանակը: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, այն է՝ 170.5-րդ, 189.7-րդ հոդվածներով, 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով և 257-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, երբ արձանագրություն չի կազմվում, վարչական իրավախախտում կատարելու ժամանակը որոշվում է՝ հինք ընդունելով օրենսգրքի 251-րդ հոդվածում նշված մյուս ապացույցները:

Վճռաբեկ դատարանն, անդրադառնալով ուժը կորցրած իրավական ակտը կիրառելու վերաբերյալ բողոքաբերի փաստարկին, նշել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ այդ օրենքի համաձայն իրավաբանական ուժ չունեցող ակտեր են համարվում, մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով չնախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերը (6-րդ հոդվածի 3-րդ մաս), համապատասխան հղում չունեցող կամ սխալ հղումով գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը և տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը (43-րդ հոդվածի 4-րդ մաս), «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չիրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերը (46-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչդեռ կիրառման պահին ուժը կորցրած օրենքը, որն օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան կիրառելի է տվյալ իրավահարաբերության նկատմամբ, **«Իրավական**

**ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով** չի կարող համարվել **իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտ:**

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ կետի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է ոչ միայն այդ հոդվածում նշված ապրանքներն ուղղակի վաճառելով (իրացնելով): Նշված իրավադրույթում օգտագործված «իրացնել» եզրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ նեղացվի այդ երևույթի բովանդակությունը: Իրացումը ոչ միայն կոնկրետ ապրանքը փաստացի վաճառելն է՝ գնորդին հանձնելը և դրա դիմաց գումար ստանալը, այլև այդպիսի գործարքի իրականացմանն ուղղակիորեն նախորդող գործընթացը ևս, մասնավորապես՝ ապրանքի վաճառքի վերաբերյալ հայտարարելը, օֆերտայի հրավեր անելը, ապրանքը, որպես վաճառքի ենթակա, ցուցադրելը և այլն: Հետևաբար **ապրանքները հաճախորդներին տեսանելի վայրերում, այն է՝ վաճառասրահում, վաճառասեղանների վրա, ցուցափեղկերում, ցուցասրահում և այլն, վաճառքի նպատակով ցուցադրելը ևս ներառվում է հիշատակված զանցակազմի օբյեկտիվ կողմում:**

Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի հիման վրա անձը կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել նաև այդ **հոդվածում նշված ապրանքը վաճառելու նպատակով՝ հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրված լինելու հանգամանքի առկայության դեպքում:** Միաժամանակ Վճռաբեկ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ կետի համադրված վերլուծության արդյունքում գտել է, որ վաճառելու նպատակը բացակայում է, եթե **վաճառողը պարզորոշ սահմանել է, որ համապատասխան ապրանքները նախատեսված չեն վաճառքի համար:** Այսինքն՝ օրենսգրքի նշված հոդվածի հիման վրա վարչական պատասխանատվություն չի կարող ծագել, եթե վաճառողը տվյալ ապրանքը ցուցադրելով հաճախորդների համար տեսանելի վայրում՝ միաժամանակ պարզորոշ կերպով սահմանել է, որ այդ ապրանքը վաճառքի համար նախատեսված չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մանրածախ առևտրի դեպքում գնանշումը չի համարվում հրապարակային օֆերտայի պարտադիր պայման: Բացի այդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածը ևս հնարավոր է համարում դրանում նշված ապրանքների իրացումն առանց գնանշման: Այդ մասին է վկայում նշված հոդվածում «եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով» ձևակերպումը:

Ելնելով նշված իրավակարգավորումից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ գնանշման բացակայությունը չի վկայում այն մասին, որ հայցվորը պարզորոշ կերպով սահմանել է, որ ցուցադրված ապրանքը վաճառքի համար նախատեսված չէ:

## **ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ**

**05.04.2013թ.**

53. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Թումանյանի տարածքային հարկային տեսչություն v. Արաքսյա Արգարյան, վարչ. գործ թիվ ՎԴ-6/0207/05/09

Էջ  
403-407

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ստուգման ակտը հասցեատիրոջը հանձնելու խնդրին՝ որպես վարչական ակտի ուժի մեջ մտնելու նա-

խապայման՝ կրկնելով նախկին դիրքորոշումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ստուգման կազմակերպման և անցկացման վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, քանի որ դրա առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ հիշյալ օրենքը, վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող ինկորպորացիայով (2008 թվականի հոկտեմբերի 22-ի խմբագրությամբ), ստուգում իրականացնող անձի վրա դնելով ստուգման ակտը երեք օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտին ներկայացնելու պարտականություն, չէր կարգավորում ներկայացման եղանակը: Հետևաբար, ստուգում իրականացնող անձը ստուգման ակտի մասին տնտեսվարող սուբյեկտին պետք է իրազեկեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Մասնավորապես՝ **ստուգման ակտը պետք է հանձնվեր ստորագրությամբ առձեռն ստանալու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ** (յո՛ւն ս ՀՀ *յնտեսական մրցակցության պետական հանձնաժողովն ընդդեմ «Վագրա» ՍՊԸ-ի թիվ 3-1714(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշումը*):

**05.04.2013թ.**

**54. Սվետլանա Օհանյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԳ/0909/05/10**

**Էջ 408-414**

**Խնդիր.** Արդյո՞ք անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքներ չունեցող անձի կողմից կարող է վիճարկվել այդ գույքի նկատմամբ ընդունված քաղաքապետի որոշումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է **դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են:** Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ-ԵԴ), իր նախադեպային որոշումներում անդրադառնալով այս հարցին, նշել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հետակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (յո՛ւն ս *Լը Քոնյույեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի որոշումը, պարբ. 47, Բենթհենն ընդդեմ Նիդերլանդների, թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի որոշում, պարբ. 32*):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Այսինքն՝ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատ

տակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում, չի կարող անվավեր ճանաչվել այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք:

### **05.04.2013թ.**

**55. Փառանձեմ Գևորգյան v. ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԴ/2731/05/11**

Էջ  
415-421

**Խնդիր.** Արդյո՞ք ատոլիտորի որակավորում ստանալու քննություններին մասնակցելու հայտ ներկայացնելու և սահմանված ժամկետում քննություն չկազմակերպվելու դեպքում հայտ ներկայացրած անձին իրավասու մարմինը պետք է շտրիի ատոլիտորի որակավորում և տրամադրի համապատասխան վկայական:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը, 48-րդ հոդվածի «ա» կետը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած վարչական ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի հիման վրա, չխախտեն այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը (տես Սերգեյ Գասպարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5557/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը): Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ հոդվածը չի ենթադրում վարչական մարմնի կողմից վարչարարություն չիրականացվելու դեպքում վարչարարությունն իրականացված լինելու և հայցվողի կողմից պահանջվող վարչական ակտն ընդունված լինելու կանխավարկածի առկայություն:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետով սահմանված կանոնի կիրառման համար անհրաժեշտ է նաև ուսումնասիրել վարչարարության այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են ատոլիտորների որակավորմանը:

ՀՀ կառավարության 03.02.2005 թվականի թիվ 123-Ն որոշմամբ հաստատված «Լիազորված մարմնի կողմից ատոլիտորների որակավորման քննությունների անցկացման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 2-րդ, 5-րդ, 6-րդ, 10-րդ, 22-րդ կետերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ատոլիտորների որակավորման քննությունների անցկացումը՝ որպես վարչարարության առանձին տեսակ, ունի իր առանձնահատկությունները:

Առաջին հերթին այն իրականացվում է մասնագիտական գիտելիքների ստուգման ճանապարհով, որի արդյունքների հիման վրա միայն կարող է ընդունվել համապատասխան որոշում: Այսինքն՝ վարչարարության այս տեսակի պայմաններում միայն դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն համապատասխան վարչական ակտ կայացնելու համար:

Երկրորդ, ատոլիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով: Այսինքն՝ վարչարարության այս տեսակն ունի իրականացման հատուկ կարգ քննության ձևաչափով, իսկ քննության ընթացքում համապատասխան ձևով ստուգվում են անձի մասնագիտական գիտելիքները: Քննությունից բացի այլ եղանակով վարչարարու-



թյան այս տեսակն իրականացվել չի կարող:

Երրորդ. առդիտորների որակավորման քննություններն անցկացնում է լիազորված մարմնի կողմից ստեղծված առդիտորների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով): Այսինքն՝ միայն այդ մարմնի ձևավորման պարագայում է հնարավոր համապատասխան վարչարարության իրականացում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտել է, որ յուրաքանչյուր գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի կիրառման հարցը քննարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև վարչական վարույթի առանձնահատկությունները:

Մյուսն պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառման համար հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը, հնարավոր չէ պարզել առանց քննությունների անցկացման և համապատասխան հանձնաժողովի կողմից անձի մասնագիտական գիտելիքների ստուգման: Այսինքն՝ վարչարարության որոշակի տեսակների դեպքում իրավունքի գոյության հարցն ուղղակիորեն կապված է վարչարարության իրականացման հետ, որի արդյունքում է միայն հնարավոր որոշել հայցվող վարչական ակտի իրավաչափությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ, 66-րդ, 67-րդ հոդվածների, 68-րդ հոդվածի 1-ին մասի, 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերլուծության հիման վրա եզրահանգել է, որ ճանաչման հայց կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ ներկայացնել վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց: Ճանաչման այնպիսի հայցի ներկայացման պարագայում, որի բավարարումը պայմանավորված է վարչական մարմնի կողմից մեկ այլ վարչական ակտի ընդունմամբ, այսինքն՝ որոշակի իրավահարաբերության առկայության ճանաչմանը նախորդում է վարչական ակտի ընդունում, վեճը ենթակա չէ քննության դատարանում: Կիրառելով նշված կանոնը սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ առդիտորների որակավորման քննություն անցկացված չլինելու և համապատասխան վկայական տրամադրված չլինելու պարագայում առդիտորի որակավորում շնորհված համարելու պահանջը ենթակա չէ դատարանում քննության, հետևաբար տվյալ վեճն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

**05.04.2013թ.**

**56. Եղիշե Հարությունյան v. Երևանի քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ՎԳ/0687/05/12**

**Էջ 422-428**

**Խնդիր.** Ինչպիսի պայմանների պետք է բավարարի վարչական մարմնի ստորաբաժանման կողմից տրված գրությունը, որպեսզի հանդիսանա վարչական ակտ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 19-րդ հոդվածները, 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը, նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ որևէ փաստաթուղթ որպես վարչարարության արդյունք հանդիսացող վարչական ակտ դիտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վարչական ակտի բաղկացուցիչ մասերը կազմող տարրերի միաժամանակյա առկայությունը: Այսպես՝ վարչական ակտը պետք է ընդունվի վարչական մարմնի կողմից և ունենա արտաքին ներգործություն, ընդունվի հանրային իրավունքի բնագավառում և հետապնդի կոնկրետ գործի կարգավորման նպատակ, ուղղված լինի անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Իսկ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական ակտի առկայությունը:

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությունը պարունակում է վարչական ակտի բաղկացուցիչ մասերը կազմող բոլոր տարրերը: Մասնավորապես՝ այն

1) ունի արտաքին ներգործություն՝ կարգավորում է վարչական մարմնի՝ Քաղաքապետարանի և ֆիզիկական անձի՝ Եղիշե Հարությունյանի միջև առաջացած իրավահարաբերությունները,

2) անհատական իրավական ակտ է՝ ուղղված է Եղիշե Հարությունյանին,

3) ընդունվել է վարչական մարմնի՝ Քաղաքապետարանի կողմից,

4) ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում. կարգավորում է Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունը փոփոխելու հետ առաջացած իրավահարաբերությունները,

5) հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ. կարգավորում է Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունն արտադրական սահմանելու հետ կապված հարցը,

6) ուղղված է Եղիշե Հարությունյանին իրավունքների տրամադրման մերժմանը՝ Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունը չփոփոխելուն:

#### **04.10.2013թ.**

**57. «ՌՈՒՐԵՆ ԳԼՈՐԳՅԱՆ» ՍՊԸ v. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԴ-2/0302/05/12** **Էջ 429-439**

**Խնդիր.** ա) Արդյո՞ք ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչությունն (այսուհետ՝ Տեսչություն) ունի ստուգման կազմակերպման և անցկացման վարչական վարույթը (այսուհետ՝ ստուգման վարույթ) վերսկսելու լիազորություն, կամ կիրառելի են արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի դրույթները ստուգման վարույթի առնչությամբ.

բ) արդյո՞ք ստուգման վերսկսումը և վերստուգման վարչական վարույթը նույնական իրավական գործընթացներ են.

գ) ո՞րն է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասի իմաստով բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտի բնորոշումը:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ա) Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ ստուգման կազմակերպման և անցկացման վարույթը հանդիսանում է առանձին տեսակի վարչական վարույթ, որի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (*տե՛ս, օրինակ, ՀՀ Կրկնական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն ընդդեմ «Վագրա» ՍՊԸ-ի թիվ 3-1714(ՏԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ստուգման վարույթը վերսկսելու ինստիտուտ և ընթացակարգ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վարչական վարույթը վերսկսելու վերաբերյալ նորմերը կիրառելի են նաև ստուգման վարույթի առնչությամբ և հետևաբար ըստ այդմ հարկային մարմինն օժտված է նշված օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ստուգման վարույթը վերսկսելու իրավասությամբ:

բ) Երկրորդ հարցադրման առնչությամբ Վճռաբեկ դատարանը նախևառաջ կարևորել է «վարչական վարույթի վերսկսում» ինստիտուտի բովանդակության բացահայտումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված՝ այդ ինստիտուտի իրավակարգավորման հիմնական տարրերի միջոցով:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վերոնշյալ հոդվածի իրավակարգավորման հիմնական տարրերն են.

- վարույթը վերսկսվում է նշված հոդվածով և/կամ այլ օրենքներով նախատեսված՝ վարույթը վերսկսելու հիմքերի առկայության դեպքում,

- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի նկատմամբ,

- վարույթը վերսկսելու արդյունքում վերանայվում է՝ փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում վարչական ակտը,

- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է միայն բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտերի առնչությամբ, և այդ ինստիտուտի կիրառմամբ կարող է վերանայվել միայն բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

Հիմք ընդունելով վարչական վարույթը վերսկսելու իրավակարգավորման վերոհիշյալ տարրերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունմամբ **արդեն իսկ ավարտված** վարչական վարույթի վերաբացումն է, նորոգումն է, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

Վերլուծելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածը, 71-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ:

Հիմք ընդունելով «վարչական վարույթի վերսկսում» ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը և ստուգման վարույթի առնչությամբ նշված իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ստուգման վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա սկսված և ստուգման ակտի կազմմամբ ավարտված ստուգման վարույթի վերաբացումն է, նորոգումը, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկման ոչ ենթակա ստուգման ակտը:

Վկայակոչելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերստուգման վարույթը ստուգման վարույթից տարանջատված՝ առանձին, ինքնուրույն վարչական վարույթ է, որի հարուցմամբ ոչ թե վերաբացվում, նորոգվում է նախորդ ստուգման վարույթը, այլ հարուցվում է երկրորդ (կրկնակի) ստուգման վարույթ, որի արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ: Եթե ստուգման վարույթի վերսկսման նպատակն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում արդեն իսկ ավարտված վարույթի արդյունքում ընդունված ստուգման ակտի վերանայումն է, ապա վերստուգման արդյունքում նախորդ ստուգման ակտի վերանայում տեղի չի ունենում, այլ կրկնակի ստուգման արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ օրենսդիրը հստակ տարբերակում է կատարել վերստուգման և ստուգման վարույթը վերսկսելու հիմքերի, խնդիրների ու նպատակների միջև, անընդունելի է համարում այդ վարույթների՝ որպես իրավական գործընթացների նույնացումը:

գ) Վերոհիշյալ երրորդ հարցադրման առնչությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նախ և առաջ ճշգրտել այն վարչական ակտերի շրջանակը, որոնց առնչությամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի իրավակարգավորումը: Այդ նպատակով մեկնաբանության անհրաժեշտություն ունի նշված հոդվածում «բողոքարկման ոչ ենթակա ակտ» եզրույթը: Նշված հասկացությունը համարժեք է «անբողոքարկելի» հասկացության հետ, որի բովանդակությունը բացահայտված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածում:

Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածը, 71-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում «բողոքարկման ոչ ենթակա ակտեր» ձևակերպումը վերաբերում է այն վարչական ակտերին, որոնք օրենքով սահմանված ժամկետում չեն բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով, ինչը նշանակում է, որ նշված դրույթը **կիրառելի չէ այն դեպքերի վրա, երբ տվյալ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկվել է դատական կարգով և առկա է դրա իրավաչափությունը գնահատող վերջնական դատական ակտ:** Այն դեպքում, երբ վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, և առկա է այդ ակտի իրավաչափությունը գնահատող օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ, նոր երևան եկած հանգամանքի հիման վրա վերանայման է ենթակա ոչ թե վարչական ակտը, այլ համապատասխան դատական ակտը:

Ավելին, դատական պաշտպանության իրավունքը, *inter alia*, ներառում է դատարանի մատչելիության իրավունքը, դատական ակտի բողոքարկման իրավունքը, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքների ուժով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքը: Վերջինս հանդիսանում է դատական պաշտպանության բացառիկ և լրացուցիչ միջոց, որը կիրառվում է օրենքով սահմանված հանգամանքների առկայության դեպքում:

Օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքների ուժով վերանայման ինստիտուտ նախատեսել է նաև վարչական վարույթում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում նախատեսելով այդ ինստիտուտը՝ օրենսդիրն այն դիտարկում է որպես վարչական ակտի դեմ վարչական կարգով պաշտպանության բացառիկ և լրացուցիչ միջոց:

Վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ անձի կողմից ընդդեմ վարչական ակտի դատական պաշտպանության միջոցի ընտրությունը բացառում է վարչական կարգով պաշտպանությունից, դրա բաղադրիչներից, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների ուժով վարչական ակտի վերանայման ինստիտուտից օգտվելու հնարավորությունը: Հետևաբար, եթե անձի կողմից ընտրվել է դատական պաշտպանության միջոցը, ապա նոր երևան եկած հանգամանքի առկայության պայմաններում անձն իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետք է իրականացնի դատական պաշտպանության շրջանակներում: Նոր երևան եկած հանգամանքի ուժով վարչական ակտի վերանայումը, հանդիսանալով վարչական կարգով իրավական պաշտպանության տարր, կիրառելի է վարչական կարգով պաշտպանության շրջանակներում:

#### **04.10.2013թ.**

**58. Գրիգոր Խաչերյան v. Երևան քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ԷԶ 440-449 ՎԴ/2603/05/10**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա ընդունված վարչական ակտի անվավեության հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի իրավանդումի

միատեսակ կիրառությունն ապահովելու նկատառումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարել մեկնաբանել «կեղծ փաստաթուղթ» և «կեղծ տեղեկություններ» հասկացությունները: Մասնավորապես՝ վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացած փաստաթուղթը կեղծ է, եթե այն որպես այդպիսին (բովանդակությամբ, վավերապայմաններով և այլ հատկանիշներով) իրականության մեջ երբևէ գոյություն չի ունեցել (օրինակ՝ փաստաթուղթը կազմված չէ այն անձի կողմից, ում կողմից այն ստորագրված է, ներկայացվել է մի փաստաթուղթ, որն իրականում չի կազմվել, փաստաթղթում առկա են ուղղումներ, լրացումներ, ջնջումներ և այլ փոփոխություններ, որոնց արդյունքում փոխվել է փաստաթղթի նախնական բովանդակությունը և այլն): Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացած տեղեկությունը կեղծ է, եթե տեղեկությունն ամբողջությամբ կամ դրանում պարունակվող առանձին տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ կեղծ փաստաթուղթը կամ կեղծ տեղեկությունը կարող են հանգեցնել վարչական ակտի անվավերության, եթե վճռորոշ ազդեցություն են ունեցել վարչական ակտի՝ նման բովանդակությամբ ընդունվելու համար, այլ կերպ ասած՝ առանց այդ փաստաթղթի կամ տեղեկության վարչական ակտը չէր ունենա այնպիսի բովանդակություն, որն ունի դրա առկայության պայմաններում:

Միաժամանակ, վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասի իրավադրույթները, Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրենսդիրն ուղղակիորեն բացառել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով ընդունված վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ ակտի գոյությանը վստահելու իրավունքը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտի հասցեատերը, դիտավորությամբ չբացահայտելով իրեն մատչելի տեղեկությունը, որը կարող էր բացառել ակնկալվող ակտի ընդունումը կամ հանգեցնել ակտի ընդունմանն այլ բովանդակությամբ, հասել է ոչ իրավաչափ վարչական ակտի ընդունման, ըստ էության նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ, այդ ակտին վստահելու իրավունք չունի:

## ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

05.04.2013թ.

59. «Գեպեա» ՍՊԸ v. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԳՅ/0293/05/11

Էջ  
450-456

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է տնտեսվարող սուբյեկտների կողմից հարկային հաշիվների պահպանման ժամկետների խնդրին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը՝ վիճելի իրավահարաբերության առաջացման պահին գործող ինկորպորացիայով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիշատակված դրույթի բովանդակության բացահայտումը և ճիշտ կիրառումը պայմանավորված է ոչ միայն նշված հոդվածի տառացի մեկնաբանմամբ, այլև այդ հոդվածի՝ այլ իրավական ակտերում առկա դրույթների հետ համակցության մեջ մեկնաբանելով:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում ամրագրված դրույթը տնտեսվարող սուբյեկտի համար սահմանում է պարտականություն նախ ժամանակագրական առումով հաշվառել որոշակի փաստաթղթեր, այդ թվում դուրս գրված հարկային հաշիվները, ապա դրանք պահպանել դուրսգրման օրվան հաջորդող երեք տարիների ընթացքում: Նշված ժամկետը օրենսդիրը սահմանում է որպես փաստաթղթերի պահպանման ժամկետի նվազագույն շեմ՝ օգտագործելով «առնվազն» եզրույթը: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ

օրենքի 19րդ հոդվածում ևս սահմանված է որոշակի ժամկետ, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտները պետք է պահպանեն հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկություններ: Այդպիսի ժամկետ է սահմանված հինգ տարին: Այս դեպքում ևս օրենսդիրը նշված ժամկետը դիտում է որպես նվազագույն ժամկետ: Սակայն ի տարբերություն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում ամրագրված դրույթի՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում օրենսդիրը սահմանում է լրացուցիչ պայման, այն է՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում»: Նշվածից հետևում է, որ բոլոր դեպքերում հաշվապահական հաշվառման փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգով պահվում են սահմանված ժամկետներում, սակայն եթե այդ ժամկետը նվազ է հինգ տարուց, ապա այդ փաստաթղթերը պահպանվում են առնվազն հինգ տարի: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում ամրագրված դրույթն ըստ էության առավել լայն է և կիրառելի է այլ հարկատեսակների գծով հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանման ժամկետների նկատմամբ, քանի որ դրանում պարունակվող ժամկետի հաշվարկման պայման է Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով համապատասխան փաստաթղթերի պահպանման համար սահմանված կարգի և ժամկետների պահպանումը:

Վերոնշյալ մեկնաբանությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում սահմանված եռամսյա ժամկետը նվազ է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում սահմանված հնգամսյա ժամկետից, հետևաբար գործում է վերջինս: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ նշված հոդվածները ժամկետների առումով չեն պարունակում հակասություններ, քանի որ դրանցում ամրագրված դրույթները փոխլրացնող են:

#### **04.10.2013թ.**

**60. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջ Կենտրոնի հարկային տեսչություն v. Ա/Ձ Սուրեն Ռշտունի, վարչ. գործ թիվ 457-462 ՎԴ/4728/05/12**

**Խնդիր.** Արդյո՞ք «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» և ««Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքները կիրառելի են այն դեպքում, երբ 2003-2005 թվականների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունները կատարված են:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով 01.01.2013 թվականին ուժը կորցրած «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 4-րդ, 8-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նշված նորմերի վերաբերյալ նախկինում կայացրած իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունը **2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված** եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի համար նախատեսել է արտոնություններ՝ անկախ պարտավորությունների առաջացման հիմքերից: Բացի այդ, հարկային մարմինների համար սահմանվել է 2006 թվականի հունվարի 1-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը նշված արտոնություններից

օգտվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների հաշվարկման արգելք: Միաժամանակ, նույն նորմով հարկային մարմինները ծանրաբեռնվել են անհատ ձեռնարկատերերի ցանկերը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացնելու պարտականությամբ՝ պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականներն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար (յրեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշխարհակի տարածքային հարկային տնտեսության հայցն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գեղամ Թումանյանի՝ 542.440 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով Վճռաբեկ դատարանի 16.10.2009 թվականի թիվ ՎԳ3/0088/05/09 որոշումը):

Վերահաստատելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնություններից օգտվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերը: Այսինքն՝ 2003-2005 թվականների համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները կատարած անհատ ձեռնարկատերերը չեն օգտվում վերը նշված օրենքով սահմանված արտոնություններից: Այլ կերպ, այն դեպքում, երբ չկա պարտավորություն, հնարավոր չէ օգտվել դրա համար նախատեսված արտոնությունից:

**29.11.2013թ.**

**61. Երևան համայնք v. Վահե Փայտյան, վարչ. գործ թիվ ՎԳ/6025/05/12**

**Էջ  
463-467**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքահարկի գծով արտոնությունների կիրառման նախապայմաններին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գույքահարկի գծով արտոնությունը վերոնշյալ հիմքով կարող է կիրառվել միայն մեկ՝ ոչ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինության մասով, հետևաբար յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է պարզի՝

- ա) արտոնություն հայցող հարկ վճարող սուբյեկտը սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ շինություններ ունի, թե ոչ.
- բ) եթե այո, արդյոք դրանցից յուրաքանչյուրի մասով արտոնությունը կիրառելի է (պայմանավորված շինության նպատակային նշանակությամբ), թե ոչ.
- գ) եթե կիրառելի է, արտոնություն հայցող հարկ վճարող սուբյեկտն արտահայտել է արդյոք իր կամքը՝ կոնկրետ շինության մասով արտոնություն կիրառելու վերաբերյալ.
- դ) տվյալ հարկ վճարողին պատկանող այլ շինության կամ շինությունների մասով արտոնություն կիրառված է, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը թվարկված հանգամանքներն էական նշանակություն ունեն նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի լուծման համար՝ ձևավորելով ապացուցման ենթակա փաստերի շրջանակը (ապացուցման առարկան): Ընդ որում, օրենսդիրը մատնանշել է նաև այն թույլատրելի ապացույցների շրջանակը, որոնցով ենթակա են պարզման վերոնշյալ հանգամանքները՝ որպես այդպիսին նախատեսելով **անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը՝** անձին սեփականության իրավունքով պատկանող շինությունների թվաքա-

նակի և վայրի (վայրերի) հաշվառող մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ այլ շինության մասով արտոնություն կիրառված չլինելու մասին:

**29.11.2013թ.**

**62. «Արտկա-Տեքս» ՍՊԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԳ-2/0311/05/12**

**Էջ  
468-477**

**Խնդիր.** 1. Արդյո՞ք տարածության մեջ տարբեր տեղաբաշխվածություն ունեցող (տարբեր հասցեներ ունեցող), սակայն մեկ ընդհանուր գազահաշվիչի և ճնշակի (կոմպրեսոր) միջոցով շահագործվող գազալիցքավորման մեկից ավելի կետերը «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.7-րդ հոդվածի իմաստով պետք է դիտել մեկ ամբողջական գազալցման կայան կամ գազալցման համար հարմարեցված սարքավորումների ամբողջություն:

2. արդյո՞ք ստուգման ընթացքում ընկերության հիմնադրի կողմից ներկայացված տվյալները կարող են լրացուցիչ հարկային պարտավորություններ հաշվարկելու հիմք հանդիսանալ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** 1. Վերլուծելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.7-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորման համար հարմարեցված սարքավորումների ամբողջությունը դիտվում է որպես գազալիցքավորման կայան: Սակայն «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ սարքավորումների այն ցանկը, որոնցից որևէ մեկի բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ սարքավորումների ամբողջականությունն ապահովված չհամարելու համար: Այլ կերպ, սահմանված չէ այն սարքավորումների ցանկը, որոնց առկայությունը և միմյանց հետ տեխնոլոգիական փոխկապակցվածությունը բնորոշում է գազալիցքավորման կայանի սարքավորումների կազմի ամբողջականությունը, հետևաբար, եթե հարմարեցված սարքավորումների միջոցով՝ անկախ ֆիզիկական տեղադրվածությունից, իրականացվում է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն, ապա տվյալ վայրը պետք է դիտվի որպես գազալցման կայան:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տարածության մեջ տարբեր տեղաբաշխվածություն ունեցող, սակայն մեկ ընդհանուր գազահաշվիչի և ճնշակի միջոցով շահագործվող գազալիցքավորման կետերը պետք է դիտել մեկ ամբողջական գազալցման կայան կամ գազալցման համար հարմարեցված սարքավորումների ամբողջություն, քանի որ գազալիցքավորման սարքավորումների ամբողջությունը որոշելու համար նշանակություն չունի այն հանգամանքը, թե այդ սարքավորումները Երևան-Սևան մայրուղու 64-րդ կմ-ի միայն մեկ, թե նաև հակառակ կողմում են գտնվում: Էականը սարքավորումների այնպիսի ամբողջությունն է, որն ապահովում է գազալցման իրականացումը սարքավորումների մեկ համակարգ սպասարկող գազալիցքավորման սնուցման մեկ սարքի կամ հարմարանքի, այն է՝ ճնշակի միջոցով: Ճանապարհի աջ և ձախ կողմերում Ընկերության կողմից գազալիցքավորումն իրականացվում է այնպիսի ամբողջություն կազմող սարքավորումների միջոցով, որոնք հնարավորություն չեն տալիս ճանապարհի մյուս կողմում գտնվող սարքավորումների միջոցով ինքնուրույն գազալիցքավորման գործունեություն իրականացնելը: Այսինքն՝ Ընկերությունը չունի միմյանցից անկախ և ինքնուրույն կերպով գազալիցքավորում ապահովող հարմարեցված սարքավորումների այնպիսի ամբողջություն, որոնք կարող են գործել միմյանցից անկախ: Այսինքն՝ մեկից ավելի կայանների շահագործումն ապահովող գազահաշվիչը և ճնշակը յուրաքանչյուր կայանի համար պետք է դիտել ավտոտրանսպորտային միջոցների գազալցման համար հարմարեցված սարքավորումների ամբողջության կազմի մեջ մտնող և մնացած սարքավորումների հետ գազալիցքավորման տեխնոլոգիական պրոցեսն ապահովող սարքավորումներ, քանի որ դրանց բացակայության պայմաններում անհնարին կդառնա գազալիցքավորման կայաններից յուրաքանչյուրի շահագործումը:



2. Վերլուծելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, 94-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, նույն հոդվածի 2-րդ կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների արդյունքում **արձանագրված** հաստատագրված վճարի ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը **մեծ է** հաստատագրված վճար վճարողի կողմից ներկայացված ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների **չափից**, ապա հաստատագրված վճարի մեծությունը համարվում է **չհիմնավորված**: Ընդ որում, նման դեպքում հարկային մարմինը հաստատագրված վճարը հաշվարկում է՝ հիմք ընդունելով **ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը**:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես, հիմնվելով՝ ի թիվս այլնի, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների վրա:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ հարկային մարմին ներկայացվող տեղեկություն և համարվում նաև երրորդ անձի կողմից ներկայացվող տեղեկությունը: Նույն օրենքի իմաստով երրորդ անձ է համարվում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինը, առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը, որը հարկային մարմին է ներկայացնում այլ հարկ վճարողի կամ այլ ֆիզիկական անձի գործարքի կամ գործառնության կամ գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկվող ակտը կազմելիս «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը Տեսչության կողմից չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ակտը կազմելիս Տեսչությունը հիմք է ընդունել Կոմիտեի հետաքննության վարչությունից ստացված ելակետային տվյալները: Այսինքն՝ Տեսչությունը տեղեկատվությունը ստացել է հարկային մարմնի, այն է՝ մինևնույն վարչական մարմնի մեկ այլ կառուցվածքային ստորաբաժանման կողմից, հետևաբար Կոմիտեի հետաքննության վարչությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել երրորդ անձ: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում վարչական մարմինը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել: Ավելին, հաստատագրված վճարը հաշվարկել է հիմք ընդունելով արձանագրված **ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը**:

Դատարանի վճռի և Վերաքննիչ դատարանի որոշման վերլուծությունը վկայում է, որ վերջիններս Ընկերության հիմնադրի բացատրությունները որակել են որպես անթույլատրելի ապացույց՝ հիմնականում պատճառաբանելով, որ «ստուգումն իրականացնող անձանց իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք է վերապահված պահանջել նաև բացատրություններ, այս պարագայում հատկանշական է այն հանգամանքը, որ ստուգում իրականացողների բացատրություն պահանջելու իրավունքն ամրագրված է տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, այսինքն՝ բացատրություն կարող է վերցվել տնտեսավարող սուբյեկտի համապատասխան ոլորտի պատասխանատու պաշտոնատար

անձից կամ աշխատակցից, սակայն ոչ տնտեսավարող սուբյեկտի գործունեությանը չառնչվող անձանցից, այդ թվում, հիմնադրից, մասնակցից և այլն»:

Վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 24-րդ հոդվածը, 113-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հասնաարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ապացույցների թույլատրելիության ընդհանուր կանոնը, որի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Նշված կանոնին համապատասխան՝ Ընկերության հիմնադրի բացատրությունները կարող էին որակվել որպես ակթոյլատրելի ապացույց, եթե ստուգման ակտի 8-րդ կետում արձանագրված խախտման փաստի հաստատման համար օրենքը կամ այլ իրավական ակտ մատնանշեր կոնկրետ ապացույցներ՝ այդ շրջանակից բացառելով Ընկերության հիմնադրի բացատրությունները: Դատարանը և Վերաքննիչ դատարանը հիմնադրի բացատրությունները բացառել են ապացույցների շարքից՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետը: Մինչդեռ, ինչպես նշված դրույթը, այնպես էլ նշված օրենքի 7-10-րդ հոդվածները նորմերը սահմանում են ստուգումն իրականացնող անձի և տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, և նշված օրենքի 7-րդ հոդվածում՝ ստուգումն իրականացնող անձի իրավունքների շարքում հիմնադրից բացատրություններ պահանջելու իրավունքի բացակայությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի ստուգման ակտի 8-րդ կետում արձանագրված խախտման փաստի հաստատումն այն անձանց բացատրություններով, որոնցից բացատրություն պահանջելու իրավունքն ամրագրված չէ նշված հոդվածով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ստուգման ակտի 8-րդ կետում արձանագրված խախտման փաստի առնչությամբ թույլատրելի ապացույց են ինչպես Ընկերության հիմնադրի բացատրությունները, այնպես էլ այլ անձանց բացատրությունները:

## 26.12.2013թ.

63. «Արեն-Մեկ» ՍՊԸ v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արարկիբի հարկային տեսչություն, վարչ. գործ թիվ ՎԴ/4109/05/10

Էջ  
478-484

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հաստատագրված վճարների մասին օրենսդրության մեջ կիրառվող՝ «ապասարկման սրահ» հասկացության բովանդակության բացահայտմանը:

**Վճռաբեկ դատարանի դիտարկումը.** Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը հանդիսանում է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն:

Վերոնշյալ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝

ա) հանրային սննդի ոլորտում գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը.

բ) խոհարարական արտադրանք է համարվում կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսաֆաբրիկատների համախումբը.

գ) **հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը.**

դ) **բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում** հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը:

Նույն օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք... իսկ 34-րդ հոդվածը սահմանում է, որ հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի (գործակիցների) արտադրյալի 2000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած **սպասարկման սրահի մակերեսը՝** քառակուսի մետրերով:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 101-րդ հոդվածի հիմքով ընդունված՝ ««Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ իրահանգչական նամակը հաստատելու մասին» ՀՀ հարկային տեսչության 30.12.1998 թվականի թիվ 01/60 հրամանի 4.2 կետի 1-ին պարբերության համաձայն՝ հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը, քառակուսի մետրերով արտահայտված, պատրաստի խոհարարական արտադրանքի **իրացման և սպառման** կազմակերպման համար նախատեսված, հատուկ կահավորված այն տարածքն է, որը ներառում է սպառողների կողմից պատրաստի խոհարարական արտադրանքի սպառման և հանրային սննդի գործունեության իրականացման վայրում նրանց ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածքները (մասնավորապես՝ բեմահարթակների, պարահրապարակների, առանձնասենյակների և այլն):

Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը հանդիսանում է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, իսկ հանրային սննդի ոլորտում գործունեություն է համարվում խոհարարական պատրաստի արտադրանքի՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսաֆաբրիկատների սպառման և իրացման կազմակերպումը համապատասխան տարածքում՝ հանրային սննդի սպասարկման սրահում: Մասնավորապես՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով, իսկ հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը՝ քառակուսի մետրերով արտահայտված, պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված, հատուկ կահավորված այն տարածքն է, որը ներառում է սպառողների կողմից պատրաստի խոհարարական արտադրանքի սպառում և կազմակերպում, ինչպես նաև նրանց ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածքները՝ բեմահարթակներ, պարահրապարակներ, առանձնասենյակներ:

05.04.2013թ.

64. Հայկ Մարգարյան v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/3932/05/09

Էջ  
485-491

**Խնդիր.** Ո՞ր գործողությունները կարող են որակվել որպես մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ոչնչացում և որոնք՝ բեռնաթափում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Համադրելով ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի «բ» կետը, 139.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 197-րդ հոդվածի 1-ին կետը, 198-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը սահմանել է երկու տարբեր զանցակազմեր, որոնք օբյեկտիվ կողմով արտահայտվում են տարբեր գործողությունների կատարմամբ: Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանված զանցանքը դրսևորվում է այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք առնչվում են ուղղակիորեն ապրանքին որպես գույքային միավորի և չեն որոշում դրա ճակատագիրը: Եման գործողությունների արդյունքում գույքը շարունակում է գտնվել անձի փաստացի տիրապետման ներքո: Մինչդեռ նույն օրենսգրքի 198-րդ հոդվածում ամրագրված արարքը կատարվում է այնպիսի գործողություններով, որոնցով որոշվում է մաքսային հսկողության ներքո գտնվող գույքի ճակատագիրը: Այլ կերպ ասած՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները դուրս են գալիս անձի փաստացի տիրապետումից: Այդպիսիք են ապրանքների **հանձնումն այլ անձի**, ապրանքի **օտարմանն ուղղված գործարքների կերպով**, դրանք **ոչնչացնելը** կամ **կորցնելը**: Եշված գործողություններից **ոչնչացումը** պետք է դիտել որպես անձի կողմից կատարված գործողության ուղղակի հետևանք: Օրենսդիրը նշված եզրույթի օգտագործմամբ ընդգծել է ապրանքների կամ տրանսպորտային միջոցների ոչնչացման մեջ անձի մասնակցության հանգամանքը: Այլ կերպ՝ ապրանքի ոչնչացումը պետք է ներառվի անձի դիտավորության մեջ: Հետևաբար այն դեպքերում, երբ ապրանքների ոչնչացումը դիտավորությամբ կատարված արարքի հետևանք չէ կամ այդ արարքը կատարվել է անզգուշությամբ, ապա բացակայում է ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմը:

Վերահաստատելով ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ, 198-րդ հոդվածների վերաբերյալ իրավական դիրքորոշումն առ այն, որ մաքսային ռեժիմի ներքո ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները **ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողնման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ**, և այդ ժամանակահատվածում առանց մաքսային մարմնի թույլտվության նշված ապրանքները կամ տրանսպորտային միջոցներն այլ անձի հանձնելը որակվում է մաքսային կանոնների խախտում, և նման իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով տուգանքի տեսքով (*յուև Արթուր Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի թիվ ՎԳ/4709/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*), Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ վերը նշված կանոնակարգումը կիրառելի է նաև մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների արտահանման հարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով այդ հարաբերությունների առանձնահատկությունները:

Վկայակոչելով ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժգ» կետը, 138-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ մաքսային հսկողության իրականացումը նպատակ ունի ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ **իրավական ակտերով**, ինչպես նաև միջազգային պայմանագրերով **ամրագրված դրույթների պահպանումը**, ինչպես նաև պահպանել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը:

Համադրելով վերը նշված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի «բ» կետի ուժով

ամրագրելով, որ «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով գրանցված ապրանքներն անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ, միաժամանակ ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանել է արգելք, որով մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների բեռնաթափումն առանց մաքսային մարմնի թույլտվության՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

**04.10.2013թ.**

**65. Արթուր Զազյան v. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/5828/05/12**

**Էջ 492-497**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանն անդրադարձել է Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքի վճարման անձնական օգտագործման ավտոմեքենան ներմուծելու պայմանների հարցին:

**Վճարել դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «իա» կետը, 105-րդ հոդվածի 6-րդ կետը, 132-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը, 133-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճարել դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք օրենքի ուժով իրավունք ունեն առանց մաքսատուրքի վճարման ներմուծել **իրենց անձնական օգտագործման գույքը**, որպիսի գույքի մեջ է մտնում նաև ֆիզիկական անձի անձնական օգտագործման ավտոմեքենան, որը, սակայն, ֆիզիկական անձի կողմից պետք է ձեռք բերված և **հաշվառված լինի** նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը: Ավելին, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ մինչև Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը: Նշված իրավունքից օգտվելու համար անձը (հայտարարատուն) պարտավոր է մաքսային մարմիններ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ:

Վճարել դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ մաքսային ձևակերպման կատարումը կախվածության մեջ չի դրվում միայն սեփականության իրավունքի ծագման փաստի հետ: Այսինքն՝ բացի ավտոմեքենայի սեփականատեր լինելու պահանջից, անհրաժեշտ են լրացուցիչ այլ պայմաններ, որպեսզի ավտոմեքենան ներմուծվի ազատ շրջանառության համար: Մասնավորապես՝ գույքն անձնական օգտագործման համար ձեռք բերելը, գույքն օտարերկրյա պետությունում ձեռք բերելը, գույքն այն երկրում հաշվառումից հանելը, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

**04.10.2013թ.**

**66. ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե v. Կարեն Կարապետյան, վարչ. գործ թիվ ՎԳ/4928/05/11**

**Էջ 498-508**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճարել դատարանն անդրադարձել է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի կիրառման հարցին:

**Վճարել դատարանի դիրքորոշումը.** Վերլուծելով ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը (վիճարկվող որոշումն ընդունելու պահին՝ 18.08.2011 թվականին գործող խմբագրությամբ), 2-րդ հոդվածի «ժ» և «ժա» կետերը, 131-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 132-րդ հոդվածի 1-ին մասը, նույն հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետը, 134-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 135-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը, 189-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Վարչական իրավախախտումների վե-

րաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ, 11-րդ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, որը կարող է արտահայտվել նաև դրանց մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելու միջոցով, մեղավոր անձի նկատմամբ առաջացնում էր այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով տուգանքի նշանակում: Ընդ որում, **մաքսային կանոնները խախտած անձը պատասխանատվության է ենթակա այդ կանոններն ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշորեն խախտելու համար** (տես նաև Արամ Բաբայանն ընդդեմ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/2122/05/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը):

**Որպես մաքսային կանոնների խախտման սուբյեկտ (զանցառու) կարող է հանդես գալ հայտարարատուն, այն է՝ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը՝ կախված նրանց մեղքի աստիճանից:** Այսինքն՝ յուրաքանչյուր խախտման դեպքում մաքսային մարմինը պետք է պարզի հայտարարատուի մեղքի աստիճանը, որից հետո միայն հնարավոր կլինի բացահայտել իրավախախտում թույլ տված անձին: Միաժամանակ, հայտարարատուի մեղքը պարզելու համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ ապրանքներ տեղափոխող անձի կողմից լիազորված անձը՝ որպես հայտարարատու հանդես գալիս, ունի նաև որոշակի իրավունքներ և պարտականություններ, որոնք ուղղված են ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացնելուն: Այսպես՝ վերջինս մինչև հայտարարագրումն իրավունք ունի զննել և չափել ապրանքները և տրանսպորտային միջոցները, մաքսային մարմնի համաձայնությամբ վերցնել նմուշներ կամ փորձանմուշներ, և նա պարտավոր է ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացնել օրենքով նախատեսված կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ ապրանքներ տեղափոխող անձի կողմից լիազորված անձը չի օգտվում իր՝ օրենքով երաշխավորված իրավունքներից, այլ հիմնվում է բացառապես ապրանքներ տեղափոխող անձի կողմից իրեն ներկայացված տեղեկությունների վրա, ապա նա է կրում ոչ արժանահավատ տեղեկությունների ներկայացման բացասական հետևանքների ռիսկը:

## 29.11.2013թ.

67. **Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպություն v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/0990/05/11** Էջ 509-516

**Խնդիր.** Արդյո՞ք առանց մաքսային միջնորդի (բրոքերի) ծառայությունից օգտվելու ապրանքների հայտարարագրում կատարելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը պարտավոր է ներկայացնել մաքսային մասնագետի որակավորումը հաստատող փաստաթուղթ:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժ» և «ժա» կետերում, 68-րդ հոդվածի 1-ին մասում, 70-րդ հոդվածի 1-ին մասում, 131-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավանքների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հայտարարագրում կարող է կատարվել.

- ապրանքներ տեղափոխող անձի կողմից՝ անձամբ,
- ապրանքներ տեղափոխող անձի կողմից՝ իր լիազորած անձի միջոցով,
- մաքսային բրոքերի կողմից:

ՀՀ մաքսային օրենսգրքը մաքսային ձևակերպումները մասնագետի որակավորում ունեցող անձի միջոցով իրականացնելու պահանջ սահմանում է միայն այն դեպքում, երբ որպես հայտարարատու հանդես է գալիս մաքսային բրոքերը (հոդված 70): Մինչդեռ այն դեպքում, երբ հայտարարագրումն իրականացնում է ապրանքներ տեղափոխող անձն անձամբ կամ լիազորված անձի միջոցով, ՀՀ մաքսային օրենսգրքով նման որակավորման առկայության պահանջ չի նախատեսվում: ՀՀ մաքսային օրենսգրքը չի բովանդակում որևէ դրույթ, որը հայտարարագրումը կատարող՝ տեղափոխող անձի համար

սահմանի մասնագետի որակավորում ունենալու պարտականություն կամ հայտարարագրումը մասնագետի որակավորում ունեցող անձին լիազորելու պարտականություն:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Սահմանադրական այս սկզբունք-նորմն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածում, որի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները կարող են սահմանվել բացառապես օրենքով: Այս սահմանադրական դրույթը բացառում է գործադիր իշխանության մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պարտականություններ սահմանելու իրավազորությունը: Սահմանադրական այս նորմին համահունչ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1-րդ մասը սահմանում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանտոններ, կարգեր կամ տեխնիկական նորմեր օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում և սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք **չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 141-րդ հոդվածը մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու լիազորությունը պատվիրակել է կառավարությանը: ՀՀ կառավարությունը նշված լիազորությունն իրացնելիս սահմանափակված է ՀՀ Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ դրույթներով: Այսինքն՝ սահմանելով մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ ՀՀ կառավարության որոշմամբ չեն կարող սահմանվել հայտարարատուի համար պարտականություններ, որոնք սահմանված չեն ՀՀ մաքսային օրենսգրքով:

ՀՀ կառավարությունը, իրացնելով ՀՀ մաքսային օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունը, ընդունել է «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» 21.11.2003 թվականի թիվ 1779-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում): Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքին համապատասխան՝ անձի անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթղթերն են՝

ա) անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,

բ) անձի՝ որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթուղթը (լիազորագիր կամ նմանատիպ այլ փաստաթուղթ, մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավամեկնաբանողական կանոնը, համաձայն որի՝ եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ **առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները:** Նշված կանոնի հիման վրա Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթի մեկնաբանությունը պահանջում է նշված դրույթը դիտարկել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 83.5-րդ հոդվածի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1-րդ հոդվածի պահանջների յույսի ներքո՝ հաշվի առնելով, որ ՀՀ մաքսային օրենսգրքը չի սահմանել հայտարարատու հանդիսացող՝ ապրանքներ տեղափոխող անձի՝ մասնագետի որակավորում ունենալու պարտականություն կամ հայտարարագրումը մասնագետի որակավորում ունեցող անձին լիազորելու պարտականություն: Որոշման նշված դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հանգեցվի հայտարարատու հանդիսացող՝ ապրանքներ տեղափոխող անձի համար օրենքով չնախատեսված պարտականություն սահմանելուն:

Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետում ստորակետով տարանջատված «լիազորագիր կամ նմանատիպ այլ փաստաթուղթ», « մաքսային մասնագետ-

տի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ» ձևակերպումները վերցված են փակագծերի մեջ, ինչը նշանակում է, որ դրանք որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթղթի տարատեսակներ են, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնելու պահանջը պետք է որոշվի ըստ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վերոնշյալ իրավակարգավորման: Այսինքն՝ հաշվի առնելով, որ ՀՀ մաքսային օրենսգիրքը մասնագետի որակավորում ունեցող անձի միջոցով մաքսային ձևակերպումները կատարելու պարտականություն սահմանում է միայն մաքսային միջնորդի (բրոքերի) համար, մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթը հայտարարատուի լիազորությունը հաստատող փաստաթուղթ է, և նման փաստաթուղթ ներկայացնելու պահանջ կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հայտարարատուն մաքսային միջնորդն է: Մինչդեռ, այն դեպքում, երբ հայտարարագրումը կատարում է ապրանքներ տեղափոխող անձն իր կողմից լիազորված անձի միջոցով, նկատի ունենալով, որ ՀՀ մաքսային օրենսգիրքն այդ դեպքերում ապրանքներ տեղափոխող անձի համար չի սահմանում մասնագետի որակավորում ունեցող անձին լիազորելու պարտականություն, հայտարարատուի լիազորությունը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում լիազորագիրը կամ նման այլ փաստաթուղթ: Նույն հիմնավորմամբ՝ եթե հայտարարագրումն իրականացնում է անձամբ ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը, ապա լիազորությունները հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի շրջանակը սահմանափակվում է 6-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթով, այն է՝ անձագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ հայտարարագրումն իրականացնում է ապրանքներ տեղափոխող անձն անձամբ կամ լիազորված անձի միջոցով:

## 26.12.2013թ.

68. Սերգեյ Գրիգորյան v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչ. գործ թիվ ՎԳ/5445/05/12

Էջ  
5177-531

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման համար անհրաժեշտ հիմքերին և դրանք հաստատող ապացույցները չներկայացնելու իրավական հետևանքներին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ մաքսային օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, այսինքն՝ այն գումարը, որը փաստացի վճարվել է, ելթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար:

ՀՀ մաքսային օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի կողմից, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված այն դեպքերի, երբ դա որոշվում է մաքսային մարմինների կողմից:

ՀՀ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ մաքսային արժեքը ներառում է արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը, մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 83 հոդվածի «բ»-«է» ենթակետերում նշված ծախսերը ներառվում են մաքսային արժեքի մեջ, եթե դրանք հաշվի չեն առնված ապրանքների ձեռքբերման գնում:

ՀՀ մաքսային օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող 87-րդ հոդվածի 1-ին կետի խմբագրության համաձայն՝ «Մաքսային սահմանով տեղափոխվող



ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագրի հետ միասին պետք է ներկայացվի ապրանքների ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթը (հաշիվ-ապրանքագիրը կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ), որը պետք է պարունակի փաստաթղթի տրման ամիս-ամսաթվի, հերթական համարի, վաճառողի (առաքողի), գնորդի (ստացողի), ապրանքի մանրամասն նկարագրի (անվանումը, առկայության դեպքում՝ ապրանքային նշանը կամ առևտրային անվանումը), տեղերի քանակի, չափի միավորի, միավորի արժեքի, քաշի, ընդհանուր արժեքի մասին տեղեկություններ, **ինչպես նաև վաճառողի (մատակարարի) կողմից առաքման (մատակարարման) պայմաններով նախատեսված լինելու դեպքում առանձին տողերով՝ մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերի, կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերի (բացառությամբ ապրանքների ձեռքբերման համար կատարված կոմիսիոն և միջնորդային ծախսերի), ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված և ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարների մասին»:**

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, որը, ի թիվս այլ գումարների, ներառում է նաև արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը, ինչպես նաև **մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը:**

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներում արձանագրել է, որ գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման համար հայտարարատուն պետք է ներկայացնի ապրանքի ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթը, որը վաճառողի (մատակարարի) կողմից առաքման (մատակարարման) պայմաններով նախատեսված լինելու դեպքում առանձին տողերով պետք է պարունակի նաև **մինչև ՀՀ մաքսային սահմանն ապրանքը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման և փոխաբեռնման ծախսերը:** Շշված պահանջը պարտադիր է և չի կարող համարվել ձևական: Հետևաբար, այն չպահպանելու դեպքում ապրանքի տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման և փոխաբեռնման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը համարվում են չներկայացված, և հայտարարատուի որոշած մաքսային արժեքը որպես հիմք չի ընդունվում (*պե՛ս «Եվրոմոթորս» ՍՊԸ-ն ընդդեմ Կոմիտեի թիվ ՎԴ/2166/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտված վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված ծախսերը պետք է առանձին տողերով արտացոլված լինեն ապրանքների ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթղթում (հաշիվ-ապրանքագիր կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ) միայն այն դեպքում, երբ մինչև ՀՀ մաքսային սահմանն առաքման պարտականությունը, ըստ մատակարարման պայմանների, կրում է վաճառողը (մատակարարը):

Միաժամանակ, ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 2-րդ կետի խմբագրության համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է գործարքի գնի մեթոդով, եթե՝ ա) մաքսային մարմինները չունեն բավարար հիմքեր նույն հոդվածի 1-ին կետով սահմանված փաստաթուղթն անարժանահավատ ճանաչելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուի որոշած մաքսային արժեքը հիմք չի

ընդունվում, եթե հայտարարատուն չի ներկայացնում ապրանքների՝ մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահման կատարված տեղափոխման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրական ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **անկախ այն հանգամանքից, թե ով է կրել ապրանքի փոխադրման պարտականությունը՝ գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքը որոշելու համար հայտարարատուն պարտավոր է, ի թիվս ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված այլ փաստաթղթերի, մաքսային մարմին ներկայացնել մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:** Այսինքն՝ հայտարարատուի կողմից ներկայացվում են այն ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, որոնք փաստացի կատարվել են ապրանքը մինչև ՀՀ մաքսային սահման տեղափոխման ընթացքում: Ընդ որում, հայտարարատուի որոշած մաքսային արժեքը հիմք չի ընդունվում, եթե հայտարարատուն չի ներկայացրել նշված փաստաթղթերը կամ մաքսային մարմիններն ունեն բավարար հիմքեր հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերն անարժանահավատ ճանաչելու համար:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ապրանքի մաքսային արժեքի հայտարարագրման ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրման ենթակա այլ տեղեկությունների հետ մեկտեղ հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող կամ նրա կողմից լիազորված անձը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, եթե դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՀՀ մաքսային վարչության պետի 12.06.1998 թվականի թիվ 71-ՄՎ դ հրամանով (նշված հրամանում կատարվել են փոփոխություններ և լրացումներ Կոմիտեի 26.01.2011 թվականի թիվ 22-Ն հրամանով) հաստատվել է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնային մաքսային հայտարարագրման, ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը, ինչպես նաև բեռնային մաքսային հայտարարագրի հիմնական և լրացուցիչ թերթիկների ձևը: Նշված կարգի 2.1 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը ֆիզիկական անձանց կողմից կատարվում է այն սահմանային մաքսային կետերում և մաքսատներում, որոնցով տեղափոխվում են հայտարարագրման ենթակա ապրանքները և տրանսպորտային միջոցները, կամ մաքսատներում, որոնք սահմանված կարգով լրացված ներքին տարանցման փաստաթղթով (փոխադրման ամփոփագրով) տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների համար հանդիսանում են նշանակման մաքսային մարմին:

Նույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքները հայտարարագրման է ներկայացնում ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը բեռնային մաքսային հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի հետ միասին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարատուն մաքսային հայտարարագիրը ներկայացնում է մաքսային մարմին: Ներկայացված մաքսային

հայտարարագիրը գրանցվում է մաքսային մարմնում, ինչի կապակցությամբ մաքսային մարմինը մաքսային հայտարարագրի վրա նշում է գրանցման հերթական համարը և գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին: Երկայացված մաքսային հայտարարագիրն ընդունում է մաքսային մարմինը, ինչի կապակցությամբ վերջինս մաքսային հայտարարագրի վրա նշում է ընդունման հերթական համարը, ամսաթիվը, ամիսը, տարին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 2-րդ կետի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս, հայտարարագրի ներկայացման օրը կազմում և հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով մերժման եզրակացություն, որտեղ հիմնավորվում է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, և նշվում է այն վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ում կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն մերժման եզրակացությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմնի կամ դատարան:

ՀՀ պետական եկամուտների նախարարության «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 70-րդ հոդվածի, 96-րդ հոդվածի 2-րդ կետի և 117-րդ հոդվածի պահանջներն ապահովելու մասին» 05.12.2000 թվականի թիվ 02/1508 հրամանի 1-ին կետով հաստատվել է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում տրվող մերժման եզրակացության ձևը:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 95-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում էր. «Ապրանքներ տեղափոխող անձի գրավոր դիմումի հիման վրա, հինգ օրվա ընթացքում, մաքսային մարմինները պարտավոր են գրավոր տեղեկացնել մաքսային արժեքի չափի և դրա որոշման եղանակի մասին»: Նշված կետն ուժը կորցրել է ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 05.12.2012 թվականի ՀՕ-224-Ն օրենքով:**

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման նպատակով հայտարարատուի կողմից մաքսային մարմինների տրամադրված տեղեկությունները վերջիններիս կողմից կարող են օգտագործվել միայն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածում նշված նպատակներով: Այդ տեղեկություններն առանց հայտարարատուի համաձայնության չեն կարող տրամադրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Վերոնշյալ նորմերի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ մաքսային օրենսգրքը սահմանել է ապրանքի մաքսային արժեքը, այդ թվում՝ գործարքի գնի մեթոդով այն որոշելու որոշակի ընթացակարգ, այն է՝ հայտարարագիր ներկայացնելու և այն մաքսային մարմնի կողմից ընդունելու ձևով: Մասնավորապես, ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը, որից հետո մաքսային մարմինների կողմից որոշվում է գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքն ընդունելու հարցը: Հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս հայտարարագրի ներկայացման օրը կազմում և հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանված ձևով մերժման եզրակացություն, որն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմնի կամ դատարան:

Միաժամանակ, վիճելի իրավահարաբերության ծագման պահին ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված էր մաքսային մարմիններից գրավոր դիմումով համապա-

տասխան տեղեկություններ տրամադրելու դեպքում ապրանքի մաքսային արժեքի և դրա որոշման եղանակի մասին տեղեկատվություն ստանալու՝ ապրանքներ տեղափոխողի իրավունքը և նշված տեղեկությունների մասին վերջինիս գրավոր տեղեկացնելու մաքսային մարմինների պարտականությունը: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ապրանքի մաքսային արժեքի և դրա որոշման եղանակի մասին **տեղեկատվության տրամադրմանը**, որը որևէ կերպ չի կարող դիտվել որպես նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված մերժման եզրակացություն:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

**04.10.2013թ.**

**69. Արայիկ Բաբայան Վ. «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, վարչ. գործ թիվ ՎԳ/4590/05/10**

**Էջ  
532-539**

**Խնդիր.** Արդյո՞ք զինծառայողին կարող է նշանակվել երկարամյա ծառայության կենսաթոշակ, եթե նա սահմանված կարգով չի արձակվել ծառայությունից:

**Վճռարեկ դատարանի դիրքորոշումը.** 01.07.1998 թվականի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների և քննիչների թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայության անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով (ուժի մեջ է եղել մինչև 01.01.2008 թվականը):

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի համաձայն՝ զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 53.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի քննիչը (այսուհետ՝ քննիչ) պաշտպանության բնագավառի զինվորական ծառայող է:

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո (7-րդ հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին ՀՕ-248-Ն):

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության անցնելու դեպքում նույն օրենքով նշանակված կենսաթոշակների վճարումը դադարեցվում է ծառայության անցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից (7-րդ հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին ՀՕ-248-Ն):

Վկայակոչված իրավադրույթների վերլուծության հիման վրա Վճռարեկ դատարանը եզրահանգել է, որ դատախազության քննիչների թոշակավորումը, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելն իրականացվել է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով զինվորական ծառայողների համար սահմանված կարգով: Ընդ որում, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով վիճելի իրավահարաբերության ժամանակ սահմանված կարգով զինծառայողներին

երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվել և վճարվել է **զինվորական ծառայությունից** սահմանված կարգով արձակվելուց հետո: Միաժամանակ նշանակված կենսաթոշակների վճարման դադարեցումը պայմանավորվել է **զինվորական ծառայության անցնելու** հանգամանքով: Նույն օրենքով է կարգավորվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության քննիչների՝ որպես զինվորական ծառայողների թոշակավորման կարգը:

Սույն գործի փաստերի համաձայն ՀՀ գլխավոր դատախազի 13.10.1999 թվականի թիվ 510 հրամանով Արայիկ Բաբայանը նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնում, 27.11.2007 թվականին ազատվել է այդ պաշտոնից և 01.12.2007 թվականին ծառայության նշանակվել ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ: Ի պատասխան Արայիկ Բաբայանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումի՝ «Հիմնարկի ղեկավարն իր 09.12.2008 թվականի թիվ 28/257-08 գրությամբ պատասխանել է, որ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո, և քանի որ Արայիկ Բաբայանը շարունակում է ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարությունում, ապա առայժմ նրան կենսաթոշակ նշանակել հնարավոր չէ:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման համատեքստում անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Արայիկ Բաբայանին երկարամյա ծառայության կենսաթոշակ չէր կարող նշանակվել այն պատճառով, որ վերջինս ՀՀ գլխավոր դատախազի 27.11.2007 թվականի թիվ 697 հրամանով աշխատանքից ազատվելուց հետո նշանակվել է ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ քննիչի պաշտոնում, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով անցել է զինվորական ծառայության: Մինչդեռ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակ կարող էր նշանակվել միայն զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ նշված օրենքը նշանակված կենսաթոշակի վճարման դադարեցումը պայմանավորել է զինվորական ծառայության անցնելու փաստով:

## ՀՈՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### 04.10.2013թ.

70. Գևորգ Քիչոյան v. ՀՀ կառավարությանն առնթյալ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևան տարածքային ստորաբաժանում, վարչ. գործ թիվ ՎԳ/4566/05/11

Էջ  
540-546

**Խնդիր.** Այս դրոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա սեփականության իրավունքի պետական գրանցման առանձնահատկություններին՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում հողամասի ընդգրկված չլինելու պայմանի մասով:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վկայակոչելով «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ նշված իրավադրույթի հիմքով իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի ծագման համար պարտադիր նախապայմաններ են՝ օգտագործման կամ վարձակալության իրավունքի առկայությունը, ինչպես նաև հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի

**60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու փաստը:** Վերջինիս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադատնալ հետևյալ հարցադրումներին՝

ա) հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող սուբյեկտին,

բ) նշված տեղեկատվության բովանդակությանը,

գ) այդ տեղեկատվության առկայությանը՝ **որպես** «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա սեփականության իրավունքի պետական գրանցման հիմք:

ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 2093-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) և առաջարկել համայնքների ղեկավարներին մեկանսյա ժամկետում՝ շաբաթական պարբերականությամբ (տվյալ շաբաթվա ընթացքում ստուգված հողամասերի մասով), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ներկայացնել տեղեկատվություն նույն որոշման 2-րդ կետում նշված հողամասերը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում ընդգրկված լինելու կամ չլինելու մասին: Ընդ որում, համայնքների ղեկավարները նշված տեղեկատվությունն ուղարկում են համապատասխան մարզպետների միջոցով:

Նշված տեղեկատվությունը գործարք կնքելու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրվում է դիմումն ստանալու օրվան հաջորդող 2 օրվա ընթացքում, եթե դրա մասին տեղեկատվությունը դեռևս չի փոխանցվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

Վերոնշյալից հետևում է, որ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կարող է տրամադրվել համայնքի ղեկավարի (կամ վերջինիս աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման) կողմից: Նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր դեպքում պետք է բովանդակի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համապատասխան կետը, որին վերաբերում է սահմանափակումը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված տեղեկատվությունը բովանդակող փաստաթուղթը «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով սեփականության իրավունք ձեռք բերելիս պետք է դիտարկել որպես անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման նախադրյալը հաստատող փաստաթուղթ, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենքով սահմանված այլ փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է ներկայացվի սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմին, տվյալ պարագայում՝ Կադաստր:

# ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Գործերի ընդդատությունը

04.07.2013թ.

71. Արտաշես Արտաշեսյան v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, քաղ. գործ թիվ ՎԳ/2087/05/12

Էջ  
547-560

**Խնդիր.** Այս դրոշմամբ ՀՀ վճարելի դատարանն անդրադարձել է հանրային ծառայության ոլորտում վարչական և աշխատանքային օրենսդրության կիրառման և հանրային ծառայության հետ կապված վեճերի ընդդատության իրավական հարցերին:

**Վճարելի դատարանի դիրքորոշումը.** Վճարելի դատարանը նախ անդրադարձել է *հանրային ծառայության և աշխատանքային իրավահարաբերությունների սահմանադրաիրավական և միջազգային իրավական հիմքերին:* Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածը, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը՝ Վճարելի դատարանն արձանագրել է, որ նշված հոդվածները նախատեսում են քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման երեք նախապայման. ՀՀ քաղաքացիություն, ընդհանուր հիմունքներ և դրանց՝ օրենքով կանոնակարգվածություն: Հանրային ծառայության ընդունվելու իրավունքը ՀՀ քաղաքացու սահմանադրական հիմնական իրավունքներից է, որի իրացումն իրավական, ժողովրդավարական պետության պայմաններում ոչ միայն աշխատանքի ազատ ընտրության, այլև ժողովրդաիշխանության իրացման դրսևորում է: Այդ իրավունքը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության ուժով, որի իրացման կարգն ու պայմանները, ըստ 30.2-րդ հոդվածի 1-ին մասի, սահմանվում են օրենքով: Բացի հանրային ծառայության ընդունվելու իրավունքից, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է նաև անձի աշխատանքի ընտրության ազատություն:

ՀՀ Սահմանադրության 30.2-րդ և 32-րդ հոդվածների համադրումը և անձի երկու սահմանադրական իրավունքների հարաբերակցությունը հանգում է նրան, որ ՀՀ Սահմանադրությունը, անձին ընձեռելով աշխատանքի ընտրության ազատություն, որպես դրա յուրօրինակ դրսևորում նախատեսում է քաղաքացու հանրային ծառայության ընդունվելու իրավունքը: Հետևաբար Վճարելի դատարանը գտել է, որ հանրային ծառայության ընդունվելու իրավունքը պետք է դիտարկել նաև աշխատանքի ընտրության իրավունքի հետ համատեղ, քանի որ սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում պետական իշխանության համակարգում աշխատանքի իրավունքը՝ որպես աշխատանքի ընտրության ազատության դրսևորում, աստիճանաբար վերաճել է առանձին սահմանադրական իրավունքի՝ դրանից բխող օրենսդրական կարգավորման առանձնահատկություններով: Այն հանգամանքը, որ միջազգային և սահմանադրական իրավունքների զարգացման համատեքստում հանրային (պետական) ծառայությունը դիտարկվում է աշխատանքի իրավունքի շրջանակներում, դրսևորվում է նաև միջազգային իրավական այլ նորմերի, մասնավորապես՝ «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» 1978 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածի ուսումնասիրության արդյունքում:

---

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հանրային ծառայության ընդունվելու սահմանադրական իրավունքը, որը նախատեսվում է նաև միջազգային իրավունքի նորմերով, աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի դրսևորման եղանակներից մեկն է, որն ունի նաև որոշակի առանձնահատկություններ՝ կապված այդ իրավունքի միջոցով պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի (ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդված) և հանրային ծառայողների կողմից իրականացվող գործառույթների բնույթի հետ:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը պարզաբանել է **հանրային ծառայության ոլորտում աշխատանքային օրենսդրության կիրառման շրջանակները և բնույթը**: Մասնավորապես, վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 7-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ այդ իրավադրույթները, սահմանելով ՀՀ աշխատանքային օրենսդրության գործողության ոլորտները, դրա մեջ ներառել են նաև քաղաքացիական և պետական ծառայության հետ կապված իրավահարաբերությունները: Այսինքն՝ նշված ծառայությունների հետ կապված իրավահարաբերությունները դուրս չեն աշխատանքային օրենսդրության կարգավորման շրջանակներից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերի կիրառումը հանրային ծառայության նկատմամբ ամբողջական չէ, և հանրային ծառայությունը և դրա տեսակները կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված չիսելու դեպքերում կիրառվում են այդ իրավական ակտերով նախատեսված կանոնակարգումները: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հստակեցնել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի տրամաբանության լույսի ներքո աշխատանքային օրենսգրքի դրույթները հանրային ծառայության ոլորտում կիրառվում են ոչ թե սուբսիդիարության (լրացուցիչ) սկզբունքով, այլ հակառակը՝ դրանք օրենսգրքի 7-րդ հոդվածի ուժով ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման ոլորտում, և այդ հարցերի վերաբերյալ հանրային ծառայության օրենսդրության նորմերը պետք է կիրառվեն սուբսիդիարության (լրացուցիչ) կարգով՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտում դրանց միասնական և տարբերակված կարգավորման սկզբունքների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ օրենսդրական վերոնշյալ կանոնակարգումը չպետք է դիտարկվի և մեկնաբանվի որպես հանրային ծառայության հետ կապված բոլոր իրավահարաբերությունների ներառում հանրային իրավունքի կարգավորման ոլորտում, քանի որ գործող օրենսդրական կանոնակարգումների ընդհանուր տրամաբանության համատեքստում հանրային ծառայության հետ կապված իրավահարաբերություններն ունեն աշխատանքային բնույթ, սակայն հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները՝ օրենսդիրն այլ իրավական կարգավորումների նախատեսման հնարավորություն է ընձեռել: Այդ հանգամանքը պայմանավորված է մի կողմից հանրային ծառայության առանձնահատկություններով, հանրային ծառայության մեջ ներգրավված ծառայողների կարգավիճակի առանձնահատկություններով, մյուս կողմից դրա բազմաբնույթ և բազմաֆունկցիոնալ նշանակությամբ և հետևաբար՝ հանրային ծառայության տարբեր տեսակների գործառույթային առանձնահատկություններով, որոնք իրենց ազդեցությունն են ունենում նաև դրանց աշխատանքային իրավակարգավորման վրա: Արդյունքում գործող օրենսդրական գարգացումները նման իրավահարաբերությունները դարձրել են որոշակիորեն երկակի իրավակարգավորման ազդեցություն ունեցող օբյեկտ, և վերջինս կարելի է դիտարկել որպես աշխատանքային իրավունք հանրային իրավունքի ոլորտում:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումները հիմնավորվել են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի և հանրային ծառայության և դրա տեսակները կարգավորող օրենսդրության համակարգային ուսումնասիրությամբ:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 44-րդ հոդվածի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 12-րդ կետերի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 7-րդ կետերի, 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդ-



վածի 2-րդ մասի, 14-րդ հոդվածի 3.1-ին վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ իրավական կարգավորումներն աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված իրավունքների և կանոնակարգումների դրսևորումներ են հանրային ծառայության ոլորտում, քանի որ վերոնշյալ կանոններն առավել մանրամասն նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքում:

**Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հանրային ծառայողի գործունեության հետ կապված հարցերը, որոնք չեն բխում նրա վարչաիրավական կարգավիճակից, կրում են աշխատանքային բնույթ, իսկ դրանց իրավակարգավորման հիմքը ՀՀ աշխատանքային օրենսգիրքն է և հանրային ծառայության վերաբերյալ օրենքների համապատասխան դրույթները: Հետևաբար դրանք պետք է դիտարկվեն միասնության մեջ՝ որպես մեկ իրավակարգավորում:**

Վճռաբեկ դատարանը հանրային ծառայության ոլորտում վարչական օրենսդրության կիրառման շրջանակները հստակեցնելու համար անհրաժեշտ է համարել անդրադառնալ հանրային ծառայության բնույթին և նշանակությանը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային ծառայությունը սոցիալ-իրավական ինստիտուտ է, որն ուղղակիորեն կապված է Սահմանադրությանը և օրենքների համապատասխան պետության գործունեության ապահովման հետ: Այն նաև պետության (հանրային իշխանության մարմինների) և քաղաքացու միջև ծագող հանրային-իրավական բնույթի հասարակական հարաբերությունների (վարչակառավարչական գործընթացների) ամբողջություն է, որը միտված է օրենսդրությամբ նախանշված կարգով ու շրջանակներում պետության (հանրային իշխանության մարմինների) քաղաքականության իրականացմանը:

Այդ հանգամանքը հաստատվում է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով: Նշված հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հանրային ծառայությունը և հետևաբար հանրային ծառայողների գործունեությունն ունի նաև վարչաիրավական դրսևորումներ, քանի որ հանրային ծառայության (ծառայողների) միջոցով իրագործվում են պետության լիազորությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրները և գործառնությունները: Բացի այդ, պետական ծառայության տեսակ համարվող մաքսային ծառայությունը միասնական կենտրոնացված համակարգ է և հիմնվում է աստիճանակարգված ենթակայության սկզբունքի վրա: Այսինքն՝ հանրային (մաքսային) ծառայության իրականացման ժամանակ վարչաիրավական հարաբերությունները դրսևորվում են արտաքին, ներկազմակերպական, ենթակայական, ուղղահայաց և հորիզոնական իրավահարաբերությունների ձևով:

Հետևաբար հանրային ծառայության իրականացման ժամանակ կարող են կիրառվել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, քանի որ նշված օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները, իսկ օրենքի գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա:

Մյուս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային ծառայության ոլորտում գործերի քննության և կիրառման ենթակա իրավունքի նորմերի ընտրության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն վերոնշյալ վերլուծությունները և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հստակեցնեն հանրային ծառայության վարչաիրավական և աշխատանքային կողմերը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավոր-

---

վում են ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքով, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և հանրային ծառայության տեսակները կարգավորող այլ իրավական ակտերով:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, «Մարային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը հետևություն է արել առ այն, որ աշխատանքի (հանրային ծառայության) անցնելու կարգում օրենսդիրը դրել է ընդհանուր տրամաբանություն, որը նախատեսված է աշխատանքային օրենսդրությամբ: Դա մրցույթով կամ առանց մրցույթի աշխատանքի (ծառայության) ընդունելն է՝ համապատասխան պայմանագիր կնքելու եղանակով: Ընդ որում, մաքսային ծառայության անցնելիս կնքվում է մաքսային ծառայության անցնելու մասին պայմանագիր, որում նույնպես սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, որը բնորոշ է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրին:

Միաժամանակ անհրաժեշտ է համարել նշել, որ օրենսդիրը հանրային ծառայության անցնելու ընթացակարգն առավել մանրամասն կանոնակարգել է հանրային ծառայության վերաբերյալ օրենսդրությամբ՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածի պահանջների կատարումը: Հետևաբար, ի տարբերություն սովորական աշխատանքային հարաբերությունների, հանրային ծառայության անցնելու իրավահարաբերությունների դեպքում օրենսդիրն առավել մանրամասն է կարգավորել դրա ընթացակարգային հարցերը (հանրային ծառայության ընդունվելու իրավունք ունեցող անձանց ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման կարգը և այլն)՝ նախատեսելով այն ընդհանուր հիմունքները, որոնց միջոցով քաղաքացիներն իրավունք ունեն ընդունվելու հանրային ծառայության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հանրային ծառայության անցնելու հետ կապված իրավահարաբերությունները նույնպես կրում են աշխատանքային բնույթ՝ հանրային ծառայության ընդգրկվելու պայմանների առավել մանրամասն կանոնակարգմամբ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ հարցին պատասխանելուց հետո անհրաժեշտ է համարել անդրադառնալ հանրային ծառայության իրականացման իրավահարաբերությունների բնույթին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային ծառայության իրականացման հետ կապված իրավահարաբերությունները կարող են ունենալ ինչպես գուտ աշխատանքային, այնպես էլ վարչաիրավական բնույթ, քանի որ հանրային ծառայողը գործատուի (պետության) հետ կարող է իր կարգավիճակից ելնելով մտնել և աշխատանքային, և վարչական իրավահարաբերությունների մեջ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հանրային ծառայության իրականացման բնույթը դատարանները պետք է որոշեն կոնկրետ իրավիճակից ելնելով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյոք այդ իրավահարաբերությունները կապված են հանրային ծառայողի վարչական գործառնությունների, թե գուտ աշխատանքային գործառնությունների հետ: Ինչ վերաբերում է հանրային ծառայությունը դադարեցնելու հետ կապված իրավահարաբերությունների բնույթին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ **պետական կամ համայնքային ծառայության առանձնահատկություններից ելնելով**՝ հանրային ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատման հիմք է նաև նույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը: Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը, հանրային ծառայությունը դադարեցնելու (հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու) իրավահարաբերությունները դիտարկելով որպես աշխատանքային, այնուամենայնիվ, դրա համար նախատեսել է առանձնահատուկ հիմքեր, որոնք սահման

վում են հանրային ծառայության կոնկրետ տեսակների վերաբերյալ օրենքներով (մաքսային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը սահմանված են «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածում): Հետևաբար այդ իրավահարաբերությունները կրում են աշխատանքային (ծառայողական) բնույթ, սակայն դրանց առանձնահատկություններից ելնելով՝ հանրային ծառայությունը դադարեցնելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և հանրային ծառայության տեսակները կարգավորող այլ իրավական ակտերը:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են միայն քաղաքացիական գործերը (*լրես* «Օթյակ» ՓԲԸ-ն *ընդդեմ* «Երևանի կառուցասպասարան» ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ ԵԿԴ/2028/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 23-ի որոշումը)՝ Վճռաբեկ դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարել հավելել, որ օրենսդիրն աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտի վեճը դիտարկում է որպես քաղաքացիական գործ, որն ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը ենթադրում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են **պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում**՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (*լրես* ՀՀ գլխավոր դատախազությունն *ընդդեմ* Հայկ Սարգսյանի թիվ ԵԱԶԲ/1369/02/09 գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 03-ի որոշումը):

Զարգացնելով վերոնշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի տառացի մեկնաբանությունը հանգեցնում է նրան, որ հանրային ծառայության անցնելու և իրականացնելու հետ կապված վեճերը հանրային իրավահարաբերություններից ծագող գործեր են և ընդդատյա են ՀՀ վարչական դատարանին, իսկ հանրային ծառայությունը դադարեցնելու հետ կապված վեճերը չունեն հանրային իրավահարաբերություններից ծագող բնույթ և ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չեն: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, ելնելով այն տրամաբանությունից, որ հանրային ծառայության անցնելու և իրականացնելու գործընթացները զուգորդվում են վարչարարությամբ, և դրանց ընթացքում ընդունվում են վարչական ակտեր, չի կանոնակարգել հանրային ծառայությունը դադարեցնելու հետ կապված իրավահարաբերությունների բնույթը և ընդդատյան հարցերը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային ծառայության դադարեցումը ևս կարող է զուգորդվել վարչարարության իրականացմամբ և վարչական ակտի ընդունմամբ: Օրենսդրական նման անհստակության հետևանքով թյուրըմբռնումներից խուսափելու համար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանները վերոնշյալ հոդվածը մեկնաբանելիս պետք է հաշվի առնեն նաև հանրային ծառայության օրենսդրության համակարգային վերլուծությունը, ինչպես նաև դրա հարաբերակցությունն աշխատանքային օրենսդրության հետ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված ոչ բոլոր վեճերն են ընդդատյա ՀՀ վարչական դատարանին: Մասնավորապես, այն վեճերը, որոնք կրում են աշխատանքային բնույթ և ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում, ընդդատյա են ոչ թե ՀՀ վարչական դատարանին, այլ ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ յուրաքանչյուր գործով հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված վեճերի ընդդատության հարցը լուծելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերոնշյալ վերլուծությունները՝ իրավահարաբերության բնույթը պարզելու համար:

## Ապացույցներ և ապացուցում

**05.04.2013թ.**

72. Սեդա Առաքելյան v. Գյումրու քաղաքապետարան, վարչ. գործ թիվ ԷԶ 561-567  
ՎԳ-5/0018/05/12

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատարանի կողմից գործի փաստերն ի պաշտոնե պարզելու, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու լիազորության լիարժեք իրականացման, ինչպես նաև գործի իրական փաստերի բացահայտման գործընթացում վարչական-դատավարական օրենսգրքով դատարանին վերապահված լիազորություններն ակտիվորեն օգտագործելու հարցերին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 113-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Վճռաբեկ դատարանը վերահաստատել է նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությանը և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տե՛ս ՀՀ Կոստավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Զորջ ընդ Բրանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ և 36-րդ հոդվածներով սահմանված ապացույցը գնահատելու կամ փաստը հաստատելու համար փորձագետ նշանակելու հետ կապված դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանն իր այդ իրավունքն իրականացնելիս պարտավոր է ապահովել նույն օրենսգրքի 6-րդ և 24-րդ հոդվածներով ամրագրված գործի փաստերն ի պաշտոնե պարզելու և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու պարտականությունների լիարժեք իրականացումը, ինչպես նաև տվյալ գործի իրական փաստերի բացահայտման գործընթացում ակտիվորեն օգտագործի վարչական-դատավարական օրենսգրքով իրեն վերապահված իրավունքները, որպիսի գործընթացում, սակայն, դա-

տարանը պարտավոր է ելնել բացառապես անձին սահմանադրական նորմի ուժով երաշխավորված արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթի գերակայությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ անշարժ գույքի՝ տեղանքում որոշակի դիրք ունենալու, հողամասի կարգավիճակի և պատկանելիության վերաբերյալ փաստերը կարող են ապացուցվել որոշակի այնպիսի ապացույցներով, որոնցով հավաստվում է տվյալ շինության կարգավիճակը, հողամասի նկատմամբ առկա իրավունքները, սահմանափակումները, հողամասի չափսերը, այլ հողամասերի նկատմամբ ունեցած դիրքը: Այդպիսի ապացույցներ, հաշվի առնելով անշարժ գույքի հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները, կարող են լինել վարչական մարմինների կողմից ընդունված համապատասխան ակտերը, չափագրման արդյունքները, տեղագրական հանույթները և վերջիններիս հավասարագոր այլ ապացույցներ: Մինչդեռ, կողմերի ցուցմունքների հիման վրա ապացուցման առարկայում ընդգրկված նշված փաստերի հաստատումը դատական ակտին գրկում է հիմնավորված լինելուց, քանի որ այդ փաստերը հաստատված չեն որոշակի ապացույցներով:

**04.07.2013թ.**

**73. ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի Էջ Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչություն v. ԱԶ Արթուր Հովսեփյան, 568-575 վարչ. գործ թիվ ՎԳՅ/0011/05/10**

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ստորադաս դատարանում գործի նոր քննության ծավալի խնդրին:

\* Միաժամանակ վճռաբեկ դատարանն անդրադարձել է հսկիչ-դրամարկղային մեքենաների վերանորոգման փաստի հաստատման հարցին վիճելի հարաբերության առաջացման պահին գործող իրավակարգավորման համատեքստում:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, 23-րդ հոդվածի 1-ին մասի, 122-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ վարչական դատավարությունում գործի նոր քննության ծավալը պայմանավորված է վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով: Վերջիններս ընդգծում են այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է իրականացվի գործի քննությունը դատական ակտի բեկանումից հետո: Այդ դատողությունների և եզրահանգումների բնույթը չի կարող լինել սահմանափակված միայն դատավարական իրավունքի կամ միայն նյութական իրավունքի նորմերի կիրառման շրջանակով: Բողոքի ցանկացած հիմքի և դրանում ներառված ցանկացած փաստարկի վերաբերյալ դատարանի եզրահանգումները կարող են պայմանավորել գործի նոր քննության սահմանները: Այս առումով վճռաբեկ դատարանը չի արձանագրել որևէ առանձնահատկություն այն հարցի հետ կապված, թե արդյոք նույն կանոնն է գործում այն դեպքերում, երբ բողոքաբերը բարձրացրել է ապացույցի վերաբերելիության հարց: Եթե դատական ակտի բեկանումը վերադաս դատական ատյանն իրականացրել է այն հաշվով, որ նշված ապացույցը ներառվի գնահատման ենթակա մյուս ապացույցների կազմում, ապա գործի քննությունը պետք է իրականացվի այդ սահմաններում:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վերոնշյալ կառուցակարգի համատեքստում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասով դատարանի հայեցողական լիազորության սահմանումն այն հարցում, որ գործի նոր քննության ժամանակ դատարանը կարող է մատնանշել ապացուցման ենթակա նոր փաստ և պահանջել ներկայացնելու դրա հետ կապված նոր ապացույցներ: Նշված լիազորությունը չի կարող գործել ինքնուրույնաբար և ըստ էության կիրառելի է այն դեպքում, երբ այդ լիազորությամբ անհրաժեշտ է ապահովել գործի քննությունը վերադաս դատական ատյանի որոշմամբ նշված սահմաններում:

Հետևաբար, եթե վերադաս դատական ատյանում բարձրացված հարցի վերա-

բերյալ դատարանը եկել է որոշակի հետևության և դրանով պայմանավորել գործի նոր քննության ծավալը, ապա ստորագրեց դատական ատյանում գործի նոր քննությունը պետք է իրականացվի նույն ծավալի շրջանակներում (նույն սահմաններում):

Միաժամանակ վիճելի իրավահարաբերության ծագման (վիճելի ակտը կազմելու) պահին գործող խմբագրությամբ ՀՀ Կառավարության 26.08.2004 թվականի թիվ 1325-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման» կանոնների 13-րդ, 14-րդ կետերի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով դրանց գործարկման, տեխնիկական սպասարկման, ինչպես նաև նորոգման համար սահմանված էր հստակ ընթացակարգ: Մասնավորապես՝ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր էին վարել հսկիչ-դրամարկղային մեքենայի և դրա հանգույցների՝ բոլոր տեսակի խախտումների տեխնիկական սպասարկում, ինչպես նաև նորոգում՝ իրականացնող կենտրոնում կատարվող նորոգումների և իրենց մոտ կատարվող տեխնիկական սպասարկման մասին տվյալների գրանցման գիրք, որպիսի գիրքը կնքվում և համարակալվում էր հարկային տեսչության կողմից, ապա նաև իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր եռամսյակ այդ տվյալները պարտավոր էին նաև ներկայացնել հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման վայրի հարկային տեսչություն: Միաժամանակ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոններն իրենց կողմից կատարված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների գծով պարտավոր էին վարել հաշվառում, և յուրաքանչյուր սպասարկվող և նորոգվող հսկիչ-դրամարկղային մեքենայի նորոգման (տեխնիկական սպասարկման) աշխատանքների ավարտից անմիջապես հետո դրա գրանցման վայրի հարկային տեսչություն ներկայացնել տեղեկանք՝ կատարված սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

## 26.12.2013թ.

74. Լևոն Ղուչիկյան v. ՀՀ քաղաքաշինության նախարարություն, վարչ. գործ թիվ ՎԳ/1956/05/11

Էջ  
576-585

**Խնդիր.** Արդյո՞ք պայմանագրային կարգով բնակարանի ամրացման թերթիկի առկայությունը կարող է դիտվել որպես 1988 թվականի դեկտեմբերի 07-ի երկրաշարժի պահին բնակարան ունենալու փաստը հավաստող բավարար սպացույց:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանը, վերլուծելով ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության» կարգի (այսուհետ՝ Կարգ) ընդհանուր դրույթների 1-ին, 2-րդ, 6-րդ, 9.1-րդ և 11-րդ կետերը, արձանագրել է, որ Կարգով նախատեսված է բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային առաջնահերթության որոշման չափանիշները: Կարգով սահմանված է, որ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունքը ծագում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր մինչև երկրաշարժը՝ 07.12.1988 թվականը, ունեցել են բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է կամ ենթակա է քանդման՝ 15.12.2008 թվականի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն:

**Կարգի համապատասխան դրույթներով սահմանված է, որ բնակարանային**

պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիները դիմումներին կից պարտավոր են ներկայացնել 07.12.1988 թվականի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև բնակելի տուն ունենալու մասին ապացույցներ. քաղվածք՝ համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը: Նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում՝ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկելու համար համայնքի ղեկավարը հիմք է ընդունում տվյալ համայնքի ավագանու որոշումը՝ 07.12.1988 թվականի դրությամբ ընտանիքի կազմի և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին: Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիների դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձանց դիմումները, ովքեր չեն ներկայացրել Կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև 9.1-ին կետով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը: Այսինքն՝ Կարգի վերոնշյալ դրույթներին համապատասխան այն փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը:

Վերլուծելով նախկինում գործող ՀՀ բնակարանային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.07.1983 թվականին, ուժը կորցրել է 26.11.2005 թվականին) 49-րդ հոդվածը, ինչպես նաև՝ նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1965 թվականին, ուժը կորցրել է 01.01.1999 թվականին) 299-րդ հոդվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ բնակելի տարածությունը զբաղեցնելու միակ հիմքը հանդիսանում էր օրդերը: Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանից օգտվելն իրականացվում է բնակարանի վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում է վարձատուի և վարձակալ քաղաքացու միջև, որի անունով տրված է օրդերը: Օրդերը կարող է տրվել միմիայն ազատ, մեկուսացված բնակելի տարածության համար: Այսպիսով օրդերն իր էությունը հանդիսանում է իրավահաստատող փաստաթուղթ, համաձայն որի՝ իրականացվում է ազատ բնակելի տարածության բնակեցումը կոնկրետ անհատի և (կամ) նրա ընտանիքի անդամների կողմից, և որի հիման վրա անձի հետ, ում անունով տրվել է օրդերը, կնքվում է բնակելի տարածության վարձակալության պայմանագիր: Այսինքն՝ օրդերը փաստացի հավաստում է տվյալ բնակելի տարածության նկատմամբ քաղաքացու օգտագործման իրավունքի ծագման պահը:

## ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

### Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները

24.05.2013թ.

75. Սամվել Մելքոնյան v. ՀՀ կառավարություն, վարչ. գործ թիվ Էջ ԳԳ/1346/05/10 586-591

**Խնդիր.** Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է վիճարկվող վարչական ակտի՝ գործում բացակայության պայմաններում դրա իրավաչափության ստուգման իրավական խնդրին:

\* Միաժամանակ անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի որոշումների՝ ժամանակի ընթացքում գործողության խնդրի հարակեցմանը և վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի բողոք հիմքերին և դրանում ներառված փաստարկներին անդրադառնալու հարցին:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված վիճարկ-

ման հայցի առարկան է միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու կամ փոփոխելու պահանջը: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ տույն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը: Հետևաբար, առանց վիճարկվող ակտի հետազոտման ոչ միայն անհնարին է ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջի կատարումը, այլև հայցի նյութական օբյեկտի՝ վիճարկվող վարչական ակտի բացակայությունն ընդհանրապես բացառում է այդ ակտի իրավաչափությունը գործում առկա ապացույցների միջոցով գնահատելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառնությունից բխում է իրավունքի զարգացմանը նպաստելը, որն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում: Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունը ենթադրում է ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության հարցում միասնական դիրքորոշման ձևավորում՝ մասնավորապես, իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում, որն իրավաչափորեն կարող է հանգեցնել Վճռաբեկ դատարանի կողմից արդեն իսկ մեկնաբանված նորմի նոր մեկնաբանման: Նման իրավիճակներում կարևորվում է Վճռաբեկ դատարանի որոշման՝ որպես իրավական ակտի, ժամանակի ընթացքում գործողության, ինչպես նաև նախորդ որոշումներում արտահայտած դիրքորոշումների կիրառելիության հարցերի հստակեցումը:

Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունի նպատակից և բովանդակությունից տրամաբանորեն բխում է, որ իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար: Այսպես կիսաստագրվի իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունը:

Բնակարանի վարձակալ չհանդիսացող անձի՝ սեփականաշնորհման արդյունքում սեփականության իրավունք ձեռք բերելու իրավական խնդրին և դրա համար անհրաժեշտ վավերապայմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր նախկին որոշումներում: Մասնավորապես, թիվ ՎԴ/4729/05/08 վարչական գործով իր 30.04.2009 թվականի որոշման մեջ Վճռաբեկ դատարանն ամրագրել է. «Բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք 3 պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այն է՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, ինչպես նաև բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը»:

Հետագայում թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով իր 25.06.2010 թվականի որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, կաշկանդված չլինելով իր նախկին որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով և գործելով իրավունքի զարգացմանը նպաստելու իր գործառնությունի շրջանակներում, ամրագրել է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այդպիսիք են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը»: Իր այս դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը շարունակաբար վերահաստատել է թիվ ՎԴ/4925/05/09, թիվ ՎԴ-2/0127/05/10, թիվ ԵԱԲԴ/2487/02/10, թիվ ՎԴ/4957/05/09 գործերով կայացված որոշումներում՝ կատարելով հղում վերը հիշատակված թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով 25.06.2010 թվականի որոշմանը:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովող նշանակության որոշումների՝ ժամանակի մեջ գործողության խնդրի վերաբերյալ վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ելնելով իրավական որոշակիության



և կանխատեսելիության ապահովման անհրաժեշտությունից, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով դատարանների համար պարտադիր է ՎԳ/0476/05/08 վարչական գործով իր 25.06.2010 թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշտորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, որպիսիք են **Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը**:

Միաժամանակ վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ ի պաշտոնե (ex officio) նշված հիմքերի շրջանակներում իրականացնել քննություն, իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտել ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածի վերը նշված դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն գուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ: Այդուհանդերձ, հիշատակված դրույթների նման մեկնաբանումը չի նշանակում բողոքի յուրաքանչյուր հիմքում ներառված ցանկացած փաստարկի գնահատում և վերլուծում: Բողոքը քննող դատարանը բողոքի հիմքերում ներառված փաստարկներին պետք է անդրադառնա այն հաշվով, որ նախ դրանք լինեն վերաբերելի բողոքի հիմքերին, և այդ փաստարկներն ունենան ազդեցություն բողոքի հիմքը կամ հիմքերը հիմնավորված համարելու տեսակյունից:

## ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

24.05.2013թ.

76. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժին v. Անուշ Իսայիրյան, վարչ. գործ թիվ ՎԳ-6/0076/05/12

Էջ  
593-602

**Խնդիր.** Արդյո՞ք երեխայի քնած լինելու հետևանքով տեսակցությունը ուշ սկսելու կամ տեղի չունենալու դեպքում պարտապահի գործողություններում առկա է երեխայի տեսակցության կարգ սահմանող օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու դիտավորություն:

**Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 22-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բողոքի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Ընդ որում, հարկադիր կատարողը կրում է իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ և ժամանակին կատարելու պարտավորություն: Այսինքն՝

նշվածից հետևում է, որ դատական ակտի հարկադիր կատարման ժամանակ թե՛ հարկադիր կատարողը, և թե՛ կատարողական վարույթի մասնակիցներն իրավասու չեն միմյանց ներկայացնելու այնպիսի պահանջներ, որոնք նախատեսված չեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթում: Հակառակ դեպքում նման գործողությունները կհանգեցնեն կատարողական թերթի պահանջների կատարման եղանակի կամ կարգի փոփոխման: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը նախատեսել է դատական ակտի կատարումը հետաձգելու, տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու հնարավորություն: Այն նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարաժամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը: Այսինքն՝ դատական ակտի կատարումը հետաձգելու, տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու իրավունքը վերապահված է կատարողական թերթ տված դատարանին և, քանի դեռ առկա չէ դատական ակտի կատարումը հետաձգելու, տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու մասին դատարանի համապատասխան որոշում, թե՛ հարկադիր կատարողը, և թե՛ կատարողական վարույթի մասնակիցները պարտավոր են իրականացնելու միայն այնպիսի գործողություններ, որոնք բխում են կատարողական թերթի պահանջներից:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթը համապարտադիր ուժ է տալիս օրինական ուժ ստացած բոլոր ակտերին՝ նշելով սուբյեկտների այն շրջանակը, ում վրա տարածվում է օրինական ուժ ստացած դատական ակտի գործողությունը, ինչպես նաև այն տարածքը, որտեղ պարտադիր կատարման է ենթակա օրինական ուժ ստացած դատական ակտը: Սուբյեկտների նկատմամբ դատական ակտերի պարտադիրության աստիճանի առումով հարկ է ընդգծել, որ այն առաջնային նշանակություն ունի վիճելի հարաբերության կողմերի համար, քանի որ դատական ակտով նախ և առաջ վեճի կողմերի համար են սահմանվում որոշակի գործողություններ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու պարտադիր պահանջներ:

Նշված պահանջների կատարման բացակայության փաստը պահանջատեր հանդիսացող կողմին հնարավորություն է տալիս հարկադիր կատարման միջոցով հասնել իր պահանջի փաստացի բավարարմանը կամ, որ նույնն է՝ պարտադրել մյուս կողմին կատարելու օրինական ուժ ստացած դատական ակտի պահանջները: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և սպահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ամրագրած հետևյալ իրավական դիրքորոշումը. «6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնար երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնային անկատար: Դժվար կլինեք պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով» (տե՛ս ի թիվս այլոց, Հորնսթին ընդդեմ Հունաստանի, թիվ 18357/91 գանգատով ՄԻԵԴ 1997 թվականի մարտի 19-ի վճիռ, կետ 40):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ հնարավոր են իրավիճակներ, երբ նույնիսկ հարկադիր կատարման փուլում գտնվող դատական ակտի կատարումը փաստացի տեղի չու-

նենա պարտապանի գործողությունների կամ անգործության հետևանքով: Ման պարագայում վրա է հասնում վարչաիրավական պատասխանատվությունը: Մասնավորապես, դատական ակտերի կատարման ապահովմանն է ուղղված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված նորմը: Վերջինս իրավական երաշխիք է ստեղծում դատական ակտերի կատարման, հետևաբար նաև արդար դատաբանության իրավունքի արդյունավետ իրացման համար:

Հիշատակված հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (քացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելի առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկից հարյուրապատիկի չափով:

Վճռաբեկ դատարանը, իրավակիրառ պրակտիկայում միասնական մեկնաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված, հարկ է համարում նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով ամրագրված գանցակազմի կիրառելիությունը պայմանավորված է դատական ակտի հարկադիր կատարման վարույթի հարուցված լինելով: Ման դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), իսկ վարչական դատարանի իրավասությանը վերապահված հարցերով (...) նույն օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճիռի, վճիռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմինը (պաշտոնատար անձը):

Նշված իրավակարգավորումը համադրելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված դրույթի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ քանի դեռ չկա հարուցված կատարողական վարույթ, չի կարող գործել դատական ակտի հարկադիր կատարման մեխանիզմը, ուստի հարկադիր կատարողի մոտ չեն կարող առաջանալ լիազորություններ դատական ակտի կատարմանը դիտավորությամբ խոչընդոտելու դեպքում ներգործության միջոցներ կիրառելու համար: Այլ կերպ՝ քանի դեռ չկա հարուցված կատարողական վարույթ, պարտապանը չի կարող ենթարկվել պատասխանատվության: Հետևաբար հիշատակված գանցակազմում նախատեսված ժամկետների հաշվարկը ևս պետք է կատարվի կատարողական վարույթի հարուցումից հետո:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված գանցանքն օբյեկտիվ կողմից դրսևորվում է օրինական ուժի մեջ մտած գանցացած դատական ակտի պահանջները չկատարելու (գործողությամբ կամ անգործությամբ) ձևով: Սուբյեկտիվ կողմից նշված գանցանքը կարող է դրսևորվել միայն դիտավորությամբ: Այլ կերպ՝ պարտապանը, ում համար պարտադիր է դատական ակտի կատարումը վերը նշված ժամկետներում, այդ ժամկետների ընթացքում չի կատարում դատական ակտի պահանջները, գիտակցաբար ցուցաբերում է այնպիսի հակաիրավական վարքագիծ, որով ցանկանում է դատական ակտի կատարման խոչընդոտում և գիտակցում կամ գիտակցաբար թույլ է տալիս, որ իր գործողությունները կամ անգործությունը հանգեցնեն նման հետևանքի առաջացմանը: Նշված մեկնաբանությունը բխում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի կանոնակարգումներից: Նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

---

Նշված իրավադրույթները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված գանգանքի վերաբերյալ արտահայտված դիրքորոշման հետ համադրելու արդյունքում Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձին վարչական պատասխանատվության ենթարկող մարմինը, նախ պետք է հիմնավորի անձի արարքում իրավախախտման առկայությունը, ինչը ենթադրում է ինչպես օբյեկտիվ կողմի, այնպես էլ սուբյեկտիվ կողմի բացահայտումը և ապա քննարկման առարկա դարձնի կատարված իրավախախտման բնույթի, խախտողի անձի, նրա մեղքի աստիճանի, գույքային դրության հետ կապված հարցերը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները և դրանց հաշվառմամբ նշանակի տույժ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0084/02/12  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0084/02/12

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

Դատավորներ՝ Ս. Սահակյան

Տ. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի  
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2012 թվակա-  
նի որոշման դեմ՝ ըստ հայցի Գայանե Խաչատրյանի, Նորայր Սարգսյանի ընդդեմ  
Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի, Գայանե Առաքելյանի՝ ձեռքբերման  
վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման և անհիմն հարստացման  
հետևանքով գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գայանե Խաչատրյանն ու Նորայր Սարգսյանը պահանջել  
են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց սեփականության իրավունքը ՀՀ  
Արագածոտնի մարզի Ափնա համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 02-023-  
0003-0016 ծածկագիրը կող անշարժ գույքի նկատմամբ և պատասխանողներին պարտա-  
վորեցնել վերադարձնելու անհիմն հարստացման առարկա գույքը:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ.  
Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.04.2012 թվականի վճռով Գայանե Խաչատրյանի  
և Նորայր Սարգսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն՝ ձեռքբերման վաղեմության  
ուժով ճանաչվել է Գայանե Խաչատրյանի ու Նորայր Սարգսյանի սեփականության

---

իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի, 97,77 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ գործի վարույթն անհիմն հարստացման հետևանքով գույքը վերադարձնել պարտավորեցնելու պահանջի մասով կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.06.2012 թվականի որոշմամբ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի, Գայանե Առաքելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 05.04.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճարեկ բողոք են ներկայացրել Գայանե Խաչատրյանն ու Նորայր Սարգսյանը:

Վճարեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գայանե Առաքելյանը:

## **2. Վճարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 187-րդ, 280-րդ հոդվածները և խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես անհիմն են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի որոշումն անօրինական է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 02-023-0003-0016 ծածկագիրը կրող անշարժ գույքը 1989 թվականից ամբողջությամբ օգտագործվում և տիրապետվում է Գայանե Խաչատրյանի ու Նորայր Սարգսյանի կողմից, որը վերջիններս ցանկապատով առանձնացրել են այլ անձանց պատկանող հողամասերից, տիրապետել և օգտագործել են որպես սեփական գույք:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը ներկայացված ապացույցներն օբյեկտիվորեն գնահատելու արդյունքում հաստատված է համարել այն փաստը, որ վիճելի գույքը հայցվորների կողմից 10 տարի բարեխղճորեն, բացահայտ, անընդմեջ տիրապետվել է որպես սեփական գույք, ինչի ուժով դրա նկատմամբ ձեռք են բերել սեփականության իրավունք: Դատարանն արձանագրել է նաև այն փաստը, որ հայցվորների կողմից վեճի առարկա գույքի փաստացի տիրապետումը դադարեցնելու վերաբերյալ որևէ պահանջ չներկայացնելով՝ ինչպես հանգուցյալ Թոռնիկ Առաքելյանը, այնպես էլ Բուրաստան Դավթյանը, Գևորգ Առաքելյանը, Գայանե Առաքելյանն իրենց գործողություններով ըստ էության հրաժարվել են հիշյալ գույքից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ գործում առկա նյութերով ապացուցվում է նաև վեճի առարկա շինությունը Գայանե Խաչատրյանի ու Նորայր Սարգսյանի կողմից կառուցվելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 05.04.2012 թվականի վճիռն:

### **2.1 Վճարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Գայանե Խաչատրյանն ու Նորայր Սարգսյանը որևէ կերպ չեն ապացուցել իրենց կողմից վիճելի գույքը բարեխղճ տիրապետելու փաստը: Ըստ հայցվորների՝ գույքը ձեռք են բերել առուվաճառքի միջոցով, սակայն դրա վերաբերյալ որևէ ապացույց չեն ներկայացրել:

Գայանե Իսաչատրյանն ու Նորայր Սարգսյանը որևէ կերպ չեն ապացուցել նաև, որ գույքը տիրապետում են 10 տարի անընդմեջ, քանի որ բնակվելով Երևանում, չէին կարող գույքը փաստացի անընդմեջ տիրապետել: Ավելին, պատասխանողների կողմից վկայակոչված փաստերն ապացուցեցին, որ վիճելի գույքը փաստացի տիրապետել է Բուրաստան Առաքելյանը: Դատարանում չի ապացուցվել նաև այն հանգամանքը, որ Թոռնիկ Առաքելյանը հրաժարվել է վիճելի գույքից: Ընդհակառակը, պատասխանողների կողմից ապացուցվել է, որ Թոռնիկ Առաքելյանը ոչ միայն չի հրաժարվել իր գույքից, այլ կատարել է գույքի հետ կապված մի շարք ներդրումներ:

### **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Գայանե Իսաչատրյանն ու Նորայր Սարգսյանը ամուսիններ են (հատոր 1-ին, գ.թ. 12):

2) Համաձայն սույն գործով հարցաքննված վկաներ Վարազդատ Ամիրյանի, Մինաս Քամալյանի, Մհեր Եսգիբարյանի, Հրայր Կարապետյանի, Վազգեն Սարգսյանի ցուցմունքների և Ջավահիր Խոտոյանի գրավոր հայտարարության՝ վիճելի հողամասի վրա առկա շինությունը 1989 թվականից կառուցվել է Գայանե Իսաչատրյանի ու Նորայր Սարգսյանի կողմից վերջիններիս միջոցներով, հողամասը ցանկապատվել է հայցվորների կողմից, իսկ Հրայր Կարապետյանը մասնավորապես նշել է, որ անձամբ է մասնակցել վեճի առարկա շինության կառուցման աշխատանքներին: Քանի որ Գայանե Իսաչատրյանն ու Նորայր Սարգսյանը Երևանում էին ապրում, նրանց բացակայության ժամանակ Ջավահիր Խոտոյանը և վերջինիս հանգուցյալ ամուսինն են հետևել հողամասին և ուշադիր եղել, որ շինանյութ չգողանան, անատուններ չմտցնեն ցանկապատից ներս, չվնասեն տարածքը և այլն (հատոր 1-ին, գ.թ. 17, 85):

3) 1991 թվականի ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով վիճելի հողամասի նկատմամբ ծագել է Թոռնիկ Առաքելյանի սեփականության իրավունքը:

4) 15.06.2011 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա համայնքի 1-ին փողոցի թիվ 12 հասցեում գտնվող 02-023-0003-0016 ծածկագիրը կրող 0,207 հա հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ գրանցվել է 20.05.2002 թվականին մահացած Թոռնիկ Առաքելյանի ժառանգներ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի, Գայանե Առաքելյանի սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրին 1/3 մասով (հատոր 1-ին, գ.թ. 54-58):

### **4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Սույն բողոքի շրջանակներում Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ բարեխղճության պայմանի դրսևորման առանձնահատկություններին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն պատկանող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին գրավոր հայտարարելով կամ **այնպիսի գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք պահպանելու մտադրության:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն

---

այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է մի շարք վավերապայմանների **միաժամանակյա** առկայությունը: Մասնավորապես դրանք են՝

1. Տիրապետումը պետք է լինի բարեխիղճ: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքը անձի փաստացի տիրապետմանը անցնելիս: Գույքն անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի հիման վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն:

2. Փաստացի տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես սեփականը, այսինքն՝ գույքը փաստացի տիրապետողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, ինչպես իր սեփական գույքի դեպքում: Անձը պետք է գույքը տիրապետի ինչպես սեփականը նաև երրորդ անձանց հետ հարաբերություններում:

3. Տիրապետումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում գույքի տիրապետումը չպետք է ընդհատվի: Տիրապետումը կարող է ընդհատվել կամ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից (գույքը դուրս է գալիս նրա տիրապետումից), կամ գույքի սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողություններով, որոնք ուղղված են գույքը վերադարձնելուն:

4. Տիրապետումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով (*տես Վոլոդյա և Միշա Նիկոլոյաններն ընդդեմ Մանվել Սարիբեկյանի մյուսների թիվ 3-1435/ՎԴ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ պայմաններից բարեխղճության պայմանի գնահատման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման իրավահարաբերություններում առավել կարևորվում է ինչպես անշարժ գույքի փաստացի տիրապետողի վերաբերմունքը տիրապետվող գույքի նկատմամբ, այնպես էլ գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ:

Ըստ էության օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ **գույքը որպես սեփական տիրապետելու բարեղճության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավագործության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման**



**վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում որևէ սուբյեկտի համար:** Նման մեկնաբանությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ կետի բովանդակությունից:

Անշարժ գույքի գրանցված սեփականության իրավունք ունեցող անձի վարքագիծը և վերաբերմունքն առանց օրենքի և պայմանագրի հիման վրա գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման նկատմամբ էական է դառնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի բովանդակության առումով գնահատական տալու համար, քանի որ հիշատակված հոդվածը որպես սեփականությունից հրաժարվելու հիմք կարևորում է ոչ միայն գրավոր փաստաթղթի առկայությունը, այլ նաև սեփականատիրոջ գործողությունները (անգործությունը):

Անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ժամկետի ընթացքում՝ մինչև գույքի փաստացի տիրապետողի կողմից ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնելը: Այս առումով պետք է նշել, որ ժառանգման կարգով իրականացված իրավահաջորդության դեպքում գույքի նկատմամբ ժառանգների սեփականության իրավունքի ծագումը ինքնըստինքյան չի վերացնում անշարժ գույքի փաստացի տիրապետողի մոտ առկա տիրապետման բարեխղճությունը:

Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ծագման համար գույքն այլ անձի անցնելու ձևերը, որոնք էլ պայմանավորում են ձեռք բերողի մոտ բարեխղճության առկայությունը կամ բացակայությունը, տարբեր են: Ինչպես կամահայտության գրավոր կամ բանավոր ձևերը, այնպես էլ անձի գործողությունները և հավասարապես անգործությունը կարող են վկայել տիրապետման բարեխղճության մասին:

Բարեխղճության ծագումը, ինչպես և մյուս պայմանները կարևորվում են գույքի փաստացի տիրապետման անցնելու պահին: Այդուհանդերձ, առանձին դեպքերում բարեխղճությունը ժամանակագրական առումով կարող է չհամընկնել գույքի փաստացի տիրապետման անցնելու պահի հետ: Այլ կերպ՝ գույքը փաստացի տիրապետման անցնելու պահին այն ձեռք բերողի մոտ կարող է բացակայել բարեխղճությունը և ծագել ավելի ուշ: Նման դեպքերում ինքնին չպետք է բացառել ձեռքբերման վաղեմության առկայությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքերում տասը տարվա ժամկետի հաշվարկի հոսքը սկսվում է ոչ թե գույքի փաստացի տիրապետման անցնելու պահից, այլ տիրապետման ընթացքում բարեխիղճ դառնալու պահից: Վերջինս էլ ըստ էության նշանակում է, որ գույքն այդ պահից է անցել անձի տիրապետմանը և անցման պահին անձը եղել է բարեխիղճ:

Սույն գործով Դատարանը, հիմք ընդունելով գործով վկաների ցուցմունքները և հայցը մասնակիորեն բավարարելով, հաստատված է համարել այն հանգամանքը, որ Գայանե Խաչատրյանն ու Նորայր Սարգսյանը 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփական գույք տիրապետել են վիճելի անշարժ գույքը:

Վերաքննիչ դատարանը դատական ակտը բեկանելու և հայցը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Գայանե Խաչատրյանի ու Նորայր Սարգսյանի կողմից չի ներկայացվել վիճելի հողամասի ձեռքբերման և դրա դիմաց վճարում կատարված լինելու, ինչպես նաև հողամասի վրա գտնվող շինությունը սեփական միջոցներով կառուցելու վերաբերյալ որևէ ապացույց:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով ստորադաս դատական ասյանների դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա փաստերով հաստատվում է հայցվորների՝ վիճելի հասցեում իրենց զբաղեցրած

---

մասը բարեխղճորեն, բացահայտ և 10 տարուց ավելի անընդմեջ որպես սեփականը տիրապետելու և օգտագործելու փաստը: Մասնավորապես՝ վկաներ Վարազդատ Ամիրյանի, Մինաս Քամալյանի, Մհեր Ենգիբարյանի, Հրայր Կարապետյանի, Վազգեն Սարգսյանի ցուցմունքները, ինչպես նաև Ջավահիր Խուրդյանի գրավոր հայտարարությունը վկայում են այն մասին, որ Գայանե Խաչատրյանն ու Նորայր Սարգսյանը վեճի առարկա հողամասը սկսել են փաստացի տիրապետել 1988 թվականից, իսկ 1989-1991 թվականին այդ նույն հողամասի վրա սկսել են բնակելի տան շինարարական աշխատանքները: Նշված շինարարական աշխատանքները հայցվորների կողմից սկսելը, հողամասը ցանկապատելն ու այն հարևան հողամասերից առանձնացնելը և մյուս կողմից Թոռնիկ Առաքելյանի կողմից, ում անունով ի սկզբանե հողամասը հատկացվել էր և ումից ձեռք էին բերել հայցվորները, առարկություն, անհամաձայնություն, հողամասը հայցվորների տիրապետությունից հետ վերադարձնելուն կամ շինարարական աշխատանքները դադարեցնելուն ուղղված որևէ պահանջ չներկայացնելն ինքնին վկայում է այն մասին, որ հիշյալ հողամասը հայցվորների փաստացի տիրապետմանն է անցել Թոռնիկ Առաքելյանի կամքին ոչ հակառակ: Ավելին, նշված վարքագիծը Թոռնիկ Առաքելյանի, այնուհետև պատասխանողների կողմից շարունակվել է մինչև 2011 թվականը, երբ արդեն լրացել էր ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ տասը տարվա ժամկետը:

Ինչ վերաբերում է վճարեկ բողոքի պատասխանում տեղ գտած այն փաստարկին, որ հայցվորները, բնակվելով Երևանում, չէին կարող գույքը փաստացի անընդմեջ տիրապետել, ապա այն հերքվում է *Սամվել Մարդոյանը և այլոք ընդդեմ Գրեգուս Հարությունյանի գործով* Վճարեկ դատարանի արտահայտած դիրքորոշմամբ առ այն, որ բնակելի տան տիրապետումը կարող է դրսևորվել ոչ միայն այնտեղ փաստացի բնակվելով, այլև դրա կառավարմանն ուղղված այնպիսի գործողություններ կատարելով, ինչպիսիք են գույքի պահպանմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը, գույքի պահպանման ծախսերը հոգալը, ինչպես նաև այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պահպանելը, որոնք ակնհայտորեն վկայում են գույքը որպես իր սեփականն ընդունելու հանգամանքը (*տես՝ Սամվել Մարդոյանը և այլոք ընդդեմ Գրեգուս Հարությունյանի թիվ ԵԱԶԴ/1272/02/08 քաղաքացիական գործով Վճարեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը*):

Նշվածից բխում է, որ ամենևին պարտադիր չէ բնակվել վիճելի հասցեում կամ համապատասխան համայնքում, որպեսզի ապահովվի գույքի տիրապետման անընդմեջությունը, այլ այդ պայմանի առկայությունը կարող է դրսևորվել տիրապետողի կողմից գույքի կառավարմանն ուղղված գործողություններ կատարելով:

Վերոգրյալ փաստերի գնահատումը, սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ, Վճարեկ դատարանին հիմք են տալիս եզրահանգելու, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ Դատարանի վճիռը հիմնավոր է:

Այսպիսով, վճարեկ բողոքի հիմքի առկայությունը Վճարեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճարեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճռին:

2. Բուրաստան Դավթյանից, Գևորգ Առաքելյանից, Գայանե Առաքելյանից համապարտության կարգով հոգուտ Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1661/02/09  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1661/02/09  
Նախագահող դատավոր՝ Տ. Սահակյան  
Դատավորներ՝

Կ. Հակոբյան  
Տ. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Աղաջան և Հնազանդ Ավագյանների վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նելլի Հարությունյանի ընդդեմ Աղաջան և Հնազանդ Ավագյանների՝ անշարժ գույքում ունեցած բաժնեմասի առանձնացման կամ դրա անհնարիության դեպքում՝ համապատասխան փոխհատուցման դիմաց սեփականության իրավունքի փոխանցման պահանջների մասին, ըստ հայցի Աղաջան և Հնազանդ Ավագյանների ընդդեմ Նելլի Հարությունյանի և երրորդ անձինք Հարություն Յանդյանի և Ասահիտ Պողոսյանի՝ ավտոմեքենայի արժեքի 1/6-րդ մասի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի 1/6-րդ մասի արժեքը վերադարձնելու, տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, գործարքի անվավերության հետևանքները կիրառելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Նելլի Հարությունյանի ընդդեմ Աղաջան և Հնազանդ Ավագյանների՝ ժառանգական գույքի հաշվին ժառանգության հետ կապված ծախսերի հատուցման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Նելլի Հարությունյանը պահանջել է առանձնացնել ընդհանուր բաժնային սեփականությունից Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 տան և հողամասի իրեն պատկանող 5/6-րդ բաժնեմասը, իսկ դրա անհնարիության դեպքում թույլատրել Աղաջան և Հնազանդ Ավագյաններին վճարելու փոխհատուցում վիճելի տան և հողամասի

1/6-րդ բաժնի դիմաց (թիվ ԵԷԴ/1661/02/09):

Դիմելով դատարան՝ Աղաջան և Հնազանդ Ավագյանները պահանջել են Նելլի Հարությունյանից բռնագանձել ավտոմեքենաների 1/6-րդ բաժնեմասերի գումարը, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, ինչպես նաև պարտավորեցնել Նելլի Հարությունյանին վերադարձնել «ԳԱՁ-3110» մակնիշի 63 LU 033 համարանիշի ավտոմեքենան:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Նելլի Հարությունյանը պահանջել է Աղաջան և Հնազանդ Ավագյաններից բռնագանձել 1.730 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես կատարված հողարկավորության ծախսերի հատուցում, ինչպես նաև 516.000 ՀՀ դրամ՝ որպես կոմունալ ծառայությունների դիմաց կատարված վճարումների գումար՝ բռնագանձումը տարածելով «ԳԱՁ-21» մակնիշի 63 SO 367 համարանիշի ավտոմեքենայում Աղաջան և Հնազանդ Ավագյաններին ժառանգության իրավունքով պատկանող 1/6-րդ բաժնեմասի և այլ գույքի վրա (թիվ ԵԷԴ/0974/02/10):

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.06.2011 թվականի որոշմամբ թիվ ԵԷԴ/0974/02/10 քաղաքացիական գործը միացվել է թիվ ԵԷԴ/1661/02/09 քաղաքացիական գործին:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Վ. Ալախյան) (այսուհետ՝ Դատարան) 22.11.2012 թվականի վճռով Նելլի Հարությունյանի հայցը բավարարվել է: Թույլատրվել է Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեի անշարժ գույքի 5/6-րդ բաժնի սեփականատեր Նելլի Հարությունյանին որպես փոխհատուցում 6.830.000 ՀՀ դրամ վճարել նույն հասցեի անշարժ գույքի 1/6-րդ բաժնի սեփականատերեր Աղաջան և Հնազանդ Ավագյաններին: Աղաջան և Հնազանդ Ավագյաններից համապարտության կարգով հոգուտ հայցվոր Նելլի Հարությունյանի բռնագանձվել է 2.100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ժառանգատու Սահակ Ավագյանի պատշաճ հողարկավորության և գերեզմանի կառուցման համար կատարված ծախսի հատուցում, և 382.854 ՀՀ դրամ՝ որպես Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեի տան համար Նելլի Հարությունյանի կողմից կատարված կոմունալ ծախսերի հատուցում՝ բռնագանձումը տարածելով պատասխանողների տիրապետման տակ գտնվող «ԳԱՁ-21» մակնիշի 63 SO 367 համարանիշի ավտոմեքենայից պատասխանողներին որպես ժառանգական գույքի հասանելիք 1/6-րդ բաժնեմասի նկատմամբ: Աղաջան և Հնազանդ Ավագյանները ճանաչվել են «Մերսեդես-Բենց C 200» մակնիշի 03 LU 794 համարանիշի և «ԳԱՁ-3110» մակնիշի 63 LU 033 համարանիշի ավտոմեքենաների 1/6-րդ բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգներ: Նելլի Հարությունյանից հոգուտ Աղաջան և Հնազանդ Ավագյանների բռնագանձվել է 750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես «Մերսեդես-Բենց C 200» մակնիշի 03 LU 794 համարանիշի ավտոմեքենայի վաճառքից ստացած գումարի 1/6-րդ մասի գումար, և 133.300 ՀՀ դրամ՝ որպես «ԳԱՁ-3110» մակնիշի 63 LU 033 համարանիշի ավտոմեքենայի վաճառքից ստացած 1/6-րդ մասի գումար: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.02.2013 թվականի որոշմամբ Նելլի Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, իսկ Աղաջան և Հնազանդ Ավագյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն: Մասնակի՝ Աղաջան և Հնազանդ Ավագյանների հայցի և Նելլի Հարությունյանի հակընդդեմ հայցի մասերով բեկանվել է Դատարանի 22.11.2012 թվականին կայացրած վճիռը, և գործն այդ մասերով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Վճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

---

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Աղաջան և Հնագանդ Ավագյանները: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի պահանջները, խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ, 92-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 163-րդ, 192-րդ, 195-րդ, 198-րդ, 331-րդ, 333-րդ, 335-րդ, 411-րդ, 1186-րդ, 1242-1244-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 219-րդ, 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի որոշմամբ թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Գործում գտնվող ապացույցները լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ չեն հետազոտվել, չեն գնահատվել ըստ էության:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառելու համար անհրաժեշտ է մի շարք նախապայմանների պարտադիր և միաժամանակյա առկայությունը, որոնք տվյալ պարագայում բացակայում են: Վիճելի հասցեում իրենց բաժինն աննշան չէ, կարող է իրապես առանձնացվել, և ընդհանուր գույքի օգտագործման մեջ իրենք էական շահ ունեն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «Կառուցագետ» ՍՊԸ-ի կողմից դեռևս 12.03.2010 թվականին տրված եզրակացությամբ առաջարկվել է Երևանի Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեի անշարժ գույքի՝ բնակելի տան և հողամասի 1 և 5 մասերի բաժանման երկու տարբերակ:

Բացի այն, որ վիճելի հասցեի անշարժ գույքը, որը սեփական տուն է՝ երկու կողմից հողամասերով, երեք մուտքերով, երեք սանհանգույցներով, առանձնացվում է անհրաժեշտ մասերի: Ըստ անշարժ գույքի սեփականության վկայականի՝ հողամասը կարելի է առանձնացնել 52,5քմ (315:6), իսկ բնակելի տնից՝ 35,07քմ (210.4:6), և այդ 35քմ իրենից ներկայացնում է երկու սենյակ առաջին հարկում, որտեղ իրենք փաստացի ապրում են: Ընդհանուր գույքի օգտագործման մեջ իրենք էական շահ ունեն, այն իրենց և իրենց որդու կառուցած տունն է, իրենց հանգուցյալ որդու հետ կապված հիշողություններն իրենց թույլ չեն տալիս նույնիսկ մեկ օրով բացակայել տնից: Ուրիշ բնակվելու տեղ չունեն: Իսկ ինչ վերաբերում է Նելլի Հարությունյանի կողմից նշված Երևանի Երևանի Նոր Արեշ 15 փողոցի թիվ 42 տանը, ապա այն իրենց դստեր ու իր ընտանիքի տունն է, որի մասին Նելլի Հարությունյանը քաջատեղյակ է, և որի մասին իրենք բազմիցս հայտարարել են:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ իրենց հայցի մասով ներկայացված հիմքերին չի անդրադարձել: Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի իրենց հասանելիք 1/6-րդ մասի արժեքը պետք է հաշվարկվեր ոչ թե այդ ավտոմեքենայի վաճառքի գինը՝ 4.500 ԱՄՆ դոլար, այլ ի սկզբանե ձեռք բերված գնով՝ 7.500 ԱՄՆ դոլարով: Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անվավեր ճանաչել Նելլի Հարությունյանի և Անահիտ Պողոսյանի միջև 03.02.2009 թվականին կնքված «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը և կիրառել գործարքի անվավերության հետևանքները, քանի որ բացակայում էր ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող այդ գույքի համասեփականատերերի համաձայնությունը, որով էլ խախտվել է իրենց իրավունքները: Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային

տոկոսներ, որով ևս խախտվել է իրենց իրավունքները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Նելլի Հարությունյանը ժառանգության հետ կապված ծախսերի՝ հուղարկավորության և ժառանգական գույքը պահպանելու և կատարելու ծախսերի հատուցման պահանջ է ներկայացրել օրենքով սահմանված ժառանգներին պահանջներ ներկայացնելու ժամկետների խախտումներով՝ բաց թողնելով հայցային վաղեմության ժամկետները: Ինչպես նաև հաշվի չի առել այն հանգամանքը, որ Նելլի Հարությունյանի կողմից կամովին կատարված գերեզմանի կառուցման և հուշարձանի տեղադրման աշխատանքները չեն համարվում պարտադիր և անհրաժեշտ, քանի որ հուղարկավորության պարտադիր ծառայություններ, աշխատանքներ, ծախսեր են համարվում բացի հուղարկավորությունը, նաև մետաղե ցուցատախտակի տեղադրումը: Հետևաբար Նելլի Հարությունյանի կողմից կամովին կատարված գերեզմանի կառուցման և հուշարձանի տեղադրման աշխատանքները չեն համարվում պարտադիր և անհրաժեշտաբար կատարված ծախսեր, և այդ ծախսերի հատուցման պահանջը չի բխում օրենքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 22.02.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Նելլի Հարությունյանի հայցը և հակընդդեմ հայցը մերժել, Աղաջան և Հնազանդ Ավագյանների հայցը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի կողմից 22.04.2009 թվականին և 18.05.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3512 և թիվ 4414 վկայագրերի համաձայն՝ Սահակ Ավագյանի մահից հետո վերջինիս գույքի՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/3-րդ մասի, ինչպես նաև «ՓԵՐԻ-Ա.Մ» ՓԲԸ-ում ունեցած 100% բաժնետոմսի 1/2-րդ բաժնի ժառանգներն են հանդիսանում Նելլի Հարությունյանը, Լուսինե, Նազանի, Մարիաննա Ավագյանները, վերջիններս իրենց ժառանգությունից հրաժարվել են հոգուտ Նելլի Հարությունյանի, իսկ նշված գույքերի 1/6-րդ բաժնի նկատմամբ՝ Աղաջան և Հնազանդ Ավագյանները **(1-ին հատոր, գ.թ. 8-11), (2-րդ հատոր, գ.թ. 10-11):**

2) Համաձայն Հայկ Հովհաննիսյանի կողմից 20.10.2010 թվականին տրված հայտարարության՝ Նելլի Հարությունյանի պատվերով 2009 թվականին Հայկ Հովհաննիսյանն իրականացրել է գերեզմանի աշխատանքներ, որի ընդհանուր արժեքը կազմել է 7.600 ԱՄՆ դոլար **(3-րդ հատոր, գ.թ. 17):**

3) Համաձայն Աշոտ Հարությունյանի և Կամո Վարդանյանի կողմից 15.10.2010 թվականին տրված թիվ 6662 հայտարարության, որը վավերացվել է նոտարի կողմից, Նելլի Հարությունյանի պատվերով կատարվել է Սահակ Ավագյանի խաչքար-հուշաքարի պատրաստումը և տեղադրումը, որի ընդհանուր արժեքը կազմել է 9.500 ԱՄՆ դոլար, որը վճարել է Նելլի Հարությունյանը **(2-րդ հատոր, գ.թ. 113):**

4) Համաձայն ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի թիվ 2 հաշվառման քննչական բաժանմունքի 23.09.2010 թվականի թիվ 17/22-1154 գրության՝ ԳԱՁ-21 մակնիշի 63 SO 367 համարանիշի ավտոմեքենան 13.03.1995 թվականից հաշվառված է Սահակ Ավագյանի անվամբ **(2-րդ հատոր, գ.թ. 114):**

5) ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանման կողմից 29.05.2009 թվականին տրված թիվ 2288880 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Արեշ

---

9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող տան 5/6-րդ մասի սեփականատերն է Նելլի Հարությունյանը, իսկ 1/12-ական մասերինը՝ Աղաջան և Հնազանդ Ավագյանները **(1-ին հատոր, գ.թ. 26-27)**:

6) Համաձայն 20.11.2008 թվականին կնքված պայմանագրի՝ Նելլի Հարությունյանը «Մերսեդես-Բենց C 200» մակնիշի 03 LU 794 համարանիշի ավտոմեքենան 4.500 ԱՄՆ դոլար գումարով վաճառել է Անահիտ Ալավերդյանին **(2-րդ հատոր, գ.թ. 21)**:

7) ՀՀ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Երևանի թիվ 2 հաշվառման քննչական բաժանմունքի 11.08.2010 թվականի գրությամբ կից ներկայացված դիմումի և պայմանագրի համաձայն՝ Նելլի Հարությունյանի անվամբ գրանցված ԳԱԶ-3110 մակնիշի 63 LU 033 համարանիշի ավտոմեքենան 03.02.2009 թվականին վաճառվել է Անահիտ Պողոսյանին **(2-րդ հատոր, գ.թ. 36-38)**:

8) ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 04.03.2011 թվականի թիվ 17571007 փորձագետի եզրակացության համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքից հնարավոր չէ առանձնացնել կողմերին պատկանող բաժնեմասերը, քանի որ կյախսովեն քաղաքաշինության ոլորտում առկա նորմերը **(1-ին հատոր, գ.թ. 110-115)**:

9) ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 15.06.2011 թվականին տրված թիվ 14951107 փորձագետի եզրակացության համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի, թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը կազմել է 53.745.000 ՀՀ դրամ, իսկ 1/6-րդ բաժնի արժեքը՝ 8.960.000 ՀՀ դրամ **(1-ին հատոր, գ.թ. 155-165)**:

10) «Վի Էմ-Ար Փի» ՍՊԸ-ի կողմից 01.08.2012 թվականին տրված եզրակացության համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը կազմել է 41.000.000 ՀՀ դրամ, իսկ 1/6-րդ բաժնի արժեքը՝ 6.830.000 ՀՀ դրամ **(6-րդ հատոր, գ.թ. 1-21)**:

11) «Վի Էմ-Ար Փի» ՍՊԸ-ի կողմից 04.06.2012 թվականին տրված եզրակացության համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/6-րդ բաժնեմասը հնարավոր չէ առանձնացնել **(5-րդ հատոր, գ.թ. 29-38)**:

12) ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Էրեբունի» տարածքային ստորաբաժանման կողմից 04.03.2011 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 15-րդ փողոցի թիվ 42 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Հնազանդ Ավագյանին **(1-ին հատոր, գ.թ. 135), (6-րդ հատոր, գ.թ. 104)**:

13) «Կառուցագետ» ՍՊԸ-ի կողմից 12.03.2010 թվականին տրված թիվ Կ-10/013-01 եզրակացության համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/6-րդ բաժնեմասն իրենից ներկայացնում է հողամասի 52,5քմ մակերեսով մասը և բնակելի տան 35,07քմ մակերեսով հատվածը: Նշված բաժնեմասի առանձնացման համար մշակվել է երկու տարբերակ **(1-ին հատոր, գ.թ. 43-49)**:

14) Աղաջան և Հնազանդ Ավագյանները փաստացի բնակվում են Երևանի Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոց թիվ 22 հասցեում գտնվող տանը (անվիճելի փաստ):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.*



ա) ինչպիսի պայմաններ պետք է առկա լինեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերով նախատեսված բաժնետնտան առանձնացնելու համար՝ հիմք ընդունելով նաև նախկինում կայացրած որոշումներում արտահայտած դիրքորոշումը,

բ) Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու իրավաչափությունն այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանի կարծիքով անհրաժեշտ է գործի նոր քննության իրականացում առաջին ատյանի կարգով, և չնայած Վերաքննիչ դատարանի կողմից բավարարվել է վերաքննիչ բողոքը, և գործն ուղարկվել է նոր քննության, այնուհանդերձ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական նորմի խախտում վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին չանդրադառնալու տեսքով:

ա) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, **կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության**, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին **համաձայնության բացակայության դեպքում** բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի **համաձայնությամբ** նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ անպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

---

Վճռաբեկ դատարանը *Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի* գործով անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիշատակված դրույթի մեկնաբանությանը (տես *Դավիթ Ասատրյանն ընդդեմ Սվետլանա Ասատրյանի և Արթուր Գասիսյանի՝ բաժնային սեփականություն հանդիսացող բնակարանից բաժինը բնեղենով առանձնացնելու պահանջի մասին թիվ ԵՄԳ/0199/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում զարգացնել նշված դիրքորոշումը:

Վերը հիշատակված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի նկատմամբ դադարում է: Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև **բացակայում է** ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին **համաձայնություն**:

Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է հետևանքներ այն դեպքերի համար, երբ կոնկրետ տեսակի գույքը բաժանելու հնարավորությունը սահմանափակված է օրենքով կամ անհնար է առանց այդ գույքին անհամաչափ վնաս պատճառելու: Այդպիսին կարող են համարվել այն դեպքերը, երբ կոնկրետ գույքի կամ գույքի որոշակի տեսակի համար օրենքով, իսկ եթե օրենքում հղում է կատարվում այլ իրավական ակտի, այդ ակտով նախատեսված է բաժանման արգելք, կամ գույքն ունի պատմական նշանակություն կամ մշակութային արժեք և բաժանման դեպքում այն կկորցնի իր նշանակությունը: Յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործի փաստերից ելնելով՝ դատարանները նշված պայմանների հաշվառմամբ պետք է գնահատեն գույքի բաժանման հնարավորությունը: Եվ միայն նշված պայմանների բացակայության դեպքում է առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից իրավունք ստանում պահանջելու վճարել իր բաժնի արժեքը: Ընդ որում, այդ արժեքի վճարումը հնարավոր է միայն բաժնային սեփականության մյուս մասնակիցների **համաձայնությամբ**, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի **կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության** սկզբունքի խախտման, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն նույնպես միայն նրա **համաձայնությամբ**, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի:

Սեփականատիրոջ բաժնի չափի աննշան լինելը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն ոչ միայն այդ բաժնի և ընդհանուր գույքի մակերեսների չափերի հարաբերակցությունը, այլև այն հանգամանքը, թե արդյոք տվյալ բաժնեմասը հնարավոր է օգտագործել ինքնուրույն՝ իր նպատակային նշանակությանը համապատասխան:

Ինքնին բաժնեմասի հարաբերականորեն փոքր լինելը չպետք է մեկնաբանվի որպես աննշան քննարկվող հողվածի իմաստով:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բաժնի առանձնացման պայմանի ստուգման համար դատարանները պետք է նշանակեն փորձաքննություն այն հաշվով, որպեսզի ստանան մասնագիտական եզրակացություն՝ վիճելի գույքն իրապես առանձնացնելու հնարավորությունը պարզելու համար:

Աստիճանաբար վերջին պայմանի մեկնաբանությանը՝ անհրաժեշտ է նշել, որ նախկինում Վճռաբեկ դատարանն անդրադարձել և դիրքորոշում է ձևավորել այդ պայմանի առնչությամբ (*չլես՝ Մուրադ Խաչատրյանն ընդդեմ Դոնարա Խաչատրյանի թիվ 3-249/ՎԴ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*): Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ընդհանուր գույքի օգտագործման մեջ սեփականատիրոջ էական շահի առկայության կամ բացակայության հարցին անդրադառնալիս դատարանը պետք է հաշվի առնի սեփականատիրոջ շահագրգռվածության համաչափությունը բաժնային սեփականության իրավահարաբերություններում մյուս սեփականատերերին պատճառված անհարմարություններին, սեփականության իրավունքով համանման այլ ունեցվածք ունենալը (այդպիսին կարող է լինել փաստացի բնակվելու համար պիտանի այլ բնակտարածության առկայությունը), այդ բաժնի նկատմամբ սեփականատիրոջ շահագրգռվածության առկայությունը և այլն:

Ընդհանրացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարաններն ընդհանուր գույքի օգտագործման մեջ էական շահ ունենալը պարզելիս պետք է հաշվի առնեն անձի գույքային շահը տվյալ տարածքի նկատմամբ: Էական շահ չունենալը չի կարող պայմանավորված լինել բաժնեմասի չափի աննշան լինելու հետ, այլ դրանք պետք է գնահատվեն ինքնուրույն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նմանատիպ գործերի քննության ընթացքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ պայմաններին դատարանները պետք է անդրադառնան առանձին-առանձին: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում հիշյալ իրավադրույթը կիրառման ենթակա չէ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կառուցագետ» ՍՊԸ-ի կողմից 12.03.2010 թվականին տրված թիվ Կ-10/013-01 եզրակացության համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 9-րդ փողոցի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/6-րդ բաժնեմասն իրենից ներկայացնում է հողամասի 52,5քմ մակերեսով մասը և բնակելի տան 35,07քմ մակերեսով հատվածը: Նշված բաժնեմասի առանձնացման համար մշակվել է երկու տարբերակ, որոնց վերաբերյալ դատողություններն ինչպես Դատարանի վճռում, այնպես էլ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում են: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հիշատակել *Ռաֆայել Ավետիսյանն ընդդեմ Սեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր և Անժելա Վարդանյանների թիվ ԿԴ-1/0133/02/09 գործով փորձագիտական եզրակացությունների գնահատման վերաբերյալ արտահայտած հետևյալ դիրքորոշումը*.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածում խոսքը գնում է փորձագետին առաջադրված հարցերի վերաբերյալ հետևությունների և դրանց հիման վրա հիմնավորված պատասխանների (եզրակացության) մասին: Հետևաբար փորձագիտական եզրակացության արդյունքում տրված հավանական եզրահանգումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի և 62-րդ հոդվածի ուժով չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի առկայությունն ապացուցելու առումով: Փորձագետի հետևությունների ձևը չի որոշում եզրակացության դերը և տեղն ապացուցման պրոցեսում: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ)

---

և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու բաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ոչ հավանական եզրակացությունն ինքնին և ոչ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն. այդպիսին չեն համարվում նաև հիպոթեթիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ դրանք շատ լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն. հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը:

Հետևաբար փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի 22.11.2012 թվականի վճռով Նելլի Հարությունյանի սկզբնական հայցի մասը և մասնակիորեն բավարարելով Աղաջան և Հնազանդ Ավագյանների վերաքննիչ բողոքը, որոշման հիմքում դրել է միայն այն հանգամանքը, որ բողոքաբերներն իրենց պնդումը որևէ թույլատրելի ապացույցով չեն հիմնավորել: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանում որպես բողոքի հիմք Աղաջան և Հնազանդ Ավագյանները նշել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի սխալ կիրառումը, որին Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել:

Նշված եզրահանգումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից պատշաճ գնահատականի չեն արժանացվել սույն գործով թույլատրելի համարվող վերոնշյալ ապացույցները, իսկ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքաբերների վկայակոչած հիմքին՝ թույլ տալով դատավարական նորմի խախտում:

բ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Նշված իրավադրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք մի կողմից ապահովում են գործն ըստ էության ճիշտ լուծած դատական ակտի կայունությունն անկախ ոչ էական, ձևական և դատական ակտի վրա ազդեցություն չունեցող դատավարական խախտումների առկայությունից, մյուս կողմից ապահովում են ցանկացած դատական ակտի վերացում (բեկանում) այն դեպքերում, երբ դատավարական խախտումների հետևանքով գործը սխալ է լուծվել:

Վերադաս դատական ատյաններում բողոքների քննությունը ենթադրում է նաև բողոքում ներկայացված փաստարկների գնահատում: Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի խնդիրն է պարզել ոչ միայն ստորադաս դատարանի կողմից թույլ տրված խախտման առկայությունը, այլև այդ խախտման ազդեցությունը գործի ելքի վրա: Այս առումով կարևորվում են այն դեպքերը, երբ բողոքի հիմքերը և դրանցում

տեղ գտած փաստարկները վերաբերում են ապացուցման ընթացքում տեղ գտած սխալերին (ապացույցների ոչ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի գնահատում և այլն): Դատավարական այս խախտումների առկայությունն ինքնին չպետք է հանգեցնի վերանայվող ակտի անվերապահ բեկանման, եթե այդ ապացույցներն առերևույթ չեն կարող ազդել գործի ելքի վրա: Ման իրավիճակներ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ, օրինակ՝ ներկայացվել են ապացույցներ այն փաստերի հիմնավորման համար, որոնք ապացուցման առարկայում չեն ներառվել: Եթե դատավարական նման խախտումը ստացել է գնահատական վերաքննիչ ատյանում, ապա նույն խախտման վերաբերյալ վճարել բողոքի ներկայացումն արդարացված չի կարող համարվել և ազդել ստորադաս ատյանի որոշման վրա: Հնարավոր են նաև իրավիճակներ, երբ բողոքում ապացույցների հետազոտման և գնահատման վերաբերյալ ներկայացված հիմքում ներառված փաստարկները վերաքննիչ դատարանի կողմից չդրվեն քննության առարկա, սակայն բողոքն այլ հիմքով բավարարվի և գործն ուղարկվի նոր քննության: Ման մոտեցումը Վճարել դատարանը կարող է համարել արդարացված և չբեկանել ստորադաս ատյանի որոշումը զուտ այն պատճառաբանությամբ, որ բողոքի հիմքերում ներառված փաստարկներին անդրադարձ չի կատարվել, եթե օբյեկտիվորեն անհրաժեշտ է նոր քննության ընթացքում գնահատել ապացույցները:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում անդրադառնալով բողոքաբերների այն պատճառաբանությանը, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Նելլի Հարությունյանը ժառանգության հետ կապված ծախսերի՝ հուղարկավորության և ժառանգական գույքը պահպանելու և կառավարելու ծախսերի հատուցման պահանջ է ներկայացրել օրենքով սահմանված ժառանգներին պահանջներ ներկայացնելու ժամկետների խախտումներով՝ բաց թողնելով հայցային վաղեմության ժամկետները, ինչպես նաև այն, որ Նելլի Հարությունյանի կողմից կամովին կատարված գերեզմանի կառուցման և հուշարձանի տեղադրման աշխատանքները չեն համարվում պարտադիր և անհրաժեշտ կատարված ծախսեր, և այդ ծախսերի հատուցման պահանջը չի բխում օրենքից, ապա Վճարել դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, այդ մասերով բեկանելով Դատարանի 22.11.2012 թվականի վճիռը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, իրավացիորեն նշել է, որ գործի նոր քննության ծավալում պարզման ենթակա է համարում նաև այն հարցը, թե արդյոք Աղաջան և Հնազանդ Ավագյանները հակընդդեմ հայցի դեմ առարկել են այն օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացված լինելու հիմքով, թե ոչ, բացի այդ, պարզման ենթակա է նաև վերջինների դիրքորոշումը հուղարկավորության ծախսերի չափի վերաբերյալ, քանի որ վիճարկվում են ժառանգատուի հուղարկավորության համար իրենցից բռնագանձման ենթակա գումարի չափը՝ գտնելով, որ իրենցից բռնագանձման ենթակա գումարի չափը չի կարող դիտվել որպես օրենսդրորեն սահմանված անհրաժեշտ ծախս:

Ինչ վերաբերում է բողոքաբերների այն պատճառաբանությանը, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենայի իրենց հասանելիք 1/6-րդ մասի արժեքը պետք է հաշվարկվեր ոչ թե այդ ավտոմեքենայի վաճառքի գինը՝ 4.500 ԱՄՆ դոլար, այլ ի սկզբանե ձեռք բերված գնով՝ 7.500 ԱՄՆ դոլարով, պարտավոր էր անվավեր ճանաչել Նելլի Հարությունյանի և Անահիտ Պողոսյանի միջև 03.02.2009 թվականին կնքված «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը և կիրառեր գործարքի անվավերության հետևանքները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսները, որով ևս խախտվել է իրենց իրավունքները, ապա Վճարել դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում են դատողություններ բողոքաբերների

---

կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված վերոնշյալ փաստարկների վերաբերյալ: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանն Աղաջան և Հնագանդ Ավագյանների հայցի և Նելլի Հարությունյանի հակընդդեմ հայցի մասերով դատական ակտը բեկանել և ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դատական ակտն այդ մասով պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2013 թվականի որոշման՝ Նելլի Հարությունյանի հայցի մասով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.11.2012 թվականի վճիռն անփոփոխ թողնելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2013 թվականի որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արդրագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արդրագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ-4/0306/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԳԴ-4/0306/02/11  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.02.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Դերենիկ, Վոլոդյա, Դեղձուհի, Էմմա, Արմինե, Հարություն, Տաթևիկ Մարգարյանների՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու, գումարի բռնագանձումն այդ բաժնի վրա տարածելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը հետագայում ընդհանուր սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Սևան քաղաքի Նալբանդյան թիվ 47/27 բնակարանի՝ Վոլոդյա, Դեղձուհի, Դերենիկ, Էմմա, Արմինե, Հարություն և Տաթևիկ Մարգարյանների համատեղ սեփականությունից առանձնացնել Դերենիկ Վոլոդյայի Մարգարյանի բաժնեմասը և 23.03.2010 թվականի թիվ ԳԴ-4/0539/02/09 վճռով բռնագանձման ենթակա գումարի բռնագանձումը տարածել այդ բաժնեմասի վրա, իսկ դրա անհնարինության դեպքում վճիռ կայացնել գույքը հրապարակային

---

սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ, ինչպես նաև բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Գաբրիելյան) (այսուհետ՝ Դատարան) 09.10.2012 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.02.2013 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.10.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածը, 200-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաքանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն՝ մասնավորապես պատշաճ գնահատման չի արժանացրել հայցադիմումին կից ներկայացված գումարի բռնագանձման պահաջի մասին վճիռը, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության և կադաստրի գրությունները, համասեփականատերերի մի մասի գրավոր դիրքորոշումները, մյուսների ցուցմունքներն ընդհանուր գույքից պարտապանի բաժինը գնելու վերաբերյալ, փորձագետի եզրակացությունն ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության և ընդհանուր գույքի շուկայական արժեքի վերաբերյալ: Նման պայմաններում Դատարանը պետք է վճիռ կայացներ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը հետագայում ընդհանուր սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու մասին:

Վերաքննիչ դատարանը, ամբողջական վերլուծության չենթարկելով գործում առկա փաստերը, չի պարզել, որ ընդհանուր գույքի բոլոր համասեփականատերերը տեղեկացված են իրենց իրավունքներին վերաբերող դատավարության մասին, նրանց մի մասն ընդհանուր գույքից բաժնեմաս չի պահանջել և համաձայն է եղել Դատարանի ցանկացած որոշման հետ, իսկ մյուսները չեն հրաժարվել գնել պարտապանի բաժինը, սակայն չեն գնել այն:

Բացի այդ, եթե նույնիսկ ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները կամ նրանց մի մասը չեն հրաժարվել գնել պարտապանի բաժինը, դա դեռևս չի նշանակում, որ Բանկի հայցը պետք է մերժվեր, քանի որ պարտապանի բաժինը գնելուց հրաժարվել կամ չհրաժարվելը հանդիսանում է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների իրավունքը, և նրանք կարող են ընդհանրապես չհրաժարվել պարտապանի բաժինը գնելուց, բայց և չգնել այն:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.02.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:



**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող վիսաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ վիսաստերը՝

1) ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 23.03.2010 թվականի թիվ ԳԴ-4/0539/02/09 վճռով Բանկի հայցն ընդդեմ Նորիկ Խալաֆյանի և Դերենիկ Մարգարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է (հատոր 1-ին, գ.թ. 9-11):

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից 21.10.2010 թվականի թիվ Ե-9637-05 գրությամբ պարտատիրոջը՝ Բանկին, հայտնվել է, որ կատարողական գործողությունների ընթացքում պարզվել է, որ Դերենիկ Մարգարյանը հանդիսանում է Սևան քաղաքի Նալբանդյան թիվ 47/27 հասցեի բնակարանի համասեփականատերը, և առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի հիմքով վերջինիս մասնաբաժինն առանձնացնելու վերաբերյալ հայցով դիմել դատարան, որից հետո միայն հնարավոր կլինի նշված գույքի վրա բռնագանձում տարածելը (հատոր 1-ին, գ.թ. 12):

2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևանի տարածքային ստորաբաժանման կողմից 30.09.2004 թվականին տրված թիվ 657025 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ քաղաք Սևան, Նալբանդյան թիվ 47/27 հասցեի բնակարանի նկատմամբ գրանցված է Դերենիկ, Վոլոդյա, Դեղձուհի, Էմմա, Արմինե, Հարություն, Տաթևիկ Մարգարյանների սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 71-72):

3) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 02.08.2012 թվականին տրված թիվ 11-3424 փորձագետի եզրակացության համաձայն՝ Սևան քաղաքի Նալբանդյան թիվ 47/27 հասցեում գտնվող բնակարանից Դերենիկ Մարգարյանի բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, քանի որ դրանով կխախտվեն կողմերի գույքային իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության տվյալ բնագավառում գործող նորմատիվ ակտերով սահմանված պահանջները (հատոր 1-ին, գ.թ. 89-97):

4) Դատաքննության ընթացքում ընդհանուր սեփականության մասնակիցներից Վոլոդյա Մարգարյանը հայտնել է Դատարանին (իսկ Դեղձուհի և Էմմա Մարգարյանները համաձայնվել են), որ եթե Բանկը դիմի իրեն, ապա ինքը պատրաստ է վճարել Դերենիկ Մարգարյանի բաժնի արժեքը (հատոր 1-ին, գ.թ. 152-155):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է ընդհանուր սեփականության հանդիսացող գույքից բաժինն առանձնացնելու քաղաքացիաիրավական վեճերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար: Նույն հոդվածի

---

2-րդ կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով, կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերը նշված նորմերի վերլուծության հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգը զուգակցում է ինչպես ընդհանուր սեփականության մեջ պարտապան մասնակցի, պարտատիրոջ, այնպես էլ մյուս սեփականատերերի շահերը: Մասնավորապես, վերջիններիս շահերից ելնելով սահմանված է, որ բաժնի վրա բռնագանձում տարածելը հնարավոր է միայն պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում: Ընդհանուր սեփականության մասնակիցներն իրավունք ունեն շուկայական գնով գնելու գույքի այն բաժինը, որի վրա բռնագանձում է տարածվում: Ընդ որում, վաճառքից ստացված գումարը կողովի պարտքի մարմանը: Իսկ պարտատիրոջ շահերի պաշտպանության համար սահմանված է, որ վերջինս իրավունք ունի պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել պարտապանի բաժինը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար, ինչպես նաև իրավունք ունի առաջարկել ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներին գնել պարտապանի բաժինը, իսկ վերջիններիս կողմից հրաժարվելու դեպքում՝ պահանջել ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը վաճառել հրապարակային սակարկություններով:

Վերոգրյալից հետևում է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության

ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,

3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը:

Ման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածներով սահմանված կարգավորումների համադրված վերլուծությունը նույն օրենսգրքի 192-րդ և 195-րդ հոդվածների հետ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ելնելով ընդհանուր սեփականության բնույթից և դրա մասնակիցների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ օրենսդիրը սահմանել է համապատասխան երաշխիքներ այն դեպքերի համար, երբ ընդհանուր սեփականության մասնակիցներից որևէ մեկը նպատակ ունենա օտարելու իր բաժինը: Այն է՝ ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս վերջիններս ունեն վաճառքի գնով և այլ հավասար պայմաններով վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք, **բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 23.03.2010 թվականի թիվ ԳԴ-4/0539/02/09 վճռով Բանկի հայցն ընդդեմ Նորիկ Խալաֆյանի և Դերենիկ Մարգարյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, բավարարվել է: Դատարանի կողմից տրված կատարողական թերթը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, սակայն վճռի պահանջներն ամբողջությամբ կատարել հնարավոր չի եղել պարտապան Դերենիկ Մարգարյանի մոտ այլ գույքի անբավարարության հիմքով, և Բանկին առաջարկվել է Սևան քաղաքի Նալբանդյան թիվ 47/27 հասցեի ընդհանուր գույքում Դերենիկ Մարգարյանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել դատարան: Բանկը դիմել է դատարան՝ պահանջելով **Սևան քաղաքի Նալբանդյան թիվ 47/27 բնակարանից առանձնացնել Դերենիկ Վոլոդյայի Մարգարյանի բաժնեմասը և 23.03.2010 թվականի թիվ ԳԴ-4/0539/02/09 վճռով բռնագանձման ենթակա գումարի բռնագանձումը տարածել այդ բաժնեմասի վրա, իսկ դրա անհնարինության դեպքում վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:** ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սևանի տարածքային ստորաբաժանման կողմից 30.09.2004 թվականին տրված թիվ 657025 սեփականության իրավունքի վկայականի համաձայն՝ քաղաք Սևան, Նալբանդյան թիվ 47/27 հասցեի բնակարանի նկատմամբ գրանցված է Դերենիկ, Վոլոդյա, Դեղձուհի, Էմմա, Արմինե, Հարություն, Տաթևիկ Մարգարյանների սեփականության իրավունքը: Միաժամանակ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից 02.08.2012 թվականին տրված թիվ 11-3424 փորձագետի եզրակացության համաձայն՝ Սևան քաղաքի Նալբանդյան թիվ 47/27 հասցեում գտնվող բնակարանից Դերենիկ Մարգարյանի բաժինը հնարավոր չէ բնեղենով առանձնացնել՝ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու:

Դատարանը Բանկի հայցը մերժելիս պատճառաբանել է. «Տվյալ դեպքում դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ ք. Սևան, Նալբանդյան թիվ 47/27 հասցեում գտնվող բնակարանից Դերենիկ Մարգարյանի բաժինը բնեղենով առանձնացնել հնարավոր չէ առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին

---

անհամաչափ վնաս պատճառելու, արձանագրում է, որ հայցվորը որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց չի ներկայացրել դատարանին, որով կապացուցվի այն փաստը, որ վերջինս օգտվել է օրենքով սահմանված իր իրավունքից և ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը, և վերջիններս հրաժարվել են գնել այն, հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի, դրա բացասական հետևանքները կրում է հայցվորը: Ավելին, դատաքննության ընթացքում ընդհանուր սեփականության մյուս մասնակիցներից Վոլոդյա, Դեղձուհի և Էմմա Մարգարյանները չհրաժարվեցին օրենքով սահմանված կարգով գնելու Դերենիկ Մարգարյանի բաժինը»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է. «Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործում առկա փորձագիտական եզրակացությամբ արդեն իսկ հաստատված է պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինությունը և հայցվոր «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության պահանջի իրավունքը կարող է բավարարվել միայն պատասխանողներին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու եղանակով, որի համար օրենսդիրը բացի անսպասակահարմարության այլ դեպքերից նաև սահմանել է բաժնային սեփականության մյուս մասնակիցների կողմից առանձնացվող բաժնեմասի դիմաց փոխհատուցում վճարելու կամահայտնության բացակայությունը, ուստի հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում բացակայում է համատեղ սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը շուկայական գնով ձեռք բերելուց հրաժարվելու պարտադիր դեպքը, որպիսի պայմաններում Դատարանի համար չէր կարող ծագել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու իրավունք: Ավելին, սույն գործով հաստատված հանգամանք է, որ պատասխանողներ Վոլոդյա, Դեղձուհի և Էմմա Մարգարյանները չեն հրաժարվել գնելու Դերենիկ Վոլոդյայի Մարգարյանի բաժնեմասը»:

Մինչդեռ վերը նշված վերլուծությունները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկը 23.03.2010 թվականի թիվ ԳԴ-4/0539/02/09 վճռով սահմանված գումարը բռնագանձելու նպատակով Դատարանից պահանջել է առանձնացնել Դերենիկ Մարգարյանի բաժնեմասը, **իսկ դրա անհնարինության դեպքում՝ վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին:** Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքը բնեղենով առանձնացնելու անհնարինության պայմաններում միաժամանակ այն հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջ Դատարանին ներկայացնելով՝ Բանկը, ըստ էության, կամահայտնություն է դրսևորել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ կետի կանոնների պահպանմամբ հասնել գույքի վաճառքին՝ ստացված գումարից իր պարտքը ստանալու համար: Մինչդեռ, չնայած այն հանգամանքին, որ դատաքննության ընթացքում ընդհանուր սեփականության մասնակիցներից Վոլոդյա Մարգարյանը հայտնել է Դատարանին, որ եթե Բանկը դիմի իրեն, ապա ինքը պատրաստ է վճարել Դերենիկ Մարգարյանի բաժնի արժեքը (իսկ Դեղձուհի և Էմմա Մարգարյանները համաձայնվել են), այնուամենայնիվ, վերջիններս Դերենիկ Մարգարյանի հետ բաժնի առուվաճառքի պայմանագիր չեն կնքել, ինչպես նաև նրանց կողմից որևէ գործողություն չի կատարվել Դերենիկ Մարգարյանի բաժինը գնելու ուղղությամբ, որպիսի պայմաններում Դատարանը չէր կարող մերժել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու հայցապահանջը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանի բաժինը ձեռք բերելու ցանկությունը զուտ ձևական առումով չէր կարող հիմք հանդիսանալ

հայցի մերժման համար, այն կարող էր առարկայական լինել միայն այն դեպքում, երբ նրանց ցանկությանը զուգահեռ կատարվեին նաև որոշակի գործողություններ պարտապանի բաժինը գնելու ողորդյալով:

Այսպիսով, վճարեկ բողոքի հիմքի առկայությունը վճարեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ վճարեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. վճարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.02.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ-1/0415/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-1/0415/02/11  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան  
Դատավորներ՝ Ն. Տավարացյան  
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝  
Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.03.2013 թվա-  
կանի որոշման դեմ՝ ըստ հայցի Լուսինե Ասլանյանի ընդդեմ Գագիկ Ասլանյանի, երրորդ  
անձ Բանկի՝ գույքն ամուսինների ընդհանուր սեփականություն ճանաչելու և դրանից  
բաժնեմաս առանձնացնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Լուսինե Ասլանյանը պահանջել է ճանաչել իր ընդհանուր սե-  
փականության իրավունքը վեճի առարկա ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի  
Ազատության փողոցի թիվ 136 տան և հողամասի նկատմամբ, բաժանել բաժնային սեփա-  
կանության ներքո գտնվող գույքը և դրանից բաժինն առանձնացնել:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Յու.  
Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 02.11.2012 թվականի վճռով հայցը բավարարվել  
է մասնակիորեն՝ ճանաչվել է Լուսինե Ասլանյանի ընդհանուր սեփականության իրավունքը  
ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 136 տան և տնամերձ հո-  
ղամասի նկատմամբ, իսկ հայցապահանջը՝ բաժնային սեփականության ներքո գտնվող  
գույքը բաժանելու ու դրանից բաժինն առանձնացնելու պահանջի մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

21.03.2013 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.11.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:  
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 51-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գործով հաստատված փաստերը թույլ չեն տալիս հաստատելու սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ վերանորոգման և գույքի արժեքի նշանակալի չափով ավելացման միջև առկա է պատճառահետևանքային կապ: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիփոթեզում նշված է «նշանակալի» եզրույթը, մինչդեռ առկա չէ Լուսինե Ալվանյանի ներդրման չափն անշարժ գույքում, հետևաբար առարկայորեն չի կարող մատնանշվել՝ նշանակալի է ներդրումը, թե ոչ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանի հետևությունը կրում է ոչ թե առարկայական, այլ վերացական բնույթ, քանի որ Վերաքննիչ դատարանը հստակ կանոնը կիրառել է ոչ հստակ փաստերի դեպքում: Վերաքննիչ դատարանը, չհաստատելով վերոնշյալ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ ապացուցման ենթակա փաստերը, գնահատման առարկա չի դարձրել Լուսինե Ալվանյանի կողմից ներդրման չափը և չի հիմնավորել ներդրման հետևանքով վեճի առարկա անշարժ գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածում նշված «ներդրում» եզրույթն ունի հստակ արտահայտված ձևեր: Նշված իրավահարաբերությունների առկայությունը կամ բացակայությունը ենթակա է ապացուցման պատշաճ ձևակերպմամբ կնքված պայմանագրերով, ստացականներով, հանձնման-ընդունման ակտերով: Սույն գործով Լուսինե Ալվանյանը դատարանին հայտնել է, որ կատարել է ներդրումներ, սակայն դատարան չի ներկայացրել վերանորոգող անձանց և կազմակերպությունների հետ իրավահարաբերությունների մեջ մտնելու, ըստ այդմ՝ կատարված աշխատանքների դիմաց իր հաշվին գումար վճարելու փաստաթղթեր, ինչպես նաև չի ներկայացրել իր կողմից վճարված կտրոններ այն դեպքում, երբ միայն այդպիսի ապացույցների առկայության պարագայում այդ փաստերը կարող էին հաստատվել:

Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ է որակել հայցվոր կողմի, նրա ներկայացուցչի, շահագրգռված անձանց հետ ազգակցական և բարեկամական կապի մեջ գտնվող վկաների ցուցմունքները:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 3-ՍԼ թիվ 487652 ամուսնության վկայականի համաձայն՝ Գագիկ Գարեգինի

---

Ասլանյանի և Լուսինե Ալոշայի Մուսայելյանի ամուսնությունը գրանցվել է 19.10.1995 թվականին Երևանի Խորհրդային շրջխորհրդի գործկոմի ԶԱԳՍ-ի բաժնի կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

2) 22.04.1999 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Սուրեն Ասլանյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող, ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող բնակելի տունը՝ 380,67քմ մակերեսով, և տնամերձ հողամասի 1/2 մասն ամբողջությամբ նվիրել է Գագիկ Գարեգինի Ասլանյանին: Նույն պայմանագրի համաձայն՝ բնակելի տան գույքագրման գնահատությունը կազմում է 16.934.300 ՀՀ դրամ, իսկ հողամասի կադաստրային արժեքը՝ 389.250 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 68**):

3) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից 07.05.1999 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 0132631 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող 380,67քմ մակերեսով բնակելի տունը և 0,075 հա մակերեսով տնամերձ հողամասը սեփականության իրավունքով պատկանում են Գագիկ Ասլանյանին (**հատոր 1-ին, գ.թ. 17-20**):

4) «Վարմոն Ռիելթի» ՍՊԸ-ի 28.11.2011 թվականի թիվ «0730102/Վ-011» հաշվետվության համաձայն՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 բնակելի տան շուկայական գինը հետազոտության կատարման ժամանակահատվածի դրությամբ, առկա ապրանքային վիճակը հաշվի առնելով, գնահատվում է 39.970.000 ՀՀ դրամ:

2. ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 բնակելի տան վերջին վերանորոգման աշխատանքները կատարվել են 2007 թվականից մինչև 2010 թվականը:

3. ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 բնակելի տան կատարված վերանորոգման աշխատանքների ողջ ծավալի ընդհանուր շուկայական գինը, օգտագործված շինանյութերի շուկայական գների ներառմամբ, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գնահատվում է 11.089.100 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 3-12**):

5) 03.09.2008 թվականի երրորդ անձի անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) թիվ 1300/1 պայմանագրի համաձայն՝ Բանկի (գրավառու)՝ ի դեմս վարչության նախագահ Արամ Անդրեասյանի, որի անունից հանդես է եկել «Աղասյան» մասնաճյուղի կառավարիչ Կամո Դավթյանը, և Գագիկ Ասլանյանի (գրավատու), «Արտյոմ-Արտուշ եղբայրներ» ՍՊԸ-ի (պարտապան) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ գրավադրվել են ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 հասցեի բնակելի տունը՝ 350,5քմ մակերեսով, և 0,075հա մակերեսով հողամասը, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Գագիկ Ասլանյանին: Գրավի առարկայի փողային արտահայտությունը, գնահատված «Միջազգային բիզնես կենտրոն» ՀՀ ՓԲԸ-ի կողմից, կազմում է 50.000.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 33-34**):

6) 22.09.2008 թվականի երրորդ անձի անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) թիվ ՀՎԶ-1385/1 պայմանագրի համաձայն՝ Բանկի (գրավառու)՝ ի դեմս վարչության նախագահ Արամ Անդրեասյանի, որի անունից հանդես է եկել «Աղասյան» մասնաճյուղի կառավարիչ Կամո Դավթյանը, և Գագիկ Ասլանյանի (գրավատու), «Արտյոմ-Արտուշ եղբայրներ» ՍՊԸ-ի (պարտապան) միջև կնքված պայմանագրի համաձայն գրավադրվել են ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 հասցեի բնակելի տունը՝ 350,5քմ մակերեսով, և 0,075հա մակերեսով հողամասը, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Գագիկ Ասլանյանին: Գրավի առարկայի փողային



արտահայտությունը, գնահատված «Միջազգային բիզնես կենտրոն» ՀԶ ՓԲԸ-ի կողմից, կազմում է 50.000.000 ՀՀ դրամ: Գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման թիվ 0104597 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 հասցեի բնակելի տունը և հողամասը գրավադրվել են Գագիկ Ասլանյանի կողմից Բանկում՝ 03.09.2008 թվականից, և գրավի պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 23.09.2010 թվականը (**հատոր 2-րդ, գ.թ. 35-36**):

7) Գրավի, հիփոթեքի իրավունքի գրանցման թիվ 0104838 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 հասցեի բնակելի տունը՝ 350,5քմ մակերեսով, և 0,075հա մակերեսով հողամասը գրավադրվել են Գագիկ Ասլանյանի կողմից Բանկում՝ 03.09.2008 թվականից, և գրավի պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 03.09.2011 թվականը (**հատոր 2-րդ, գ.թ. 37-38**):

8) 05.05.2009 թվականի թիվ 5 դրամարկղային մուտքի օրդերի համաձայն՝ Լուսինե Ասլանյանը «Հայէկոնոմբանկի» Նաիրի մասնաճյուղի միջոցով «Իշխանհատակ» ՍՊԸ-ին է փոխանցել 475.700 ՀՀ դրամ, վճարման նպատակը՝ Մ/Պ դռներ և պատուհաններ:

Ջեռուցման համակարգի մոնտաժման նախահաշվի, թիվ 6/64 պատվերների կտրոնի և «Իմեքս գրուպ» ՍՊԸ-ի «Իդեալ» Ռոստոլյան թիվ 69/5 հասցեի կտրոնի համաձայն՝ Գագիկ Ասլանյանի անվամբ (հասցեն Ձորաղբյուր) վճարվել է 716.000 ՀՀ դրամ (**հատոր 2-րդ, գ.թ. 71-72, 97**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանությանը, ինչը պետք է ապահովի դատարանների կողմից վերոնշյալ նորմի միարեսակ կիրառությունը և նպաստի վերոնշյալ նորմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի զարգացմանը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն), եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ կարող է ճանաչվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը հետևյալ վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

*ա) ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը.*

*բ) գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը.*

*գ) կատարված ներդրման և արժեքի նշանակալի ավելացման միջև պարզառահերևանքային կապի առկայությունը (տես ըստ Ռուզաննա Խաչիկյանի հայցի ընդդեմ Անդրեյ Ջելոյանի՝ համարեղ սեփականարեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-422(ՎԳ)*

---

---

**քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 20.06.2008 թվականի որոշումը:**

Վերահաստատելով վերոնշյալ դիրքորոշումը՝ սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ պայմանների մեկնաբանությանը:

*ա) Ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին ներդրումներ կատարելը.*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներդրումները կարող են դրսևորվել դրամական միջոցներ տրամադրելով, գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը հանգեցնող բնեղեն միջոցներ տրամադրելով, ինչպես նաև սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացնող ամուսնու անձնական աշխատանքի միջոցով, որի արդյունքում առկա դրամական կամ այլ ռեսուրսների հետ միասին իրականացվել է հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ դատարանները վերոնշյալ նորմը կիրառելիս պետք է ուշադրություն դարձնեն այն հանգամանքի վրա, որ ներդրումները պետք է կատարված լինեն՝

- ամուսնության ընթացքում և ամուսինների ընդհանուր գույքի հաշվին կամ
- ամուսնության ընթացքում և մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին:

Ընդ որում, առաջին դեպքում խոսքը վերաբերում է այն գույքի հաշվին կատարված ներդրումներին, որն ամուսինները ձեռք են բերել համատեղ ամուսնության ընթացքում և որը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը: Երկրորդ դեպքը վերաբերում է այն գույքին, որն ամուսիններից մեկը ստացել է մինչև ամուսնությունը կամ ամուսնության ընթացքում՝ որպես նվեր կամ ժառանգություն:

*բ) Գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գույքի արժեքի նշանակալի չափով ավելանալը կարող է դրսևորվել գույքի վրա կատարված որոշակի փոփոխություններով, որոնք ավելացնում են գույքի որակական (շահագործման, սպառողական և այլ) հատկանիշները և, հետևաբար, նաև գույքի արժեքը:

Օրենսդիրն ընդհանուր կերպով թվարկում է այն գործողությունները, որոնք կարող են հանգեցնել գույքի արժեքի նշանակալի չափով ավելացմանը: Դրանք դրսևորվում են հիմնական վերանորոգման, վերակառուցման, վերասարքավորման ձևերով, որոնք, սակայն, սպառիչ չեն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ պայմանի ապահովման համար անհրաժեշտ է որոշել գույքի շուկայական արժեքը մինչև ներդրումները կատարելը և դրանից հետո:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև հավելել, որ գույքի արժեքի ավելացումը **պետք է լինի նշանակալի**, ինչը յուրաքանչյուր գործով գնահատման ենթակա հանգամանք է:

*գ) Կատարված ներդրման և արժեքի նշանակալի ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ երրորդ պայմանը վերը նշված երկու պայմանների տրամաբանական շարունակությունն է, ուստի միայն վերը նշված երկու պայմանների առկայությունից հետո դատարանը պետք է քննարկի պատճառահետևանքային կապի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայացված հայցի հիմքի շրջանակներում յուրաքանչյուր գործով դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն

ամուսիններից մեկի ներդրման առկայությունը, դրա արդյունքում գույքի արժեքի նշանակալի չափով ավելացումը կամ ամուսինների ընդհանուր գույքի հաշվին ներդրման առկայությունը և դրա արդյունքում գույքի արժեքի նշանակալի չափով ավելացումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ է հիմնավորել, որ գույքի արժեքի նշանակալի ավելացումը պայմանավորված է ներդրումներով, որոնք հանգեցրել են գույքի շուկայական արժեքի բարձրացմանը: Հետևաբար, գույքի արժեքի ավելացման (թեկուզև նշանակալի) այլ գործոններն առանձին չեն կարող հիմք հանդիսանալ վերոնշյալ հոդվածի կիրառման համար (օրինակ՝ գույքի շուկայական արժեքի բարձրացումը՝ պայմանավորված տնտեսական գործոններով (գնաճ)) (*լրես նաև Ռուզաննա Խաչիկյանն ընդդեմ Անդրե Զելոյանի՝ համալրել սեփականարեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵԶԴ/1449/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ երեք վավերապայմանների առկայությունը կարող է հիմնավորվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցներով՝ հաշվի առնելով դրանց թույլատրելիության և վերաբերելիության կանոնները: Միաժամանակ, դատարանները պետք է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնեն կոնկրետ փաստը համապատասխան ապացույցներով հաստատելու առանձնահատկությունները:

Վերոնշյալ վերլուծություններից հետո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել վերը նշված կանոնների կիրառումը սույն գործի նկատմամբ:

Սույն գործի փաստերի, մասնավորապես, 3-ՍԼ թիվ 487652 ամուսնության վկայականի համաձայն՝ Գագիկ Գարեգինի Ասլանյանի և Լուսինե Ալյոշայի Մուսայելյանի ամուսնությունը գրանցվել է 19.10.1995 թվականին Երևանի Խորհրդային շրջխորհրդի գործկոմի ԶԱԳ-ի բաժնի կողմից: 22.04.1999 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Սուրեն Ասլանյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող, ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող բնակելի տունը՝ 380,67քմ մակերեսով, և տնամերձ հողամասի 1/2 մասն ամբողջությամբ նվիրել է Գագիկ Գարեգինի Ասլանյանին: Նույն պայմանագրի համաձայն՝ նվիրվող բնակելի տան գույքագրման գնահատությունը կազմում է 16.934.300 ՀՀ դրամ, իսկ հողամասի կադաստրային արժեքը՝ 389.250 ՀՀ դրամ: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արովյանի տարածքային ստորաբաժանման կողմից 07.05.1999 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 0132631 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղում գտնվող բնակելի տունը՝ 380,67քմ մակերեսով, և 0,075հա մակերեսով տնամերձ հողամասը սեփականության իրավունքով պատկանում են Գագիկ Ասլանյանին: «Վարմոս Ռիելթի» ՍՊԸ-ի 28.11.2011 թվականի թիվ «0730102/Վ-011» հաշվետվության համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 136 բնակելի տան շուկայական գինը հետազոտության կատարման ժամանակահատվածի դրությամբ, առկա ապրանքային վիճակը հաշվի առնելով, գնահատվում է 39.970.000 ՀՀ դրամ: Տան վերջին վերանորոգման աշխատանքները կատարվել են 2007 թվականից մինչև 2010 թվականը:

Կատարված վերանորոգման աշխատանքների ողջ ծավալի ընդհանուր շուկայական գինը, օգտագործված շինանյութերի շուկայական գների ներառմամբ, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գնահատվում է 11.089.100 ՀՀ դրամ:

05.05.2009 թվականի թիվ 5 դրամարկղային մուտքի օրդերի համաձայն՝ Լուսինե Ասլանյանը «Հայէկոնոմբանկի» Նաիրի մասնաճյուղի միջոցով «Իշխանհատակ» ՍՊԸ-ին է փոխանցել 475.700 ՀՀ դրամ, վճարման նպատակը՝ Մ/Պ դոներ և պատուհաններ:

---

Ջեռուցման համակարգի մոնտաժման նախահաշվի, թիվ 6/64 պատվերների կտրոնի և «Իմեքս գրուպ» ՍՊԸ-ի «Իդեալ» Ռոստովյան թիվ 69/5 հասցեի կտրոնի համաձայն՝ Գազիկ Ասլանյանի անվամբ (հասցեն Ձորաղբյուր) վճարվել է 716.000 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելիս հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետը, պատճառաբանել է, որ հիշատակված վերանորոգումը կատարվել է հայցվոր և պատասխանող կողմի ընդհանուր գույքի հաշվին, որպիսի եզրակացության համար Վերաքննիչ դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքները, որ վեճի առարկա գույքը հանդիսացել է պատասխանողի սեփականությունը, և այն վերանորոգվել է պատասխանողի և հայցվորի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, իսկ բողոքաբեր կողմը չի առարկել վերանորոգման փաստի դեմ: Բացի այդ, սույն գործով ձեռք չի բերվել ապացույց այն մասին, որ վիճելի գույքի վերանորոգումը կատարվել է այլ անձի գույքի հաշվին և ոչ՝ հայցվորի և պատասխանողի: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտել է, որ պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող վիճելի գույքի արժեքը վերջինիս և հայցվորի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում նրանց ընդհանուր գույքի հաշվին կատարված վերանորոգման հետևանքով նշանակալի չափով ավելացել է՝ 16.934.300 ՀՀ դրամից վերածվելով 39.970.000 ՀՀ դրամի:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հանգամանքները, որ վեճի առարկա գույքը հանդիսացել է պատասխանողի սեփականությունը, և այն վերանորոգվել է պատասխանողի և հայցվորի համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, իսկ բողոքաբեր կողմը չի առարկել վերանորոգման փաստի դեմ, սույն գործով դեռևս բավարար չեն արձանագրելու, որ առկա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման վավերապայմանները: Սույն գործով բացի վերոնշյալ փաստերից պետք է հաստատվեր նաև 11.089.100 ՀՀ դրամի չափով ներդրումների և դրանց հետևանքով վիճելի գույքի շուկայական արժեքի նշանակալի չափով ավելացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 22.04.1999 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ վիճելի տան գույքագրման գնահատությունը կազմել է 16.934.300 ՀՀ դրամ, իսկ «Վարմոս Ռիելթի» ՍՊԸ-ի 28.11.2011 թվականի թիվ «0730102/Վ-011» հաշվետվության համաձայն՝ նշված տան շուկայական գինը, հետազոտության կատարման ժամանակահատվածի դրությամբ առկա ապրանքային վիճակը հաշվի առնելով, գնահատվել է 39.970.000 ՀՀ դրամ: Վերանորոգման աշխատանքների ողջ ծավալի ընդհանուր շուկայական գինը, օգտագործված շինանյութերի շուկայական գների ներառմամբ, փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ գնահատվել է 11.089.100 ՀՀ դրամ:

Շիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը, հայցի բավարարման մասով վճիռն օրինական ուժի մեջ թողնելու հիմքում դնելով այն հանգամանքը, որ վիճելի գույքի արժեքը հայցվորի և պատասխանողի համատեղ գույքի հաշվին կատարված ներդրումների հետևանքով նշանակալի չափով ավելացել է, պատշաճ գնահատման առարկա չի դարձրել կատարված ներդրումների և գույքի արժեքի նշանակալի չափով ավելացման միջև պատճառահետևանքային կապը, ինչպես նաև չի պարզել, թե մինչև տան վերանորոգումը դրա 16.934.300 ՀՀ դրամ գույքագրման գնահատությունն արդյոք համապատասխանել է տան՝ տվյալ ժամանակահատվածի շուկայական արժեքին:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը

նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*յրես՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն Խաչատրյանի և այլոց թիվ ԿԴՅ/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերի առկայությունը, դրանք չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.03.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽՆԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



գույքի, ինչպես նաև Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի, ՎԱՁ-2106 մակնիշի 05 ՕՕ 819 պետհամարանիշի ավտոմեքենայի 1/2 բաժնեմասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ տրված Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ:

01.12.2010 թվականին Լյովա Նավասարդյանը ներկայացրել է հայցային չափը փոփոխելու մասին դիմում, որով պահանջել է անվավեր ճանաչել 02.11.2010 թվականի՝ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքի, Կոտայքի մարզի Ալափարս գյուղում գտնվող անշարժ գույքի, ինչպես նաև Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի, ՎԱՁ-2106 մակնիշի 05 ՕՕ 819 պետհամարանիշի ավտոմեքենայի 1/2 բաժնեմասի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ տրված Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ և որպես հետևանք անվավեր ճանաչել Երևան քաղաքի Մարգարյան փողոցի 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի նկատմամբ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 21.02.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.06.2011 թվականի որոշմամբ Լյովա Նավասարդյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, իսկ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ բեկանվել է Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 21.02.2011 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նոր քննության:

Վճռաբեկ դատարանի 10.08.2011 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.06.2011 թվականի որոշման դեմ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների ներկայացուցչի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ա.Սմբատյան) (այսուհետ՝ Դատարան) 25.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է: Մասնակի՝ Երևանի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի, Երևանի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում և ՀՀ Կոտայքի մարզի Ալափարս գյուղի 22-րդ փողոցի թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 մասերի նկատմամբ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ «Աջափնյակ» նոտարական տարածքի նոտար Ռոզա Առաքելյանի կողմից 02.11.2010 թվականին տրված, սեղանամատյանի 4304 համարի տակ գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր է ճանաչվել և որպես անվավերության հետևանք անվավեր է ճանաչվել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա Երևանի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի նկատմամբ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը: Քաղաքացիական գործի վարույթը՝ ՎԱՁ-2106 մակնիշի 05 ՕՕ 819 պետհամարանիշի ավտոմեքենայի 1/2 մասի նկատմամբ 02.11.2010 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճվել է հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.10.2012 թվականի որոշմամբ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.05.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նաիրա Նավասարդյանը՝ նաև որպես Վարդուհի Նավասարդյանի ներկայացուցիչ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Լյովա Նավասարդյանը:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ եկթակերը, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը և 52-րդ հոդվածի 2-րդ կետը, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.*

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 09.06.2011 թվականի որոշմամբ բավարարելով Լյովա Նավասարդյանի վերաքննիչ բողոքը և քաղաքացիական գործի քննությանը որպես երրորդ անձ մասնակից դարձնելով Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնին, ըստ էության կարևորել է գործով բազմակողմանի քննություն իրականացնելու, այդ թվում՝ վեճի առարկա հանդիսացող երեք անշարժ գույքերի ձեռքբերման միջոցները պարզելու անհրաժեշտությունը: Բացի այդ, նշված որոշմամբ ամբողջությամբ բեկանվել է Երևան քաղաքի Աջափնյայի և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության, հետևաբար նոր քննության ծավալը սահմանափակված չի եղել, և իրականացվել է գործի քննություն՝ ողջ ծավալով:

Վերաքննիչ բողոքի հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ Դատարանը գործն ամբողջ ծավալով քննելուց հետո հայցը բավարարելիս հաստատված էր համարել հանգամանքներ՝ հիմքում չդնելով գործում առկա և ոչ մի վերաբերելի ապացույց:

Վերաքննիչ դատարանը 26.10.2012 թվականի դատական ակտը կայացնելիս հանգել է սխալ հետևության, չի իրականացրել վերաքննիչ բողոքի պատշաճ քննություն, որի արդյունքում անտեսել է Վճռաբեկ դատարանի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի մեկնաբանությունները և խախտել է նույն հոդվածի միատեսակ կիրառելիության ապահովման պահանջը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.10.1012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վիճելի հասցեների անշարժ գույքերը թեև ձեռք են բերվել հանգուցյալ կնոջ՝ Միլվա Մարգարյանի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, սակայն դրանք չեն կարող համարվել որպես այդպիսին, քանի որ Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանը ձեռք է բերել Երևան քաղաքի Լալայանց 4 հասցեի դիմաց Հայաստանի Հանրապետությունից ստացված փոխհատուցման գումարով, որի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքը հանդիսացել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 24.09.2002 թվականի թիվ 2-1325 վճիռը, իսկ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքը և Կոտայքի մարզի Ալափարս գյուղում գտնվող անշարժ գույքը ձեռք է բերել եղբոր անգործունակ երեխաներին, որոնց խնամակալն է հանդիսանում ինքը, սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանի վաճառքից ստացված գումարով, որոնք նույնպես չեն կարող հանդիսանալ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույք և չեն կարող մտնել Միլվա Մարգարյանի ժառանգական գանգվածի մեջ:



Գտնում է, որ վճարել բողոքը գուրկ է իրավական հիմնավորումներից և ենթակա է մերժման, քանի որ վերաքննիչ դատարանը կայացրել է օրինական և հիմնավոր դատական ակտ, յուրաքանչյուր ապացույց գնահատել է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա:

**3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Համաձայն 10.03.1967 թվականին տրված թիվ 233000 ամուսնության վկայականի՝ Լյովա Նավասարդյանի և Սիլվա Մարգարյանի ամուսնությունը գրանցվել է 10.03.1967 թվականին (հատոր 1, գ.թ. 51):

2) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 24.09.2002 թվականի թիվ 2-1325 վճռով Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեում գտնվող, Լյովա Նավասարդյանի կողմից փաստացի օգտագործվող 80,3 քմ մակերեսով կառույցի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի հիմքով ճանաչվել է վերջինիս սեփականության իրավունքը, իսկ 179,1 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ օգտագործման իրավունքը (հատոր 1, գ.թ. 18):

3) Համաձայն ՀՀ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի 14.01.2011 թվականի թիվ 38/01-1210 գրության՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.10.2001 թվականի թիվ 950-Ն որոշման պահանջները, Լալայանց 4 հասցեի իրացման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի, որի անունից հանդես է եկել «Հյուսիսային պողոտա և կասկադ» ԾԻԳ ՊՈԱԿ-ը և նշված հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատեր Լյովա Նավասարդյանի և վերջինիս կնոջ՝ Սիլվա Մարգարյանի միջև 26.03.2004 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ Լալայանց 4 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 80,3 քմ մակերեսով շինության և 179,1 քմ մակերեսով օգտագործման իրավունքով պատկանող հողամասի դիմաց տրամադրվել է 51.173,79 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ փոխհատուցում (հատոր 1, գ.թ. 89):

4) 04.05.2004 թվականի նոտարական կարգով վավերացված առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Լյովա Նավասարդյանը գնել է Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանը, և վերջինիս անվամբ 12.05.2004 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1130416 վկայականը (հատոր 1, գ.թ. 25- 29):

5) Լյովա Նավասարդյանը Երևան քաղաքի Նոր Նորքի թաղապետի 06.12.2005 թվականի թիվ 295 և 26.12.2005 թվականի թիվ 314 որոշումներով ճանաչվել է համապատասխանաբար Ռուզաննա Նավասարդյանի և Գարեգին Նավասարդյանի խնամակալը (հատոր 1, գ.թ. 20, 22):

6) 09.12.2005 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Լյովա Նավասարդյանը գնել է Կոտայքի մարզի Ալափարս վ/տ-ում գտնվող 0,125 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասն ու 126,4 քմ մակերեսով բնակելի տունը, և 14.12.2005 թվականին վերջինիս անվամբ տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 0154477 վկայականը (հատոր 1, գ.թ. 30, 56):

7) Համաձայն ՀՀ Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի 24.03.2006 թվականի թիվ 24/04Ն-20 տեղեկանքի՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով Նոր Նորք համայնքի ղեկավարի թիվ 295, 06.12.2005 թվականի և թիվ 314, 26.12.2005 թվականի խնամակալության մասին որոշումները, հաշվի առնելով խնամարկյալների՝ Ռուզաննա և Գարեգին Նավասարդյանների շահերն

---

ու նրանց անվտանգության ապահովման կարևորությունը, չի առարկել, որ Լյովա Նավասարդյանը վաճառի Ռուզաննա և Գարեգին Նավասարդյաններին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանը՝ պայմանով, որ վերջինս չանտեսի իր խնամարկյալների շահերը և նրանց ապահովի առանձին բնակելի տարածքներով (հատոր 1, գ.թ. 21):

8) 13.10.2006 թվականին նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ Լյովա Նավասարդյանը, որը որպես խնամակալ հանդես է եկել Ռուզաննա Նավասարդյանի և Գարեգին Նավասարդյանի անունից, 13.800.000 ՀՀ դրամ գումարով վաճառել է վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանը (հատոր 3, գ.թ. 80):

9) 30.10.2006 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով Ջուլետա Գազարյանը և Խոսրով Գևորգյանը 9.000.000 ՀՀ դրամ գումարով Լյովա Նավասարդյանին են վաճառել Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող 30,0 քմ բնակելի տունն ու 0,03982 հա հողամասը, և 02.11.2006 թվականին վերջինիս անվամբ տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2166865 վկայականը (հատոր 1, գ.թ. 31-36):

10) Լյովա Նավասարդյանի կինը՝ Միլվա Մարգարյանը մահացել է 05.02.2010 թվականին (հատոր 1, գ.թ. 50):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք ամուսինների համարել կյանքի ընթացքում ձեռք բերված անշարժ գույքը նրանց է պատկանում ընդհանուր համարել սեփականության իրավունքով, եթե այդպիսի գույքի նկատմամբ իրավունքը ձեռք է բերվել դատարանի ակտիվ կամ մեկ այլ գույքի վաճառքից ստացված միջոցներով:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անհատական օգտագործման գույքը (հագուստը, կոշիկը և այլն), բացառությամբ թանկարժեք իրերի և պերճանքի առարկաների, եթե նույնիսկ այն ձեռք է բերվել ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր միջոցների հաշվին, համարվում է այն ամուսնու սեփականությունը, որն այդ գույքն օգտագործել է:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ամուսինների միջև կնքված համապատասխան պայմանագրի բացակայության դեպքում ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, անկախ նրանից, թե այն որ ամուսինն է ձեռք բերել, ձեռք է բերվել ընդհանուր թե ամուսիններից մեկին պատկանող միջոցներով, ստեղծվել է կամ պատրաստվել երկուսի, թե մեկի կողմից, ում անունով է ձևակերպված, միևնույնն է, հանդիսանում է ամուսինների համատեղ սեփականությունը (*տես Ռաֆայել Աբազյանը և Անժիկ Երիցյանն ընդդեմ Ռուբեն Աբազյանի և «Կենտրոն» նոտարական տարածքի նոտարի թիվ 3-415(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.06.2007 թվականի որոշումը*):

Վերը նշված հոդվածի իմաստով բացառություն է կազմում այն գույքը, որն ամուսիններից յուրաքանչյուրն ունեցել է մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը, անհատական օգտա-

գործման առարկաները, ինչպես նաև սեփականաշնորհմամբ ձեռք բերված գույքը (լինա Ռուզաննա Ծարություն ընդդեմ Գևորգ Սաղունյանի և այլոց թիվ ԵԱԲԳ/2304/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.06.2006 թվականի որոշումը):

Նշված դիրքորոշման համատեքստում անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 10.03.1967 թվականից 05.02.2010 թվականն ընկած ժամանակահատվածում ամուսիններ Լյովա Նավասարդյանի և Սիլվա Մարգարյանի ձեռք բերած գույքը, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանել է նրանց, անկախ նրանից ամուսիններից որ մեկի միջոցների հաշվին է ձեռք բերվել գույքը կամ ուն անվամբ է այն ձևակերպվել:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով յուրաքանչյուր անշարժ գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունքի ծագման փաստը գնահատելու համար անհրաժեշտ է առաջնորդվել վերը նշված կանոնակարգմամբ:

Այսպես՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 24.09.2002 թվականի թիվ 2-1325 վճռով Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեում գտնվող, Լյովա Նավասարդյանի կողմից փաստացի օգտագործվող 80,3 քմ մակերեսով կառույցի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի հիմքով ճանաչվել է վերջինիս սեփականության իրավունքը, իսկ 179,1 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ օգտագործման իրավունքը:

Համաձայն ՀՀ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի 14.01.2011 թվականի թիվ 38/01-1210 գրության՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.10.2001 թվականի թիվ 950-Ն որոշման պահանջները՝ Լալայանց 4 հասցեի իրացման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության, ի դեմս Երևանի քաղաքապետի, որի անունից հանդես է եկել «Հյուսիսային պողոտա և կասկադ» ԾԻԳ ՊՈԱԿ-ը և նշված հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատեր Լյովա Նավասարդյանի և վերջինիս կնոջ՝ Սիլվա Մարգարյանի միջև 26.03.2004 թվականին կնքվել է անշարժ գույքի առովանառքի պայմանագիր, որով Լալայանց 4 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 80,3 քմ մակերեսով շինության և 179,1 քմ մակերեսով օգտագործման իրավունքով պատկանող հողամասի դիմաց տրամադրվել է 51.173,79 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ փոխհատուցում:

04.05.2004 թվականին նոտարական կարգով վավերացված առովանառքի պայմանագրով Լյովա Նավասարդյանը գնել է Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանը, և վերջինիս անվամբ 12.05.2004 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1130416 վկայականը:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի կողմից նշված անշարժ գույքի մասով հայցի բավարարման հիմքում դրված այն պատճառաբանությունը, որ Երևանի Լալայանց 4 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ամուսինների՝ Լյովա Նավասարդյանի և Սիլվա Մարգարյանի սեփականության իրավունքի ճանաչման համար անհրաժեշտ էր, որպեսզի ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման պահանջ ներկայացված լիներ նաև Սիլվա Մարգարյանի կողմից, և դատական ակտով դատարանը հաստատված համարեր, որ Սիլվա Մարգարյանը նույնպես տաս տարի անընդմեջ, բացահայտ, բարեխիղճ և որպես սեփական գույք տիրապետել է վիճելի անշարժ գույքը: Դատարանը նշել է նաև, որ Երևանի Լալայանց 4 հասցեում գտնվող անշարժ գույքի փոխհատուցման դիմաց ստացված գումարով Լյովա Նավասարդյանը Վիկտոր և Ամալյա Ալեքյաններից 04.05.2004 թվականին կնքված անշարժ գույքի առովանառքի պայմանագրի հիման վրա ձեռք է բերել Երևանի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի 2 սենյականոց թիվ 43 բնակարանը: Ներկայացված հայցադիմումի պատասխանով Նաիրա և Վարդուհի Նավասարդյաններն

---

ընդունել և հաստատել են, որ Երևանի Մարզարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանը ձեռք է բերվել Երևանի Լալայանց 4 հասցեում գտնվող անշարժ գույքի դիմաց Լյովա Նավասարդյանին տրամադրված փոխհատուցման գումարով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեում գտնվող 80,3 քմ մակերեսով կառույցի նկատմամբ ձեռքբերման վաղեմության հիմքով Լյովա Նավասարդյանը սեփականության իրավունք է ձեռք բերել 24.09.2002 թվականի թիվ 2-1325 օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, այսինքն՝ Սիլվա Մարգարյանի հետ ամուսնության ընթացքում, և այն չի հանդիսանում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույք: Բացի այդ, Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում որպես վաճառողներ, այսինքն՝ գույքի սեփականատերեր, հանդես են եկել Լյովա Նավասարդյանը և Սիլվա Մարգարյանը:

Հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանը գնվել է Երևան քաղաքի Լալայանց թիվ 4 հասցեի անշարժ գույքի վաճառքից ստացված գումարով, թե ամուսինների այլ միջոցներով, բոլոր դեպքերում այն համարվում է համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք:

Վերաքննիչ դատարանը համաձայնել է նաև Դատարանի այն դիրքորոշմանը, որ Լյովա Նավասարդյանը, նպատակ ունենալով անգործունակ ճանաչված իր երկու խնամարկյալների համար գնել առանձին բնակարաններ, նախնական համաձայնության է եկել Կոտայքի մարզի Ալափարս գյուղի 22-րդ փողոցի թիվ 25 հասցեի սեփականատեր Թաթոս Դանիելյանի հետ անշարժ գույքի առուվաճառքի վերաբերյալ, վերջինիս վճարել է 1.000 ԱՄՆ դոլար, այնուհետև դիմել է Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ իր խնամարկյալներին պատկանող բնակարանը վաճառելու և նրանց համար երկու առանձին բնակարաններ ձեռք բերելու թույլտվություն ստանալու համար:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանության հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս առումով անհրաժեշտ է գործի փաստերը դիտարկել ժամանակագրական հաջորդականությամբ: Այսպես՝ Կոտայքի մարզի Ալափարս գյուղի 22-րդ փողոցի թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 0,125 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասն ու 126,4 քմ մակերեսով բնակելի տունը, Լյովա Նավասարդյանը ձեռք է բերել 09.12.2005 թվականին, այսինքն՝ ամուսնությունից հետո՝ մինչև Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնի 24.03.2006 թվականի թույլտվության տրամադրումը: Փաստերի դասավորվածության նման պարագայում, ինչպես նաև ամուսինների համատեղ սեփականության իրավական կարգավորման վերաբերյալ վերը նշված դիրքորոշումը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված անշարժ գույքի նկատմամբ չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված բացառությունները, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի ուժով այն հանդիսանում է համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված գույք:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող 30 քմ բնակելի տանն ու 0,03982 հա հողամասին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունքի ծագման հարցն անհրաժեշտ է դիտարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում, որի համաձայն՝ խնամարկյալ քաղաքացու եկամուտները՝ ներառյալ խնամարկյալին իր գույքի կառավարումից հասանելիք եկամուտները, բացառությամբ այն եկամուտների, որոնք խնամարկյալը կարող է տնօրինել ինքնուրույն, խնամակալը կամ հոգաբարձուն ծախսում են միայն ի շահ խնամարկյալի՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական

թույլտվությամբ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության՝ խնամակալն իրավունք չունի կնքել, իսկ հոգաբարձուն՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, բաժանել նրա գույքը կամ դրանից բաժիններ առանձնացնել, ինչպես նաև խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարք:

Նշված իրավադրույթն ըստ էության ամրագրում է խնամարկյալ քաղաքացու՝ անձամբ տնօրինման ոչ ենթակա գույքն ի շահ այլ անձի օտարելու արգելք: Ունենալով համապարտադիր (իմպերատիվ) ուժ՝ նշված դրույթը, որպես երաշխիք, ապահովում է խնամարկյալների գույքի նկատմամբ վերջիններիս իրավունքների պահպանումը՝ նախատեսելով երկու պայման՝ գույքի օտարումը բացառապես ի շահ խնամարկյալի և գույքի օտարման վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությունը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նշված հոդվածում օգտագործված «ի շահ» եզրույթը ենթադրում է գույքի օտարումից խնամարկյալի համար որոշակի բարիքների ստեղծում, որպիսին կարող է դրսևորվել ստացված դրամը խնամարկյալի կարիքների համար օգտագործելով, մեկ այլ համարժեք գույք ձեռք բերելով և այլն:

Համադրելով նշված մեկնաբանությունը գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքը թեև Լյովա Նավասարդյանը ձեռք է բերել Սիլվա Մարգարյանի հետ համատեղ ամուսնական կյանքի ընթացքում, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով չի կարող դիտվել որպես ամուսիններին համատեղ սեփականությամբ պատկանող գույք, քանի որ այն ձեռք չի բերվել ամուսիններից որևէ մեկի միջոցներով, ուստի բացակայում է այն նախապայմաններից մեկը, որն անհրաժեշտ է գույքի նկատմամբ ամուսինների համատեղ սեփականության իրավունքի ծագման փաստը հաստատելու համար: Նշված գույքը Լյովա Նավասարդյանը գնել է Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի 24.03.2006 թվականի թույլտվությունից հետո՝ իր խնամարկյալներ Ռուզաննա և Գարեգին Նավասարդյաններին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանի առուվաճառքի գումարով 30.10.2006 թվականին:

Այլ կերպ՝ 13.10.2006 թվականին վաճառելով Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35 բնակարանը և ձեռք բերելով Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում գտնվող անշարժ գույքը, Լյովա Նավասարդյանը գործել է ի շահ իր խնամարկյալների՝ ունենալով նաև գույքն օտարելու և նոր անշարժ գույք ձեռք բերելու վերաբերյալ Նոր Նորքի թաղապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի թույլտվությունը:

Վերոնշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը հանգել են ճիշտ հետևության և գտել, որ Երևան քաղաքի Ավան 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 22/1 հասցեում Լյովա Նավասարդյանի անվամբ սեփականության իրավունքով գրանցված անշարժ գույքը չի կարող համարվել ամուսինների համատեղ սեփականություն և Սիլվա Մարգարյանի մահվան պահին չէր կարող հանդիսանալ նրա ժառանգական զանգվածի մեջ մտնող գույք, քանի որ Լյովա Նավասարդյանի կողմից վերջինիս խնամարկյալներին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Գայի պողոտա 26-րդ շենքի թիվ 35

---

բնակարանը վաճառելուց հետո խնամակալի՝ Լյովա Նավասարդյանի գործողություններն ուղղված են եղել խնամարկյալների համար անշարժ գույք ձեռք բերելուն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.10.2012 թվականի որոշման՝ Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի և ՀՀ Կոտայքի մարզի Ալափարս գյուղի 22-րդ փողոցի թիվ 25 հասցեում գտնվող անշարժ գույքերի 1/2 մասերի նկատմամբ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ «Աջափնյակ» նոտարական տարածքի նոտար Ռոզա Առաքելյանի կողմից 02.11.2010 թվականին տրված, սեղանամատյանի 4304 համարի տակ գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա Երևան քաղաքի Մարգարյան 2-րդ նրբանցքի 5-րդ շենքի թիվ 43 բնակարանի նկատմամբ Նաիրա և Վարդուհի Նավասարդյանների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու մասով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 25.05.2012 թվականի վճիռը օրինական ուժի մեջ թողնելու մասը և այդ մասով այն փոփոխել. հայցը նշված մասով մերժել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.10.2012 թվականի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԱՎԴ-1/0276/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ-1/0276/02/11  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վոլոդյա Հայրապետյանի և նրա ներկայացուցիչ Համլետ Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.02.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Վոլոդյա Հայրապետյանի հայցի ընդդեմ Վանիկ, Արփինե, Գրետա, Անի Հայրապետյանների, Աննա Ֆաֆուրյանի՝ անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու և վտարելու պահանջների մասին, ինչպես նաև Վանիկ Հայրապետյանի, Աննա Ֆաֆուրյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Վոլոդյա Հայրապետյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Վոլոդյա Հայրապետյանը պահանջել է փոխհատուցմամբ դադարեցնել Աննա Ֆաֆուրյանի, Վանիկ, Արփինե, Անի, Գրետա Հայրապետյանների օգտագործման իրավունքը ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող ըստ ներկայացված հատակագծի՝ թիվ 8-13,8քմ, թիվ 4-14,5քմ և թիվ 9-7,9քմ միջանցքի նկատմամբ և տան կիսանկողային հարկից թիվ 1-23,0քմ սեղանկի նկատմամբ, ինչպես նաև Աննա Ֆաֆուրյանին, Վանիկ, Արփինե, Անի,

---

Գրեալ Հայրապետյաններին վտարել ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող ըստ ներկայացված հատակագծի՝ թիվ 8-13,8քմ, թիվ 4-14,5քմ և թիվ 9-7,9քմ միջանցքից, կիսանկողային հարկի թիվ 1-23,0քմ, թիվ 4-12,8քմ, թիվ 5-17,6քմ, թիվ 6-24քմ ոչ բնակելի մակերեսներից և 1395քմ տնամերձ հողամասից:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վանիկ Հայրապետյանը և Աննա Ֆաֆուրյանը պահանջել են ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իրենց սեփականության իրավունքը ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղի Խնկո-Ապրո փողոցի թիվ 22 (սախկինում 24) հասցեում գտնվող ըստ հատակագծի՝ թիվ 8-13,8քմ, թիվ 4-14,5քմ սենյակների, թիվ 9-7,9քմ միջանցքի, կիսանկողային հարկի թիվ 1-23,0քմ, թիվ 4-12,8քմ, թիվ 5-17,6քմ և թիվ 6-24քմ ոչ բնակելի մակերեսների նկատմամբ և նույն տարածքների մասով անվավեր ճանաչել Վոլոդյա Հայրապետյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 23.10.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.02.2013 թվականի որոշմամբ Վանիկ Հայրապետյանի և Աննա Ֆաֆուրյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Դատարանի 23.10.2012 թվականի վճռի՝ հայցը բավարարելու մասը և այդ մասով փոփոխվել՝ հայցը մերժվել է: Վճռի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վոլոդյա Հայրապետյանը և նրա ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Վանիկ Հայրապետյանը և Աննա Ֆաֆուրյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 130-132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 16.11.2005 թվականի վճռով հաստատված հանգամանք է, որ Վոլոդյա Հայրապետյանի սեփականության իրավունքն է ճանաչվել ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող տան, տնամերձ հողամասի և սեփականաշտորհված հողամասի 2/3-րդ բաժնի նկատմամբ, այն է՝ 1-ին հարկի **թիվ 4-14,5քմ**, թիվ 5-17,22քմ, թիվ 6-12,6քմ, թիվ 7-13,9քմ, **թիվ 8-13,80քմ**, **թիվ 9-7,90քմ** սենյակների, տան կիսանկողային հարկից թիվ 4-12,8քմ, թիվ 5-17,6 քմ, թիվ 6-24,0քմ, թիվ 1-23,0քմ ոչ բնակելի մակերեսների նկատմամբ, իսկ **թիվ 8-13,8քմ**, **թիվ 4-14,5քմ սենյակները և թիվ 9-7,9քմ** միջանցքը **թողնվել է Վանիկ Հայրապետյանի ընտանիքին օգտագործման իրավունքով**: Նշված մակերեսներից **թիվ 1-23,0քմ** մակերեսը թողնվել է կողմերին **համատեղ օգտագործման իրավունքով**: Ընդ որում, նշված վճռից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման, և 15.06.2006 թվականին Վոլոդյա և Վանիկ Հայրապետյաններին տրվել



է բաժնային սեփականության իրավունքով գրանցված թիվ 2225727 վկայականը, որով գրանցվել է նաև **Վանիկ Հայրապետյանի ընտանիքին օգտագործման իրավունքով հատկացված թիվ 8-13,80քմ, թիվ 4-14,50քմ սենյակները, թիվ 9-7,90քմ միջանցքը**, ինչպես նաև Վոլոդյա Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 1-ին հարկի կիսանկուղային հարկից **թիվ 1-23,00քմ սենյակը համատեղ օգտագործման** իրավունքով հատկացված լինելու փաստը: Հետևաբար, ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 16.11.2005 թվականի վճռով արդեն իսկ հստակ սահմանված մակերեսներով սենյակները և միջանցքն օգտագործման իրավունքով **Վանիկ Հայրապետյանի** ընտանիքին հատկացված լինելու և դրանից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկված լինելու պայմաններում բացակայում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանության անհրաժեշտությունը, որ «կողմերի բաժնեմասերը փաստացի առանձնացված չեն»:

Ավելին, Վերաքննիչ դատարանն օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքների առկայության պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով սահմանված կարգով բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը փոխհատուցում տրամադրելու միջոցով չդադարեցնելու պարագայում խախտել է սեփականատիրոջ՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սեփականության և արդար դատաբնության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 28.02.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 23.10.2012 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացվել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, համապատասխան իրավական նորմերի կիրառմամբ, հետևաբար բերված վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 16.11.2005 թվականի վճռով Վոլոդյա Հայրապետյանի հայրը և Վարդուհի Հայրապետյանի հայրը բավարարվել են մասնակիորեն, իսկ Վանիկ Հայրապետյանի հակընդդեմ հայրը բավարարվել է ամբողջությամբ: Վճռվել է ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող տան ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ՊԿ Վեդու տարածքային ստորաբաժանման կողմից 24.08.2001 թվականի Հայրապետ Հայրապետյանի, Մինա Հայրապետյանի, Վոլոդյա Հայրապետյանի և Վարդուհի Ղազարյանի անվամբ տրված թիվ 872486 համարի բնակելի տան և տնամերձ հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայականը և 15.11.2002 թվականի Հայրապետ Հայրապետյանի, Մինա Հայրապետյանի, Վոլոդյա Հայրապետյանի և Վարդուհի Ղազարյանի անվամբ տրված թիվ 855179 և թիվ 855178 համարի սեփականաշնորհված հողամասերի իրավունքի գրանցման վկայականները Վարդուհի Ղազարյանի մասով ճանաչել անվավեր և այդ տան, տնամերձ ու սեփականաշնորհված հողամասի սեփականատեր ճանաչել հանգուցյալ Հայրապետ Հայրապետյանին, հանգուցյալ Մինա Հայրապետյանին և Վոլոդյա Հայրապետյանին՝ յուրաքանչյուրին 1/3 մասի չափով, հանգուցյալ Մինա Հայրապետյանի մահվանից հետո

---

թողնված գույքի նկատմամբ ճանաչել Վանիկ, Վոլոդյա և Վարդուհի Հայրապետյանների ժառանգության իրավունքը և հաշվի առնելով, որ Վարդուհի Հայրապետյանի մասը չկան է, Վանիկ Հայրապետյանին ճանաչել նրա հասանելիք մասի սեփականատեր՝ Վանիկ Հայրապետյանից հոգուտ Վարդուհի Հայրապետյանի բռնազանձելով 67.000 ՀՀ դրամ: Հայրապետ Հայրապետյանի գույքի նկատմամբ ըստ կտակի ճանաչել Վոլոդյա և Վանիկ Հայրապետյանների ժառանգության իրավունքը՝ յուրաքանչյուրին 1/2 մասի չափով: Վոլոդյա Հայրապետյանին ճանաչել ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող տան, տնամերձ հողամասի և սեփականաշնորհված հողամասի 2/3 մասի՝ 1-ին հարկի **թիվ 4-14,5քմ**, թիվ 5-17,22քմ, թիվ 6-12,6քմ, թիվ 7-13,9քմ, **թիվ 8-13,80քմ**, **թիվ 9-7,90քմ** սենյակների սեփականատեր, իսկ Վանիկ Հայրապետյանին՝ **թիվ 3-29,64քմ** սենյակի, **թիվ 2** խոհանոցի, **թիվ 1** միջանցքի սեփականատեր: Տան **թիվ 8-13,8քմ**, **թիվ 4-14,5 քմ սենյակները և թիվ 9-7,9քմ** միջանցքը **թողնել Վանիկ Հայրապետյանի ընտանիքի օգտագործմանը**: Տան կիսանկողային հարկից **թիվ 4-12,8քմ**, **թիվ 5-17,6քմ**, **թիվ 6-24,0քմ**, **թիվ 1-23,0քմ** ոչ բնակելի մակերեսները **սեփականության իրավունքով հատկացնել Վոլոդյա Հայրապետյանին**, իսկ **թիվ 2-15,2քմ**, **թիվ 3-25,3քմ** մակերեսները, հավաքունն ու թոնրատունը սեփականության իրավունքով հատկացնել Վանիկ Հայրապետյանին: Նշված մակերեսներից **թիվ 1-23,0քմ** մակերեսը **թողնել կողմերի համատեղ օգտագործմանը**: Տնամերձ հողամասից՝ աջակողմյան մասից 1.395քմ մակերեսը սեփականության իրավունքով հատկացնել Վոլոդյա Հայրապետյանին, իսկ ձախակողմյան մասից 765քմ սեփականության իրավունքով հատկացնել Վանիկ Հայրապետյանին: Վարդուհի Լազարյանին իրավունք վերապահել տնամերձ հողամասից իրեն հասանելիք 90քմ մակերեսի և սեփականաշնորհված հողամասից իրեն հասանելիք մակերեսի դիմաց փոխհատուցում պահանջելու Վանիկ Հայրապետյանից (**հատոր 1-ին, գ.թ.8-10**):

2) 15.06.2006 թվականի սեփականության իրավունքի գրանցման **թիվ 2225727** վկայականի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղի ԽՆՆԿ Ապր փողոցի **թիվ 24** հասցեում գտնվող 0,2160հա հողմասը և 239,11քմ մակերեսով բնակելի տունը բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Վոլոդյա և Վանիկ Հայրապետյաններին: Միաժամանակ «Լրացուցիչ նշումներ և փոփոխություններ» բաժնում նշվել է, որ բնակելի տան կիսանկողից **թիվ 2** և **3** սենյակները, համապատասխանաբար՝ 15,20քմ և 25,35քմ մակերեսներով, 1-ին հարկից **թիվ 1**, **2** և **3** սենյակները՝ 4,80քմ, 6,80քմ և 29,64քմ մակերեսներով, ըստ հողամասի հատակագիծը բաժնի՝ **թիվ 5** և **6** շինությունները՝ թոնրատունը և հավաքունը, ինչպես նաև հատակագծում 1-2-3-4 եզրագծի կողմից 0,0765հա հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Վանիկ Հայրապետյանին: Սեփականության իրավունքով Վոլոդյա Հայրապետյանին պատկանող 1-ին հարկի **թիվ 8** և **4 սենյակները**, **թիվ 9 միջանցքը**, համապատասխանաբար **13,80քմ**, **14,50քմ** և **7,90քմ** մակերեսներով **թողնված է Վանիկ Հայրապետյանի ընտանիքի օգտագործմանը**: Կիսանկողային հարկից **թիվ 1 սենյակը՝ 23,00քմ** մակերեսով, **թողնված է համատեղ օգտագործման (հատոր 1-ին, գ.թ.17-20)**:

3) ՀՀ ԱԿ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 31.05.2012 թվականի փորձագետի **թիվ 11-3420** եզրակացության համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքում գտնվող բնակելի տան ըստ հատակագծի՝ **թիվ 8-13,8քմ**, **թիվ 4-14,5քմ** և **թիվ 9-7,9քմ** միջանցքի նկատմամբ, ինչպես նաև տան կիսանկողային հարկից **թիվ 1-23,0քմ** սենյակի նկատմամբ պատասխանողների փոխհատուցման գումարի չափը երեք տարիների ընթացքում գնահատման օրվա դրությամբ կարող է կազմել 713.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 73-82**):

4) Վանիկ Հայրապետյանի և Աննա Ֆաֆուրյանի ներկայացուցիչը 10.10.2012 թվականի դատական նիստի քննության ժամանակ հայտնել է, որ իրենք հողամասի առումով

ոչ մի պահանջ չունեն, այն Վոլոդյա Հայրապետյանի տիրապետման տակ է, և Վանիկ Հայրապետյանը որևէ տարածք չի զբաղեցրել (**հատոր 2-րդ, գ.թ.65**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բնակելի տարածության նկատմամբ անհարույց օգտագործման իրավունքը սեփականատիրոջ պահանջով փոխհարուցում տրամադրելու միջոցով դատական կարգով դադարեցնելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:*

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության, և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում՝ իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի, կամ մյուս տուրքերի, կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, **սեփականության անձեռնմխելիության**, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, **խախտված իրավունքների վերականգնման ապահովման**, **դրանց դատական պաշտպանության սկզբունքների** վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել

---

կամ տնօրինել այլ եղանակով:

Նշված դրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ սեփականատիրոջ իրավագործությունների (տիրապետում, օգտագործում, տնօրինում) ամբողջությունը կազմում է սեփականության իրավունքի բովանդակությունը և դրանց ամբողջությունն օրենքով պատկանում է սեփականատիրոջը՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի կրողի և սահմանում սեփականության իրավունքի իրականացման սահմանները, ինչն ապահովում է գույքի նկատմամբ սեփականատիրոջ լիակատար գերիշխանությունը՝ սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը:

Վերոգրյալով է պայմանավորված սեփականատիրոջ կողմից իր տիրապետության ներքո գտնվող գույքի նկատմամբ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ընդդեմ այն անձանց, որոնց գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը պատշաճորեն իրականացնելու իր օգտագործման, տնօրինման իրավագործությունը:

Տվյալ դեպքում սեփականատերն իրավասու է պահանջել վերացնելու (դադարեցնելու) իր սեփականատիրական իրավունքները լիարժեք իրականացնելու հետ կապված սահմանափակումները, ընդ որում, սահմանափակումները կարող են լինել ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, երբ սպորինի գործողությունների միջոցով խոչընդոտում են սեփականատիրոջը օգտագործել, տիրապետել և տնօրինել իր գույքը: Հատկանշական է, որ օրինական սահմանափակումների վերացման համար օրենսդիրը նախատեսել է սեփականատիրոջ կողմից փոխհատուցում վճարելու ռեժիմ:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դադարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում այդ իրավունքը կարող է սեփականատիրոջ պահանջով դադարեցվել դատական կարգով՝ սեփականատիրոջ կողմից փոխհատուցում տրամադրելու միջոցով:

Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետևյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց և սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից և ոչ ավելի 9 քառակուսի մետրից: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար և տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է օգտագործման իրավունքի ծագման և դադարման կարգը: Այն է՝ անձի բնակելի տարածության օգտագործման իրավունքը **ուրիշին սեփականության իրավունքով պատկանող** բնակելի տարածությունում **բնակվելու իրավունքն** է: Ընդ որում, **բնակելի տարածության օգտագործման իրավունքը ծագում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով այդ իրավունքի գրանցման պահից:**

Հատկանշական է, որ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել սեփականատիրոջը դատական կարգով պահանջելու դադարեցնելու բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը փոխհատուցում տրամադրելու միջոցով: Ընդ որում, բնակելի տարածության օգտագործման իրավունքը ենթակա է դադարեցման դատական կարգով, եթե բացակայում է օգտագործման իրավունք ունեցող անձի համաձայնությունն այն դադարեցնելու վերաբերյալ:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է փոխհատուցման հաշվարկման կարգը

**և ձևը, որի հիմնական էլեմենտներն են բնակելի մակերեսի չափը և բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց քանակը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Այս առումով Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Հերիքնազ Գևորգյանն ընդդեմ Ռոմ Ավագյանի, Տանյա Առաքելյանի* գործով կայացրած որոշմամբ արտահայտած իրավական այն դիրքորոշումը, որ օրինական ուժի մեջ մտած սկզբնական դատական ակտի նախադատելիությունը պայմանավորում է նոր կայացվելիք դատական ակտի բովանդակությունն այն մասով, որը վերաբերում է նախկինում քննված այլ գործով արդեն իսկ հաստատված փաստերին: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները, փաստերը հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականությունն ներմուծելու նման հանգամանքը, փաստերը նոր կայացվող դատական ակտում: Որպես կանոն՝ դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա: Հետևաբար, նախադատելիությունն օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս (յո՛ւն Հերիքնազ Գևորգյանն ընդդեմ Ռոմ Ավագյանի, Տանյա Առաքելյանի թիվ ԵԾԴ/0220/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 23-ի որոշումը):

Տվյալ դեպքում Դատարանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը վկայակոչելով և հայցը բավարարելով, հաստատված է համարել այն հանգամանքը, որ 2005 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Արարատի մարզի առաջին ստյանի դատարանը կայացրել է վճիռ, ըստ որի՝ Վոլոդյա Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի ըստ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վեդու SU-ի կողմից տրված թիվ 2225727 սեփականության իրավունքի գրանցման վկայականի անշարժ գույքի հատակագծի՝ **4 և 8 սենյակները, թիվ 9 միջանցքը և կիսանկուղային հարկից թիվ 1 սենյակը թողնվել է սույն գործով պատասխանող Վանիկ Հայրապետյանի ընտանիքի օգտագործմանը:** Վերը նշված վճիռը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ: Պատասխանողի առարկություններն անհիմն են, քանի որ 2005 թվականի նոյեմբերի 16-ի դատարանի վճռով հստակ առանձնացված է հայցվորին և պատասխանողին պատկանող անշարժ գույքը և այդ վճռի հիման վրա կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում: ՀՀ ԱՆ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 11-3420 մասնագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքում գտնվող բնակելի տան ըստ հատակագծի՝ թիվ 8-13,8քմ, թիվ 4-14,5քմ և թիվ 9-7,9քմ միջանցքի նկատմամբ, ինչպես նաև տան կիսանկուղային հարկից թիվ

---

1-23,0քմ սենյակի նկատմամբ պատասխանողների փոխհատուցման գումարի չափը երեք տարիների ընթացքում գնահատման օրվա դրությամբ կարող է կազմել 713.000 ՀՀ դրամ, որը Վոլոդյա Հայրապետյանը պարտավորվել է վճարել հակընդդեմ հայցվորներին:

Վերաքննիչ դատարանը, որոշում կայացնելիս վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածը, պատճառաբանել է, որ ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 16.11.2005 թվականի վճռով քաղաքացիական գործի շրջանակներում ի թիվս այլ պահանջների քննարկման առարկա է հանդիսացել նաև ժառանգության զանգվածից բաժնեմասն առանձնացնելու պահանջը, սակայն Դատարանը ճանաչել է միայն կողմերի սեփականության իրավունքն իրենց ունեցած բաժնեմասերին համամասնորեն, իսկ բաժնեմասերը փաստացի չի առանձնացվել վերը նշված վճռով: Գործում առկա 15.06.2006 թվականին տրված թիվ 2225727 սեփականության իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2005 թվականի նոյեմբերի 16-ի վճռի հիման վրա կատարվել է իրավունքների պետական գրանցում, ըստ որի՝ Արարատի մարզի Արարատ գյուղի Խնկո Ապր 24 հասցեի բնակելի տունը հանդիսանում է Վոլոդյա և Վանիկ Հայրապետյանների բաժնային սեփականությունը: Նշվածից հետևում է, որ կողմերի **բաժնեմասերը փաստացի առանձնացված չեն**, ավելին, վերը նշված օրինական ուժի մեջ մտած վճռով վիճելի մակերեսների նկատմամբ թեև ճանաչվել է Վոլոդյա Հայրապետյանի սեփականության իրավունքը, այնուամենայնիվ այն չի առանձնացվել Վանիկ Հայրապետյանի բաժնեմասից և թողնված է վերջինիս օգտագործմանը: Ավելին, Վանիկ Հայրապետյանը վիճահարույց հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ հանդիսանում է բաժնային սեփականատեր: Տվյալ դեպքում Դատարանի վերոգրյալ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված և կրկին անգամ ապացուցման կարիք չունեցող փաստական հանգամանքներով ուղղակիորեն հաստատվում է, որ **Վոլոդյա Հայրապետյանի և Վանիկ Հայրապետյանի միջև բաժնային սեփականություն համարվող Արարատի մարզի Արարատ գյուղի Խնկո Ապր 24 հասցեի անշարժ գույքից բաժնեմասերը փաստացի առանձնացված չեն, հետևաբար օրենսդրի կողմից սահմանված նշված կարգավորումից ելնելով չեն կարող կիրառվել նշված իրավական նորմի պահանջները**: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կողմերի բաժնեմասերը փաստացի առանձնացված չլինելու պարագայում Դատարանը, բողոք բերած անձանց փոխհատուցում տրամադրելով և վտարելով զբաղեցրած տարածքներից, խախտել է նշված իրավանորմի պահանջները, քանի որ ինչպես նշվել է, վեճի առարկա տունը բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Վոլոդյա և Վանիկ Հայրապետյաններին:

Վերոնշյալ իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ ՀՀ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 16.11.2005 թվականի վճռով հաստատված է և սույն գործի շրջանակներում կրկին ապացուցման ենթակա չէ այն հանգամանքը, որ ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող տան, տնամերձ հողամասի և սեփականաշնորհված հողամասի 2/3-րդ բաժնի նկատմամբ ճանաչվել է Վոլոդյա Հայրապետյանի սեփականության իրավունքը, մասնավորապես՝ 1-ին հարկի **թիվ 4-14,5քմ**, թիվ 5-17,22քմ, թիվ 6-12,6քմ, թիվ 7-13,9քմ, **թիվ 8-13,80քմ**, **թիվ 9-7,90քմ** սենյակների, տան կիսանկողային հարկից **թիվ 4-12,8քմ**, թիվ 5-17,6 քմ, թիվ 6-24,0քմ, թիվ 1-23,0քմ ոչ բնակելի մակերեսների նկատմամբ, որոնցից **թիվ 8-13,8քմ**, **թիվ 4-14,5 քմ սենյակները և թիվ 7,9 քմ** միջանցքը **թողնվել է Վանիկ Հայրապետյանի ընտանիքի**

**օգտագործմանը, իսկ թիվ 1-23,0քմ մակերեսը թողնվել է Վանիկ և Վոլոդյա Հայրապետյանների համատեղ օգտագործմանը:**

Վերոհիշյալ վճռից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման և Վոլոդյա և Վանիկ Հայրապետյաններին 15.06.2006 թվականին տրվել է բաժնային սեփականության իրավունքը գրանցված լինելու մասին թիվ 2225727 վկայականը, որի «Լրացուցիչ նշումներ և փոփոխություններ» բաժնում նշվել է, որ Վոլոդյա Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 1-ին հարկի **թիվ 8-13,80քմ, 4-14,50քմ սենյակների, թիվ 9-7,90քմ միջանցքի և թիվ 1-23,00քմ սենյակի** նկատմամբ գրանցված է **Վանիկ Հայրապետյանի ընտանիքի օգտագործման իրավունքը:**

Հաշվի առնելով սույն գործի փաստերի և բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը դատական կարգով փոխհատուցում տրամադրելու միջոցով դադարեցնելու իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենքով սահմանված կարգով գրանցված **բնակելի տարածության օգտագործման իրավունքը** դատական կարգով փոխհատուցում տրամադրելու միջոցով դադարեցնելը **չի կարող պայմանավորված լինել սեփականության իրավունքում բաժինը որոշված լինելու կամ գույքից բաժինն առանձնացված լինելու հանգամանքով հատկապես այն պարագայում, երբ բնակելի տարածության օգտագործման իրավունքը գրանցված է կոնկրետ մակերեսների նկատմամբ:**

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի իրավական կարգավորումը, արձանագրում է, որ տվյալ պարագայում Վերաքննիչ դատարանի կողմից չի պահպանվել **սեփականատիրոջ գույքի անարգել օգտագործման իրավունքի և բնակելի տարածության օգտագործման** իրավունքի միջև հավասարակշռությունը:

Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Վոլոդյա Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ **օրենքով սահմանված կարգով գրանցված է Վանիկ Հայրապետյանի և ընտանիքի անդամների բնակելի տարածության օգտագործման իրավունքը և այն էլ կոնկրետ մակերեսներով սենյակների նկատմամբ:** Հետևաբար վերջիններիս բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը փոխհատուցում տրամադրելու միջոցով դադարեցնելը որևէ ձևով չի կարող կախվածության մեջ լինել սեփականության իրավունքում սեփականատերերի բաժիններն առանձնացնելու կամ այդ բաժիններին համապատասխան գույքը բնեղենով առանձնացնելու հանգամանքի հետ հատկապես այն պարագայում, երբ օրենսդիրը հստակ սահմանել է փոխհատուցման չափը հաշվարկելու կարգը և պայմանները:

Նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են սեփականատիրոջ կողմից իր սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունքների գերակայության պայմաններում բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը փոխհատուցում տրամադրելու միջոցով դադարեցնելու ինստիտուտը կարգավորող նորմերի պահանջները:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքի հիմքը վերաբերում է Վերաքննիչ դատարանի դատական ակտի՝ հայցը մերժելու մասին, հետևաբար դատական ակտն ենթակա է բեկանման այդ մասով:



---

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.02.2013 թվականի որոշման՝ հայցը մերժելու մասը և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 23.10.2012 թվականի վճռին: Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Վանիկ Հայրապետյանից, Արփիին Հայրապետյանից և Աննա Ֆաֆուրյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և չվճարված պետական տուրք:

Վանիկ Հայրապետյանից, Արփիին Հայրապետյանից և Աննա Ֆաֆուրյանից հօգուտ Վոլոդյա Հայրապետյանի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1010/02/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1010/02/12**  
Նախագահող դատավոր՝ **Ա. Թումանյան**  
Դատավորներ՝ **Լ. Գրիգորյան**  
**Գ. Մատինյան**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Բանկ**) ընդդեմ Գագիկ Սիմոնյանի, Լիլիթ Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Գագիկ Սիմոնյանի, Լիլիթ Սարգսյանի ընդդեմ **Բանկի**՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ **Բանկը** պահանջել է Գագիկ Սիմոնյանից և Լիլիթ Սարգսյանից համապարտության կարգով բռնագանձել 03.05.2012 թվականի դրությամբ առկա պարտքը՝ 95.952 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով, որից վարկային գծի պայմանագրով պարտավորություններ՝ 7.675,5 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ վարկային գիծ՝ 5.832,59 ԱՄՆ դոլար (ներառյալ՝ ժամկետանց վարկային գիծ՝ 3.032,90 ԱՄՆ դոլար), տոկոսագումար՝ 621,76 ԱՄՆ դոլար, ժամկետանց վարկային գծի տույժ և տուգանք՝ 956,62 ԱՄՆ դոլար, ժամկետանց տոկոսագումարի տույժ և տուգանք՝ 264,53 ԱՄՆ դոլար, վարկային պայմանագրով պարտավորություններ՝ 88.276,58 ԱՄՆ դոլար, այդ թվում՝ վարկ՝ 75.067,59 ԱՄՆ դոլար (ներառյալ՝ ժամկետանց վարկ՝ 6.947,10 ԱՄՆ

---

դուլար), տոկոսագումար՝ 7.604,91 ԱՄՆ դոլար, ժամկետանց վարկի տույժ և տուգանք՝ 2.361,74 ԱՄՆ դոլար, ժամկետանց տոկոսագումարի տույժ և տուգանք՝ 3.242,34 ԱՄՆ դոլար, վճարված պետական տուրքի գումարները, ինչպես նաև բռնագանձումը տարածել գրավադրած Երևանի Դեմփրճյան փողոց 43-րդ շենքի թիվ 123 բնակարանի վրա և պատասխանողներին սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի վրա:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Գագիկ Սիմոնյանը և Լիլիթ Սարգսյանը պահանջել են գրավի առարկան ընդունման-հանձնման ակտով Բանկին հանձնելու փաստի հիման վրա Բանկի գործողությունները ճանաչել պայմանագրի 5.1 կետով նախատեսված արտադատական կարգով բռնագանձման տարածման իրավունքի իրականացում 30.06.2011 թվականի դրությամբ և պարտավորեցնել Բանկին ավարտել գրավի առարկայի արտադատական կարգով բռնագանձման տարածման մասով պայմանագրի 5.1 կետով նախատեսված գործընթացը՝ գրավի առարկայի նկատմամբ հիմնական պարտավորության դիմաց հիմնական պարտավորության արժեքով Բանկի սեփականությունը գրանցելով:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 28.12.2012 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.03.2013 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Գագիկ Սիմոնյանը և Լիլիթ Սարգսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 238-րդ, 249-րդ, 251-րդ, 253-րդ, 254-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1ին կետի, 53-րդ, 130րդ, 131-րդ հոդվածների պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանում է հեղուկալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ պատճառաբանել է, որ գրավի առարկան գրավառուի և գրավատուի փոխադարձ գրավոր համաձայնությամբ գրավառուի տիրապետմանը հանձնելը բռնագանձում տարածելու գործընթաց սկսել է՝ չուղարկելով բռնագանձման ծանուցում, այնինչ գրավադրված գույքը գրավառուի տիրապետմանը հանձնելու գործողությունը ՀՀ գործող որևէ օրենսդրությամբ պարզապես հնարավոր չէ որակել բռնագանձման գործընթացի մեկնարկ, քանի որ նման եզրահանգումը չափազանց սուբյեկտիվ և վտանգավոր է, մասնավորապես, բանկային համակարգի և հատկապես ֆինանսական շուկայի այն մասնակիցների համար, որոնք իրենց նկատմամբ պարտավորություններն ապահովում են՝ ապավինելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ կանոնակարգված գրավի ինստիտուտին:

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ եզրահանգել է նաև, որ գույքը բանկի տիրապետման ներքո վերցնելով՝ Բանկն օգտվել է գրավի պայմանագրի 5.1.1. կետով նախատեսված իր իրավունքից, և գրավի առարկան հիմնական պարտավորության դիմաց հիմնական պարտավորության արժեքով վերցրել է ի սեփականություն: Նման եզրահանգումն անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել իրա-

վիճակը և չի նկատել նույնիսկ, որ գրավի առարկան Բանկի տիրապետմանը հանձնելը գրավի պայմանագրից ածանցյալ, բայց և առանձին գործարք է՝ կնքված կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պայմանագրի 5.1.1. կետով սահմանված արտադատական կարգով բռնագանձման իրավունքից օգտվելու համար նման ակտի կնքման անհրաժեշտությունը բացակայում էր, ու 5.1.1. կետից օգտվելու համար Բանկի կողմից որևէ ջանք գործադրելու անհրաժեշտություն չկար: Գրավի առարկան ի տիրապետումն ձեռք բերելը նպատակ է հետապնդել պահպանել այն հնարավոր վնասներից:

Վերաքննիչ դատարանը որոշմամբ նշել է նաև, որ Բանկը, գրավի առարկան իր տիրապետման տակ վերցնելով, պատասխանողներին զրկել է գույքն իրացնելու և ստացված գումարը ստանձնած պարտավորությունների մարմանն ուղղելու հնարավորությունից: Նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ գույքի գրավադրման պայմանագրի կնքմամբ և անշարժ գույքի դեպքում գրավի իրավունքը գրանցելով՝ արդեն իսկ սեփականատերն իր կամքով և իր կողմից տրված համաձայնությամբ «զրկված» է եղել այդ գույքն առանց գրավատուի համաձայնության իրացնելու հնարավորությունից:

Բացի այդ, թե՛ Դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի կողմից ընդհանրապես քննարկման առարկա չի հանդիսացել փաստաբանական ծառայության մատուցման պայմանագիրը:

Վերաքննիչ դատարանը, թերի քննելով գործը և լիարժեք ու ամբողջական լուծում չտալով կողմերի միջև առկա վեճին, ակնհայտորեն չի գնահատել գործում եղած ապացույցները: Ավելին, հանձնման ակտով գույքը Բանկի կողմից ի տիրապետումն ընդունելը որակելով որպես գրավադրված գույքի արտադատական կարգով բռնագանձում՝ Դատարանն ակնհայտորեն անտեսել է ինչպես այդ ակտն ու դրա բովանդակությունը, այնպես էլ գործում եղած այլ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու անհրաժեշտությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը**

Վերաքննիչ դատարանը որոշումը կայացրել է գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում և վերը նշված փաստական հանգամանքների հետազոտմամբ և դրանց վերաբերելի օրենքների կիրառմամբ կայացրել է հիմնավորված որոշում:

Բացի այդ, այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին թե՛ Դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հիմնված են եղել ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ինչի վերաբերյալ դատարանների կողմից կատարվել են համապատասխան տրամաբանական հետևություններ:

Տվյալ դեպքում պատասխանողները դիմել են Դատարան իրենց խախտված իրավունքները վերականգնելու պահանջով, և թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը գտել են, որ Բանկի գործողությունները հակասել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և կողմերի միջև կնքված պայմանագրերի դրույթներին, և կայացրել են հիմնավոր դատական ակտեր՝ ելնելով մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության սկզբունքներից:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը՝**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

---

1) 30.04.2010 թվականի թիվ ՀԱՎ 100432 վարկային պայմանագրով Բանկը համավարկառու Գագիկ Սիմոնյանին և Լիլիթ Սարգսյանին տրամադրել է 80.600 ԱՄՆ դոլարի վարկ՝ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով, 120 ամիս մարման ժամկետով (**հատոր 1-ին, գ.թ. 30-34**):

2) 30.04.2010 թվականին թիվ ՔՎԳ-100432-1 քարտով վարկային գծի տրամադրման պայմանագրով Բանկը Գագիկ Սիմոնյանին տրամադրել է 8.400 ԱՄՆ դոլարի վարկ՝ տարեկան 8 տոկոս տոկոսադրույքով, 36 ամիս մարման ժամկետով մինչև 30.04.2013 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 26-29**):

3) 30.04.2010 թվականի թիվ Ե 100432 երաշխավորության պայմանագրով վարկային գծի տրամադրման պայմանագրով սահմանված պարտավորություններն ապահովվել են Լիլիթ Սարգսյանի երաշխավորությամբ, որով վերջինս պարտավորվել է պատասխանատվություն կրել Բանկի նկատմամբ Գագիկ Սիմոնյանի կողմից նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 35-36**):

4) 30.04.2010 թվականի թիվ ՀԳ 100432 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրով, որպես վարկային և վարկային գծի պայմանագրերով սահմանված պարտավորությունների ապահովման միջոց, գրավադրել է Երևանի Կենտրոն համայնքի Դեմիրճյան փողոցի 40-րդ շենքի թիվ 123 բնակարանը՝ 73,4քմ ընդհանուր մակերեսով (**հատոր 1-ին, գ.թ. 20-24**):

5) 30.04.2010 թվականի թիվ ՀԳ100432 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի 5-րդ կետով սահմանվել է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պայմանները: Նշված պայմանագրի 5.1 կետով Գագիկ Սիմոնյանը տվել է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ իր կողմից հիմնական պարտավորությամբ և կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում գրավի առարկայի վրա Բանկն իրավունք ունի բռնագանձում տարածել արտադատական կարգով (**հատոր 1-ին, գ.թ. 22**):

6) «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի աշխատակից Սմբատ Անտոնյանի և Նարինե Հարությունյանի միջև 30.06.2011 թվականին կազմված ակտի համաձայն՝ «Սույնով Նարինե Բաբկենի Հարությունյանը հաստատում է առ այն, որ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին գրավադրված ՀՀ, ք. Երևան, Դեմիրճյան 40 շենք, բն. 123 հասցեում գտնվող ամբողջ շարժական գույքը հանձնված է իրեն՝ Նարինե Բաբկենի Հարությունյանին:

Սույնով Նարինե Բաբկենի Հարությունյանը և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն՝ ի դեմս բանկի աշխատակից Սմբատ Անտոնյանի, հավաստում և արձանագրում են, որ նշված գույքի կապակցությամբ միմյանց նկատմամբ որևէ պարտք և/կամ պահանջ չունեն, և տվյալ գույքը պատշաճ կարգով և վիճակում հանձնված է Նարինե Բաբկենի Հարությունյանին՝ ամբողջությամբ, ինչի համար «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն որևէ պատասխանատվություն չի կրում:

Սույնով Նարինե Բաբկենի Հարությունյանը և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն՝ ի դեմս բանկի աշխատակից Սմբատ Անտոնյանի, արձանագրում և հաստատում են, որ ՀՀ, ք. Երևան, Դեմիրճյան 40 շենք, բն. 123 հասցեում գտնվող անշարժ գույքը 30.06.2011 թվականի դրությամբ հանձնված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի տիրապետմանը՝ ի դեմս Սմբատ Անտոնյանի, ամբողջությամբ դատարկ վիճակում, և նույն օրվա դրությամբ այնտեղ որևէ գույք առկա չէ»:

7) 30.03.2012 թվականին դադարեցվել է վարկային գծի պայմանագրով սահմանված տոկոսների և տույժերի հաշվարկը, որի դրությամբ պարտքն ընդհանուր գումարով կազմել է 95.952,08 ԱՄՆ դոլար (**հատոր 1-ին, գ.թ. 18-19**):

#### **4. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռարեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռարեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է գրավառուի պահանջի բավարարման նպատակով առանց դատարանի դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում փարածելու կարգ, արդյո՞ք Բանկն իրավունք ունի իր պահանջի բավարարման նպատակով դիմել դատարան գրավի առարկայի վրա բռնագանձում փարածելու համար:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավառուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով **իրավունք ունի** առանց դատարանի դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե **դա նախատեսված է գրավի պայմանագրով**, կամ առկա է գրավառուի և գրավառուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

Նույն օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետում նշված համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գրավառուի պահանջները բավարարելու համար օրենսդիրը նախատեսել է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու երկու եղանակ՝ առանց դատարանի դիմելու և դատարանի վճռի հիման վրա:

Վճռարեկ դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարվում են դատարանի վճռով գրավառուի և գրավառուի միջև գրավոր համաձայնության բացակայության դեպքում, այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ նման համաձայնության առկայության դեպքում գրավառուն իրավունք չունի օգտվելու դատական կարգով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իրավունքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրա-

---

վունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

Նույն օրենսգրքի 14-րդ հոդվածը նախատեսել է քաղաքացիական իրավունքների պաշտպանության տարբեր եղանակներ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավադրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել՝ գրավառուի պահանջները բավարարելու համար: Ընդ որում, գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով առանց դատարան դիմելու իրավունք ունի գրավի վրա բռնագանձում տարածելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով կամ գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնությամբ: Բացի այդ, Բանկն իրավունք ունի նաև պահանջ ներկայացնել դատական կարգով գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու համար: Տվյալ դեպքում գրավառուի իրավունքն է ընտրելու իրավունքի պաշտպանության եղանակներից մեկը:

Վճռաբեկ դատարանն անդրադարձել է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու հարցին և արձանագրել, որ նույնիսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով անձին իր իրավունքների պաշտպանության լրացուցիչ եղանակ ընձեռելու պայմաններում վերջինս իր հայեցողությամբ է իրականացնում իր իրավունքների պաշտպանությունը: Ուստի նյութական իրավունքի որևէ նորմ (այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը) չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ, իրավական այլ ակտերով և միջազգային պայմանագրերով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող դրույթ (յուն․ ըստ «Արդշինհնվեսարանկ» ՓԲԸ-ի հայցի ընդդեմ՝ Սպարտակ, Էդգար, Էրիկ, Նավասարդ Մկրտչյանների, Նահրա Արուստամյանի՝ վարկային պայմանագրով պարտքը բռնագանձելու, բռնագանձումը գրավի առարկայի և այլ գույքի վրա տարածելու, վարկային պայմանագրով նախատեսված տրոհումները հաշվեգրելու պահանջների մասին թիվ 3-678(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):

Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ Բանկի և պատասխանողների միջև կնքված պայմանագիրը նախատեսում է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու կարգ, սակայն դա հանդիսանում է ոչ թե Բանկի պարտականությունը, այլ նրա իրավունքը, հետևաբար վարկառուն չի կարող պարտադրել Բանկին, թե վերջինս օրենքով նախատեսված պաշտպանության որ եղանակն ընտրի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 52 հոդվածով նախատեսված դեպքերի:

Վերը նշված նորմերից հետևում է, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և

օրյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին և արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տես՝ Աշխարհ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն, Անահիտ Խաչատրյանների, Քանաքեռավանի գյուղապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղվարդի Կարաթախյան ստորաբաժանման՝ Քանաքեռավանի շրջխորհրդի գործկոմի 31.01.1995 թվականի թիվ 1 որոշումը, սեփականության իրավունքի պետական գրանցումը, գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու և համասեփականարեր ճանաչելու պահանջների մասին, և Արմեն Խաչատրյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Թեհմինե Խաչատրյանի՝ բնակության իրավունքը դադարեցնելու և բնակելի փարածությունից վտարելու պահանջների մասին թիվ ԿԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը):*

Սույն գործով հայցը բավարարելու հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է այն հանգամանքը, որ «Պատասխանողների կողմից պայմանագրային պարտավորությունները պատշաճ չեն կատարվել, որից ելնելով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պահանջով գրավի առարկա Երևան քաղաքի Դեմիրճյան փողոցի 40 շենքի թիվ 123 բնակարանը 30.06.2011 թվականին հանձնվել է հայցվոր կազմակերպության տիրապետմանը համապատասխան կարգով կազմված ակտի հիման վրա: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետով և անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրով նախատեսված ծանուցումն առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու մասին Գրավատուին չի ուղարկվել, և դրա բացակայությամբ սկսվել է վերը նշված գործընթացը», բացի այդ, «հայցվոր կազմակերպությունը, անշարժ գույքը վերցնելով իր տիրապետման ներքո, գույքի նկատմամբ որևէ հետագա գործողություն չկատարելով, օգտվել է անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված իր իրավունքից՝ գրավի առարկան Հիմնական պարտավորության դիմաց Հիմնական պարտավորության արժեքով վերցրել է ի սեփականություն», «հայցվոր կազմակերպությունը 30.06.2011 թվականին արդեն իսկ օգտվելով անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի 5.1 կետով նախատեսված իր իրավունքից՝ սկսել է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործընթացը, որը նույն պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված հնարավորությամբ, բնակարանն իր տիրապետման տակ վերցնելով, ըստ էության ավարտել է, սակայն 17.04.2012 թվականին այլ իրավունքից օգտվելու վերաբերյալ պատասխանողներին ուղարկել է պահանջագիր, այնուհետև դիմել է դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ գրավադրված գույքի արտադատական բռնագանձումը Բանկի իրավունքն է և ոչ թե պարտականությունը, որի իրականացման գործընթացը կանոնակարգված է ՀՀ օրենսդրությամբ: Այսինքն՝ բռնագանձման ծանուցում չուղարկելը և գրավի առարկան պարզապես Բանկի տիրապետմանը վերցնելն ինքնանպատակ չպետք է լինի, իսկ տվյալ դեպքում գրավի առարկան հանձնման ակտով ի տիրապետումն ձեռք է բերվել միայն գրավի

---

առարկան հնարավոր վնասվածքներից պահպանելու նպատակով: Բացի այդ, Բանկի ներկայացուցչի և ոչ սեփականատիրոջ միջև կնքված **ակտը դեռևս չի նշանակում, որ բռնագանձման գործընթացը կարելի է համարել սկսված:**

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ ըստ էության, տեղի է ունեցել գրավադրված գույքի հանձնում Բանկին, իսկ գրավի առարկան Բանկին հանձնելու հիմքով գրավատուն, ըստ էության, գրկվել է սեփականության իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունից, մասնավորապես, դրա տարր հանդիսացող օգտագործման և տնօրինման հնարավորությունից, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգմամբ անտեսվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները, մասնավորապես, գույքի գրավադրման պայմանագրի կնքմամբ և անշարժ գույքի դեպքում գրավի իրավունքը գրանցելով՝ արդեն իսկ սեփականատերն իր կամքով և իր կողմից տրված համաձայնությամբ գրկված էր այդ գույքն առանց գրավատուի համաձայնության իրացնելու իրավունքից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի և գրավի պայմանագրի 2.2.1. կետի հիման վրա: Բացի այդ, գրավի առարկան Բանկի տիրապետմանը հանձնելու համաձայնությունը ձեռք է բերվել երկկողմանի և գրավատուների կամքի ազատ արտահայտման պայմաններում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՍԴՅ/0010/02/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ՍԴՅ/0010/02/12  
Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Գ. Մատինյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Սարգիս Հովհաննիսյանի և Վարդան  
Բարսեղյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի  
20.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սերժիկ Մկրտչյանի ընդդեմ Սարգիս  
Հովհաննիսյանի և Վարդան Բարսեղյանի՝ բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիրն  
անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սերժիկ Մկրտչյանը պահանջել է անվավեր ճանաչել 22.04.2009  
թվականին Վարդան Բարսեղյանի և Սարգիս Հովհաննիսյանի ու իր միջև կնքված  
բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ու կիրառել  
անվավերության հետևանքներ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի  
(դատավոր՝ Մ. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 17.04.2012 թվականի վճռով հայցը  
մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
20.09.2012 թվականի որոշմամբ Սերժիկ Մկրտչյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է,  
Դատարանի 17.04.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

---

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սարգիս Հովհաննիսյանը և Վարդան Բարսեղյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սերժիկ Մկրտչյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի նյութերը, որի արդյունքում անտեսել է, որ Պայմանագրի առարկան «Դրնգան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող գույքն է, այլ ոչ թե Ընկերության մասնակիցների ունեցած բաժնեմասը, և որ նշված Պայմանագիրը կնքվել է կամավոր, Պայմանագրի կողմերը դրա վերաբերյալ որևէ առարկություն չեն ունեցել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 23.04.2009 թվականին Վարդան Բարսեղյանի և Սերժիկ Մկրտչյանի միջև կնքված բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր 1) ու նույն թվականին Սարգիս Հովհաննիսյանի և Սերժիկ Մկրտչյանի միջև կնքված բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր 2) չէին կարող հանդիսանալ Պայմանագրի փոփոխություն, քանի որ Պայմանագիր 1-ը և Պայմանագիր 2-ն այդ մասին որևէ նշում չեն պարունակում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ի տարբերություն Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի՝ Պայմանագիրը որևէ նշում չի պարունակում այն մասին, որ այդ Պայմանագրից բխող փոփոխությունները ենթակա են պետական գրանցման իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում, որից ևս հետևում է, որ Պայմանագրի առարկան Ընկերության գույքն է, իսկ Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի առարկան՝ մասնակիցների բաժնեմասը:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտել է գործի նյութերը, անդրադառնալով գործում առկա ապացույցներին՝ դրանք գնահատել է, ինչպես նաև անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածին՝ հիմնավորելով դրանում նշված անվավերության հիմքերի բացակայությունը, նշել է, թե իբր Դատարանը չի իրականացրել պատշաճ քննություն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Սերժիկ Մկրտչյանը չի ապացուցել իր վկայակոչած փաստն այն մասին, որ Պայմանագիրը կնքել է խաբեության, բռնության կամ սպառնալիքի ազդեցության ներքո:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ և 6-րդ հոդվածները, 218-րդ հոդվածի 2-րդ կետը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը Սարգիս Հովհաննիսյանին և Վարդան Բարսեղյանին պատշաճ չի ծանուցել գործի քննության ժամանակի և վայրի մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2012 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 17.04.2012 թվականի վճռին:

**2.1. Վճարել քողորի պատասխանի հիմնավորումները**

Վճարել քողորում նշված այն հիմքը, որ Սարգիս Հովհաննիսյանը և Վարդան Բարսեղյանը պատշաճ ձևով չեն ծանուցվել դատական նիստի ժամանակի ու վայրի մասին, անհիմն է:

Վերաքննիչ դատարանն իրականացրել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, որի արդյունքում բավարարել է վերաքննիչ քողորը:

Պայմանագիրը կնքվել է խաբեության ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ և ծանր հանգամանքների բերումով:

**3. Վճարել քողորի քննության համար նշանակություն ունեցող վիաստերը**

Վճարել քողորի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ վիաստերը՝

1) Սարգիս Հովհաննիսյանի և Վարդան Բարսեղյանի (մի կողմից) ու Սերժիկ Մկրտչյանի (մյուս կողմից) միջև 22.04.2009 թվականին կնքվել է Պայմանագիր, որի համաձայն՝ Սարգիս Հովհաննիսյանը և Վարդան Բարսեղյանը Սերժիկ Մկրտչյանին են օտարել Ընկերությունում իրենց ունեցած 50-ական տոկոս բաժնեմասերը, իսկ Սերժիկ Մկրտչյանը պարտավորվել է դրանց դիմաց վճարել 74.400.000 ՀՀ դրամ գումար: Նշված Պայմանագիրը կնքվել է գրավոր և ստորագրվել Պայմանագիրը կնքած անձանց կողմից (հատոր 1-ին, գ. թ. 4):

2) ի կատարումն Պայմանագրով ստանձնած պարտավորության՝ Սերժիկ Մկրտչյանը 28.04.2009 թվականին 37.064.150-ական ՀՀ դրամ գումար է փոխանցել «Արմավիսբանկ» ՓԲԸ-ում Սարգիս Հովհաննիսյանի և Վարդան Բարսեղյանի ունեցած հաշվեհամարներին (հատոր 1-ին, գ.թ. 32 և 33):

3) Ընկերության մասնակից Վարդան Բարսեղյանի և Սերժիկ Մկրտչյանի միջև 23.04.2009 թվականին կնքվել է Պայմանագիր 1-ը, որի համաձայն՝ Վարդան Բարսեղյանը Սերժիկ Մկրտչյանին է վաճառել Ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած 50 տոկոս բաժնեմասը, իսկ Սերժիկ Մկրտչյանը պարտավորվել է դրա դիմաց վճարել 25.000 ՀՀ դրամ գումար: Պայմանագիր 1-ը կնքվել է գրավոր և ստորագրվել գործարք կնքած անձանց կողմից (հատոր 1-ին, գ. թ. 27):

4) Ընկերության մասնակից Սարգիս Հովհաննիսյանի և Սերժիկ Մկրտչյանի միջև 23.04.2009 թվականին կնքվել է Պայմանագիր 2-ը, որի համաձայն՝ Սարգիս Հովհաննիսյանը Սերժիկ Մկրտչյանին է վաճառել Ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած 50 տոկոս բաժնեմասը, իսկ Սերժիկ Մկրտչյանը պարտավորվել է դրա դիմաց վճարել 25.000 ՀՀ դրամ գումար: Պայմանագիր 2-ը կնքվել է գրավոր և ստորագրվել գործարք կնքած անձանց կողմից (հատոր 1-ին, գ. թ. 28):

5) Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 13-րդ կետերի համաձայն՝ Սերժիկ Մկրտչյանին հանձնարարվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Գորիսի տարածքային բաժնում իրականացնել նշված պայմանագրերից բխող փոփոխությունների պետական գրանցման հետ կապված գործառնությունները (հատոր 1-ին, գ.թ. 27 և 28):

6) 27.04.2009 թվականին Ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ գրանցվել է Սերժիկ Մկրտչյանի սեփականության իրավունքը, և նրան տրվել է թիվ 030955 վկայագիրը (հատոր 1-ին, գ. թ. 95):

7) Սերժիկ Մկրտչյանը հայցադիմումը Դատարան է ներկայացրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետի վկայակոչմամբ՝ առանց այդ հիմքը հաստատող հանգամանքները նշելու: Սերժիկ Մկրտչյանն այդ հանգամանքները չի նշել նաև գործի քննության ժամանակ, ինչպես նաև վերաքննիչ քողորը ներկայացնելիս:

8) Վերաքննիչ դատարանը վերաքննիչ քողորը քննել է 07.09.2012 թվականի

---

Ժամը 12:20-ին նշանակված դատական նիստում: Վարդան Բարսեղյանը և Սարգիս Հովհաննիսյանը ծանուցվել են 07.09.2012 թվականի ժամը 12:20-ին Երևան քաղաքի Գ. Նժդեհի 23 հասցեի 1-ին հարկի թիվ 104 դահլիճում կայանալիք դատական նիստի մասին: Ծանուցագիրն ուղարկվել է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ: Վարդան Բարսեղյանը և Սարգիս Հովհաննիսյանը ծանուցագրերն ստացել են, համապատասխանաբար, 19.08.2012 թվականին և 20.08.2012 թվականին (հատոր 2-րդ, գ. թ. 73, 76-79):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի հիմքերի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործարքների անվավերության պահանջների քննության ժամանակ դատարանի կողմից հայցապահանջի շրջանակներում գործի քննությունն սպառնալիք համար անհրաժեշտ պայմանների պահպանման, ինչպես նաև կողմերի պարզաձ ծանուցման լինելու հարցերին:*

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն **հայցի** կամ դիմումի հիման վրա: Իսկ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է **հայցը** լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Այսինքն՝ վերը նշված հոդվածների իմաստով դատարանը պարտավոր է՝

- քաղաքացիական գործը հարուցել միմիայն **համապատասխան հայցի** կամ դիմումի հիման վրա,

- քաղաքացիական գործը քննել միմիայն այդ գործով ներկայացված հայցապահանջների շրջանակում (*տես Լուսինե Մարտոյանն ընդդեմ Առլեն Պետրոսյանի թիվ ԿԴ3/0099/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.10.2010 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր սպացույց գնահատում է գործում եղած բոլոր սպացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր սպացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման

վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (*տես Անժելյա Ղազարյան և մյուսներն ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի և այլոց թիվ 3-1843/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սերժիկ Մկրտչյանը, խնդրելով անվավեր ճանաչել Պայմանագիրը, որպես պահանջի փաստական հիմք Դատարանում վկայակոչել է «այն կնքելուց հետո Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի առկայության պայմաններում, ինչպես նաև Պայմանագիրն իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում գրանցված չլինելու հիմքով այն անվավեր դատնալու» հանգամանքները, իսկ որպես պահանջի իրավական հիմք վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը, 304-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 313-րդ հոդվածի 2-րդ կետը:

Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է այն, որ դատաքննությամբ հայցվոր Սերժիկ Մկրտչյանի կողմից հայտնած այն պատճառաբանությունը, որ իր և պատասխանողների միջև 22.04.2009 թվականին կնքված բաժնեմասերի առուվաճառքի պայմանագիրը գրանցված չէ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում, հետևաբար այն պետք է ճանաչել անվավեր, չի կարող հայցի բավարարման հիմք հանդիսանալ՝ նկատի ունենալով, որ պատասխանողները 22.04.2009 թվականին կնքված պայմանագրով հայցվորին են վաճառել ընկերության գույքը, իսկ այլ՝ 2009 թվականի պայմանագրերով նաև կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասերը, որոնց հիմքերով էլ հայցվոր Սերժիկ Մկրտչյանը ձեռք է բերել ընկերության գույքը, 100 տոկոս բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը, որն էլ գրանցվել է թե՛ Ընկերության նոր խմբագրությամբ հաստատված 23.06.2009 թվականի կանոնադրությամբ և թե՛ Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասերի նկատմամբ սեփականության իրավունքի թիվ 030955 վկայագրով: Դատարանը նշել է նաև, որ ինչ վերաբերում է որպես հայցի իրավական հիմք հայցվորի վկայակոչած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի, 304-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 313-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին, ապա նշված դրույթները հայցը բավարարելու հիմք չեն կարող հանդիսանալ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածը վերաբերում է գործարքի հասկացությանը, 304-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը վերաբերում են գործարքի անվավերության հետևանքներին, իսկ 313-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթը վերաբերում է խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կնքված գործարքներին, որը չի համապատասխանում հայցապահանջի բովանդակությանը, և հայցվորի կողմից չի հիմնավորվել գործարքն անվավեր ճանաչելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայությունը:

Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարելիս, անդրադառնալով Դատարանի վերոնշյալ դիրքորոշմանը, գտել է, որ Դատարանի այդ դիրքորոշումը գործով կատարված թերի քննության արդյունք է, քանի որ պարզ չէ, թե ինչն է պատճառ հանդիսացել, որ կողմերը մեկ օրվա տարբերությամբ կնքել են միևնույն անվանումով պայմանագրեր՝ որպես պայմանագրի առարկա նշելով Ընկերության բաժնեմասերը, սակայն ըստ էության մի դեպքում պայմանագրի առարկա են հանդիսացել Ընկերության բաժնեմասերը, մեկ այլ դեպքում՝ Ընկերության գույքը: Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ նման դիրքորոշման

---

գալու համար Դատարանն առնվազն պետք է նշեր, թե ինչն է խանգարել կողմերին պայմանագրի առարկան հստակ նշելու համար: Իսկ այն փաստարկները, որոնցով Դատարանը հիմնավորել է, որ 22.04.2009 թվականին կնքված պայմանագիրը վերաբերում է Ընկերության գույքի վաճառքին, Վերաքննիչ դատարանը համարել է անբավարար: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտել է, որ սույն գործով Դատարանը չի կատարել ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, ուստի գործի նոր քննության ծավալ է համարում հայցվորի կողմից վիճարկվող պայմանագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի դիսպոզիցիայով սահմանված կարգով կնքված լինելու հարցի պարզաբանման ուղղությամբ պատշաճ քննության իրականացումը:

Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությունը գնահատելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն որոշմամբ առաջադրված իրավական հարցադրմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ գլխի 2-րդ պարագրաֆը կանոնակարգում է գործարքների անվավերությունը:

Օրենսդիրը մի դեպքում նախատեսել է գործարքի անվավերության ընդհանուր հիմք՝ օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդված), այլ դեպքերում նախանշել է կոնկրետ հիմքեր, որոնք հանգեցնում են գործարքի անվավերության (տես, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-315-րդ հոդվածները):

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նյութական իրավունքը հստակ նախատեսել է այն հանգամանքները՝ իրավաբանական փաստերը, որոնք, գործարքի անվավերության պահանջ ներկայացված լինելու դեպքում, կարող են կազմել հայցի փաստական հիմքը և դրանց շրջանակներում դատարանը կարող է որոշել ապացուցման առարկան:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքն անմիջականորեն չի սահմանում **հայցի փաստական և իրավական** հիմքերի տարբերակիչ հատկանիշները, այնուամենայնիվ, այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ նորմերից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի իրավական հիմքը կազմված է այն իրավական նորմերից, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ հայցվորը, բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (*տես՝ Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՃԴ/0473/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ կանոնները գործարքների անվավերության նկատմամբ կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գործարքների անվավերության դեպքում հայցի հիմքի և առարկայի որոշման համար էական նշանակություն ունի ոչ միայն փաստական հանգամանքը, այլև այն իրավական հիմքը, որի հիման վրա հայցվորը ցանկանում է գործարքն անվավեր ճանաչել: Մասնավորապես, եթե հայցվորը փաստական հանգամանքները նշելուց հետո վկայակոչել է նաև այն իրավական հիմքը, որի հիման վրա վերջինիս կարծիքով գործարքն անհրաժեշտ է անվավեր ճանաչել, ապա հայցի հիմքը որոշվում է փաստական հանգամանքների և կիրառման ենթակա նյութական

իրավունքի նորմի համադրության հիման վրա:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Սերժիկ Մկրտչյանը, ներկայացնելով սույն գործի հարուցման հիմք հայցադիմումը, որում որպես իր հայցապահանջի իրավական հիմք վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետը, պարտավոր էր հայցադիմումում նշել այդ հոդվածից բխող այն հանգամանքները, որոնց վրա հիմնված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետով ներկայացված հայցապահանջը:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերը նշվածը, այդ թվում նաև այն, որ Սերժիկ Մկրտչյանը Դատարանում չի վկայակոչել Պայմանագիրը ՀՀ **քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ կետից բխող** որևէ հիմքով անվավեր ճանաչելու հանգամանք, իսկ Դատարանի կողմից չէր կարող քննություն իրականացվել չվկայակոչված (չնշված) հիմքի շուրջ, Դատարանի 17.04.2012 թվականի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու իր 20.09.2012 թվականի որոշման հիմքում դրել է նաև այն, որ Դատարանը հայցը մերժել է, սակայն հայցվորի կողմից ներկայացված ՀՀ **քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածով սահմանված անվավերության հիմքերի առկայության վերաբերյալ** չի իրականացրել պատշաճ քննություն:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորը, հայցի հիմքում դնելով որոշակի հանգամանքներ (փաստական հիմք) և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդվածը (իրավական հիմք), նախ որևէ կերպ չի հիմնավորել այդ հիմքի առկայությունը, իսկ վերջինիս վկայակոչած հանգամանքները և դրանք հիմնավորող ապացույցները սույն գործով հայցի բավարարման համար նշանակություն չունեն, քանի որ օրենսդիրն այդ հանգամանքների հետ չի կապում գործարքի անվավերություն:

Վերոնշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում բողոքի սույն հիմքը:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով **տեղեկացվում են** դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամի և վայրի մասին գործին մասնակցող անձանց **տեղեկանալու իրավունքը** և դատարանի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն (*տես Սարգսիս Մանուկյանն ընդդեմ Արմեն Առաքելյանի և մյուսների թիվ 08-1442 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*):

Սարգսիս Մկրտչյանը և Վարդան Բարսեղյանը, խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2012 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 17.04.2012 թվականի վճիռն, վճռաբեկ բողոքի հիմքում դրել են նաև այն, որ իրենք Վերաքննիչ դատարանի կողմից որևէ ծանուցում չեն ստացել, տեղյակ չեն եղել տվյալ քաղաքացիական գործով դատաքննության անցկացման մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի նշված հիմքն անհիմն

---

է, քանի որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննել է 07.09.2012 թվականի ժամը 12:20-ին նշանակված դատական նիստում, որի ժամանակի և վայրի մասին Վարդան Բարսեղյանն ու Սարգիս Հովհաննիսյանը ծանուցվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ նրանց ուղարկված դատական ծանուցագրով, որը նրանցից Վարդան Բարսեղյանը ստացել է 19.08.2012 թվականին, իսկ Սարգիս Հովհաննիսյանը՝ 20.08.2012 թվականին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 17.04.2012 թվականի վճռին:

2. Մերժիկ Մկրտչյանից հոգուտ Վարդան Բարսեղյանի և Սարգիս Հովհաննիսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես Վարդան Բարսեղյանի և Սարգիս Հովհաննիսյանի կողմից վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴՅ/0144/02/12  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴՅ/0144/02/12

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Տ. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արա Նահապետյանի ներկայացուցիչ Նաիրի Բաղդասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Գագիկ Հարությունյանի հայցի ընդդեմ Արա Նահապետյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գագիկ Հարությունյանը պահանջել է բռնագանձել Արա Նահապետյանից 1.100.000 ՀՀ դրամ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տուկոսները՝ սկսած 28.08.2009 թվականից մինչև պարտավորության փաստացի դադարման օրը, ինչպես նաև 22.000 ՀՀ դրամ պետական տուրքը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 20.12.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.04.2013 թվականի որոշմամբ Արա Նահապետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արա Նահապետյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր և կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը, «բացառիկ դեպք» է դիտել հայցային վաղեմության ընթացքում հայցվորի «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» ախտորոշմամբ հոգեկան հիվանդությամբ տառապելը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Գագիկ Հարությունյանը «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» ախտորոշմամբ հոգեկան հիվանդությամբ տառապել է դեռևս 1997 թվականից, և ինչպես 2008 թվականից հետո, այնպես էլ կոնկրետ հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում ծանր հիվանդ լինելու վերաբերյալ որևէ թույլատրելի ապացույց գործում առկա չէ, հետևաբար Գագիկ Հարությունյանի կողմից հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները հարգելի չեն:

Ավելին, Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ Գագիկ Հարությունյանը ինչպես հայցադիմումով, այնպես էլ դատարան ուղղած գրություններով նշել է, որ բազմիցս պահանջել է Արա Նահապետյանին վերադարձնելու պարտքը, այսինքն՝ Գագիկ Հարությունյանը հիշողության կորուստ չի ունեցել, և նրա հիվանդությունը կրել է ժամակավոր բնույթ, այլ ոչ թե չընդհատվող բնույթ:

Բացի այդ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված տեղեկանքները, որոնք հիմք են թռչակավորման համար, չեն կարող թույլատրելի ապացույց համարվել Գագիկ Հարությունյանի ծանր հիվանդության փաստը հաստատելու համար: Ընդ որում, Գագիկ Հարությունյանի հիվանդության վերաբերյալ լիարժեք տեղեկություն կազմելու և այն որպես ծանր որակելու համար անհրաժեշտ է մասնագիտական կարծիք, որը բացակայում է սույն քաղաքացիական գործում:

Բացի այդ, ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ Գագիկ Հարությունյանը ոչ հայցով, ոչ դատաքննության ընթացքում չի պնդել իր հիվանդության ծանր լինելը, իր գործողությունների վրա ազդելը և չի ապացուցել իր ծանր հիվանդության պատճառով իր վարքը կառավարել չկարողանալու, անհաղթահարելի ուժի ազդեցության տակ գտնվելու փաստը, որպիսի փաստի ապացուցման պարտականությունները ստանձնել են ստորադաս դատարանները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Դատարանը վճիռ կայացնելիս հիմք է ընդունել Գագիկ Հարությունյանի հիվանդության վերաբերյալ փաստաթուղթը, որը հայերեն չէ, հետևաբար նշված ապացույցը ձեռք է բերվել օրենքի խախտմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.04.2013 թվականի որոշումը և քաղաքացիական գործի վարույթը կարճել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 07.04.2009 թվականի ստացականով Գագիկ Հարությունյանն Արա Նահապետյան-

նին տրամադրել է 1.100.000 ՀՀ դրամ՝ 27.08.2009 թվականին վերադարձնելու պայմանով (հատոր 1-ին, գ.թ.7):

2) 10.09.2012 թվականին Գագիկ Հարությունյանը դիմել է դատարան (հատոր 1-ին, գ.թ.6):

3) 14.09.2012 թվականի միջնորդությամբ Արա Նահապետյանը խնդրել է կիրառել հայցային վաղեմություն և կայացնել վճիռ՝ հայցը մերժելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 11-12):

4) ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Ավանի հոգեբուժական կլինիկայի 20.12.2007 թվականի գրության համաձայն՝ Գագիկ Հարությունյանը խրոնիկական հոգեկան հիվանդությամբ տառապում է 1997 թվականից: Բազմիցս բուժվել է հոգեբուժական հիվանդանոցներում՝ ՀԲԿ Ավանի կլինիկայում 1997 թվականին, ՀԲԿ Նորքի կլինիկայում՝ 16.06.1998 թվականից մինչև 07.09.1998 թվականը, 25.04.2001 թվականից մինչև 10.05.2001 թվականը և ՀԲԿ Նուբարաշենի կլինիկայում՝ 27.08.2001 թվականից մինչև 20.09.2001 թվականը: Վերջին անգամ ստացիոնար բուժման մեջ է եղել ՀԲԿ Նուբարաշենի կլինիկայում 01.10.2002 թվականից մինչև 21.10.2002 թվականը: Դուրս է գրվել «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» աշխտորոշմամբ: Գտնվում է Վայքի հոգեբույժի հսկողության տակ, ստանում է պահպանողական բուժում՝ հարուսարիդոլ, տրիֆտազին, ազալեպտին, լոռազոպամ:... (հատոր 1-ին, գ.թ.51):

5) ՀՀ առողջապահության նախարարության ՀԲԿ «Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա» ՓԲԸ-ի 01.06.2008 թվականի թիվ 39 (1051/37530) քաղվածի համաձայն՝ Գագիկ Հարությունյանի հիվանդության ժամկետի սկիզբ է նշվել 1997 թվականը, ստացիոնար բուժման է անցել 08.05.2008 թվականից, դուրս է գրվել 01.06.2008 թվականին՝ տեղամասային հոգեբույժի ակտիվ հսկողության տակ՝ պահպանողական բուժմամբ: Ըստ ամբողջական ախտորոշման՝ Գագիկ Հարությունյանի մոտ առկա է «շիզոֆրենիա, պարանոիդ ձև, գառանցական համախտանիշ» հիվանդություն, բուժման արդյունքում հիվանդի վիճակը լավացել է, դուրս է եկել փսիխոտիկ վիճակից, գառանցական համախտանիշները կորցրել են իրենց արդիականությունը՝ կապված հոգեվիճակի լավացմամբ (հատոր 1-ին, գ.թ. 42):

6) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Վայոց ձորի մարզի բաժանմունքի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ Գագիկ Հարությունյանն ունի 2-րդ խմբի հաշմանդամություն (հատոր 1-ին, գ.թ. 43-49):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ հայցվորի անձի հետ կապված հանգամանքները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի իմաստով որպես բացառիկ դեպք գնահատելու և այդ հիմքով հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու առանձնահատկություններին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք

---

է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Այս առումով Վճռաբեկ դատարանը վերահաստատում է Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի գործով կայացրած որոշմամբ արտահայտած իրավական այն դիրքորոշումը, որ վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը: Այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լինել իր իրավունքի խախտման մասին: Հատկանշական է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածի համապատասխան դրույթով դատարանին հնարավորություն է ընձեռել հարգելի ճանաչել հայցային վաղեմության ժամկետի բացթողումը բացառիկ դեպքերում: Ընդ որում, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության միայն այն հանգամանքների պայմաններում, երբ բացառիկ դեպքը կապված է հայցվորի անձի հետ, այն է՝ հայցվորի ծանր հիվանդությունը, անօգնական վիճակը, անգրագիտությունը և այլն: Ավելին, հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե բացթողման պատճառները տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում, իսկ եթե հայցային վաղեմության ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից, ապա վաղեմության ժամկետի ընթացքում (*յո՛ւնս Ռազմիկ Դարբինյանի հայցն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի ապրիլի 02-ի որոշումը*):

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ «հայցային վաղեմության ժամկետի վերականգնում» եզրույթը նշանակում է ոչ թե հայցային վաղեմության ժամկետի հոսքի վերսկսում, այլ անձի խախտված իրավունքների պաշտպանության տրամադրում՝ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի առկայության դեպքում:

Հայցային վաղեմության ժամկետի վերականգնումը կիրառելի է որպես բացառիկ միջոց, և եթե առկա են մի շարք հանգամանքներ: Մախ և առաջ՝ հարգելի համարելու պատճառները պետք է կապված լինեն հայցվորի անձի հետ: Բոլոր այն հանգամանքները, որոնք կապված են այլ անձանց հետ և թեկուզ իրականում խոչընդոտել են հայցվորի՝ իր

իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն, չեն կարող համարվել հարգելի:

Երկրորդ՝ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք: Ման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքների բնույթով, որոնք օրենսդիրը համարել է հարգելի ճանաչելու հիմք: Դրանք բոլորն էլ բնորոշ են ֆիզիկական անձանց:

Երրորդ՝ հարգելի ճանաչելու համար հիմք հանդիսացող հանգամանքները պետք է լինեն այնպիսին, որ գրկեն անձին դատարան դիմելու հնարավորությունից: Ընդ որում, նշված շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձն ի վիճակի չլինելով դատարան դիմել անձամբ՝ ունեցել է ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորություն:

Չորրորդ՝ վերը նշված հոդվածի հիշատակված դրույթում ամրագրված հանգամանքները պետք է տեղի ունենան հայցային վաղեմության վերջին վեց ամիսների ընթացքում և տևեն մինչև ժամկետի ավարտը: Այլ կերպ՝ եթե հարգելի հանգամանքներն ի հայտ են եկել վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, սակայն վերացել են մինչև ժամկետի ավարտը և անձն ունեցել է հայց ներկայացնելու ժամանակ, սակայն բաց է թողել այն, ուրեմն բացթողումը հարգելի համարվել չի կարող:

Վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ որպես ապացուցման առարկա կազմող փաստեր, ենթակա են գնահատման ապացուցման քաղաքացիադատավարական կանոններին համապատասխան:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածում ամրագրված հանգամանքների բնույթը պարզելու հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հիվանդության ծանր լինելը, անօգնական վիճակում գտնվելը, անգրագիտությունը և այլն, ենթակա են պարզման յուրաքանչյուր կոնկրետ գործով: Քանի որ սույն գործով վիճարկվում է նշված հանգամանքներից միայն ծանր հիվանդության առկայությունը, Վճռաբեկ դատարանը հետագա պատճառաբանություններում անդրադառնում է միայն այդ հանգամանքին՝ հիմք ընդունելով վերը նշված կանոնները:

Վերաքննիչ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ ԱԾ ՀԲԿ «Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա» ՓԲԸ-ի 01.06.2008 թվականի թիվ 39 /1051/37530/ քաղվածքը, ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Վայոց ձորի մարզի բաժանմունքի տեղեկանքները, ՀՀ ԱԾ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Ավանի հոգեբուժական կլինիկայի 20.12.2007 թվականի գրությունը, համաձայնել է Դատարանի այն եզրահանգմանը, որ Գագիկ Հարությունյանը «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» ախտորոշմամբ հոգեկան հիվանդությամբ տառապում է դեռևս 1997 թվականից և մինչ օրս ստանում է համապատասխան բուժում, և որ տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածը: Վերաքննիչ դատարանը նշել է, որ այս դեպքում առկա է բացառիկ դեպք, և հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը նշված հիվանդության հիմքով հարգելի ճանաչելը հիշատակված հոդվածի համատեքստում է և բխում է դրանով սահմանված պահանջներից: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել բողոքաբերների այն փաստարկերը, որ «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ տառապելու մասին հետևությունն անելու համար անհրաժեշտ է առնվազն փորձագիտական եզրակացություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գագիկ Հարությունյանը խրոնիկական հոգեկան հիվանդությամբ տառապել է 1997 թվականից և բուժվել է հոգեբուժական հիվանդանոցներում՝ վերջին անգամ ստացիոնար բուժման մեջ է գտնվել 08.05.2008 թվականից և դուրս է գրվել 01.06.2008 թվականին: Ըստ ամբողջական ախտորոշման՝ Գագիկ Հարությունյանի մոտ առկա է «շիզոֆրենիա, պարանոիդ ձև, գառանցական համախտանիշ» հիվանդություն, բուժման արդյունքում հիվանդի վիճակը լավացել է,

---

դուրս է եկել փսիխոտիկ վիճակից, գառանցական համախտանիշները կորցրել են իրենց արդիականությունը՝ կապված հոգեվիճակի լավացմամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Վայոց ձորի մարզի բաժանմունքի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝ Գագիկ Հարությունյանը 2-րդ խմբի հաշմանդամ է:

Սույն գործով անվիճելի է այն փաստը, որ Գագիկ Հարությունյանն իր խախտված իրավունքի մասին իմացել է 28.08.2009 թվականին, սակայն իրավունքի պաշտպանության նպատակով՝ դատարան է դիմել 10.09.2012 թվականին, այսինքն՝ բաց է թողել իրավունքի պաշտպանության համար սահմանված հայցային վաղեմության ժամանակահատվածը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիվանդության ծանր լինելու հանգամանքի վերաբերյալ եզրահանգումները կարող էին հիմնված լինել բացառապես թույլատրելի ապացույցների գնահատման վրա: Վերը նշված ապացույցներն ինքնին թույլատրելի են հիվանդության առկայության փաստը հաստատված համարելու համար, սակայն հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար ստորադաս դատարանների կողմից պետք է գնահատման առարկա դարձվեին և պարզվեին սույն գործի համար էական նշանակություն ունեցող հետևյալ հանգամանքները.

- «շիզոֆրենիա, պարանոիդ ձև, գառանցական համախտանիշ» հիվանդության ծանր լինելու հանգամանքը, այսինքն՝ այն, որ այդ հիվանդությունը հայցվորի վրա ունեցել է այնպիսի ազդեցություն, որ վերջինիս գրկել է նույնիսկ ներկայացուցչի միջոցով դատական պաշտպանության դիմելու հնարավորությունից,

- նշված հիվանդության՝ հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամիսների՝ 28.02.2012 թվականից 28.08.2012 թվականն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած լինելու և շարունակվելու հանգամանքը:

Մինչդեռ, սույն գործում առկա ապացույցներով գործի համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ հանգամանքները չեն հիմնավորվում: Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի և 47-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, գտնում է՝ վերոնշյալ փաստերից առաջինը կարող է պարզվել փորձագետի եզրակացությամբ՝ որպես թույլատրելի ապացույց: Ընդ որում, այդ եզրակացությամբ պարզման ենթակա հարցերի շրջանակը պետք է լինի այնպիսին, որ դատարանին հնարավորություն տա հանգելու հետևության այն մասին, որ հիվանդությունը խոչընդոտել է անձին ձեռնամուխ լինելու իր իրավունքների դատական պաշտպանությանը, հետևաբար այն ծանր հիվանդություն է: Փորձաքննություն նշանակելու վերաբերյալ եզրահանգում անելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նախկինում ձևավորած դիրքորոշումը (*ի թիվս այլոց* *յոեն՝ Ռազմիկ Սարգսյանը և Լիդա Սևոյանն ընդդեմ Ռաֆիկ Հախվերդյանի թիվ 3-259(ՎԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել այն փաստը, թե հայցվորի անձի հետ կապված բացառիկ դեպքը՝ **հիվանդությունը**, արդյոք **ծանր է**, **թե** ոչ և տեղի է ունեցել նաև հայցային վաղեմության ժամկետի վերջին **վեց ամսում**, **թե** ոչ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածով սահմանված «հայցվորի անձի հետ կապված հանգամանքներով պայմանավորված բացառիկ դեպք» եզրույթը, որպիսի հանգամանքն էլ ազդել է գործի էլքի վրա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի

որոշումը բեկանելու համար: Միաժամանակ, հիմք ընդունելով վերոգրյալ խախտումների էությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը կրկին անհրաժեշտ է ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.06.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/1060/02/09**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1060/02/09

Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան  
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան  
Ն. Տավարացյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*  
*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ «ԴՎին կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի՝ վերջնահաշվարկ կատարելու և կրած վնասները բռնագանձելու պահանջների մասին, և ըստ Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է՝

1) Ռաֆիկ Գրիգորյանից բռնագանձել 157.139,5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից 77.194 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով սահմանված գումար, 13.992,5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես սեփականության իրավունքով Ռաֆիկ Գրիգորյանին փոխանցված լրացուցիչ տարածքների վերջնահաշվարկի արժեք, իսկ 65.953 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով մինչև 01.10.2011 թվականը



հաշվարկված տոկոսներ՝ նշված տոկոսների բռնագանձումը շարունակելով 01.10.2011 թվականից մինչև վճռի փաստացի կատարումը:

2) Հայկանուշ Գրիգորյանից բռնագանձել 133.786,5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից 68.510 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով սահմանված գումար, 6.742,5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես սեփականության իրավունքով Հայկանուշ Գրիգորյանին փոխանցված լրացուցիչ տարածքների վերջնահաշվարկի արժեք, իսկ 58.534 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով մինչև 01.10.2011 թվականը հաշվարկված տոկոսներ՝ նշված տոկոսների բռնագանձումը շարունակելով 01.10.2011 թվականից մինչև վճռի փաստացի կատարումը:

3) Հովհաննես Վարդանյանից բռնագանձել 86.579,5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից 26.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով սահմանված գումար, 37.772,5 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես սեփականության իրավունքով Հովհաննես Վարդանյանին փոխանցված լրացուցիչ տարածքների վերջնահաշվարկի արժեք, իսկ 22.807 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով մինչև 01.10.2011 թվականը հաշվարկված տոկոսներ՝ նշված տոկոսների բռնագանձումը շարունակելով 01.10.2011 թվականից մինչև վճռի փաստացի կատարումը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը, Ռաֆիկ Գրիգորյանը պահանջել են Ընկերությունից հոգուտ Հայկանուշ Գրիգորյանի բռնագանձել 29.895.309 ՀՀ դրամ, որից 14.510.709 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ, 13.884.600 ՀՀ դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, և 1.500.000 ՀՀ դրամ՝ որպես առուվաճառքի պայմանագրով հետ վերադարձված վնաս, Ընկերությունից հոգուտ Հովհաննես Վարդանյանի բռնագանձել 30.839.421 ՀՀ դրամ, որից 16.331.421 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ, իսկ 14.508.000 ՀՀ դրամ՝ որպես բաց թողնված օգուտ, Ընկերությունից հոգուտ Ռաֆիկ Գրիգորյանի բռնագանձել 36.539.421 ՀՀ դրամ, որից 16.331.421 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ, իսկ 20.208.000 ՀՀ դրամ՝ որպես բաց թողնված օգուտ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 09.02.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.05.2012 թվականի որոշմամբ Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 09.02.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը, Ռաֆիկ Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները,*

---

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ, 53-րդ հոդվածները, 102-րդ հոդվածի 2-րդ կետը, 109-րդ հոդվածի 2-րդ կետը, 110-րդ հոդվածի 3-րդ կետը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 347-րդ, 352-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ, 411-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես անտեսել են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, խեղաթյուրելով սույն գործի ապացույցները, բազմակողմանի քննություն չիրականացնելու արդյունքում չի գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով արդեն իսկ հաստատվել և սահմանվել են Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի կողմից վերջնահաշվարկ կատարելու պարտավորություններն ու գումարների չափերը, հետևաբար կրկին սույն անձանցից սույն բնակարանների համար այլ վերջնահաշվարկի գումարներ սահմանելը և այդ գումարները վճարելուն պարտավորեցնելը հակասում է ՀՀ օրենսդրությանը: Այսպիսով, Դատարանի կայացրած վճռով սահմանված վերջնահաշվարկի գումարներն անհիմն են, քանի որ սույն անձանց միջև նույն պահանջով առկա է դատական ակտ, որով հստակ սահմանվել են վերջնահաշվարկի գումարների չափերը, ինչից հետևում է, որ Ընկերությունը կրկին վերջնահաշվարկ կատարելու պահանջի իրավունք չունի:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը յուրովի է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճիռը ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի ներկայացրած փաստարկները, որը կրկին բազմակողմանի և օբյեկտիվ քննության պակասի արդյունք է, ինչպես նաև Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի կողմից 12.10.2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Երևանի բաժնի ավագ հարկադիր կատարողին ներկայացված փաստաթուղթը, որով նրանք հայտարարել են, որ պարտավորվում են կնքել պայմանագիր՝ վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ: Ծառայության աշխատակիցն առանց որևէ հիմնավորման անավարտ է թողել կատարողական վարույթը: Անտեսվել է նաև այն հանգամանքը, որ սույն գործում առկա բազմաթիվ ապացույցներով հիմնավորվել է, որ հենց Ընկերության և Ծառայության անգործության հետևանքն է հանդիսանում այն պատճառը, որ Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը, Ռաֆիկ Գրիգորյանը վերջնահաշվարկի գումարի վճարումը պատշաճ չեն կատարել, մասնավորապես այն, որ Ընկերությունը, սկսած 2004 թվականից, բազմաթիվ դատական անհիմն հայցերով գույքի առուվաճառքի պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջներ է ներկայացրել ընդդեմ բողոք բերած անձանց:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանն ապացույցները ոչ լիարժեք և ոչ օբյեկտիվ հետազոտելու արդյունքում բավարարել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջը: Մասնավորապես՝ Դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերության անգործության հետևանքով է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճիռը մնացել է անկատար:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի կողմից չի կիրառվել հայցային վաղեմություն՝ չնայած նրան, որ Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի կողմից հայցային վաղեմություն

կիրառելու վերաբերյալ ներկայացվել է դիմում:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ Դատարանը հակընդդեմ հայցապահանջը մերժել է՝ կիրառելով հայցային վաղեմություն, հաշվի չառնելով, որ տվյալ դեպքում սույն գործում առկա ապացույցների բազմակողմանի հետազոտման դեպքում պետք է կիրառվեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ կետը, քանի որ հակընդդեմ հայցապահանջն ուղղված է եղել հայցի ապահովման արդյունքում բողոք բերած անձանց պատճառված վնասների հատուցմանը: Այսպես՝ գործում առկա ապացույցներով հիմնավորվել է այն, որ Ընկերությունը, բողոք բերած անձանց գույքը տարիներ շարունակ բազմաթիվ հայցերի միջոցով պահելով արգելանքի տակ, վերջիններիս հասցրել է խոշոր վնասներ, քանի որ նրանք չեն կարողացել օգտագործել և տնօրինել իրենց սեփական գույքը: Դատարանության ընթացքում հիմնավորվել է նաև, որ Ընկերության կողմից բնակարանները գնորդներին (բողոք բերած անձանց) հանձնվել են պայմանագրով սահմանված ժամկետից ուշ (պետք է հանձնվելին 1993 թվականին, սակայն շինարարական աշխատանքներն ավարտվել են միայն 2004 թվականին):

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են Վերաքննիչ դատարանի 25.05.2012 թվականի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել՝ հայցն ամբողջությամբ մերժել, իսկ հակընդդեմ հայցը բավարարել մասնակիորեն, այն է՝ Ընկերությունից հօգուտ Հայկանուշ Գրիգորյանի բռնագանձել 28.395.309 ՀՀ դրամ, որից 14.510.709 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ, 13.884.600 ՀՀ դրամը՝ բաց թողնված օգուտ, մնացած մասով հակընդդեմ հայցը մերժել, Ընկերությունից հօգուտ Հովհաննես Վարդանյանի բռնագանձել 30.839.421 ՀՀ դրամ, որից 16.331.421 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ, իսկ 14.508.000 ՀՀ դրամը՝ բաց թողնված օգուտ, Ընկերությունից հօգուտ Ռաֆիկ Գրիգորյանի բռնագանձել 36.539.421 ՀՀ դրամ, որից 16.331.421 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսներ, իսկ 20.208.000 ՀՀ դրամը՝ բաց թողնված օգուտ:

## **2.1. Վճարել քողոքի պատասխանի հիմնավորումները**

Հայցվորը սույն գործով գումարի բռնագանձման պահանջ է ներկայացրել բողոք բերած անձանց սեփականության իրավունքով ավել փոխանցված տարածքների համար, որոնք որևէ կերպ չեն ներառվել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով սահմանված վերջնահաշվարկի գումարներում: Այսպես՝ սույն գործով գումարի բռնագանձման պահանջը պայմանավորված է ոչ թե բողոք բերած անձանց կողմից պայմանագրերով ստանալիք բնակտարածքների դիմաց վճարվելիք գումարների վերջնահաշվարկով, այլ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 25.12.2009 թվականին տրված թիվ Ել-8063 տեղեկանքի համաձայն բողոք բերած անձանց ավել անցած տարածքներով: Այսինքն՝ նշված վճռով հայցի փաստական հիմք են հանդիսացել բնակտարածքների ձեռքբերման՝ բողոք բերած անձանց պայմանագրերը, իսկ հայցի առարկան բնակտարածքների ձեռքբերման պայմանագրերով սահմանված ռուբլով վճարման ենթակա գումարների վերջնահաշվարկի պահանջն է: Մինչդեռ սույն գործով հայցի փաստական հիմք է հանդիսացել բողոք բերած անձանց կողմից ներկայացված վերոգրյալ տեղեկանքում հիշատակված պայմանագրից դուրս բողոք բերած անձանց սեփականության իրավունքով փաստացի անցած ավել տարածքները, իսկ հայցի առարկան այդ ավել

---

տարածքների համար գումարի բռնագանձման պահանջն է:

Բողոք բերած անձանց փաստարկներն այն մասին, որ սույն գործում առկա բազմաթիվ ապացույցներով իբրև թե հիմնավորվել է այն հանգամանքը, որ հենց Ընկերության և Ծառայության անգործության հետևանքն է հանդիսանում պատճառը, որ իրենք պատշաճ չեն կատարել վերջնահաշվարկի գումարի վճարումը, հիմնավորված չեն և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները չհաշվարկելու հիմք հանդիսանալ չեն կարող, քանի որ անկախ հարկադիր կատարման միջոցով վճռի կատարման փաստից՝ բողոք բերած անձինք կրում են վճիռը կամովին կատարելու պարտականություն, որպիսի պարտականության խախտումն էլ ինքնին հանդիսանում է ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու փաստ:

Բողոք բերած անձանց պնդումն այն մասին, թե իբր Ընկերությունն իր անգործությամբ բնակարանները ոչ ժամանակին հանձնելու և ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու ու խնայելու հետևանքով իրենց պատճառել է վնաս, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերությունը բողոք բերած անձանց բնակարանների դիմաց ընդհանրապես գումար չի ստացել: Տվյալ դեպքում իրավական տեսանկյունից Վերաքննիչ դատարանը հանգամանալից կատարել է վերլուծություն՝ կապված հայցի ապահովմամբ իբր պատճառված վնասների և բաց թողնված օգուտների հետ: Բացի այդ, բնակարանները ոչ ժամանակին հանձնելուց անցել է ընդհանուր առմամբ 19 տարի, և բողոք բերած անձինք բաց են թողել դատարան դիմելու ժամկետները, ուստի դա է պատճառը, որ հակընդդեմ հայցը մերժվել է հայցային վաղեմության հիմքով՝ համաձայն Ընկերության կողմից ներկայացված դիմումի:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության իրավանախորդի և Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի միջև համապատասխանաբար 04.06.1992 թվականին, 10.06.1992 թվականին, 03.06.1992 թվականին կնքվել են Երևանի Տեղյան և Պուշկին փողոցների հատվածում կառուցվող շենքում բնակարան հատկացնելու վերաբերյալ պայմանագրեր, որոնցով Ընկերության իրավանախորդը պարտավորվել է հանձնել բնակարաններ, իսկ Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը, Ռաֆիկ Գրիգորյանը պարտավորվել են վճարել դրանց դիմաց (**հատոր 1-ին, գ.թ. 11-13**):

2) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ստյանի դատարանի 03.06.2004 թվականի թիվ 2-373 վճռով մերժվել է Ընկերության հայցն ընդդեմ Անահիտ Աբելյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Լավրենտի Միքայելյանի, Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի՝ վերջնահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու և գումարի պահանջի մասին (**հատոր 1-ին, գ.թ. 118-119**):

3) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 08.10.2004 թվականի թիվ 04-2094 վճռով մերժվել է Ընկերության հայցն ընդդեմ Անահիտ Աբելյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Լավրենտի Միքայելյանի, Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի՝ վերջնահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու և գումարի պահանջի մասին (**հատոր 1-ին, գ.թ. 120-121**):

4) Վճարել դատարանի 20.01.2005 թվականի թիվ 3-4(ՎԳ) որոշմամբ հաստատվել է Ընկերության և Անահիտ Աբելյանի միջև 18.01.2005 թվականին կնքված հաշտության համաձայնությունը, և այդ մասով գործի վարույթը կարճվել է, իսկ նույն վճռի մնացած մասը բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել է նոր քննության (**հատոր 1-ին, գ.թ. 122-123**):

5) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի

թիվ 05-845 վճռով հայցը բավարարվել է՝ Ռ-աֆիկ Գրիգորյանը, Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը, Լավրենտի Միքայելյանը պարտավորեցվել են իրենց ստացած բնակարանների դիմաց Ընկերության հետ կատարելու վերջնահաշվարկ, միաժամանակ ճանաչվել է Ընկերության դրամական պահանջի իրավունքը պատասխանողների նկատմամբ կատարված վերջնահաշվարկի գումարի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 124**):

6) Վճռաբեկ դատարանի 07.07.2005 թվականի թիվ 3-1268(ՎԴ) որոշմամբ հաստատվել է Ընկերության և Լավրենտի Միքայելյանի լիազոր ներկայացուցչի միջև 07.07.2005 թվականին կնքված հաշտության համաձայնությունը, և այդ մասով գործի վարույթը կարճվել է, վճիռը՝ Ռ-աֆիկ Գրիգորյանի, Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի մասերով, թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքն այդ մասերով՝ առանց բավարարման (**հատոր 1-ին, գ.թ. 125-126**):

7) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 05.08.2005 թվականին տրամադրել է կատարողական թերթ (**հատոր 1-ին, գ.թ. 127**):

8) ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07.11.2005 թվականի թիվ 05-845 որոշմամբ բավարարվել է Ծառայության Երևանի ստորաբաժանման Կենտրոն և Նորք-Մարաշ բաժանմունքի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05.08.2005 թվականի թիվ 05-845 կատարողական թերթը պարզաբանելու մասին, և պարզաբանվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 վճռով տրված կատարողական թերթը հետևյալ կերպ. Ընկերության հետ վերջնահաշվարկը կատարել՝ Ռ-աֆիկ Գրիգորյանի մասով՝ 77.194 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, Հայկանուշ Գրիգորյանի մասով՝ 68.510 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի, Հովհաննես Վարդանյանի մասով՝ 26.660 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 132**):

9) Վճռաբեկ դատարանի 16.12.2005 թվականի որոշմամբ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07.11.2005 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման (**հատոր 1-ին, գ.թ. 133**):

10) Հովհաննես Վարդանյանը 28.09.2005 թվականին Ծառայության Երևանի բաժնի ավագ հարկադիր կատարողին հայտարարություն է տվել այն մասին, որ պարտավորվում է մինչև 27.10.2005 թվականը կատարել վճռի պահանջները (**հատոր 2-րդ, գ.թ. 115**):

11) Հայկանուշ Գրիգորյանը 12.10.2005 թվականին Ծառայության Երևանի բաժնի ավագ հարկադիր կատարողին հայտարարություն է տվել այն մասին, որ պարտավորվում է կնքել պայմանագիր՝ վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ՝ մինչև 27.10.2005 թվականը (**հատոր 2-րդ, գ.թ. 114**):

12) «Լիսամ» ՍՊԸ-ի 14.05.2008 թվականի թիվ Ել. 1-56 գրությամբ վերջինս հայտնել է, որ ներկայումս Հայկանուշ Գրիգորյանը և Ռ-աֆիկ Գրիգորյանը պատրաստ են կատարել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05.08.2005 թվականին տված թիվ 05-845 կատարողական թերթով սահմանված պարտավորությունները: Ելնելով վերոգրյալից՝ նշված ընկերությունը խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ կատարողական թերթի պահանջները հնարավորինս արագ կատարելու համար (**հատոր 2-րդ, գ.թ. 112**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն վճռաբեկ բողոքի շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝*

*1) դեպոզիտ վճարելու միջոցով դրամային պարտավորության կայարանն ձևի,*

*2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիմքով գործի վարույթի կարճման համար անհրաժեշտ պայմանների,*

---

3) վերաքննիչ և վճռարեկ վարույթների հիմքերի և հիմնավորումների սահմաններում հայցային վաղեմության կիրառման հարցերին:

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **պարտապանն իրավունք ունի իրենից գանձվելիք դրամը կամ արժեթղթերը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ դատարանի դեպոզիտ, եթե նա չի կարողանում կատարել պարտավորությունը, քանի որ՝**

1) պարտատերը կամ կատարումն ընդունելու համար նրա կողմից լիազորված անձը բացակայում է պարտավորության կատարման վայրից.

2) պարտատերն անգործունակ է և ներկայացուցիչ չունի.

3) ակնհայտորեն պարզ չէ, թե ով է պարտավորությամբ պարտատերը՝ ներառյալ պարտատիրոջ և այլ անձանց միջև այդ առթիվ վեճի առկայության դեպքում.

4) պարտատերը խուսափել է կատարումն ընդունելուց կամ թույլ է տվել կետանց:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դրամական գումար կամ արժեթղթեր նոտարի կամ դատարանի դեպոզիտ մուծելը պարտավորության կատարում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ պարտավորությունը պետք է կատարվի պատշաճ: Այսպես՝ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Հակառակ դեպքում՝ պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Մասնավորապես՝ եթե այդ պարտավորական հարաբերություններն ունեն դրամային բնույթ, և դրա ուժով պարտապանը պարտավոր է վճարել դրամ, ապա այդ դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու համար այդ գումարին վճարվում են նաև տոկոսներ: Միաժամանակ, **պարտապանի կողմից իր պարտավորությունը որոշակի պայմանների առկայությամբ**

**պայմանավորված պատշաճ կատարելու անհնարինության դեպքում վերջինիս իրավունք է վերապահված իրենից գանձվելիք գումարը մուծել նոտարի դեպոզիտ, իսկ օրենքով սահմանված դեպքում՝ նաև դատարանի դեպոզիտ:**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում վճիռը պետք է կատարվի կամովին, և միայն կամովին չկատարվելու դեպքում վճռի կատարումն ապահովվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով: Հետևաբար, ինչպես իրավացիորեն գտել է Դատարանը, հիմնավորված չէ Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի փաստարկն այն մասին, որ պարտատերը՝ Ընկերությունը, խուսափել է պարտավորությունն ընդունելուց, քանի որ նրանք զրկված չեն եղել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի կարգով կատարելու իրենց պարտավորությունները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ եթե նույնիսկ Ընկերությունը խուսափել է պարտավորության կատարումն ընդունելուց, ապա այդ դեպքում Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը, Ռաֆիկ Գրիգորյանը զրկված չեն եղել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով իրենցից գանձվելիք գումարները դեպոզիտ մուծելու հնարավորությունից, որպիսի իրավունքից սակայն վերջիններս չեն օգտվել:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձանց կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրենց իրավունքից չօգտվելու պայմաններում վերջիններս չեն կարող ազատվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների վճարման պարտականությունից:

2) Անդրադառնալով բողոք բերած անձանց կողմից վճռաբեկ բողոքում ներկայացված այն փաստարկին, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով արդեն իսկ հաստատվել և սահմանվել են Հայկանուշ Գրիգորյանի, Հովհաննես Վարդանյանի, Ռաֆիկ Գրիգորյանի կողմից վերջնահաշվարկ կատարելու պարտավորություններն ու գումարների չափերը, հետևաբար կրկին նույն անձանցից նույն բնակարանների համար այլ վերջնահաշվարկի գումարներ սահմանելը և այդ գումարները վճարելուն պարտավորեցնելը հակասում է ՀՀ օրենսդրությանը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով վճռաբեկ բողոքը ևս անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, բացառությամբ նույն օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործերի՝

1) կողմերը, այսինքն՝ քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք,

2) հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը,



---

3) հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

Ընտևաբար, վերը նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճվել չի կարող (*յո՛ւ՛ս՛ ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Հանդիսանալիքի ընդդեմ «Գ. Արշակյան» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0407/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը*):

Նշված դիրքորոշման համատեքստում անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բողոք բերած անձանց վկայակոչած ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով Ռաֆիկ Գրիգորյանը, Հայկանուշ Գրիգորյանը, Հովհաննես Վարդանյանը պարտավորեցվել են իրենց ստացած բնակարանների դիմաց Ընկերության հետ կատարելու վերջնահաշվարկ, և ճանաչվել է Ընկերության դրամական պահանջի իրավունքը պատասխանողների նկատմամբ կատարված վերջնահաշվարկի գումարի չափով, մինչդեռ սույն գործով դիմելով դատարան՝ Ընկերությունն իր հայցադիմումով ներկայացրել է Հայկանուշ Գրիգորյանից, Հովհաննես Վարդանյանից, Ռաֆիկ Գրիգորյանից գումարներ բռնագանձելու պահանջ: Այլ կերպ՝ սույն գործով գումարի մի մասի բռնագանձման հիմքը պահանջի այն իրավունքն է, որն Ընկերությունն ստացել է 19.04.2005 թվականի թիվ 05-845 գործով կայացրած վճռով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձանց կողմից վկայակոչված թիվ 05-845 գործով և սույն գործով վեճի առարկաները տարբեր են՝ թիվ 05-845 գործով հայցի առարկան Ռաֆիկ Գրիգորյանին, Հայկանուշ Գրիգորյանին և Հովհաննես Վարդանյանին վերջնահաշվարկ կատարելուն պարտավորեցնելն է և պահանջի իրավունքի ճանաչումը, իսկ սույն գործով՝ նշված անձանցից գումարի բռնագանձումը, հետևաբար բացակայում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված գործի վարույթը կարճելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

3) Անդրադառնալով հայցի մասով չկիրառված հայցային վաղեմության և հակընդդեմ հայցի մասով կիրառված հայցային վաղեմության վերաբերյալ բողոքի փաստարկներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա գործն ըստ էության լուծող դատական ակտերն անձը չի կարող բողոքարկել վճռաբեկ դատարանում, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Գրիշա Գալստյանն ընդդեմ Մանվել Զոհրաբյանի գործով Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված իրավադրույթների կիրառման հարցին, արձանագրել է, որ վճռաբեկության կարգով բողոքարկված վերաքննիչ դատարանի դատական ակտերը Վճռաբեկ դատարանը վերանայում է վճռաբեկ բողոքի սահմաններում, հետևաբար անձը չի կարող վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտը բողոքարկել Վճռաբեկ դատարան այն հիմքերով, որոնցով նա չի բողոքարկել վերաքննիչ դատարան (*յո՛ւ՛ս՛ Գրիշա Գալստյանն ընդդեմ Մանվել Զոհրաբյանի թիվ ԵՄԴ/0090/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*):

Նշված դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով բողոքաբերի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում բողոք բերած անձանց

---



կողմից վկայակոչված փաստարկեր՝ ինչպես հայցի, այնպես էլ հակընդդեմ հայցի մատուցված հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ, չի ներկայացվել վերաքննիչ բողոքում, և հետևաբար Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նշված փաստարկին:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի այս փաստարկը չի կարող քննության առարկա դառնալ Վճռաբեկ դատարանում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման մատուցված բողոք բերած անձանց կողմից բերված փաստարկներին չի անդրադառնում՝ հաշվի առնելով այն հանագամանքը, որ հակընդդեմ հայցը մերժվել է հայցային վաղեմության կիրառմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2012 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Ռաֆիկ Գրիգորյանից, Հայկանուշ Գրիգորյանից և Հովհաննես Վարդանյանից համապարտության կարգով հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1.000.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.10.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-1/0133/02/09  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ-1/0133/02/09  
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
Դատավորներ՝ Ա. Թումանյան  
Տ. Սահակյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Անժելա Վարդանյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.08.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ  
Ռաֆայել Ավետիսյանի հայցի ընդդեմ Մեյրան Վարդանյանի իրավահաջորդներ Արթուր  
և Անժելա Վարդանյանների՝ ներքին առուծախի գործարքը վավեր ճանաչելու պահանջի  
մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ռաֆայել Ավետիսյանը պահանջել է վավեր ճանաչել իր և  
Մեյրան Վարդանյանի միջև 10.12.2007 թվականին կնքված առուծախի գործարքը և ՀՀ  
Կոտայքի մարզի Առինջ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 62 հասցեում գտնվող տան և հողա-  
մասի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.11.2009 թվականի  
վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշմամբ  
Ռաֆայել Ավետիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է բեկանել ՀՀ  
Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.11.2009 թվականի վճիռը, և

գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի 19.05.2010 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.03.2010 թվականի որոշման դեմ Անժելա Վարդանյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.10.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2011 թվականի որոշմամբ Ռ-աֆայել Ավետիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է բեկանել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 22.10.2010 թվականի վճիռը, և գործն ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանի 23.03.2011 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2011 թվականի որոշման դեմ Անժելա Վարդանյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Հերոյան) (այսուհետ՝ Դատարան) 04.04.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.08.2012 թվականի որոշմամբ Ռ-աֆայել Ավետիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ որոշվել է Դատարանի 04.04.2012 թվականի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել, այն է՝ հայցը բավարարել և վավեր ճանաչել Ռ-աֆայել Ավետիսյանի և Սեյրան Վարդանյանի միջև 10.12.2007 թվականին կատարված ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 62 հասցեում գտնվող տան և հողամասի առուվաճառքի գործարքը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անժելա Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռ-աֆայել Ավետիսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 434-րդ, 436-րդ, 437-րդ, 445-րդ, 461-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վիճելի տան և հողամասի վերաբերյալ կողմերը (զնորդ և վաճառող) փաստաթուղթ չեն կազմել, առավել ևս՝ այն նոտարական կարգով չի վավերացվել: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետը սույն գործով կիրառելի չէ, քանի որ տվյալ դեպքում Ռ-աֆայել Ավետիսյանը չի ներկայացրել որևէ փաստարկ Սեյրան Վարդանյանի՝ գործարքի նոտարական վավերացումից խուսափելու վերաբերյալ: Գործարքը կնքելուց մինչև սեփականատիրոջ մահն անցել է շուրջ 4 ամիս, և կողմերն իրական հնարավորություն են ունեցել օրինական ուժ տալու գործարքին, սակայն դրան նոտարական վավերացում չի տրվել, քանի որ իրականում կողմերի միջև ոչ մի գործարք էլ չի կնքվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ տվյալ դեպքում նախնական պայմանագիրն առջինն է, այն չի կարող իրավական հետևանքների հանգեցնել, և նախնական պայմանագրով ստանձնած պարտավորությունները դադարել են, քանի որ դրանով նախատեսված ժամկետում չի կնքվել անշարժ գույքի առուվաճառքի հիմնական պայմանագիր:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ գործարքի կողմերից

---

մեկի պահանջով դատարանը կարող է վավեր ճանաչել այն, եթե գործարքի կողմերից որևէ մեկը խուսափում է դրա նոտարական վավերացումից: Այսինքն՝ գործարքի կողմերի միջև պետք է կնքված լինի հիմնական պայմանագիր, որի նոտարական վավերացումից կողմերից մեկը պետք է խուսափի: Մինչդեռ, տվյալ դեպքում առկա է նախնական պայմանագիր, որը դատական կարգով վավեր ճանաչելու ինստիտուտ գործող օրենսդրությամբ գոյություն չունի:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ հոդվածները, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 122-րդ, 220-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել սույն գործով ձեռք բերված բոլոր ապացույցները՝ չհամադրելով դրանք միմյանց հետ, ինչի արդյունքում կայացրել է չհիմնավորված և չպատճառաբանված որոշում: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել, ինչպես նաև միմյանց հետ չի համադրել երկու փորձագիտական եզրակացությունները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.08.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 04.04.2012 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքի հիմքերն ու փաստարկներն օրինաչափ և հիմնավորված չեն, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական ու դատավարական նորմերի օբյեկտիվ և արդարացի կիրառմամբ, հետևաբար այդ որոշումն օրինական և հիմնավորված է:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 10.10.2007 թվականի «Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման» թիվ 2357008 վկայականի համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 62 բնակելի տան և հողամասի նկատմամբ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 4-1 մատյանի 223 համարի տակ գրանցվել է Սեյրան Վարդանյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 13-15**):

2) Առանց թվագրման «Տան և հողամասի առուծախի» նախնական պայմանագրի համաձայն՝ Սեյրան Վարդանյանը 80.000 ԱՄՆ դոլարով վաճառել է, իսկ Ռաֆայել Ավետիսյանը մասնակի վճարման պայմանով գնել է ՀՀ Կոտայքի մարզի Առինջ գյուղի Մաշտոցի փողոցի թիվ 62 բնակելի տունը և հողամասը: Նույն նախնական պայմանագրի համաձայն՝ 80.000 ԱՄՆ դոլարի կեսը՝ 40.000 ԱՄՆ դոլարը, պայմանագրի կնքման պահին վճարվել է, իսկ մնացած 40.000 ԱՄՆ դոլարը պետք է վճարվի գործարքի նոտարական վավերացման պահին: Նույն նախնական պայմանագրով նշված գործարքի նոտարական վավերացման ժամկետ է սահմանվել 2008 թվականի հունվարից մինչև 2008 թվականի փետրվարի վերջը (**հատոր 1-ին, գ.թ. 5**):

3) 10.12.2007 թվականի ստացականի համաձայն՝ Սեյրան Վարդանյանը ստացել է

գույքի առուծախի կանխավճարը՝ 40.000 ԱՄՆ դոլար (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

4) ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի 28.01.2008 թվականի գրության համաձայն՝ Սեյրան Վարդանյանը նշված հիվանդանոց ընդունվել է 08.01.2008 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 122**):

5) 10.01.2008 թվականի ստացականի համաձայն՝ Արթուր Վարդանյանը ստացել է տան և հողամասի վաճառքի գումարի մնացած՝ 40.000 ԱՄՆ դոլարն ամբողջովին: Նույն ստացականը ստորագրվել է Արթուր Վարդանյանի և Սեյրան Վարդանյանի կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 11**):

6) 09.04.2008 թվականին տրված մահվան թիվ 147736 վկայականի համաձայն՝ Սեյրան Վարդանյանը մահացել է 26.03.2008 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 19**):

7) ՀՀ արդարադատության նախարարության «Կոտայք» նոտարական տարածքի նոտար Նունե Մանուչարյանի 21.07.2009 թվականի թիվ 90 գրության համաձայն՝ Արթուր Վարդանյանը 16.07.2008 թվականին, իսկ Անժելա Վարդանյանը 13.08.2008 թվականին իրենց հայտարարություններով ընդունել են Սեյրան Վարդանյանի մահից հետո մնացած ժառանգական գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 145**):

8) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացության «Հետևություններ» բաժնի «Ձեռագրաբանական մասի» համաձայն՝

1ա) Փորձաքննությանը տրամադրված տան և հողամասի առուծախի նախնական պայմանագրի, 10.01.2008 թվականի ստացականի և 10.12.2007 թվականի ստացականի ձեռագրի տեքստերը և դրանց տակ տեղավորված ձեռագիր գրառումները (բացի անձնագրի տվյալներին վերաբերող թվային գրառումներից) կատարվել են միևնույն անձի կողմից:

բ) «1ա» կետում նշված փաստաթղթերում տեղավորված Սեյրան Վարդանյանի անունից ստորագրությունները կատարվել են միևնույն անձի կողմից:

2. Փորձաքննությանը տրամադրված թիվ 1327/01 երաշխավորության պայմանագրի երեք էջերի վրա տեղավորված, թիվ 04842 երաշխավորության պայմանագրի երեք էջերի վրա տեղավորված Սեյրան Վարդանյանի անունից ստորագրությունները, ինչպես նաև ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արուվյանի տարածքային ստորաբաժանման ղեկավարին հասցեագրված 08.10.2007 թվականի դիմումի (քսերոպատճեն) վերջում «Դիմող» բառի դիմաց տեղավորված Վարդանյանի անունից ստորագրությունը կատարվել են միևնույն անձի կողմից:

3. «1բ» կետում նշված հետազոտելի ստորագրությունները և «2» կետում նշված հետազոտելի ստորագրությունները կատարվել են տարբեր անձանց կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 90-94**):

9) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 31.01.2012 թվականի թիվ 11-2711 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝

1. ա) Փորձաքննության ներկայացված տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերը և դրանց տակ տեղավորված ձեռագիր գրառումները կատարվել են միևնույն անձի կողմից:

բ) Տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերի ստորին մասերում «Սեյրան Վարդանյան» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունները կատարվել են միևնույն անձի կողմից:

2. ա) 17.03.2006 թվականի թիվ 1327/01 և 19.02.2007 թվականի թիվ 04842 երաշխավորության պայմանագրերի 1-ին, 2-րդ էջերի ստորին մասերում և 3-րդ էջի միջին աջ մասում «Երաշխավոր Սեյրան Վարդանյան» բառերի տակ տեղավորված ստորագրու-

---

թյունները կատարվել են մինևույն անձի կողմից:

բ) Մինևույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերի ստորին մասերում «Սեյրան Վարդանյան» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունները («խումբ 1 ստորագրություններ») և 17.03.2006 թվականի թիվ 1327/01 և 19.02.2007 թվականի թիվ 04842 երաշխավորության պայմանագրերի 1-ին, 2-րդ էջերի ստորին մասերում և 3-րդ էջի միջին աջ մասում «Երաշխավոր Սեյրան Վարդանյան» բառերի տակ տեղավորված ստորագրությունները («խումբ 2 ստորագրություններ») պարզել հնարավոր չէ՝ հետազոտելի ստորագրությունների ինֆորմատիվ գրաֆիկական կյոթի սակավության և պարզ կատարման պատճառով:

3. «1» կետի «ա» ենթակետում նշված ձեռագիր տեքստերի և «բ» ենթակետում նշված ստորագրությունների միջև համեմատական հետազոտություն չանցկացվեց՝ դրանք հետազոտության տարբեր օբյեկտներ լինելու պատճառով: Ուստի պարզել՝ մինևույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել հետազոտելի ձեռագիր տեքստերը և ստորագրությունները, հնարավոր չէ (**հատոր 5-րդ, գ.թ. 91-95**):

10) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում տված բացատրությանը հայտնել է, որ 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացության «Հետևություններ» բաժնում նշված փաստաթղթերի՝ նախնական պայմանագրի և ստացականների կազմման ժամանակն ունի մինչև մեկ տարվա կատարման վաղեմություն, որի ժամկետը կատեգորիկ է որոշված, և այն մեկ տարուց ավելի հնարավոր չէ, որ կազմված լինի:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Վճռաբեկ բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է անշարժ գույքի վերաբերյալ նախնական պայմանագրի դատական կարգով վավեր ճանաչման իրավաբանական հնարավորության խնդրով:*

1) *Քննելով վճռաբեկ բողոքն առաջին հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական պայմանագրով կողմերը պարտավորվում են ապագայում կնքել գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր (հիմնական պայմանագիր)՝ նախնական պայմանագրով նախատեսված պայմաններով:

Շույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի համար սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ, ապա՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ:

Շույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նախնական պայմանագրում նշվում է այն ժամկետը, որի ընթացքում կողմերը պարտավորվում են կնքել հիմնական պայմանագիր: Եթե նախնական պայմանագրում նման ժամկետ որոշված չէ, ապա հիմնական պայմանագիրը պետք է կնքվի նախնական պայմանագիրը կնքելու պահից՝ մեկ տարվա ընթացքում:

Շույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ նախնական պայմանագրով նախատեսված պարտավորությունները դադարում են, եթե մինչև այն ժամկետի ավարտը, որում կողմերը պետք է կնքելին հիմնական պայմանագիրը, այն չի կնքվում, կամ կողմերից մեկը մյուսին առաջարկ չի ներկայացնում այդ պայմանագիրը կնքելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Շշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիրն այնպես, ինչպես և հիմնական պայմանագիրը, ենթակա է նոտարական վավերացման, որպիսի պահանջը չպահպանելը հանգեցնում է նախնական պայմանագրի առոչնչության: Միաժամանակ, հիմնական պայմանագիրը պետք է կնքվի նախնական պայմանագրով սահմանված ժամկետում, իսկ նման ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ մեկ տարվա ընթացքում: Ավելին, եթե նախնական պայմանագրով նախատեսված ժամկետում կողմերը հիմնական պայմանագիր չեն կնքում կամ կողմերից մեկը մյուսին առաջարկ չի ներկայացնում այն կնքելու մասին, ապա նախնական պայմանագրով նախատեսված պարտավորությունները դադարում են:

**Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար անհրաժեշտ է պարզել այն իրավական հարցը, թե արդյոք կարող է նախնական պայմանագիրը դատական կարգով ճանաչվել վավեր, այսինքն՝ արդյոք դրա նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավակարգավորումը:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով, այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Շշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը գործարքը կատարած կողմի պահանջով գործարքը վավեր ճանաչելու համար սահմանել է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը՝

1) կողմերից մեկի կողմից գործարքի լրիվ կամ մասնակի կատարված լինելը,

2) մյուս կողմի խուսափելն օրենքով նախատեսված կարգով գործարքի վավերացումից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ նախնական պայմանագիր կնքած կողմը խուսափում է հիմնական պայմանագիր կնքելուց, կիրառվում են սույն օրենսգրքի 461 հոդվածով սահմանված կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջով:

Շշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը նախնական պայմանագիր կնքած կողմի պահանջով գործարքը կնքելուց խուսափող կողմին պայմանագիր կնքելուն հարկադրելու համար սահմանել է հետևյալ փաստերի միաժամանակյա առկայությունը՝

1) պայմանագիր կնքելն օրենքին համապատասխան պարտադիր է,

2) պայմանագիր կնքելու պարտավորություն ունեցող կողմը խուսափում է այն կնքելուց:

Վերոգրյալ կարգավորումներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից սահմանվել են «գործարքը վավեր ճանաչելու» և «պայմանագիր կնքելուն հարկադրելու» իրարից էականորեն տարբերվող իրավական ռեժիմներ: Ընդ որում, դատական կարգով կարող է վավեր ճանաչվել գործարքի կողմերի միջև արդեն իսկ կնքված ինչպես նախնական, այնպես էլ հիմնական պայմանագիրը, որի նոտարական

---

---

վավերացումից կողմը խուսափում է, այսինքն՝ օրենքը չի բացառում նախնական պայմանագրի վավեր ճանաչման հնարավորությունը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր չեն նշված մատով բողոք բերած անձի փաստարկները:

*2) Քննելով վճռաբեկ բողոքը երկրորդ հիմքով՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր և իրեղեն ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները, գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Միաժամանակ, դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է այս կամ այն ապացույցը մերժում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության, ինչպես նաև որոշման իրավական հիմնավորվածության մասին:

Սույն գործում առկա «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացության «Հետևություններ» բաժնի «Ձեռագրաբանական մասի» համաձայն՝

1ա) Փորձաքննությանը տրամադրված տան և հողամասի առուծախի նախնական պայմանագրի, 10.01.2008 թվականի ստացականի և 10.12.2007 թվականի ստացականի ձեռագիր տեքստերը և դրանց տակ տեղավորված ձեռագիր գրառումները (բացի անձնագրի տվյալներին վերաբերող թվային գրառումներից) կատարվել են միևնույն անձի կողմից:

բ) «1ա» կետում նշված փաստաթղթերում տեղավորված Սեյրան Վարդանյանի անունից ստորագրությունները կատարվել են միևնույն անձի կողմից:

2. Փորձաքննությանը տրամադրված թիվ 1327/01 երաշխավորության պայմանագրի երեք էջերի վրա տեղավորված, թիվ 04842 երաշխավորության պայմանագրի երեք էջերի վրա տեղավորված Սեյրան Վարդանյանի անունից ստորագրությունները, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի



տարածքային ստորաբաժանման ղեկավարին հասցեագրված 08.10.2007 թվականի դիմումի (քսերոպատճեն) վերջում «Դիմող» բառի դիմաց տեղավորված Վարդանյանի անունից ստորագրությունը կատարվել են միևնույն անձի կողմից:

3. «1բ» կետում նշված հետազոտելի ստորագրությունները և «2» կետում նշված հետազոտելի ստորագրությունները կատարվել են տարբեր անձանց կողմից:

Միաժամանակ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 31.01.2012 թվականի թիվ 11-2711 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝

1. ա) Փորձաքննության ներկայացված տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերը և դրանց տակ տեղավորված ձեռագիր գրառումները կատարվել են միևնույն անձի կողմից:

բ) Տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերի ստորին մասերում «Սեյրան Վարդանյան» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունները կատարվել են միևնույն անձի կողմից:

2. ա) 17.03.2006 թվականի թիվ 1327/01 և 19.02.2007 թվականի թիվ 04842 երաշխավորության պայմանագրերի 1-ին, 2-րդ էջերի ստորին մասերում և 3-րդ էջի միջին աջ մասում «Երաշխավոր Սեյրան Վարդանյան» բառերի տակ տեղավորված ստորագրությունները կատարվել են միևնույն անձի կողմից:

բ) Միևնույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերի ստորին մասերում «Սեյրան Վարդանյան» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունները («խումբ 1 ստորագրություններ») և 17.03.2006 թվականի թիվ 1327/01 և 19.02.2007 թվականի թիվ 04842 երաշխավորության պայմանագրերի 1-ին, 2-րդ էջերի ստորին մասերում և 3-րդ էջի միջին աջ մասում «Երաշխավոր Սեյրան Վարդանյան» բառերի տակ տեղավորված ստորագրությունները («խումբ 2 ստորագրություններ») պարզել հնարավոր չէ՝ հետազոտելի ստորագրությունների ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության և պարզ կատարման պատճառով:

3. «1» կետի «ա» ենթակետում նշված ձեռագիր տեքստերի և «բ» ենթակետում նշված ստորագրությունների միջև համեմատական հետազոտություն չանցկացվեց՝ դրանք հետազոտության տարբեր օբյեկտներ լինելու պատճառով: Ուստի պարզել՝ միևնույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել հետազոտելի ձեռագիր տեքստերը և ստորագրությունները, հնարավոր չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և չի գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ինչպես նաև դրանք չի համադրել միմյանց հետ:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և գնահատել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացությունը և այն չի համադրել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 31.01.2012 թվականի թիվ 11-2711 եզրակացության հետ, ինչի արդյունքում հաշվի չի առել, որ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացությամբ փորձագետը տվել է կատեգորիկ եզրակացություն այն մասին, որ տան և հողամասի առուծախի պայմանագրի, 10.01.2008 թվականի և 10.12.2007 թվականի ստացականների ձեռագիր տեքստերի ստորին մասերում «Սեյրան Վարդանյան» բառերի դիմաց կատարված ստորագրությունները և 17.03.2006 թվականի թիվ 1327/01 և 19.02.2007 թվականի թիվ 04842 երաշխավորության պայմանագրերի 1-ին, 2-րդ էջերի ստորին մասերում և 3-րդ էջի միջին աջ մասում «Երաշխավոր Սեյրան Վարդանյան» բառերի տակ կատարված ստորագրությունները

---

կատարվել են տարբեր անձանց կողմից:

Ավելին, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում տված բացատրությամբ հայտնել է, որ 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացության «Հետևություններ» բաժնում նշված փաստաթղթերի՝ նախնական պայմանագրի և ստացականների կազմման ժամանակն ունի մինչև մեկ տարվա կատարման վաղեմություն, որի ժամկետը կատեգորիկ է որոշված, և այն մեկ տարուց ավելի հնարավոր չէ, որ կազմված լինի:

Մինչդեռ, տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է միայն «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 31.01.2012 թվականի թիվ 11-2711 եզրակացությունը և որևէ կերպ չի պատճառաբանել, թե ինչու է մերժում «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացությունը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին և նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*լրէս՝ Ռազմիկ Մարտիկյանի հայցն ընդդեմ Սրեփան և Անահիտ Մարտիկյանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

*Միաժամանակ, սույն բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապացույցների զանգվածում ներառված փորձագիտական եզրակացությունների գնահատման խնդրին՝ հաշվի առնելով առանձին գործերով այս ապացույցների կարևորությունը և դրանց գնահատման առումով միասնական դատարանային ակտիվայի ձևավորման անհրաժեշտությունը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը պետք է պարունակի՝

1. նշում կիրառված մեթոդների մասին,
2. կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը,
3. հետազոտությունների արդյունքում արված հետևությունները,
4. առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը հետազոտվում է դատական նիստում և գնահատվում է մյուս ապացույցների հետ:

Նշված հոդվածների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածում խոսքը գնում է փորձագետին առաջադրված հարցերի վերաբերյալ **հետևություններ**

---

և դրանց հիման վրա **հիմնավորված պատասխանների (եզրակացության)** մասին: Հետևաբար, փորձագիտական եզրակացության արդյունքում տրված **հավանական եզրահանգումները** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի և 62-րդ հոդվածի ուժով չեն կարող ունենալ ապացուցողական նշանակություն որոշակի փաստի առկայությունն ապացուցելու առումով: Փորձագետի հետևությունների ձևը չի որոշում եզրակացության դերը և տեղը ապացուցման պրոցեսում: Հետևության ձևը (հավանական կամ կատեգորիկ) և փորձաքննության արդյունքում տրված եզրակացությունն այն երկու բաղադրամասերն են, որոնք հնարավոր չէ տարանջատել: Ոչ հավանական եզրակացությունն ինքնին և ոչ էլ եզրակացության մեջ նշված տվյալներն առանձին վերցրած չունեն ապացուցողական նշանակություն. այդպիսին չեն համարվում նաև հիպոթեթիկ եզրակացության համար հիմք հանդիսացող տվյալները: Հավանական հետևությունների թվից, որքան էլ որ շատ դրանք լինեն, չի առաջանում հավաստի և իրական եզրակացություն. հավանական հետևությունների քանակը չի ավելացնում փորձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը:

Հետևաբար, փորձագիտական եզրակացությունների գնահատումը պետք է կատարել այնպես, որ ամբողջ եզրակացությունը, այլ ոչ թե այդ եզրակացության որոշակի բաժնում արտացոլված տվյալները գնահատվեն որպես մեկ ապացույց:

Վերոնշյալ մեկնաբանության լույսի ներքո համադրելով գործում առկա փորձագիտական եզրակացությունների վերաբերյալ Դատարանի և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում պետք է հիմք ընդունել «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2009 թվականի թիվ 08530901 եզրակացությունը, քանի որ դրանով, ինչպես վերը նշվեց, **կատեգորիկ եզրակացություն** է տրվել այն մասին, որ տան և հողամասի առուծախի նախնական պայմանագրում, ստացականներում և երաշխավորության պայմանագրերում «Սելյան Վարդանյան» բառերի դիմաց առկա ստորագրությունները կատարվել են տարբեր անձանց կողմից: Նշված հանգամանքը պնդել է նաև փորձագետը գործի քննության ընթացքում տված բացատրությամբ՝ միաժամանակ պնդելով նաև, որ նախնական պայմանագրի և ստացականների կազմման ժամանակն ունի մինչև մեկ տարվա վաղեմություն: Իսկ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 31.01.2012 թվականի թիվ 11-2711 եզրակացությամբ հետևություն է արվել այն մասին, որ վերոգրյալ փաստաթղթերում «Սելյան Վարդանյան» բառերի դիմաց առկա ստորագրությունները մինևույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել, **պարզել հնարավոր չէ՝** հետազոտելի ստորագրությունների ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության և պարզ կատարման պատճառով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով չի հաստատվել տան և հողամասի առուծախի նախնական պայմանագրերը և ստացականները Սելյան Վարդանյանի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Հետևաբար, հայցը մերժելու մասով հիմնավոր է Դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ վիճելի տան և հողամասի վերաբերյալ կողմերը (գնորդ և վաճառող) փաստաթուղթ չեն կազմել և այն նոտարական կարգով չեն վավերացրել:

*Նշված պայրճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

---

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.08.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 04.04.2012 թվականի վճռին:
2. Ո-աֆայել Ավետիսյանից հօգուտ Անժելա Վարդանյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3094/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3094/02/11  
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան  
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի  
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.08.2012 թվակա-  
նի որոշման դեմ՝ ըստ հայցի «Ստանդարտ Էներգո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)  
ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)  
գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից  
բռնագանձել 59.643.600 ՌԴ- ռուբլուն համարժեք ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 01.06.2012 թվակա-  
նի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
24.08.2012 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 01.06.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 28-րդ, 53-րդ, 119-րդ, 130-րդ, 131-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 529-րդ հոդվածի 4-րդ մասը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ, 348-րդ, 367-րդ, 408-րդ, 447-րդ, 474-րդ, 528-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերությունը պարտավոր էր ներկայացնել կանխավճարի հաշիվ, ապրանքի մատակարարումից յոթ օր առաջ գրավոր ծանուցել Կազմակերպությանը մատակարարման կոնկրետ ժամկետի մասին, ապրանքը «DDU» պայմաններով մատակարարել Կազմակերպության պահեստ և հանձնել Կազմակերպության պատասխանատու անձին, ինչպես նաև ապրանքի ընդունման փաստի առթիվ ներկայացնել բեռը ստացողի ապրանքատրանսպորտային բեռնագիր: Մինչդեռ պայմանագրով և համաձայնագրով ստանձնած վերոհիշյալ պարտավորություններն Ընկերությունը չի կատարել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Կազմակերպության կողմից Ընկերության մոտ գործուղված ներկայացուցիչը կարող էր իրականացնել միայն մատակարարվող ապրանքի նախնական զննություն և ոչ թե ընդունում: Ընդ որում, Կազմակերպության կողմից ներկայացուցիչ չգործուղելն Ընկերությանը չէր ազատում 15.03.2011 թվականից մինչև 15.04.2011 թվականը մնացած ապրանքի մատակարարումն ավարտելու պարտավորության կատարումից, ինչպես նաև որևէ կերպ չէր սահմանափակում Ընկերության իրավունքը ներկայացնելու կանխավճարի հաշիվ, առանց որի Կազմակերպությունը չէր կարող կատարել 50 տոկոս կանխավճարի վճարում: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 16.03.2011 թվականի և 07.04.2011 թվականի գրություններում Ընկերությունը մատակարարման կոնկրետ ժամկետ չի նշել և կանխավճարի հաշիվ չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել Պայմանագրի և համաձայնագրի դրույթները, անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ Ընկերությունը սահմանված կարգով մատակարարել է ապրանքը Հայաստանի Հանրապետություն, իսկ Կազմակերպությունը հրաժարվել է ընդունել այն:

Մատակարարումն ապահովելու համար Կազմակերպության կողմից վճարման ենթակա կանխավճարը կազմում էր ապրանքի արժեքի 50 տոկոսը, մինչդեռ Դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերով Կազմակերպությունն անհիմն կերպով ծանրաբեռնվել է չմատակարարված և չստացված ապրանքի համար վճարելու պարտավորությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.08.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանը դատավարական նորմերի խախտում թույլ չի տվել: Կազմակերպությունը պատճառաբանել է, թե Դատարանն իրեն զրկել է իր դիրքորոշումը

հայտնելու հնարավորությունից, մինչդեռ Կազմակերպությունը հնարավորություն է ունեցել գրավոր պատասխան ներկայացնել, նախնական դատական նիստում իր դիրքորոշումը հայտնել, սակայն չի արել: Բացի այդ, Կազմակերպությունը Վերաքննիչ դատարանում նման փաստարկ չի հայտնել, ուստի Վերաքննիչ դատարանի որոշումը նշված հիմքերով չի կարող բողոքարկել Վճռաբեկ դատարանում:

Կազմակերպության կողմից ապրանքի ընդունումից հրաժարվելն ապացուցվում է վերաքննիչ բողոքին կից ներկայացված Կազմակերպության փոխտնօրենի 23.01.2012 թվականի գրությամբ, ըստ որի՝ 2011 թվականի ներդրումային ծրագրի կրճատման կապակցությամբ Կազմակերպությունը ստիպված է եղել հրաժարվել մատակարարման պայմանագրի մնացած մասից:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության և Կազմակերպության միջև 30.03.2010 թվականին կնքվել է ԿՍՕ տիպի 6 (10) ԿՎ վակումային բեռի անջատիչներով և թվային միկրոպրոցեսորային պաշտպանությամբ բջիջների (այսուհետ՝ ապրանք) մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով Ընկերությունը պարտավորվել է պայմանագրի երեք հավելվածներով նախատեսված տեսակահիով, արժեքով և քանակով մատակարարել ապրանքներ, իսկ Կազմակերպությունը պարտավորվել է ընդունել այդ ապրանքները և վճարել դրանց համար: Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարումը կատարվում է «DDU» պայմաններով պատվիրատուի պահետո՝ Հայաստան, ք. Արովյան (ինկորթերմս 2000): Պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ մատակարարումից 7 օր առաջ մատակարարը գրավոր ծանուցում է ուղարկում պատվիրատուին մատակարարման կոնկրետ ժամկետի մասին: Պայմանագրի 3.4 կետի համաձայն՝ ապրանքի ընդունումն իրականացվում է պատվիրատուի պատասխանատու անձի կողմից: Արտադրանքի ընդունման փաստի առթիվ պատվիրատուն բեռնաստացի ապրանքատրանսպորտային բեռնագրի վրա կատարում է համապատասխան նշում: Պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ մատակարարման փաստի առթիվ մատակարարը պատվիրատուին տրամադրում է հաշիվը և ապրանքատրանսպորտային բեռնագիրը՝ ապրանքի ընդունման մասին նշումով: Վճարումն իրականացվում է կողմերի կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտի առկայության դեպքում: Պայմանագրի 4.5 կետի համաձայն՝ պատվիրատուն վճարում է 1, 2 և 3 լոտերով մատակարարված ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար հետևյալ կարգով՝ ապրանքի արժեքի 50 տոկոս կանխավճար՝ կանխավճարի հաշիվը ներկայացնելու պահից 10 բանկային օրվա ընթացքում, ապրանքի արժեքի 50 տոկոսը՝ կողմերի ընդունման-հանձնման ակտի ստորագրելու պահից 10 բանկային օրվա ընթացքում (**հատոր 1-ին գ.թ.7-10**):

2) 10.12.2010 թվականի գրության համաձայն՝ Կազմակերպությունը խնդրել է մինչև 31.12.2010 թվականը մատակարարել ոչ ավելի, քան 46.650.000 Ռ-Դ ռուբլու ապրանքներ, իսկ մյուս մասի մատակարարումն իրականացնել 2011 թվականի մարտ ամսին (**հատոր 1-ին գ.թ.24**):

3) Կողմերի միջև 24.12.2010 թվականին կնքվել է թիվ A-1527/10 համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), որով ապրանքի ցանկը լրացվել է Համաձայնագրի թիվ 1 հավելվածում նշվածով և Պայմանագրով մատակարարվող ապրանքի արժեքը համապատասխանաբար ավելացվել է 223.200 Ռ-Դ ռուբլով: Համաձայնագրի 3.1 կետի համաձայն՝ ապրանքի մնացորդի մատակարարումը սկսելուց 15 օր առաջ Ընկերությունն այդ մասին կծանուցի Կազմակերպությանը: Համաձայնագրի 3.2 կետի համաձայն՝ մինչև մատա-

---

կարարի ծանուցման մեջ նշված ամսաթիվը պատվիրատուն կգործուղի մատակարարի մոտ իր պատշաճ լիազորված ներկայացուցչին ողջ ապրանքի մնացորդը տեղում մինչև բեռնումը գննելու համար՝ դրա քանակի, որակի, տեսականու և այլ տեսանկյուններից հնարավոր պահանջները օպերատիվ ի հայտ բերելու նպատակով: Համաձայնագրի 4-րդ կետի համաձայն՝ Համաձայնագրի 2.2 կետին համապատասխան մատակարարված ողջ ապրանքի համար պատվիրատուն կվճարի հետևյալ կարգով՝ 50 տոկոսը որպես կանխավճար՝ մինչև համաձայնագրի 2.2 կետում նշված մատակարարումը սկսելու ամսաթիվը, 4.2 կետի համաձայն՝ մնացած մատով Համաձայնագրի 2.2 կետին համապատասխան ողջ ապրանքի մատակարարումն ավարտելուց հետո՝ 10 բանկային օրվա ընթացքում (**հատոր 1-ին գ.թ.50-51**):

4) 19.01.2011 թվականի գրության համաձայն՝ Ընկերությունը դիմել է Կազմակերպությանը՝ խնդրելով ուղարկել լիազորված ներկայացուցիչ՝ ապրանքը բեռնելուց առաջ գննելու համար, ինչպես նաև Համաձայնագրի 4.1 կետի համաձայն՝ վճարել 50 տոկոս կանխավճար (**հատոր 1-ին գ.թ.53**):

5) 01.02.2011 թվականի գրության համաձայն՝ Ընկերությունը դիմել է Կազմակերպությանը՝ տեղեկացնելով, որ 59.643.600 ՌԴ ռուբլու ապրանքներն առաքվել են վերջինիս հասցեով, գտնվում են ճանապարհին և խնդրել է կատարել առաքված ապրանքի դիմաց վճարում՝ (հանած 8.400 ՌԴ ռուբլի կանխավճարը) 59.635.200 ՌԴ ռուբլի (**հատոր 1-ին գ.թ.25**):

6) 08.02.2011 թվականի գրության համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերությանը հայտնել է, որ կանխավճարը չի կարող գերազանցել 50 տոկոսը և կկատարվի 24.12.2010 թվականի թիվ A-1527/10 լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետից ոչ ուշ (**հատոր 1-ին գ.թ.26**):

7) 16.03.2011 թվականի գրության համաձայն՝ Ընկերությունը դիմել է Կազմակերպությանը՝ խնդրելով Համաձայնագրի 4.1 կետին և Կազմակերպության 08.02.2011 թվականի նամակին համապատասխան՝ ապրանքի մատակարարման համար կատարել 50 տոկոս կանխավճար և Համաձայնագրի 3.2 կետին համապատասխան Ընկերության հասցեով պատշաճ կերպով գործուղել լիազորված ներկայացուցչին նախաբեռնման գնություն կատարելու համար (**հատոր 1-ին գ.թ.27**): Նշված գրությունը Կազմակերպությունում մուտքագրվելու վերաբերյալ ապացույց չի ներկայացվել: Ընկերությունը 07.04.2011 թվականին դիմել է Կազմակերպությանը նույն խնդրանքով: Գրությունը Կազմակերպությունում մուտքագրվել է 15.04.2011 թվականին (**հատոր 1-ին գ.թ.54**):

8) 16.03.2011 թվականի և 07.04.2011 թվականի գրություններում Ընկերությունը մատակարարման կոնկրետ ժամկետ չի նշել:

9) Կազմակերպությունը Համաձայնագրով պայմանավորված 50 տոկոս կանխավճարը չի կատարել և ներկայացուցիչ չի գործուղել Ընկերության գտնվելու վայր, իսկ Ընկերությունը ապրանքի մնացորդը Ռուսաստանի Դաշնության Բելգորոդ քաղաքից Հայաստանի Հանրապետության Արովյան քաղաք չի մատակարարել:

#### **4. Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անդրադառնում է այն իրավական խնդրին, թե մատակարարման պայմանագրից բխող հարաբերություններում ինչպես կարող է դրսևորվել ապրանքի չընդունումը կամ այն ընդունելուց հրաժարումը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու



պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

Նույն օրենսգրքի 528-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնորդը (ստացողը) պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գնորդը (ստացողը) ընդունված ապրանքները պետք է զննի օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով սահմանված ժամկետում: Գնորդը (ստացողը) պարտավոր է այդ նույն ժամկետում օրենքով, այլ իրավական ակտերով, պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով սահմանված կարգով, ստուգել ընդունած ապրանքների քանակն ու որակը և հայտնաբերված անհամապատասխանությունների կամ թերությունների մասին անհապաղ գրավոր տեղեկացնել մատակարարին:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ մատակարարման պայմանագրի կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի մատակարարը գնորդին հանձնի պայմանագրով նախատեսված ապրանքները, իսկ գնորդը դրանք ընդունի: Ընդ որում, պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու պարագայում ապրանքը հանձնելու պարտականությունը համարվում է կատարված, եթե ապրանքը փաստացի հանձնվել է գնորդին: Ինչ վերաբերում է գնորդի կողմից ապրանքն ընդունելուն, ապա այն ներառում է վերջինիս կողմից այնպիսի գործողությունների կատարում, որոնցով պետք է ապահովվի մատակարարված ապրանքները փաստացի տիրապետման ընդունելը, ինչպես նաև պարզվի ապրանքի համապատասխանությունը պայմանագրով նախատեսված պայմաններին: Վճարելի դատարանն արձանագրում է նաև, որ այդ գործողությունների ծավալը կախված է ապրանքները գնորդին հանձնելու վայրից և այն եղանակից, որով պետք է իրականացվի հանձնումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի օրենսգրքի 529-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ գնորդը, առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված հիմքերի, մատակարարից չի ընդունում ապրանքը կամ հրաժարվում է այն ընդունելուց, մատակարարն իրավունք ունի գնորդից պահանջել վճարելու ապրանքի համար:

Վերը նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ ապրանքի համար վճարելու պահանջի իրավունքը մատակարարի մոտ առաջանում է այն դեպքում, երբ գնորդը, առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված հիմքերի, մատակարարից չի ընդունում ապրանքը կամ հրաժարվում է այն ընդունելուց: Վճարելի դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում գնորդի կողմից ապրանքից հրաժարվելը պետք է արտահայտվի հստակ և լինի որոշակի: Այսինքն՝ գնորդը պետք է կատարի այնպիսի գործողություններ կամ դրսևորի այնպիսի անգործություն, որոնք օբյեկտիվորեն վկայում են ապրանքը չընդունելու կամ այն ընդունելուց հրաժարվելու մասին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Դատարանը, պարզելով, որ Հայցվորը մնացորդ ապրանքի մատակարարումը պետք է իրականացնել 2011 թվականի մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ը (Համաձայնագրի 2.2 կետի համաձայն), և մատակարարումն սկսելուց 15 օր առաջ

---

Հայցվորը պետք է ծանուցեր Պատասխանողին, իսկ վերջինս էլ մինչև ծանուցման մեջ նշված ամսաթիվը պետք է պատշաճ լիազորված ներկայացուցիչ գործուղեր Հայցվորի մոտ՝ ք. Բելգորոդ, ողջ ապրանքի մնացորդը տեղում, մինչև բեռնումը, գննելու համար (Համաձայնագրի 3.1 կետի համաձայն), պարզելով նաև, որ Համաձայնագրի 2.2 կետում նշված ժամանակահատվածում՝ 2011 թվականի մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ը, 16.03.2011 թվականին Հայցվորը դիմել է Պատասխանողին՝ խնդրելով Համաձայնագրի 4.1 կետին և Պատասխանողի 08.02.2011 թվականի նամակին համապատասխան ապրանքի մատակարարման համար կատարել 50 տոկոս կանխավճար և Համաձայնագրի 3.2 կետին համապատասխան Հայցվորի հասցեով պատշաճ կերպով գործուղել լիազոր ներկայացուցիչ՝ արձանագրելով, որ համաձայնագրով սահմանված ժամկետում՝ Պատասխանողն առնվազն երկու իրավական հետևանք առաջացնող ծանուցում է ստացել, սակայն դրսևորել է անգործություն, որ Պատասխանողը պարտավոր էր մինչև 2011 թվականի ապրիլի 15-ը լիազոր ներկայացուցիչ ուղարկել հայցվորի գտնվելու վայր՝ ՌԴ, ք. Բելգորոդ, որպիսի գործողությունը չկատարելով՝ փաստացի չի ընդունել ապրանքը և, նկատի ունենալով այն, որ Պատասխանողի կողմից ապրանքի չընդունումը պայմանավորված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված հիմքերի առկայությամբ, իրավացիորեն բավարարել է Ընկերության հայցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Սամնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառնությունը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տես Ռազմիկ Սարությանն*

ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ Վճարել դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործում առկա ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես՝ սույն գործի փաստերի համաձայն՝ Պայմանագրով Կազմակերպությունը պարտավորվել է **ընդունել ապրանքները և վճարել դրանց համար**: Պայմանագրի 3.2 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարումը կատարվում է «DDU» պայմաններով պատվիրատուի պահեստ՝ Հայաստան, ք. Արովյան (ինկոթերմա 2000): Մատակարարումից 7 օր առաջ մատակարարը գրավոր ծանուցում է ուղարկում պատվիրատուին մատակարարման կոնկրետ ժամկետի մասին: Ապրանքի ընդունումն իրականացվում է պատվիրատուի պատասխանատու անձի կողմից: Արտադրանքի ընդունման փաստի առթիվ պատվիրատուն բեռնաստացի ապրանքատրանսպորտային բեռնագրի վրա կատարում է համապատասխան նշում: Մատակարարման փաստի առթիվ մատակարարը պատվիրատուին տրամադրում է հաշիվը և ապրանքատրանսպորտային բեռնագիրը՝ ապրանքի ընդունման մասին նշումով: Վճարումն իրականացվում է կողմերի կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտի առկայության դեպքում: Պատվիրատուն վճարում է 1, 2 և 3 լոտերով մատակարարված ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի համար հետևյալ կարգով՝ ապրանքի արժեքի 50 տոկոս կանխավճար՝ կանխավճարի հաշիվը ներկայացնելու պահից 10 բանկային օրվա ընթացքում, ապրանքի արժեքի 50 տոկոսը՝ կողմերի ընդունման-հանձնման ակտի ստորագրելու պահից 10 բանկային օրվա ընթացքում: Ընկերության և Կազմակերպության միջև 24.12.2010 թվականին կնքվել է Համաձայնագիրը, որով ապրանքի ցանկը լրացվել է Համաձայնագրի թիվ 1 հավելվածում նշվածով և Պայմանագրով մատակարարվող ապրանքի արժեքը համապատասխանաբար ավելացվել է 223.200 ՌԴ ռուբլով: Ապրանքի մնացորդի մատակարարումը սկսելուց 15 օր առաջ Ընկերությունն այդ մասին պետք է ծանուցի Կազմակերպությանը: Համաձայնագրի 3.2 կետի համաձայն՝ մինչև մատակարարի ծանուցման մեջ նշված ամսաթիվը Պատվիրատուն կգործողի մատակարարի մոտ իր պատշաճ լիազորված ներկայացուցչին՝ ողջ ապրանքի մնացորդը տեղում մինչև բեռնումը զննելու համար՝ դրա քանակի, որակի, տեսականու և այլ տեսանկյուններից հնարավոր պահանջներ օպերատիվ ի հայտ բերելու նպատակով: Համաձայնագրի 4-րդ կետի համաձայն՝ 2.2 կետին համապատասխան մատակարարված ողջ ապրանքի համար պատվիրատուն պետք է վճարի հետևյալ կարգով՝ 50 տոկոսը որպես կանխավճար՝ մինչև նույն համաձայնագրի 2.2 կետում նշված մատակարարումը սկսելու ամսաթիվը, Համաձայնագրի 4.2 կետի համաձայն՝ մնացած մասով համաձայնագրի 2.2 կետին համապատասխան ողջ ապրանքի մատակարարումն ավարտելուց հետո՝ 10 բանկային օրվա ընթացքում: 10.12.2010 թվականի գրության համաձայն՝ Կազմակերպությունը խնդրել է մինչև 31.12.2010 թվականը մատակարարել ոչ ավելի, քան 46.650.000 ՌԴ ռուբլու ապրանքներ, իսկ մյուս մասի մատակարարումն իրականացնել 2011 թվականի մարտ ամսին: 19.01.2011 թվականի գրության համաձայն՝ Ընկերությունը դիմել է Կազմակերպությանը՝ խնդրելով ուղարկել լիազորված ներկայացուցիչ ապրանքը բեռնելուց առաջ զննելու համար, ինչպես նաև համաձայնագրի 4.1 կետի համաձայն՝ վճարել 50 տոկոս կանխավճար: 01.02.2011 թվականի գրության համաձայն՝ Ընկերությունը կրկին դիմել է Կազմակերպությանը՝ տեղեկացնելով, որ 59.643.600 ռուբլու ապրանքներն առաքվել են վերջինիս հասցեով, գտնվում են ճանապարհին և խնդրել է կատարել առաքված սարքավորումների դիմաց վճարում (հանած 8.400 ռուբլի կանխավճարը) 59.635.200 ՌԴ ռուբլի: 08.02.2011 թվականի գրության համաձայն՝ Կազմակերպությունն Ընկերու-

---

թյանը հայտնել է, որ կանխավճարը չի կարող գերազանցել 50 տոկոսը և կկատարվի 24.12.2010 թվականին թիվ A-1527/10 լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամկետից ոչ ուշ: 16.03.2011 թվականի գրության համաձայն՝ Ընկերությունը կրկին դիմել է Կազմակերպությանը՝ խնդրելով համաձայնագրի 4.1 կետին և Կազմակերպության 08.02.2011 թվականի նամակին համապատասխան ապրանքի մատակարարման համար կատարել 50 տոկոս կանխավճար և համաձայնագրի 3.2 կետին համապատասխան Ընկերության հասցեով պատշաճ կերպով գործուղել լիազորված ներկայացուցչին: Ընկերությունը 07.04.2011 թվականին կրկին դիմել է Կազմակերպությանը նույն խնդրանքով: 16.03.2011 թվականի և 07.04.2011 թվականի գրություններում Ընկերությունը մատակարարման կոնկրետ ժամկետ չի նշել: Կազմակերպության կողմից վերոհիշյալ երկու գրություններին պատասխանելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ, ինչպես նաև Կազմակերպությունը Համաձայնագրով պայմանավորված 50 տոկոս կանխավճարը չի կատարել և ներկայացուցիչ չի գործուղել Ընկերության գտնվելու վայր:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի պարզել, թե պայմանագրով ապրանքի մատակարարումը Հայաստանի Արևմտյան քաղաքի պատվիրատուի պահեստ իրականացնելու պայման նախատեսված լինելու պարագայում արդյո՞ք դեռևս չմատակարարված ապրանքների գննությունը հանդիսացել է ապրանքի ընդունմանն ուղղված գործողություն, ինչի չկատարումը կարող էր հիմք ծառայել Ընկերության կողմից Կազմակերպության անգործությունը «ապրանքի չընդունում» կամ «ապրանքի ընդունումից հրաժարում» որակելու համար՝ հաշվի առնելով այն, որ Համաձայնագրից և գործում գտնվող գրությունների բովանդակությունից բխում է, որ Կազմակերպության ներկայացուցիչը պետք է լիազորված լիներ ապրանքի մնացորդը մինչև բեռնումը տեղում գննել՝ դրա քանակի, որակի, տեսականու և այլ տեսանկյուններից հնարավոր պահանջներ օպերատիվ ի հայտ բերելու նպատակով:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ 16.03.2011 թվականի և 07.04.2011 թվականի գրություններով Ընկերությունը խնդրել է կատարել 50 տոկոս կանխավճար և գործուղել ներկայացուցչին՝ մատակարարվող ապրանքի նախնական գննության համար, սակայն նշված գրություններում մատակարարման կոնկրետ ժամկետ չի նշել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերի միջև ապրանքի մնացորդը 2011 թվականի մարտ ամսին մատակարարելու համաձայնություն ձեռք բերված լինելու պայմաններում 2011 թվականի հունվար և փետրվար ամիսների գրությունները կողմերի համար իրավական հետևանքներ չէին կարող ունենալ: Մինչդեռ իրավական հետևանք առաջացնելու հնարավորություն ունեցող երկու գրություններից 16.03.2011 թվականի գրությունը Կազմակերպությունում մուտքագրվելու վերաբերյալ գործում որևէ ապացույց առկա չէ, հետևաբար պարզ չէ՝ այդ գրությունը Կազմակերպությունում ստացվել է, թե՛ ոչ: Իսկ 07.04.2011 թվականի գրությունը Կազմակերպությանն է հանձնվել 15.04.2011 թվականին՝ ապրանքի մատակարարման ժամկետի վերջին օրը:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված հանգամանքները պարզելուց հետո միայն հնարավոր կլինի պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք տվյալ դեպքում առկա է գնորդի կողմից մատակարարված ապրանքը չընդունելու կամ ապրանքն ընդունելուց հրաժարվելու դեպքը, հետևաբար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 529-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման հիմքը: Ման պայմաններում սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության՝ վերոնշյալ հանգամանքները պարզելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը հա-

մարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.08.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0250/02/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0250/02/12**  
Նախագահող դատավոր՝ **Լ. Գրիգորյան**  
Դատավորներ՝ **Ա. Թումանյան**  
**Գ. Մատիկյան**

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի մայիսի 24-ին  
դռնբաց դատական նիստում, քննարկելով Արարատ Արշակյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Արարատ Արշակյանի ընդդեմ Կարինե Տոնոյանի՝ պայմանագիր կնքելու պարտա-  
վորեցնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արարատ Արշակյանը պահանջել է պարտավորեցնել  
Կարինե Տոնոյանին կնքելու հիմնական նվիրատվության պայմանագիր Երևան քաղաքի  
Դ.Վարուժանի թիվ 4 տան ժառանգությամբ ձեռք բերված 1/2 բաժնից 1/2 բաժինն իրեն  
որպես սեփականություն հանձնելու մասին:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դա-  
տարանի (դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ **Դատարան**) 19.06.2012 թվականի  
վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**)  
06.09.2012 թվականի որոշմամբ Արարատ Արշակյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և

Դատարանի 19.06.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:  
Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արարատ Արշակյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կարինե Տոնոյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1952 թվականի մարտի 20-ի արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 6-րդ կետը, որը չպետք է կիրառել և չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է այն հանգամանքը, որ Կարինե Տոնոյանի և Արարատ Արշակյանի միջև 12.03.2011 թվականին կնքվել է անշարժ գույքի բաժնի նախնական նվիրատվության պայմանագիր, որով Կարինե Տոնոյանը պարտավորվել է ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո անհատույց՝ որպես սեփականություն, Արարատ Արշակյանին հանձնել Երևան քաղաքի Դ.Վարուժան փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի՝ իրեն հասանելիք ժառանգությամբ ձեռք բերվող սեփականության 1/2 բաժնի իրավունքը: Նշված նախնական նվիրատվության պայմանագրին չի տրվել իրավական գնահատական, և այն չի մեկնաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի լույսի ներքո, որի արդյունքում պարզ կլինել այն հանգամանքը, որ պատասխանող Կարինե Տոնոյանը ստանձնել է հիմնական նվիրատվության պայմանագիր կնքելու պարտավորությունը վիճելի հասցեի գույքի նկատմամբ ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո միայն: Նախնական պայմանագրում սահմանված 30.07.2011 թվականը՝ որպես հիմնական պայմանագրի կնքման ժամկետ, սահմանվել է կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ հաշվի առնելով Վերաքննիչ դատարանում Կարինե Տոնոյանի ժառանգության իրավունքի վերաբերյալ քննվող քաղաքացիական գործով վերջնական որոշում կայացնելու ժամկետը, որը, սակայն, տեղի է ունեցել ավելի ուշ: Սա նշանակում է, որ նվիրատվության նախնական պայմանագրով սահմանված ժամկետից տարբերվող այլ ժամկետ է սահմանված եղել, որը պայմանավորված է եղել Վերաքննիչ դատարանում քննվող թիվ ԵՄԴ/0226/02/11 քաղաքացիական գործով վերջնական որոշում կայացնելու հանգամանքով, որից էլ կախված է եղել նվիրատուի ժառանգության իրավունքի ձեռքբերման պահի որոշման ժամկետը: Վերաքննիչ դատարանը, ամբողջական վերլուծության չենթարկելով պայմանագրի պայմանները և կողմերի իրական կամարտահայտությունը, չի պարզել պայմանագրի իրական նպատակը, որի արդյունքում գրկվել է իրեն հասանելիք սեփականության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.09.2012 թվականի որոշումը և հայցը բավարարել:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի բաժնի նվիրատվության 12.03.2011 թվականի պայմանագրով Կարինե Տոնոյանը պարտավորվել է Արարատ Արշակյանին անհատույց, որպես սեփականություն հանձնել Երևան քաղաքի Դ.Վարուժան փողոցի թիվ 4 տան իր ժառանգական բաժինն այն ձեռք բերելուց հետո:

---

Կարինե Տոնոյանը նշված պայմանագիրը կնքել է ծանր հանգամանքների բերու-  
մով, բռնության սպառնալիքի ներքո, իր կամքին հակառակ: Մինչև պայմանագրի  
կատարման ժամկետի ավարտը՝ 30.07.2011 թվականը, Արարատ Արշակյանը չի ներկա-  
յացրել իր գրավոր առաջարկը հիմնական պայմանագրի կնքելու մասին և դրսևորել է  
այնպիսի վարքագիծ, որի պայմաններում Կարինե Տոնոյանը փոխել է իր մտադրությունը:  
Նվիրատվություն կատարելն ազատ կամքի դրսևորում է, և ոչ ոք չի կարող ստիպել  
կատարելու նվիրատվություն:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ  
փաստերը՝

1) 12.03.2011 թվականին նոտարական կարգով վավերացված «Անշարժ գույքի բաժնի  
նախնական նվիրատվության պայմանագրի» 1-ին կետի համաձայն՝ Կարինե Տոնոյանը  
(Նվիրատու) պարտավորվել է ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո անհատույց,  
որպես սեփականություն, հետագա նվիրառուին՝ Արարատ Արշակյանին, հանձնել Երևան  
քաղաքի Դ.Վարուժանի փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի՝ իրեն հասանելիք ժառան-  
գությամբ ձեռք բերվող սեփականության 1/2 բաժնի իրավունքը: Պայմանագրի 2-րդ կետով  
Կարինե Տոնոյանը (Նվիրատուն) պարտավորվել է հիմնական նվիրատվության պայմա-  
նագրի կնքել մինչև 30.07.2011 թվականը (գ.թ. 35):

2) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2011 թվականի թիվ  
ԵՄԴ/0226/02/11 որոշմամբ Կարինե Տոնոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է. մաս-  
նակի բեկանվել և փոփոխվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդ-  
հանուր իրավասության դատարանի 11.08.2011 թվականին թիվ ԵՄԴ/0226/02/11 քաղաքա-  
ցիական գործով կայացրած վճիռը՝ հակընդդեմ հայցը բավարարվել է՝ 23.11.2009 թվակա-  
նին մահացած Հրաչյա Տոնոյանին պատկանող ժառանգական գանգվածի նկատմամբ  
հավասար՝ 1/2-ական բաժիններով ժառանգությունն ընդունած ժառանգներ են ճանաչվել  
Նազլի Մելքոնյանը և Կարինե Տոնոյանը: Քաղաքացիական գործի վարույթի կարճված  
մասով վճիռը թողնվել է անփոփոխ: Հայցապահանջը մնացած մասով մերժվել է (գ.թ. 6-10):

3) Վճարել դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ վերադարձվել է թիվ  
ԵՄԴ/0226/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի  
17.11.2011 թվականի որոշման դեմ Նազլի Մելքոնյանի ներկայացուցիչ վճարել բողոքը  
(գ.թ.11-13):

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Բողոքի քննության շրջանակում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում  
անդրադառնալ անշարժ գույքի նվիրատվության խոստմանն՝ որպես նվիրատվության  
պայմանագրի և նվիրատվության նախնական պայմանագրի իրավական կարգավորման  
առանձնահատկություններին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրա-  
տվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականու-  
թյանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն, կամ  
երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտա-  
վորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավո-  
րությունից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ որևէ մեկին գույք կամ գույքային իրավունքներ  
անհատույց հանձնելու կամ որևէ մեկին գույքային պարտականությունից ազատելու  
խոստումը (նվիրատվության խոստումը) համարվում է նվիրատվության պայմանագիր և  
պարտավորեցնում է խոստացողին, եթե խոստումը տրվել է պատշաճ ձևով ու պարունակում



է կոնկրետ անձին գույք կամ իրավունք ապագայում անհատույց հանձնելու կամ նրան գույքային պարտականությունից ազատելու մասին պարզ արտահայտված ցանկություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Վերը նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատեսում է նվիրատվության պայմանագրի երկու տեսակ՝ ռեալ, երբ պայմանագիրը կնքված է համարվում համապատասխան գույքը կամ գույքային իրավունքը (պահանջը) հանձնելու կամ գույքային պարտավորությունից ազատելու պահից, և կոնսենսուալ, երբ մեկ կողմը (նվիրատուն) պարտավորվում է մյուս կողմին (նվիրառուին) հանձնել նվերն ապագայում: Այսինքն՝ նվիրատվության պայմանագրի կնքման պահը կարող է չհամընկնել այդ պայմանագրով տրամադրվող գույքի նկատմամբ իրավունքի փոխանցման հետ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման դեպքում առաջանում է պարտավորական իրավահարաբերություն, որի բովանդակությունն է կազմում նվիրատուի պարտականությունը ապագայում ավելացնել նվիրառուի գույքն իր գույքի նվազման հաշվին մի կողմից և նվիրառուի՝ գույքը պահանջելու իրավունքը մյուս կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նախնական պայմանագրով կողմերը պարտավորվում են ապագայում կնքել գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր (հիմնական պայմանագիր)՝ նախնական պայմանագրով նախատեսված պայմաններով:

Նշված դրույթի վերլուծությունից հետևում է, որ նախնական պայմանագրի առարկան ապագայում գույք հանձնելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու մասին հիմնական պայմանագիր կնքելու պարտավորությունն է: Ի տարբերություն հիմնական պայմանագրի, որով անմիջականորեն առաջանում են գույք հանձնելու, ծառայություն մատուցելու և այլ քաղաքացիաիրավական հարաբերություններ, նախնական պայմանագիրն ուղղված է նման հարաբերություններ առաջացնող պայմանագրի կնքմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին: Վճռաբեկ դատարանը նշել է, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական

---

իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (յուև «Կարապ» ՍՊԸ-ն ընդդեմ «Էգնա Շին» ՍՊԸ-ի թիվ ԾԴ-1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.03.2011 թվականին նոտարական կարգով վավերացված «Անշարժ գույքի բաժնի նախնական նվիրատվության պայմանագրի» կնքմամբ Կարինե Տոնոյանը պարտավորվել է **ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո** Արարատ Արշակյանին անհատույց, որպես սեփականություն հանձնել Երևան քաղաքի Դ.Վարուժան փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի իրեն հասանելիք ժառանգությամբ ձեռք բերվող սեփականության 1/2 բաժինը: Կարինե Տոնոյանը պարտավորվել է հիմնական նվիրատվության պայմանագիր կնքել **մինչև 30.07.2011 թվականը**: Վերաքննիչ դատարանի 17.11.2011 թվականի թիվ ԵՄԴ/0226/02/11 որոշմամբ 23.11.2009 թվականին մահացած Հրաչյա Տոնոյանին պատկանող ժառանգական գանգվածի նկատմամբ հավասար՝ 1/2-ական բաժիններով ժառանգությունն ընդունած ժառանգներ են ճանաչվել Նազլի Մելքոնյանը և **Կարինե Տոնոյանը, իսկ նշված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել Վճռաբեկ դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ**:

Վերոնշյալ իրավադրույթների մեկնաբանման լույսի ներքո անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերը նպատակ են ունեցել ապագայում կնքել նվիրատվության պայմանագիր: Այսինքն՝ կողմերի իրական կամքն ուղղված է եղել ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո Դ.Վարուժան փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի՝ Կարինե Տոնոյանին հասանելիք բաժնի 1/2-ի նկատմամբ սեփականության իրավունքն Արարատ Արշակյանին նվիրատվության պայմանագրի հիման վրա փոխանցելուն: Հետևաբար կողմերի միջև առաջացած հարաբերությունները նվիրատվության նախնական պայմանագրից բխող հարաբերություններ են, որոնք կողմերի մոտ առաջացնում են հիմնական պայմանագիր կնքելու փոխադարձ իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե կողմը, ում համար օրենքին համապատասխան պարտադիր է պայմանագիր կնքելը, խուսափում է այն կնքելուց, մյուս կողմն իրավունք ունի դատարան դիմել՝ պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջով:

Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 461-րդ հոդվածի 1-ին կետի կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նվիրատվության նախնական պայմանագիր կնքելու և հետագայում հիմնական պայմանագրի կնքումից խուսափելու փաստերի առկայությունը պայմանագրի կողմի մոտ առաջացնում է պայմանագիրը կնքելուց խուսափող կողմին պայմանագիրը կնքելուն հարկադրելու պահանջ ներկայացնելու իրավունք:

Վերոնշյալ հիմնավորմամբ Արարատ Արշակյանի մոտ ծագել է Կարինե Տոնոյանին պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջ ներկայացնելու իրավունք, քանի որ վերջինս խուսափել է նվիրատվության հիմնական պայմանագիր կնքելուց:

Ինչ վերաբերում է նվիրատվության պայմանական նախատեսված պարտավորությունների կատարման ժամկետին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ ժամկետի հաշվարկման խնդրին՝ հիմք ընդունելով պայմանագրի մեկնաբանության վերաբերյալ հիշատակված կանոնները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական

---

ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախնական պայմանագիր կնքելիս պատասխանող Կարինե Տոնոյանի (Մվիրատու) իրական կամքն ուղղված է եղել **Երևան քաղաքի Դ.Վարուժանի փողոցի թիվ 4 հասցեի անշարժ գույքի՝ իրեն հասանելիք ժառանգությամբ ձեռք բերվող սեփականության 1/2 բաժնի իրավունքն Արարատ Արշակյանին նվիրելու պայմանագիր կնքելուն, որպիսի իրավունքը նա ձեռք է բերել միայն 29.02.2012 թվականից հետո**: Տվյալ դեպքում, որպես պայմանագրի էական պայմանի՝ անհատույց որպես սեփականություն գույք հանձնելու պայմանագրի կնքման ժամկետ նշվել է **մինչև 30.07.2011 թվականը**, իսկ պայմանագրի կնքման պայման՝ **ժառանգման իրավունք ձեռք բերելը**:

Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիման վրա հայցվորի կողմից չեն ներկայացվել նույն օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված թույլատրելի և վերաբերելի ապացույցներ այն մասին, որ մինչև նախնական պայմանագրի 2-րդ կետով սահմանված ժամկետի՝ 30.07.2011 թվականի ավարտը հիմնական պայմանագիր չի կնքվել պատասխանողի գործողությունների հետևանքով, կամ այդ հիմնական պայմանագիրը կնքելու մասին կողմերից մեկը մյուսին ներկայացրել է առաջարկ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթների համաձայն՝ կողմերի միջև կնքված նախնական պայմանագրով պարտավորությունները դադարել են, քանի որ մինչև պայմանագրում նշված ժամկետի ավարտը, որում կողմերը պետք է կնքեին հիմնական պայմանագիրը, այն չի կնքվել, իսկ կողմերից մեկը մյուսին առաջարկ չի ներկայացրել այդ պայմանագիրը կնքելու մասին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանի 17.11.2011 թվականի թիվ ԵՄԴ/0226/02/11 որոշմամբ բավարարվել է Կարինե Տոնոյանի վերաքննիչ բողոքը. մասնակի բեկանվել և փոփոխվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 11.08.2011 թվականին թիվ ԵՄԴ/0226/02/11 քաղաքացիական գործով կայացրած վճիռը՝ հակընդդեմ հայցը բավարարվել է՝ 23.11.2009 թվականին մահացած Հրայր Տոնոյանին պատկանող ժառանգական գանգվածի նկատմամբ հավասար՝ 1/2-ական բաժիններով ժառանգությունն ընդունած ժառանգներ են ճանաչվել Նազլի Մելքոնյանը և Կարինե Տոնոյանը: Նշված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել Վճռաբեկ դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պայմանագրի կատարման ժամկետը՝ 30.07.2011 թվականը, ինքնին հանդիսացել է լրացուցիչ պայման, այն հիմնականում պայմանավորված է եղել **ժառանգման իրավունք ձեռք բերելու հետ** և կողմերի մեղքի բացակայության պայմաններում պայմանագրում նշված ժամկետի լրանալը չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրի էական և հիմնական պայմանը չկատարելու համար, քանի որ պայմանագրի էական պայման է հանդիսացել ժառանգության իրավունք ձեռք բերելուց հետո գույքի նվիրատվություն կատարելը, և այդ իսկ պատճառով կողմերի միջև կնքվել է նախնական նվիրատվության պայմանագիր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերի միջև կնքված անշարժ գույքի բաժնի նվիրատվության նախնական պայմանագիրը հանդիսացել է կողմերի կամքի ազատ արտահայտումը, որում ամրագրվել են կողմերի իրավունքներն ու պարտականու-

---

թյունները, այն վավերացվել է նոտարական կարգով, և վերջիններիս կամահայտնությունն ուղղված է եղել հիմնական նվիրատվության պայմանագիր կնքելուն: Ինչ վերաբերում է նշված պայմանագրի 2-րդ կետով սահմանված պայմանագրի կատարման ժամկետին, ապա այն բաց է թողնվել կողմերի կամքից անկախ հանգամանքներում և ունի անանցյալ բնույթ ժառանգման իրավունք ձեռք բերելու պայմանի նկատմամբ:

Ուստի նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վճեհ լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ պարտավորեցնել Կարինե Տոնոյանին կնքելու հիմնական նվիրատվության պայմանագիր՝ Երևան քաղաքի Դ.Վարուժան փողոցի թիվ 4 տան ժառանգությամբ ձեռք բերված բաժնի 1/2 բաժինն Արարատ Արշակյանին որպես սեփականություն հանձնելու համար:

2. Կարինե Տոնոյանից հօգուտ Արարատ Արշակյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազբոյթյուն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազբոյթյուններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ/0217/02/10**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԳԴ/0217/02/10

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

Դատավորներ՝ Ս. Միքայելյան

Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հաբեթ Աբովյանի բերած վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Հենրիկ Աբովյանի ընդդեմ Հաբեթ Աբովյանի, երրորդ անձ ՀՀ Գեղարքունիքի  
մարզի Վարդենիսի նոտարական գրասենյակի՝ 18.06.2009 թվականի թիվ 710 անշարժ  
գույքի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և ժառանգության բաժինն  
առանձնացնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հենրիկ Աբովյանը պահանջել է անվավեր ճանաչել 18.06.2009  
թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և ճանաչել ժառանգության իր  
պարտադիր բաժնի իրավունքը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2010 թվակա-  
նի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.06.2011 թվականի որոշմամբ  
Հենրիկ Աբովյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է ՀՀ  
Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2010 թվականի վճիռը,

---

և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) (դատավոր՝ Վ.Վարդանյան) 12.06.2012 թվականի վճռով Հենրիկ Աբովյանի հայցն ընդդեմ Հաբեթ Աբովյանի՝ 18.06.2009 թվականի թիվ 710 անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով բավարարվել է: Անվավեր է ճանաչվել Հաբեթ Աբովյանի անվամբ 18.06.2009 թվականին կնքված, սեղանամատյանի 710 համարի տակ գրանցված ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը: Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Հենրիկ Աբովյանի ընդդեմ Հաբեթ Աբովյանի, երրորդ անձ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի նոտարական գրասենյակի՝ ժառանգության բաժինն առանձնացնելու պահանջի մասին, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.10.2012 թվականի որոշմամբ Հաբեթ Աբովյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.06.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հաբեթ Աբովյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հենրիկ Աբովյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանում է հեղկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով այն հանգամանքին, որ Հաբեթ Աբովյանը, նոտարի կողմից կատարված նշման համաձայն, եղել է ոչ թե կույր, այլ ծեր և հիվանդ, հիմնավորված է համարել, որ նվիրատվության պայմանագիրը վկաների ներկայությամբ կնքելով և այլ անձի ստորագրությամբ հաստատելով՝ խախտվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի պահանջները: Մինչդեռ որոշման «Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը» բաժնում Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել նաև այն հանգամանքը, որ Հաբեթ Աբովյանի ծերության և հիվանդության պատճառով նրա խնդրանքով նոտարի ներկայությամբ կտակը ստորագրվել է Ատոմ Գրիգորյանի կողմից:

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ նվիրատվության պայմանագիրը Դատարանին է ներկայացվել և գործում առկա է միայն չվավերացված լուսապատճենի ձևով, մինչդեռ պայմանագրի բնօրինակը ներկայացվել է դատարանին գործի նոր քննության ժամանակ և կցվել է գործի նյութերին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.10.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ նվիրատվության գործարքը կատարվել է օրենքի կոպիտ խախտումներով, որոնք հիմք են հանդիսանում այն անվավեր ճանաչելու համար: Նոտարական գործողություններ կատարելիս նոտարը

պարտավոր է ստուգել ֆիզիկական անձի ինքնությունը և գործունակությունը անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով, մինչդեռ այն գտնվել է իր մոտ: Պայմանագիրը կնքելու պահին նվիրատու Հաբեթ Աբովյանը եղել է հիվանդ, չի գիտակցել իր գործողությունների իմաստը, ինչպես նաև կույր է եղել:

**3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 20.12.2002 թվականին տրված թիվ 997166 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղում գտնվող բնակելի տան սեփականատերը հանդիսացել է Հաբեթ Աբովյանը (հատոր 1, գ.թ. 15-17):

2) 17.10.2008 թվականին կազմված կտակով Հաբեթ Աբովյանն իր ամբողջ գույքը՝ բնակելի տունը, օժանդակ կառույցները, տնամերձ հողամասը, Վարդենիսի խնայքանկում պահվող գումարները կտակել է իր որդուն՝ Հենրիկ Աբովյանին: Հաբեթ Աբովյանի ծերության և հիվանդության պատճառով կտակը կտակարարի խնդրանքով նոտարի ներկայությամբ ստորագրել է Կարճաղբյուր գյուղի բնակիչ Ատոմ Գրիգորյանը (հատոր 1, գ.թ. 18):

3) 10.08.2010 թվականին Ատոմ Գրիգորյանի կողմից տրված հայտարարության համաձայն՝ կտակը կազմելու ժամանակ Հաբեթ Աբովյանի գիտակցությունը եղել է նորմալ, ճիշտ արտահայտել է իր մտքերը, և տեսողությունը եղել է բավարար (հատոր 1, գ.թ. 42):

4) 18.06.2009 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Հաբեթ Աբովյանը ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 բնակելի տունը (բնակելի տուն, օժանդակ կառույցներ, տնամերձ հողամաս) նվիրել է իր թոռանը՝ Հաբեթ Զաքարի Աբովյանին: Նվիրատվության պայմանագիրը Հաբեթ Աբովյանի ծերության և հիվանդության պատճառով նրա իսկ խնդրանքով նոտարի ներկայությամբ ստորագրել է այլ անձ՝ Սանասար Գասպարյանը, որին ներկա են եղել Հրանուշ Գրիգորյանը և Դավիթ Գևորգյանը (հատոր 3, գ.թ. 55):

5) Սանասար Գասպարյանի, Հրանուշ Գրիգորյանի և Դավիթ Գևորգյանի կողմից տրված բացատրությունների համաձայն՝ նվիրատվության պայմանագրի կնքման ժամանակ Հաբեթ Աբովյանը գիտակցել է իր գործողությունները, տեսողություն ունեցել է և խնդրել է, որպեսզի իր կողմից կազմված կտակը համարվի չեղյալ, իսկ նվիրատվության պայմանագիրն իր փոխարեն ստորագրի Սանասար Գասպարյանը: Վերջիններս միաժամանակ հայտնել են, որ գործարքի կնքման ժամանակ նոտարին են ներկայացվել Հաբեթ Աբովյանի անձը հաստատող փաստաթղթերը՝ անձնագիրը և զինվորական գրքույկը (հատոր 4, գ.թ. 98-110):

6) Նվիրատվության պայմանագրից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում և ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 21.06.2009 թվականին Հաբեթ Աբովյանին տրվել է թիվ 2167923 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը (հատոր 1, գ.թ. 75-77):

**4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նվիրատվության պայմանագիրը նվիրատուի փոխարեն այլ անձի կողմից ստորագրելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի հա-

---

մաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին, ուստի սույն որոշմամբ կրկին չի անդրադառնում տվյալ հարցին (*տես՝ Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54 (ՎԳ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հաբեթ Աբովյանի, երրորդ անձ Ֆելիքս Սարգսյանի և նվիրատվության պայմանագրի կնքմանը ներկա գտնված անձանց ցուցմունքները արժանահավատ չեն, և դա պայմանավորված է Հաբեթ Աբովյանի հետ ունեցած բարեկամական և անձնական այլ հարաբերություններով. նրանց ցուցմունքները հերքվում են գործում առկա հայցվորի կողմից ներկայացված գրավոր ապացույցներով, վկաներ Հեղինե Հարթենյանի, Ռոման Հենրիկի Աբովյանի ցուցմունքներով, Ատոմ Գրիգորյանի հայտարարությամբ, Հենրիկ Աբովյանի կողմից հորը բժշկական հաստատություններ ուղեկցելու փաստով և հոր՝ Հաբեթ Զաքարի Աբովյանի անձնագիրը, զինվորական գրքույկը և այլ փաստաթղթերը Հենրիկ Աբովյանի մոտ գտնվելու և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին ներկայացնելու հանգամանքով, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի թիվ 2 բժշկատնօրհանական փորձաքննության հանձնաժողովի նախագահ Ա. Աստուխյանի կողմից 16.12.2010 թվականին տրված թիվ Վ62 տեղեկանքով: Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է նաև այն հանգամանքը, որ նվիրատվության պայմանագիրը կնքելու ժամանակ նոտարին չի ներկայացվել Հաբեթ Աբովյանի անձնագիրը: Բացի այդ, դատարանին որևէ ապացույց չի ներկայացվել, որով կհիմնավորվեր, որ նվիրատու Հաբեթ Աբովյանը ի վիճակի չի եղել անձամբ կարդալու և ստորագրելու նվիրատվության պայմանագիրը, ինչի պատճառով էլ նրա փոխարեն այն ստորագրել է Սանասար Գասպարյանը: Մինչդեռ Հաբեթ Աբովյանը, նրա մայր Գայանե Աբովյանը, վկաներ Դավիթ Գևորգյանը, Հրանտշ Գրիգորյանը և նոտար Ֆելիքս Սարգսյանը հայտնել են, որ պայմանագիրը հրապարակվել է միայն նոտարի կողմից:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ վկաների ներկայությամբ գործարք պետք է կատարվի միայն այնպիսի դեպքերում, երբ գործարքի մասնակից անձն այնպիսի ֆիզիկական արատ կամ



հիվանդությունն ունենա, որոնք նրան գրկեն պայմանագիրը կարդալու և ստորագրելու հնարավորությունից, մինչդեռ դատարանին ներկայացված նվիրատվության պայմանագրում նոտարի կողմից ջնջված «անգրագետ» բառի վերևում գրվել է «ծերություն և հիվանդություն»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 596-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վկաների ներկայությամբ կատարված գործարքներն ամբողջությամբ ընթերցում է նոտարը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե անձը ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող ստորագրել, ապա նրա հանձնարարությամբ, նրա ու նոտարի ներկայությամբ փաստաթուղթը կարող է ստորագրել այլ անձ: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով փաստաթուղթը չէր կարող ստորագրել նոտարական գործողություն կատարելու համար դիմած անձը: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փաստաթուղթն ընթերցելուց անմիջապես հետո դա ստորագրում է յուրաքանչյուր կողմ: Վկաների ներկայությամբ կատարված գործարքն ստորագրում են վկաները, իսկ թարգմանչի մասնակցությամբ՝ նաև թարգմանիչը: Նոտարը գործարքն ստորագրում է նրանցից անմիջապես հետո: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջների խախտմամբ վավերացված կամ հաստատված փաստաթուղթը չունի սույն օրենքով նախատեսված ապացուցողական ուժ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վկաների ներկայությամբ կատարված գործարքներն ամբողջությամբ ընթերցում է նոտարը, և եթե անձը ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող ստորագրել փաստաթուղթը, ապա նրա հանձնարարությամբ, նրա ու նոտարի ներկայությամբ փաստաթուղթը կարող է ստորագրել այլ անձ, իսկ վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով փաստաթուղթը չէր կարող ստորագրել նոտարական գործողություն կատարելու համար դիմած անձը: Հաշվի առնելով այն, որ նշված կանոնները ընդհանուր են նոտարական կարգով վավերացվող պայմանագրերի համար՝ դրանք կիրառելի են նաև նվիրատվության պայմանագրի կնքման դեպքում: Հետևաբար նվիրատվության պայմանագիրը նվիրատուի փոխարեն այլ անձի կողմից ստորագրելը չի հանգեցնում այդ պայմանագրի անվավերության, եթե պահպանված են վերոնշյալ կանոնները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 18.06.2009 թվականի անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով Հաբեթ Աբովյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 բնակելի տունը (բնակելի տուն, օժանդակ կառույցներ, տնամերձ հողամաս) նվիրել է իր թոռանը՝ Հաբեթ Ջաքարի Աբովյանին: Նշված պայմանագիրը նվիրատու Հաբեթ Աբովյանի **հիվանդության և ծերության պատճառով նրա իսկ խնդրանքով նոտարի ներկայությամբ ստորագրել է Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի բնակիչ Սանասար Գասպարյանը: Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից, և պարզաբանվել են օրենսդրության նորմերը:** Պայմանագրի ստորագրման ժամանակ ներկա են եղել նոտարի կողմից հրավիրված Կարճաղբյուր գյուղի բնակիչներ Հրանտուշ Գրիգորյանը և Դավիթ Գևորգյանը, ինչի վերաբերյալ նշումներ են կատարվել նվիրատվության պայմանագրում: Նվիրատվության

---

պայմանագրից ծագող իրավունքները 21.06.2009 թվականին ստացել են պետական գրանցում:

Վերոնշյալ իրավակարգավորման լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը պատշաճ չեն գնահատել նվիրատվության պայմանագիրը, ինչպես նաև Սանասար Գասպարյանի, Հրանուշ Գրիգորյանի և Դավիթ Գևորգյանի կողմից տրված բացատրությունները, որոնցից պարզ է դառնում, որ պայմանագրի կնքման պահին Հաբեթ Աբովյանի գիտակցությունը եղել է նորմալ, ունեցել է տեսողություն, և նոտարին են ներկայացվել Հաբեթ Աբովյանի անձը հաստատող փաստաթղթերը: Նվիրատվության պայմանագիրը նվիրատուի ծերության և հիվանդության պատճառով վերջինիս խնդրանքով նոտարի ներկայությամբ ստորագրել է Սանասար Գասպարյանը, որի վերաբերյալ նշված է նաև նվիրատվության պայմանագրում: Այսինքն՝ ինչպես 17.10.2007 թվականին կազմված կտակի ժամանակ, այնպես էլ նվիրատվության պայմանագիրը կնքելիս Հաբեթ Աբովյանի խնդրանքով իր փոխարեն նոտարի և վկաների ներկայությամբ պայմանագիրը ստորագրել է այլ անձ: Պայմանագիրը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվել է, և պարզաբանվել են օրենսդրության գործող նորմերը:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Հենրիկ Աբովյանը բավարար ապացույցներ չի ներկայացրել այն մասին, որ Հաբեթ Աբովյանի անձը հաստատող փաստաթղթերը գտնվել են իր մոտ: Հաբեթ Աբովյանի անձը հաստատող փաստաթղթերի՝ Հենրիկ Աբովյանի մոտ գտնվելու հանգամանքը հերքվում է Սանասար Գասպարյանի, Հրանուշ Գրիգորյանի և Դավիթ Գևորգյանի կողմից տրված բացատրություններով, որոնք փաստում են, որ նվիրատվության պայմանագրի կնքման ժամանակ օրենքով սահմանված կարգով նոտարին է ներկայացվել Հաբեթ Աբովյանի անձնագիրը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նվիրատվության պայմանագրում լրացված են նվիրատուի՝ Հաբեթ Զաքարի Աբովյանի անձնագրային տվյալները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 18.06.2009 թվականին կնքված նվիրատվության պայմանագիրը կատարվել է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 596-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նշված հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն

գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.10.2012 թվականի որոշումը և այն փոփոխել: Հենրիկ Աբովյանի հայցը՝ Հաբեթ Աբովյանի անվամբ 18.06.2009 թվականին կնքված, սեղանամատյանի 710 համարի տակ գրանցված ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Հենրիկ Աբովյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.08.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Հենրիկ Աբովյանից հօգուտ Հաբեթ Աբովյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3058/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3058/02/11  
Նախագահող դատավոր՝ Ն.Տավարացյան  
Դատավորներ՝ Ա.Պետրոսյան  
Դ.Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.11.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) հայցի ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է Վալենտինա Մկրտչյանից  
բռնագանձել 656.400 ՀՀ դրամ՝ որպես պետությանը պատճառված վնաս:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 02.08.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.11.2012 թվականի որոշմամբ Դատախազության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.08.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 2-րդ և 5-րդ մասերը, որոնք պետք է կիրառվեն, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ հայց հարուցելիս Դատախազությունը ղեկավարվել է ոչ թե «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, այլ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, ինչը բխում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով սահմանված պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազության լիազորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ղեկավարում դատախազը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է պետական շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով Վալենտինա Մկրտչյանի անօրինական գործողությունների և պետությանը պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հիմնավորելու նպատակով Դատարան ներկայացված ապացույցները, այդ թվում նաև՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչությունում Վալենտինա Մկրտչյանի տված բացատրությունը և քրեական գործի հարուցումը մերժելու մասին չբողոքարկված որոշումը, նշել է, որ Դատախազությունն այդպիսիք չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վալենտինա Մկրտչյանը Դատարան չի ներկայացրել իր մեղքի բացակայությունը հիմնավորող ապացույցներ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.11.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Ռ. Սարգսյանը, պարզելով, որ «Բի Ռու Բի Էլ Ինֆո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որի տնօրենն է հանդիսացել Վալենտինա Մկրտչյանը, 01.01.2009 թվականից չհանդիսանալով ԱԱՀ վճարող, դուրս է գրել հարկային հաշիվներ, որի հետևանքով նախնական հաշվարկի համաձայն 11.08.2010 թվականի դրությամբ առաջացել են 656.400 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ, և որ նշված գումարը չի գերազանցում օրենսդրությամբ նախատեսված 2.000.000 ՀՀ դրամը, 20.08.2010 թվականին որոշում է կայացրել Ընկերության տնօրեն Վալենտինա Մկրտչյանի վերաբերյալ նախապատրաստած նյութերով քրեական գործի

---

հարուցումը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ մերժելու մասին (գ.թ. 10, 11).

2) ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԳ/1445/05/10 վարչական գործով 17.08.2010 թվականին կայացված վճռով բավարարվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի 1 հարկային տեսչության հայցն ընդդեմ Ընկերության, և վճռվել է Ընկերությունից հոգուտ ՀՀ պետական բյուջեի գանձել 562.600 ՀՀ դրամ գումար՝ որպես 09.03.2010 թվականի դրությամբ հարկային և պարտադիր վճարների գծով համապատասխան պարտավորությունների հանրագումար: Նշված վճռով ՀՀ վարչական դատարանն Ընկերության կողմից հայցադիմումի պատասխան չներկայացնելը գնահատել է որպես հայցվորի վկայակոչած՝ հարկային պարտավորությունների առկայության մասին փաստի ընդունում (գ.թ. 71-74):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հարկային պարտավորությունները տեսչականի տարբերակի տեսչության (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջի իրավաչափության հարցին՝ հաշվի առնելով նման գործերով դատարանի պրակտիկայի միասնականության ապահովումը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (ի թիվս այլոց տես՝ Նախալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԳ3/0016/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

Վերը նշված դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ պատճառված վնասի հատուցմանը վերաբերող գործերով դատարանները պետք է առանձնակի ուշադրություն դարձնեն ապացուցման առարկայի ճիշտ որոշմանը: Մասնավորապես, դատարանները նախ և առաջ պետք է որոշեն այն իրավական փաստերի շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն քաղաքացիական գործի լուծման համար և ենթակա են պարզման գործի քննության ընթացքում: Իրավական նշանակություն ունեցող հենց այդ փաստերի համակցությունն էլ կկազմի ապացուցման առարկան: Ապացուցման առարկան որոշելուց հետո միայն դատարանները, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, որոշում են ապացուցման առարկան կազմող իրավական փաստերի հաստատվելը կամ ժխտվելը և դրանից հետո միայն որոշում հայցը բավարարելու կամ մերժելու հարցը:

Վնասի հատուցման գործերով փաստերի իրավական նշանակություն ունենալու հարցը լուծելիս դատարանները պետք է ղեկավարվեն տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական, ինչպես նաև դատավարական իրավունքի նորմերով, որոնցում նշված են տվյալ իրավահարաբերությունը և կողմերի իրավունքներն ու պարտականությունները պայմանավորող իրավաբանական փաստերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի կանոնակարգումներից հետևում է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- վնաս պատճառող անձի առկայությունը,
- պատճառված վնասի առկայությունը,
- վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,
- պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև:

### **Պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելը**

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազը պետական շահերի պաշտպանության հայց հարուցում է միայն, եթե՝

1) իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին վերապահված է պետական շահերի պաշտպանությանն առնչվող տվյալ հարցերով հայց ներկայացնելը, իրազեկ լինելով պետական շահերի խախտման փաստի մասին, ողջամիտ ժամկետում հայց չի ներկայացրել կամ հայց չի ներկայացնում դատախազի կողմից հայց ներկայացնելու առաջարկություն ստանալուց հետո, կամ

2) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելն օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, կամ

3) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ է դիմել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, կամ

4) հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված է գույքային վնաս, կամ

5) պետական շահերի պաշտպանության հայցը հարուցվում է այլ երկրների դատարաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունեցող արբիտրաժներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) լիազորում է այլ մարմնի կամ կազմակերպության:

ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված պետական շահերի պաշտպանության իրավասությունը կոնկրետացվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածում, որտեղ ամրագրված են դատախազության այն լիազորությունները, որոնցով իրականացվելու է պետական շահերի պաշտպանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական շահերի պաշտպանության իրականացումը կախված լիազորությունների բովանդակությունից, ունի իրականացման տարբեր մեխանիզմներ: Այսպես, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազությունն օգտվում է դա-

---

տավարական այն իրավունքներից և կրում է այն պարտականությունները, որոնք ունենալու էր պետական այն մարմինը ով հայց ներկայացնելու պարտականություն ուներ: Հետևաբար դատախազությունը գրկված չէ վարչական դատավարության կարգով տնտեսվարող սուբյեկտի դեմ հարկային պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու հայց ներկայացնելու հնարավորությունից, եթե պետական իրավասու մարմինը ցուցաբերում է անգործություն կամ դիմել է դատախազությանը նման հայց ներկայացնելու միջնորդությամբ:

Վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում ամրագրված դատախազության լիազորությունը վերաբերում է բոլոր այն դեպքերին, երբ հայց հարուցելու լիազորությամբ օժտված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: ՇՆված դրույթի օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ դատախազության՝ հայց հարուցելու դատավարական պարտականության իրացման նախապայման է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորության բացակայությունը: ՇՆված կանոնակարգումը քննարկելով չվճարված հարկային պարտավորությունների արդյունքում պետությանը պատճառված վնասը բռնագանձելու հարցի համատեքստում, նախ անհրաժեշտ է որոշել, թե արդյոք կոնկրետ վիճելի իրավահարաբերության առկայության պարագայում բացակայում է որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ հայց հարուցելու լիազորությունը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի հիման վրա հարուցված քրեական գործի կարճման պարագայում, արարքի՝ որպես հանցագործության վերաբերյալ խոսք լինել չի կարող, մինչդեռ քաղաքացիաիրավական հարաբերությունը (վնաս պատճառելու հիմքով ծագող հարաբերությունը), որի ծագման պայմանները կարող են համընկնել քրեական պատասխանատվության ծագման պայմանների հետ, շարունակում է գոյություն ունենալ: Նման իրավիճակում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու արդյունքում պետությանը պատճառված վնասը տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից բռնագանձելու պահանջ ներկայացնելու լիազորությամբ որևէ պետական մարմին օժտված չէ:

Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված է դատախազության լիազորությունը հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասը հատուցելու հայց ներկայացնելու մասին, որպիսի լիազորության իրականացումը պայմանավորված է երկու փաստերի առկայությամբ՝

1) հանցանքի կատարում, որը կարող է հաստատվել միակ թույլատրելի ապացույցով, այն է՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով և

2) հանցանքի արդյունքում պետությանը պատճառված գույքային վնաս:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հարկերի և (կամ) տուրքերի չվճարման կամ պակաս վճարման համար դատախազությունը գործում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված լիազորությունների շրջանակում, ապա հայցապահանջը պետք է վերաբերի կոնկրետ տնտեսվարող սուբյեկտին **հարկային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելուն**: Մինչդեռ չվճարված հարկերը կամ տուրքերը, որպես **պետությանը պատճառված վնաս** գանձելու համար կարող է առկա լինել ինչպես հանցագործություն կատարելու փաստը և վնաս պատճառելը («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), այնպես էլ առանց հանցագործության փաստը հիմնավորող թույլատրելի ապացույցի առկայության վնաս պատճառելը և համապատասխան լիազոր մարմնի բացակայությունը



կամ այդպիսի մարմնի մոտ համապատասխան լիազորության բացակայությունը: Ընդ որում, նշված դեպքում որպես պատասխանող հանդես է գալիս այն անձը, ում լիազորությունների շրջանակում է եղել հարկային հաշվետվությունների ներկայացումը, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով չկատարելու արդյունքում պետությունը կրել է գույքային կորուստ:

Համադրելով վերոնշյալ հոդվածները չվճարված հարկերը կամ տուրքերը, որպես **պետությանը պատճառված վնասի** հատուցման վերաբերյալ մեկնաբանության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային հաշվետվություններ ներկայացնելու լիազորություն ունեցող անձից չվճարված կամ պակաս վճարված գումարները գանձելու հայցը դատախազությունը կարող է ներկայացնել քրեական գործի դատավարության ընթացքում քաղաքացիական հայցի ձևով կամ քաղաքացիական դատավարության կարգով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքերում, երբ **պետությանը պատճառված վնասի** հատուցման հայցը ներկայացվել է տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձի դեմ, ում լիազորությունն է հարկային հաշվետվությունների ներկայացումը, անհրաժեշտ է ապացուցել տվյալ անձի կողմից ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության կատարած լինելու փաստի առկայությունը, որպիսին հիմնավորվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցներով:

Վերոնշյալ եզրահանգումների համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ չնայած քաղաքացիական պատասխանատվության ծագման պայմանները հանգամանքների բերումով կարող են որոշ դեպքերում համընկնել քրեական պատասխանատվության առաջացման պայմանների հետ, այդուհանդերձ քաղաքացիաիրավական հայցը պետք է լուծվի քաղաքացիական պարտավորական իրավունքի սկզբունքների հիման վրա: Քրեական գործով իրականացված դատավարության արդյունքը որոշիչ չէ վնասի հատուցման վերաբերյալ գործով: Տուժողն իրավունք ունի պահանջել վնասների հատուցում անկախ այն հանգամանքից պատասխանողը դատապարտվել է, թե՛ արդարացվել, և փոխհատուցման հարցը պետք է դառնա իրավական ինքնուրույն գնահատման առարկա, որի պարագայում ապացուցման չափորոշիչներն էականորեն տարբերվում են քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերից: Դատարանի կարծիքով այն, որ միևնույն արարքը կարող է առաջացնել քրեական գործի հետ նույնական (ընդհանուր) հանգամանքներից (փաստերից) բխող վնասը հատուցելու քաղաքացիաիրավական պարտականություն, բավարար հիմքեր չի ստեղծում անձի նկատմամբ կիրառված քաղաքացիաիրավական պատասխանատվությունը դիտել նաև «քրեական պատիժ» (*տես Ռինգվոլդն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 11.02.2003 թվականի վճիռը, պարբ. 38*):

Միաժամանակ, հաշվի առնելով նմանատիպ գործերի քննության ընթացքում առկա իրավակարգավորման առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ համաներում կիրառելու, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հիմքով ազատելու պարագայում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-145-Ն և «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի թիվ ՀՕ-214-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո նշված գումարների վճարված լինելը պարզելու հարցը քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է:

---

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից՝ օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում ազատվելու պայմանը կոնկրետացված է նույն օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասում, որի համաձայն (մինչև 2013 թվականի փետրվարի 5-ի դրությամբ գործող ինկորպորացիայով)՝ **սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ, 205-րդ և 206-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:**

Օրենսդրական գործող կարգավորումը հնարավոր է համարում նաև չվճարված կամ պակաս վճարված հարկերն ու տուրքերը գանձելու հարցին անդրադառնալու հնարավորություն մինչև համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդումը չիրականացնելու, կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: **Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ:** Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու դեպքում դրանք տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից որպես պետությանը պատճառված վնաս քաղաքացիական հայց հարուցելու միջոցով կարող են գանձվել մինչև ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերը նշված փոփոխությունների կատարումն իրականացված հակաիրավական արարքների արդյունքում պատճառված վնասի համար, քանի որ *նշված փոփոխություններից հետո համաներման ակտերի ընդունման և համաներում կիրառելու մասին որոշման առկայության կամ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որոշման առկայության պարագայում գործում է պատճառված վնասի հատուցված լինելու կամ վնասի հետ կապված վեճի բացակայության կանխավարկածը:* Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև Գարիկ Ղազարյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը (*տես Գարիկ Ղազարյանի վերաբերյալ թիվ ՏՂ/0088/01/11 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2012 թվականի որոշումը*):

Սույն հարցի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ իրավակիրառ պրակտիկայում քաղաքացիական գործերով տնտեսվարող սուբյեկտի պաշտոնատար անձանցից չվճարված կամ պակաս վճարված հարկերը և տուրքերը որպես պետությանը պատճառված վնաս քաղաքացիական հայց հարուցելու

դատախազության լիազորությանը տրվող ոչ միանշանակ մեկնաբանություններին:

Դատախազության կողմից ներկայացված հայցերում և բողոքներում հիշատակվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դրույթները, որոնցում ամրագրված են դատախազական մարմինների լիազորությունները պետական շահերի պաշտպանության հարցում: Նշված լիազորություններից յուրաքանչյուրը պայմանավորում է դատախազության՝ քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով հայց հարուցելու իրավասությունը: Այս առումով լիազորություններն ամրագրող կոնկրետ դրույթների հիշատակումը հայցում կամ բողոքում չեն կարող դիտվել որպես հայցի հիմք (իրավական հիմք), քանի որ հայցի հիմքը կյուրական իրավունքի այն նորմն է, որի վրա հիմնվում է ներկայացված պահանջը: Հաշվի առնելով նմանատիպ գործերի առանձնահատկությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիշատակված հոդվածի դրույթների գնահատումը կարող է տեղի ունենալ պատշաճ հայցվորի հարցը քննարկելու համատեքստում: Հետևաբար, դատարանը պարտավոր է ստուգել դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության առկայությունը, անկախ նրանից նշվել է լիազորություններից մեկը, թե մյուսը կամ էլ որևէ մեկը չի նշվել:

Միաժամանակ, վերը նշված պատճառաբանությունները հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հնարավոր են դեպքեր, երբ միևնույն գումարը, տույժերի հետ միասին, բռնագանձվի նաև տնտեսվարող սուբյեկտից: Այդ նկատառումից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը նմանատիպ գործերով կրկնակի բռնագանձումը բացառելու համար հարկ է համարում արձանագրել, որ այդ գործերի քննության ընթացքում անհրաժեշտ է գնահատել այն հանգամանքը, թե արդյոք վեճի առարկա՝ պետությանը վճարման ենթակա հարկային պարտավորությունների, ինչպես նաև տույժերի վերաբերյալ ՀՀ վարչական դատարանի կողմից կայացվել է բռնագանձման վճիռ, որը փաստացի կատարվել է (գումարը բռնագանձվել է տնտեսվարող սուբյեկտից): Մնան դատական ակտի առկայությունը և այն կատարված լինելու հանգամանքն արգելք կհանդիսանա քաղաքացիական գործով հայցի բավարարման համար՝ անկախ կողմերի տարբերությունից, քանի որ սույն գործով վեճի առարկա՝ պետությանը պատճառված վնասները վարչական դատավարության կարգով քննվող գործի արդյունքում հատուցված լինելու պայմաններում սույն գործով ներկայացված պահանջը կդիտվի առարկայագուրկ, քանի որ կբացակայի պետությանը որևէ կերպ վնաս պատճառելու փաստը: Այսինքն՝ երկու տարբեր հայցերի դեպքում էլ նույն հիմքով առաջացած գումարները պետության օգտին կրկնակի բռնագանձելն ուղղակիորեն կենթադրի կրկնակի պատախասնատվություն կատարված արարքի համար: Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված ապացուցման և ապացույցները գնահատելու կանոններին համապատասխան դատարանները պետք է հաշվի առնեն հարուցված քաղաքացիական գործերին զուգահեռ քննվող վարչական գործերի առկայության կամ բացակայության փաստը, գումարի բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի առկայությունը, ինչպես նաև այդ ակտերի փաստացի կատարված լինելը: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ այն դեպքերին, երբ տնտեսվարող սուբյեկտի կողմից վիճարկվել է հարկային մարմնի կողմից կազմված վարչական ակտի (ստուգման ակտի) իրավաչափությունը: Այս դեպքում ևս վարչական ակտի վիճարկման վերաբերյալ գործով հայցը բավարարելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, որպես կանոն, արգելք է տնտեսվարող սուբյեկտի դեկավարից գումարի բռնագանձման վերաբերյալ գործի քննության համար: Ընդ որում, նման դեպքում էլ անհրաժեշտ է

---

գնահատել այն, թե արդյոք հայցի փաստական հիմքում դրվել է միայն ստուգման ակտը:

### **Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Դատախազությունը, պատճառված վնասը հատուցելու, այն է՝ Վալենտինա Մկրտչյանից հոգուտ պետական բյուջեի 656.400 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջ ներկայացնելով, որպես իր հայցապահանջի հիմք վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածները, ինչպես նաև ղեկավարվել է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, մինչդեռ հարկային հարաբերությունների նկատմամբ չեն կարող կիրառվել քաղաքացիաիրավական հարաբերությունները, այդ թվում՝ նաև պարտավորությունների և վնասի հատուցման հարաբերությունները կարգավորող քաղաքացիական օրենսդրության նորմերը, սույն գործով հայցագինը կազմող գումարն իրենից ներկայացնում է վճարման ենթակա, բայց չվճարված հարկի գումար, որի բռնագանձման հետ կապված հարաբերություններն ակնհայտորեն դուրս են քաղաքացիական իրավական հարաբերությունների շրջանակից, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները, մասնավորապես, այդ օրենսգրքի՝ հայցի իրավական հիմքում դրված 17-րդ և 1058-րդ հոդվածները դրանց նկատմամբ կիրառելի չեն՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի: Վերաքննիչ դատարանը եկել է այն հետևության, որ սույն դեպքի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների հիմքով չվճարված հարկային պարտավորությունների բռնագանձումը հնարավոր է միայն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով հարուցված հայցի պայմաններում: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ինչպես իրավացիորեն եզրահանգել է Դատարանը, տվյալ դեպքում խոսքը չի կարող վերաբերել հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը գույքային վնաս պատճառված լինելուն, քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի ավագ հետաքննիչ Ռ.Սարգսյանի 20.08.2010 թվականի որոշմամբ մերժվել է Ընկերության տնօրեն Վալենտինա Մկրտչյանի վերաբերյալ քրեական գործի հարուցումը, քանի որ հարկի գումարը չի գերազանցել օրենսդրությամբ նախատեսված 2.000.000 ՀՀ դրամը, ուստի Վալենտինա Մկրտչյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը:

Վճարեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ անկախ Դատախազության կողմից «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ հիմքի կամ հիմքերի վկայակոչումից, դրանք պետք է գնահատվելին դատախազության՝ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու իրավասության համատեքստում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Ռ.Սարգսյանը, պարզելով, որ Ընկերությունը, որի տնօրենն է հանդիսացել Վալենտինա Մկրտչյանը, 01.01.2009 թվականից չհանդիսանալով ԱԱՀ վճարող, դուրս է գրել հարկային հաշիվներ, որի հետևանքով նախնական հաշվարկի համաձայն 11.08.2010 թվականի դրությամբ առաջացել են 656.400 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ, և որ նշված գումարը չի գերազանցում օրենսդրությամբ նախատեսված 2.000.000 ՀՀ դրամը, 20.08.2010 թվականին որոշում է կայացրել Ընկերության տնօրեն Վալենտինա Մկրտչյանի վերաբերյալ նախապատրաստած կյուբերով քրեական գործի հարուցումը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ մերժելու մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա նշված ապացույցներով կարող է հաստատվել Վալենտինա Մկրտչյանի կողմից պետությանը վնաս պատճառելու փաստը, որի դեպքում Դատախազությունն օրենքի ուժով իրավասու էր պետական շահերի պաշտպանության հայց հարուցել, որպիսի ապացույցներն էլ սակայն անտեսվել են Վերաքննիչ դատարանի կողմից:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դատարանում գործի քննության ընթացքում Վալենտինա Մկրտչյանը ներկայացրել է ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/1445/05/10 վարչական գործով 17.08.2010 թվականին կայացված վճիռը՝ հայտնելով, որ այդ վճռով արդեն իսկ բռնագանձվել է 562.600 ՀՀ դրամը, այսինքն՝ Դատախազությունը տվյալ դեպքում նույն գումարը պահանջում է բռնագանձել Ընկերության տնօրենից: Մինչդեռ, ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը չեն անդրադարձել այդ հանգամանքին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված հիմնավորմանն անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում, պարզելու համար, թե արդյոք սույն գործով հայցագիրը ներառված է թիվ ՎԴ/1445/05/10 վարչական գործով կայացված վճռով բռնագանձման ենթակա գումարի մեջ, եթե այո, ապա արդյոք նշված դատական ակտը փաստացի կատարվել է, թե՛ ոչ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.11.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0190/02/12  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0190/02/12  
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան  
Դատավորներ՝ Ս. Մահակյան  
Ս. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ

հայցի ՀՀ գլխավոր դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) ընդդեմ Արմեն Պետրոսյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ պետությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Դատախազությունը պահանջել է Արմեն Պետրոսյանից բռնագանձել 11.681.500 ՀՀ դրամ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Միսակյան) (այսուհետ՝ Դատարան) 03.10.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.02.2013 թվականի որոշմամբ Արմեն Պետրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 03.10.2012 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Պետրոսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառվեն, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումները պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատախազությունն Արմեն Պետրոսյանից գումար բռնագանձելու պահանջով հայց հարուցելիս ղեկավարվել է ոչ թե «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, այլ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, ինչը բխում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածով սահմանված պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու Դատախազության լիազորությունից և վերապահված չէ պետական այլ մարմնի:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, դրանց ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և վնաս պատճառողի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ Դատախազությունը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր Արմեն Պետրոսյանի ոչ օրինաչափ գործողության և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ապա տվյալ դեպքում Դատախազությունը Դատարան է ներկայացրել Կոմիտեի քննչական վարչությունում նախապատրաստված նյութերում առկա փաստաթղթերի՝ Արմեն Պետրոսյանի բացատրությունների, համաներում կիրառելու մասին Արմեն Պետրոսյանի դիմումի, որով վերջինս ընդունել է հանցագործություն կատարելու փաստը, և քրեական գործի հարուցումը մերժելու մասին չքողքարկված որոշման պատճենները, որոնցով հիմնավորվում է, որ վերջինիս անօրինական գործողությունների և պետությանը պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Արմեն Պետրոսյանի նկատմամբ քրեական գործ չի հարուցվել համաներման ակտի կիրառման հիմքով, ինչը ևս վկայում է արարքի առկայության, ոչ օրինաչափ վարքագծի, վնասի ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և վնաս պատճառողի մեղքի առկայության մասին:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ Կոմիտեի քննչական վարչությունում նախապատրաստված նյութերը, որոնց համաձայն՝ «Ռեստորան Ծաղկաձոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Արմեն Պետրոսյանը, սեփական շահերից ելնելով, ստեղծել է անվճարունակության հատկանիշներ, ինչի հետևանքով պետությանը պատճառել է խոշոր չափի՝ 11.681.500 ՀՀ դրամի վնաս, որը հիմնավորվել է ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետի 13.01.2012 թվականի եզրակացությամբ և նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք բերված այլ ապացույցներով:

---

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 21.02.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.10.2012 թվականի վճռին:

### **2.1 Վճռարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռարեկ բողոքի պատասխան ներկայացրած անձը նշել է, որ Ընկերության կողմից հարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունը պետք է կրի Ընկերությունը, ումից նշված գումարը բռնագանձվել է: Ընկերության տնօրենը չի հանդիսանում հարկային պարտավորությունները կրող սուբյեկտ, իսկ գործով ապացուցված չէ վնասի հատուցման համար անհրաժեշտ պայմաններից և ոչ մեկը:

### **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.01.2012 թվականի թիվ 11-1445 եզրակացության համաձայն՝ Ընկերության ակտիվների և պարտավորությունների համալիր հետազոտման արդյունքից ելնելով՝ զուտ հաշվապահական և հարկային հաշվառման տեսանկյունից Ընկերությունը հնարավորություն չի ունեցել պետական բյուջեի հանդեպ իր պարտավորությունները մարելու: Եթե նախաքննությամբ պարզվի, որ Ընկերության անշարժ գույքի՝ ռեստորանի օտարումից իրականում ստացվել է կադաստրային արժեքի չափով հասույթ, այսինքն՝ օտարումն անհատույց չի կատարվել, ապա նման պայմաններում փորձաքննությամբ զուտ հաշվապահական և հարկային հաշվառման տեսանկյունից կդիտվի, որ Ընկերության տնօրենի կողմից արհեստածին ճանապարհով Ընկերությունում ստեղծվել են անվճարունակության հատկանիշներ, որի արդյունքում էլ Ընկերությունը զրկվել է պետական բյուջե վճարման ենթակա՝ 18.384,1 ՀՀ դրամի չափով պարտավորությունները վճարելու հնարավորությունից (**գ.թ.14-22**):

2) Կոմիտեի քննչական վարչության քննիչի 15.03.2012 թվականի որոշման համաձայն՝ Ընկերության տնօրեն Արմեն Պետրոսյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ նրա կողմից արհեստածին ճանապարհով Ընկերությունում ստեղծվել են անվճարունակության հատկանիշներ, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է, և նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածով քրեական հետապնդում չի իրականացվել՝ 19.06.2009 թվականի համաներման ակտի կիրառման հիմքով (**գ.թ.11-12**):

3) Արմեն Պետրոսյանի կողմից 10.03.2011 թվականին, 08.02.2012 թվականին և 16.04.2012 թվականին տրված բացատրությունների համաձայն՝ ինքն Ընկերության գույքը՝ ռեստորանը, օտարել է հատուցմամբ, իսկ պետությանը պատճառված վնասը չի վերականգնվել՝ ֆինանսական դժվարությունների պատճառով: Ընկերության գույքը՝ ռեստորանը, ինքն անձամբ է վաճառել և դրա դիմաց ստացել է 100.000 ԱՄՆ դոլար: Գույքի օտարումից հետո 2007 թվականին հաշվետվություն է ներկայացրել հարկային տեսչություն գույքի կադաստրային արժեքի՝ 58.407.663 ՀՀ դրամի չափով, որից էլ առաջացել է 11.681.500 ՀՀ դրամ պետական բյուջե վճարման ենթակա հարկի գումարը: Իսնդրել է իր նկատմամբ կիրառել ՀՀ Ազգային ժողովի կողմից 19.06.2009 թվականին ընդունված համաներման ակտը և քրեական հետապնդում չիրականացնել (**գ.թ.13, 23-26**):

4) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.12.2009 թվականի վճռով ավարտվել է Ընկերության սնանկության գործը, Ընկերությունը չի ունեցել որևէ գույք իր պարտավորությունները, այդ թվում՝ 18.850.200 ՀՀ դրամ հարկային պարտավորությունները, Կոմիտեի Հրագրանի ՏՀՏ-ի նկատմամբ կատարելու համար (**գ.թ.7-8**):



#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասի գումարը փնտրելու արդյունքի փոփոխության (գործադիր մարմնի ղեկավարից) բռնագանձելու պահանջի իրավաչափության հարցին ընդհանրապես, ինչպես նաև անդրադառնալ և գնահատման առարկա դարձնել այն ղեկավարը, երբ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական դատավարության փորձեր փուլերում և փորձեր համաներման ակտերի կիրառմամբ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է դատախազության՝ տնտեսվարող սուբյեկտի տնօրենից (գործադիր մարմնի ղեկավարից) հարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասի գումարը բռնագանձելու հայց ներկայացնելու լիազորության հարցին՝ արձանագրելով նման լիազորության առկայությունը, ինչպես նաև նման վնասի գանձման համար անհրաժեշտ պայմանների հարցին (ի թիվս այլոց՝ րեն՝ ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Վալենտինա Մկրտչյանի՝ վնասը հարուցելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/3058/02/11 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը): Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել նշված գործով արտահայտած որոշ դիրքորոշումներ, որոնք առանցքային նշանակություն ունեն սույն բողոքի քննության համար:

Հաշվի առնելով նմանատիպ գործերի քննության ընթացքում առկա իրավակարգավորման առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ **համաներում կիրառելու** պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 23-ի թիվ ՀՕ-145-Ն օրենքով կատարված փոփոխությունից հետո նշված գումարների վճարված լինելը պարզելու հարցը քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունն է:

Օրենսդրական գործող կարգավորումը հնարավոր է համարում նաև չվճարված կամ պակաս վճարված հարկերն ու տուրքերը գանձելու հարցին անդրադառնալը մինչև համաներման ակտի կիրառմամբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեական հետապնդում չիրականացնելու, կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: **Նույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ:** Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

---

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի (կամ պատասխանատու պաշտոնատար անձի) կատարած գործողությունների (անգործության) հետևանքով հարկային պարտավորությունները չկատարելու դեպքում դրանք տնտեսվարող սուբյեկտի ղեկավարից որպես պետությանը պատճառված վնաս քաղաքացիական հայց հարուցելու միջոցով կարող են գանձվել մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում վերը նշված փոփոխության կատարումն իրականացված հակաիրավական արարքների արդյունքում պատճառված վնասի համար, քանի որ *նշված փոփոխությունից հետո համաներման ակտի ընդունման և համաներում կիրառելու մասին որոշման առկայության* պարագայում գործում է պատճառված վնասի հատուցված լինելու կամ վնասի հետ կապված վեճի բացակայության կանխավարկածը:

Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև Գարիկ Ղազարյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումը (*տես՝ Գարիկ Ղազարյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0088/01/11 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 30.03.2012 թվականի որոշումը*): 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-145-Ծ օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարվել է լրացում, համաձայն որի՝ «Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով (ընդունվել է համաներման ակտ) գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործերով վարույթը կարգավորվում է քրեական դատավարական այն օրենքով, որը գործում է համապատասխանաբար հետաքննության, նախաքննության կամ գործը դատարանում քննելու ժամանակ: Դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը հետադարձ ուժ չունի և չի տարածվում մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելն սկսված վարույթի վրա:

Զարգացնելով Ա. Հարությունյանի գործով որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ժամանակի մեջ քրեադատավարական իրավունքի նորմերի գործողության առանձնահատկությունն այն է, որ գործի քննության կոնկրետ փուլում կիրառման ենթակա են տվյալ պահին գործող քրեադատավարական օրենքի դրույթները՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ քրեադատավարական օրենք է գործել հանցանքը կատարելու պահին: Ժամանակի մեջ քրեադատավարական օրենքի գործողության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կանոնից միակ բացառությունը նախատեսված է սույն հոդվածի 2-րդ մասով, որը վերաբերում է դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեադատավարական օրենքի հետադարձ ուժի արգելքին: Նշված արգելքի իմաստով սկսված վարույթի ընթացքում կիրառման ենթակա չէ դատավարության մասնակիցների իրավունքները վերացնող կամ սահմանափակող, ինչպես նաև նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական դատավարական օրենքը: Այլ կերպ սկսված վարույթը շարունակվում է քրեադատավարական հին օրենքին համապատասխան, եթե նոր օրենքով վերացվում, սահմանափակվում են դատավարության մասնակցի իրավունքները կամ այլ կերպ վատթարացվում է նրա վիճակը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարության մասնակցի իրա-

վունքները և կարգավիճակը կապված են քրեական դատավարության կոնկրետ փուլում որոշակի իրավահարաբերությունների առկայության հետ: Նշված իրավահարաբերությունների առկայությամբ պայմանավորված՝ քրեական գործով վարույթի ընթացքում դատավարության մասնակիցը ձեռք է բերում տվյալ փուլին բնորոշ կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ: Ոստի, քրեադատավարական օրենքի փոփոխության հետևանքով անձի իրավունքների սահմանափակման կամ նրա վիճակի վատթարացման մասին դատողություններ անելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե նախքան քրեադատավարական օրենքում փոփոխություն կատարելն անձն արդյոք օժտված է եղել որոշակի իրավունքով, որը սահմանափակվել է, կամ ունեցել է որոշակի կարգավիճակ, որը վատթարացել է օրենքի փոփոխության հետևանքով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով արգելվում է կիրառել դատավարական այն օրենքը, որը վերացնում կամ սահմանափակում է այդ օրենքի ուժի մեջ մտնելու պահին դատավարության մասնակցի ունեցած իրավունքը, ինչպես նաև այլ կերպ վատթարացնում է նրա՝ այդ պահին ունեցած կարգավիճակը:

Վերը նշված քրեական գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գործով քննարկման առարկա հանդիսացող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման վերլուծությունից երևում է, որ այն ուղղակիորեն կապված է համաներման ակտի հետ և սահմանում է դրա կիրառման արգելք: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման համաձայն՝ արգելվում է համաներման հիմքով գործի հարուցումը մերժել, վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Հետևաբար, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-145-Ն օրենքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացումը փոխկապակցված է համաներման կոնկրետ ակտի հետ և առանց դրա կիրառվել չի կարող:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-145-Ն օրենքն ընդունվել է 2011 թվականի մայիսի 23-ին, «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» հրապարակվել է 2011 թվականի մայիսի 24-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 25-ին: «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 26-ին:

Մեջբերված ժամկետների հետ համադրելով վերոնշյալ վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումն ընդունվել է, և դրանից բխող իրավահարաբերությունները ծագել են «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Այլ կերպ՝ այն պահին, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում համաներման կիրառման համար սահմանվել է լրացուցիչ արգելք, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ հայտարարված համաներումը դեռևս ընդունված չի եղել, և դրա հետ կապված որևէ իրավահարաբերություն գոյություն չի ունեցել:

Վերոնշյալ դիրքորոշումները հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածի

---

գործելու հնարավորությանն այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտի տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել կամ դադարեցվել է քրեական դատավարության տարբեր փուլերում և տարբեր համաներման ակտերի կիրառմամբ:

**Նախաքննության փուլում քրեական հետապնդումը չիրականացնելը կամ դադարեցնելը համաներման ակտերի կիրառմամբ**

1) Դատարանները նմանատիպ գործեր քննելիս պետք է անդրադառնան այն հանգամանքին, թե նախաքննության փուլում քրեական հետապնդումը չիրականացնելու կամ դադարեցնելու համար հիմք է հանդիսացել «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման, թե «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման կիրառումը:

Ըստ այդմ, եթե քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է մինչև վերոնշյալ օրենսգրքում փոփոխության կատարումը և կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը, ապա չի կարող գործել պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը, քանի որ հետապնդումը դադարեցնելու պահին գործող քրեադատավարական օրենսգիրքը չի նախատեսել համաներման ակտի կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքում նյութական վնասի հատուցված լինելու պայման: Իսկ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 6-րդ ենթակետը թեև պարունակում է համաներման ակտի կիրառման արգելք, այնուամենայնիվ դա վերաբերում է այն դեպքերին, երբ հատուցված չէ **օրինական ուժի մեջ մտած դատական ակտով** սահմանված տուժողին հասցված նյութական վնասը: Այլ կերպ՝ այս դեպքում խոսքը չի վերաբերում նախաքննության փուլում քրեական հետապնդումը չիրականացնելուն կամ դադարեցնելուն և կիրառելի է այն դեպքերի համար, երբ համաներումը կիրառվում է դատապարտյալների նկատմամբ:

- Այն դեպքերում, երբ քրեական հետապնդումը չի իրականացվել կամ դադարեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված վերոնշյալ փոփոխությունից հետո, սակայն կիրառվել է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշումը, ապա անձի վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ արտահայտված վերոնշյալ դիրքորոշմամբ չի գործում պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը:

- Իսկ այն դեպքում, երբ քրեական հետապնդումը նախաքննության փուլում չի իրականացվել կամ դադարեցվել է «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2011 թվականի մայիսի 26-ի որոշման կիրառմամբ, գործում է պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը:

**Դատական քննության փուլում քրեական հետապնդումը դադարեցնելը համաներման ակտի կիրառմամբ.**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝ (...) քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական քննության փուլում դատարանի

կողմից քրեական հետապնդումը համաներման ակտի կիրառման հիմքով դադարեցնելու դեպքում սույն բողոքի շրջանակներում քննվող հարցի համատեքստում իրավակարգավորման առանձնահատկությունները չեն տարբերվում նախաքննության ընթացքում նույն հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու իրավակարգավորումից, հետևաբար վերոնշյալ մեկնաբանությունները հավասարապես կիրառելի են նաև այս դեպքում:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ համաներման ակտի կիրառման վերը նշված դեպքերից տարբերվում է այն դեպքը, երբ անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելիս կամ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կիրառվում է համաներում՝ պատժաչափի կրճատման, պատիժը կրելուց ազատելու ձևով: Նման դեպքերի համար կիրառելի չէ պատճառված վնասի հատուցված լինելու կանխավարկածը, քանի որ այս իրավիճակում տեղի չի ունենում քրեական հետապնդման դադարեցում:

### **Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը**

Սույն գործով հայրը բավարարելիս Դատարանը պատճառաբանել է, որ Արմեն Պետրոսյանն իր ոչ իրավաչափ և անօրինական գործողություններով ստեղծել է Ընկերության սնանկության հատկանիշներ և պետությանը պատճառել է 11.681.500 ՀՀ դրամի վնաս, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդվածի հատկանիշներով նախատեսված արարք, սակայն պետությանը պատճառված վնասը կամովին չի վերականգնել:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում որպես հանցագործության առկայությունը հիմնավորող ապացույց Դատախազությունը վկայակոչել է ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.01.2012 թվականի թիվ 11-1445 եզրակացությունը և Արմեն Պետրոսյանի կողմից տրված՝ 16.04.2012 թվականի բացատրության արձանագրությունը՝ նշելով, որ դրանցով հիմնավորվում է, որ գործով պատասխանողը մեղավոր է կանխամտածված անվճարունակություն ստեղծելու համար, որի հետևանքով պետությանը պատճառվել է 11.681.500 ՀՀ դրամ գումարի վնաս: Վերաքննիչ դատարանը գտել է, որ մեղադրյալի կողմից «հանցագործության կատարման փաստն ընդունելը», համաներում կիրառելու դեմ չառարկելը կամ համաներման միջոցով քրեական գործի հարուցումը մերժվելու հանգամանքը չի կարող հավասարեցվել և նույնացվել դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ հետ: Այսինքն՝ Արմեն Պետրոսյանի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռ առկա չէ, հետևաբար գործում է վերջինիս անմեղության կանխավարկածը, որպիսի պայմաններում հանցագործությունը, այսինքն՝ քրեորեն պատժելի ոչ իրավաչափ գործողությունը և դրանով ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնաս պատճառելու հանգամանքը հաստատված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է և չէր կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը բավարարելու համար, հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.01.2012 թվականի թիվ 11-1445 եզրակացությամբ նշվել է, որ Ընկերությունը հնարավորություն չի ունեցել պետական բյուջեի հանդեպ իր պարտավորությունները մարելու: Եթե նախաքննությամբ պարզվի, որ Ընկերության անշարժ գույքի՝ ռեստորանի օտարումից իրականում ստացվել է կադաստրային արժեքի չափով հասույթ, այսինքն՝ օտարումն անհատույց չի կատարվել, ապա նման պայմաններում փորձաքննությամբ զուտ հաշվապահական և հարկային հաշվառման տեսանկյունից կդիտվի, որ Ընկերության տնօրենի կողմից արհեստածին ճանապարհով Ընկերությունում ստեղծվել են անվճարունակության

---

հատկանիշներ, որի արդյունքում էլ Ընկերությունը զրկվել է պետական բյուջե վճարման ենթակա՝ 18.384,1 ՀՀ դրամի չափով պարտավորությունները վճարելու հնարավորությունից:

Գործում առկա՝ Ընկերության տնօրեն Արմեն Պետրոսյանի կողմից 10.03.2011 թվականին, 08.02.2012 թվականին և 16.04.2012 թվականին տրված բացատրությունների համաձայն՝ Ընկերության գույքը՝ ռեստորանը, իր կողմից օտարվել է հատուցմամբ, իսկ պետությանը պատճառված վնասը չի վերականգնվել՝ ֆինանսական դժվարությունների պատճառով: Ընկերության գույքը՝ ռեստորանը, ինքն անձամբ է վաճառել և դրա դիմաց ստացել է 100.000 ԱՄՆ դոլար: Գույքի օտարումից հետո 2007 թվականին հաշվետվություն է ներկայացրել հարկային տեսչություն գույքի կադաստրային արժեքի՝ 58.407.663 ՀՀ դրամի չափով, որից էլ առաջացել է 11.681.500 ՀՀ դրամ պետական բյուջե վճարման ենթակա հարկի գումարը: Խնդրել է իր նկատմամբ կիրառել ՀՀ Ազգային ժողովի կողմից 19.06.2009 թվականին ընդունված համաներման ակտը և քրեական հետապնդում չիրականացնել: Կոմիտեի քննչական վարչության 15.03.2012 թվականի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է, և Արմեն Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել 19.06.2009 թվականի համաներման ակտի կիրառմամբ, այսինքն՝ մինչև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2011 թվականին կատարված փոփոխությունը գործող իրավական հիմքով, հետևաբար սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումների հաշվառմամբ նման պայմաններում չի գործում վնասի հատուցված լինելու կանխավարկածը:

Միաժամանակ սույն գործում առկա՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.12.2009 թվականի «Մասնկության գործն ավարտելու մասին» վճռից պարզ է դառնում, որ մասնկության վարույթի ընթացքում պետության նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունները չեն մարվել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցներով կարող է հաստատվել Արմեն Պետրոսյանի ոչ օրինաչափ գործողություններով պետությանը վնաս պատճառելու փաստը, որի դեպքում Դատախազությունն օրենքի ուժով իրավասու է պետական շահերի պաշտպանության հայց հարուցել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 21.02.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/3246/02/11**  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3246/02/11

Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան

Դատավորներ՝ Ն. Բարսեղյան

Կ. Զիլինգարյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մանվել Տեր-Առաքելյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2012 թվականի որոշման դեմ՝  
ըստ հայցի Հայկ Հարությունյանի, երրորդ անձինք Վարդուհի Աբրահամյանի, Արեգ,  
Սաթենիկ, Գոռ Հարությունյանների ընդդեմ «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝  
Ընկերություն), Մանվել Տեր-Առաքելյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատա-  
վորող տեղեկությունները հերքելու, հայցվորների պատիվն ու արժանապատվությունը  
վիրավորելու համար Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն  
աշխատավարձի 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հայկ Հարությունյանը պահանջել է Ընկերությանն ու Մանվել  
Տեր-Առաքելյանին պարտավորեցնել վերականգնել մինչև իրավունքի խախտումը  
եղած դրությունը, անհապաղ հանել իր լուսանկարը և «ՀՐԱՄԱՆ»-ը քաղաք Երևան,  
Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» վերտառությամբ շենքի  
մուտքի դռան մոտ՝ ցուցափեղկի հետևում գտնվող պաստառի վրայից, այսուհետ  
ձեռնպահ մնալ իր և իր մերձավոր ազգականների պատիվն ու արժանապատվությունն

---

արատավորող գործողություններ կատարելուց, ինչպես նաև հրապարակայնորեն ներողություն խնդրել իրենից հետևյալ բովանդակությամբ. «Մանվել Տեր-Առաքելյանը և «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ-ն հայցում են Հայկ Հարությունյանի ներողամտությունը նրա վերաբերյալ վիրավորական արտահայտություններ, անհարկի համեմատություններ թույլ տալու և նրան ու իր մերձավոր ազգականներին հանրային սննդի օբյեկտում սպասարկումը մերժելու համար», ինչպես նաև ներողություն հայցելու տեքստն իր լուսանկարով հրապարակել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, նույն ձևաչափով, ինչ իրենց հրամանը, մեկ ամիս ժամկետով տեղադրել նույն ցուցափեղկում, որտեղ գետեղվել էին լուսանկարները և «ՀՐԱՄԱՆ»-ը, ինչպես նաև վճարել Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով փոխհատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 15.06.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Մանվել Տեր-Առաքելյանը և Ընկերությունը պարտավորեցվել են վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը՝ անհապաղ հանել Հայկ Հարությունյանի լուսանկարը և «ՀՐԱՄԱՆ»-ը քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» վերտառությամբ շենքի մուտքի դռան մոտ՝ ցուցափեղկի հետևում գտնվող պատասառի վրայից, հրապարակայնորեն ներողություն խնդրել Հայկ Հարությունյանից հետևյալ տեքստով. «Մանվել Տեր-Առաքելյանը և «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ-ն հայցում են Հայկ Հարությունյանի ներողամտությունը նրա վերաբերյալ վիրավորական արտահայտություններ, անհարկի համեմատություններ թույլ տալու և նրան ու իր մերձավոր ազգականներին հանրային սննդի օբյեկտում սպասարկումը մերժելու համար», ներողություն հայցելու տեքստը հրապարակել Հայաստանի Հանրապետությունում 1000 տպաքանակից ավել հրատարակվող օրաթերթում: Միաժամանակ պատասխանողները պարտավորեցվել են վճարել փոխհատուցում Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով: Հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.10.2012 թվականի որոշմամբ Մանվել Տեր-Առաքելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.06.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մանվել Տեր-Առաքելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հայկ Հարությունյանի ներկայացուցիչ Տաթև Ղուկասյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 47-րդ, 48-րդ հոդվածները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1071.1-րդ հոդվածները, 1087.1-րդ հոդվածի 1-ին կետը, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը՝ նշված պնդումը պարճատաքաննել է հետևյալ փաստարկներով.*

Մանվել Տեր-Առաքելյանը չի հանդիսանում վիրավորանք որակված արտահայտությունները (ցուցափեղկում փակցված հրամանը, լուսանկարները) կատարող և ցուցափեղկում տեղադրող անձ: Ընդ որում, գործում առկա չէ որևէ ապացույց, որով կարող է հաստատվել, որ Մանվել Տեր-Առաքելյանը հանդիսանում է վիրավորանք հասցրած անձ:

Մանվել Տեր-Առաքելյանի՝ վիրավորանք հասցրած անձ հանդիսանալու փաստը



վկայակոչվել է հայցվորի կողմից, ուստի վերջինս պարտավոր էր ներկայացնել թույլատրելի և վերաբերելի ապացույցներ այդ փաստի հաստատման համար, ինչը չի կատարել, որպիսի պարագայում ապացույցի չներկայացման բացասական հետևանքները պետք է կրեր հայցվորը:

Վիրավորանքը հանդիսանում է դիտավորյալ կատարված գործողություն, որի նպատակն է նսեմացնել, արատավորել վիրավորանքի հասցեատեր սուբյեկտի պատիվն ու արժանապատվությունը, այսինքն՝ պետք է առկա լինի այդ անձի մեղքի դիտավորյալ ձևը, ինչի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է իր դիրքորոշումը 27.04.2012 թվականի ԵԿԴ/2293/02/10 որոշմամբ: Նշվածի կապակցությամբ իր դիրքորոշումն է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 15.11.2011 թվականի ՍԴՈ-997 որոշմամբ: Տվյալ դեպքում բացակայում է Մանվել Տեր-Առաքելյանի կողմից հայցվորին դիտավորյալ վիրավորելու դեպքը: Մանվել Տեր-Առաքելյանին վերագրվել է մի պարտականություն, որը նախատեսված չէ օրենքով, քանի որ վերջինս հանդիսանում է Երևանի Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերը, սակայն այդ գույքը նրա տիրապետման ներքո չի գտնվում, այն պայմանագրով հանձնվել է «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ին, իսկ վերջինիս կողմից էլ հանձնվել է Ընկերության տիրապետմանը, ուստի միայն անշարժ գույքի սեփականատեր լինելու փաստը բավարար չէ պատիվն ու արժանապատվությունն արատավորող գործողությունները նրա կողմից կատարված համարելու և վերջինիս ներողություն խնդրելուն պարտավորեցնելու համար:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ գույքային վնասի հատուցումը կարգավորող իրավանորմերը կիրառելու համար հայցվորը պետք է դատարան ներկայացրած լինի վիրավորանքի և գրպարտության արդյունքում իրեն պատճառված գույքային վնասի հատուցման պահանջ, ինչը տվյալ դեպքում առկա չէ, իսկ գույքային վնասի հատուցումը կարգավորող նորմերը պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության պահանջների նկատմամբ կիրառելի չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.10.2012 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

## **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական է և հիմնավոր, իսկ վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման: Վճռաբեկ բողոքում մեջբերված պնդումները վերաբերելի չեն, վկայակոչված իրավանորմերն իրենց պահանջներով ենթակա չեն կիրառման, ուստի և ներկայացված վճռաբեկ բողոքը պետք է մերժվի՝ վերաքննիչ դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Գույքի սեփականատերը և/կամ հիմնարկը, որոնք առավել նպաստավոր դիրքում են գտնվում, մեղավոր են անձանց հայտնաբերելու և իրենց անմեղությունն ապացուցելու հարցում, պետք է կրեն մեղքի բացակայությունն ապացուցելու պարտականությունը և համարվեն պատասխանատվություն կրող անգամ մեղքի ապացուցված չլինելու դեպքում:

Բացի այդ, Մանվել Տեր-Առաքելյանի պատասխանատվությունը հիմնավորվում է նաև սույն գործով բողոքաբերի կողմից կատարված և վեճի առիթ հանդիսացած գործողությունների բնույթով, այնուհետև հայցվորի և իր մերձավորների պատիվն ու արժանապատվությունն արատավորող գործողություններն անհապաղ դադարեցնելու և լուսանկարները կամովին, անհապաղ հանելու պահանջի վերաբերյալ բողոքաբերի ցուցաբերած անգործությամբ:

Հայկ Հարությունյանի կողմից դատարան դիմելուց հետո էլ, երբ Մանվել Տեր-Առաքելյանը գիտակցում էր, որ վեճի առիթ հանդիսացած գործողությունները հայցվորը

---

համարում է իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորող գործողություններ, չի դադարեցրել այդ գործողությունները: Սույն փաստերը միանշանակ վկայում են այն մասին, որ թե՛ Սանվել Տեր-Առաքելյանը, թե՛ «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ-ն ի սկզբանե, կանխամտածված կատարել են գործողություններ՝ նպատակ հետապնդելով վիրավորել հայցվորին, արատավորել վերջինիս պատիվն ու արժանապատվությունը:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայկ Հարությունյանը, 25.12.2011 թվականին ընտանիքի անդամների՝ կնոջ, որդիների և դստեր հետ միասին, այցելելով Երևանի Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» հանրային սննդի օբյեկտ, ակնաստես է եղել, որ այդ շենքի մուտքի դռան մոտ՝ ցուցափեղկի հետևում՝ պաստառի վրա, հայտնի ահաբեկիչ Բեն Լադենի լուսանկարի հետ նույն շարքում փակցված են իր և «Յունիքանկ» ՓԲԸ-ի նախագահ Վարդան Աթայանի լուսանկարները, որոնց վերևում գետեղված է եղել ներքոհիշյալ բովանդակությամբ «ՀՐԱՄԱՆ» վերնագրված տեքստը.

«Վերը նշված անձանց և նրանց մերձավոր ազգականներին ճանաչել անցանկալի հաճախորդներ, մարդկության նկատմամբ հանցագործություն կատարելու /ՄՀ/ կամ հանրային սննդի օբյեկտի դեմ ոտնձգություն /ՀԴՈ/ կատարելու համար

1. ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ /ՀԴՈ/

2. ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ /ՀԴՈ/

3. ԲԵՆ ԼԱԴԵՆ /ՄՀ/

4. ՍԱԴԱՄ ՀՈՒՍԵՅՆ /ՄՀ/ Ծանոթություն. վերը նշված անձանց արգելվում է սպասարկել տվյալ տարածքում (**հատոր 1, գ.թ. 17-18, 72-73**):

2. Սանվել Տեր-Առաքելյանը հանդիսանում է Երևան քաղաքի Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» շենքի սեփականատեր, իսկ այդ շենքում տնտեսական գործունեություն իրականացնողը և շենքը որպես հանրային սննդի օբյեկտ օգտագործողը «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ-ն է (**հատոր 1, գ.թ. 19-27**):

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անդրադառնում է վիրավորանք կատարած անձ հանդիսանալու հանգամանքի ապացուցման բեռի բաշխման, ինչպես նաև սույն գործով վիրավորանքի հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցման կանոնների կիրառման հարցերին:*

Վճարել դատարանն արձանագրում է, որ կողմերի միջև ըստ էության բացակայում է վեճն այն մասին, որ առկա է վիրավորանք, հետևաբար նշված փաստը Վճարել դատարանն ընդունում է որպես անվիճելի:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

1) գրավոր և իրեղեն ապացույցներով.

- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

Նշված իրավական դրույթի վերաբերյալ իր դիրքորոշումն է արտահայտել Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **վնաս պատճառողն այն անձն է (Ֆիզիկական կամ իրավաբանական), ով վիրավորանքի կամ զրպարտության միջոցով արատավորել է այլ ֆիզիկական անձի պատիվը կամ արժանապատվությունը կամ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի գործարար համբավը** (յուեւ Վանտ Եղիազարյանն ընդդեմ Բորիս Աշրաֆյանի թիվ ԼԿ/0749/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

Վերահաստատելով իր այս դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտաբար արձանագրում է, որ՝

ա) անձին վիրավորանքի համար պատասխանատվության ենթարկելիս առաջնահերթ պետք է պարզել վիրավորական արտահայտությունները վերջինիս կողմից կատարած լինելու, այսինքն՝ տվյալ սուբյեկտի՝ վիրավորանք կատարած անձ հանդիսանալու հանգամանքը,

բ) տուժողի կողմից որևէ անձի որպես վիրավորանք հասցրած անձ որակելը պետք է կատարվի այնպիսի կոնկրետ ապացույցների մատնանշմամբ, որոնք վկայում են վիրավորական արտահայտությունները տվյալ անձի կողմից կատարած լինելու մասին:

գ) ենթադրությունների հիման վրա անձին վիրավորանք հասցրած անձ դիտարկելը թույլատրելի չէ,

դ) նշված փաստերը չապացուցելու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է հայցվորը:

Վիրավորանքի կամ զրպարտության միջոցով անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորելու հետևանքով պատճառված վնասի հատուցման գործերով անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ անձը վնաս կարող է պատճառել ինչպես անձամբ, այնպես էլ միջնորդավորված՝ այլ անձի կամ անձանց միջոցով: Հետևաբար նման դեպքերում վնասի հատուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1073-րդ հոդվածի ուժով պետք է դրվի ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված վնաս պատճառողների վրա: Հետևաբար վերջիններս տուժողի առջև կկրեն համապարտ պատասխանատվություն:

Սույն գործով հայցը բավարարելիս Դատարանը պատճառաբանել է, որ «Հին Էրիվան» կոչվող շենքը հանդիսանում է մասնավոր սեփականություն, և այդ շենքի սեփականատերն ու օգտագործողը պատասխանատու են շենքի օգտագործմամբ օրենքին հակասող և այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը խախտող գործողությունների համար:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի հետևությունը հիմնավոր համարելով

---

մասնակիորեն, վճիռն օրինական ուժի մեջ թողնելիս պատճառաբանել է, որ «Մանվել Տեր-Առաքելյանը, հանդիսանալով շենքի սեփականատերը և նպատակ չհետապնդելով վիրավորել հայցվորին, պարտավոր էր ողջամիտ և բավարար միջոցներ ձեռնարկել այդ տեղեկատվության հրապարակայնությունը կանխելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնային այլ անձանց»:

Սույն գործի փաստերի համաձայն՝ վիրավորական արտահայտություն հանդիսացող լուսանկարները և «Հրամանը» փակցված են եղել Մանվել Տեր-Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» շենքի մուտքի դռան մոտ, իսկ այդ շենքում տնտեսական գործունեություն իրականացնող և շենքը որպես հանրային սննդի օբյեկտ օգտագործող է հանդիսացել «Աբգար Հինգերորդ» ՍՊԸ-ն: Հայցվորը չի ներկայացրել վերաբերելի և թույլատրելի ապացույցներ այն մասին, որ լուսանկարները և Հրաման վերնագրված տեքստը կատարվել և փակցվել են Մանվել Տեր-Առաքելյանի կողմից (անձամբ կամ միջնորդավորված):

Համադրելով վերոնշյալ պատճառաբանությունը և գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցվորի կողմից չի ապացուցվել Մանվել Տեր-Առաքելյանի՝ վիրավորանք կատարած անձ հանդիսանալու, այն է՝ վիրավորանք պարունակող արտահայտությունները նրա կողմից կատարելու հանգամանքը, որպիսի պարագայում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի չապացուցման բացասական հետևանքները կրում է հայցվորը: Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գույքի սեփականատեր լինելու փաստի ուժով Մանվել Տեր-Առաքելյանը չի կարող պատասխանատվություն կրել վիրավորանք հասցնելու համար, քանի դեռ չի ապացուցվել, որ նա է կատարել վիրավորանք հասցնելուն ուղղված գործողությունները:

*Անդրադառնալով սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1071.1-րդ հոդվածների կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետով նախատեսված վնասը հատուցելու պարտականությունը կրում է անշարժ գույքը տիրապետման, կառուցապատման կամ օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման և այլն) իրավունք ունեցող անձը, եթե վնասը պատճառվել է այդ իրավունքով հատկացված անշարժ գույքի տիրապետման կամ օգտագործման ընթացքում, և եթե այլ բան նախատեսված չէ անշարժ գույքի սեփականատիրոջ և անշարժ գույքը տիրապետող կամ օգտագործող անձի միջև կնքված պայմանագրով:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ, 1071.1-րդ հոդվածները կարգավորում են անձին (նրա կյանքին, առողջությանը) կամ նրա գույքին

պատճառված գույքային վնասի հետ կապված հարաբերությունները, որոնք պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով կարգավորվում են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետով, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով կարգավորվում են անձի անձնական ոչ գույքային իրավունքի խախտմամբ պատճառված ոչ գույքային վնասի (փոխհատուցման) հետ կապված հարաբերությունները, այսինքն՝ կարգավորվող հարաբերությունների առարկան և էությունը տարբեր են: Հետևաբար վիրավորանքի հետևանքով պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հարցը լուծելիս վերը նշված իրավադրույթները կիրառման ենթակա չեն:

Այս առումով Վճռաբեկ դատարանը վերահաստատում է պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով գույքային վնասի հատուցման վերաբերյալ արտահայտած իր դիրքորոշումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դրամական հատուցումներն իրենցից ներկայացնում են ոչ նյութական վնասի հատուցում և պայմանավորված չեն իրական վնասի կամ բաց թողնված օգուտի առկայությամբ կամ բացակայությամբ: Նշված վնասները, եթե այդպիսիք կան, հատուցման ենթակա են առանձին կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի հիման վրա: Այսպես՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 12-րդ կետի՝ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ գրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով իրեն պատճառված **գույքային վնասները**, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում ամրագրված դրամական փոխհատուցման, երբ դատարանը կարող է մերժել դրամական փոխհատուցումը՝ հիմք ընդունելով պատասխանողի գույքային դրությունը, նույն հոդվածի 12-րդ կետում ամրագրված **գույքային վնասը** ենթակա է փոխհատուցման ամբողջ ծավալով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վնասի ինստիտուտը կանոնակարգող նորմերին համապատասխան: Հաշվի առնելով այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը «վնաս» եզրույթն օգտագործում է իրական վնաս և բաց թողնված օգուտ իմաստներով և օրենսգրքում որևէ այլ տեղ, բացի 1087.1-րդ հոդվածից, չի կիրառվում «գույքային վնաս» եզրույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «գույքային վնաս»-ը պետք է մեկնաբանվի որպես անձին պատճառված իրական վնաս և/կամ բաց թողնված օգուտ: Վնասում ներառվում են նաև **ողջամիտ** դատական ծախսերը, որոնք անձը կատարել է կամ կատարելու է իրավունքները վերականգնելու համար, ինչպես նաև ցանկացած այլ ծախս, որն ուղղակիորեն կատարվել է խախտված իրավունքների վերականգնման համար (*տես Թարթույ Սանսարյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Դատարանը հայցը բավարարելիս հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի պահանջները, իսկ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ վնասի հատուցման ընդհանուր կանոնների կիրառումը որևէ կերպ չի ազդել գործի ելքի վրա: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով առաջացած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառման ոչ ենթակա նորմի կիրառումը հանգեցրել է գործի սխալ լուծման, քանի որ տվյալ դեպքում հայցվորի կողմից նյութական վնասի հատուցման պահանջ չի ներկայացվել, հետևաբար կիրառելի չէին վիրավորանքի հետևանքով պատճառված նյութական վնասի հատուցումը կանոնակարգող դրույթները՝ հաշվի

---

առնելով նաև այն, որ նշված դրույթների կիրառման հետևանքով սխալ է որոշվել վնաս հասցնող անձանց սուբյեկտային կազմը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մանվել Տեր-Առաքելյանի մասով հայցի բավարարումն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2012 թվականի որոշումը և այն փոփոխել. Հայկ Հարությունյանի հայցն ընդդեմ Մանվել Տեր-Առաքելյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու, հայցվորների պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու համար Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելու պահանջների մասին, մերժել:

2. Հայկ Հարությունյանից հօգուտ Մանվել Տեր-Առաքելյանի բռնագանձել 25.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար և 35.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0807/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0807/02/11**  
Նախագահող դատավոր՝ **Տ. Սահակյան**  
Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**  
**Տ. Նազարյան**

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում քննելով «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝  
Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2012  
թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարգարիտա Խաչատրյանի ընդդեմ Ընկերու-  
թյան՝ 2011 թվականի ապրիլի 21-ին «Հրապարակ» օրաթերթի 73(684) համարի 1-ին էջում  
հրապարակված հոդվածի հերքումն Ընկերության կողմից տպագրելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Մարգարիտա Խաչատրյանը պահանջել է հարկադրել Ընկե-  
րությանը տպագրել 2011 թվականի ապրիլի 21-ին «Հրապարակ» օրաթերթի թիվ 73(684)  
համարի 1-ին էջում հրապարակված հոդվածի հերքումը, պարտավորեցնել Ընկերությանը  
փոխհատուցել իրեն պատճառված բարոյական վնասը՝ 2.000.000 ՀՀ դրամի չափով,  
փոխհատուցել սույն հայցի համար վճարված պետական տուրքի գումարը:

Փոխելով հայցապահանջը՝ Մարգարիտա Խաչատրյանը պահանջել է պարտա-  
վորեցնել թերթին տպագրելու հերքում և խնդրել ներդրություն:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Ս. Թադևոսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.07.2012 թվա-  
կանի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
23.11.2012 թվականի որոշմամբ Մարգարիտա Խաչատրյանի վերաքննիչ բողոքը բավա-

---

րարվել է՝ Դատարանի 30.07.2012 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է. Ընկերությունը պարտավորեցվել է «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ժամկետում հրապարակել 21.04.2011 թվականի թիվ 73(684) համարի առաջին էջում տեղ գտած Մարգարիտա Խաչատրյանին վերաբերող հոդվածի հերքումը և ներողություն խնդրել նրանից:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարգարիտա Խաչատրյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 26-րդ, 27-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետը:*

*Բողոք բերած անձը՝ նշված պնդումը պարզապես անվավեր է հետևյալ փաստարկներով.*

Սահմանադրական դատարանն իր 15.11.2011 թվականի ՄԴՈ-997 որոշմամբ հստակ դիրքորոշում է հայտնել, որ նյութի հրապարակումը չի կարող որակվել որջամիտ կամ իրավաչափ, եթե նման տեղեկատվություն տարածողը չի ստուգել դրա իսկությունը շահագրգիռ անձին հարցում կատարելու միջոցով և խուսափել է հրապարակել այդ անձի դիրքորոշումը: Տվյալ դեպքում հոդվածը տպագրող լրագրողը զանգահարել է Մարգարիտա Խաչատրյանին տեղեկատվության ճշման կապակցությամբ, և վիճելի հոդվածում վիճարկվող տեղեկատվության հետ միաժամանակ տպագրվել է նաև վերջինիս դիրքորոշումը, այն է՝ մեջբերում. *«Սակայն տրիկին Մարգարիտան հերքեց դա. «Տե՛նց բան չկա, բալես, ինձ գլխի վրա են ընդունել: Ես բալա եմ տվել, ես Տանջոյի մաման եմ, ու հլը չկա տե՛նց մարդ, որ Տանջոյի մամային ասի՝ քամին գա քեզի: Ես քսան հար մեղալ եմ աբացել, եթե ինձ քաշքշեին, ես մեղալակիր չէի ըլին»:*

Ողջամիտ հրապարակումների էությունը կայանում է նրանում, որ անձն ազատվում է զրպարտություն համարվող տեղեկատվություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն, իսկ այդ սկզբունքի պահպանմամբ տեղեկատվություն տարածելու դեպքում բացակայում է նաև պատասխանատվության առաջացման առանցքային պայմաններից դիտավորությունը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը գտել է, որ դիտավորության հատկանիշի առկայությունը կամ բացակայությունը զրպարտության համար պատասխանատվության ենթարկելիս էական չէ:

Ավելին, Վերաքննիչ դատարանը վիճարկվող հոդվածում տեղ գտած հրապարակումները որակել է որպես զրպարտություն, սակայն բավարարել է նաև ներողություն խնդրելու պարտավորեցնելու պահանջը, մինչդեռ զրպարտության դեպքում ներողություն խնդրելը կամ դրան հարկադրելը չի հանդիսանում պաշտպանության միջոց: Ներողություն խնդրելը հանդիսանում է վիրավորանքի դեպքում կիրառվող պաշտպանության միջոց:

Վերաքննիչ դատարանի 23.11.2012 թվականի որոշումը հակասում է Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի թիվ ԵԿԴ/2293/02/10 որոշմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.11.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 30.07.2012 թվականի վճիռը:



## **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Սույն գործի քննության ժամանակ Ընկերությունը դատարանում չհիմնավորեց այն փաստը, որ վերջին այցերից մեկի ժամանակ գորամասերից մեկում վիճաբանություն է սկսվել Մարգարիտա Խաչատրյանի և հրամանատարական կազմի միջև, տեղի է ունեցել քաշքշոց և ծեծ: Ավելին, մինչև հողվածի տպագրումը լրագրողը զանգահարել է Մարգարիտա Խաչատրյանին և ճշտել է, որ նման միջադեպ տեղի չի ունեցել, սակայն տպագրել է զրպարտություն համարվող տեղեկությունը:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարգարիտա Խաչատրյանը 1998 թվականից իրականացնում է հասարակական գործունեություն ՀՀ զինված ուժերում: 2009 թվականից Մարգարիտա Խաչատրյանն ընդգրկվել է ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդում (**հատոր 1-ին, գ.թ. 32**):

2) Ընկերության կողմից հրապարակվող «Հրապարակ» օրաթերթի 21.04.2011 թվականի 73(684) համարում հրապարակված հոդվածում նշվել է. ««Զինվոր» հասարակական կազմակերպությունների համագործակցության իրավապաշտպան համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանը՝ հայտնի Մարտգը, պարբերաբար ստուգայցեր է կատարում ՀՀ զորամասերում: Նա աչքի է ընկնում իր կոպիտ վարքագծով՝ զորամասերում թերություններ, խախտումներ հայտնաբերելիս գերծ չի մնում հայիոյանքներից», «զորամասերից մեկում վիճաբանություն է սկսվել Մարգարիտա Խաչատրյանի և հրամանատարական կազմի միջև, և բանը հասել է նույնիսկ քաշքշոցի ու ծեծի: Սակայն տիկին Մարգարիտան հերքեց դա. «Տենց բան չկա, բալես, ինձ գլխի վրա են ընդունել: Ես բալա եմ տվել, ես Տանջոյի մաման եմ, ու հլը չկա տենց մարդ, որ Տանջոյի մամային ասի՝ քամին գա քեզի: Ես քսան հատ մեդալ եմ ստացել, եթե ինձ քաշքշեին, ես մեդալակիր չէի ըլնի»» (**հատոր 1-ին, գ.թ. 30**):

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պարճառված վնասի հարուցման գործերով նախկինում կայացրած որոշումներում ձևավորել է դիրքորոշում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ, հեղևարար սույն բողոքի շրջանակներում այդ դիրքորոշման լույսի ներքո է անդրադառնում սրտրադաս դատարանի պարճառաբանությունների գնահատմանը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բողոքարկված դատարանի ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միարեսակ կիրառության ապահովման գորճատույթից և գրնում, որ սույն գորճով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանապիպ գորճերով միասնական դատարանի պրակիրիկա ձևավորելու համար:

Բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաճեչո է համարում անդրադառնալ հեղևյալ հարցերին.

ա) արդյոք Ընկերության հրապարակած հոդվածում տեղ գտած տեղեկությունը կարող է գնահատվել որպես զրպարտություն,

բ) ներողություն խնդրելը կիրառելի է որպես պատասխանատվության միջոց զրպարտության համար:

ա) Վճռաբեկ բողոքով բարճրացված առաջին հարցին պատասխանելու համար վճռաբեկ դատարանն անհրաճեչոաբար հիշատակում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

---

1087.1-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումն այն հաշվով, որ միայն այս հարցին պատասխանելուց հետո է հնարավոր ստուգել Վերաքննիչ դատարանի կողմից 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի չկիրառման իրավաչափությունը: Մասնավորապես՝ վիճարկվող տեղեկությունն իրականությանը չհամապատասխանելու, հրապարակային ներկայացված լինելու և անձի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու փաստերը հաստատված լինելու դեպքում է հնարավոր գնահատել դրանց՝ զրպարտություն չհամարելու իրավաչափությունը 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի հիմքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենսգրքի հմաստով զրպարտությունն անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

1. անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

2. անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,

3. ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,

4. ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Որպեսզի միջամտությունը խոսքի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքին լինի համաչափ օրինական նպատակներին՝ այլ մարդկանց հեղինակության պաշտպանությանը, անհրաժեշտ է օբյեկտիվ կապի առկայություն գնահատող դատողությունների և այն անձի միջև, ով դիմել է դատարան: Հրապարակումների զրպարտչական բնույթի մասին միայն ենթադրելը և կասկածելը բավարար չէ հաստատելու այն հանգամանքը, որ որևիցե կոնկրետ անձի հասցվել է վնաս: Գործի փաստական հանգամանքներում պետք է լինի այնպիսի հանգամանք, որ սովորական ընթերցողն էլ զգա, որ տվյալ հայտարարությունն իրականում հասցեագրված է անմիջականորեն դիմումատուին, կամ էլ որ հենց ինքն է հանդիսացել քննադատության թիրախ (*տես Դյուրդին և Կիսլովը ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 31.10.2007 թվականի վճիռը, կետ 44*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ *հրապարակային* արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղոր-

դակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ թեկուզ մեկ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեատիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց:

Մեկնաբանվող հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային (անձը զրպարտել է տուժողին առանց երրորդ անձանց ներկայության):

Անդրադառնալով որոշակի փաստական հիմք ունեցող *գնահատող դատողության* պաշտպանությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված դրույթում ամրագրված զրպարտության սահմանումը չի կարող ենթադրել, որ անձի համբավին վնաս պատճառող ցանկացած բացասական կարծիք կամ որոշակի փաստական հիմք ունեցող գնահատող դատողություն պաշտպանված չէ օրենքով: Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի կամ գնահատող դատողության արտահայտումն այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել, գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել: Գնահատող դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Այնուամենայնիվ, երբ հայտարարությունը որակվում է որպես գնահատող դատողություն, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի բավարար փաստական կազմի վրա (*տես Պեդերսենը և Բաստագաարդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 76*): Գնահատողական դատողությունը կարող է անընդունելի համարվել, քանի որ այն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված համարվել (*տես Ռիզոսը և Դասկասն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 27.05.2004 թվականի վճիռը, կետ 45*):

Անդրադառնալով «Սյույզ փասպեր» եզրույթին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այդպիսիք հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող): Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստերի և գնահատող դատողությունների տարբերակման խնդրին, քանի որ դրանք մեծ կարևորություն են ներկայացնում գործի քննության համար և մեծապես կարող են ազդել գործի ելքի վրա: Եվրոպական դատարանը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով նշված խնդրին, հստակ տարանջատում է կատարում **փաստերի** և **գնահատող դատողությունների** միջև, որի վերաբերյալ ձևավորել է հետևյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է, և նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է» (*տես Լինգեյանն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 08.07.1986 թվականի վճիռը, կետ 46*):

Վերոգրյալից զատ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ գնահատող դատողությունը, դիտարկելով որպես կարծիքի ազատ

---

արտահայտման, այլ ոչ թե տեղեկություններ տարածելու իրավունքի դրսևորում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնել այն, թե արդյոք տվյալ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա: Փաստական հիմքից զուրկ գնահատող դատողությունը պաշտպանված չէ պետական միջամտությունից: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նաև նրանով, որ անդրադառնալով նշված հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական կարծիքը կարող է չափազանցված համարվել՝ հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում (*յրես Օրերշիքն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 01.07.1997 թվականի վճիռը, կետ 33*):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյոք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:

Հետևաբար, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միանշանակ պահանջն է, որպեսզի վիրավորանքի և զրպարտության գործերով հստակ տարանջատում կատարվի գնահատողական դատողության և փաստերի միջև՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումներ թույլ տալը բացառելու նպատակով (*վերը նշված իրավական հիմնավորումները յրես Թաթով Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշման մեջ*):

Վերաքննիչ դատարանը, բողոքը բավարարելիս մեջբերելով Ընկերության հրապարակած հոդվածի տեքստը, նշել է, որ այն պարունակում է իրականությանը չհամապատասխանող և հայցվորի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող տվյալներ, ինչն էլ հիմք է հայցի բավարարման և պատասխանողի քաղաքացիաիրավական պատասխանատվության ծագման համար, քանի որ զրպարտություն որակված տեղեկատվություն հրապարակած սուբյեկտի նպատակը, նրա ուղղակի կամ անուղղակի դիտավորություն ունենալ կամ չունենալու հանգամանքը չի կարող պատասխանատվությունից, այն է՝ զրպարտություն որակված նյութի հերքումը տպագրել պարտավորեցնելուց ազատելու հիմք հանդիսանալ:

Սույն գործով հայցվորն ըստ էության զրպարտություն էր համարել Ընկերության հրապարակած տեղեկությունն այն մասին, որ «խախտումներ հայտնաբերելիս Մարգարիտա Բաչատրյանը գերծ չի մնում *հայհոյանքներից*» և «գորամասերից մեկում *միճաքանություն* է սկսվել Մարգարիտա Բաչատրյանի և հրամանատարական կազմի միջև, և բանը հասել է նույնիսկ *քաշքշոցի ու ծեծի*»:

Վճռաբեկ դատարանը նշված երկու տեղեկությունների գնահատումը կատարելիս հիմք է ընդունում զրպարտության վերաբերյալ վերը նշված չափորոշիչները, որի արդյունքում արձանագրում է, որ կողմերի միջև բացակայում է վեճն այն մասին, որ նշված տեղեկություններն արվել են հրապարակային ձևով: Հետևաբար առկա է *հրապարակայնության* չափորոշիչը:

Նշված տեղեկություններից առաջինը՝ հայհոյանքներից գերծ չմնալը, իր բնույթով ընդհանրական է և չունի կոնկրետ ուղղվածություն՝ ում նկատմամբ և ինչ հայհոյանքներ են կիրառվել: Տեղեկության ընդհանրական կամ վերացական լինելը, որքան էլ որ նման տեղեկությունը չհամապատասխանի իրականությանը, զրկում է այդպիսի տեղեկությունը

փաստացի փոխյալ դիտարկելու հնարավորությունից: Ման տեղեկությունը քննարկվող հոդվածի իմաստով չունի իրավական արժեք և չի կարող առաջացնել հոդվածի կիրառման համար անհրաժեշտ պայման: Այլ կերպ՝ վերացական կամ ընդհանրական ձևակերպված տեղեկությունները (փաստերը) չպետք է համարվեն փաստացի տվյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Ման տեղեկությունների ըստ էության կոնկրետ և հստակ ուղղվածություն չունենալը գրկում են դրանց փաստացի տվյալ լինելուց:

Հաշվի առնելով այն, որ քննարկվող առաջին արտահայտության առնչությամբ չի հաստատվում անհրաժեշտ չորս պայմաններից մեկի առկայությունը՝ Վճռաբեկ դատարանը «խախտումներ հայտնաբերելիս Մարգարիտա Խաչատրյանը գեթ չի մնում հայհոյանքներից» արտահայտությունը չի գնահատում որպես զրպարտություն:

Ի տարբերություն առաջին արտահայտության՝ ներկայացված երկրորդ տեղեկությունը բավարար չափով է մատնացույց անում երևույթը (վիճաբանություն, քաշքշոց, ծեծ), կատարման վայրը (գորամասերից մեկը) և տույնկտային կազմը (Մարգարիտա Խաչատրյան և հրամանատարական կազմի ներկայացուցիչներ): Այսինքն՝ տեղեկությունն ընթերցողի մոտ հստակ պատկերացում է կազմվում, թե որտեղ և ում միջև է տեղի ունեցել վիճաբանությունը, քաշքշոցը և ծեծը: Այս արտահայտությունից հստակ է, որ վիճաբանությունը տեղի է ունեցել գորամասերից մեկում, իսկ դրա մասնակիցները սույն գործով հայցվորը և հրամանատարական կազմի ներկայացուցիչներն են: Այս հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված երկրորդ տեղեկությունը իրենից ներկայացնում է *փաստացի փոխյալ*: Հետևաբար քննարկվող երկրորդ տեղեկության մասով առկա են երկու անհրաժեշտ չափորոշիչները:

Վիճարկվող արտահայտության զրպարտչական բնույթի գնահատումը հաջորդ չափորոշիչի համատեքստում ցույց է տալիս, որ գործում առկա որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույցով չի հիմնավորվել այն փաստը, որ նշված տեղեկատվությամբ ներկայացված փաստերից «քաշքշոց և ծեծ»-ը իրականում տեղի են ունեցել: Դատարանում գործի քննության ընթացքում պատասխանող կողմը, ով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով կրում էր այդ փաստերի՝ իրականության համապատասխանելու փաստի ապացուցման բեռը, չի ներկայացրել որևէ ապացույց ի հավաստումն նշված փաստի: Փաստերի դասավորվածության նման պարագայում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հրապարակված տեղեկատվության՝ *իրականությանը չհամապատասխանելու* չափորոշիչի առկայությունը: Ինչ վերաբերում է «վիճաբանություն» տեղի ունենալուն, ապա Վճռաբեկ դատարանը, թեև վերոնշյալ հիմնավորմամբ այն համարում է *իրականությանը չհամապատասխանող*, այդուհանդերձ, նշված փաստացի տվյալն ինքնին սույն գործի շրջանակներում չունի անձի *պայրիվը և/կամ արժանապատվությունն արարավորող բնույթ*: Այս արտահայտության պատիվը և/կամ արժանապատվությունն արատավորող բնույթի բացառման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը ձևավորվում է այն հիմնավորմամբ, որ գորամասեր այցելելն ինքնին կարող է առաջ բերել անհամաձայնություն հրամանատարական կազմի ներկայացուցիչների հետ՝ հաշվի առնելով Մարգարիտա Խաչատրյանի ղեկավարած կազմակերպության գործունեության ուղղությունը և նպատակը (իրավապաշտպան գործունեությունն զինված ուժերում, զինված ուժերում կարգուկանոնի, կանոնադրական հարաբերությունների ամրապնդում և այլն (մեջբերում հայցադիմումից)): Ման գործունեության ընթացքում առաջ եկող տարաբնույթ հարցերի վերաբերյալ անհամաձայնությունները կարող են հանգեցնել վիճաբանության: Այս դեպքում վիճաբանությունն ինքնին որպես բացասական երևույթ դիտարկելը նշանակում է հաշվի չառնել վիճաբանության՝ որպես կոնկրետ խնդրի կամ հարցի լուծման գործառույթ ունենալու հանգամանքը: Այլ կերպ,

---

այն, որ անձը վիճաբանել է զինված ուժերում առկա որևէ խնդրի կապակցությամբ, ըստ էության չի ազդում հանրության կողմից այդ անձին և նրա գործողություններին տրվող սոցիալական գնահատականի (պատվի), ինչպես նաև արժանապատվության վրա, որի պաշտպանության սահմանները որոշվում են միայն այնքանով, որքանով համապատասխանում են հասարակության կողմից տրվող օբյեկտիվ գնահատականին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանին մնում է ստուգելու այն, թե «քաշքշոց և ծեծ» տեղի ունենալու փաստացի տվյալն ունի Մարգարիտա Խաչատրյանի պատիվը և/կամ արժանապատվությունն արատավորող բնույթ: Այս առումով Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հիմնավորված է հարցի դիտարկումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համատեքստում, քանի որ նշված դրույթի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմի առկայության դեպքում կբացակայի վիճարկվող փաստացի տվյալը զրպարտություն դիտելու համար անհրաժեշտ *չորրորդ չափորոշիչը*:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝ (...) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանից ելնող փաստաթղթից:

Ընկերությունը Դատարանում գործի բնության ժամանակ ներկայացրել է փաստարկ առ այն, որ հայցվորի՝ ծեծի միջոցով հարաբերությունները պարզող անձ լինելը բխում է իր իսկ հրապարակային ելույթից, մասնավորապես՝ մամուլի ասուլիսի ժամանակ նա հայտարարել է. «Ես ծեծող կանանցից մեկն եմ»: Ի հավաստումն նշված փաստարկի ներկայացրել է այն ինտերնետային կայքի հղումը ([www.armtown.com/news/am/zam/20071203/7685](http://www.armtown.com/news/am/zam/20071203/7685)), որտեղից ստացվել է տեղեկությունը: Մարգարիտա Խաչատրյանը չի ներկայացրել որևէ հակափաստարկ և ապացույց՝ ի հերքումն վերոնշյալի:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված կայքում տեղադրված նյութի բովանդակությունից հետևում է, որ «Տեսակետ» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Մարգարիտա Խաչատրյանն արել է հետևյալ արտահայտությունը. «Ես ծեծող կանանցից մեկն եմ»:

Նշված փաստի գնահատումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի համատեքստում Վճռաբեկ դատարանին հնարավորություն են տալիս արձանագրելու, որ «քաշքշելու և ծեծելու» փաստերը հիմնված են Մարգարիտա Խաչատրյանի հրապարակային ելույթի վրա, ուստի նշված փաստերը չեն կարող ունենալ անձի *պարիվը և/կամ արժանապատվությունն արտաստվորող բնույթ*: Հետևաբար բացակայում է տեղեկատվությունը զրպարտություն դիտելու համար անհրաժեշտ *չորրորդ չափորոշիչը*:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատական ատյանը չի գնահատել և ստուգել զրպարտության համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայությունը, այլ բավարարվել է բոլոր փաստերի վերաբերյալ ընդհանուր բնույթի դատողություն կատարելով: Նման կերպ Վերաքննիչ դատարանը, հակասելով Վճռաբեկ դատարանի՝ սմանատիպ գործերով արտահայտված և վերը հիշատակված դիրքորոշումներին, թույլ է տվել նյութական իրավունքի սխալ, ինչն ազդել է գործի ելքի վրա:

Այսպիսով, թեև վերոնշյալ պատճառաբանությամբ հիմնավորվում է զրպարտության փաստի բացակայությունը, այդուհանդերձ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բողոքաբերի այն փաստարկին, որ իր կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահպանմամբ

միջոցներ են ձեռնարկվել հրապարակվող տեղեկատվության ճշմարտացիությունը պարզելու ուղղությամբ՝ դիտելով նշված հրապարակումը «ողջամիտ հրապարակում»։ Նշված փաստարկին անդրադառնալով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում գրապարտություն, եթե դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն սպացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված իրավադրույթում ամրագրված «գերակա հանրային շահ» եզրույթին, նշել է, որ յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ բխել են գերակա հանրային շահից, որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության տեղեկացված լինելու իրավունքի շահով, արդյոք հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել, արդյոք հասարակությունը հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել դրանց հետագա հրապարակմանը: «Գերակա հանրային շահը» գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում գաղափարների տարածման պարտականություն: Զանգվածային լրատվության միջոցների այդ գործառնություն (պարտականությանը) զուգորդվում (համապատասխանում) է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը (*յուե Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը*):

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված իրավադրույթում *գերակա հանրային շահով* պայմանավորված լինելու պայմանն ունի գերակշռող ազդեցություն, իսկ մյուս պայմանները՝ *ճշմարտությունը և հիմնավորվածությունը պարզելը և հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացնելը* ունեն լրացուցիչ բնույթ և լրացնում են այդ պայմանին՝ այդպիսով ամբողջացնելով տեղեկությունը գրապարտություն չդիտելու հիմքը: Հետևաբար պետք է արձանագրել, որ հիշատակված դրույթի պայմանները ինքնուրույն գործել չեն կարող:

«Գերակա հանրային շահ» եզրույթում օգտագործվող «գերակա» ածականը բնութագրում է հրապարակվող տեղեկատվության հրատապությունը, այդ տեղեկատվության սոցիալական անհրաժեշտությունը: Հետևաբար դատարանները նշված եզրույթը գնահատելիս օգտվում են որոշակի հայեցողությունից և կոնկրետ դեպքում պետք է որոշեն, թե արդյոք այս կամ այն տեղեկատվությունը պայմանավորված է եղել սոցիալական անհրաժեշտությամբ, թե այն զուտ մասնավոր բնույթ է կրել: Անհրաժեշտաբար պետք է ընդգծել, որ մամուլում հրապարակվող ցանկացած տեղեկություն չի կարող բավարարել այս պայմանին, քանի որ տեղեկությունները հաճախ կրում են մասնավոր բնույթ և չունեն հանրային լայն հետաքրքրություն:

Վերը նշված *Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի* գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի



---

1087.1-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի վերաբերյալ նշել է, որ ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Մասնավորապես՝ փաստացի տվյալներ հրապարակված անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք **հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետևության** այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով և կարող էին համապատասխանել իրականությանը: Բացի այդ, հրապարակող անձը պետք է նշված տվյալները բացահայտի բարելիսիդ և հավասարակշռված: Այս դեպքում բարելիսիդությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալի (տվյալների)) ամբողջական, առանց էական նշանակություն ունեցող փաստերի փոփոխման շարադրանք: Ինչ վերաբերում է «հավասարակշռված» եզրույթին, ապա Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ հավասարակշռվածություն պետք է լինի ներկայացվող փաստացի տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության առումով: Փաստացի տվյալների հրապարակումը, պայմանավորված լինելով գերակա հանրային շահով, չպետք է պարունակի զրպարտող այլ տեղեկություններ, որոնք չեն առնչվում տվյալ խնդրին:

Զարգացնելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «մինչև տեղեկությունների հրապարակումը միջոցներ ձեռնարկելու» պահանջն ինքնանպատակ չէ: Այն ուղղված է երկու հարցի պատասխանը ստանալուն: Նախ արդյոք հրապարակվող տեղեկատվությունը բխում է հանրային գերակա շահից, հանրությունն արդյոք հետաքրքրված է նման տեղեկատվությամբ և սպասում է դրան: Երկրորդ՝ հրապարակվող տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, թե ոչ: Ինքնանպատակ կլիներ օրենսդրական նման կարգավորումը, եթե քննարկվող դրույթն ընկալվեր բացառապես տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու ճշտումը կատարելու ֆորմալ պարտականություն: Դրույթի նման մեկնաբանումը և կիրառումը կարող է հանգեցնել ցանկացած տեղեկատվության հրապարակման, թեկուզև անձը, ում վերաբերյալ հրապարակվում է տեղեկատվությունը, նախապես հերքել է այն: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկվող դրույթի պաշտպանությունից չեն կարող օգտվել այն սուբյեկտները, ովքեր բավարարվել են զուտ տեղեկատվության իրական լինելը ճշտելու պահանջի ձևական պահպանմամբ և թեկուզև ստանալով հրապարակվող նյութի՝ իրականությանը չհամապատասխանելու վերաբերյալ տեղեկություն՝ հրապարակել են այն:

բ) Անդրադառնալով սույն որոշմամբ բարձրացված երկրորդ հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը:



ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ գրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե գրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել գրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Ջանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Վերոգրյալից հետևում է, որ գրպարտության դեպքում որպես ներագուման միջոց նախատեսված են երկուսը՝ *գրպարտություն համարվող տեղեկատվության հերքումը* և *ոչ նյութական վնասի դրամային հատուցումը*: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ գրպարտության դեպքում դատարանը կկիրառի որևէ այլ միջոց, քան վերոնշյալները, պետք է արձանագրել խոսքի ազատության իրավունքի միջամտություն, որը նախատեսված չէ օրենքով: Նման միջամտությունը հանգեցնում է սահմանադրորեն ամրագրված հիմնարար իրավունքի խախտման:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն Ընկերության նկատմամբ որպես պատասխանատվության միջոց ի թիվս վերոգրյալի, կիրառել է ներողություն խնդրելը: Պատասխանատվության նման միջոցի կիրառումը Վճռաբեկ դատարանը դիտում է որպես օրենքով չնախատեսված միջամտություն Ընկերության խոսքի ազատության իրավունքին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով հետևյալ հիմնավորմամբ:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.07.2012 թվականի վճռին սույն որոշման պատճառաբանություններով:

2. Մարգարիտա Խաչատրյանից հոգուտ «Հրապարակ օրաթերթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3260/02/11  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3260/02/11

Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան  
Դատավորներ՝ Ի. Վարդանյան  
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արգար Հինգերորդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարդան Աթայանի ընդդեմ Ընկերության և Մանվել Տեր-Առաքելյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները հերքելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Վարդան Աթայանը պահանջել է Ընկերությանն ու Մանվել Տեր-Առաքելյանին պարտավորեցնել վերականգնել մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, անհապաղ հանել իր լուսանկարը և «ՀՐԱՄԱՆ»-ը քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա թիվ 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» վերտառությամբ շենքի մուտքի դռան մոտ՝ ցուցափեղկի վրա գտնվող պաստառի վրայից, այսուհետ ձեռնպահ մնալ իր և իր մերձավոր ազգականների պատիվն ու արժանապատվությունն արատավորող գործողություններ կատարելուց, ինչպես նաև հրապարակայնորեն ներողություն խնդրել իրենից հետևյալ բովանդակությամբ տեքստով. «ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Մանվել Տեր-Առաքելյանը և Ընկերությունը հայցում են Վարդան Աթայանի ներդրամությունը նրա վերաբերյալ վիրավորական արտահայտություններ, անհարկի

---

համեմատություններ թույլ տալու և նրան ու իր մերձավոր ազգականներին հանրային սննդի օբյեկտում սպասարկումը մերժելու համար», ինչպես նաև ներողություն հայցելու տեքստն իր լուսանկարով հրապարակել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, նույն ձևաչափով, ինչ իրենց հրամանը, մեկ ամիս ժամկետով տեղադրել նույն ցուցափեղկի վրա, որտեղ գետեղվել էին լուսանկարները և «ՀՐԱՄԱՆ»-ը, ինչպես նաև վճարել Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով փոխհատուցում պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու համար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 12.10.2012 թվականի վճռով հայցը Մանվել Տեր-Առաքելյանի մասով մերժվել է, իսկ Ընկերության մասով բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերությանը պարտավորեցվել է հրապարակայնորեն ներողություն հայցել Վարդան Աթայանից՝ ներողության տեքստը հայցվորի լուսանկարով վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում հրապարակելով «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հետևյալ բովանդակությամբ.

«ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ

«Արգար Հինգերորդ» ՍՊԸ-ն հայցում է Վարդան Աթայանի ներողամտությունը նրա վերաբերյալ վիրավորական արտահայտություններ, անհարկի համեմատություն թույլ տալու և նրան հանրային սննդի օբյեկտում սպասարկումը մերժելու համար»:

Ներողության ձևավորման, տառատեսակի չափն ու տեսակը չպետք է զիջի «Հրամանի» տեղեկատվությանը:

Ընկերությունից հոգուտ Վարդան Աթայանի բռնագանձվել է 500.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցման գումար, և 14.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: Մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելուն (անհապաղ հանել հայցվորի լուսանկարը և «ՀՐԱՄԱՆ»-ը քաղաք Երևան, Հյուսիսային պողոտա թիվ 2 հասցեում գտնվող «Հին Էրիվան» վերտառությամբ շենքի մուտքի դռան մոտ ցուցափեղկի վրա գտնվող պաստառի վրայից) պատասխանողներին պարտավորեցնելու պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Հայցը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.03.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.10.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ հոդվածների պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքաննել է հետևյալ փաստարկներով.*

Ընկերությունը չի հանդիսանում Վարդան Աթայանի կողմից վիրավորանք գնահատված արտահայտությունը կատարող և ցուցափեղկում տեղադրող անձ:

Վերաքննիչ դատարանը և Դատարանը չեն նշել, թե գործում առկա որ ապացույցի հիման վրա են եզրահանգել, որ հենց Ընկերությունն է հանդիսանում վիրավորանք որակված արտահայտությունների կատարողը և ցուցափեղկում տեղադրողը:

Ընկերության՝ վիրավորանք հասցրած անձ հանդիսանալու փաստը վկայակոչվել է Վարդան Աթայանի կողմից, ուստի վերջինս պարտավոր էր ներկայացնել թույլատրելի և վերաբերելի ապացույցներ այդ փաստի հաստատման համար, ինչը չի կատարել, որպիսի պարագայում ապացույցի չներկայացման բացասական հետևանքները պետք է կրեր հայցվորը:

Բացի այդ, Ընկերությունը՝ որպես իրավաբանական անձ, չի հանդիսանում վիրավորանք հասցնող պատշաճ սուբյեկտ, ուստի նրա նկատմամբ կիրառելի չեն վիրավորանքի համար նախատեսված պատասխանատվության միջոցները:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Համաձայն 10.12.2003 թվականին տրված թիվ 1553319 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի՝ Մանվել Տեր-Առաքելյանը հանդիսանում է Երևանի Կենտրոն համայնքի Հյուսիսային պողոտայի թիվ 2 հասցեում գտնվող կառույցի սեփականատեր:

Նշված հասցեում գտնվող շենքում տնտեսական գործունեություն իրականացնող և շենքը որպես հանրային սննդի օբյեկտ օգտագործող է «Արգար Հինգերորդ» ՍՊ ընկերությունը (**հատոր 1, գ.թ. 35-43**):

2. «Հին Էրիվան» վերտառությամբ շենքի մուտքի մոտ՝ ցուցափեղկի պաստառի վրա, Ուսամա Բեն Լադենի լուսանկարի հետ նույն շարքում փակցված է եղել «Յունիբանկ» ՓԲԸ-ի նախագահ Վարդան Աթայանի լուսանկարը և վերևում զետեղված է եղել ներքոհիշյալ բովանդակությամբ «ՀՐԱՄԱՆ» վերնագրված տեքստը.

«Վերը նշված անձանց և նրանց մերձավոր ազգականներին ճանաչել անցանկալի հաճախորդներ, մարդկության նկատմամբ հանցագործություն կատարելու (ՄՀ) կամ հանրային սննդի օբյեկտի դեմ ոտնձգություն (ՀԴՈ) կատարելու համար

1. ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՀԴՈ)

2. ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ (ՀԴՈ)

3. ԲԵՆ-ԼԱԴԵՆ (ՄՀ)

4. ՍԱԴԱՄ ՀՈՒՄԵՅՆ (ՄՀ) Ծանոթություն. վերը նշված անձանց արգելվում է սպասարկել տվյալ տարածքում» (**հատոր 1, գ.թ. 32-33**):

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում է, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում, դատարաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի, ինչպես նաև այդ հոդվածի կիրառման հետ կապված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ հոդվածների միադեպակ մեկնաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված, Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.*

**ա)** Արդյոք իրավաբանական անձը կարող է պատասխանատվություն կրել

---

վիրավորանքի կամ գրպարտության համար,

**բ)** եթե այո, ապա ինչ ապացույցներով կարող է հիմնավորվել իրավաբանական անձի՝ վիրավորանք կամ գրպարտություն կատարած անձ հանդիսանալու փաստը:

**ա)** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորել են վիրավորանքի կամ գրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ գրպարտություն կատարած անձի դեմ:

Նշված իրավական դրույթի վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնաս պատճառողն այն անձն է (ֆիզիկական կամ իրավաբանական), ով վիրավորանքի կամ գրպարտության միջոցով արատավորել է այլ ֆիզիկական անձի պատիվը կամ արժանապատվությունը կամ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի գործարար համբավը: Վիրավորանքի կամ գրպարտության միջոցով վնաս պատճառելու հետևանքով առաջացող հարաբերության սուբյեկտների շրջանակի սահմանափակում օրենսդիրն արդարացիորեն չի նախատեսել, և այդպիսիք կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ **իրավաբանական անձինք** (չլեն՝ ըստ Վանտ Եղիազարյանի հայցի ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ-ի թիվ ԼԳ/0749/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը):

Վերահաստատելով իր այս դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ դրա հիմքում ընկած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ տրված իրավակարգավորումը, համաձայն որի՝ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ Քաղաքացիներ) ու **իրավաբանական անձինք են**, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (հոդված 128):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ոչ նյութական բարիքները, նույն օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան, պաշտպանվում են դրանցով նախատեսված դեպքերում և կարգով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետով հատկապես նախատեսված է անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի՝ իբրև ոչ նյութական բարիքների դատական կարգով պաշտպանության հնարավորությունը ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց կատարած խախտումներից:

**բ)** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի հա-

---

մաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Անդրադառնալով վիրավորանքի համար պատասխանատվության պայմաններին՝ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

ա) անձին վիրավորանքի համար պատասխանատվության ենթարկելիս առաջնահերթ պետք է պարզել վիրավորական արտահայտությունները վերջինիս կողմից կատարած լինելու, այսինքն՝ տվյալ սուբյեկտի՝ վիրավորանք կատարած անձ հանդիսանալու հանգամանքը,

բ) տուժողի կողմից որևէ անձի որպես վիրավորանք հասցրած անձ որակելը պետք է կատարվի այնպիսի կոնկրետ ապացույցների մատնանշմամբ, որոնք վկայում են վիրավորական արտահայտությունները տվյալ անձի կողմից կատարած լինելու մասին,

գ) ենթադրությունների հիման վրա անձին վիրավորանք հասցրած անձ դիտարկելը թույլատրելի չէ,

դ) նշված փաստերը չապացուցելու պարագայում դրա բացասական հետևանքները կրում է հայցվորը (*յուև՝ Հայկ Հարությունյանի (երրորդ անձինք Վարդուհի Աբրահամյանի, Արեգ, Սաթենիկ, Գոռ Հարությունյանների) հայցն ընդդեմ «Արգար Հինգերորդ» ՍՊԸ-ի, Մանվել Տեր-Առաքելյանի թիվ ԵԿԴ/3246/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ անձի պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության գործերով ևս կիրառելի են ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության վերաբերյալ օրենսդրական ընդհանուր կարգավորումները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

ա) վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Այն ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և դատարանը հանում է ապացույցների կազմից,

բ) գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերոնշյալ վերլուծություններից հետո Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ սույն գործի առանձնահատկություններին և նշված սկզբունքների կիրառությանը սույն գործի նկատմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 10.12.2003 թվականին տրված թիվ 1553319 սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ Մանվել Տեր-Առաքելյանը հանդիսանում է Երևանի Կենտրոն համայնքի Հյուսիսային պողոտայի թիվ 2 հասցեում գտնվող կառույցի սեփականատեր, իսկ այդ շենքում տնտեսական գործունեություն իրականացնող և շենքը որպես հանրային սնուցի օբյեկտ օգտագործող է «Արգար Հինգերորդ» ՍՊ ընկերությունը:

«Հին Էրիվան» վերտառությամբ շենքի մուտքի մոտ՝ ցուցափեղկի պաստառի վրա, Ուսամա Բեն Լադենի լուսանկարի հետ նույն շարքում փակցված է եղել «Յունիբանկ» ՓԲԸ-ի նախագահ Վարդան Աթայանի լուսանկարը և վերևում գետեղված է եղել

---

ներքոհիշյալ բովանդակությամբ «ՀՐԱՄԱՆ» վերնագրված տեքստը.

«Վերը նշված անձանց և նրանց մերձավոր ազգականներին ճանաչել անցանկալի հաճախորդներ, մարդկության նկատմամբ հանցագործություն կատարելու (ՄՀ) կամ հանրային սննդի օբյեկտի դեմ ոտնձգություն (ՀԴՈ) կատարելու համար

1. ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ՀԴՈ)

2. ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ (ՀԴՈ)

3. ԲԵՆ ԼԱԴԵՆ (ՄՀ)

4. ՍԱԴԱՄ ՀՈՒՄԵՅՆ (ՄՀ) Ծանոթություն. վերը նշված անձանց արգելվում է սպասարկել տվյալ տարածքում»:

Սույն գործով Ընկերության մասով հայցը բավարարելիս Դատարանը պատճառաբանել է, որ Ընկերության կողմից տարածած «Հրաման» վերտառությամբ տեքստում տեղ գտած որպես «հանրային սննդի օբյեկտի դեմ ոտնձգություն», «մարդկության նկատմամբ հանցագործություն» կատարող սուբյեկտ Վարդան Աթայանին որակելը արատավորում է նրան, քանի որ նրան վերագրվող արարքներն իրենց բնույթով հանցագործություններ են: Հանցագործությունը՝ որպես հանրության կողմից պարսավելի արարք, չի կարող չարատավորել այն անձին, ում վերագրվում է: Ավելին, Վարդան Աթայանի վերաբերյալ կատարված արտահայտությունները զուգորդվել են նրա լուսանկարը Բեն Լադենի լուսանկարի կողքին փակցնելով: Հանրահայտ փաստ է, որ վերջինս եղել է ահաբեկիչ և կատարել է մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Վարդան Աթայանը, հանդիսանալով բանկային համակարգում բարձր պաշտոն զբաղեցնող անձ, ունենալով որոշակի սոցիալական և պաշտոնական դիրք, կարող է երբորդ անձանց կողմից ընկալվել որպես սուբյեկտ, ով իր դիրքի օգտագործմամբ կատարել է հակաիրավական արարքներ: Հետևաբար, «Հրամանում» տեղ գտած արտահայտությունները նպատակ են հետապնդել նսեմացնելու հայցվորի հեղինակությունը և նվաստացնելու նրան: Նշված հանգամանքը հավաստվում է նրանով, որ Ընկերությունն ակնհայտորեն գիտեր իր կողմից կատարված վիրավորական արտահայտությունների («հանրային սննդի օբյեկտի դեմ ոտնձգություն», «մարդկության նկատմամբ հանցագործություն» կատարող) ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու և վիրավորանք լինելու մասին: Ավելին, Ընկերությունը «Հրաման» վերնագրված տեքստը փակցրել է «Հին Էրիվան» վերտառությամբ շենքի մուտքի մոտ, այն շենքի, որտեղ վերջինս իրականացրել է հանրային սննդի գործունեություն: Ընկերությունն ակնհայտորեն գիտակցել է, որ Վարդան Աթայանի լուսանկարն այնպիսի անձի լուսանկարի կողքին փակցնելը, ով մեղադրվել է մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար, միանշանակ արատավորելու է նրա պատիվը և արժանապատվությունը:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ վերը նշված «Հրամանում» արված արտահայտություններն իրականում արատավորել են անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, նպատակ են հետապնդել նսեմացնելու Վարդան Աթայանի հեղինակությունը, նվաստացնելու նրան, և այդ արտահայտությունները կատարվել են հրապարակային ձևով, գտել է, որ Ընկերությունը բավականաչափ միջոցներ չի ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց: Միաժամանակ, վկայակոչելով Վճռարկի դատարանի նախադեպային որոշումը՝ Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ իրավաբանական անձը կարող է հանդիսանալ վիրավորանք հասցնող պատշաճ սուբյեկտ, և որ Ընկերությունը պատասխանատվության է ենթարկվել բավարար ապացույցների հիման վրա:

Վերլուծելով գործի փաստերը և ստորադաս դատարանների պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վեճը լուծելիս դատարաններն իրավա-ցիորեն հաշվի են առել հետևյալ փաստերը՝ **ա)** վիրավորական արտահայտություններ

---



պարունակող պաստառը փակցված է եղել Ընկերության գործունեության վայրում, **բ)** դրա վրա եղած տեքստը վերաբերել է հայցվորին չսպասարկելուն, իսկ Ընկերությունը զբաղվել է հանրային սննդի ծառայությունների մատուցմամբ, այսինքն՝ տեքստի բովանդակությունն ուղղակիորեն կապված է Ընկերության գործունեության հետ: Հետևաբար, գործում գտնվող վերաբերելի և թույլատրելի բավարար ապացույցներով՝ պաստառի վրա առկա «Հրաման» վերնագրված տեքստի բովանդակությամբ և լուսանկարներով, պաստառի գտնվելու վայրով, ապացուցվել է Ընկերության՝ վիրավորանք կատարած անձ հանդիսանալու հանգամանքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, հետևաբար տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.03.2013 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2780/02/09**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2780/02/09  
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան  
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Գ. Մատինյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅԹԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի  
(այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դա-  
տարանի 10.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ «ԿԱ ընդ ԿԱ» ՍԳԸ-ի (այսուհետ՝ Ըն-  
կերություն) հայցի ընդդեմ Կազմակերպության, երրորդ անձ Մարիամ Մկրտչյանի՝ վնասի  
հատուցման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնա-  
գանձել 25.692.863 Ռ-Դ ռուբլուն համարժեք ՀՀ դրամ, 22.811.913 Ռ-Դ ռուբլուն համարժեք  
ՀՀ դրամի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝  
սկսած 19.04.2009 թվականից մինչև վնասի գումարի փաստացի բռնագանձման  
(կամավոր վճարման) պահը, փաստաբանին վճարվելիք ծառայության գումար՝ 500.000  
ՀՀ դրամ, ինչպես նաև բռնագանձվող գումարի 5 տոկոսը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Ռ. Ներսիսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.02.2012 թվա-  
կանի վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Կազմակերպությունից հօգուտ

Ընկերության բռնագանձել 25.176.958 Ռ-Դ ռուբլուն բռնագանձման պահին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 4.200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2012 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.02.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Ընկերությունը և Մարիամ Մկրտչյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 559-րդ հոդվածի 1-ին կետը, որը չպետք է կիրառել, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը, 1058-րդ հոդվածի 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատարանի օրենսգրքի 132-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումները պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ Ընկերությանը պատճառվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով և 559-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրական վնաս, իսկ որպես Կազմակերպության ոչ օրինաչափ վարքագծի դրսևորում՝ Վերաքննիչ դատարանը դիտարկել է էներգամատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտումը: Մինչդեռ, Կազմակերպությունը և Ընկերությունը միմյանց հետ որևէ հարաբերության մեջ չեն գտնվել, վերջիններիս միջև կնքված չի եղել էներգամատակարարման պայմանագիր, հետևաբար և չէր կարող առկա լինել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 559-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրական վնասի պատճառման պարտադիր պայմանը՝ էներգամատակարարման պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարումը կամ անպատշաճ կատարումը: Այսպիսով, տվյալ դեպքում բացակայում են վնասի հատուցման համար անհրաժեշտ պարտադիր երկու պայմանները՝ անմիջականորեն Ընկերության նկատմամբ ոչ օրինաչափ գործողությունները, ինչպես նաև Կազմակերպության գործողությունների և Ընկերության կրած վնասի միջև պատճառահետևանքային կապը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ շինությանը պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունենալու համար առնվազն պետք է հանդիսանալ այդ շինության սեփականատերը: Տվյալ դեպքում հրդեհի պատճառով վնասվել է Մարիամ Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող շինությունը, հետևաբար դրա վնասվածքը վերականգնելու նպատակով դատական պաշտպանության իրավունքից կարող է օգտվել միայն շինության սեփականատերը, ուստի և այս առումով Ընկերության պահանջն ակնհայտ անհիմն է:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չեն պարզվել գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները՝ հրդեհի պատճառը և հասցված իրական վնասի չափը: Մասնավորապես՝ կրած վնասի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ «Տիգրիս» ՍՊԸ-ի կողմից 13.09.2012 թվականին տրված թիվ 02/13.09.2012 և թիվ 01/13.09.2012 եզրակացությունների համաձայն՝ Ընկերության կահույքին պատճառված վնասը կազմել է 57.952.000 ՀՀ դրամ, իսկ Մարիամ Մկրտչյանի

---

շինության վերանորոգումը՝ 61.531.933 ՀՀ դրամ, այսինքն՝ հրդեհի արդյունքում պատճառվել է ընդհանուր 119.483.933 ՀՀ դրամի վնաս: Մինչդեռ, քրեական դատավարության շրջանակում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից տրված թիվ 09-0715 եզրակացությամբ կահույքին և շինությանը պատճառված վնասի ընդհանուր արժեքը կազմել է 221.075.985 ՀՀ դրամ, որից 132.090.825 ՀՀ դրամը՝ կահույքին պատճառված վնաս, իսկ 88.985.160 ՀՀ դրամը՝ խանութի վերանորոգման համար անհրաժեշտ ծախս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 10.05.2012 թվականի որոշումը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Ընկերության վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները**

Բողոք բերած անձը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 559-րդ հոդվածները չպետք է կիրառվեին այն պատճառով, որ Ընկերության և Կազմակերպության միջև առկա չէր էլեկտրամատակարարման պայմանագիր: Մինչդեռ, տվյալ դեպքում նշված պայմանագրի բացակայությունը որևէ կապ չունի Կազմակերպության կողմից Ընկերությանը վնաս պատճառելու հետ, քանի որ Կազմակերպությունը կատարել է ոչ իրավաչափ գործողություններ, ինչի հետևանքով առաջացել է վնաս, իսկ վնասի և ոչ իրավաչափ գործողությունների միջև ուղղակի կապն առկա է, այն է՝ հոսանքի տատանման և լարման բարձրացման արդյունքում առաջացել է հրդեհ:

Բողոք բերած անձը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի մասով անտեսել է, որ վիճարկվող դատական ակտում գործի հանգամանքները մանրամասն շարադրված են, իսկ ապացույցները թվարկված են հատ առ հատ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի կիրառմանը, ապա այդ մասով նույնպես դատական սխալ առկա չէ: Մասնավորապես՝ վնաս պատճառելու մեջ մեղքի բացակայության ապացուցումն օրենսդրի կողմից դրվել է պատասխանող կողմի վրա: Մինչդեռ, տվյալ դեպքում Կազմակերպությունը վնասի առաջացման հարցում իր մեղքի բացակայությունն ապացուցելու պարտականությունը չի կատարել: Միաժամանակ, դրան հակառակ՝ Ընկերության կողմից հիմնավորվել է Կազմակերպության ոչ օրինաչափ գործողության, պատճառված իրական վնասի, ոչ օրինաչափ գործողության և վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքը:

### **2.2. Մարիամ Մկրտչյանի վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները**

Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալության հանձնված լինելը որևէ կերպ չի կարող կասկածի տակ դնել Կազմակերպության կողմից պատշաճ որակի էլեկտրաէներգիա մատակարարելու պարտականությունը, որը բխում է օրենքից, այլ նորմատիվ իրավական ակտերից, էլեկտրամատակարարման պայմանագրից և, առհասարակ, էլեկտրամատակարարման փաստից: Մինչդեռ, տվյալ դեպքում Կազմակերպության կողմից անորակ էլեկտրաէներգիայի մատակարարման և պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապն ապացուցված է սույն գործի ապացույցների բազմությամբ և կասկածից վեր է: Հետևաբար, Կազմակերպությունը պետք է պատասխանատվություն կրի իր կողմից անորակ էլեկտրաէներգիայի մատակարարման հետևանքով առաջացած հրդեհով պատճառված վնասների համար:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի եզրահանգմանն այն մասին, որ Ընկերությունը չի կարող պատշաճ հայցվոր հանդիսանալ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող շենքում բռնկված հրդեհով պատճառված վնասների հատուցման

պահանջով, ապա հրդեհի ժամանակ վերագրյալ հասցեում գտնվող անշարժ գույքը գտնվել է Ընկերության օրինական տիրապետության ներքո: Վերջինս օրենքով և վարձակալության պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար վերանորոգել է Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ մասնակի վերականգնելով դրա մինչհրդեհային արժեքը և ստեղծելով անհրաժեշտ պայմաններ՝ շարունակել է գույքի շահագործումը տնտեսական նշանակությամբ: Ընկերությունը, հրդեհի հետևանքով կրելով վնասներ, իրավունք ունի այդ վնասների հատուցում պահանջել հրդեհի առաջացման համար մեղավոր անձից, այն է՝ Կազմակերպությունից:

Տվյալ դեպքում հրդեհի հետևանքով պատճառված վնասի չափը ևս հիմնավորվում է սույն գործում առկա ապացույցներով: Մասնավորապես՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 21.07.2009 թվականի թիվ 09-0715 եզրակացությամբ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող անշարժ գույքի վերանորոգման արժեքը կազմել է 88.985.160 ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է վճարել բողոքին կից ներկայացված «Տիգրիս» ՍՊԸ-ի կազմած փաստաթղթին, ապա այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, խիստ կասկածելի ծագում ունի և սույն գործով անընդունելի է:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարիամ Մկրտչյանի և Ընկերության միջև 18.07.2008 թվականին կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ Վարձակալության պայմանագիր), որի 1.1-րդ և 1.7-րդ կետերի համաձայն՝ Մարիամ Մկրտչյանն Ընկերությանն է տրամադրել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Չ. Անդրանիկի փողոցի թիվ 34/4 առևտրի կենտրոնը՝ 20.09.2008 թվականից մինչև 31.12.2011 թվականը: Վարձակալության պայմանագրի 2.4.3-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է իր հաշվին իրականացնել վարձակալված տարածքի ընթացիկ վերանորոգման և սպասարկման աշխատանքները, իսկ 2.4.4-րդ կետի համաձայն՝ վարձակալված տարածքը Մարիամ Մկրտչյանին հանձնել այն վիճակում, որով ստացել է՝ միաժամանակ հաշվի առնելով օբյեկտի շահագործման և օգտագործման բնական մաշվածությունը (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

2) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.06.2009 թվականի թիվ 13570904 եզրակացության «Հետևություններ» բաժնի համաձայն՝ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող շինությունում տեղի ունեցած հրդեհի առաջացումն էլեկտրատեխնիկական բնույթի է: Ամենայն հավանականությամբ հրդեհի առաջացման պատճառը հանդիսացել է հրդեհի օջախային հատվածում տեղադրված էլեկտրական սարքավորումներում ստեղծված վթարային ռեժիմի իրավիճակը (**թիվ 69100110 քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, գ.թ. 76-99**):

3) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 25.09.2009 թվականի թիվ 09-1220 եզրակացության «Հետևություններ» բաժնի 1-12-րդ կետի համաձայն՝ դեպքի վայրի (Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի) էլեկտրասնուցման համակարգում տեղի ունեցած հոսանքի տատանումը թույլատրելի տիրույթից բարձր սահմաններում բերել է վթարային իրավիճակի՝ առաջացնելով տվյալ պահին սնուցման տակ գտնվող էլեկտրասարքում (էլեկտրասարքերում) վթարային ռեժիմի առաջացման, որն էլ իր հերթին հանդիսացել է հրդեհի առաջացման անմիջական պատճառ (**թիվ 69100110 քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, գ.թ. 198-203**):

---

4) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.09.2010 թվականի թիվ 12701004 եզրակացության «Հետևություններ» բաժնում ներառված «Հրդեհատեխնիկական մասի» 2-րդ կետի համաձայն՝ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում տեղի ունեցած հրդեհի պատճառն էլեկտրատեխնիկական բնույթի է: Նույն մասի 2ա-րդ կետի համաձայն՝ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում առաջացած հրդեհի անմիջական պատճառ է հանդիսանում կա՛մ թիվ ՏԵ-1242 ենթակայանում խանութ-սրահը սնող մալուխի գրոյական հաղորդալարի վնասումը (խզում կամ թույլ կոնտակտ) կա՛մ էլ թիվ ՏԵ-1242 և թիվ ՏԵ-1241 ենթակայանների նույն բջջից սնվելու միջնայի դեպքում ցանցում առաջացած վթարային ռեժիմի հետևանքով էլեկտրական լարման կտրուկ բարձրացումը: Նշված երկու դեպքում էլ «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում տեղադրված սարքավորումները կարող էին ընկնել բարձր լարման տակ, որի հետևանքով դրանց հանգույցները կվնասվեին, կայրվեին՝ առաջացնելով հրդեհ:

Նույն բաժնում ներառված «Էլեկտրատեխնիկական հետազոտության երկրորդ մասի» 4-րդ կետի համաձայն՝ 18.04.2009 թվականին Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող Ընկերությանը պատկանող «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում հրդեհի պատճառն ունի էլեկտրատեխնիկական բնույթ: Նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում հրդեհի պատճառ կարող էր հանդիսանալ լարման երկարատև բարձրացումը, թույլատրելի սահմաններից բարձր կամ ներքին էլեկտրասնուցման ցանցերի կարճ միացումը (**թիվ 69100110 քրեական գործի նյութեր, հատոր 5-րդ, գ.թ. 132-163**):

5) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 21.07.2009 թվականի թիվ 09-0715 եզրակացության «Հետևություններ» բաժնում ներառված «Ապրանքագիտական» մասի համաձայն՝ հրդեհի հետևանքով Ընկերությանը հասցված վնասի չափը որոշելիս փորձագետի կողմից 8 էջի վրա կազմվել է աղյուսակ (**թիվ 69100110 քրեական գործի նյութեր, հատոր 6-րդ, գ.թ. 49-56**), որում նշված են այրված և վնասված գույքի տեսականին (անվանումները), քանակը, վաճառքի գները, վնասված գույքի պիտանելիության մնացորդային պակասը, շուկայական արժեքները:

Նշված աղյուսակի արդյունքների համաձայն՝ հրդեհի ժամանակ կահույքի և գրասենյակային գույքի այրման և որակազրկման հետևանքով Ընկերությանը հասցված վնասի չափը կազմում է 132.090.825 ՀՀ դրամ:

Նույն աղյուսակի տվյալները հիմնականում համընկնում են Ընկերության տնօրենի կողմից կազմված Ընկերության՝ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի խանութում հրդեհի ժամանակ այրված կամ վնասված գույքի ցուցակի տվյալների հետ (**թիվ 69100110 քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, գ.թ. 103-109**):

Նույն եզրակացությանը կից առկա գնահատման թիվ 09-0715 ակտի հավելվածով Ընկերության կահույքի խանութ-սրահի վերանորոգման ծախսը հաշվարկվել է ընդհանուր 88.985.160 ՀՀ դրամ (**թիվ 69100110 քրեական գործի նյութեր, հատոր 1-ին, գ.թ. 148-190**):

6) Սույն գործին կից քրեական գործի նյութերում առկա են Ընկերությանը Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի համար տրամադրված «Արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման)» և «Առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման)» գրքերի, ինչպես նաև նույն հասցեում ստացված ապրանքների վերաբերյալ տրված հաշիվ-ֆակտուրաների պատճենները (**քրեական գործ թիվ 69100110, հատոր 3-րդ, գ.թ. 28-92**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձի կողմից գույքին պարճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավաչափության և իրական վնասի գնահատման հարցերին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով իրավահարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման (*ի թիվս այլոց տե՛ս՝ Նախալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԴՅ/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*):

Քննարկվող պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Կազմակերպությունը կատարել է ոչ օրինաչափ գործողություններ և դրանք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում բռնկված հրդեհի ու Ընկերությանը պատճառված առանձնապես խոշոր չափերի վնասի հետ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է և բխում է սույն գործում առկա ապացույցներից:

Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.06.2009 թվականի թիվ 13570904 եզրակացությամբ հաստատվում է, որ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող շինությունում տեղի ունեցած հրդեհի առա-

---

ջացումն էլեկտրատեխնիկական բնույթի է (ամենայն հավանականությամբ հրդեհի առաջացման պատճառը հանդիսացել է հրդեհի օջախային հատվածում տեղադրված էլեկտրական սարքավորումներում ստեղծված վթարային ռեժիմի իրավիճակը): Ավելին, «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 25.09.2009 թվականի թիվ 09-1220 եզրակացությամբ հաստատվում է, որ դեպքի վայրի (Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի) էլեկտրասնուցման համակարգում տեղի ունեցած հոսանքի տատանումը թույլատրելի տիրույթից բարձր սահմաններում բերել է վթարային իրավիճակի՝ առաջացնելով տվյալ պահին սնուցման տակ գտնվող էլեկտրասարքում (էլեկտրասարքերում) վթարային ռեժիմի առաջացման, որն էլ իր հերթին հանդիսացել է հրդեհի առաջացման անմիջական պատճառ: «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 14.09.2010 թվականի թիվ 12701004 եզրակացությամբ ևս հաստատվում է, որ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում տեղի ունեցած հրդեհի պատճառն էլեկտրատեխնիկական բնույթի է (առաջացած հրդեհի անմիջական պատճառ է հանդիսանում կա՛մ թիվ ՏԵ-1242 ենթակայանում խանութ-սրահը սնող մատլիսի զրոյական հաղորդալարի վնասումը (խզում կամ թույլ կոնտակտ) կա՛մ էլ թիվ ՏԵ-1242 և թիվ ՏԵ-1241 ենթակայանների նույն բջջից սնվելու սխեմայի դեպքում ցանցում առաջացած վթարային ռեժիմի հետևանքով էլեկտրական լարման կտրուկ բարձրացումը: Նշված երկու դեպքում էլ «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում տեղադրված սարքավորումները կարող էին ընկնել բարձր լարման տակ, որի հետևանքով դրանց հանգույցները կվնասվեին, կայրվեին՝ առաջացնելով հրդեհ: Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող Ընկերությանը պատկանող «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում հրդեհի պատճառ կարող էր հանդիսանալ լարման երկարատև բարձրացումը, թույլատրելի սահմաններից բարձր կամ ներքին էլեկտրասնուցման ցանցերի կարճ միացումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Նույն կետի 2-րդ պարբերության 2-րդ ենթակետի համաձայն՝ այդ տեղեկությունները հաստատվում են փորձագետների եզրակացություններով:

Վերոգրյալ ապացույցների (եզրակացությունների) հիման վրա Վճռաբեկ դատարանն ապացուցված և հաստատված է համարում այն հանգամանքը, որ տվյալ դեպքում առկա է Ընկերությանը պատճառված վնասի հատուցման համար պարտադիր պայմանը, այն է՝ Կազմակերպության ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու վերջինիս մեղքի միաժամանակյա առկայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ, ի հակառակ վերոգրյալի, Կազմակերպությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով որևէ կերպ չի ապացուցել, որ վնասն իր մեղքով չի պատճառվել, ուստի և վերջինս չի կարող ազատվել այն հատուցելու պարտականությունից:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում ներկայացված այն հիմնավորումներին, որ Կազմակերպության և Ընկերության միջև էներգամատակարարման պայմանագիր կնքված չի եղել, ինչպես նաև շինությանը պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունենալու համար Ընկերությունն առնվազն պետք է հանդիսանար այդ շինության սեփականատերը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է,



որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքի օբյեկտներ են գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները:

Վերը նշված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ գույքի վարձակալը՝ որպես վարձակալության պայմանագրի հիման վրա գույքը տիրապետող և օգտագործող անձ, օրինական (տիտղոսային) տիրապետող է: Վարձակալության պայմանագրի ուժով գույքը վարձակալած անձի մոտ ծագել են այդ գույքի օգտագործման և տիրապետման գույքային իրավունքներ: Այդ իրավունքները ևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են գույք: Ուստի, գույքային իրավունքներին պատճառված վնասը ևս ենթակա է հատուցման այդպիսի իրավունքներ կրող անձին՝ վարձակալին:

Տվյալ դեպքում վարձակալին պատճառված վնասը դրսևորվել է նրանով, որ վերջինս իր վարձակալած գույքի այրման հետևանքով չունի գույքը նպատակային նշանակությամբ օգտագործելու հնարավորություն: Այլ կերպ՝ խախտվել է վարձակալի օգտագործման իրավունքը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով առկա է գույքին (գույքային իրավունքին) պատճառված վնաս, հետևաբար վարձակալի մոտ ծագել է վնասի հատուցում պահանջելու իրավունք:

Սույն գործի փաստերի շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև անդրադառնալ վարձակալած անշարժ գույքին պատճառված վնասի հատուցման պահանջը սեփականատիրոջ կողմից ներկայացվելու խնդրին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել գույքն իր կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ կամ պայմանագրով նախատեսված վիճակում:

Սեփականության իրավունքը՝ որպես բացարձակ իրավունք, պարտավորեցնում է յուրաքանչյուրին ձեռնպահ մնալ սեփականատիրոջ իրավունքների խախտմանն ուղղված գործողություններից: Հետևաբար, իրավունքի խախտման յուրաքանչյուր դեպքում սեփականատերն այն կարող է վերականգնել՝ հակաիրավական արարք կատարած անձի դեմ հայց հարուցելով:

Վարձակալության հարաբերությունների դեպքում գույքի սեփականատիրոջից բացի գույքի օրինական տիրապետող է հանդիսանում նաև վարձակալը, ով, ինչպես վերը նշվեց, ևս պաշտպանված է իր գույքային իրավունքի նկատմամբ ցուցաբերվող հակաիրավական արարքներից:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վարձակալի կողմից իր խախտված իրավունքները վերականգնելը, տվյալ դեպքում գույքին պատճառված վնասի հատուցում ստանալը, վերացնում է վնաս պատճառողից հատուցում պահանջելու սեփականատիրոջ իրավունքը: Ման դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 625-րդ հոդվածի 1-ին կետի կանոնակարգումը, որի ուժով վարձակալը պարտավոր է վերականգնել վնասված գույքը մինչև վարձակալին հանձնելը: Վարձակալած գույքին պատճառված վնասի դիմաց ստացված հատուցումը վարձակալը պետք է ուղղի գույքի վերականգնմանը, հակառակ դեպքում կրում է այդ արժեքը գույքի սեփականատիրոջը հատուցելու պարտականություն:

Վերը նշված մեկնաբնության լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարիամ Մկրտչյանի և Ընկերության

---

միջև 18.07.2008 թվականին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի հիման վրա Ընկերության մոտ ծագել են Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի Զ. Անդրանիկի փողոցի թիվ 34/4 առևտրի կենտրոնի նկատմամբ գույքային իրավունքներ: Նշված պայմանագրի 2.4.4-րդ կետում ևս ամրագրվել է Ընկերության պարտականությունը՝ վարձակալված տարածքը Մարիամ Մկրտչյանին հանձնել այն վիճակում, որով ստացվել է՝ միաժամանակ հաշվի առնելով օբյեկտի շահագործման և օգտագործման բնական մաշվածությունը:

Կազմակերպության ոչ օրինաչափ գործողությունների պատճառով Ընկերությունը կրել է վնաս, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ և 1058-րդ հոդվածների ուժով ձեռք է բերել պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը, հանդիսանալով Երևանի Անդրանիկի փողոցի թիվ 34/4 տարածքի վարձակալը, անկախ Կազմակերպության և Ընկերության միջև էներգամատակարարման պայմանագիր կնքված լինելու հանգամանքից, իրավունք է ունեցել նշված տարածքին պատճառված վնասի հատուցման պահանջով դիմել դատարան ընդդեմ Կազմակերպության:

Ինչ վերաբերում է Կազմակերպության կողմից Ընկերությանը պատճառված վնասի չափի հիմնավորվածությանը, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանությունը:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործում առկա ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես՝ սույն գործի փաստերի համաձայն՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 21.07.2009 թվականի թիվ 09-0715 եզրակացությամբ հաստատվում է, որ հրդեհի ժամանակ կահույքի և գրասենյակային գույքի այրման և որակագրկման հետևանքով Ընկերությանը հասցված վնասի չափը կազմում է 132.090.825 ՀՀ դրամ, որի վերաբերյալ կազմված աղյուսակի տվյալները հիմնականում համընկնում են Ընկերության տնօրենի կողմից կազմված Ընկերության՝ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի խանութում հրդեհի ժամանակ այրված կամ վնասված գույքի ցուցակի տվյալների հետ, իսկ Ընկերության կահույքի խանութ-սրահի վերանորոգման ծախսը հաշվարկվել է ընդհանուր 88.985.160 ՀՀ դրամ: Միաժամանակ, սույն գործին կից քրեական գործի նյութերում առկա են Ընկերությանը Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի համար տրամադրված «Արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հատույթի) գրանցման (հաշվառման)»

և «Առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման)» գրքերի, ինչպես նաև նույն հասցեում ստացված ապրանքների վերաբերյալ տրված հաշիվ-ֆակտուրաների պատճենները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, իր որոշմամբ հաստատված համարելով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 21.07.2009 թվականի թիվ 09-0715 եզրակացությամբ նշված Կազմակերպության կողմից Ընկերությանը պատճառված վնասի չափը, անտեսել է, որ ո՛չ վերոգրյալ եզրակացությամբ և ո՛չ էլ այդ եզրակացության անբաժանելի մաս կազմող աղյուսակով որևէ կերպ անդրադարձ չի կատարվել Ընկերությանը Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի համար տրամադրված «Արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման)» և «Առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման)» գրքերում, ինչպես նաև նույն հասցեում ստացված ապրանքների վերաբերյալ տրված հաշիվ-ֆակտուրաներում պարունակվող տվյալներին այն դեպքում, երբ այդ ապացույցներով կարող էին պարզվել և հաստատվել Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող, Ընկերությանը պատկանող «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահում հրդեհի պահին առկա գույքի ամբողջական կազմը, քանակը և գինը, ինչպես նաև այլ տվյալներ, այլ ըստ էության հիմք է ընդունվել միայն Ընկերության տնօրենի կողմից կազմված Ընկերության՝ Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեի խանութում հրդեհի ժամանակ այրված կամ վնասված գույքի ցուցակի տվյալները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոգրյալ ապացույցների չգնահատման արդյունքում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 21.07.2009 թվականի թիվ 09-0715 եզրակացությամբ նշված Կազմակերպության կողմից Ընկերությանը պատճառված վնասի չափը չի կարող համարվել հիմնավորված:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Կազմակերպության կողմից Երևանի Անդրանիկի թիվ 34/4 հասցեում գտնվող շինությանը և հրդեհի ժամանակ այրվելու կամ վնասվելու հետևանքով Ընկերության գույքին պատճառված վնասի չափը պարզելու համար սույն գործը նշված ծավալով անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել նաև «ԿԻՏ» կահույքի խանութ-սրահը չաշխատելու ժամանակահատվածում վճարված վարձավճարի, ինչպես նաև Ընկերության կողմից կնքված վարկային պայմանագրերով նախատեսված գումարները պատճառված վնասի մեջ ներառելու իրավաչափության հարցը: Նշված հարցին անդրադառնալիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես վնասի հատուցման կանոնների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը, այնպես էլ այն հանգամանքը, որ վնասի իրական լինելը պետք է ուղղակիորեն պայմանավորված լինի վնաս պատճառող անձի հակաիրավական գործողությամբ: Հակաիրավական գործողության արդյունքում տուժողի մոտ պետք է առաջանա գույքի կորուստ կամ նվազում: Միայն այս դեպքում կարող է առկա լինել իրական վնաս՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի իմաստով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ տուժողի կատարած ծախսերը պատճառահետևանքային կապի մեջ չեն գտնվում վնաս պատճառող անձի գործողությունների հետ, տուժողի մոտ չի առաջանում վնասի հատուցում պահանջելու իրավունք, քանի որ բացակայում է ինքնին վնաս պատճառելու հետևանքով բխող պարտավորությունը:

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո նոր քննության ընթացքում պետք է գնահատվեն նաև Ընկերության կողմից կնքված վարկային պայմանագրերը:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի կողմից վճռաբեկ բողոքին կից ներկայացված «Տիգրիս» ՍՊԸ-ի 13.09.2012 թվականին տրված թիվ 02/13.09.2012 և թիվ 01/13.09.2012 եզրակացություններին, որպիսի եզրակացությունների համաձայն՝ Ընկերության կահույ-

---

քին պատճառված վնասը կազմել է 57.952.000 ՀՀ դրամ, իսկ Մարիամ Մկրտչյանի շինության վերանորոգումը՝ 61.531.933 ՀՀ դրամ, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված եզրակացությունները տրվել են Վերաքննիչ դատարանի 10.05.2012 թվականի որոշումը կայացվելուց հետո, ներկայացվել են միայն վճռաբեկ բողոքին կից և Վերաքննիչ դատարանն այդ եզրակացությունների մասով որևէ դիրքորոշում չի հայտնել, Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ պրորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ պրորազորություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԳ/0306/02/11  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԳ/0306/02/11  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Վարդան Պետրոսյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.12.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Ա/Ձ Նունե Հովհաննիսյանի (այսուհետ՝ Ձեռնարկատեր) ընդդեմ Վարդան  
Պետրոսյանի՝ 4.903.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված նյութական վնասի, 480.000 ՀՀ  
դրամ փաստաբանի վարձատրության և 774.000 ՀՀ դրամ՝ որպես հարկային տեսչությանը  
վճարվելիք գումարների բռնագանձման պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ձեռնարկատերը պահանջել է Վարդան Պետրոսյանից  
բռնագանձել 4.903.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված նյութական վնասի, 2.000.000 ՀՀ  
դրամ՝ որպես բարոյական վնասի հատուցման, 480.000 ՀՀ դրամ փաստաբանի վարձա-  
տրության և 774.000 ՀՀ դրամ՝ որպես հարկային տեսչությանը վճարվելիք գումարներ:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի  
30.11.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.03.2012 թվականի որոշմամբ Նունե  
Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, որոշվել է. «ՀՀ

---

Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2011 թվականի վճիռը մասնակի՝ պատճառված իրական վնասների, բաց թողնված օգուտի, դրանց արդյունքում գոյացած հարկային պարտավորությունների, ինչպես նաև դատական պաշտպանության արդյունքում փաստաբանական ծառայությունից օգտվելու հիմքով կատարած վճարները բռնագանձելու մասերով բեկանել և քաղաքացիական գործն այդ մասերով ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Վճիռը բարոյական վնասի հատուցման պահանջի մասով թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ»:

Վճարել դատարանի 25.04.2012 թվականի որոշմամբ Վարդան Պետրոսյանի ներկայացուցչի վճարել բողոքը վերադարձվել է:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Հ. Ենքյան) (այսուհետ՝ Դատարան) 12.09.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն, վճռվել է. «Վարդան Պետրոսյանից հօգուտ Նունե Հովհաննիսյանի բռնագանձել 1.022.812 ՀՀ դրամ, որից 424.375 ՀՀ դրամը՝ որպես պատճառված վնասի գումար, 598.437 ՀՀ դրամը՝ որպես բաց թողնված եկամուտների գումար: Վարդան Պետրոսյանից հօգուտ Նունե Հովհաննիսյանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Մնացած մասով հայցապահանջը մերժել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.12.2012 թվականի որոշմամբ Ձեռնարկատիրոջ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, որոշվել է. «ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 12.09.2012 թվականի վճիռը մասնակիորեն՝ Վարդան Պետրոսյանից հօգուտ Ա/Ձ Նունե Հովհաննիսյանի 424.375 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի գումար բռնագանձելու մասով բեկանել և փոփոխել: Վարդան Պետրոսյանից հօգուտ Նունե Հովհաննիսյանի բռնագանձել 2.030.700 ՀՀ դրամ՝ որպես ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառված վնաս: Վճիռը մնացած մասով թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ»:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Վարդան Պետրոսյանը:

Վճարել բողոքի պատասխան է ներկայացրել Ձեռնարկատերը:

## **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 130-132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի կատարել գործում առկա ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտություն և գնահատում, սխալ է մեկնաբանել վնասի ինստիտուտը:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն, որ իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելուց հետո Ձեռնարկատերը խանութում առկա ապրանքները պետք է պահանջեր նախաքննության մարմնից, քանի որ քրեական գործ հարուցելու պահից նախաքննական մարմինն էր պարտավոր այդ ապրանքները վերադաձնել տուժողին, իսկ այն հանգամանքը, որ 04.08.2009 թվականից նշված ապրանքները չեն վերադարձվել վերջինիս, հետևանք է նախաքննական գործողությունների կատարման կամ Ձեռնարկատիրոջ կողմից անգործության դրսևորման:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ դեռևս Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2009 թվականի որոշմամբ (թիվ ԱՎԴ-1/0750/02/09 քաղաքացիական գործով) կիրառվել է հայցի ապահովման միջոց, և արգելանք է դրվել Սիմոն Սարգսյանին և Ձեռնարկատիրոջը պատկանող գույքի և դրամական միջոցների, այդ թվում՝ խանութում գտնվող ոչ պարենային ապրանքների վրա:

Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն իրենից 2.030.700 ՀՀ դրամ բռնագանձելու մասով իրավաչափ չէ, քանի որ թեև իր կողմից որպես ինքնիրավչության դրսևորում 05.07.2009 թվականին փակվել է Ձեռնարկատիրոջը վարձակալությամբ հանձնված խանութը, սակայն խանութում առկա ապրանքների վրա այլ քաղաքացիական գործերով կիրառվել են հայցի ապահովման միջոցներ դեռևս 25.11.2009 թվականից, և դրանց վրա արգելանք դնելու մասին որոշումների առկայության պայմաններում տվյալ ապրանքների որակական տեսքի փոփոխության մեջ իրեն մեղադրելն անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.09.2012 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանն իրականացրել է օբյեկտիվ և բազմակողմանի քննություն: Նշված որոշումն արդարացի է, քանի որ Վարդան Պետրոսյանի անօրինական գործողությունների հետևանքով Ձեռնարկատերը 05.07.2009 թվականից մինչ օրս գրկվել է իր գույքը տնօրինելու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունից, որի արդյունքում շարունակում է կրել վնասներ: Բացի այդ, Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2009 թվականի որոշմամբ խանութում առկա ապրանքների վրա արգելանք չի դրվել, այլ միայն ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Արարատի բաժնի 14.09.2011 թվականի որոշմամբ 20.681.784 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք է դրվել իրեն պատկանող ոչ պարենային ապրանքների վրա:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 2008 թվականի հոկտեմբեր ամսին Ձեռնարկատերը վարձակալել է Վարդան Պետրոսյանի հորը՝ Միշա Պետրոսյանին պատկանող Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 58/2 հասցեում՝ նախկին հանրախանութի շենքում գտնվող տարածքն (այսուհետ՝ խանութ) ու զբաղվել ոչ պարենային ապրանքների առևտրով (**հատոր 1-ին, գ.թ. 61-80**):

2) Արարատի քննչական բաժնում 04.08.2009 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, իսկ 02.11.2009 թվականին որոշմամբ Վարդան Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ:

Վարդան Պետրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, օրենքով սահմանված կարգի խախտմամբ իր ենթադրյալ իրավունքներն իրականացնելով և էական վնաս պատճառելով տուժողի իրավունքներին ու օրինական շահերին, կատարել է ինքնիրավչություն, այն է՝ խանութում 26.374.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ոչ պարենային ապրանքների առկայության պայմաններում 05.07.2009 թվականին փակել է այն՝ որպես Նունե Հովհաննիսյանի կողմից իրեն պարտք մնացած 24.500 ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու երաշխիք՝ գրկելով նրան առևտուր կատարելու հնարավորությունից (**հատոր 1-ին, գ.թ. 61-80**):

---

3) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 20.07.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով Վարդան Պետրոսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով: Նշված դատավճռով վճռվել է նաև Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 58/2 հասցեում գտնվող Միշա Պետրոսյանին պատկանող խանութում առկա 26.374.000 ՀՀ դրամ գումարի ընդհանուր արժեքով ոչ պարենային ապրանքները վերադարձնել տուժող Նունե Հովհաննիսյանին (**հատոր 1-ին, գ.թ. 61-80**):

4) Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2009 թվականի որոշմամբ (թիվ ԱՎԳ-1/0750/02/09 քաղաքացիական գործով) կիրառվել է հայցի ապահովման միջոց և 9.746.000 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք է դրվել Սիմոն Սարգսյանին և Ձեռնարկատիրոջը պատկանող անշարժ, շարժական գույքերի և դրամական միջոցների վրա: ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Արարատի բաժնի հարկադիր կատարողի 01.12.2009 թվականի որոշմամբ արգելանք է դրվել Ձեռնարկատիրոջը պատկանող շարժական և անշարժ գույքերի վրա՝ արգելելով դրանց սուօրինումը (**հատոր 1-ին, գ.թ. 57, հատոր 4-րդ, գ.թ. 21**):

5) ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 19.03.2010 թվականի թիվ 10-0129 փորձագետի եզրակացության համաձայն՝տուժող Նունե Հովհաննիսյանին պատկանող 26.374.000 (քսանվեց միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ արժողության տարբեր տեսակի ոչ պարենային ապրանքներից, որոնք 2009 թվականի հուլիսի 05-ից մինչև փորձաքննության կատարման օրը՝ 2010 թվականի փետրվարի 02-ը, գտնվել են խանութում, որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով վնասվել են անմիջապես արտաքին մակերևութով բաց մնացած՝ սպիտակ ու բաց գույների երանգներով ապրանքատեսակները (վերնաշապիկներ, շապիկներ, անկողնային պարագաներ՝ հիմնականում սպիտակեղեն), որոնց ընդհանուր արժեքը կազմում է 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որն էլ ապրանքագետ-փորձագետի կողմից դիտվում է որպես Ձեռնարկատիրոջը պատճառված վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 82-90**):

6) ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի 16.09.2011 թվականի թիվ 27301009 փորձագետի եզրակացության համաձայն՝ ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառված վնաս դիտվում է փոշու հետևանքով վնասված ապրանքների ընդհանուր կյութական վնասի չափը, որը կարող է կազմել 2.030.700 ՀՀ դրամ: (...) փոշուց առավել վնասված ապրանքատեսակների վերականգնումից (փոշուց մաքրման աշխատանքներից) հետո խանութում առկա բոլոր ապրանքներն էլ պիտակի են հետագա գործածության և օգտագործման համար, բացի 30.700 ՀՀ դրամ ընդհանուր արժեքի անվերականգնելի աստիճանի վնասված կոշիկներից (**հատոր 2-րդ, գ.թ. 60-72**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանը քննության առարկա է դարձնում իրավական խնդիրն այն մասին, թե գույքը տիրապետելու և օգտագործելու սեփականատիրոջ իրավունքները խախտելու հետևանքով գույքին պատճառված վնասի և վնաս*



պատճառած անձի գործողությունների միջև պատճառահետևանքային կապն արդյո՞ք առկա է այն դեպքում, երբ այդ նույն գույքի վրա այլ քաղաքացիական գործով որպես հայցի ապահովման միջոց արգելանք է դրվել:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է վնասի հատուցման ընդհանուր պայմաններին:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

Նույն օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, քննարկվող պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով կրում է պատասխանող կողմը (լրես «Մասնա-Մասնա» ՍՊԸ-ն ընդդեմ Դանիել Ղասաբօղլյանի թիվ ԵԲԴ/0086/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ 2008 թվականի հոկտեմբեր ամսին Ձեռնարկատերը վարձակալել է Վարդան Պետրոսյանի հորը՝ Միշա Պետրոսյանին պատկանող խանութը և զբաղվել ոչ պարենային ապրանքների առևտրով: Այնուհետև, Վարդան

---

Պետրոսյանը խանութում 26.374.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով ոչ պարենային ապրանքների առկայության պայմաններում **05.07.2009 թվականին** փակել է այն՝ որպես Ձեռնարկատիրոջ կողմից իրեն պարտք մնացած 24.500 ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու երաշխիք՝ գրկելով վերջինիս առևտուր կատարելու հնարավորությունից: Նշված արարքի համար Վարդան Պետրոսյանն Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 20.07.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել տուգանքի՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով: Նշված դատավճռով վճռվել է նաև Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 58/2 հասցեում գտնվող Միշա Պետրոսյանին պատկանող խանութում առկա 26.374.000 ՀՀ դրամ գումարի ընդհանուր արժեքով ոչ պարենային ապրանքները վերադարձնել տուժող Նունե Հովհաննիսյանին:

Դատարանը, վնասի հատուցման պահանջը մասնակի բավարարելիս պատճառաբանել է, որ ըստ փորձագետի եզրակացության՝ 2.037.000 ՀՀ դրամ ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառոված վնասի չափը հաշվարկվել է 05.07.2009 թվականից մինչև 25.07.2011 թվականն ընկած ժամանակահատվածի համար՝ շուրջ երկու տարի, որն ամսական կտրվածքով կազմում է շուրջ 84.875 ՀՀ դրամ, հետևաբար 2009 թվականի հուլիսից մինչև 2009 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում՝ շուրջ 5 ամիս, պատճառոված վնասի գումարը կկազմի 424.375 ՀՀ դրամ:

Վերաքննիչ դատարանը Դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Դատարանը, վնասի չափը որոշելու հարցում ունենալով միայն փորձագիտական եզրակացությունը և ըստ էության վնասի չափը որոշելիս օգտվելով այդ թույլատրելի ապացույցից, ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառոված վնասի չափը որոշելու իր եզրահանգումներում եկել է սխալ հետևության՝ անտեսելով եզրակացությամբ այդ վնասի չափը որոշելու ելակետային տվյալները և այն որոշելու հիմքը, որոնք տեղ են գտել նույն եզրակացության ապրանքագիտական մասի հետազոտություններում, որտեղ մասնավորապես փորձագետները ոչ պարենային ապրանքատեսակների վիճակից ելնելով, դրանց վնասելու հետևանքով պատճառոված (գույքի) նյութական վնասի ընդհանուր չափը, արժեքային արտահայտությամբ որոշել են փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ՝ հիմնվելով ՀՀ-ում գործող շուկաներում կատարված ուսումնասիրությունների և փորձագիտական կենտրոնի տեղեկատու բանկում առկա տվյալների վրա: Այսինքն՝ ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառոված վնասի չափը որոշվել է ոչ թե ըստ տարբեր ժամանակահատվածների, այլ վնասի չափն արտահայտվել է դրանց պատճառոված իրական և փորձաքննության անցկացման ժամանակի դրությամբ առկա վիճակի գնահատմամբ, որպիսի պայմաններում այն ամբողջությամբ ենթակա է բռնագանձման պատասխանողից:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկվելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են պատասխանողին պատկանող

գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կամ պարտապանի մոտ գտնվող՝ հայցվորին (պահանջատիրոջը) պատկանող գույքի վրա արգելանք դնելը ներառում է դրա գույքագրումը, գույքը տնօրինելն արգելելը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգտագործման իրավունքը սահմանափակելը, այն առգրավելը և ի պահ հանձնելը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելանքը կիրառվում է պատասխանողին պատկանող և նրա կամ այլ անձանց մոտ գտնվող գույքի վրա արգելանք դնելու մասին դատարանի որոշումը կատարելու դեպքում:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (տես՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ալենա Քոնսոլթանգ» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 25.11.2009 թվականի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և 9.746.000 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք է դրվել Սիմոն Սարգսյանին և Ձեռնարկատիրոջը պատկանող անշարժ, շարժական գույքերի և դրամական միջոցների վրա:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Արարատի բաժնի հարկադիր կատարողի 01.12.2009 թվականի որոշմամբ արգելանք է դրվել Ձեռնարկատիրոջը պատկանող շարժական և անշարժ գույքերի վրա՝ արգելելով դրանց տնօրինումը:

Սույն գործի փաստերը համադրելով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված փաստական հանգամանքների առկայությամբ, մասնավորապես՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի **25.11.2009 թվականի** հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման առկայության պայմաններում, ուղղակիորեն հերքվում է 25.11.2009 թվականից հետո Վարդան Պետրոսյանի որևէ գործողության հետևանքով Ձեռնարկատիրոջ կողմից վնասներ կրելու հանգամանքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վարդան Պետրոսյանի մեղքը, վնասի և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապն առկա է **05.07.2009 թվականից**, երբ վերջինս փակել է վարձակալությամբ Ձեռնարկատիրոջը հանձնած խանութը մինչև **25.11.2009 թվականը**, երբ այլ քաղաքացիական գործի քննության ընթացքում Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և արգելանք է դրվել Ձեռնարկատիրոջը պատկանող գույքի վրա: Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանն իրավացիորեն հանգել է այն հետևության, որ 2.030.700 ՀՀ դրամը՝ որպես ապրանքների որակական տեսքի փոփոխության և բարոյական մաշվածության հետևանքով պատճառված վնաս և 2.872.500 ՀՀ դրամ բաց թողնված գուտ եկամուտները, ենթակա են բավարարման մասնակիորեն՝ **2009 թվականի հուլիս ամսից մինչև 2009 թվականի նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում** պատասխանողի ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի չափով, որը կազմում է 424.375 ՀՀ դրամ գումար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը հա-

---

մարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով Դատարանի վճռում առկա թերի պատճառաբանությունները, հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.12.2012 թվականի որոշման՝ պատճառված վնասի բռնագանձման մասը և այդ մասով օրինական ուժ տալ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 12.09.2012 թվականի վճռին:

2. Ա/Ձ Նունե Հովհաննիսյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 139.632 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար սահմանված և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.10.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք և 48.190 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.04.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արդրագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արդրագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2600/02/10**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2600/02/10**

Նախագահող դատավոր՝ **Դ. Խաչատրյան**

Դատավորներ՝ **Ն. Տավարացյան**

**Ս. Միքայելյան**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**

**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**

**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**

**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**

**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**

**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նելլի Մկրտչյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Նելլի Մկրտչյանի ընդդեմ «Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ աշխատավարձից անհիմն պահված գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Նելլի Մկրտչյանը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 45.000 ՀՀ դրամ՝ որպես աշխատավարձից անհիմն պահված գումար, ինչպես նաև 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Ա. Սուրոյան) (այսուհետ՝ Դատարան) 07.06.2011 թվականի  
վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
03.04.2013 թվականի որոշմամբ Նելլի Մկրտչյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը  
մերժվել է, և Դատարանի 07.06.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նելլի Մկրտչյանի ներկայացուցիչը:

---

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

ՀՀ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ հոդվածները, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետը, 53-րդ հոդվածի 1-ին կետը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշել է, որ սույն գործով Ընկերության վնաս պատճառելու փաստը կարող էր հաստատվել իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայության պարագայում:

Գործում առկա 06.10.2010 թվականի թիվ 10/10 արձանագրության համաձայն՝ հաճախորդները հայցվորի աշխատանքի չներկայանալու պատճառով դժգոհել են հյուրանոցի սպասարկումից և հայտնել են, որ իրենց բողոքները կտարածեն ինտերնետային կայքերում, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ Ընկերության վարկանիշի վրա: Նշված արձանագրությունից կարելի է միայն ենթադրություններ անել Ընկերությանը վնաս պատճառելու վերաբերյալ, քանի որ հնարավոր չէ պարզել՝ եթե հաճախորդներն այդ տեղեկությունը տարածեին ինտերնետային կայքերում, արդյո՞ք դա կազդեր Ընկերության վարկանիշի վրա, և Ընկերությունն իրականում վնաս կկրեր, թե ոչ:

Ընկերությունը չի հիմնավորել, թե նրա որ իրավունքն է խախտվել: Ընկերության կողմից իր իսկ ցանկությամբ հաճախորդներին հյուրասիրելը Վերաքննիչ դատարանը համարել է հայցվորի կողմից պատճառված վնաս և աշխատավարձից պահումն այդ հիմքով գտել հիմնավոր: Մինչդեռ տվյալ դեպքում Ընկերության կողմից չի ապացուցվել, որ առկա է իրական վնաս, վնասի և հայցվորի գործողությունների միջև՝ ուղղակի կապ, առկա է հայցվորի մեղքը, չի ապացուցվել նաև, որ կատարված ծախսերը (հյուրասիրությունը) եղել են անհրաժեշտ և չափավոր, կամ նման հյուրասիրություն իրոք կատարվել է, քանի որ հյուրասիրության մասին հրամանը տրվել է բանավոր, ուստի Ընկերության կողմից վկայակոչված փաստերի չապացուցման բացասական հետևանքները պետք է կրեր Ընկերությունը:

Վերաքննիչ դատարանը չի նշել, թե գործում առկա որ ապացույցների հիման վրա է եզրահանգել, որ հայցվորի աշխատավարձից պահումը հիմնավոր է, և Ընկերությանը վերջինիս կողմից պատճառվել է իրական վնաս:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.04.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

**2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Տնտեսվարող յուրաքանչյուր ընկերություն ինքն է տնօրինում իր ֆինանսական միջոցները և իրավիճակի թելադրանքից ելնելով՝ իրավունք ունի կայացնելու որոշումներ անգամ առանց հիմնավորելու, թե տվյալ ծախսն ինչու է կատարել այս կամ այն չափով: Տվյալ պարագայում բավարար է այն փաստի արձանագրումը, որ Նելլի Մկրտչյանի իրավախախտ գործողության հետևանքով Ընկերությունը կրել է վնաս՝ կատարած ծախսի տեսքով՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ չափի ծախս է կատարվել: Միակ էական պայմանը կայանում է նրանում, թե արդյոք իրավաչափ է եղել Նելլի Մկրտչյանի

բացակայությունը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներից և սույն գործի հանգամանքներից ուղղակիորեն հետևում է, որ վերջինս ցուցաբերել է ոչ բարեխիղճ՝ իրավախախտ վարքագիծ, և թույլ է տվել գործատուի կողմից ակնկալվող ժամին և օրը աշխատողից աշխատանքի կատարում ստանալու իրավունքի կոպիտ խախտում, որը բավարար հիմք է աշխատողին ազատելու համար, ուստի անհերթել է այն հարցադրումը, թե գործատուի որ իրավունքն է խախտվել:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 01.09.2009 թվականին Ընկերության և Նելլի Մկրտչյանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, ըստ որի՝ վերջինս Ընկերությունում աշխատանքի է ընդունվել որպես մատենավար: Աշխատանքային պայմանագրի 5.5 կետի համաձայն՝ աշխատողը ենթակա է կարգապահական, կուրսական կամ այլ պատասխանատվության կիրառվող օրենսդրությամբ սահմանված կարգով այն դեպքում, եթե աշխատողը չի կատարում իր պարտականությունները (**հատոր 1-ին, գ.թ. 29-36**):

2) 06.10.2010 թվականի թիվ 10/10 արձանագրության համաձայն՝ 2010 թվականի հոկտեմբերի 05-ին անհարգելի պատճառներով աշխատանքի չի ներկայացել Հյուրանոցի աշխատող՝ մատենավար Նելլի Մկրտչյանը, ում փոխարինող գտնել չի հաջողվել ժամանակի սղության պատճառով: Դրա հետևանքով մի շարք դժգոհություններ են ստացվել Հյուրանոցի հաճախորդներից՝ Անտոնյան Կամերիի և իր կնոջ կողմից: Հաճախորդները, մասնավորապես, դժգոհել են նրանից, որ իրենց զանգերին պարբերաբար մատենավարը չի պատասխանել, հետո պարզել են, որ մատենավարը բացակա է, ինչի հետևանքով չեն կարողացել ներկայացնել համարի սպասարկման հետ կապված իրենց պահանջները: Հաճախորդները նշել են, որ դժգոհ են նման մոտեցումից և Հյուրանոցի ծառայությունից: Նրանք հայտնել են նաև, որ իրենց բողոքները կտարածեն ինտերնետային կայքերով, ինչը բացասաբար կանդրադառնա հյուրանոցի վարկանիշի և գործունեության վրա: Հաճախորդների դժգոհությունը վերացնելու նպատակով հյուրանոցի տնօրեն Կիառա Ֆիշինիի բանավոր հանձնարարությամբ հաճախորդներին հավելյալ ծառայություններ են առաջարկվել, մասնավորապես՝ հաճախորդներին առաջարկվել է օգտվել հյուրանոցի ճաշացանկից և թանկարժեք խմիչքներից՝ կատարելով ընտրություն ըստ ցանկության՝ հյուրանոցի հաշվին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաճախորդները պատվիրել են 45.800 ՀՀ դրամի ճաշատեսակներ և խմիչքներ, ինչի հետևանքով Ընկերությունը կրել է նշված գումարի չափով վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 113-114**):

3) 05.10.2010 թվականին և 06.10.2010 թվականին կազմված «Մեմորանդումի» համաձայն՝ Նելլի Մկրտչյանին նկատողություն է տրվել անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու համար (**հատոր 1-ին, գ.թ. 107, 112**):

4) 07.10.2010 թվականի «Մեմորանդումի» համաձայն՝ Նելլի Մկրտչյանի աշխատավարձից կատարվել է պահում 45.000 ՀՀ դրամի չափով՝ որպես ընկերությանը պատճառված վնասի հատուցում (**հատոր 1-ին, գ.թ. 110**):

5) 08.10.2010 թվականի թիվ 608 հրամանով Նելլի Մկրտչյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը դադարեցվել է, և նա ազատվել է աշխատանքից՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի (**հատոր 1-ին, գ.թ. 106**):

6) Նելլի Մկրտչյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ա/Չ Կարեն Քալանթարյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 03.05.2011 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրի 1.2 կետում

---

նշված իրավաբանական ծառայությունները մատուցվելու են փաստաբաններ Կարեն Քալանթարյանի և (կամ) Գուրգեն Թորոսյանի կողմից: Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել որպես ծառայության վճար՝ 50.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 138**):

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միատեսակ դատական պրակտիկա ձևավորելու համար:

***Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ աշխատանքային հարաբերություններում աշխատողի նյութական պատասխանատվության հիմքերին ու պայմաններին:***

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի կողմը (գործատուն կամ աշխատողը), չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով իր պարտականությունները, վնաս է պատճառում մյուս կողմին: Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Վկայակոչված հոդվածից հետևում է, որ աշխատանքային հարաբերություններում վնասի հատուցման հարաբերությունների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված վնասի ինստիտուտի ընդհանուր կանոնները, եթե ՀՀ աշխատանքային օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Վճարել դատարանն իր որոշումներում անդրադարձել է պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին, դրանցից յուրաքանչյուրի մասով ապացուցման բեռի բաշխմանը: Մասնավորապես՝ Վճարել դատարանն արձանագրել է, որ վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (*ի թիվս այլոց՝ Կենս Նարայյա Հակոբյանն ընդդեմ Վարդան*):



Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին թիվ ՀՔԳ3/0016/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը: Նշված հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից վնաս կրած անձի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, վնաս պատճառողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների և ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է վնաս կրած անձը, իսկ պատճառված վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով կրում է ենթադրյալ վնաս պատճառած անձը (տե՛ս՝ «Էքսպոթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը բաց թողնված օգուտը հատուցելու և գումար բռնագանձելու պահանջների մասին թիվ ԵՔԴ /0036/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը):

Վերահաստատելով իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում առավել մանրամասն անդրադառնալ պատճառված վնասի համար պատասխանատվության պայմաններին:

**Վնասը** քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով կամ այդպիսի ծախսերի կատարման անհրաժեշտությամբ, գույքի կորստով կամ վնասվածքով, եկամուտների չստացմամբ (բաց թողնված օգուտ):

**Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է**, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

**Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը** ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Այն դեպքում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ (անգործությամբ), կամ գործողության (անգործության) և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանն առկա չէ:

**Վնաս պատճառող անձի մեղքը** նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության (անգործության) և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել թե՛ դիտավորության, և թե՛ անզգուշության ձևով: Ընդ որում, վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը: Օրենքով նախատեսված դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև վնաս պատճառող անձի մեղքի բացակայության պարագայում:

---

Վերը նշված դիրքորոշման հիման վրա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկություններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ նյութական պատասխանատվություն առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում.

- 1) պատճառված է վնաս.
- 2) վնասը պատճառվել է անօրինական գործունեության հետևանքով.
- 3) առկա է պատճառական կապ անօրինական գործունեության և վնասի առաջացման միջև.

- 4) առկա է խախտողի մեղքը.

- 5) խախտում թույլ տված և տուժած կողմերն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ.

- 6) վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:

Նույն օրենսգրքի 237-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է՝

- 1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով.

- 2) նյութերի գերաժախս թույլ տալու հետևանքով.

- 3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքերում.

- 4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից.

- 5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով.

- 6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ գործատուին ունեցած աշխատողի պարտքերը մարելու համար աշխատավարձից պահվում կամ գանձվում է աշխատողի մեղքով գործատուին պատճառված վնասի հատուցման գումարը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ աշխատանքային հարաբերություններում վնասի ինստիտուտի առանձնահատկությունները հանգում են հետևյալին՝ պատճառված վնասի համար պատասխանատվության վերը շարադրված պայմաններին ավելանում են ևս երկու պայման, այն է՝ վնաս պատճառողն ու տուժողն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ, և վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ: Ընդ որում, պատճառված վնասի համար պատասխանատվության մյուս տարրերն աշխատողի նյութական պատասխանատվության դեպքում հարկ է դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի համատեքստում, որը թվարկում է աշխատողի նյութական պատասխանատվության դեպքերը՝ սպառիչ սահմանելով վնաս պատճառելուն ուղղված հակաիրավական վարքագծի դրսևորումները:

### **Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը**

Սույն գործի փաստերի, մասնավորապես՝ 06.10.2010 թվականի թիվ 10/10 արձանագրության համաձայն՝ 2010 թվականի հոկտեմբերի 05-ին անհարգելի պատճառներով աշխատանքի չի ներկայացել Հյուրանոցի աշխատող Նելլի Մկրտչյանը, ում փոխարինող գտնել չի հաջողվել ժամանակի սղության պատճառով: Դրա հետևանքով մի շարք դժգոհություններ են ստացվել Հյուրանոցի հաճախորդներից՝ Անտոնյան

Կամերիի և իր կնոջ կողմից: Հաճախորդները, մասնավորապես, դժգոհել են նրանից, որ իրենց զանգերին պարբերաբար մատենավարը չի պատասխանել, հետո պարզել են, որ մատենավարը բացակա է, ինչի հետևանքով չեն կարողացել ներկայացնել համարի սպասարկման հետ կապված իրենց պահանջները: Հաճախորդները նշել են, որ դժգոհ են նման մոտեցումից և Հյուրանոցի ծառայությունից: Նրանք հայտնել են նաև, որ իրենց բողոքները կտարածեն ինտերնետային կայքերով, ինչը բացասաբար կանդրադառնա հյուրանոցի վարկանիշի և գործունեության վրա: Հաճախորդների դժգոհությունը վերացնելու նպատակով հյուրանոցի տնօրեն Կիառա Ֆիջինիի բանավոր հանձնարարությամբ հաճախորդներին հավելյալ ծառայություններ են առաջարկվել, մասնավորապես՝ հաճախորդներին առաջարկվել է օգտվել հյուրանոցի ճաշացանկից և թանկարժեք խմիչքներից՝ կատարելով ընտրություն ըստ ցանկության՝ հյուրանոցի հաշվին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հաճախորդները պատվիրել են 45.800 ՀՀ դրամի ճաշատեսակներ և խմիչքներ, ինչի հետևանքով Ընկերությունը կրել է նշված գումարի չափով վնաս: 07.10.2010 թվականի «Մեմորանդումի» համաձայն՝ Նելլի Մկրտչյանի աշխատավարձից կատարվել է պահում 45.000 ՀՀ դրամի չափով՝ որպես Ընկերությանը պատճառված վնասի հատուցում:

Սույն գործով Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Նելլի Մկրտչյանի կողմից աշխատանքային կարգապահության խախտումներ թույլ տալու վերաբերյալ կազմվել են համապատասխան հուշագրեր՝ «Մեմորանդումներ»: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցվոր Նելլի Մկրտչյանի կողմից թույլ են տրվել աշխատանքային կարգապահության խախտումներ, ինչի հետևանքով պատասխանող Ընկերությունը կրել է 45.800 ՀՀ դրամի նյութական վնաս, Դատարանը գտել է, որ աշխատավարձից պահումը կատարվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարգով:

Վերաքննիչ դատարանը, հիմնավոր համարելով Դատարանի այդ հետևությունը, հաստատված է համարել, որ Նելլի Մկրտչյանի կողմից թույլ են տրվել աշխատանքային կարգապահության խախտումներ, ինչի հետևանքով Ընկերությունը կրել է 45.800 ՀՀ դրամի նյութական վնաս:

Համադրելով սույն գործի փաստերը և վերը կատարված վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանների պատճառաբանությունները չեն բխում գործով պարզված փաստերից, քանի որ տվյալ դեպքում առկա չէ աշխատողի նյութական պատասխանատվության հիմքը: Մասնավորապես՝ գործով ձեռք բերված փաստերի համաձայն՝ Նելլի Մկրտչյանն իր ոչ օրինաչափ անգործությամբ՝ անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալով, խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ, 83-րդ հոդվածների պահանջները և առաջացրել է հյուրանոցի հաճախորդների դժգոհությունը, որը վերացնելու և հյուրանոցի հնարավոր վնասները կանխելու նպատակով հաճախորդներին հյուրանոցի հաշվին հյուրասիրություն է առաջարկվել հյուրանոցի տնօրենի հանձնարարությամբ: Վկայակոչված փաստերը գնահատելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի շրջանակներում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Նելլի Մկրտչյանը թույլ չի տվել նշված հոդվածով սահմանված որևէ արարք, որն իր հերթին հանգեցրել է նույն հոդվածով նախատեսված հետևանքների: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհիմն են դատարանների հետևությունները Ընկերության կրած ենթադրյալ վնասի, այդ վնասի և Նելլի Մկրտչյանի վարքագծի միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:

---

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նելլի Մկրտչյանի հայցի մերժումն անհիմն է:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, **փաստաբանի խելամիտ վարձատրության** և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ կողմերի կողմից ներկայացված **փաստաբանի խելամիտ վարձատրությունը՝ որպես դատական ծախս, բռնագանձելու պահանջները** կարգավորվում են դատական ծախսերին վերաբերող կանոններով և դատարանների կողմից ենթակա են բռնագանձման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ, 73-րդ հոդվածների պահանջներից ելնելով (*յրե՛ս՝ «Անսուր Ինվեստ» ՍՊԸ-ն ընդդեմ «Փլեյմեդիա» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԿԴ/3058/02/09 գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը*): Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*յրե՛ս Ֆերդինանս Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեպրոսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԿԴ/1587/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Ելնելով վերոնշյալից և նկատի ունենալով, որ փաստաբանի կողմից սույն գործով ի շահ հայցվորի կատարվել են 03.05.2011 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված դատավարական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով գործի քննության երկարատևությունը (երկու տարուց ավելի)՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա 50.000 ՀՀ դրամ գումարը համարում է եղջամիտ և բռնագանձման ենթակա պատասխանողից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.04.2013 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել՝ «Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերությունից հոգուտ Նելլի Մկրտչյանի բռնագանձել 45.000 ՀՀ դրամ՝ որպես աշխատավարձից անհիմն պահված գումար:

2. «Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1.500 ՀՀ դրամ՝ որպես ներկայացված հայցադիմումի, 1.350 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի, և 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար սահմանված պետական տուրքի գումար:

«Երևան հյուրանոց» բաց բաժնետիրական ընկերությունից հոգուտ Նելլի Մկրտչյանի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի վարձատրություն:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազբոյություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազբոյություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2221/02/10  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2221/02/10

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

Դատավորներ՝ Ս. Միքայելյան

Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Պաստիչերիա Քեյք» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ «Դոուլ Ֆուդ Քամփրնի» ինք. ընկերության (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցի ընդդեմ Ընկերության, երրորդ անձ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն)՝ Ընկերության անվամբ թիվ 12544 «DOLE» (Դոլ) և թիվ 13301 «DOLE & SUN Design» (Դոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանների գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության անվամբ թիվ 12544 «DOLE» (Դոլ) և թիվ 13301 «DOLE & SUN Design» (Դոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանների գրանցումները՝ որպես նրա կողմից կատարված անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)

18.07.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

11.10.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի

18.07.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան կոնվենցիայի 10-bis հոդվածը, «Տարեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, չի կիրառել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքը, որը պետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 132-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ պարբերությունը, 219-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործում առկա 12.07.2012 թվականով թվագրված փաստաթուղթը չի վերաբերում «Ջենտոլա» ընկերությանը: Բացի այդ, քանի որ գործը վերաբերում է ապրանքային նշանի մասին վեճին, «ներկայացուցիչ» տերմինը պետք է մեկնաբանվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի կամ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի իմաստով, ինչի արդյունքում ակնհայտ կլինի, որ «Ջենտոլա» ընկերությունը Կազմակերպության ներկայացուցիչը չի հանդիսանում: Ավելին, Վերաքննիչ դատարանի որոշումից հնարավոր չէ հասկանալ, թե նշված փաստն ինչ նշանակություն ունի գործի համար և ինչպես է ապացուցում Ընկերության՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն կամ վարքագիծ ցուցաբերելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանն ըստ էության չի պատճառաբանել, թե ինչու է Ընկերության կողմից ապրանքային նշանի գրանցման հայտի ներկայացումը հանդիսանում անբարեխիղճ մրցակցության գործողություն, այդ թվում նաև՝ ինչպես են Ընկերության կողմից խախտվել բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, ինչպես նաև անաչառության սկզբունքներն ու գործարար շրջանառության սովորույթները: Ավելին, ինչ վերաբերում է վերջինիս խախտման մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, ապա այն ևս զուրկ է իրավական և փաստական հիմքերից: Մասնավորապես՝ որպեսզի խոսք լինի գործարար շրջանառության որևէ սովորույթի մասին, առնվազն պետք է հաստատված լինի, որ տվյալ կանոնը ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոն է: Միևնույն ժամանակ, սույն գործով այդպիսի քննություն, հետազոտում կամ գնահատում իրականացված չէ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ սույն գործում առկա չէ որևէ փաստական հանգամանք կամ որևէ ապացույց այն մասին, որ Ընկերությունը վիճարկվող ապրանքային նշանների գրանցման համար դիմելիս իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի իմաստով: Հետևաբար, սույն գործով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածները կիրառելի չեն:

---

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Գործակալությունը պարտավոր է մերժել ապրանքային նշանի գրանցման ցանկացած հայտ, եթե հայտատուն հայտը ներկայացնելիս դրսևորեր անբարեխիղճ մրցակցության գործողություն (վարքագիծ), խախտեր բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և անաչառության սկզբունքները, ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթները, և եթե վիճարկվող ապրանքային նշանները գրանցվել են, ապա դա նշանակում է, որ նշված մերժման հիմքերը բացակայում են: Այսինքն՝ գրանցելով ապրանքային նշանները՝ Գործակալությունը նաև հավաստում է, որ հայտատուն անբարեխիղճ մրցակցության գործողություն ու վարքագիծ չի ցուցաբերել: Հետևաբար, եթե նույնիսկ Կազմակերպությունն ունի հիմնավորված պահանջ, ապա այդ պահանջը կարող է ուղղված լինել բացառապես ապրանքային նշանը գրանցած պետական մարմնին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ վիճարկվող ապրանքային նշանների օգտագործումը դադարեցնելու պահանջ ներկայացված չի եղել և սույն գործով քննության չի առնվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.10.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճարեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Սույն գործով դատաքննության ժամանակ ո՛չ Ընկերության և ո՛չ էլ Դատարանի կողմից «Ջենեռովա» ընկերության և Կազմակերպության հարաբերություններին առնչվող հարց չի դրվել, և այդ պատճառով էլ վերջիններիս միջև եղած պայմանագրերը չեն ներկայացվել, քանի որ Դատարանի կողմից դրանք չեն պահանջվել՝ բավարար համարելով ներմուծումը հաստատող մաքսային փաստաթղթերը: Ավելին, գործի կոնտեքստում որևէ նշանակություն չունի, թե Կազմակերպությունն ինչպես է իրականացնում տնտեսական շրջանառություն, այսինքն՝ օգտագործում իրեն պատկանող «DOLE» ապրանքային նշանը:

Սույն գործով Կազմակերպության պահանջն է եղել անվավեր ճանաչել թիվ 12544 «DOLE» (Դոլ) և թիվ 13301 «DOLE & SUN Design» (Դոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանների գրանցումներն Ընկերության անվամբ՝ որպես Ընկերության կողմից կատարված անբարեխիղճ մրցակցության գործողություն, և դատաքննությունն էլ ծավալվել է հենց այդ վեճի առարկայի շուրջ:

Ընկերությունը, յուրացնելով Կազմակերպությանը պատկանող «DOLE» և «DOLE & SUN Design» ապրանքային նշանները, ինչպես նշել է Վերաքննիչ դատարանը, հենվելով օրենսդրության համապատասխան նորմերի վրա, կարող է սպառողի մոտ առաջացնել շփոթություն ապրանքն արտադրողի վերաբերյալ, մոլորեցնել հասարակությանը և հասցնել վնաս Կազմակերպության համբավին ու վարկաբեծքին (անբարեխիղճ մրցակցության տեսակներ): Այսինքն՝ վիճարկվող ապրանքային նշանների գրանցումները խախտել են և դեռ կարող են խախտել բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և անաչառության սկզբունքները: Իսկ ինչ վերաբերում է գործարար շրջանառության սովորույթներին, ապա մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ «հետության» կանխումը ձևավորված և լայնորեն կիրառվող կանոն է, ինչն էլ և կիրառել է Դատարանը:

Ընկերության փաստարկները՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի վերաբերյալ, անհիմն են:



**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող վիսաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ վիսաստերը.

1) Գործակալությունը 27.02.2008 թվականին «DOLE» (Դոլ) ապրանքային նշանը թիվ 12544 հերթական համարի տակ գրանցել է Ընկերության անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 128-129**):

2) Գործակալությունը 07.10.2008 թվականին «DOLE & SUN Design» (Դոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանը թիվ 13301 հերթական համարի տակ գրանցել է Ընկերության անվամբ (**հատոր 1-ին, գ.թ. 126-127**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդիրներին, թե՛*

*1) ապրանքային նշանի գրանցումը որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացված լինելու դեպքում որ փաստերն են կազմում գործով ապացուցման առարկան,*

*2) ում դեռ պետք է ներկայացվի նման պահանջը:*

1) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է նույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ ցանկացած կեղծ կամ անհիմն հայտարարություն, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել տնտեսվարող սուբյեկտին, նրա գործունեությունը կամ առաջարկած ապրանքները, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը շփոթություն առաջացնելուց անկախ վնասում է կամ կարող է վնասել տնտեսվարող սուբյեկտի համբավը կամ վարկաբեկը (ոչ նյութական ակտիվը), համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ **ձեռնարկատիրական գործունեության ընթացքում** իրականացվող ցանկացած գործողությունը կամ վարքագիծը, որը հակասում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքին

---

կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններին ու սպառողների միջև բարեխղճության, այն է՝ ազնվության, արդարության, ճշմարտության և անաչառության սկզբունքները, **համարվում է անբարեխիղճ մրցակցություն**, որն արգելված է օրենքի ուժով:

Անբարեխիղճ մրցակցության գործողություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության իրականացման ընթացքում դրսևտրվող ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը՝

1. առաջացնում է կամ կարող է առաջացնել **շփոթություն** այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, կամ

2. **մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել** հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, կամ

3. շփոթություն առաջացնելուց անկախ վնասում է կամ կարող է վնասել **տնտեսվարող սուբյեկտի համբավը կամ վարկաբժեքը (ոչ կյուրական ակտիվը)**,

4. իրենից ներկայացնում է **ձեռնարկատիրական գործունեության** վերաբերյալ ցանկացած **կեղծ կամ անհիմն հայտարարություն**, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել տնտեսվարող սուբյեկտին, նրա գործունեությունը կամ առաջարկած ապրանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների) բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության ձեռնարկատիրական բնույթը որոշելու համար անհրաժեշտ է ոչ միայն գնահատել այդպիսի գործունեության առանձին հատկանիշները, այլև հաշվի առնել տնտեսվարող սուբյեկտի կազմակերպարավական ձևը: Կազմակերպարավական ձևը կանխորոշում է տնտեսվարող սուբյեկտի գործունեության բնույթը: Մասնավորապես՝ տնտեսական ընկերությունները և ընկերակցություններն իրենց ստեղծմամբ հետապնդում են շահույթ ստանալու նպատակ՝ տնտեսության որոշակի ոլորտում գործունեություն ծավալելով: Հետևաբար, եթե քաղաքացու կողմից իրականացվող գործունեության ձեռնարկատիրական բնույթի պարզման համար, ի թիվս այլ հատկանիշների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև շահույթ (եկամուտ) ստանալու նպատակը (*իրավական հիմնավորումները տես՝ Նունե Սահակյանն ընդդեմ «Իլյարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի թիվ 3-1161(ՏԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.08.2007 թվականի որոշումը*), ապա տնտեսական ընկերությունների կամ ընկերակցությունների դեպքում այդպիսի նպատակը կանխորոշված է նրանց կազմակերպարավական ձևով: Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Նունե Սահակյանն ընդդեմ «Իլյարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի* գործով գործունեության ձեռնարկատիրական բնույթը պարզելու վերաբերյալ արտահայտած իր դիրքորոշումը, մասնավորապես՝ այն, որ այդպիսի գործունեությունը, բացի շահույթ ստանալու նպատակ հետապնդելուց, պետք է կրի նաև պարբերական բնույթ և կատարվի անձի նախաձեռնությամբ (ռիսկով):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված բոլոր հատկանիշներն էլ վերաբերելի են տնտեսական ընկերակցություններին կամ ընկերություններին: Այդուհանդերձ, այլ է խնդիրը, երբ տնտեսվարող սուբյեկտը, ունենալով համապատասխան կազմակերպահրավական ձև, փաստացի չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման փաստի ապացուցումը կարող է իրականացվել հարկային մարմինների կողմից ընկերության գործունեության կասեցման վերաբերյալ ներկայացված համապատասխան ապացույցով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ընկերության կողմից «DOLE» (Դ-ոլ) և «DOLE & SUN Design» (Դ-ոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանների գրանցման և իրավական պահպանություն ստանալու հայտը Գործակալություն ներկայացնելն իրենից ներկայացնում է անբարեխիղճ մրցակցության գործողություն (վարքագիծ), որով Ընկերությունը կարող է խախտել բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և անաչառության սկզբունքները, ինչը հակասում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին: Ավելին, անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանության վերաբերյալ դրույթներ են սահմանված նաև «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան կոնվենցիայի 10-bis հոդվածում, որի պահանջներին չեն համապատասխանում Ընկերության գործողությունները, որպիսի պայմաններում Կազմակերպության իրավունքները ենթակա են պաշտպանության:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Ընկերության կողմից իրականացված որևէ գործողության կամ վարքագծի անբարեխիղճ մրցակցություն (անբարեխիղճ մրցակցության գործողություն) համարվելու համար նախ անհրաժեշտ էր, որպեսզի այն դրսևորվեր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս, ինչպես նաև պարունակեր «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով անբարեխիղճ մրցակցությանը (անբարեխիղճ մրցակցության գործողությանը) ներկայացվող պարտադիր տարրերը: Նշված փաստերն էլ կազմում են սույն գործով ապացուցման առարկան, մինչդեռ որևէ ապացույց առ այն, որ Ընկերությունն օգտագործել է վիճարկվող ապրանքային նշանը ձեռնարկատիրական գործունեության ընթացքում, Կազմակերպության կողմից չի ներկայացվել: Հետևաբար, զուտ ապրանքային նշանի գրանցման փաստը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի համարվում իրավաբանական անձի կողմից թույլ տրված անբարեխիղճ մրցակցության գործողություն: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համատեքստում գործողության կամ վարքագծի՝ որպես անբարեխիղճ մրցակցություն համարվելու համար անհրաժեշտ էր նախ և առաջ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստի հաստատումը:

Վերը նշված հիմնավորումները Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-15-րդ հոդվածները, ինչն ազդել է գործի ելքի վրա:

*2) Անդրադառնալով Ընկերության դեմ պահանջ ներկայացնելու իրավաչափության խնդրին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի շրջանակներում պետական լիազոր մարմնի հիմնական գործառույթներն են ապրանքային նշանների գրանցման հայտերի ընդունումը և

---

քննարկումը, դրանց փորձաքննության անցկացումը, ապրանքային նշանների պետական գրանցումը, պետության անունից գրանցման վկայագրերի հանձնումը:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է նույն օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման հիման վրա:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ ապրանքային նշանների պետական գրանցման իրականացման գործառույթը վերապահված է բացառապես պետական լիազոր մարմնին (Գործակալությանը): Պետական լիազոր մարմնի կողմից ապրանքային նշանի պետական գրանցում իրականացնելու պահից տվյալ նշանի նկատմամբ ծագում է այդ նշանի իրավատիրոջ իրավունքը, և քանի դեռ ապրանքային նշանի գրանցման փաստը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 22-րդ կամ 23-րդ հոդվածներով սահմանված կարգով չի վիճարկվել կամ իրավատերը չի հրաժարվել ապրանքային նշանի նկատմամբ իրավունքից, գործում է այդ ակտի իրավաչափության կանխավարկածը: Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերահաստատել *Կարեն Մասցականյանն ընդդեմ Սեդա Ներսիսյանի և այլոց* գործով արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ յուրաքանչյուր որ պարտավոր է ելնել այն կանխավարկածից, որ վարչական մարմնի կողմից իրավունքի գրանցման վերաբերյալ ակտն ընդունվել է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակում: Դրա հետևանքով պետք է եզրակացնել, որ նշված ակտն իրավաչափ է, և որևէ անձ, այդ թվում՝ պետական մարմին, չի կարող կասկածի տակ դնել այդ ակտի իրավաչափությունը (*յրե՛ս՝ Կարեն Մասցականյանն ընդդեմ Սեդա Ներսիսյանի և այլոց թիվ ԱՎԴ-1/0098/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը*):

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության կողմից ապրանքային նշանների գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջի ներկայացումը ենթադրում է հենց վարչական ակտի (ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի պետական գրանցման) վիճարկում: Մինչդեռ, նման պահանջ չի կարող ներկայացվել ապրանքային նշանի իրավատիրոջ՝ Ընկերության դեմ, քանի որ ապրանքային նշանների գրանցումն իրականացնում է Գործակալությունը: Փաստերի դասավորվածության նման պայմաններում գործում է Ընկերության անվամբ թիվ 12544 «DOLE» (Դոլ) և թիվ 13301 «DOLE & SUN Design» (Դոլ ընդ Սան դիզայն) ապրանքային նշանների գրանցումների իրավաչափության կանխավարկածը:

Վերոգրյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս ատյանները խախտել են «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածները, որպիսի խախտումն էլ ազդել է սույն գործի ելքի վրա:

*Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.10.2012 թվականի որոշումը և այն փոփոխել. «Դուրյ Ֆուդ Քամփրնի» ինք. ընկերության հայցը մերժել:

2. «Դուրյ Ֆուդ Քամփրնի» ինք. ընկերությունից հոգուտ «Պաստիչերիա Քեյք» ՍՊԸ-ի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2472/02/08**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2472/02/08  
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
Դատավորներ՝ Գ. Մատիկյան  
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սուսաննա Նեմչինովայի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Սուսաննա Նեմչինովայի հայցի ընդդեմ Կենտրոն նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի, Սուրեն Առաքելյանի՝ 30.05.2008 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սուսաննա Նեմչինովան պահանջել է անվավեր ճանաչել 30.05.2008 թվականին Սուրեն Առաքելյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2009 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2009 թվականի որոշմամբ Սուսաննա Նեմչինովայի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 07.07.2009 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 23.12.2009 թվականի որոշմամբ վերադարձվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2009

թվականի որոշման դեմ Սուրեն Առաքելյանի բերած վճռաբեկ բողոքը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.04.2011 թվականի որոշմամբ Սուրեն Առաքելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.12.2010 թվականի վճիռը, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Կ.Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 05.06.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.09.2012 թվականի որոշմամբ Սուսաննա Նեմչինովայի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.06.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սուսաննա Նեմչինովան:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ, 8-րդ, 14-րդ, 163-րդ, 1186-րդ, 1225-րդ, 1227-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ, 130-րդ, 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի մահից հետո օրենքով սահմանված ժամկետում և կարգով ժառանգության բացման վայրի նոտարին Սուսաննա Նեմչինովան հանձնել է դիմում ժառանգական գույքի՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի նկատմամբ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ ժառանգատու Ջեմմա Մեժլումյանի մահից հետո օրենքով սահմանված ժամկետում և կարգով Սուրեն Առաքելյանը ժառանգական գույքի՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի նկատմամբ չի ընդունել ժառանգությունը, իսկ Սուրեն Առաքելյանի անունից Հովհաննես Ղազարյանը Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին **09.04.2007** թվականին հանձնել է դիմում ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու համար՝ առանց Սուրեն Առաքելյանի կողմից լիազորագիր տրամադրելու, մինչդեռ Սուրեն Առաքելյանը Հովհաննես Ղազարյանին իր անունից նոտարական գրասենյակ դիմելու նպատակով լիազորագիր տրամադրել է միայն **27.08.2007** թվականին:

Ավելին, Վերաքննիչ դատարանը, անտեսելով գործում առկա ապացույցները և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Սուսաննա Նեմչինովային Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/3-րդ բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը բեկանվել է և այդ մասով Սուսաննա Նեմչինովայի դիմումը թողնվել է առանց քննության, գտել է, որ Սուրեն Առաքելյանին տրամադրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրով չի խախտվել Սուսաննա Նեմչինովայի որևէ իրավունք:

---

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել և «օրինական ուժ տալ ԹԻՎ ԵԿԴ/2472/02/08 քաղաքացիական գործով 07.12.2010 թվականին կայացված դատական ակտին»:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սուրեն Առաքելյանը և Սուսաննա Նեմչինովան Ջեմմա Մեծլումյանի զավակներն են (հատոր 1-ին, գ.թ.7,14-16,63,70):

2. ՀՀ Ազգային արխիվի 01.10.2007 թվականի թիվ 01-20/1802 արխիվային տեղեկանքի համաձայն՝ Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 11.11.1993 թվականի թիվ 45/17 որոշմամբ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի սեփականաշնորհմանը մասնակցել են Ջեմմա Սուրենի Մեջլումյանը, Մարգո Ալեքսանի Առաքելյանը, Էմմա Առաքելի Առաքելյանը, Մարգարիտա Յուրիի Առաքելյանը, Առաքել Գարեգինի Առաքելյանը և Սուրեն Առաքելի Առաքելյանը (հատոր 1-ին, գ.թ. 67,68):

3. 08.12.1993 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 6434 վկայագրի համաձայն՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի սեփականատերը Ջեմմա Մեջլումյանն է, որպիսի իրավունքի գրանցման հիմքը Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 11.11.1993 թվականի թիվ 45/17 որոշումն է (հատոր 1-ին, գ.թ. 71):

4. 21.02.1996 թվականի կտակի համաձայն՝ Ջեմմա Մեծլումյանն իրեն պատկանող Երևանի Տեր-Գաբրիելյան (Ե.Կողբացու) փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանը կտակել է Սուրեն Առաքելյանին (հատոր 1-ին, գ.թ.11,65):

5. 30.08.2007 թվականի թիվ 566185 վկայականի համաձայն՝ Ջեմմա Մեծլումյանը մահացել է **04.11.2006** թվականին (հատոր 1-ին, գ.թ.60):

6. Ժառանգական գործերի գրանցման մատյանի պատճենի համաձայն՝ **09.04.2007** թվականին Սուսաննա Նեմչինովան դիմել է Կենտրոն նոտարական տարածք ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու համար (հատոր 3-րդ, գ.թ.87-92):

7. Սուրեն Առաքելյանի անունից Հովհաննես Ղազարյանը Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին հասցեագրված **09.04.2007** թվականի դիմումով խնդրել է 04.11.2006 թվականին մահացած ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ տրամադրել ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր (հատոր 1-ին, գ.թ.56):

8. **27.08.2007** թվականի լիազորագրով Սուրեն Առաքելյանը լիազորել է Հովհաննես Ղազարյանին իր անունից դիմելու նոտարական գրասենյակ ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ստանալու «ժառանգության իրավունքի վկայագիր» (հատոր 1-ին, գ.թ.59):

9. Երևանի Կենտրոն և Կորբ-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 11.04.2008 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով բավարարվել է Սուրեն Առաքելյանի դիմումը՝ հաստատվել են իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ «15.12.1994թ-ին մահացած Մարգո Ալեքսանի Առաքելյանը հանդիսանում է 19.06.1960թ-ին ծնված Սուրեն Առաքելի Առաքելյանի հարազատ տատը: Ջեմմա Սուրենի Մեջլումյանի անվամբ տրված Երևանի Ե.Կողբացու փողոցի թիվ 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի սեփականաշնորհման վերաբերյալ Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի գործկոմի 11.11.1993թ. թիվ 45/17 որոշումը, այդ որոշման հիման վրա 08.12.1993թ. տրված



սեփականության իրավունքի վկայագիրը և ՀՀ ազգային արխիվի Երևանի քաղաքային մասնաճյուղի կողմից 01.10.2007թ. տրված թիվ 01-20/1802 տեղեկանքը պատկանում են 25.08.1926թ. ծնված և 04.11.2006թ. մահացած Ջեմմա Սուրենի Մեծլումյանին» (հատոր 1-ին, գ.թ.61-62):

10. 30.05.2008 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 5252 վկայագրի համաձայն՝ 04.11.2006 թվականին մահացած ժառանգատու Ջեմմա Մեծլումյանի ժառանգական գույքի՝ Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/6 բաժնի նկատմամբ ըստ կտակի ժառանգ է ճանաչվել Սուրեն Առաքելյանը (հատոր 1-ին, գ.թ.12):

11. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.04.2011 թվականի թիվ 08-1948 որոշմամբ բեկանվել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 28.12.2007 թվականի թիվ 2-5121 վճռի՝ Սուսաննա Ենչինովային (Առաքելյանին) Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/3 բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը և այդ մասով Սուսաննա Ենչինովայի դիմումը թողնվել է առանց քննության, իսկ վճռի՝ իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերի հաստատումը, որ «Առաքել Գարեգինի Առաքելյանը և Մարգո Ալեքսանի Առաքելյանը հարազատ մայր և որդի են: Առաքել Գարեգինի Առաքելյանը Սուսաննա Առաքելի Առաքելյանի (Ենչինովայի) հարազատ հայրն է, իսկ Մարգո Ալեքսանի Առաքելյանը հարազատ տատիկն է: Մոսկվա քաղաքի Վիխինովի շրջանի ՆԳ բաժնի 772-044-ի կողմից տրված անձնագրում, 1-ՉԺ 132451 տեղեկանքում, Մոսկվա քաղաքի 20.03.07թ. թիվ 6624 նոտարական գրասենյակին ուղարկված դիմումում, Մոսկվա քաղաքից 09.10.07թ. ուղարկված թիվ 2-Լ-4977 լիազորագրում, Մոսկվա քաղաքի Վիխինովի շրջանի «Հարավ-արևմտյան վարչական տարածքի» անձնագրավարի 28.02.07թ. ա/համարի տեղեկանքում գրված Ենչինովա Սուսաննա Առաքելի անվանումներով փաստաթղթերը պատկանում են նույն իրեն՝ Սուսաննա Առաքելի Առաքելյանին» մասերը թողնվել է օրինական ուժի մեջ (հատոր 1-ին, գ.թ.14-16, հատոր 5-րդ, գ.թ.52-54):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում՝ այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգու-

---

թյունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ ժառանգը դիմումը նոտարին չի հանձնում անձամբ, ապա նման դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար անձը: **Ժառանգության ընդունումը ներկայացուցչի միջոցով հնարավոր է, եթե լիազորագրում հատուկ նախատեսված է այն ընդունելու լիազորությունը:**

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ժառանգության ընդունումն իրականացվում է երկու եղանակով՝ ըստ կտակի և ըստ օրենքի: Ընդ որում, ժառանգման երկու եղանակի դեպքում էլ ժառանգի կողմից ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից **վեց ամսվա** ընթացքում:

Հատկանշական է, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է **վեցամսյա ժամկետ, որը** հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից:

Օրենսդիրը նախատեսել է նաև ժառանգի կողմից դիմումը նոտարին անձամբ չհանձնելու դեպքում կատարել հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- դիմումի տակ ժառանգի ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը, կամ
- նոտարական գործողություններ կատարելու համար լիազորված պաշտոնատար

անձը:

Նշված պայմաններից բացի օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգին ժառանգությունն ընդունել ներկայացուցչի միջոցով, և այն էլ մեկ պայմանով, որ **լիազորագրում հատուկ նախատեսված լինի ժառանգությունն ընդունելու լիազորությունը:**

Փաստորեն, օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին **վեցամսյա** ժամկետում հանձնելը, հետևաբար ժառանգի կողմից ժառանգությունը ներկայացուցչի միջոցով ընդունելու դեպքում լիազորագիրը ևս պետք է ժառանգի կողմից ներկայացուցչին տրամադրված լինի ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված **վեցամսյա** ժամկետում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի և 290-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով ժառանգության ընդունումը դիտվում է միակողմ գործարք՝ վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ այլ անձի անունից գործելու լիազորության բացակայությամբ կամ նման լիազորությունների սահմանազանցմամբ գործարքը կնքված է համարվում այն կնքած անձի անունից և ի շահ նրա, եթե մյուս անձը (ներկայացվողը) հետագայում ուղղակի հավանություն չի տալիս տվյալ գործարքին:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումը և հաշվի առնելով ժառանգական իրավահարաբերությունների առանձնահատկությունը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ժառանգի անունից լիազորության բացակայությամբ կամ նման լիա-

գորությունների սահմանազանցմամբ (օրինակ՝ լիազորված է ընդունելու միայն ըստ օրենքի ժառանգությունը, բայց ընդունել է ըստ կտակի ժառանգությունը) ներկայացուցչի կողմից գործելու դեպքում վերջինիս գործողությունների արդյունքում իրավական հետևանքներ չեն առաջանում ներկայացվողի՝ ժառանգի համար: Այդպիսի հետևանքներ չեն առաջանում նաև լիազորությունների բացակայությամբ դիմում ներկայացրած անձի նկատմամբ: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կանոնների կիրառմանը, ապա ներկայացուցչի գործողություններին ապագայում հավանություն տալը կարող է տեղի ունենալ միայն ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված **վեցամսյա ժամկետի ընթացքում**, ինչը հավասարազոր է ժառանգի կողմից անձամբ ժառանգությունն ընդունելուն, այնքանով որքանով նման հավանություն տալու համար ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ **04.11.2006** թվականին մահացած ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու նպատակով Կենտրոն նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանին **09.04.2007** թվականի դիմումը հանձնել է Սուրեն Առաքելյանի անունից Հովհաննես Ղազարյանը: Մինչդեռ, Սուրեն Առաքելյանը Հովհաննես Ղազարյանին իր անունից նոտարական գրասենյակ դիմելու և ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ «ժառանգության իրավունքի վկայագիր» ստանալու համար լիազորագիր տրամադրել է **27.08.2007** թվականին: Այսինքն՝ Սուրեն Առաքելյանը Հովհաննես Ղազարյանին իր անունից նոտարական գրասենյակ դիմելու համար լիազորագիրը տրամադրել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված **վեցամսյա ժամկետի ավարտից հետո**:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին, 1226-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, Սուսանա Նեմչինովայի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «Տվյալ դեպքում, Սուրեն Առաքելյանի անունից հանդես եկող անձի կողմից նրա անունից 09.04.2007թ. դիմում է ներկայացվել Կենտրոն նոտարական գրասենյակ՝ ըստ կտակի ժառանգության վկայագիր տալու պահանջով, որը պատշաճ վավերացվել է նույն գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի կնիքով: Դիմումի հիման վրա նոտարի կողմից 30.05.2008թ. տրվել է ըստ կտակի ժառանգության վկայագիր: Բացի դա, պետք է հաշվի առնել, որ ի վերջո Սուրեն Առաքելյանը կատարել է այն անհրաժեշտ և հստակ գործողությունները, որոնք ուղղված են եղել նրա կողմից ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն՝ Ջենմա Մեծլումյանի մահվան պահից վեց ամսվա ընթացքում և նոտարի կողմից այդպիսիք չեն մերժվել և ընդունվել են ու օրենքով սահմանված կարգով դրանց ընթացք է տրվել, որպիսի հանգամանքների առկայության պայմաններում վիճելի վկայագիրն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են»:

Մինչդեռ, հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ **04.11.2006** թվականին մահացած ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու համար Հովհաննես Ղազարյանի կողմից **09.04.2007** թվականին Սուրեն Առաքելյանի անունից դիմումը նոտարին հանձնվել է ժառանգի անունից լիազորության բացակայությամբ: Ժառանգը Հովհաննես Ղազարյանի գործողություններին ուղղակի հավանություն է տվել **27.08.2007** թվականին՝ տրամադրելով լիազորագիր նոտարական գրասենյակ դիմելու և ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ «ժառանգու-

---

թյան իրավունքի վկայագիր» ստանալու համար: Այսինքն՝ Սուրեն Առաքելյանի կողմից Հովհաննես Ղազարյանի գործողություններին ուղղակի հավանություն տրվել է ժառանգության ընդունման համար օրենքով նախատեսված **վեցամսյա ժամկետի ավարտից հետո**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուրեն Առաքելյանին 30.05.2008 թվականին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 5252 վկայագիրը տրամադրվել է վերը նշված օրենքների պահանջների խախտմամբ, հետևաբար Սուրեն Առաքելյանը ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չի ընդունել:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը գտել է, որ «Վերաքննիչ դատարանի 13.04.2011թ. թիվ 08-1948 որոշմամբ մասնակիորեն բավարարվել է Սուրեն Առաքելյանի վերաքննիչ բողոքը և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 28.12.2007թ. թիվ 2-5121 վճիռը՝ «Սուսաննա Առաքելի Նեմչինովային (Առաքելյանին) ճանաչել Երևանի Ե. Կողբացու 42 շենքի թիվ 105 բնակարանի 1/3 բաժնեմասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ» մասով բեկանվել է և դիմումն այդ մասով թողնվել է առանց քննության: Հայցվորը 2008թ. սեպտեմբերին դիմել է Դատարան Սուրեն Առաքելյանին տրված վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջով, և Դատարան դիմելու պահի դրությամբ նա նշված դատական ակտով ճանաչվել է ժառանգությունն ընդունած ժառանգ, որի հիմքով և վիճելի բնակարանի համասեփականատեր: Ներկայիս իրավիճակում այն դատական ակտը, որի հիման վրա հայցվորը դարձել էր վիճելի բնակարանի համասեփականատեր և ճանաչվել էր ժառանգությունն ընդունած ժառանգ ու ձեռք էր բերել վիճելի վկայագիրը վիճարկելու հնարավորություն, բեկանվել է, և այդ մասով հայցվորի դիմումը թողնվել է առանց քննության: Այսինքն՝ պետք է արձանագրել, որ վերացել են այն հիմքերը, որոնց առկայությամբ հայցվորը կարող էր վիճարկել պատասխանողին տրված վկայագիրը, այն է՝ հայցվորն այլևս վիճելի բնակարանի սեփականատեր չէ, ինչպես նաև դրա վերաբերյալ ժառանգության մասնակից չէ, որպիսի պայմաններում վիճելի վկայագրի առկայությամբ նրա որևէ իրավունք չի խախտվում, որի կապակցությամբ նա կարող էր դիմել դատական պաշտպանության՝ այն անվավեր ճանաչելու պահանջով»:

Հիմք ընդունելով վերոնշյալ պատճառարանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սուրեն Առաքելյանի կողմից ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ կտակի ժառանգությունը չընդունելու պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի ուժով ծագում է այլ ժառանգի՝ տվյալ դեպքում Սուսաննա Առաքելի Նեմչինովայի կողմից ժառանգությունն ընդունելու իրավունքը: Ընդ որում, **09.04.2007** թվականին Սուսաննա Նեմչինովան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմում է հանձնել Կենտրոն նոտարական տարածք ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու համար:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ պարագայում Սուսաննա Նեմչինովան շահագրգիռ անձ է, ով իրավասու է վիճարկելու ժառանգատու Ջենմա Մեծլումյանի ժառանգական գույքի նկատմամբ Սուրեն Առաքելյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրն օրենքով սահմանված կարգով տրամադրելու հիմքով, և սույն հայցապահանջը ներկայացնելու իրավունքի ծագումը պայմանավորված չէ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.04.2011 թվականի թիվ 08-1948 որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 28.12.2007 թվականի թիվ 2-5121 վճռի՝ Սուսաննա Նեմչինովային (Առաքելյանին) Երևանի Ե.Կողբացու փողոցի 42-րդ շենքի թիվ 105 բնակարանի 1/3 բաժնի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասը բեկանելու և այդ մասով Սուսաննա

---

Նեմչինովայի դիմումն առանց քննության թողնելու հանգամանքով:

Նշված հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են ժառանգական գույքն օրենքով սահմանված կարգով ժառանգի կողմից ժառանգելու ինստիտուտը կարգավորող նորմերի պահանջները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել:

Սուսաննա Նեմչինովայի հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել 30.05.2008 թվականին Սուրեն Առաքելյանին տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը:

2. Սուրեն Առաքելյանից հօգուտ Սուսաննա Նեմչինովայի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրք, 10.000 ՀՀ դրամ՝ 05.08.2009 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքի, 10.000 ՀՀ դրամ՝ 04.07.2012 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրք և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/0554/02/11**  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0554/02/11  
Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ս. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում քննելով Ռիմա Պողոսյանի և Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Օֆելյա Խաչատրյանի ընդդեմ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի, Սերոբ և Հրանտ Խաչատրյանների, Ռիմա Պողոսյանի և երրորդ անձ Վլադիմիր Խաչատրյանի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, նվիրատվության պայմանագրերը և դրանց հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները, առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու ու ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Օֆելյա Խաչատրյանը պահանջել է անվավեր ճանաչել 12.11.2003 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, 03.11.2009 թվականին Վարդան և Վլադիմիր Խաչատրյանների միջև Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 մասի վերաբերյալ կնքված անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանա-

գիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, 19.11.2010 թվականի անշարժ գույքի բաժնի նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, 06.06.2011 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, իրեն ճանաչել Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան և հողի՝ իրեն հասանելիք 1/3 բաժնի նկատմամբ իր հոր՝ Սերոբ Խաչատրյանի ժառանգությունն ընդունած ժառանգ:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ս. Արամյան) (այսուհետ՝ Դատարան) 02.08.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2012 թվականի որոշմամբ Օֆելյա Խաչատրյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 02.08.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ռիմա Պողոսյանը և Վլադիմիր Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2.1. Ռիմա Պողոսյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, նախկին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ հոդվածները, 219-րդ հոդվածի 1-ին կետը և 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն ու անտեսել է, որ Օֆելյա Խաչատրյանը որևէ կերպ չի հիմնավորել այն փաստերը, որ իր կողմից հիշատակված գույքը պատկանել է Սերոբ Խաչատրյանին, և որ այդ գույքը նա ստացել է Սերոբ Խաչատրյանի մահվանից հետո: Դեռ ավելին, գործով որպես վկա հարցաքննված Գագիկ Գևորգյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Օֆելյա Խաչատրյանը հորից գույքը ստացել է նրա կենդանության օրոք:

Վերաքննիչ դատարանը, չիրականացնելով գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, անհիմն եզրակացություն է արել այն մասին, որ Դատարանը պատշաճ չի գնահատել գործով հետազոտված ապացույցները:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ ժառանգությունները բացվել են մինչև 01.01.1999 թվականը, ժառանգներն այն ընդունել են, չի կիրառել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, որի արդյունքում անտեսել է նաև, որ մինչև 01.01.1999 թվականը գործող քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված չի եղել, որ ժառանգության մի մասի ընդունմամբ ժառանգը ճանաչվում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգությունն ընդունած ժառանգ:

Վերաքննիչ դատարանը, նշելով, որ Օֆելյա Խաչատրյանը հանդիսանում է ժառանգությունն ընդունած ժառանգ, չի նշել այն ապացույց՝ ցուցմունքը, որը կարող էր նման հետևություն անելու հիմք հանդիսանալ:

---

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.08.2012 թվականի վճռին:

**2.2. Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ և 1226-րդ հոդվածները, որոնք չպեղք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել իր իսկ կողմից կայացված որոշումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հենց վկաների ցուցմունքներով հերքվել է Օֆելյա Խաչատրյանի վկայակոչած այն փաստը, որ հոր մահվանից հետո ընդունել է ժառանգական գույքի մի մասը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.08.2012 թվականի վճռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 բաժինը պատկանել է Սերոբ Խաչատրյանին, իսկ մյուս 1/2 բաժինը՝ նրա եղբորը՝ Ասատուր Խաչատրյանին (հատոր 1-ին, գ.թ. 7, 58-60):

2) 03.06.1967 թվականին մահացել է Ասատուր Խաչատրյանը, իսկ 22.11.1979 թվականին՝ Սերոբ Խաչատրյանը (հատոր 1-ին, գ.թ. 7, 58-60):

3) Սերոբ Խաչատրյանի մահվանից հետո՝ 12.11.2003 թվականին, Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 բաժնի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել նրա կնոջը՝ Ռաիսա Խաչատրյանին և որդիներին՝ Սուրեն ու Վարդան Խաչատրյաններին (հատոր 1-ին, գ.թ. 7):

4) 24.03.2008 թվականին մահացել է Սուրեն Խաչատրյանը, իսկ 05.04.2008 թվականին՝ Ռաիսա Խաչատրյանը: Սուրեն Խաչատրյանի և Ռաիսա Խաչատրյանի մահվանից հետո՝ 14.10.2008 թվականին, Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/6-ական բաժինների նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր են տրվել Վարդան Խաչատրյանին (հատոր 1-ին, գ.թ. 56, 57):

5) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2008 թվականի վճռով բավարարվել է Վարդան Խաչատրյանի դիմումը՝ հաստատվել են իրավաբանական նշանակություն ունեցող այն փաստերը, որ Վարդան Խաչատրյանը հանդիսանում է 03.06.1967 թվականին մահացած Ասատուր Խաչատրյանի հարազատ եղբոր որդին, և որ Վարդան Խաչատրյանն ընդունել է Ասատուր Խաչատրյանի ժառանգությունը (հատոր 1-ին, գ.թ. 58-60):

6) Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան նկատմամբ գրանցվել է Վարդան Խաչատրյանի սեփականության իրավունքը, և 24.12.2008 թվականին նրան տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (հատոր 1-ին, գ.թ. 8,9):



7) 03.11.2009 թվականին Վարդան և Վլադիմիր Խաչատրյանների միջև կնքվել է անշարժ գույքի մասի նվիրատվության պայմանագիր, որի համաձայն՝ Վարդան Խաչատրյանը Վլադիմիր Խաչատրյանին է նվիրել Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 բաժինը (հատոր 1-ին, գ.թ. 10):

8) 19.11.2010 թվականին Վարդան Խաչատրյանի (մի կողմից) և Սերոբ ու Հրանտ Խաչատրյանների (մյուս կողմից) միջև կնքվել է անշարժ գույքի բաժնի նվիրատվության պայմանագիր, որի համաձայն՝ Վարդան Խաչատրյանն իր որդիներին՝ Սերոբ և Հրանտ Խաչատրյաններին է նվիրել Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 բաժինը: Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 բաժնի նկատմամբ գրացվել է Վլադիմիր Խաչատրյանի սեփականության իրավունքը, իսկ նույն տան 1/4-ական բաժինների նկատմամբ՝ Սերոբ և Հրանտ Խաչատրյանների սեփականության իրավունքը (հատոր 1-ին, գ.թ. 61):

9) 06.06.2011 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի հիմքով Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան նկատմամբ գրանցվել է Ռ-իմա Պողոսյանի սեփականության իրավունքը, և 17.06.2011 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական (հատոր 1-ին, գ.թ. 102-105):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն, որ Ռ-իմա Պողոսյանի և Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքները նույնաբովանդակ են, չի անդրադառնում դրանցից յուրաքանչյուրին առանձին և արձանագրում է, որ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումները հավասարապես վերաբերում են երկու բողոքների հիմքերին և հիմնավորումներին:

Սույն բողոքներով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված են հետևյալ իրավական խնդիրները.

ա) մինչև 1999 թվականի հունվարի մեկը բացված ժառանգության դեպքում նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությունը,

բ) ժառանգական գանգվածում ներառված գույքի մի մասի փաստացի տիրապետման դեպքում ժառանգության ընդունումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախ և առաջ անհրաժեշտ է պատասխանել բարձրացված առաջին հարցին, քանի որ ժառանգության ընդունման հարցերը տարբեր կերպ են կարգավորված գործող և նախկին քաղաքացիական օրենսգրքերով:

ա) «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի տասնամեկերորդ բաժնի նորմերը կիրառվում են նաև այն ժառանգությունների նկատմամբ, որոնք բացվել են մինչև օրենսգրքը գործողության մեջ դնելը, սակայն չեն ընդունվել ժառանգներից ոչ մեկի կողմից և ժառանգման իրավունքով պետության կամ համայնքի սեփականությունը չեն դարձել մինչև 1999 թվականի հունվարի 1-ը:

ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժինը վերաբերում է ժառանգման իրավունքին և կարգավորում է ժառանգման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ ժառանգության ընդունումը:

---

Որպեսզի կիրառելի լինեն ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի նորմերը սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ, Օրենքը նախատեսում է մի քանի պայման: Նախ՝ ժառանգությունը պետք է բացված լինի մինչև ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դնելը: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ է դրվել 1999 թվականի հունվարի 1-ից:

Երկրորդ՝ ժառանգությունը չպետք է ընդունված լինի որևէ մեկի կողմից: Այսինքն պետք է բացակայի ժառանգական գանգվածում ներառված գույքի՝ իրավահաջորդության կարգով անցումը այլ անձանց՝ ժառանգներին:

Երրորդ՝ ժառանգությունը որևէ մեկի կողմից ընդունված չլինելու դեպքում այն չպետք է դարձած լինի պետության կամ համայնքի սեփականությունը:

Վճարել դատարանն ընդգծում է, որ երկրորդ և երրորդ պայմանները չպետք է տարանջատել, քանի որ դրանք գործում են միաժամանակ՝ հաշվի առնելով այն, որ ժառանգությունը չընդունվելու դեպքում այն դառնում է պետության կամ համայնքի սեփականությունը: Ընդ որում, այդ պայմանները պետք է առկա լինեն մինչև 1999 թվականի հունվարի մեկը:

Նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախկին՝ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգիրքը ժառանգման հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել, եթե ժառանգությունը բացվել է մինչև 1999 թվականի հունվարի 1-ը, և բացակայում են վերոնշյալ պայմանները:

Սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվող օրենսդրության հարցը որոշելիս Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում ստուգել վերոգրյալ պայմանների՝ սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելիությունը:

Նշված հարցի քննարկման տեսանկյունից կարևորվում են հետևյալ փաստերը. Սերոբ Խաչատրյանը մահացել է 22.11.1979 թվականին: Սերոբ Խաչատրյանի մահվանից հետո՝ 12.11.2003 թվականին, Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան 1/2 բաժնի նկատմամբ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել նրա կնոջը՝ Ռաիսա Խաչատրյանին և որդիներին՝ Սուրեն ու Վարդան Խաչատրյաններին:

Օֆելյա Խաչատրյանի պնդմամբ իր հոր՝ Սերոբ Խաչատրյանի մահից հետո իր կողմից ժառանգությունն ընդունվել է փաստացի տիրապետմամբ՝ գրադարանը և վզնոցը ժառանգատուի մահվանից հետո տիրապետելով:

Վերոնշյալից հետևում է, որ Օֆելյա Խաչատրյանի կողմից ժառանգության հավանական ընդունումը տեղի է ունեցել ժառանգատուի՝ Սերոբ Խաչատրյանի մահից հետո՝ մինչև ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի գործողության մեջ դրվելը: Նշված եզրահանգումը կատարելիս Վճարել դատարանը հիմք է ընդունում այն, որ ինչպես 1964 թվականի, այնպես էլ 1998 թվականի քաղաքացիական օրենսգրքերը նախատեսում են ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետ ժառանգության բացման պահից:

Վճարել դատարանը գտնում է, որ նշվածը բավարար է հանգելու հետևության, որ Օֆելյա Խաչատրյանի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետմամբ ընդունելու հարցը լուծելիս կիրառելի է ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգիրքը, քանի որ բացակայում են Օրենքի 18-րդ հոդվածում ամրագրված պայմանները:

Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը կիրառել են ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի դրույթները՝ այդպիսով թույլ տալով նյութական իրավունքի նորմի խախտում: Հետևաբար Վճարել դատարանին մնում է պարզել, թե արդյոք նման խախտումը հանգեցրել է գործի սխալ լուծման:

բ) ՕՖելյա Բազատրյանի պնդմամբ ինքը հոր՝ Սերոբ Բազատրյանի մահից հետո տիրապետել է վերջինիս գրադարանը և վզնոցը, հետևաբար որպես ժառանգության մի մասի փաստացի տիրապետմամբ ընդունում, համարվում է իրեն հասանելիք ժառանգությունն ընդունած ժառանգ:

ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով:

Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին:

Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով պրակտիկայում նշված հոդվածի կիրառման և մեկնաբանման միասնականությունն ապահովելու անհրաժեշտությունը, արձանագրում է, որ դատարանները ժառանգման հարաբերությունների հետ կապված այնպիսի վեճեր լուծելիս, որոնց դեպքում կիրառման է ենթակա հիշատկված հոդվածը, պետք է հաշվի առնեն այն, որ ժառանգման հարաբերությունները կանոնակարգող դրույթները նպատակ են հետապնդում պահպանել անձանց սեփականության իրավունքը, որոնց օրենքով սահմանված դեպքերում և կարգով փոխանցվում է մահացած անձի գույքը (ժառանգությունը): Այս առումով ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածը ուղղակիորեն չի նախատեսում դրույթ, որն ամրագրված է ՀՀ 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետում, այն է՝ ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Այդուհանդերձ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի հիշատկված դրույթը ուղղակիորեն ամրագրում է «ժառանգության ընդունում», «ժառանգական գույք» եզրույթները, առանց տարանջատելու ամբողջ ժառանգության կամ դրա մասի ընդունումը: Հետևաբար, նույնիսկ այն դեպքում, երբ ժառանգի կողմից ընդունված գույքը կազմել է ժառանգական զանգվածի միայն մի մասը, այն չի դադարում ժառանգական գույք լինելուց, ժառանգը պետք է համարվի ժառանգությունն ընդունած:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգության ընդունման ընդհանուր ժամկետների վերաբերյալ նախկին և գործող օրենսդրական կարգավորումները նույնն են՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Վճռաբեկ դատարանը *Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռաիսա Հաբեշյանի և մյուսների* գործով անդրադարձել է ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածով նախատեսված ժառանգության ընդունման ժամկետի հաշվարկի և այդ ժամկետը բաց թողնելու իրավական հետևանքների հարցին: Մասնավորապես, նախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնակարգմամբ ժառանգության բացման ժամանակ էր համարվում ժառանգատուի մահվան օրը, իսկ ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված էր համարվում այն դեպքում, երբ նա փաստորեն սկսում էր տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, որպիսի գործողությունները պետք է կատարվեին ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Այսինքն՝ վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով անձը կորցնում էր ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն ընդունած (*դեմ Հարություն Հաբեշյանն ընդդեմ Ռաիսա Հաբեշյանի և մյուսների թիվ ԵՄԴ/0235/02/09 քաղաքացիական*

---

գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Կիրառելով վերոնշյալ մեկնաբանությունները սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի կիրառմամբ Օֆելյա Խաչատրյանին Սերոբ Խաչատրյանի ժառանգությունն ընդունած ժառանգ դիտելու համար անհրաժեշտ է հիմնավորել, որ Սերոբ Խաչատրյանի մահից հետո վեց ամսվա ընթացքում Օֆելյա Խաչատրյանը տիրապետել է վերջինիս գրադարանը և վզնոցը:

Դատարանը, գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, այդ թվում նաև վկաների ցուցմունքները, մերժել է Երևանի Ա. Տիգրանյանի փողոցի թիվ 27 տան և հողի՝ իրեն հասանելիք 1/3 բաժնի նկատմամբ Սերոբ Խաչատրյանի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին Օֆելյա Խաչատրյանի պահանջը՝ պատճառաբանելով, որ դատաքննությամբ որևէ կերպ չհիմնավորվեց այն փաստը, որ նշված գրքերը կամ վզնոցը Օֆելյա Խաչատրյանը ստացել է ժառանգատուի մահվանից հետո և օրենքով նախատեսված վեցամսյա ժամկետում փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը: Դատարանը նշել է նաև, որ ըստ վկա Գագիկ Գևորգյանի ցուցմունքի՝ Օֆելյա Խաչատրյանը գրադարանը և ոսկին ստացել է հորից նրա կենդանության ժամանակ, հակասական է նաև Օֆելյա Խաչատրյանի և վկաների կողմից նշված վզնոցի տեսակը: Օֆելյա Խաչատրյանը նշել է, որ ստացել է «Յանտար» բնական քարից վզնոց, իսկ վկաներ Հարություն և Գագիկ Գևորգյանները նշել են «նսկյա շղթա», ինչպես նաև չի ներկայացվել Օֆելյա Խաչատրյանի կողմից ստացված որևէ գիրք՝ իր տարբերակիչ նշանով, շտամպ, գրառում, ստորագրություն և այլն, որ դա պատկանել է Սերոբ Խաչատրյանին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դնելով այն հիմնավորումները, որ հոր ժառանգությունն ընդունելու փաստը Օֆելյա Խաչատրյանը հիմնավորել է վկաների ցուցմունքներով, որոնք Դատարանը պատշաճ չի գնահատել, գրադարանը և վզնոցը ժառանգատուի մահվանից հետո ստացված լինելու փաստը ևս կարող է հիմնավորված համարվել վկաների ցուցմունքներով, ինչը Դատարանը պատշաճ չի կատարել, եզրահանգել է, որ թույլատրելի ապացույցով հիմնավորվել է, որ իր հոր ժառանգությունից Օֆելյա Խաչատրյանը որոշակի իրեր ստացել և տիրապետում է որպես սեփական:

ՀՀ 1964 թվականի հունիսի 4-ի քաղաքացիական օրենսգրքի 549-րդ հոդվածի վերաբերյալ վերոնշյալ հիմնավորումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործով որևէ կերպ չի հաստատվել այն փաստը, որ Օֆելյա Խաչատրյանը գրադարանը և վզնոցը սկսել է տիրապետել ժառանգատուի մահից հետո վեց ամսվա ընթացքում: Հետևաբար վեցամսյա ժամկետը բաց թողնելու հետևանքով Օֆելյա Խաչատրյանը կորցրել է ժառանգությունն ընդունելու հնարավորությունը և չէր կարող համարվել այն փաստացի տիրապետմամբ ընդունած:

Հիմք ընդունելով վերոգրյալ հիմնավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները ազդել են գործի ելքի վրա: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Դատարանը կիրառել է նյութական իրավունքի սխալ նորմ, այդուհանդերձ նշված խախտումը չի հանգեցրել գործի սխալ լուծման:

Անդրադառնալով բողոքաբեր Ռիմա Պողոսյանի կողմից բարձրացված իրավաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի հիման վրա վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման համար կատարված ծախսերի հատուցման հարցին՝ Վճռաբեկ

դատարանը եկավ հետևյալ եզրահանգման: Այսպես՝ 05.12.2011 թվականին «Գրանդ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ-ի և Ռիմա Պողոսյանի միջև կնքված պայմանագրով նախատեսված է եղել մատուցել իրավաբանական խորհրդատվական ծառայություններ՝ կապված դատական ներկայացուցչության հետ Դատարանում և Վերաքննիչ դատարանում: Մատուցվող ծառայության գինը պայմանագրով նախատեսվել է 200.000 ՀՀ դրամ: Երկրորդ պայմանագրով՝ կնքված 14.01.2013 թվականին «Գրանդ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ-ի և Ռիմա Պողոսյանի միջև, նախատեսված է եղել մատուցել իրավաբանական խորհրդատվական ծառայություններ՝ կապված վճռաբեկ բողոքի պատրաստման հետ, որի գինը պայմանագրով սահմանվել է 200.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը փաստաբանի խելամիտ վարձատրության հարցը լուծելիս անհրաժեշտ է համարում վերահաստատել *Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեպրոսյանի* գործով արտահայտած դիրքորոշումն առ այն, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*տես՝ Ֆերդինանդ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պեպրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով վերը նշված չափանիշները և նկատի ունենալով, որ փաստաբանը սույն գործով ի շահ հայցվորի կատարել է 05.12.2011 և 14.01.2013 թվականներին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերով սահմանված դատավարական գործողությունները, ինչպես նաև հաշվի առնելով վերաքննիչ դատարանում գործի քննության տևողությունը (շուրջ չորս ամիս), նիստերի քանակը (երեք դատական նիստ), ինչպես նաև Վճռաբեկ դատարանում իրականացված դատավարական գործողությունների ծավալը՝ Վճռաբեկ դատարանը սույն գործով փաստաբանական ծառայություններ մատուցելու դիմաց վճարման ենթակա գումարի ողջամիտ չափ է համարում 200.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

---

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով Դատարանի վճռում առկա թերի պատճառաբանությունները, հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.08.2012 թվականի վճռին սույն որոշման պատճառաբանություններով:

2. Օֆելյա Խաչատրյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.09.2012 թվականի որոշմամբ հետսաձգված պետական տուրք, 100.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 06.03.2013 թվականի որոշմամբ հետսաձգված պետական տուրք՝ Վլադիմիր Խաչատրյանի վճռաբեկ բողոքի մասով:

3. Օֆելյա Խաչատրյանից հոգուտ Ռ-ինա Պողոսյանի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

4. Օֆելյա Խաչատրյանից հոգուտ Ռ-ինա Պողոսյանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ-2/0420/02/11  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ-2/0420/02/11  
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան  
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Ա. Թումանյան

ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչ Տարիել Մանուկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամվել Հովհաննիսյանի ընդդեմ Լիդա, Քնարիկ, Մանվել Հովհաննիսյանների, Գոհարիկ Մալխասյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սամվել Հովհաննիսյանի ընդդեմ Սամվել Հովհաննիսյանի՝ ժառանգությունն ընդունելու փաստը հաստատելու պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է առանձնացնել հանգուցյալ մոր՝ Վարդանուշ Հովհաննիսյանի, գույքի ժառանգության իր մասնաբաժինը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Սամվել Հովհաննիսյանը պահանջել է հաստատել հանգուցյալ մորը՝ Վարդանուշ Հովհաննիսյանին պատկանող գույքի ժառանգությունն ընդունելու փաստը, ինչպես նաև հայցվորից բռնագանձել փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը:

Սամվել Հովհաննիսյանը, լրացնելով հայցապահանջը, պահանջել է ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփակա-

---

նությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ և առանձնացնել իր բաժնետնասը մյուս համասեփականատերերի բաժնետնասից:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.02.2012 թվականի վճռով հայրը մերժվել է, իսկ հակընդդեմ հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.05.2012 թվականի որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.02.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 20.12.2012 թվականի վճռով Սամվել Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Լիդա, Քնարիկ, Մանվել Հովհաննիսյանների, Գոհարիկ Մալխասյանի՝ գույքի ժառանգության մասնաբաժինն առանձնացնելու պահանջի մասով կարճվել է՝ այդ մասով հայցից հրաժարվելու հիմքով: Սամվել Հովհաննիսյանի հայցն ընդդեմ Լիդա, Քնարիկ, Մանվել Հովհաննիսյանների, Գոհարիկ Մալխասյանի՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով իրեն ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու մասին, մերժվել է: Հակընդդեմ հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.04.2013 թվականի որոշմամբ Սամվել Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Հովհաննիսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 53-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ Սամվել Հովհաննիսյանը ծնողների մահվանից առաջ նրանց համաձայնությամբ տիրապետել և կառավարել է ժառանգական գույքի մի մասը՝ 0,94 հա վարելահողը: Մոր մահվանից հետո նա բացահայտ կերպով շարունակել է տիրապետել և կառավարել այդ վարելահողը, տնկել է մրգատու ծառեր,



կատարել որոշակի ծախսեր ոռոգման ջրի դիմաց:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ 3-1224/ՎԴ որոշումը, այն կամայականորեն մեկնաբանել է ի վնաս Սամվել Հովհաննիսյանի: Նշված նախադեպային որոշումը հիմք չի կարող հանդիսանալ Սամվել Հովհաննիսյանին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով ժառանգ չճանաչելու համար:

Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի գնահատել նաև այն փաստը, որ ժառանգական գույք հանդիսացող հանգուցյալի անվամբ երեք գրքոյկները գտնվել են Սամվել Հովհաննիսյանի մոտ և պահպանվել նրա կողմից: Այս փաստը Վերաքննիչ դատարանը գնահատել է մյուս ապացույցների համակցությունից դուրս և եզրահանգել է, որ դա չի կարող դիտվել ժառանգական գույքն ընդունելու կամահայտնություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 25.04.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող գույքի 1/7-րդ մասի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 23.06.1951 թվականին ծնված Սամվել Հովհաննիսյանի հայրը Մարգար Հովհաննիսյանն է, իսկ մայրը՝ Վարդանուշ Հովհաննիսյանը (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

2. Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 340700, թիվ 638782 և թիվ 1841731 վկայականների համաձայն՝ Արագածավան գյուղի բնակելի տունը՝ 161,39քմ մակերեսով, տնամերձ 0,21 հա հողամասով, 0,94 հա վարելահողը, 2,42 հա պտղատու այգին համատեղ սեփականության իրավունքով գրանցված են Մարգար, Վարդանուշ, Մանվել, Սիլվա, Լիլիթ, Լիաննա, Արման Հովհաննիսյանների անուններով (**հատոր 1-ին, գ.թ. 6-11**):

3. Համաձայն ԱԱ թիվ 146670 մահվան վկայականի՝ սկզբնական և հակընդդեմ հայցվորների մայր Վարդանուշ Հովհաննիսյանը մահացել է 24.03.2009 թվականին, իսկ ԱԲ թիվ 046180 մահվան վկայականի համաձայն՝ Մարգար Հովհաննիսյանը մահացել է 23.06.2011 թվականին (**հատոր 1-ին, գ.թ.13-14**):

4. Համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքների, հարևանների հայտարարությունների համաձայն՝ Մանվել Հովհաննիսյանը մոր՝ Վարդանուշ Հովհաննիսյանի մահից հետո շարունակել է տիրապետել, կառավարել մորը պատկանող գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 59-63, 70-71**):

5. ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արագածավանի բնակիչ Սամվել Հովհաննիսյանը, ըստ տվյալ հողատարածքի հարևաններ Վարուժան Մալխասյանի, Անդրանիկ Մնացականյանի, Սամվել Պապոյանի, Սուրեն Խուրոյանի գրավոր հայտարարությունների, հողի սեփականաշնորհումից մինչ այսօր մշակում է թիվ 638782 սեփականության իրավունքի վկայականով տրված 0,94 հա վարելահողը (**հատոր 3-րդ, գ.թ. 73**):

6. 28.02.2012 թվականին Արմեն Հովհաննիսյանին տրվել է ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր: Ժառանգական գույքը, որի համար տրվել է վկայագիրը, բաղկացած է Մարգար Հովհաննիսյանի անվամբ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղի Բաղրամյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող 161,39 քմ մակերեսով բնակելի

---

տան, 0,21 հա տնամերձ հողամասի, 24,05 քմ, 17,11 քմ, 24,38 քմ, 12,0 քմ, 30,0 քմ, 28,5 քմ մակերեսներով օժանդակների, 0,94 հա վարելահողի, 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասնաբաժնից (**հատոր 3-րդ, գ.թ. 55**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. ժառանգման իրավունք ունեցող անձի կողմից մինչ ժառանգարուի մահը նրան պարկանող որևէ գույքի փաստացի տիրապետումը և կառավարումը ժառանգության բացումից հետո շարունակելը կարող է համարվել ժառանգությունն ընդունելու կամքի դրսևորում, թե անհրաժեշտ են նաև այլ կանխասանգումներ, սկզբիվ գործողություններ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի: Ժառանգի կողմից ժառանգության մի մասի ընդունումը նշանակում է իրեն հասանելիք ամբողջ ժառանգության ընդունում, անկախ այն բանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում և որտեղ է գտնվում: Ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով, իսկ 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար, իր հաշվին կատարել է գույքը պահպանելու ծախսեր:

Վերոնշյալ հոդվածների համադրումից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգված գույքը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (*տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ալվարդ Մելքոնյանի, Անահիտ, Մարգարիտ, Քևարիկ Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, **ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը** (ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոբյանի, ՀՀ Կենտրոն նոտարական փարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա արված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը համապատասխան բաժիններով փրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կրակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեարան 10-րդ փողոցի 2-րդ շենքի 58-րդ բնակարանի և ավտոմեքանի նկարումսը Կարինե Սերոբյանի սեփականության իրավունքը փոխհատուցմանը դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը): Ուստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով**, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև **բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը**, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (տես՝ Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նոտարական փարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի փարածքային սրբորաքաժամանակ՝ Վարդան Վարդանյանի անվամբ արված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիսի 1-ի որոշումը):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (տես՝ Կրիստա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկին որոշումներում արտահայտած իր իրավական դիր-

---

քորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն արդեն իսկ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք նպատակաուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, ըստ էության գիտակցաբար կատարում է ակտիվ գործողություններ, իսկ նման գործողությունների կատարումն օրենսդիրը համարում է ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ գործով հիմնավորված է ժառանգատուի մահվանից հետո ժառանգված գույքի փաստացի տիրապետման և կառավարման հանգամանքը, ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու համար այլևս անհրաժեշտություն չկա ապացուցելու այլ ակտիվ, գիտակցված գործողությունների կատարման վերաբերյալ փաստեր: Ընդ որում, ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ ժառանգը գույքը տիրապետել և կառավարել է նաև մինչև ժառանգատուի մահը: Ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ժառանգության զանգվածի մեջ մտնող որևէ գույք ժառանգման իրավունք ունեցող անձի փաստացի տիրապետման և կառավարման ներքո կարող է գտնվել նաև մինչև ժառանգության բացումը: Նման պարագայում ժառանգության ընդունման համար էական է այն փաստը, որ ժառանգը ժառանգատուին պատկանող գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները շարունակի կատարել նաև ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում:

Այլ է իրավիճակն ըստ կտակի ժառանգման պարագայում, քանի որ այդ դեպքում ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար ժառանգը պետք է հիմնավորի, որ իր գործողությունները միտված են եղել հատկապես ըստ կտակի ժառանգությունն ընդունելուն (տես *Գևորգ Բերբերյանն ընդդեմ Մարինե Բերբերյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի՝ հողամասը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու և ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին և հակընդդեմ հայցի՝ ժառանգությունն ընդունելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և ըստ կտակի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ ԵՆԶԴ/1018/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*): Ըստ կտակի ժառանգության դեպքում օրենքով սահմանված ժամկետում կտակված գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումն ինքնին չեն վկայում այն մասին, որ ժառանգն ընդունել է **ըստ կտակի** ժառանգությունը, այդ դեպքում գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները կարող են վկայել **ըստ օրենքի** ժառանգությունն ընդունելու մասին (եթե ըստ կտակի ժառանգը պատկանում է ըստ օրենքի ժառանգների թվին), իսկ **ըստ կտակի** ժառանգությունն ընդունելու համար անհրաժեշտ են գիտակցված, ակտիվ գործողություններ: Ըստ էության, դրանք հանգում են ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումն օրենքով սահմանված վեցամսյա ժամկետում ժառանգության բացման վայրի նտարին հանձնելուն:

### **Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը**

Վերաքննիչ դատարանը Սամվել Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ. «Դատարանն իրավացիորեն հաստատված չի համարել փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու պահանջի ապացուցման առարկա կազմող ժառանգությունն ընդունելու ժառանգի կամքի և ցանկության փաստը:

Մասնավորապես, հաշվի առնելով, որ սեփականաշնորհման իսկ օրվանից վարելահողի նկատմամբ սահմանված է եղել օգտագործման կարգ՝ այն հանձնվել է սկզբնական հայցվորին, հետևաբար նշված վարելահողի մշակումը չի կարող գնահատվել որպես ժառանգության ընդունման ուղղությամբ ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն՝ վարելահողի տիրապետումը մինչև ժառանգատուի մահը՝ որպես տարիներ առաջ իր տիրապետմանը հանձնված գույքի, հնարավորություն չի ընձեռում հաստատելու այն փաստը, որ դրա տիրապետումը նաև ժառանգատուի մահվանից հետո նպատակաուղղված է եղել ժառանգության ընդունմանը: Նշված եզրահանգումները հավասարապես վերաբերում են նաև ժառանգատուի կողմից իր կենդանության օրոք ավանդների գրքույկներն իրեն հանձնված լինելու փաստին, քանի որ այդ գրքույկների միայն սկզբնական հայցվորի մոտ գտնվելու փաստը չի կարող որակվել ժառանգական գույքը փաստացի տիրապետելուն ուղղված ակտիվ գործողություն և ժառանգական գույքն ընդունելու կամահայտնության առկայություն»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը 10.01.2012 թվականին հարևանների կողմից տրված հայտարարությունները, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքը՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցներն ակնհայտորեն վկայում են այն մասին, որ Սամվել Հովհաննիսյանն ինչպես մոր մահվանից առաջ, այնպես էլ դրանից հետո մինչ այսօր մշակել և մշակում է թիվ 638782 սեփականության իրավունքի վկայականով տրված 0,94հա վարելահողը, այսինքն՝ առկա է եղել ժառանգի կամքը և ցանկությունն ընդունելու ժառանգությունը: Սամվել Հովհաննիսյանը՝ որպես ժառանգ, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից և հավակնություններից պաշտպանելու համար, կատարել է դրա պահպանմանն ուղղված ծախսեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Սամվել Հովհաննիսյանը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունել է մոր ժառանգության մի մասը, իսկ դա նշանակում է, որ նա ընդունել է մոր մահվանից հետո իրեն հասանելիք ամբողջ ժառանգությունը:

Նկատի ունենալով, որ գործի փաստերի համաձայն գույքի փաստացի տիրապետման և կառավարման եղանակով մոր ժառանգությունն ընդունել է նաև պատասխանող Սամվել Հովհաննիսյանը (վերջինիս կողմից ներկայացված հակընդդեմ հայցը բավարարվել է և այդ մասով Վերաքննիչ դատարանի որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ), ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժառանգական զանգվածի՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 340700) բնակելի տան և 0,21հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 638782) 0,94հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ պետք է ճանաչել նաև Սամվել Հովհաննիսյանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

---

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի սոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.04.2013 թվականի որոշման՝ Սամվել Հովհաննիսյանի հայցը մերժելու մասը և այդ մասով այն փոփոխել. հայցը բավարարել՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան գյուղում Վարդանուշ Հովհաննիսյանին համասեփականությամբ պատկանող 30.08.2001 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 340700) բնակելի տան և 0,21 հա տնամերձ հողամասի, 12.03.2003 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 638782) 0,94 հա վարելահողի և 06.07.2008 թվականին գրանցված (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ թիվ 1841731) 2,42 հա պտղատու այգու 1/7-րդ մասերի նկատմամբ Սամվել Հովհաննիսյանին ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ:

2. Սանվել Հովհաննիսյանից հօգուտ Սամվել Հովհաննիսյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար վճարված պետական տուրքի գումար, 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Սանվել Հովհաննիսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.03.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազբոյն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազբոյններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ-4/0191/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԳԴ-4/0191/02/11  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Վաչե Մուշեղյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Տաթևիկ Մուշեղյանի ընդդեմ Վաչե Մուշեղյանի, Նինա Յագոդկինայի, Արսեն  
Մուշեղյանի, Արտյոմ Մուշեղյանի՝ բնակարանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու  
և վտարելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Վաչե Մուշեղյանի ընդդեմ  
Տաթևիկ Մուշեղյանի և Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանի,  
երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական  
կոմիտեի Սևանի տարածքային ստորաբաժանման՝ ժառանգությունն ընդունած ժառանգ  
ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու, սե-  
փականության իրավունքի պետական գրանցումը և դրա հիման վրա տրված սեփականու-  
թյան իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տաթևիկ Մուշեղյանը պահանջել է վտարել Վաչե Մուշեղյանին,  
Նինա Յագոդկինային, Արտյոմ և Արսեն Մուշեղյաններին սեփականության իրա-  
վունքով իրեն պատկանող Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող  
առանձնատնից և հողամասից՝ դադարեցնելով վերջիններիս ապօրինի տիրապետումը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վաչե Մուշեղյանը պահանջել է հոր՝  
Արտավազը Մուշեղյանի մահից հետո մնացած և ժառանգատուին սեփականության

---

իրավունքով պատկանող Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող առանձնատան և հողամասի նկատմամբ իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ, անվավեր ճանաչել Տաթևիկ Մուշեղյանին 03.02.2009 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և նշված առանձնատան ու հողամասի նկատմամբ կատարված պետական գրանցումը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 2384524 վկայականը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս.Մանուկյան) (այսուհետ՝ Դատարան) 14.08.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.01.2013 թվականի որոշմամբ Վաչե Մուշեղյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.08.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վաչե Մուշեղյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Տաթևիկ Մուշեղյանը և նրա ներկայացուցիչը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետը, որը պետք է կիրառել, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ, 131-րդ և 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, որոնցով հիմնավորվում է, որ 17.11.1980 թվականին մահացած ժառանգատու Արտավազդ Մուշեղյանի ժառանգական գույքի՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունել է Վաչե Մուշեղյանը:

Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Ռոբերտ Մուշեղյանը ժառանգատու Արտավազդ Մուշեղյանի մահից հետո օրենքով սահմանված ժամկետում և կարգով, ինչպես նաև փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքի՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ժառանգություն չի ընդունել, հետևաբար տվյալ պարագայում նոտարն իրավասու չէր վերջինիս դատերը՝ Տաթևիկ Մուշեղյանին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածով սահմանված կարգով տրանսմիսիայի իրավունքով տրամադրելու ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Տաթևիկ Մուշեղյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը տրվել է օրենքի պահանջների խախտմամբ, հետևաբար սեփականության իրավունքը ծագել է օրենսդրության պահանջներին անհամապատասխան, որպիսի պարագայում բացառվում է վիճակացիոն հայցի բավարարումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 31.01.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ բեկանել և փոփոխել այն՝ հայցը մերժել, իսկ հակընդդեմ հայցը բավարարել:



## **2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանը գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, համապատասխան իրավական նորմերի կիրառմամբ կայացրել է որոշում, որը հիմնավոր է և օրինական, ինչը բխում է արդարադատության շահերից, հետևաբար բերված վճարելի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

## **3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ռոբերտ և Վաչե Արտավազդի Մուշեղյաններն Արտավազդ Մուշեղյանի և Փունջիկ Մուշեղյանի (Պետրոսյանի) գավակներն են, իսկ Տաթևիկ Մուշեղյանը Ռոբերտ Մուշեղյանի դուստրն է (հատոր 1-ին, գ.թ. 52, 80, 84, 85, հատոր 3-րդ, գ.թ. 103):

2. Անհատական բնակելի շենքի և հողատարածության տեխնիկական անձնագրի համաձայն՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 67,0քմ մակերեսով բնակելի տունը, 39,1քմ մակերեսով օժանդակ շինությունները և 1.370,0քմ մակերեսով հողամասը պատկանել է Արտավազդ Մուշեղյանին (հատոր 5-րդ, գ.թ. 12):

3. 12.03.1981 թվականի թիվ 403908 մահվան վկայականի համաձայն՝ Արտավազդ Մուշեղյանը մահացել է **17.11.1980** թվականին (հատոր 1-ին, գ.թ. 81):

4. 11.09.1992 թվականի թիվ 415859 մահվան վկայականի համաձայն՝ Փունջիկ Մուշեղյանը մահացել է **23.07.1992** թվականին (հատոր 1-ին, գ.թ. 82):

5. 17.06.2008 թվականի թիվ 143277 մահվան վկայականի համաձայն՝ Ռոբերտ Մուշեղյանը մահացել է **13.06.2008** թվականին (հատոր 1-ին, գ.թ. 83):

6. Տաթևիկ Մուշեղյանը Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանին հասցեագրված **25.07.2008** թվականի հայտարարությամբ հայտնել է. «Հազար ինը հարյուր ութսուն թվականի նոյեմբերի տասնյոթին մահացած իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանին և երկու հազար ութ թվականի հունիսի տասներեքին մահացած իմ հայր քաղ. Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանին պատկանող գույքը ես ընդունում եմ: Իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանի և իմ հայր քաղ. Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանի վերջին մշտական բնակավայրը եղել է Սևանի Կոմիսարների փողոցի տուն 21 հասցեում: Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի ստանալու համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերն իմ կողմից կողարկվեն լրացուցիչ կարգով» (հատոր 1-ին, գ.թ. 86):

7. Տաթևիկ Մուշեղյանը Սևանի նոտարական տարածքի նոտար Արմեն Հարությունյանին հասցեագրված **03.02.2009** թվականի դիմումով հայտնել է. «Հազար ինը հարյուր ութսուն թվականի նոյեմբերի տասնյոթին մահացել է իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանը, հազար ինը հարյուր ինսուներկու թվականի հուլիսի քսաներեքին մահացել է իմ տատ քաղ-ուհի Փունջիկ Ենոքի Մուշեղյանը, երկու հազար ութ թվականի հունիսի տասներեքին մահացել է իմ հայր քաղ. Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանը, ովքեր մշտական գրանցմամբ բնակվել են Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 (քսանմեկ) հասցեում: Ըստ իմ պապ քաղ. Արտավազդ Երեմի Մուշեղյանի մահվան օրը մնացել է հետևյալ գույքը՝ առանձնատունն ամբողջությամբ, որը գտնվում է Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 (քսանմեկ) հասցեում 1.370 (մեկ հազար երեք հարյուր յոթանասուն) քմ մակերեսով հողամասի վրա: Մույն դիմումով ընդունում եմ ժառանգությունը և խնդրում եմ ինձ տալ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր վերը նշված ամբողջ առանձնատան նկատմամբ: Հետագայում այլ ժառանգների կողմից ժառանգության պահանջի դեպքում պարտավորվում եմ նյութական պատասխանատվությունը վերցնել

---

ինձ վրա՝ նոտարին ազատելով վերը նշված քաղ. գործով դատարանում պատասխանողի պարտականությունից» (հատոր 1-ին, գ.թ. 79):

8. 03.02.2009 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 60 վկայագրի համաձայն՝ ժառանգական գույքը՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 186,1քմ մակերեսով առանձնատունը և 1.370,0քմ մակերեսով հողամասը, որը պատկանել է 17.11.1980 թվականին մահացած **Ժառանգատու Արտավազդ Երենի Մուշեղյանին**, ում ժառանգն է որդին՝ 13.06.2008 թվականին մահացած Ռոբերտ Արտավազդի Մուշեղյանը, ով ընդունել է ժառանգությունը, բայց չի ձևակերպել իր ժառանգական իրավունքները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի հիմքով անցել է Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանին (հատոր 1-ին, գ.թ. 13):

9. 18.02.2009 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2384524 վկայականի համաձայն՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող 109,97քմ մակերեսով առանձնատան, 113,0քմ մակերեսով «հացատուն խարխուլ» շինության, 19,0քմ մակերեսով սանհանգույցի և 0,1352հա հողամասի սեփականատերը Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանն է (հատոր 1-ին, գ.թ.54-56):

10. Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանի ներկայացուցիչն առարկություններով հայտնել է, որ Վաչե Մուշեղյանը 1984 թվականից փաստացի բնակություն է հաստատել հանրակացարանում և հոր տան գրանցումից դուրս է եկել 1987 թվականին (հատոր 1-ին, գ.թ.114):

11. Սվետլանա Մուշեղյանը 18.11.2011 թվականի հայտարարությամբ հայտնել է, որ Վաչե Մուշեղյանը հոր՝ Արտավազդ Մուշեղյանի մահից հետո մինչև 1987-1988 թվականներն անընդմեջ բնակվել է Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող տանը, պահպանել և կառավարել է նշված տունը, իսկ Ռոբերտ Մուշեղյանը նշված տանը ժամանակավորապես բնակվել է 2000-2001 թվականներից (հատոր 2-րդ, գ.թ.72):

12. Նաիրա Մուշեղյանը և Մուրեն Ստեփանյանը 18.11.2011 թվականի հայտարարություններով հայտնել են, որ Արտավազդ Մուշեղյանի մահից հետո Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող առանձնատանը և տնամերձ հողամասում փաստացի բնակվել է Վաչե Մուշեղյանն իր ընտանիքի հետ, միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու, այն երրորդ անձանց ունեցություններից կամ հավակնություններից պաշտպանելու ուղղությամբ, կատարել է գույքը պահպանելու հետ կապված ծախսերը (հատոր 2-րդ, գ.թ.73, 74):

13. Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 09.12.2011 թվականի թիվ Քպ-2/673 տեղեկանքի համաձայն՝ ըստ բնակչության քաղաքային ռեգիստրի տվյալների Ռոբերտ Մուշեղյանը Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում հաշվառվել է 12.01.1995 թվականից մինչև իր մահը (հատոր 3-րդ, գ.թ.40):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գնումում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի բնության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է ժառանգությունն ընդունելու իրավունքը փոխանցելու (ժառանգության փրանսմիսիա) ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի համաձայն՝ եթե ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգության հրավիրված ժառանգը մահանում է ժառանգության

---

բացումից հետո, չհասցնելով այն ընդունել, ապա նրան հասանելիք ժառանգությունն ընդունելու իրավունքն անցնում է նրա ժառանգներին: Մահացած ժառանգի ժառանգությունն ընդունելու իրավունքը նրա ժառանգները կարող են իրականացնել ընդհանուր հիմունքներով՝ նույն օրենսգրքի 1225-1228-րդ հոդվածներին համապատասխան: Որպես պարտադիր բաժին ժառանգության մասն ընդունելու ժառանգի իրավունքը չի անցնում նրա ժառանգներին:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական կարգավորումը և հաշվի առնելով ժառանգական իրավահարաբերությունների առանձնահատկությունը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նշված դրույթով օրենսդիրը նախատեսել է այնպիսի դեպքեր, երբ ժառանգը (ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի), չհասցնելով ընդունել ժառանգությունը, մահանում է մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Նման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ժառանգության տրանսմիսիայի ինստիտուտը, ըստ որի՝ նշված իրավիճակում մահացած ժառանգի ժառանգը ձեռք է բերում ժառանգի այն իրավունքը, որը վերջինս չի հասցրել իրականացնել: Այսինքն՝ օրենսդիրը հնարավորություն է ընձեռել ժառանգատուի ժառանգի չիրականացված իրավունքի փոխանցումը վերջինիս ժառանգներին: Ընդ որում, ժառանգը, որը հրավիրված էր ժառանգության և չհասցնելով ընդունել ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից, մահանում է ժառանգությունը բացելուց հետո, քաղաքացիական իրավունքի տեսությունում անվանվում է **տրանսմիտենտ**, իսկ այն անձինք, որոնց փոխանցվում է ժառանգությունն ընդունելու իրավունքը՝ **տրանսմիսաարներ**:

Ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով և ծագում է հետևյալ պայմաններում.

- **Ժառանգը**, որը հրավիրված է ժառանգության և ունի ժառանգելու սուբյեկտիվ իրավունք (իրավասու է ընդունելու ժառանգությունը կամ հրաժարվել ժառանգությունից), ժառանգությունը բացելուց հետո, չհասցնելով այն ընդունել կամ հրաժարվել ժառանգությունից, **մահացել է**.
- **Մահացած ժառանգը (տրանսմիտենտ)** կարող է լինել ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգ.
- **Ժառանգը** մահանում է ժառանգության բացումից հետո մինչև ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը լրանալը.
- **Ժառանգելու իրավունքը**, որը պատկանում էր մահացած ժառանգին, փոխանցվում է նրա ժառանգներին: Ընդ որում, առաջին ժառանգը կապված է երկրորդ ժառանգի հետ այնպես, ինչպես ժառանգատուն և ժառանգները.
- **Մահացածի ժառանգը (տրանսմիսաարը)** իրավասու է ընդունելու ժառանգությունը լիազորությունների այն ծավալով և բովանդակությամբ, որին հրավիրված էր մահացած ժառանգը, կամ հրաժարվելու այդ ժառանգությունից:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով ժառանգության տրանսմիսիայի իրավահարաբերության վերը նշված առանձնահատկությունները և ծագման հիմքերը, անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի կանոնակարգմանը ժառանգական իրավունքի նորմերի լույսի ներքո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր

---

սահմանված չէ վճռում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կարող է ընդունվել ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման համար օրենսդիրը սահմանել է **վեցամսյա ժամկետ, որը** հաշվվում է ժառանգության բացման, այն է՝ ժառանգատուի մահվան օրվանից (*տես Մուսաննա Նեմչինովայի հայցն ընդդեմ Կենտրոն նորարարական գրասենյակի նորարար Էմինա Շարոյանի, Սուրեն Առաքելյանի՝ 30.05.2008 թվականին Կրկնված ըստ կրակի ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահաջի մասին թիվ ԵԿԴ/2472/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1230-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգն իրավունք ունի հրաժարվել ժառանգությունից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում՝ ներառյալ այն դեպքում, երբ նա արդեն ընդունել է ժառանգությունը:

Այսինքն՝ նշված դրույթով օրենսդիրը ևս սահմանել է **վեցամսյա ժամկետ**, որի ընթացքում ժառանգության բացման օրվանից ժառանգը կարող է հրաժարվել ժառանգությունից:

Այսպես՝ վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չի կարող խոսք լինել ժառանգության տրանսմիսիայի մասին այն դեպքում, երբ ժառանգը ժառանգության բացման օրվանից **վեց ամսվա** ընթացքում չի արտահայտել իր ցանկությունը ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, և մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո: Պետք է ի նկատի ունենալ, որ կենդանության ընթացքում ժառանգի կողմից ժառանգության ընդունման համար սահմանված ժամկետի բացթողումը պայմանականորեն նշանակում է իրավունքի կորուստ, քանի որ ժառանգն այնուամենայնիվ կարող էր ընդունել ժառանգությունը սահմանված ժամկետում, մինչդեռ այն չի իրականացրել մինչև ժամկետի ավարտը: Ընդ որում, եթե ժառանգը մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո, ապա ժառանգի այդպիսի իրավունքի կորուստն ունի բացառիկ նշանակություն, քանի որ ոչ ոք բացի անմիջապես ժառանգից չի կարող հարց բարձրացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին:

**Այսինքն՝ ժառանգության տրանսմիսիայի կանոնները գործում են այն դեպքում, երբ տրանսմիտենտը մահացել է մինչև ժառանգությունն ընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու համար սահմանված ժամկետի ավարտը՝ չհասցնելով այն ընդունել կամ դրանից հրաժարվել:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1193-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ կտակի ազատությունը սահմանափակվում է միայն ժառանգության պարտադիր բաժնի կանոններով, իսկ նույն օրենսգրքի 1194-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից,

ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Նշված նորմով օրենսդիրը կտակի ազատությունը սահմանափակել է պարտադիր բաժնի իրավունքով, որը կտակի առկայության պայմաններում համարվում է ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից՝ վերջինիս շնորհելով հատուկ սուբյեկտի կարգավիճակ:

Մինչդեռ, կտակի առկայության պայմաններում ժառանգության տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցվելու դեպքում առկա է սահմանափակում՝ **մահացած ժառանգի** (տրանսմիտենտի) ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի փոխանցումը վերջիններիս ժառանգներին (տրանսմիսարներին) արգելվում է: Այսպիսի սահմանափակումը պայմանավորված է կտակի ազատության, ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը միայն այդ անձին անմիջականորեն պատկանելու սկզբունքով, ինչպես նաև պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգի՝ հատուկ սուբյեկտ լինելու հանգամանքով: Հետևաբար, ժառանգության պարտադիր բաժինը չի կարող փոխանցվել այլ անձի, ով անմիջականորեն չունի պարտադիր բաժնի պահանջի իրավունք:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի համաձայն՝ կտակարարը կարող է կտակում նշել այլ ժառանգի (ենթաժառանգի) այն դեպքի համար, եթե նրա նշանակած ժառանգը մահանա մինչև ժառանգությունը բացվելը, հրաժարվի ժառանգությունից, որպես անարժան ժառանգ մեկուսացվի ժառանգությունից կամ չկատարի կտակարարի օրինաչափ պայմանները:

Նշված նորմով ամրագրված են այն դեպքերը, երբ կտակարարն իրավունք ունի կտակում ոչ միայն նշել հիմնական ժառանգին կամ ժառանգներին, այլև ենթանշանակել այսպես կոչված պահեստային ժառանգ այն դեպքի համար, եթե ժառանգության բացման պահին մահացած լինի կտակում սկզբնապես նշված ժառանգը՝ չհասցնելով այն ժառանգել:

Մատնանշված իրավահարաբերության դեպքում չի կարող գործել տրանսմիսիայի ուժով ժառանգության ընդունման իրավունքը մահացածի ժառանգներին փոխանցելու ընթացակարգը, ինչն ուղակիորեն բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1198-րդ հոդվածի իրավակարգավորումից:

Տրանսմիսիայի հիմքով ժառանգությունն ընդունելու իրավունքը կարող է իրականացվել ընդհանուր հիմունքներով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-1228-րդ հոդվածներին համապատասխան:

Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1227-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն անձինք, որոնց համար ժառանգության իրավունքն առաջանում է միայն այլ ժառանգի կողմից ժառանգությունը չընդունելու դեպքում, կարող են ժառանգությունն ընդունել նույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում ժառանգության տրանսմիսիայի կարգով ժառանգը կարող է ժառանգությունն ընդունել ժառանգության ընդունման ժամկետն ավարտվելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Ընդ որում, մահացած ժառանգի ժառանգները ժառանգությունն ընդունելու համար ընդհանուր հիմունքներով սահմանված կարգով պետք է իրականացնեն ակտիվ գործողություններ, ինչպես նաև՝ ժառանգությունն իրենց կողմից ընդունելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում իրավասու են դիմելու բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու կապակցությամբ:

Հատկանշական է, որ **մահացած ժառանգի** (տրանսմիտենտի) այլ ժառանգների

---

(տրանսմիսսարների) կողմից ժառանգությունն ընդունելու պարագայում վերջիններիս համաձայնության առկայության դեպքում ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգը (տրանսմիսսար) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ևս կարող է ընդունել ժառանգությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտնում զուգահեռներ անցկացնել տրանսմիսսարի իրավունքով ժառանգությունն ընդունելու և ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտների միջև:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածի համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի համաձայն՝ երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1219-րդ հոդվածի համաձայն՝ չորրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես: Ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները:

Նշված դրույթներից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է նաև այնպիսի դեպքեր, երբ ըստ օրենքի ժառանգը մահանում է մինչև ժառանգատուի ժառանգության բացումը: Նման պարագայում գործում է քաղաքացիական օրենսդրությամբ ամրագրված ներկայացման իրավունքով ժառանգությունն ընդունելու ինստիտուտը, որը ենթադրում է, որ ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է վերջինիս երեխաներին, որոնց միջև այն բաշխվում է հավասարապես: Ընդ որում, ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել:

Փաստորեն, ըստ օրենքի ժառանգների շրջանակն ընդարձակվել է նաև ներկայացման իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակով, այսինքն՝ ներկայացման իրավունքով ժառանգման հրավիրվող անձինք դասվում են ըստ օրենքի ժառանգների թվին: Ի դեպ, օրենսդիրը հստակ սահմանել է, թե ովքեր կարող են ներկայացման իրավունքով համարվել ժառանգներ՝ ամրագրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում:

Համեմատելով ժառանգության իրավունքի վերոնշյալ երկու ինստիտուտները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

առաջին. տրանսմիսսարի իրավունքով ժառանգումը տեղի է ունենում ինչպես ըստ օրենքի, այնպես էլ՝ ըստ կտակի, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգումը տեղի է ունենում միայն ըստ օրենքի:

երկրորդ. տրանսմիսսարի իրավունքով ժառանգելու ժառանգների շրջանակը սահմանափակված չէ, մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգել կարող են միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածներում ամրագրված ժառանգների զավակները:

երրորդ. տրանսմիսիայի իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է ժառանգատուից հետո՝ չհասցնելով ընդունել ժառանգությունը: Մինչդեռ ներկայացման իրավունքով ժառանգելու դեպքում ժառանգը մահանում է մինչև ժառանգությունը բացվելը, այսինքն՝ ժառանգատուից առաջ:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրահանգման.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռոբերտ Մուշեղյանն Արտավազ Մուշեղյանի որդին է: Արտավազ Մուշեղյանը մահացել է **17.11.1980** թվականին, իսկ Ռոբերտ Մուշեղյանը՝ **13.06.2008** թվականին: Ռոբերտ Մուշեղյանի դուստր Տաթևիկ Մուշեղյանը **25.07.2008** թվականին և **03.02.2009** թվականին դիմել է նոտարական գրասենյակ՝ տրանսմիսիայի հիմքով պայի՝ Արտավազ Մուշեղյանի ժառանգությունն ընդունելու համար: 03.02.2009 թվականին տրվել է ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, որով հաստատվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի հիմքով 17.11.1980 թվականին մահացած Արտավազ Մուշեղյանի ժառանգ է հանդիսանում թողը՝ Տաթևիկ Մուշեղյանը:

Հաշվի առնելով սույն գործի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ նախ սույն գործով չի հիմնավորվել այն, որ Ռոբերտ Մուշեղյանն արտահայտել է իր ցանկությունը **17.11.1980** թվականին մահացած ժառանգատու Արտավազ Մուշեղյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, և բացի այդ, Ռոբերտ Մուշեղյանը մահացել է **13.06.2008** թվականին՝ ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետից հետո: Այսինքն՝ տվյալ պարագայում բացակայում է ժառանգության տրանսմիսիայի իրավունքով ժառանգությունն ընդունելու ծագման հիմքը՝ Ռոբերտ Մուշեղյանը մահացել է ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ չարտահայտելով իր ցանկությունը ժառանգությունն ընդունելու կապակցությամբ, հետևաբար Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանը ժառանգատու Արտավազ Մուշեղյանի ժառանգական գույքի նկատմամբ ժառանգության տրանսմիսիայի ուժով չէր կարող ընդունել ժառանգությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ժառանգության տրանսմիսիայի ծագման պայմանների բացակայության պարագայում Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանին **02.03.2009** թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 60 վկայագիրը տրամադրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1229-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Միաժամանակ սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 1-ին, 1226-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերը, 1227-րդ հոդվածի 1-ին կետը, Վաչե Մուշեղյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ սույն քաղաքացիական գործով Դատարանը, վճռի հիմքում դնելով գործով հաստատված փաստերը, պատճառաբանել է, որ Վաչե Արտավազի Մուշեղյանը գույքը երրորդ անձանց ոսնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու, դրա նկատմամբ իր տիրապետությունը հաստատելու վերը նշված ակտիվ գործողությունները կատարել է միայն 2010 թվականի մայիսի 06-ից հետո, երբ բնակություն է հաստատել արդեն իսկ Տաթևիկ Ռոբերտի Մուշեղյանի սեփականությունը հանդիսացող առանձնատանը: Վերաքննիչ դատարանը վիճահարույց հասցեի տունը Վաչե Մուշեղյանի կողմից որպես ժառանգական գույք փաստացի տիրապետելու փաստը նույնպես համարում է չհաստատված՝ հիմնվելով գործում առկա ապացույցների և առաջին ատյանի կողմից հաստատված փաստերի վրա:



---

Ման պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Վաչե Մուշեղյանը ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում չի տիրապետել հորը՝ Արտավազդ Մուշեղյանին պատկանող՝ Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 տունը, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի ուժով այն չի ընդունել:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան ապացուցված չէ, ապա ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել կամ կառավարել ժառանգված գույքը՝ ներառյալ, երբ ժառանգը միջոցներ է ձեռնարկել գույքը պահպանելու և այն երրորդ անձանց ոտնձգություններից կամ հավակնություններից պաշտպանելու համար:

Այս առումով Վճռաբեկ դատարանը վերահաստատում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելը և ժառանգի կողմից ժառանգությունը փաստացի տիրապետելը կամ կառավարելը: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա սկսում է փաստացի տիրապետել այդ գույքը, ինչը հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման (*տես՝ Արմինե Հակոբյանը և Սամվել Հակոբյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նոտարական փարածքի նոտար Արվարդ Մեթրոյանի, Անահիտ, Մարգարիտ, Քարինի Հակոբյանների՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ժառանգական գույքն առանձնացնելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ 3-1621(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 09-ի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ձևերից մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, **ապա նմանատիպ գործեր քննելիս միշտ կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը** (*ի թիվս այլ ակտերի տես՝ Վլադիմիր Բալասանյանն ընդդեմ Կարինե Սերոպյանի, ՀՀ Կենտրոն նոտարական փարածքի նոտարի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պեղական կոմիտեի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը և դրա հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու և սեփականության իրավունքի վկայականը հանապապասխան բաժիններով տրամադրելու, Սերյոժա Բալասանյանի 01.02.1994 թվականի կրակը մասնակիորեն անվավեր ճանաչելու, Թամարա Բալասանյանի մահից հետո փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած միակ ժառանգ ճանաչելու և Այգեայան 10-րդ փողոցի 2-րդ շենքի թիվ 58-րդ բնակարանի և ավտոտրանսպորտի նկարումներ Կարինե Սերոպյանի սեփականության իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջների մասին թիվ 3-183(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի մարտի 27-ի որոշումը*): Ոստի դատարանում գործի քննության ժամանակ պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **ժառանգական գույքի փաստացի տիրապետելու փաստը կարող է ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցների տեսակներով, ընդ որում, գույքի տիրապետման կամ կառավարման ապացույց կարող է հանդիսանալ նաև բնակարանային շահագործման մարմինների, համատիրությունների, բնակարանային-շինարարական կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման**



**մարմինների և օրենսդրությամբ համապատասխան փաստաթուղթ տալու իրավունք ունեցող այլ մարմինների կողմից տրված տեղեկանքը**, կամ այլ ապացույցներ, որոնք ուղղակիորեն հաստատում են այն, որ ժառանգը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը (*տես՝ Գառնիկ Նազարյանն ընդդեմ Գագիկ Նազարյանի, Արտաշատի նուպարական փարածքի նուպարի՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ճանաչելու և Գագիկ Նազարյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1125(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը, ինչպես նաև Միշա Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի, Արմավիրի նուպարական փարածքի նուպար Նարինե Մկրտչյանի, ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արմավիրի փարածքային սպորաբաժանման՝ Վարդան Վարդանյանի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության և սեփականության իրավունքի վկայագրերն անվավեր ճանաչելու, փաստացի տիրապետման եղանակով Միշա Վարդանյանին ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին թիվ 3-938(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հունիս 01-ի որոշումը*):

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել (ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին վեցամսյա ժամկետում հանձնելը), ապա փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից ամենատարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը (*տես՝ Կինա Սարգսյանն ընդդեմ Հարություն Սարգսյանի, Վարդուհի Սարգսյանի և Անժելա Սարգսյանի՝ փաստացի տիրապետման եղանակով բնակարանի ժառանգությունն ընդունած համարելու պահանջի մասին թիվ 3-1224(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից արտահայտված դիրքորոշմանը փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները գործին մասնակցող անձանց բացատրությունները, վկաների ցուցմունքները, հայտարարությունները, Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի 09.12.2011 թվականի թիվ ՔԿ-2/673 տեղեկանքը՝ որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չեն գնահատել համակցության մեջ: Մինչդեռ, նշված ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Վաչե Մուշեղյանը ժառանգության բացման ժամանակ ժառանգական գույք հանդիսացող Սևանի Կոմիսարների փողոցի թիվ 21 հասցեում գտնվող տանը բնակվել է և շարունակել է բնակվել այնտեղ մինչև 1984 թվականը և միայն 1984 թվականից փաստացի բնակություն է հաստատել հանրակացարանում և վիճելի տան գրանցումից դուրս է եկել 1987 թվականին, որպիսի փաստն ընդունել է նաև Տաթևիկ Մուշեղյանի ներկայացուցիչը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռարեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.01.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/1050/02/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/1050/02/12**

Նախագահող դատավոր՝ **Տ. Նազարյան**

Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**

**Ի. Վարդանյան**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**

**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**

**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**

**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**

**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**

**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արթուր Վարտանովի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Վարտանովի ընդդեմ Մարինա Եգիևայի, երրորդ անձ ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արթուր Վարտանովը պահանջել է 1/2-րդ մասով անվավեր ճանաչել ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Էմմա Շաբոյանի կողմից 26.08.2011 թվականին Մարինա Եգիևայի անվամբ տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, իրեն ճանաչել Բենիամին Շահինյանին պատկանող ժառանգական գույքը ներկայացման իրավունքով ընդունած ժառանգ և ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Արարատյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 61,65քմ մակերեսով օրինական շինությունների 1/2-րդ մասի և 200քմ մակերեսով ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի 1/6-րդ մասի նկատմամբ:

---

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Կուրանյան) (այսուհետ՝ Դատարան) 29.03.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.06.2013 թվականի որոշմամբ Արթուր Վարտանովի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 29.03.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Վարտանովը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարինա Եգիևան:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը, սխալ մեկնաբանելով, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 2-րդ կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ և 1221-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, որի արդյունքում անտեսել է, որ իր մորեղբորը պատկանող ժառանգությունն ընդունելու մասին ինքն օրենքով սահմանված ժամկետում և կարգով դիմում է ներկայացրել ժառանգության բացման վայրի նոտարին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ հայցապահանջը վերաբերել է ոչ թե ներկայացման իրավունքով ժառանգմանը, այլ ժառանգման իրավունքին ընդհանրապես:

Վերաքննիչ դատարանը հստակ չի մեկնաբանել, թե միաժամանակ մահացած անձանց ժառանգներն իրավունք ունեն ստանալու միայն իրենց ուղղակի իրավանախորդին պատկանող ժառանգական զանգվածը, թե նաև այն ժառանգական զանգվածը, որն իրավանախորդն իրավունք ունեւ ստանալու իր հետ միաժամանակ մահացած անձից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ եթե օրենքը և օրենսդիրը ժառանգական զանգվածից հասանելիք բաժնեմաս են նախատեսում ժառանգատուից ավելի վաղ մահացած ժառանգի իրավահաջորդների և ժառանգության բացումից հետո մահացած ու ժառանգությունն ընդունել չհասցրած ժառանգի իրավահաջորդների համար, ապա ինչ պատճառաբանությամբ ժառանգությունից պետք է զրկվեն այն անձանց իրավահաջորդները, ովքեր մահացել են ժառանգատուի հետ միաժամանակ և նրանից ժառանգելու իրավունք են ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.06.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ բացակայում է Արթուր Վարտանովի՝ իր մորեղբոր ժառանգությունն ընդունելու իրավական հիմքը՝ օրենսդիրը հստակ սահմանել է, որ այն անձինք, ովքեր մահացել են ժառանգատուի հետ միաժամանակ և նրանից ժառանգելու իրավունք են ունեցել, ապա նրանց իրավահաջորդները ժառանգությունը կարող են ընդունել, եթե նրանց իրավանախորդը ժառանգատուի մահվանից առաջ է մահացել (ժառանգում ներկայացման իրավունքով) կամ ժառանգատուի մահվանից հետո է մահացել (ժառանգության տրանսմիսիա): Մինչդեռ սույն գործով նման փաստերը բացակայում են, հետևաբար հայցվորը զրկվում է ժառանգությունից:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Արարատյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող ընդհանուր սեփականության իրավունքով գույքագրված 200քմ մակերեսով հողամասի վրա առկա շինություններից 61,65քմ մակերեսով օրինական շինությունը սեփականության իրավունքով որպես առանձին միավոր գույքագրված է Բենիամին Շահինյանի անվամբ (1-ին հատոր, գ.թ. 5).

2) Բենիամին Շահինյանը 23.01.2011 թվականին մահացել է: Նույն օրը մահացել է նաև նրա հարազատ քույրը՝ Լարիսա Վարտանովան: Բենիամին Շահինյանը երեխաներ և կին չունի, իսկ ծնողները մահացել են (1-ին հատոր, գ.թ. 9-10).

3) ՀՀ Արարատի մարզի Ձորակ համայնքի Բաֆֆու փողոցի թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է Լարիսա Վարտանովայի անվամբ (1-ին հատոր, գ.թ. 47).

4) 02.02.2011 թվականին Արթուր Վարտանովը հայտարարություն է ներկայացրել ՀՀ «Մասիս» նոտարական տարածքի նոտարին իր մոր՝ Լարիսա Վարտանովայի «մահից հետո մնացած ժառանգական գույքն ըստ օրենքի ընդունելու մասին» (1-ին հատոր, գ.թ. 12).

5) 05.02.2011 թվականին Արթուր Վարտանովը հայտարարություն է ներկայացրել ՀՀ «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտարին իր մոր՝ Լարիսա Վարտանովայի «մահից հետո մնացած և ըստ օրենքի ներկայացման իրավունքով իրեն հասանելի ժառանգությունը, ժառանգական գույքն ամբողջությամբ» ընդունելու մասին (1-ին հատոր, գ.թ. 11).

6) ՀՀ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Է. Շաբոյանը Բենիամին Շահինյանի քրոջը՝ Մարինա Եգիևային 26.08.2011 թվականին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տվել Երևանի Արարատյան փողոցի թիվ 29 հասցեում գտնվող 61,65քմ մակերեսով շինության և 200քմ մակերեսով ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ (1-ին հատոր, գ.թ. 13):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված է հետևյալ իրավական հարցը.*

*նվբեր են հրավիրվում ժառանգման մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

---

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է**, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում՝ այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո, նրանք մահացած են ճանաչվում միաժամանակ: Ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրից հետո և **ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները**:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ըստ կտակի և ըստ օրենքի **ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի**, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ մեկը մյուսից հետո ժառանգելու իրավունք ունեցող անձանց նույն օրը մահանալու դեպքում նրանք **մահացած են ճանաչվում միաժամանակ** և ժառանգման են հրավիրվում **նրանցից յուրաքանչյուրի ժառանգները՝ ժառանգության բացման օրը կենդանի**, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բենիամին Շահինյանը և նրա հարազատ քույրը՝ Լարիսա Վարտանովան, մահացել են միաժամանակ՝ նույն օրը: Այսինքն՝ Բենիամին Շահինյանի ժառանգության բացման ժամանակ Լարիսա Վարտանովան կենդանի չի եղել: Ման պայմաններում վերջինս չէր կարող հանդիսանալ Բենիամին Շահինյանի ինչպես ըստ կտակի, այնպես էլ ըստ օրենքի ժառանգը:

Հետևաբար սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չէ որպես հայցապահանջի իրավական հիմք վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1221-րդ հոդվածի 1-ին կետը, քանի որ նշված հոդվածը կարգավորում է **մինչև ժառանգության բացումը մահացած** ըստ օրենքի ժառանգի բաժինը նրա երեխաներին անցնելու (**ներկայացման իրավունքով ժառանգություն**) և նրանց միջև բաշխելու հարցը, որը **մինչև ժառանգության բացումը մահացած** ըստ օրենքի ժառանգի երեխաներին իրավունք է վերապահում ժառանգելու իրենց իրավանախորդին հասանելիք այն բաժինը, որը նրան կհասներ կենդանության օրոք:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված վերլուծությունը՝ Բենիամին Շահինյանի մահվանից հետո ժառանգման ենթակա էին հրավիրման **միայն նրա ըստ կտակի կամ ըստ օրենքի ժառանգները**:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը, մերժելով Արթուր Վարտանովի հայցը՝ ներկայացման իրավունքով իր մորեղբոր ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և սեփականության իրավունքը ժառանգական գույքի նկատմամբ ճանաչելու պահանջների մասին, իսկ Վերաքննիչ դատարանը, մերժելով այդ վճռի դեմ Արթուր Վարտանովի բերած վերաքննիչ բողոքը, թույլ չեն տվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի վկայակոչված վերը նշված խախտումները, քանի որ ճիշտ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ, 1188-րդ, 1217-րդ, 1221-րդ հոդվածները՝ հանգել են հիմնավոր եզրակացության առ այն, որ որպեսզի Արթուր Վարտանովը ներկայացման իրավունքով ժառանգեր մորեղբոր ժառանգությունը, նրա մայրը պետք է մահացած լիներ մինչև եղբոր մահանալը:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական

ակտը օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.06.2013 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Արթուր Վարտանովից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 31.07.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0023/02/12  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԴ/0023/02/12

Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

Դատավորներ՝ Ա. Պետրոսյան

Տ. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անուշ Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Անուշ Գևորգյանի հայցի ընդդեմ Լուսիկ Պետրոսյանի՝ հայրության փաստի հաստատման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Անուշ Գևորգյանը պահանջել է դատական կարգով հաստատել 21.03.1972 թվականին ծնված Դավիթ Յուրիկի Մելիքյանի՝ որպես 01.06.2000 թվականին ծնված Նարեկ Դավիթի Գևորգյանի և 22.12.2004 թվականին ծնված Լուսինե Դավիթի Գևորգյանի նկատմամբ հայրության փաստը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Բ.Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 02.03.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ վճռվել է «Հաստատել այն փաստը, որ 21.03.1972թ.-ին ծնված Դավիթ Յուրիկի Մելիքյանը հանդիսանում է Անուշ Հրանտի Գևորգյանից 01.06.2000թ.-ին ծնված Նարեկ Դավիթի Գևորգյանի և 22.12.2004թ.-ին ծնված Լուսինե Դավիթի Գևորգյանի հայրը»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.05.2012 թվականի որոշմամբ Լուսիկ Պետրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝



քեկանվել է Դատարանի 02.03.2012 թվականի վճիռը և փոփոխվել՝ հայցը մերժվել է:  
Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անուշ Գևորգյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ընտրանական օրենսգրքի 37-րդ հոդվածը, խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 53-րդ հոդվածները, ինչպես նաև առկա է նոր երևան եկած հանգամանք:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործում առկա ապացույցները, անտեսել է այն հանգամանքը, որ չնայած 1998 թվականից Անուշ Գևորգյանը և Դավիթ Յուրիկի Մելիքյանը գտնվել են չգրանցված ամուսնության մեջ, սակայն բնակվել են համատեղ Ռուսաստանի Դաշնության Ադիգեայի Հանրապետության Մայկոպ քաղաքում, որպիսի փաստը հաստատվում է գավակների ծննդյան վկայականներում ծնվելու վայրը և ամուսնու՝ Դավիթ Յուրիկի Մելիքյանի մահվան վկայականում մահվան վայրը նշված լինելու հիման վրա:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնությունում Անուշ Գևորգյանի և Դավիթ Յուրիկի Մելիքյանի ծնված երեք երեխաներից 27.06.1999 թվականին ծնված Գոռ Դավիթի Մելիքյանի հայրությունը Դավիթ Յուրիկի Մելիքյանը ճանաչել է, և ծննդյան վկայականում ծնողներ բաժնում որպես հայր նշված է վերջինիս տվյալները, իսկ 01.06.2000 թվականին ծնված Նարեկ Դավիթի Գևորգյանի և 22.12.2004 թվականին ծնված Լուսինե Դավիթի Գևորգյանի ծննդյան վկայականների ծնողներ բաժնում բացակայում է հոր մասին գրառումը, սակայն որպես հայրանուն նշվել է «Դավիթի»:

Վերաքննիչ դատարանն անտեսել է գործում առկա լուսանկարները, որոնց մեջ Անուշ Գևորգյանի ընտանիքն է՝ ամուսինը՝ Դավիթ Յուրիկի Մելիքյանը, իրենց գավակները, Գոռ Դավիթի Մելիքյանը, Նարեկ և Լուսինե Դավիթի Գևորգյանները, սկետուրը՝ պատասխանող Լուսիկ Պետրոսյանը տարբեր միջոցառումներին տարբեր ժամանակներին, ինչը վկայում է, որ Դավիթ Յուրիկի Մելիքյանը՝ որպես իր գավակների հայր, կրել է պատասխանատվություն երեխաների դաստիարակության և զարգացման համար, հոգ է տարել նրանց մասին, Անուշ Գևորգյանը և Դավիթ Յուրիկի Մելիքյանը վարել են համատեղ տնտեսություն, իսկ պատասխանող Լուսիկ Պետրոսյանն իրազեկ է և հստակ գիտի, որ Գոռ Դավիթի Մելիքյանը, Նարեկ և Լուսինե Դավիթի Գևորգյաններն Անուշ Գևորգյանի և Դավիթ Յուրիկի Մելիքյանի գավակներն են, սակայն հրաժարվում է իր թոռներից՝ ժառանգական գույքը նրանց չտրամադրելու պատճառով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է Վարդուհի Ոսկանյանն ընդդեմ՝ Քրիստինե, Նարինե, Վարդան Մանուկյանների թիվ ԵԷԴ/1325/02/09 գործով Վճռաբեկ դատարանի 01.10.2010 թվականի որոշմանը:

Բացի այդ, բողոք բերած անձը բողոքին կից ներկայացրել է նոտարական կարգով վավերացված 13.04.2012 թվականի վկաների հարցաքննության թիվ 01AA0108045 և թիվ 01AA0108046 արձանագրությունները, ըստ որոնց՝ Ռուսաստանի Դաշնության Ադիգեայի Հանրապետության Մայկոպ քաղաքի նոտարական տարածքի նոտարի կողմից իրականացվել է վկաներ Թամարա Վլադիմիրի Պարասկևովայի և Մարինե Գրիգորիի Մուրադյանի հարցաքննությունները, ովքեր հայտնել են, որ 1999-2011 թվա-

---

կանը եղել են քաղաքացի Դավիթ Մելիքյանի և Անուշ Գևորգյանի ընտանիքի ընկերները, ինչպես նաև շփվել ընտանիքներով: Դավիթ Մելիքյանի և Անուշ Գևորգյանի ընտանիքը բնակվել է խուտոր Գավերդովսկի Բեգովայա փողոց, տուն 1 հասցեում: Համատեղ կյանքի ընթացքում ունեցել են երեք երեխա՝ 27.06.1999 թվականին ծնված Գոռ Դավիթի Մելիքյան, 01.06.2000 թվականին ծնված Նարեկ Դավիթի Գևորգյան, 22.12.2004 թվականին ծնված Լուսինե Դավիթի Գևորգյան: Վերջիններիս ընտանիքին ճանաչում են շատ լավ կողմից: Միշտ մասնակցել են նրանց բոլոր ընտանեկան միջոցառումներին և առօրյայում տեսել են, թե ինչ ուշադիր և հոգատար է Դավիթ Մելիքյանն իր երեխաների նկատմամբ: Դավիթ Մելիքյանը լավ հայր է եղել, հոգատար է եղել և սիրել է իր երեխաներին, միշտ օգնել է Անուշ Գևորգյանին իրենց երեխաների դաստիարակությանը, նվերներ է գնել, շրջապատել են իրենց սիրով և հոգատարությամբ: Արտաքնապես երեխաները շատ նման են հորը: Նրանց ընտանիքում չեն լսել ոչ մի վեճի մասին, ինչ-որ խոսակցություններ այն մասին, որ նրանց ամուսնությունը գրանցված չէ, և երեխաները ծնվել են առանց ամուսնության մեջ գտնվելու: 2011 թվականի հուլիսին Դավիթ Մելիքյանը մահացել է, և Անուշ Գևորգյանն իր անչափահաս երեխաների հետ մեկնել է Հայաստանի Հանրապետություն:

Բողոք բերած անձը բողոքին կից ներկայացված նոտարական կարգով վավերացված 13.04.2012 թվականի վկաներ Թամարա Վլադիմիրի Պարասկևովայի և Մարինե Գրիգորի Մուրադյանի հարցաքննության թիվ 01AA0108045 և թիվ 01AA0108046 արձանագրությունները խնդրել է համարել որպես սույն գործի համար էական նշանակություն ունեցող նոր երևան եկած հանգամանքներ և դատական ակտը վերանայելու հիմք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.05.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 02.03.2012 թվականի վճռին:

### **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՔԿԱԳ Վանաձորի տարածքային բաժնի 01.02.2012 թվականի թիվ 73 գրության համաձայն՝ 21.03.1972 թվականին ծնված և 26.07.2011 թվականին մահացած Դավիթ Յուրիկի Մելիքյանի ամուսնության վերաբերյալ 1990-2011 թվականների արխիվում որևէ տվյալ չի հայտնաբերվել (գ.թ. 25):

2. 05.10.1999 թվականի թիվ I-AԳ 536154 ծննդյան վկայականի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Լաբինսկ քաղաքում 27.06.1999 թվականին ծնված Գոռ Դավիթի Մելիքյանի ծնողներն են հայրը՝ Դավիթ Յուրիկի Մելիքյանը, և մայրը՝ Անուշ Հրանտի Գևորգյանը (գ.թ. 5):

3. 06.06.2000 թվականի թիվ I-A3 288339 ծննդյան վկայականի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Ադիգեայի Հանրապետության Մայկոպ քաղաքում 01.06.2000 թվականին ծնված Նարեկ Դավիթի Գևորգյանի ծնողներ բաժնում բացակայում է հոր մասին գրառումը, իսկ մայրը՝ Անուշ Հրանտի Գևորգյանն է (գ.թ. 6):

4. 09.06.2006 թվականի թիվ I-A3 549309 ծննդյան վկայականի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Ադիգեայի Հանրապետության Մայկոպ քաղաքում 22.12.2004 թվականին ծնված Լուսինե Դավիթի Գևորգյանի ծնողներ բաժնում բացակայում է հոր մասին գրառումը, իսկ մայրը՝ Անուշ Գևորգյանն է (գ.թ. 7):

5. 18.08.2011 թվականի թիվ ԱԲ-059579 մահվան վկայականի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Ադիգեայի Հանրապետության Մայկոպ քաղաքում սրտամկանի սուր

ինֆարկտի պատճառով 26.07.2011 թվականին մահացել է Դավիթ Յուրիկի Մելիքյանը (գ.թ. 9):

6. Ըստ Անուշ Հրանտի Գևորգյանի հայտարարության՝ գործում առկա լուսանկարներում իր ընտանիքն է՝ ամուսինը՝ Դավիթ Յուրիկի Մելիքյանը, իրենց զավակները՝ Գոռ Դավիթի Մելիքյանը, Նարեկ և Լուսինն Դավիթի Գևորգյանները, սկեսուրը՝ պատասխանող Լուսիկ Պետրոսյանը, տարբեր միջոցառումներում (գ.թ. 39-43):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը եկավ հետևյալ եզրակացության.*

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն։ Ամուսնության մեջ կամ դրանից դուրս ծնված բոլոր երեխաներն օգտվում են սոցիալական միևնույն պաշտպանությունից։

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք։ Մասնակից պետություններն այդ իրավունքների իրականացումն ապահովում են իրենց ներպետական օրենսդրության և այս բնագավառում համապատասխան միջազգային փաստաթղթերով ստանձնած իրենց պարտավորությունների համաձայն, մասնավորապես այն դեպքում, եթե այլ կերպ երեխան քաղաքացիություն չունենա։

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա։

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա։

Նույն օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա։ Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որն ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից։

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով։

Այսպիսով, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 9-րդ գլխով ամրագրված է **երեխաների սերման փաստի հաստատման** հետևյալ դեպքերը՝ երեխայի սերման փաստի հաստատման (հոդված 35-րդ), հայրությունը դատական կարգով որոշելու (հոդված 36-րդ) և **հայրության ճանաչման փաստի դատական հաստատման** (հոդված 37-րդ)։

---

**Երեխաների սերման փաստի հաստատման յուրաքանչյուր դեպքի** համար օրենսդիրը սահմանել է պայմաններ ինչպես միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանց, ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից երեք հարյուր օրվա ընթացքում երեխա ծնվելու դեպքում, այնպես էլ երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի դեպքում:

Հատկանշական է, որ ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում օրենսդիրը նախատեսել է նաև երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող **անձի մահվան** պարագայում երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը հաստատելու պայման դատական կարգով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 36-րդ և 37-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որն ստույգ հաստատում է, որ իր կենդանության ժամանակ հոր կողմից ճանաչվել է **երեխայի հայրությունը**:

Այս առումով Վճռաբեկ դատարանը վերահաստատում է *Վարդուհի Ոսկանյանն ընդդեմ Քրիստինե Մանուկյանի և այլոց թիվ ԵԷԴ/1325/02/09 քաղաքացիական գործով 2010 թվականի հոկտեմբերի 1-ին* կայացրած որոշմամբ արտահայտած այն դիրքորոշումը, որ օրենսդիրը ծնողների և երեխաների միջև իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմք է դիտում օրենքով սահմանված կարգով կենդանության օրոք որպես երեխայի հայր հանդես գալու փաստը՝ սահմանելով երեխայի հայրության որոշման դատական կարգ: Ընդ որում, այդ դեպքում դատարանը պետք է հաշվի առնի ցանկացած ապացույց, որն ստույգ հաստատում է, որ իր կենդանության ժամանակ հոր կողմից ընդունվել է երեխայի հայրության ճանաչման փաստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակալություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այդ տեղեկությունները հաստատվում են՝ գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոգրյալ դատավարական նորմերից հետևում է, որ գործով ապացույցներ են օրենքով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնք հաստատվում են գրավոր և իրեղեն ապացույցներով, փորձագետների եզրակացություններով, վկաների ցուցմունքներով, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

Վերաքննիչ դատարանը դատական ակտի բեկանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում իսպառ բացակայում են հայցվորի պահանջը հիմնավորող վերաբերելի և թույլատրելի ապացույցները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում **երեխայի հայրության ճանաչման փաստի հաստատումը կարող է** ապացուցվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված ապացույցներով, այդ թվում ինչպես գործին մասնակցող անձանց և վկաների ցուցմունքներով, այնպես էլ այլ

---

ապացույցներով, որոնք ուղղակիորեն իրենց վերաբերելույթյամբ **կարող** են հաստատել այն, որ երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող մահացած Դավիթ Յուրիկի Մելիքյանն իր կենդանության ժամանակ իրեն ճանաչել է որպես Նարեկ և Լուսինե Դավիթի Գևորգյանների հայր ինչպես հարևանների, բարեկամների մոտ, այնպես էլ դպրոցում, բուժհաստատություններում և այլ միջավայրերում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով երեխաների լավագույն շահերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, բողոքարկվող դատական ակտը բեկանելով և հայցը մերժելով, չի իրականացրել գործի քննությունը՝ ելնելով երեխաների լավագույն շահերից, ու բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել երեխաների հայրության ճանաչման փաստի հաստատմանն ուղղված ապացույցները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, որի պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.05.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին, այդ թվում՝ վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 25.07.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի հարցին, անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԴ/1066/02/11**  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/1066/02/11  
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան  
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Կ. Հակոբյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Էդգար Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի  
Էդգար Գրիգորյանի ընդդեմ «Ազադ Ֆայն Քեմիքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)  
հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր  
պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը և գումար  
բռնագանձելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Էդգար Գրիգորյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերու-  
թյան 11.01.2011 թվականի թիվ 1 հրամանը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում՝  
որպես Ընկերության գովազդի գծով ղեկավար, Ընկերությունից հոգուտ իրեն բռնագանձել  
հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը,  
այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապա-  
տասխան վճարման ենթակա տուկոսները՝ մինչև պարտավորության կատարման օրը,  
աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար տուժանքի գումարը,  
ինչպես նաև փաստաբանի վարձատրության գումարը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրա-

վասության դատարանի (դատավոր Ս. Հովսեփյան) 04.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Ընկերության 11.01.2011 թվականի թիվ 1 հրամանը, Էդգար Գրիգորյանին վերականգնել նախկին աշխատանքում՝ Ընկերության գովազդի գծով ղեկավարի պաշտոնում, Ընկերությունից հոգուտ Էդգար Գրիգորյանի բռնագանձել միջին աշխատավարձը հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար՝ սկսած 11.01.2011 թվականից մինչև 29.03.2012 թվականը՝ 7.319.221 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև 29.03.2012 թվականից մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը. մնացած պահանջների մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.07.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.05.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 12.09.2012 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.07.2012 թվականի որոշման դեմ Էդգար Գրիգորյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 25.04.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.07.2013 թվականի որոշմամբ Էդգար Գրիգորյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.04.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էդգար Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածը, 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 123-րդ հոդվածը, 198-րդ հոդվածի 1-ին մասը, 220-րդ հոդվածը, 222-րդ հոդվածը, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 224-րդ հոդվածը, 226-րդ հոդվածը և 265-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի նյութերը, որի արդյունքում անտեսել է, որ մինչև կարգապահական տույժ կիրառելը գործատուն պարտավոր է աշխատողից պահանջել գրավոր բացատրություն, որը տվյալ դեպքում Ընկերությունն իրենից չի պահանջել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու և աշխատողին աշխատանքից ազատելու պարտադիր ու կարևոր պայման է բացառապես անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չներկայանալը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը չի ապացուցել ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում իր՝ անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու փաստը՝ չներկայացնելով դրա վերաբերյալ ապացույցներ:

---

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները**

Էդգար Գրիգորյանը 10.01.2011 թվականից հետո աշխատանքի չի ներկայացել, որի հետևանքով Ընկերության 11.01.2011 թվականի թիվ 1 հրամանի կրկնօրինակը և լրացված աշխատանքային գրքույկն Ընկերությունը նրան առաքել է փոստային ծառայության միջոցով 29.01.2011 թվականին՝ միաժամանակ նրա բանկային հաշվին փոխանցելով կատարված վերջնահաշվարկի գումարը: Մինչդեռ առաքանին հետ է վերադարձվել:

Դրանից հետո՝ 23.05.2011 թվականին, Էդգար Գրիգորյանը ներկայացել է Ընկերության գրասենյակ, որտեղ վերջինիս պետք է հանձնվեր վերը նշված հրամանի կրկնօրինակը, աշխատանքային գրքույկը և համապատասխան տեղեկանք, սակայն Էդգար Գրիգորյանը հրաժարվել է ստորագրել հանձնման-ընդունման ակտը և հեռացել է Ընկերության գրասենյակից, որի վերաբերյալ Ընկերության աշխատակիցների կողմից կազմվել է համապատասխան ակտ:

Էդգար Գրիգորյանից բացատրություն չվերցնելու հանգամանքը չի կարող հայցը բավարարելու հիմք հանդիսանալ, քանի որ բացատրություն տալու իրավունքի իրականացումն անմիջականորեն կապված է գործատուի կողմից տույժի տեսակի ընտրության հետ, մինչդեռ Էդգար Գրիգորյանը տվյալ դեպքում չի պնդել, որ իր նկատմամբ անհրաժեշտ է սահմանել նվազ խիստ կարգապահական տույժ:

Աշխատանքի ներկայանալն աշխատողի պարտականությունն է, և եթե աշխատողը չի ներկայանում աշխատանքի, ապա աշխատանքից բացակայելը համարվում է անհարգելի, քանի դեռ աշխատողի կողմից չի ներկայացվել իր բացակայությունը հարգելի համարելու վերաբերյալ ապացույց: Սույն գործով Էդգար Գրիգորյանը չի ապացուցել, որ 10.01.2011 թվականին աշխատանքից բացակայել է հարգելի պատճառով:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության և Էդգար Գրիգորյանի միջև 30.10.2008 թվականին կնքվել է աշխատանքային պայմանագիր, որի համաձայն՝ Էդգար Գրիգորյանն ընդունվել է աշխատանքի՝ որպես գովազդի գծով ղեկավար (հատոր 1-ին, գ. թ. 10-15):

2) Ընկերության տնօրենի 11.01.2011 թվականի թիվ 1 հրամանի համաձայն՝ Էդգար Գրիգորյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը 11.01.2011 թվականից լուծվել է՝ 10.01.2011 թվականին անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չներկայանալու հիմքով (հատոր 4-րդ, գ. թ. 44):

3) մինչև կարգապահական տույժի կիրառումն Ընկերության տնօրենն Էդգար Գրիգորյանից խախտման մասին գրավոր բացատրություն չի պահանջել:

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործարարի*



կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելու հարցին ընդհանրապես, ինչպես նաև անդրադառնալ և գնահատման առարկա դարձնել այն դեպքերը, երբ մինչև կարգապահական տույժ կիրառելը գործատուն աշխատողից չի պահանջել խախտման մասին գրավոր բացատրություն:

1) մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը... 3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է գործատուի կողմից աշխատանքային կարգապահության խախտման մասին աշխատողից գրավոր բացատրություն պահանջելու ժամանակի հարցին՝ դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ գործատուն աշխատանքային կարգապահության խախտման մասին գրավոր բացատրությունը պետք է աշխատողից պահանջի **մինչև կարգապահական տույժի կիրառումը**՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ (տես Մանյա Գալստյանն ընդդեմ «Հայկական սպորտային էլեկտրակայան» ՓԲԸ-ի թիվ 3-357(ՎԳ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.05.2008 թվականի որոշումը):

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է**, ինչպես նաև վերահաստատում է Մանյա Գալստյանի գործով արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ **այդ բացատրությունն աշխատողից պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ:**

2) մինչև կարգապահական տույժ կիրառելը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն չպահանջելու հետևանքները.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքի պայմանների փոփոխման, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան: Եթե պարզվում է, որ աշխատանքի պայմանները փոփոխվել են, աշխատողի հետ **աշխատանքային պայմանագիրը լուծվել է** առանց օրինական

---

հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են:

Վերոնշյալից հետևում է, որ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու հիմքով դատարան դիմելու դեպքում դատարանը վերականգնում է աշխատողի խախտված իրավունքները, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով:

### **Սույն վեճի նկատմամբ վերոնշյալ մեկնաբանությունների կիրառումը.**

Սույն գործով Էդգար Գրիգորյանը, իր հայցապահանջի հիմքում դնելով նաև այն հանգամանքը, որ Ընկերության տնօրենն իր հետ աշխատանքային պայմանագիրը լուծել է առանց իրենից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելու, նաև պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության 11.01.2011 թվականի թիվ 1 հրամանը, իրեն վերականգնել նախկին աշխատանքում, Ընկերությունից հոգուտ իրեն բռնագանձել հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը:

Դատարանը, պատճառաբանելով, որ աշխատողի՝ խախտման մասին բացատրություն տալու իրավունքի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հետևանքը գործատուի կողմից տույժի տեսակի ընտրությունն է, իսկ Էդգար Գրիգորյանը տվյալ դեպքում չի պնդել, որ իր նկատմամբ անհրաժեշտ էր սահմանել նվազ խիստ կարգապահական տույժ, գտել է, որ Ընկերության կողմից Էդգար Գրիգորյանից բացատրություն պահանջելու պարտականությունը չկատարելը չի կարող անմիջական հիմք հանդիսանալ Ընկերության 11.01.2011 թվականի թիվ 1 հրամանն անվավեր ճանաչելու համար, և հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ խախտման մասին բացատրություն տալու աշխատողի իրավունքն իրականացվում է մինչև գործատուի կողմից կարգապահական տույժ նշանակելը՝ տույժ նշանակելու և դրա տեսակի ընտրության հարցը որոշելու նպատակով, իսկ Էդգար Գրիգորյանը տվյալ դեպքում չի պնդել, որ իր նկատմամբ անհրաժեշտ է սահմանել նվազ խիստ կարգապահական տույժ, գտել է, որ Դատարանն իրավացիորեն է մերժել հայցը:

Վերոնշյալ դիրքորոշման համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ հաստատված է, որ մինչև Էդգար Գրիգորյանի նկատմամբ կարգապահական տույժը կիրառելը Ընկերության կողմից խախտման մասին գրավոր բացատրություն չի պահանջվել, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի մեկնաբանությունը հակասում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ հոդվածին այն առումով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածում նշված նորմը մեկնաբանվել է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությանը ոչ համապատասխան, որի արդյունքում փոփոխվել է այդ նորմի իմաստը: Վերաքննիչ դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը սխալ մեկնաբանելու արդյունքում, ըստ էության, եկել է հետևության այն մասին, որ եթե աշխատողը չի պնդում, որ իր նկատմամբ անհրաժեշտ է կիրառել նվազ խիստ կարգապահական տույժ, ուստի մինչև կարգապահական տույժ նշանակելը վերջինիցս բացատրություն վերցնելը պարտադիր չէ, մինչդեռ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը կրում է իմպերատիվ (պարտադիր) բնույթ և պայմանավորված չէ ինչպես աշխատողի կողմից հայտնվելիք համապատասխան դիրքորոշմամբ, այնպես էլ կիրառվելիք կարգապահական տույժի տեսակով:

Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքում վկայակոչված մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Դատարանի կողմից թույլ տրված նշված խախտման,

ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից դրա անտեսման պայմաններում դրանք տվյալ պահին չեն կարող դառնալ քննության առարկա:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0103/04/11  
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ս. Սահակյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0103/04/11  
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Աֆին Լիզինգ Էլ Ջի» ընկերության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.08.2012 թվականի որոշման դեմ՝ «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.01.2012 թվականի վճռով «Իվ-Տրանս» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

«Իվ-Տրանս» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու, պարտատերերի առաջին ժողով նշանակելու և պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգի մասին հայտարարություն է հրապարակվել «Նովոյե Վրեմյա» թերթի 04.02.2012 թվականի համարում:

«Իվ-Տրանս» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը 15.03.2012 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել իր կողմից կազմված պարտատերերի պահանջների նախնական ցուցակը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (նախագահող դատավոր՝ Կ.Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 27.04.2012 թվականի որոշմամբ հաստատել է «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի պահանջների վերջնական ցուցակը՝ ըստ հետևյալ առաջնահերթության.

1. ՀՀ պետական բյուջե (դատական ծախս) 500.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «դ» հերթ,
2. Վարդուհի Յայլոյան՝ 1.168.370 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «գ» հերթ,
3. Արփենիկ Մովսիսյան՝ 1.096.204 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «գ» հերթ,
4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչություն՝ 15.042.653 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
5. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ՝ 21.495.960 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
6. «Արաքս» ԲԲԸ՝ 47.331.586 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
7. «Պիզ Բադ» ՍՊԸ՝ 43.567.000 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
8. «Ինգլիշ թրեյդ հաուզ» ՍՊԸ՝ 1.077.952,4 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
9. «Մոսէսքո» ՍՊԸ՝ 6.866.547 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
10. «Ֆուրնիվոլ» ՍՊԸ՝ 64.079.035 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
11. «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերություն՝ 1.633.548,73 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես չապահովված «է» հերթ,
12. Վարդուհի Յայլոյան՝ 1.126.171 ՀՀ դրամ՝ որպես չապահովված «ը» հերթ,
13. Արփենիկ Մովսիսյան՝ 1.214.816 ՀՀ դրամ՝ որպես ստորադաս չապահովված «ը» հերթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.08.2012 թվականի որոշմամբ «Ֆուրնիվոլ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը 1.633.548,73 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով ընդգրկվել է «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի ստորադաս չապահովված «ը» հերթում:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել «Արաքս» ԲԲԸ-ն:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառել, չի կիրառել նույն օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի սնանկության մասին հայտարարությունը սնանկության կառավարչի կողմից հրապարակվել է «Նովոյե Վրեմյա» թերթի 04.02.2012 թվականի համարում, պարտատերերի կողմից պահանջները պետք է Դատարան ներկայացվելին մինչև 04.03.2012 թվականը: «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը պարտապանի նկատմամբ իր պահանջները ներկայացրել է Դատարան 04.04.2012 թվականին՝ միաժամանակ միջնորդելով հարգելի համարել օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու հանգամանքը: Միջնորդության հիմքում դրվել է երկու հանգամանք՝ նախ այն, որ այդ ընթացքում «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ըն-

---

կերությունը գտնվել է իրավական պաշտպանության ներքո և իրականացրել է «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի կողմից իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը մեկ այլ քաղաքացիական գործի շրջանակներում և ապա՝ «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության պահանջների հիմքում ընկած ապացույցները գտնվել են Ավստրիայի Հանրապետությունում և դրանց ձեռքբերման, պատշաճ կերպով դատարան ներկայացնելու համար ավելի երկար ժամանակ է պահանջվել: Սակայն Վերաքննիչ դատարանը նշված պատճառաբանությունը համարել է անհիմն՝ գտնելով, որ ընկերությունը կարող էր իր պահանջները ներկայացնել ժամանակին, իսկ դրանց հիմքում ընկած հիմնավորող ապացույցները ներկայացնել լրացուցիչ կարգով: Մինչդեռ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը նախատեսում է, որ պահանջը պետք է ներկայացվի այն հիմնավորող հանգամանքների հետ 3 օրինակից: Բացի այդ, նման պահանջի դեմ բնականաբար կլինեին այլ պահանջատերերի առարկությունները, որի դեպքում Դատարանը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, պարտավոր կլիներ հրավիրել նիստ և քննարկել պահանջի օրինականությունը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և այլն:

Հարկ է ավելացնել նաև, որ ոչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և ոչ էլ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով չի նախատեսվում ոչ միայն դատավարական ժամկետները բաց թողնելու հարգելի պատճառների սպառիչ, այլ նույնիսկ ոչ սպառիչ ցանկ: Այսինքն՝ դատավարական ժամկետները բաց թողնելու այս կամ այն պատճառը, կոնկրետ գործի հիմքում ընկած հանգամանքներից ելնելով, կարող է գնահատվել որպես հարգելի:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.08.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 27.04.2012 թվականի որոշմանը:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները**

Մասնկության գործի շրջանակներում սնանկ ճանաչված պարտապանի հանդեպ իր պահանջը կարող է ներկայացնել ցանկացած անձ՝ ներկայացնելով իր պահանջը հիմնավորող համապատասխան հիմքերը, անկախ որևէ դատական ակտի առկայությունից, քանի որ անձանց միջև պարտավորության լինել չլինելու փաստի հաստատումը պարտադիր դատական միջամտություն չի պահանջում, և դրա առկայության հիմքում կարող են դրվել այլ փաստաթղթեր և ոչ թե միայն դատական ակտ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով միջնորդության հիմքում դրված մյուս հանգամանքին, ըստ որի՝ պահանջը հիմնավորող ապացույցները գտնվել են Ավստրիայի Հանրապետությունում, որոնց ձեռքբերման և պատշաճ կերպով դատարան ներկայացնելու համար երկար ժամանակ է պահանջվել, այս դեպքում ևս հանգել է իրավաչափ եզրահանգման՝ նշելով, որ «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը կարող էր ժամանակին ներկայացնել պահանջը, իսկ այն հիմնավորող ապացույցները կարող էր ներկայացնել լրացուցիչ կարգով:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.01.2012 թվականի վճռով «Իվ-Տրանս» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 85-90**):

2. «Իվ-Տրանս» ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու, պարտատերերի առաջին ժողով նշանակելու և պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու կարգի մասին հայտարարություն է հրապարակվել «Նովոյե Վրեմյա» թերթի 04.02.2012 թվականի համարում: Այսինքն՝ սույն գործով պահանջները ներկայացնելու ժամկետը հաշվվել է 2012 թվականի փետրվարի 04-ից մինչև 2012 թվականի մարտի 04-ն ընկած ժամանակահատվածը (**հատոր 1-ին, գ.թ. 122**):

3. Պահանջատեր «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը 04.04.2012 թվականին սնանկ ճանաչված «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի նկատմամբ ներկայացրել է 1.034.214,29 եվրոյին համարժեք ՀՀ դրամի պահանջ՝ միաժամանակ խնդրելով հարգելի համարել բաց թողնված ժամկետը (**հատոր 3-րդ, գ.թ. 1-10, հատոր 4-րդ, գ.թ. 1-8**):

Այնուհետև «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը 13.04.2012 թվականին ներկայացրել է «պահանջի լրացում», որը սկզբնական պահանջի հետ մեկտեղ կազմել է 1.633.548,73 եվրոյին համարժեք ՀՀ դրամ (**հատոր 4-րդ, գ.թ. 1-6**):

4. Ըստ հայցի «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության ընդդեմ «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման, ֆինանսական վարձակալության պայմանագրերը վաղաժամկետ լուծելու և վարձակալած գույքը վերադարձնելուն հարկադրելու պահանջների մասին թիվ ԵԿԴ/0726/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2011 թվականի վճռով վճռվել է «Իվ-Տրանս» ՍՊԸ-ից հոգուտ «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության բռնագանձել 612.523,44 եվրո՝ որպես 17.05.2011 թվականի դրությամբ պայմանագրերով վճարման ենթակա, սակայն չվճարված վարձավճարի գումար, ինչպես նաև 99.816,08 եվրո՝ որպես 17.05.2011 թվականի դրությամբ պայմանագրերով վճարման ենթակա, սակայն չվճարված տույժի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2012 թվականի որոշմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք չի բերվել:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հեղինակ պարճառաբանությանը:*

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չսպառնալից պարտատերերի պահանջները, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկային, պարտադիր այլ վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չսպառնալից պարտատերերի պահանջների, բավարարվում են «է» հերթում, իսկ ստորադաս չսպառնալից պարտատերերի պահանջները, համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի, բավարարվում են «ը» հերթում:

Նույն օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չներկայացված չսպառնալից պահանջները համարվում են ստորադաս չսպառնալից պահանջներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պահանջները սահմանված ժամկետներում հարգելի պատճառներով չներկայացրած պարտատերերի պահանջները կարող են

---

ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: **Պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը և պահանջների հիմնավորվածությունը որոշելու համար դատավորը հրավիրում է դատական նիստ**, որի ժամանակի և վայրի մասին կառավարչին, պարտապանին, պարտատերերին ծանուցում է պատշաճ կարգով: Պատճառների հարգելիության և պահանջների հիմնավորվածության քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, որը կարող է բողոքարկվել:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում դատարան չներկայացված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ և կարող են բավարարվել օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառները համարում է հարգելի: Միայն այս դեպքում սահմանված ժամկետում դատարան չներկայացված չապահովված պահանջները կարող են ընդգրկվել տվյալ պահանջին համապատասխանող հերթում: Ընդ որում, օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է գործը քննող դատարանի՝ պահանջը սահմանված ժամկետներում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու համար դատական նիստ հրավիրելու և պատճառների հարգելիության քննարկման արդյունքում որոշում կայացնելու պարտականությունը:

Սույն գործով «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը պարտապանի նկատմամբ իր պահանջները Դատարան է ներկայացրել 04.04.2012 թվականին՝ միաժամանակ միջնորդելով հարգելի համարել օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու պատճառները: Միջնորդությունը հիմնավորել է երկու հանգամանքով: Առաջինն այն է, որ այդ ժամանակաընթացքում «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի հետ գտնվել է մեկ այլ քաղաքացիական գործով դատական գործընթացի մեջ, որը վերջնականապես ավարտվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.02.2012 թվականի որոշմամբ: Սահմանված ժամկետը բաց թողնելու հաջորդ հանգամանքը պայմանավորված է նրանով, որ պահանջը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, պայմանագրերը գտնվել են Ավստրիայի Հանրապետությունում, որոնք սահմանված կարգով դատարան ներկայացնելու համար ավելի երկար ժամանակ է պահանջվել:

Դատարանը հարգելի է համարել «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության միջնորդությունը՝ պահանջը դատարան ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու մասին՝ պատճառաբանելով, որ սահմանված ժամկետը բաց թողնելը պայմանավորված էր վերջինիս կողմից իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատական պաշտպանության պրոցեսում գտնվելով, որով վերջնական դատական ակտ կայացվել է 22.02.2012 թվականին: Արդյունքում դատարանն ընկերությանը գրանցել է «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի պարտատերերի պահանջների վերջնական ցուցակում 1.633.548,73 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով՝ որպես չապահովված «է» հերթի պահանջ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության միջնորդությունը համարել է անհիմն՝ պատճառաբանելով, որ վերջինս պահանջ ներկայացնելու հնարավորություն ունեցել է նաև առանց մեկ այլ դատարանի կողմից պահանջը հաստատելու վերաբերյալ վճռի առկայության: Ընկերությունն ուներ իր պահանջը հիմնավորող համապատասխան պայմանագրեր և այլ փաստաթղթեր, որոնք կարող էր դատարան ներկայացնել ժամանակին ներկայացված պահանջի հետ մեկտեղ: Ինչ վերաբերում է պահանջը հիմնավորող մնացած ապացույցների՝ Ավստրիայի Հանրապետությունում գտնվելու հանգամանքին, ապա այս մասով Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ ընկերությունը կարող էր իր պահանջները ներկայացնել ժամանակին,



իսկ դրանց հիմքում ընկած հիմնավորող ապացույցները ներկայացնել լրացուցիչ կարգով:

*Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե ինչպիսի պայմաններում և ինչպիսի հանգամանքների առկայության դեպքում են հիմքեր առաջանում հարգելի համարելու անսակ ճանաչված պարտապանին պահանջ ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողումը:*

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բոլոր դեպքերում բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Դա բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր դատական վեճ ունի իր առանձնահատկությունները և յուրաքանչյուր դեպքում ելնելով կոնկրետ հանգամանքներից՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքերն էապես կարող են տարբերվել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց պարագայում: Ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է ամիջականորեն տվյալ իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատական պրոցեսին մասնակցելը կամ պահանջը և այն հիմնավորող ապացույցներ ներկայացնելը: Ընդ որում, եթե մի դեպքում նշված հանգամանքը ֆիզիկական անձանց պարագայում կարող է դիտվել հարգելի, ապա իրավաբանական անձանց դեպքում կարող է հարգելի չհամարվել: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով, ինչն օբյեկտիվորեն հարգելի ճանաչելու հիմք է, ապա նույն հիմքը չի կարող կիրառվել իրավաբանական անձի (տնօրենի կամ գործադիր մարմնի ղեկավարի) նկատմամբ:

Վերոգրյալն ի մի բերելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար **ընդհանուր կանոնն այն է**, որ թե՛ ֆիզիկական անձը և թե՛ իրավաբանական անձը պարտավոր են ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել են իրենցից կախված **ողջամիտ ու բավարար** միջոցներ դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու ուղղությամբ, սակայն իրենց կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սնանկության վարույթի այն առանձնահատկությունը, որ մեկ պահանջատիրոջ շահը մշտապես առնչվում է այլ պահանջատերերի շահերին, վերջիններիս իրավունքների պաշտպանության տեսանկյունից հարկ է համարում նշել, որ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու սահմանները չպետք է շատ լայն լինեն: Մասնավորապես ողջամիտ կարող է համարվել սահմանված ժամկետում պահանջը ներկայացնելուն խանգարող համապատասխան խոչընդոտները վերանայուց հետո բացառապես մեկամյա ժամկետում պահանջը ներկայացնելը՝ նշված խոչընդոտի առաջացման և ավարտի պահը հավաստող համապատասխան հիմնավորումներով:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները և սույն գործի փաստերի հետ համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության՝

---

ժամկետը բաց թողնելու վերաբերյալ փաստարկն առ այն, որ ընկերությունը գտնվել է իրավական պաշտպանության ներքո և իրականացրել է «Իվ-Տրանս» ՍՊԸ-ի կողմից իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը թիվ ԵԿԴ/0726/02/11 քաղաքացիական գործով, հիմնավոր է, քանի որ կողմերի միջև արդեն իսկ առկա էր նյութաիրավական վեճ, որը չէր կարող լուծվել սնանկության վարույթում: Ինչ վերաբերում է սույն գործով «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության վկայակոչած փաստարկին, համաձայն որի՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում հնարավոր չէր ներկայացնել պահանջը՝ այն հիմնավորող փաստաթղթերն Ավստրիայի Հանրապետությունում գտնվելու պատճառով, ապա Վճռաբեկ դատարանն այն համարում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ. սույն գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունը պահանջները ներկայացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետում միջոցներ է ձեռնարկել, ակտիվ գործողությունների է դիմել անհրաժեշտ փաստաթղթերը թարգմանելու և Ավստրիայից Հայաստան առաքելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է բեկանել մասնակի՝ թիվ ԵԿԴ/0726/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2011 թվականի վճռով հաստատված գումարի չափով (712.339,52 եվրոյին համարժեք ՀՀ դրամ) «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության պահանջը «ը» հերթում գրանցելու մասով, և այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի որոշմանը, իսկ մնացած մասով Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ.

«Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության կողմից 04.04.2012 թվականին ներկայացված 1.034.214,29 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով պահանջը, ըստ էության, բաղկացած է երկու ինքնուրույն մասից. առաջինը կազմում է թիվ ԵԿԴ/0726/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2011 թվականի վճռով հաստատված 712.339,52 եվրոյին համարժեք ՀՀ դրամի պահանջը, իսկ մնացածը՝ կողմերի միջև կնքված թվով հինգ առուվաճառքի պայմանագրերից բխող պարտապանի կողմից ոչ պատշաճ կատարած դրամական պարտավորության գումարն է և դրանց նկատմամբ հաշվեգրված տույժերը: Վճռաբեկ դատարանն արդեն վերոշարադրյալով բավարար է համարել թիվ ԵԿԴ/0726/02/11 քաղաքացիական գործով կայացված վճռով հաստատված 712.339,52 եվրոյին համարժեք ՀՀ դրամի պահանջը ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ հիմնավորումները: Մինչդեռ մնացած՝ 321.874,77 եվրոյի մասով պահանջը ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը հարգելի չի կարող համարվել, քանի որ այն ներկայացվել է սահմանված մեկամսյա ժամկետի ավարտից հետո, և առկա չեն բավարար հիմնավորումներ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու համար:

Ինչ վերաբերում է «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերության կողմից 13.04.2012 թվականին ներկայացված պահանջին, որը կազմում է 599.334,44 եվրոյին համարժեք ՀՀ դրամ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն իրականում ոչ թե ընկերության կողմից ներկայացված սկզբնական պահանջի լրացում է, այլ ըստ էության՝ ինքնուրույն պահանջ: Նշված պահանջի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա հիմքում ընկած պայմանագրերն այլ են՝ թվով հինգ լիզինգի պայմանագրեր, ուստի պարտապանի կողմից դրանց ոչ պատշաճ կատարման համար առաջացած դրամական պարտավորություններից ու տույժերից գոյացած պահանջը ևս համարվում է ինքնուրույն պահանջ:

Այս առումով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սնանկության վարույթի բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվում է արդեն իսկ ներկայացված սկզբնական պահանջի լրացում, ապա ժամկետը բաց թողնելու, առավել ևս այն հարգելի

ճանաչելու վերաբերյալ խնդիր չի առաջանում: Իսկ այն դեպքում, երբ ներկայացված պահանջը, ըստ էության, իրենից ինքնուրույն պահանջ է ներկայացնում, այսինքն՝ բխում է այլ հիմքերից, քան առաջինը, դրանց առաջացման աղբյուրները տարբեր են, ապա նման դեպքերում այն համարվում է նոր պահանջ, հետևաբար այն պետք է բավարարի այն նույն պայմաններին, ինչ առաջին անգամ ներկայացված պահանջը: Այսինքն՝ նման դեպքերում առաջանում է պահանջը ներկայացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը պահպանելու, իսկ այն չպահպանելու դեպքում՝ բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու պահանջատիրոջ պարտականությունը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով, գալիս է այն եզրահանգման, որ «ԱՖին Լիզինգ Էյ Ջի» ընկերության կողմից 13.04.2012 թվականին ներկայացված 599.334,44 եվրոյին համարժեք ՀՀ դրամի պահանջը չի համարվում 04.04.2012 թվականին ներկայացված պահանջի լրացում, այն ինքնուրույն պահանջ է, որը ներկայացվել է սահմանված ժամկետի ավարտից հետո, և բացակայում է միջնորդություն բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.08.2012 թվականի որոշման՝ 712.339,52 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով «ԱՖին Լիզինգ Էյ Ջի» ընկերության պահանջը «ը» հերթում ընդգրկելու

---

մասը և այդ մասով օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.04.2012 թվականի որոշմանը: Մնացած մասով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.08.2012 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. «Աֆին Լիզինգ Էյ Ջի» ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 24.10.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0282/02/12  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0282/02/12

Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարիետա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Մարիետա Գրիգորյանի ընդդեմ Համլետ Գևորգյանի, երրորդ անձ «Սիթի Սենթր  
Դիվելոպմենթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) պարտավորական հարաբերությունների  
առկայությունը և որպես հետևանք պահանջի իրավունքը ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Մարիետա Գրիգորյանը պահանջել է ճանաչել իր և Համլետ  
Գևորգյանի միջև պարտավորական հարաբերությունների առկայությունը, որով Համլետ  
Գևորգյանի պարտավորությունը Մարիետա Գրիգորյանի հանդեպ կազմում է 24.000.000  
ՀՀ դրամ, ինչպես նաև՝ որպես իր և Համլետ Գևորգյանի միջև առկա պարտավորական  
հարաբերությունների և Համլետ Գևորգյանի գործողությունների հետևանք՝ ճանաչել  
Մարիետա Գրիգորյանի պահանջի իրավունքը Երևանի 33-րդ թաղամասում Ընկերու-  
թյան կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի 2-րդ մասնաշենքի 14-րդ հարկի 61,6քմ  
մակերեսով թիվ 1405 բնակարանի նկատմամբ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-

---

թյան դատարանի (դատավոր՝ Գ. Կարախանյան) (այսուհետ՝ Դատարան) 18.06.2012 թվականի վճռով հայրը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.05.2013 թվականի որոշմամբ Համլետ Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ Հակոբ Ասոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 18.06.2012 թվականի վճիռը բեկանվել, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարիետա Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Համլետ Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ Հակոբ Ասոյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 39-րդ հոդվածի «գ» կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Մարիետա Գրիգորյանն իր պահանջի իրավունքը ճանաչելու մասին հայրը Դատարան ներկայացրել է սնանկության վարույթի հարուցումից դեռևս ութ ամիս առաջ: Բացի այդ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետից հետևում է, որ սնանկության գործով կառավարչի վրա է դրված պարտականությունը՝ ճշտելու, թե արդյոք առկա են պարտապանի դեմ հարուցված դատական վարույթներ՝ դրանցում ներգրավվելու համար: Տվյալ դեպքում վերաքննիչ բողոքին կից բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ սնանկության գործով կառավարիչը բարեխղճորեն կատարել է իր այդ պարտականությունը: Բացի այդ, Դատարանի վճիռը կայացվել է 18.06.2012 թվականին, մինչդեռ վերաքննիչ բողոք է ներկայացվել միայն 12.03.2013 թվականին: Այսինքն՝ ամեն դեպքում սնանկության գործով կառավարչի գործողություններում առկա է իրավունքի չարաշահում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.06.2012 թվականի վճռին:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանն իրականացրել է գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, դրանցից յուրաքանչյուրը գնահատել է մյուս ապացույցների հետ համադրման սկզբունքից ելնելով, և հանգել է ճիշտ եզրակացության առ այն, որ գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.10.2012 թվականի վճռով Համլետ Գևորգյանը ճանաչվել է սնանկ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Մարիետա Գրիգորյանի հայցն ընդդեմ Համլետ Գևորգյանի՝ պարտավորական հարաբերությունների առկայությունը և որպես հետևանք պահանջի իրավունքը ճանաչելու պահանջների մասին Դատարանի 18.06.2012 թվականի վճռով բավարարվել է, նշված դատական ակտը կողմերի կողմից չի բողոքարկվել (**հատոր 1-ին, գ.թ. 102-112**):

2) Սոնյա Ղարիբջյանի դիմումը՝ Համլետ Գևորգյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, վարույթ է ընդունվել 25.05.2012 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0049/04/12 որոշմամբ, և սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Հակոբ Ասոյանը (**հատոր 2-րդ, գ.թ. 29**):

3) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.10.2012 թվականի թիվ ԵԿԴ/0049/04/12 վճռով Համլետ Գևորգյանը ճանաչվել է սնանկ (**հատոր 2-րդ, գ.թ. 29-30**):

4) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 22.10.2012 թվականի որոշմամբ Համլետ Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Հակոբ Ասոյանը (**հատոր 2-րդ, գ.թ. 27-28**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պարտապանի մասնակցությամբ դատավարություններում սնանկության ժամանակավոր կառավարչի ներգրավման իրավական խնդրին:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Նշված հոդվածից հետևում է, որ օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց վերաքննիչ բողոքարկման իրավունք վերապահել է **միայն** այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց **իրավունքների և պարտականությունների վերաբերյալ**, սակայն վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման համար անձը նախ և առաջ պետք է օժտված լինի վարույթի կողմ լինելու ունակությամբ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքը սնանկության վարույթի տարբեր փուլերում նախատեսել է սնանկության ժամանակավոր կառավարչի և կառավարչի մասնակցությունը, որոնք սնանկության իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտներ են՝ ինքնուրույն գործառույթներով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 21-րդ հոդվածի 3-րդ մասի և 22-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումից հետևում է, որ սնանկության ժամանակավոր կառավարիչը սնանկության վարույթին մասնակցում է մինչև կառավարչի նշանակումը կամ մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Այսպես՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ սնանկության ժամանակավոր կառավարիչը մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին իրականացնում է նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «զ» կետերով նախատեսված լիազորությունները:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը սահմանում է սնանկության կառավարչի լիազորությունները: Մասնավորապես, սնանկության վերաբերյալ գործով

---

նշանակված կառավարիչը՝

ա) դատարանի պահանջով, իր նախաձեռնությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված պահանջների 5 տոկոսից ավելի ունեցող պարտատերերի պահանջով հրավիրում է պարտատերերի ժողով և նախագահում է այն:

բ) սնանկության գործով դիմում է դատարան՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում.

գ) **պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից.**

դ) իր լիազորությունների կատարումը պատշաճ ապահովելու նպատակով ներգրավում է համապատասխան մասնագիտացված կազմակերպություններ կամ մասնագետների և այլ աշխատակիցների և նրանց վարձատրում է պարտապանի հաշվին.

**ե) կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար.**

զ) **վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում.**

է) վարում է պարտատերերի պահանջների գրանցամատյանը.

ը) ստուգում է պարտապանին ներկայացվող պահանջների հիմնավորվածությունը.

թ) հիմնական կապիտալի մեծությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող առաջին հինգ առևտրային բանկերից մեկում պարտապանի անունով բացում է սնանկության հատուկ հաշիվ և դրան է հաշվեգրում պարտապանի անունով ստացվող բոլոր դրամական միջոցները.

ժ) պարտապանին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դատարանի որոշման հիման վրա արգելանք է դնում կամ հանում արգելանքը.

ժա) հսկողություն է իրականացնում պարտապանի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Վկայակոչված հոդվածներից հետևում է, որ սնանկության ժամանակավոր կառավարչի լիազորությունները, ի տարբերություն սնանկության կառավարչի, սահմանափակ են և կրում են սպառիչ բնույթ: Մասնավորապես, սնանկության ժամանակավոր կառավարիչն իրակացնում է հետևյալ լիազորությունները՝ **կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար, ինչպես նաև վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում:** Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է մինչ սնանկ ճանաչվելը և սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով: Մինչ սնանկ ճանաչվելը պարտապանն ինքնուրույն է իրացնում իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ դատավարական, հետևաբար օրենսդիրը սնանկության ժամանակավոր կառավարչին վերապահել է սահմանափակ լիազորություններ: Մինչդեռ, սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի որոշ իրավունքներ, այդ թվում նաև՝ դատավարական, իրացնում է կառավարիչը: Մասնավորապես, վերջինս պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարու-

---



թյուններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Վերը շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության ժամանակավոր կառավարիչն **օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օժտված** չէ դատավարական իրավունակությամբ, հետևաբար նաև՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքով, և պարտապանի մասնակցությամբ դատավարություններում նրան ներգրավելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է հետևյալ եզրահանգման.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մարիետա Գրիգորյանի հայցն ընդդեմ Համլետ Գևորգյանի՝ պարտավորական հարաբերությունների առկայությունը և որպես հետևանք պահանջի իրավունքը ճանաչելու պահանջների մասին, Դատարանի **18.06.2012** թվականի վճռով բավարարվել է: Սույա Ղարիբյանի դիմումը՝ Համլետ Գևորգյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, վարույթ է ընդունվել **25.05.2012** թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0049/04/12 որոշմամբ, և սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Հակոբ Ասոյանը: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **08.10.2012** թվականի թիվ ԵԿԴ/0049/04/12 վճռով Համլետ Գևորգյանը ճանաչվել է սնանկ: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **22.10.2012** թվականի որոշմամբ Համլետ Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Հակոբ Ասոյանը:

Վերաքննիչ դատարանը որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել **07.02.2012** թվականին, վճիռը կայացվել է **18.06.2012** թվականին, Հակոբ Ասոյանը գործի քննությանը մասնակից չի դարձվել, մինչդեռ Համլետ Գևորգյանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ է ընդունվել, և Հակոբ Ասոյանը սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **25.05.2012** թվականի որոշմամբ, հետևաբար բողոք բերած անձը զրկված է եղել դատարանում իր դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում և մինչև քննության ավարտը պատասխանող Համլետ Գևորգյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վճիռ առկա չի եղել, որպիսի պարագայում վերջինս հանդիսացել է դատավարական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտ և սույն գործի շրջանակներում ինքնուրույն իրականացրել է իր դատավարական իրավունքները և պարտականությունները: Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ սույն գործի քննության ընթացքում և մինչև քննության ավարտը Հակոբ Ասոյանը նշանակված էր որպես պատասխանող Համլետ Գևորգյանի սնանկության ժամանակավոր կառավարիչ, հետևաբար իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, օժտված չլինելով դատավարական իրավունակությամբ, բացակայել են վերջինիս գործի քննությանը ներգրավելու հիմքերը: Նշված պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ ժամանակավոր կառավարիչը սույն գործի քննությանը մասնակից չի դարձվել, որով զրկվել իր դատավարական իրավունքներն իրականացնելու հնարավորությունից:

---

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավունքներ սնանկության ժամանակավոր կառավարչին վերապահված չլինելու պարագայում վերջինիս գործին մասնակից չդարձնելը չի կարող հանգեցնել ՀՀ օրենսդրությամբ ամրագրված որևէ իրավունքի խախտման:

Միաժամանակ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մատով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ հիմքով կարճման ենթակա է միայն պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին դատարանի վարույթում քննվող (ընթացիկ) քաղաքացիական գործի վարույթը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննությունն ավարտվել է 04.06.2012 թվականին, և վճիռը հրապարակվել է 18.06.2012 թվականին, որպիսի դատական ակտը կողմերի կողմից չի բողոքարկվել: Համետ Գևորգյանը սնանկ է ճանաչվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.10.2012 թվականի վճռով, այսինքն՝ սնանկ ճանաչվելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին սույն գործն ընթացիկ չի եղել: Այն ընթացիկ չէր կարող համարվել նաև վերաքննության փուլում՝ նկատի ունենալով վերաքննիչ բողոք բերելու իրավունքի բացակայությունը, հետևաբար «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը քննարկվող պարագայում կիրառելի չէ:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառաբանություններով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը, ինչպես նաև այն, որ առաջին ատյանի դատական ակտը գործին մասնակցող անձանց կողմից չի բողոքարկվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.06.2012 թվականի վճռին:

2. Հակոբ Ասոյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.07.2013 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/1140/02/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/1140/02/12

Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան

Դատավորներ՝ Գ. Մատինյան

Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Մարինե Ավետիսյանի վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Մարինե Ավետիսյանի ընդդեմ Արտեմ Ավետիսյանի՝ գույքի համասեփականատեր  
ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Մարինե Ավետիսյանը պահանջել է Երևանի Օսյան փողոցի  
թիվ 14 տան նկատմամբ ճանաչել իր ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դա-  
տարանի (դատավոր՝ Հ. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.04.2013 թվականի  
վճռով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
31.07.2013 թվականի որոշմամբ Մարինե Ավետիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ  
Դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարինե Ավետիսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը կիրառել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, որը չպետք է կիրառել, ինչպես նաև խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 19-րդ, 31-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 27-րդ, 198-րդ, 201-րդ, 273-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 53-րդ հոդվածները և 219-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հերկյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը բողոքը չի քննել ամբողջ ծավալով, այլ ղեկավարվել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, որը տվյալ պարագայում կիրառելի չէ: Մինչդեռ բողոքաբերի փաստարկների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության դեպքում Վերաքննիչ դատարանը կպարզեր, որ Մարինե Ավետիսյանն Արտեմ Ավետիսյանի նկատմամբ պարտատեր չէ, և նրա պահանջն ուղղված չէ պարտավորության կատարմանը: Ավելին, սույն գործով ներկայացված պահանջը գումարի բռնագանձման պահանջ չէ, հետևաբար բացակայում են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածի կիրառման նախապայմանները: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վիճելի գույքը ձեռք է բերվել ամուսնության ընթացքում, հետևաբար նշված գույքի միայն կեսն է պատկանում Արտեմ Ավետիսյանին, իսկ Մարինե Ավետիսյանը որևէ պատասխանատվություն չի կրում պատասխանողի պարտավորությունների համար: Արդյունքում խախտվել է Մարինե Ավետիսյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված սեփականության իրավունքը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն անտեսել է վկայակոչված իրավադրույթի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը՝ մասնավորապես 12.12.2007 թվականի թիվ 3-1717(ՏԴ) նախադեպային որոշումը, ինչպես նաև չի մատնանշել որևէ ծանրակշիռ փաստարկ՝ նշված նախադեպային որոշումը չկիրառելու վերաբերյալ, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արտեմ Տերգիկյանի և Մարինե Ավետիսյանի ամուսնությունը գրանցվել է 27.10.1984 թվականին, և 16.09.1997 թվականին Երևանի Նոր Նորքի տարածքային ՔԿԱԳ բաժնի կողմից տրվել է ԱԱ թիվ 040019 ամուսնության վկայականի կրկնօրինակը, ըստ որի՝ ամուսինները կրել են Տերգիկյան և Ավետիսյան ազգանունները (**գ.թ. 8**):

2) Արտեմ Տերգիկյանի և Մարինե Ավետիսյանի ամուսնալուծությունը գրանցվել է 10.10.2000 թվականին, և նույն օրը Ավան և Նոր Նորք ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից տրվել է ամուսնալուծության ԱԱ թիվ 021221 վկայականը (**գ.թ. 9**):

3) Արտեմ Սարգսի Սարգսյանի և Մարինե Ավետիսյանի ամուսնությունը կրկին գրանցվել է 23.06.2009 թվականին, և նույն օրը ՔԿԱԳ Մալաթիա-Սեբաստիա տա-

---

րածքային բաժնի կողմից տրվել է ԱԱ թիվ 121046 ամուսնության վկայականը, ամուսինները սկսել են կրել Ավետիսյան ազգանունը (գ.թ. 10):

4) 16.09.1997 թվականին տրված թիվ 2474 սեփականության վկայականի համաձայն՝ Ե. Օտյան փողոցի թիվ 14 բնակելի տունը պատկանում է Արտեմ Տերզիկյանին: Շված վկայականի «լրացուցիչ նշումներ» սյունակում առկա է նշում հետևյալի մասին. «հիմք՝ բնակելի տան առուծախի պայմանագիր, գրանցում թիվ 4-1929, կնքված 10.09.1997 թվականին» (գ.թ. 11):

5) Երևանի Մայաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 05.03.2012 թվականի թիվ ԵՄԴ-0003/04/12 վճռով Արտեմ Ավետիսյանը ճանաչվել է սնանկ (գ.թ. 35-39):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է հետևյալ իրավական խնդրին. արդյո՞ք ամուսիններից մեկի սնանկ ճանաչվելուց հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի հիմքով համարել սեփականության իրավունքի ճանաչման պահանջ կարող է ներկայացվել դատարան, իսկ ներկայացման դեպքում գործի վարույթը կարող է կարճվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի կանոններով:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով:

Վերոնշյալ հոդվածում սահմանված է սնանկության գործընթացի հիմնական առանձնահատկություններից մեկը: Դա այն է, որ պարտապանի և պարտատերերի շահերից ելնելով՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից օրենքով նախատեսված պահանջներով քաղաքացիական գործերի վարույթները պետք է կենտրոնանան մեկ վարույթում, այն է՝ սնանկության վարույթում: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նշված հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային գանգվածի փոփոխության:

Սույն գործով Մարինե Ավետիսյանը, դիմելով դատարան, պահանջել է ճանաչել իր համատեղ սեփականության իրավունքը Երևանի Ե. Օտյան փողոցի թիվ 14 տան նկատմամբ, որն իր և պատասխանող Արտեմ Ավետիսյանի ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք է: Պատասխանող Արտեմ Ավետիսյանը դատարանի՝ 05.03.2012 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ, նշված գործով սնանկության

կառավարիչ է նշանակվել Իսաչիկ Նազարյանը, որն էլ սույն գործի քննության ընթացքում միջնորդություն է ներկայացրել գործի վարույթը կարճելու վերաբերյալ:

Դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը, սնանկության կառավարչի միջնորդությունը գտել է հիմնավոր և կարճել է գործի վարույթը:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, արձանագրել է. «Դատարանի՝ 05.07.2012 թվականին օրինական ուժի մեջ մտած թիվ ԵՄԴ/0003/04/12 վճռով պատասխանողը սնանկ է ճանաչվել, իսկ հայցվորը, դիմելով Դատարան, պահանջել է սնանկ ճանաչված պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կեսի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը, այսինքն՝ այդ գույքի կեսը հանձնել իրեն, որպիսի պահանջն առնչվում է սնանկության վարույթին այնքանով, որ դրա բավարարման հետևանքով ըստ էության կառաջանա սնանկ ճանաչված անձի գույքի նվազեցում, որն էլ իր հերթին ազդեցություն կունենա սնանկության վարույթի ընթացքի վրա, քանի որ պատասխանողի համար տան կեսը հայցվորին հանձնելու գույքային պարտավորություն կառաջացնի»:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել ճանաչելու իր սեփականության իրավունքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով:

Սույն գործով ներկայացվել է ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ համասեփականատեր ճանաչելու պահանջ, որն իրենից ներկայացնում է իրավունքի ճանաչման հայց: Նման հայցի նպատակն իրավունքի վիճելիությունը կամ անորոշությունը վերացնելն է, նման հայցի հիմք է ծառայում վիճելի իրավունքը հայցվորին պատկանելը: Այդպիսի հայցով դատարանը պատասխանողի վրա որոշակի պարտավորություններ չի դնում, այլ հաստատելով հայցվորի իրավունքը՝ որոշակիացնում է այն, կանխում այդ իրավունքի ապագա խախտումները: Հետևաբար այդպիսի հայցի քննությունը և լուծումը որևէ կերպ չի կարող առաջացնել սնանկ ճանաչված պարտապանի գույքային գանգվածի նվազում: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 5-րդ կետի իրավակարգավորումից, ըստ որի՝ ամուսիններից մեկի պարտավորությունների համար կարող է բռնագանձում տարածվել նրա սեփականության ներքո գտնվող գույքի, ինչպես նաև **ամուսինների ընդհանուր գույքում նրա բաժնի վրա** միայն: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածը, ամրագրելով ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի համատեղ սեփականություն հանդիսանալու կանխավարկածը, միաժամանակ ամուսնու, այդ թվում՝ նաև սնանկ ճանաչված, պարտավորությունների համար բռնագանձում տարածելու կամ սնանկության վարույթում հավաքագրելու հնարավորությունն ախտատեսում է միայն նրան պատկանող գույքի կամ այդ գույքի բաժնի մասով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սնանկ ճանաչված պատասխանողն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով կամ իրեն հասանելիք բաժնեմասով, իսկ հայցվոր Մարինե Ավետիսյանը որևէ կերպ պատասխանատվություն չի կրում վերջինիս պարտավորությունների համար: Հետևաբար, Մարինե Ավետիսյանը

---

գրկված չէ պահանջելու ճանաչել իր համատեղ սեփականության իրավունքը: Մինչդեռ, Դատարանը, կարճելով գործի վարույթը, իսկ Վերաքննիչ դատարանը, վճիռը թողնելով անփոփոխ, հնարավորություն չեն տվել վերջինիս իրացնել ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պատշաճության իրավունքը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բացակայում է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի կիրառության հիմքը, իսկ ստորադաս դատարանի հետևություններն անհիմն են և չեն բխում նշված իրավադրույթի բովանդակությունից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ բողոք բերած անձի այն պատճառաբանությանը, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս խախտել է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետը և պարտավոր էր կիրառել վերաքննիչ բողոքում նշված Վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի թիվ 3-1717(ՏԴ) նախադեպային որոշումը, քանի որ նշված նախադեպային որոշումն էական նշանակություն ուներ գործի լուծման համար, բացի այդ, չի մատնանշել որևէ ծանրակշիռ փաստարկ նշված նախադեպային որոշումը չկիրառելու վերաբերյալ, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա: Այնինչ, նշված նախադեպային որոշմամբ հիմնավորվում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը սույն գործով կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանը բողոք բերած անձի նշված փաստարկը գտնում է անհիմն, քանի որ Վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի թիվ 3-1717(ՏԴ) որոշմամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը կիրառվել և մեկնաբանվել է տվյալ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող խմբագրությամբ, որը տարբերվում է ներկայիս իրավակարգավորումից: Հետևաբար վկայակոչված որոշումը սույն գործով կիրառելի չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 31.07.2013 թվականի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.07.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/0009/04/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/0009/04/12**

Նախագահող դատավոր՝ **Տ. Սահակյան**

Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**

**Տ. Նազարյան**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**

**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**

**Վ. ԱՐԵԼՅԱՆԻ**

**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**

**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**

**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**

**Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ**

**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Յունիքանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Բանկ**) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի ընդդեմ Գևորգ Հարոյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Գևորգ Հարոյանին սնանկ ճանաչել:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Կուրանյան) (այսուհետ՝ **Դատարան**) 08.06.2012 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ **Վերաքննիչ դատարան**) 12.10.2012 թվականի որոշմամբ Գևորգ Հարոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 08.06.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է. Բանկի դիմումն ընդդեմ Գևորգ Հարոյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածների պահանջները, սխալ է մեկնաբանել «Մասնկտրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Գևորգ Հարոյանը պատշաճ կարգով չի կատարել իր վարկային պարտավորությունները և վարկի մայր գումարի մասով կետանցը կազմում է 1.157 օր: Գևորգ Հարոյանի պարտքը Բանկի հանդեպ 15.02.2012 թվականի դրությամբ կազմում է 106.926.540,50 ՀՀ դրամ, որը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը և առկա է 60-օրյա և ավելի ժամկետով կետանց: Գևորգ Հարոյանը վիճարկել է ընդամենը վարկային պայմանագրի 2-րդ գլուխը, որը վերաբերում է տոկոսների և տույժերի հաշվարկմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 08.06.2012 թվականի վճռին:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Բանկի և Գևորգ Հարոյանի միջև 14.06.2007 թվականին կնքված թիվ 20/Հ վարկային պայմանագրի համաձայն՝ վերջինիս տրամադրվել է 61.200.000 ՀՀ դրամ վարկ՝ տարեկան 14% տոկոսադրույքով, վարկի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները մինչև 14.06.2022 թվականը մարելու ժամկետով **(1-ին հատոր, գ.թ.9-11):**

2) Վաճառող Կարեն Ջանոյանի, գնորդ Գևորգ Հարոյանի և Բանկի միջև 14.06.2007 թվականին կնքված թիվ 20/Հ անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրի համաձայն՝ Գրավառուս վարկ է տրամադրում Գևորգին՝ վաճառողից Երևանի Մաշտոցի պողոտա 45ա շենքի թիվ 26 հասցեի բնակարանն ու ձեղնահարկը ձեռք բերելու նպատակով **(1-ին հատոր, գ.թ.12-19):**

3) Բանկի «Աբովյան» մասնաճյուղի կողմից 29.02.2012 թվականին ներկայացված թիվ 1546 տեղեկանքի համաձայն՝ Գևորգ Հարոյանի ընդհանուր պարտքը Բանկի նկատմամբ 15.02.2012 թվականի դրությամբ կազմում է 106.926.540,50 ՀՀ դրամ, որից 42.160.000 ՀՀ դրամը՝ որպես ժամկետային վարկի գումար, 16.170,90 ՀՀ դրամը՝ որպես ժամկետային վարկի տոկոսագումար, 13.214.240 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց վարկի գումար, 4.099.007,90 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց վարկի տույժի գումար, 21.769.965,90 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց տոկոսագումար, 25.667.155,80 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց տոկոսագումարի տույժ: Վարկի մայր գումարի մասով կետանցը կազմում է 1.157 օր **(1-ին հատոր, գ.թ.26):**

4) 27.10.2010 թվականին Բանկը դիմել է դատարան ընդդեմ Գևորգ Հարոյանի՝ պարտավորությունները վաղաժամկետ կատարելու և գումարի բռնագանձման պահանջով: Պատասխանող Գևորգ Հարոյանը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ վիճարկելով վարկային պայմանագրի 2-րդ գլուխը, որը վերաբերում է **տոկոսների և տույժերի հաշվարկմանը (1-ին հատոր, գ.թ.71-72):**

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ սնանկ ճանաչելու պայման հանդիսացող վճարային պարտավորության անվիճելիության հարկանիշի մեկնաբանմանը՝ հաշվի առնելով նշված դրույթի միատեսակ կիրառման անհրաժեշտությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա, եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվում է (փաստացի անվճարունակություն): Վճարային պարտավորությունն անվիճելի է, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ կամ եթե առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն (...) պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Նշված դրույթի միատեսակ մեկնաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադրված սնանկության դեպքում վճարային պարտավորության անվիճելիությունը, այդպիսի պարտավորության առնվազն 60-օրյա ժամկետով կետանցը և վճռի կայացման պահին այդպիսի կետանցի շարունակվելն այն երեք պայմաններն են, որոնցից յուրաքանչյուրի առկայությունն անհրաժեշտ է, իսկ բոլորինը միասին բավարար անձին սնանկ ճանաչելու համար: Վճարային պարտավորության անվիճելիությունը առկա է այն դեպքում, երբ պարտապանը չի առարկում սնանկ ճանաչելու պահանջի դեմ: Այդուհանդերձ, օրենքի վերոնշյալ դրույթը կարգավորում է նաև այն դեպքերը, երբ պարտապանը վիճարկում է պարտավորության անվիճելի լինելու փաստը, այլ կերպ ասած՝ առարկում է իրեն սնանկ ճանաչելու պահանջի դեմ, և այդ առարկությունները վերաբերում է վճարային պարտավորությանը (այլ ոչ թե կետանցին կամ կետանցի շարունակվելուն): Նման պայմաններում վերը հիշատակված հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «անվիճելի վճարային պարտավորություն» եզրույթի բովանդակությունը բացահայելու համար անհրաժեշտ է այն դիտարկել նույն կետի «դ» ենթակետի համատեքստում: Մասնավորապես՝ այն պարտավորությունը, որը վիճարկվում է պարտապանի կողմից կամ որի դեմ պարտապանը ներկայացրել է առարկություն, անվիճելի է, եթե այդպիսի առարկությունն ուղղված է պահանջի մի մասի դեմ, իսկ մնացած մասը չի վիճարկվում: Այլ կերպ՝ չվիճարկվող մասը, եթե այն գերազանցում է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, անվիճելի է դարձնում պարտավորությունն առնվազն այդ մասով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և

---

իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմների ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տես՝ Ալվարդ Խաչատրյանի օրինական ներկայացուցիչ Թեհմինե Խաչատրյանն ընդդեմ Արմեն Խաչատրյանի և այլոց թիվ ԿԴ3/0026/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բանկի «Արովյան» մասնաճյուղի և Գևորգ Հարոյանի միջև 14.06.2007 թվականին կնքված թիվ 20/Հ վարկային պայմանագրի համաձայն Գևորգ Հարոյանին տրամադրվել է 61.200.000 ՀՀ դրամի վարկ՝ տարեկան 14% տոկոսադրույքով, վարկի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարները մինչև 14.06.2022 թվականը մարման ժամկետով: Վերջինս պարտավորվել է վարկի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարների մարումները կատարել յուրաքանչյուր ամիս՝ սկսած 14.07.2007 թվականից: Գևորգ Հարոյանը պատշաճ կարգով չի կատարել իր վարկային պարտավորությունները և վարկի մայր գումարի մասով կետանցը կազմում է 1.157 օր: Գևորգ Հարոյանի պարտքը Բանկի հանդեպ 15.02.2012 թվականի դրությամբ կազմում է 106.926.540,50 ՀՀ դրամ, որից 42.160.000 ՀՀ դրամը՝ որպես ժամկետային վարկի գումար, 16.170,90 ՀՀ դրամը՝ որպես ժամկետային վարկի տոկոսագումար, 13.214.240 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց վարկի գումար, 4.099.007,90 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց վարկի տույժի գումար, 21.769.965,90 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց տոկոսագումար, 25.667.155,80 ՀՀ դրամը՝ որպես ժամկետանց տոկոսագումարի տույժ:

27.10.2012 թվականին Բանկը դիմել է դատարան ընդդեմ Գևորգ Հարոյանի՝ պարտավորությունները վաղաժամկետ կատարելու և գումարի բռնագանձման պահանջով: Գևորգ Հարոյանը ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում՝ **վիճարկելով վարկային պայմանագրի 2-րդ գլուխը, որը վերաբերում է տոկոսների և տույժերի հաշվարկմանը:**

Դատարանը դիմումի բավարարման հիմքում դրել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» և «դ» ենթակետերը՝ հաստատված համարելով, որ Գևորգ Հարոյանը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա և ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված կետանցը շարունակվել է: Բացի այդ, նշել է, որ պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և Գևորգ Հարոյանը, վիճարկելով վարկային պայմանագրի 2-րդ գլուխը, որը վերաբերում է տոկոսների և տույժերի հաշվարկմանը, ըստ էության **չի վիճարկել վարկային պայմանագիրը 13.214.240 ՀՀ դրամ ժամկետանց վարկի մասով:**

Վերաքննիչ դատարանը վճիռը բեկանելիս և դիմումը մերժելիս պատճառաբանել է, որ Գևորգ Հարոյանը, վիճարկելով դիմումում նշված չափով պարտավորության առ-

կայությունը և իր առարկությունների հիմքում դնելով այն հանգամանքը, որ իր կողմից գրավադրված գույքի արժեքը բավարար է իր պարտավորությունների մարման համար, եկել է այն եզրահանգման, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի հիման վրա դիմումը ենթակա է մերժման, քանի որ պարտապանն ապացուցում է, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի:

Վճռաբեկ դատարանը, վճարային պարտավորության անվիճելիության հատկանիշի վերաբերյալ վերը նշված մեկնաբանության լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» և «դ» ենթակետերում ամրագրված հատկանիշներից մեկի բացակայությունը չի բացառում մյուսի առկայությունը: Մասնավորապես, եթե պարտապանն ապացուցում է, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի, սակայն այդպիսի առարկությունը վերաբերում է պարտավորության միայն մի մասին, ապա առկա է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետով նախատեսված հատկանիշը: Վերը նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Գևորգ Հարոյանը, վիճարկելով իր սնանկությունը, Դատարանին ներկայացրել է Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի «Հակընդդեմ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին» որոշումը, որով վերջինս վիճարկում է իր և Բանկի միջև 14.06.2007 թվականին կնքված վարկային պայմանագրի **2-րդ գլուխը, որը վերաբերում է տոկոսների և տույժերի հաշվարկմանը**: Մինչդեռ պարտավորության չվիճարկվող մասն ավելին է, քան նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

Միաժամանակ անդրադառնալով Գևորգ Հարոյանի՝ ստորադաս դատարաններում ներկայացրած փաստարկին առ այն, որ իր կողմից գրավադրված գույքի արժեքը բավարար է իր պարտավորությունների մարման համար, ուստի ինքը չի կարող սնանկ ճանաչվել՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ նշված փաստը օրենսդիրը կարևորում է միայն կամավոր սնանկության, այլ ոչ թե հարկադրված սնանկության դեպքում:

Այսպիսով, վերոնշյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 132-րդ հոդվածների պահանջները և սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, որպիսի խախտումը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի 12.10.2012 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորա-

---

դաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 08.06.2012 թվականի վճռին:

2. Գևորգ Հարոյանից հոգուտ «Յունիբանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0805/02/10**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0805/02/10**  
Նախագահող դատավոր՝ **Ա. Թումանյան**  
Դատավորներ՝ **Լ. Գրիգորյան**  
**Գ. Մատինյան**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**

**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**

**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**

**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**

**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**

**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**

**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

**Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ**

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Միսակ-Նուբար Թերելեկյանի ներկայացուցիչ Արմեն Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Միսակ-Նուբար Թերելեկյանի ընդդեմ Ռուբեն Քոչարի, երրորդ անձինք «Շանթ» ՍՊԸ-ի, «Թրի Քոլոր» ընկերության՝ համաձայնագիրը լուծելու և լուծման հետևանքով նկարահանման համար անհրաժեշտ տեխնիկայի և կյոթերի վերադարձմանը հարկադրելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Ռուբեն Քոչարի ընդդեմ Միսակ-Նուբար Թերելեկյանի և երրորդ անձ «Շանթ» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Միսակ-Նուբար Թերելեկյանը պահանջել է լուծել իր և Ռուբեն Քոչարի միջև 26.02.2009 թվականին կնքված համաձայնագիրը և հարկադրել Ռուբեն Քոչարին վերադարձնելու վերջինիս ապօրինի տիրապետման տակ գտնվող Միսակ-Նուբար Թերելեկյանին պատկանող նկարահանման համար անհրաժեշտ տեխնիկան և կյոթերը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ռուբեն Քոչարը պահանջել է պարտա-

---

վորեցնել Միսակ-Նուբար Թեբեղեկյանին իր կատարած աշխատանքի համար վճարել 6.360.000 ՀՀ դրամ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) (այսուհետ՝ Դատարան) 04.05.2012 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.09.2012 թվականի որոշմամբ Միսակ-Նուբար Թեբեղեկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.05.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռարեկ բողոք է ներկայացրել Միսակ-Նուբար Թեբեղեկյանի ներկայացուցիչը:

Վճռարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ և 466-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը՝ նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործում ստկա ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրություն, հակառակ դեպքում կհանգեր այն ճշմարիտ եզրակացության, որ Միսակ-Նուբար Թեբեղեկյանը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցներն իր ապացուցման պարտականությունը պատշաճ իրականացնելու համար և ներկայացրել է բավարար ապացույցներ, որոնք հիմնավորում են Ռուբեն Քոչարի կողմից իրենց միջև կնքված համաձայնագրի էական խախտում թույլ տալու հանգամանքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նկարահանման համար անհրաժեշտ շարժական գույքը՝ տեխնիկան և նյութերը, հանդիսանում է Միսակ-Նուբար Թեբեղեկյանի սեփականությունը, և նա հանդիսանում է դրանց օրինական տիրապետողը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

## **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. 26.02.2009 թվականին Միսակ Թեբեղեկյանի, Ռուբեն Քոչարի և «Թրի Քոլոր» ընկերության միջև կնքվել է «Շոթա» հեռուստատերիալի արտադրության համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որի 1-ն կետի համաձայն՝ «Հեռուստաֆիլմաշարի արտադրության համար Միսակ Թեբեղեկյանը դառնում է գլխավոր ներդնողը (Պրոդյուսերը)՝ ներդնելով ամեն ամսվա ծախսերը՝ մոտ 12.000 ԱՄՆ դոլար, որն ըստ չնայատեսված ծախսերի կարող է հասնել 15.000 ԱՄՆ դոլարի: Այդ ծախսերի մեջ մտնում են արդեն ձեռք բերված արտադրության համար անհրաժեշտ գործիքները, որոնք արդեն ձեռք են բերվել՝ նկարող ապարատը (Պանասոնիկ)՝ իր բոլոր անհրաժեշտ պարագաներով՝ մոտ 15.000 ԱՄՆ դոլար արժողությամբ: Այս գումարը բաշխվելու է ողջ արտադրության ընթացքում շրջանառվող ծախսերի մեջ»: 2-րդ կետի համաձայն՝ «Ռուբեն Քոչարն ապահովում է ֆիլմաշարի արտադրության համար, ինչպես նաև ընթացքում անհրաժեշտ ֆիլմատեքստի (սցենարի), անհրաժեշտ աշխատակազմի, դերասանների, պատկերահանվող օբյեկտների, ինքնաշարժների և այլ օժանդակ պարագաների ներկայությունն իր Կինոռեժիսորի պարտականությամբ և գլխավորությամբ»: 4-րդ կետի



համաձայն՝ «համաձայնության ժամկետը նախատեսված է 6 ամիս տևողությամբ, ամիսը՝ 8 ժամ տևողությամբ ֆիլմաշարով: Նախահաշվարկված եկամուտը կազմում է 40.000 ԱՄՆ դոլար, որի արտադրության բաժինն է կեսը՝ 20.000 ԱՄՆ դոլարը»: 5-րդ կետի համաձայն՝ «ֆիլմի արտադրության համար, որի նախահաշվարկային արժեքն է 100.000 ԱՄՆ դոլար, Միսակ Թեբեյեկյանը և Ռուբեն Քոչարը պարտավորվում են ներդնել 50.000 ԱՄՆ դոլար հավասարապես»: 10-րդ կետի համաձայն՝ «ֆիլմաշարի և ֆիլմի համար ձեռք բերված գործիքները և անհրաժեշտ պարագաները, արտադրության ավարտից և փոխարժեքը վճարելուց հետո, պետք է մնան «Թ-րի Քոլոր» ընկերության սեփականության մեջ՝ հետագա ծրագրերի օգտագործման համար» (**հատոր 3, գ. թ. 21-22**):

2. Դավիդ Ղևոնդյանը պատվիրել է 2 հատ ԵՎ100ԵՆԳԳ2Ա Սեննհայգեր Ռադիոհաղորդիչ սիստեմ՝ 1.086,75 ԱՄՆ դոլար վերջնական արժողությամբ, 14.04.2009 թվականի թիվ ԻՆՎ000162952 ապրանքագրով Նուբար Թեբեյեկյանը պատվիրել է 2 հատ, սակայն առաքվել է 1 հատ ԲՐ13-ԶՓՎԼ-ԲԻԹ «Բրիտեք» 3000 վատտ հալոդեն լամպ՝ 437,78 ԱՄՆ դոլար վերջնական արժողությամբ, 20.02.2009 թվականի թիվ 17141 ապրանքագրով Միսակ Թեբեյեկյանին առաքվել է 10 անուն ապրանք՝ 10.674,80 ԱՄՆ դոլար վերջնական արժողությամբ, 23.03.2009 թվականի թիվ 17187 ապրանքագրով՝ Օնիկ Գյուլգելյանին առաքվել է 4 անուն ապրանք՝ 2.868,55 ԱՄՆ դոլար վերջնական արժողությամբ (**հատոր 1, գ. թ. 23-32**):

3. Ֆիլմի նկարահանումները սկսվել են 2009 թվականի հունիս ամսից և տևել մինչև օգոստոս ամիսը, իսկ սեպտեմբեր ամսից դրանք դադարել են (**անվիճելի փաստ**):

4. 22.03.2010 թվականին Միսակ-Նուբար Թեբեյեկյանը նամակ-առաջարկով Ռուբեն Քոչարին առաջարկել է լուծել իրենց միջև 26.02.2009 թվականին կնքված համաձայնագիրը և որպես համաձայնագրի լուծման հետևանք՝ վերադարձնել վերջինիս մոտ գտնվող նկարահանման համար անհրաժեշտ նյութերն ու տեխնիկան (**հատոր 3, գ.թ. 42-43**):

5. Ռուբեն Քոչարը 2009 թվականի փետրվարից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ստացել է գումարներ «Շոթա» հեռուստաֆիլմի նկարահանման համար (**հատոր 3, գ. թ. 44-56**):

6. 24.06.2010 թվականին Ռուբեն Քոչարի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանում վերջինս, պատճառաբանելով, որ «Պանատոնիկ» մակնիշի կինոնկարահանման ապարատը նկարահանումից հետո իր կատարած աշխատանքի համար որպես վարձատրություն հանձնվելու էր իր սեփականությանը, հայտնել է, որ ինքն այն անսարք լինելու պատճառով տվել է վերանորոգման (**հատոր 1, գ.թ. 68**):

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակում Վճարելի դատարանն անդրադառնում է պայմանագրի լուծման, ինչպես նաև գույքն ապօրինի տիրապետումից հեղբ վերադարձնելու պահանջ ներկայացված լինելու դեպքում ապացուցման բեռի բաշխման հարցին:*

1) Պայմանագիրը կողմերից մեկի պահանջով լուծելիս ապացուցման բեռի բաշխումը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն գրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

---

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն հետևյալ երեք դեպքերում՝

1. մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման առկայության դեպքում կամ

2. օրենքով նախատեսված դեպքում կամ

3. պայմանագրով նախատեսված դեպքում:

Վերոնշյալ երեք հիմքերից որևէ մեկով պահանջ ներկայացված լինելու դեպքում պայմանագրի փոփոխման կամ լուծման պահանջ ներկայացրած կողմը պետք է ապացուցի իր համար այնպիսի բացասական հետևանքի (վնասի) առաջացումը, որը զգալիորեն գրկում է վնաս կրած կողմին (պայմանագրի լուծման պահանջ ներկայացրած կողմին) ստանալ այն, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս: Հետևաբար պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած հանգամանքի ապացուցման բեռը կրում է այդպիսի պահանջ ներկայացնող կողմը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերը նշված դրույթում վնաս եզրույթը ենթադրում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածում ամրագրված իրական վնաս, բաց թողնված օգուտ կամ խախտված իրավունքների համար կատարված ծախսեր: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկան են կազմում պայմանագրի խախտման փաստը (կամ օրենքով նախատեսված դեպքը կամ պայմանագրով նախատեսված դեպքը), այդ խախտումը պայմանադիր կողմի կողմից կատարելը, խախտման արդյունքում վնասի առաջացումը: Նշված փաստերի հաստատումից բացի դատարանի կողմից ինքնուրույն գնահատման են ենթակա խախտման էական լինելը և վնասի այնպիսին լինելը, որը պահանջ ներկայացրած կողմին գրկել է պայմանագրով ստացվող ակնկալիքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 26.02.2009 թվականին կնքված համաձայնագրի կողմ հանդիսացող Միսակ-Նուբար Թերելեկյանը դիմել է դատարան՝ պահանջելով լուծել իր և Ռուբեն Քոչարի միջև կնքված համաձայնագիրը, ինչպես նաև 22.03.2010 թվականին գրավոր ներկայացրել է նշված համաձայնագիրը լուծելու պահանջ Ռուբեն Քոչարին՝ պատճառաբանելով, որ վերջինս թույլ է տվել իրենց միջև կնքված համաձայնագրի էական խախտում, այն է՝ չի նկարահանել Համաձայնագրով նախատեսված ժամաքանակի ֆիլմաշար:

Սույն գործի քննության ընթացքում երկու կողմերն էլ ընդունել են, որ ֆիլմի նկարահանումները սկսվել են 2009 թվականի հունիս ամսից և տևել մինչև օգոստոս ամիսը, իսկ սեպտեմբեր ամսից դրանք դադարել են: Հետևաբար նշված փաստը Վճռաբեկ դատարանը համարում է անվիճելի:

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի լուծում պահանջելու իրավունքը Միսակ-Նուբար Թերելեկյանի մոտ չի ծագել, քանի որ իր և Ռուբեն Քոչարի միջև 26.02.2009 թվականին կնքված համաձայնագրով նախատեսված և Միսակ-Նուբար Թերելեկյանի կողմից վկայակոչված հիմքերի առկայությունը չի հանդիսանում պայմանագրի էական պայմանների խախտում, Միսակ-Նուբար Թերելեկյանը Դատարանին չի ներկայացրել որևէ հիմնավոր ապացույց այն մասին, որ իր կողմից նշված նկարահանման համար անհրաժեշտ տեխնիկական և նյութերը գտնվում են Ռուբեն Քոչարի ապօրինի տիրապետման ներքո, ինչպես նաև չի հիմնավորել նշված տեխնիկական և նյութերը սեփականության իրավունքով իրեն պատկանելու հանգամանքը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ

գործում բացակայում են համապատասխան թույլատրելի և վերաբերելի ապացույցները, որոնք կհաստատեն հայցվորի կողմից գումար ներդնելու, այդ գումարը պատասխանող Ռուբեն Քոչարին տրամադրելու, նրա կողմից ծախսեր կատարելու հանգամանքները, ինչպես նաև հայցվորի՝ պահանջվող գույքի սեփականատեր կամ օրինական տիրապետող հանդիսանալու, և այդ հիմքով նման պահանջ ներկայացնելու իրավատեր լինելու, գույքը պատասխանող Ռուբեն Քոչարի մոտ գտնվելու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը: Հայցվորը չի հիմնավորել նաև այն, որ Ռուբեն Քոչարի կողմից համաձայնագրի պայմանների խախտումների (եթե նույնիսկ դրանք տեղի են ունեցել) արդյունքում ինքը կրել է վնասներ, չի կարողացել հասնել համաձայնագրով իր կողմից ակնկալվող նպատակներին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները գործում առկա բոլոր ապացույցների ոչ պատշաճ՝ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման և գնահատման արդյունքում սխալ են մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածը: Մասնավորապես, Համաձայնագրի 4-րդ կետից հետևում է, որ ֆիլմի նկարահանումների վերաբերյալ համաձայնության ժամկետը նախատեսված է եղել 6 ամիս՝ ամիսը 8 ժամ տևողությամբ: Ֆիլմի նկարահանումները սկսվել են 2009 թվականի հունիս ամսից: Միսակ-Նուբար Թերելեկյանը հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին, ըստ Համաձայնագրի, կատարել է անհրաժեշտ ներդրումները, որպիսի փաստի վերաբերյալ Ռուբեն Քոչարն առարկություն չի ներկայացրել, հետևաբար, ըստ Համաձայնագրի, երեք ամիսների համար պետք է նկարահանվեր ևս 24 ժամ տևողությամբ ֆիլմաշար, ինչը չի կատարվել:

Պայմանագրի պայմանների էական խախտումը բացահայտելու համար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագիրը պետք է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի կանոնների պահպանմամբ: Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի մեկնաբանության կանոններին՝ նշելով, որ վերոնշյալ հոդվածն ամրագրում է պայմանագրի մեկնաբանության երեք կանոն՝ պայմանագրի մեկնաբանումը՝ ելնելով դրա բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, պայմանագրի մեկնաբանումը՝ համադրելով այն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ, և պայմանագրի մեկնաբանումը կողմերի իրական ընդհանուր կամքը պարզելու միջոցով: Ընդ որում, այդ կանոնները կիրառվում են հաջորդաբար (*պէս «Կարապ» ՄՊԸ-ն ընդդեմ «Էզնա Շին» ՄՊԸ-ի թիվ ՇԴ-1/0303/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր դիրքորոշումը և նշված կանոնների կիրառմամբ մեկնաբանելով Համաձայնագիրը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Համաձայնագրի նպատակը Միսակ-Նուբար Թերելեկյանի ներդրումների միջոցով Ռուբեն Քոչարի կողմից ամսական 8 ժամ տևողությամբ ֆիլմաշար ստեղծելն է և դրա արդյունքում շահույթ ստանալն է: Հետևաբար, վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում գնահատելով գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սահմանված ժամաքանակի ֆիլմաշար չնկարահանելու արդյունքում թույլ է տրվել պայմանագրի էական խախտում, այսինքն՝ խախտում, որը հանգեցրել է կողմի համար այնպիսի անբարենպաստ հետևանքի առաջացման, որը զգալիորեն գրկել է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել Համաձայնագիրը կնքելիս: Համաձայնագրի բովանդակությունից, մասնավորապես դրա 4-րդ կետից հետևում է, որ կողմերը ֆիլմաշար նկարահանելու միջոցով հետապնդել են շահույթ ստանալու նպատակ, որի նախահաշվային արժեքը կազմել է 40.000 ԱՄՆ դոլար:

Նշված փաստերը համադրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի

---

կիրառման համար անհրաժեշտ պայմանների (փաստերի), վերջիններին ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ մեկնաբանության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռուբեն Քոչարի կողմից սահմանված ժամաքանակի ֆիլմաշար չնկարահանելը պայմանագրի էական խախտման փաստ է:

2) *Գույքն ապօրինի տիրապետումից հետո պահանջելիս ապացուցման բեռի բաշխումը.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը հետ պահանջել միայն ապօրինի տիրապետողից: Տիրապետումն ապօրինի է, եթե այն իրականացվում է առանց որևէ օրինական հիմքի (*տես՝ Արմենուհի Թադևոսյանն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ՇԴ/0613/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2011 թվականի որոշումը*): Ապօրինի տիրապետման փաստն առկա է ոչ միայն այն դեպքում, երբ ի սկզբանե բացակայում է տիտղոսային տիրապետումը, այլև երբ տիրապետումը հիմնված է օրինական հիմքի (տիտղոս) վրա, որը հետագայում վերանում է:

Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքը ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են: Հետևաբար ապօրինի տիրապետումից գույքը հետ վերադարձնելու պահանջ ներկայացնող կողմը կրում է նշված երկու փաստերի ապացուցման բեռը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանը և Վերաքննիչ դատարանը չեն իրականացրել Միսակ-Նուբար Թերեղեկյանի կողմից ներկայացված և գործում առկա բոլոր ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտում և գնահատում, մասնավորապես՝ պատշաճ գնահատման չեն ենթարկել Միսակ-Նուբար Թերեղեկյանի կողմից ներկայացված ապացույցներն այն մասին, որ Միսակ-Նուբար Թերեղեկյանի կողմից ներդրվել է գույք, Համաձայնագրի կնքման պահին Միսակ-Նուբար Թերեղեկյանի միջոցներով արդեն ձեռք բերված են եղել «Պանատոնիկ» մակնիշի կինոնկարահանման ապարատը և արտադրության համար անհրաժեշտ գործիքները:

Ստորադաս դատարաններն անտեսել են նաև 24.06.2010 թվականին Ռուբեն Քոչարի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանում ներկայացված այն փաստարկը, որ «Պանատոնիկ» մակնիշի կինոնկարահանման ապարատը նկարահանումից հետո իր կատարած աշխատանքի համար որպես վարձատրություն հանձնվելու էր իր սեփականությանը, և ինքն այն անսարք լինելու պատճառով տվել է վերանորոգման, որտեղից էլ հետագայում Միսակ-Նուբար Թերեղեկյանի որդին վերցրել է այն:

Նշված փաստի ապացուցման դատավարական բեռի բաշխման առումով Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ վերը նշված մեկնաբանությունը, գտնում է, որ ապօրինի տիրապետողի կողմից գույքը հետ վերադարձված լինելու փաստի ապացուցման դատավարական բեռը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի ուժով կրում է նման փաստարկ ներկայացրած կողմը:

3) *Դատարանի ակտի հիմնավորվածությունը.*

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին (*տես՝ Անժելա Ղազարյանը և այլոք ընդդեմ Շուշանիկ Սարգսյանի և մյուսների թիվ 3-1843(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի*

25.12.2007 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների **բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա** հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն **գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**, ինչպես նաև այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ որոշման հանգելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել **գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը**:

Վերոնշյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Միսակ-Նուբար Թեբելեկյանը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցներն ու հնարավորություններն օրենսդրությամբ իր վրա դրված ապացուցման պարտականությունը պատշաճ կատարելու համար, սակայն ստորադաս դատարանները գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար գործում առկա յուրաքանչյուր ապացույց չեն հետազոտել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները սխալ են որոշել գործով ապացուցման առարկան և սխալ են բաշխել ապացուցման բեռը կողմերի միջև, որպիսի պարագայում անհրաժեշտ է իրակասացնել գործի նոր քննություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշումը և գործը՝ Միսակ-Նուբար Թեբելեկյանի հայցի մասով ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԲԳ/0232/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/0232/02/11  
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Շուշիկ Ալեքսանյանի և Օսիկ Մալաքյանի  
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվակա-  
նի որոշման դեմ՝ ըստ հայցի Սեյրան Քոչարյանի ընդդեմ Օսիկ Մալաքյանի, Շուշիկ  
Ալեքսանյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի  
պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ ինքնակամ կառույցները քանդելու,  
աստիճանավանդակը տեղափոխելու և համասեփականության իրավունքով պատկանող  
հողամասն առանձնացնելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Շուշիկ  
Ալեքսանյանի ընդդեմ Սեյրան Քոչարյանի, երրորդ անձ Կոմիտեի՝ փոխհատուցում  
տրամադրելու և իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սեյրան Քոչարյանը պահանջել է Երևանի Կոմիտաս փողոցի  
1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում կառուցված ինքնակամ կառույցներն այն կատարած  
անձանց միջոցներով քանդել և հողամասը բերել նախկին տեսքին, իր պատուհանին կից  
աստիճանավանդակը տեղափոխել և համասեփականության իրավունքով պատկանող հո-  
ղամասն առանձնացնել:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Շուշիկ Ալեքսանյանը պահանջել է Երևանի

Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում գտնվող առանձնացվող գույքի անհամաչափությունը վերացնելու նպատակով պարտավորեցնել Սեյրան Քոչարյանին տրամադրելու 1.500.000 ՀՀ դրամ փոխհատուցում՝ 80,8քմ մակերեսով հողամասի համար, և փակելու իր կողմից օգտագործվող տարածքի վրա բացված պատուհանը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Դանիելյան) (այսուհետ՝ Դատարան) 03.04.2013 թվականի վճռով հայցը և հակընդդեմ հայցը մերժվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2013 թվականի որոշմամբ Սեյրան Քոչարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 03.04.2013 թվականի վճիռը մասնակի բեկանվել է և փոփոխվել. հայցը՝ ինքնակամ կառույցները քանդելու մասով, բավարարվել է՝ պարտավորեցվել է Օսիկ Մալաքյանին և Շուշիկ Ալեքսանյանին իրենց միջոցների հաշվին քանդել Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում կառուցած ինքնակամ կառույցները և հողամասը բերել նախկին տեսքին: Սեյրան Քոչարյանի պատուհանին կից աստիճանավանդակը տեղափոխելու և համասեփականության իրավունքով պատկանող հողամասն առանձնացնելու պահանջների մասով քաղաքացիական գործն ուղարկվել է նոր քննության: Վճիռը մնացած մասով թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Շուշիկ Ալեքսանյանը և Օսիկ Մալաքյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 169-րդ, 199-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարճառարանել են հեղուկալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը որպես ապացույց չի հետազոտել և չի գնահատել Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեի նախկին սեփականատերերի և հարևանների հայտարարությունները, վկաների ցուցմունքները և գործում առկա այլ ապացույցները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ եթե նույնիսկ վիճելի կառույցներն արտացոլված չեն 2005 թվականի սեփականության իրավունքի վկայականում, դա դեռևս չի ապացուցում այն փաստը, որ դրանք կառուցվել են 2005 թվականից հետո:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև այն հանգամանքին, որ հողամասում առկա Շուշիկ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը և աստիճանավանդակը՝ որպես օրինական կառույցներ, արտացոլված են վերջինիս դեռևս 22.04.1992 թվականին տրված սեփականության վկայագրում: Դարպասը, որը Վերաքննիչ դատարանը համարել է ինքնակամ կառույց, կառուցված է եղել դեռևս 1955 թվականին, հանդիսանում է հողամասը փողոցից սահմանագատող միակ կառույցը և միակ ելքը՝ ավտոտնակից դեպի փողոց մեքենայով դուրս գալու համար: Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և գնահատել նշված փաստերի վերաբերյալ վկաներ Գևորգ Խոշյանի, Սամվել Պապիկյանի ցուցմունքները, փոխարենն իր պատճառարանություններում հենվել է Կոմիտեի ներկայացուցչի և փորձագետի բացատրությունների վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ ՀՀ «Փորձաքննու-

---

թյունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացության համաձայն՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում կառուցված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2005 թվականը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Համաձայն Կոմիտեի կողմից 05.10.2005 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2042603 վկայականի՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 բնակելի տան նկատմամբ գրանցված է Սեյրան Քոչարյանի սեփականության իրավունքը, հիմք՝ նոտարի 11.03.1981 թվականի թիվ 1-1881 բնակելի տան մասի առուվաճառքի պայմանագիրը, 15.04.1993 թվականի թիվ 7/8 արձանագրությունը, գործկոմի 03.08.1993 թվականի թիվ 4-2667 նախագիծը: Բնակելի տան մակերեսը կազմում է 131,5քմ, հողամասի մակերեսը կազմում է 500քմ և հանդիսանում է ընդհանուր սեփականություն (**հատոր 1-ին, գ.թ. 13-18**):

2) Համաձայն Կոմիտեի կողմից 11.05.2007 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2245832 վկայականի՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 բնակելի տան նկատմամբ գրանցված է Օսիկ Մալաքյանի սեփականության իրավունքը, հիմք՝ 07.05.2007 թվականի թիվ 4306 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, 01.10.1991 թվականի թիվ 5-3690 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը: Բնակելի տան մակերեսը կազմում է 94,4քմ, հողամասի մակերեսը կազմում է 500քմ և հանդիսանում է ընդհանուր սեփականություն (**հատոր 1-ին, գ.թ. 42-45**):

3) Համաձայն Կոմիտեի կողմից 16.06.2005 թվականին տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1965066 վկայականի՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 բնակելի տան նկատմամբ գրանցված է Շուշիկ Ալեքսանյանի սեփականության իրավունքը, հիմք՝ նոտարի 21.04.1992 թվականի թիվ 1-2346 բնակելի տան մասի նվիրատվության պայմանագիրը: Բնակելի տան մակերեսը կազմում է 88,6քմ, հողամասի մակերեսը կազմում է 500քմ և հանդիսանում է ընդհանուր սեփականություն (**հատոր 1-ին, գ.թ. 46-47**):

4) Շուշիկ Ալեքսանյանը, Սեյրան Քոչարյանը, Նատալյա Դիլանյանը գրավոր համաձայնություն են տվել այն մասին, որ յուրաքանչյուրը Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 բնակելի տան իր ինքնակամ շինություններն օրինականացնի, որի համար ստորագրել են, իսկ վերջիններիս ստորագրության իսկությունը վավերացվել է 10.06.2005 թվականին Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար Կարինե Աղամյանի կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 41**):

6) Համաձայն ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2012 թվականի թիվ 11-1669 եզրակացության՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում տան հիմնական շենքի ծավալից դուրս կառուցված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2005 թվականը: Սեյրան Քոչարյանի պատուհանին կից գոյություն ունեցող՝ տան երկրորդ հարկ տանող աստիճանների առկա դիրքը չի առնչվում ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող որևէ նորմատիվային պահանջի ապահովման հետ: Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեի հողամասը, առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ



վնաս պատճառելու, ըստ հասանելի բաժնեմասերի հնարավոր չէ տեխնիկապես առանձնացնել: Այն հնարավոր է առանձնացնել՝ փաստացի իրավիճակից ելնելով, որի վերաբերյալ տարբերակը բերված է եզրակացության թիվ 5 հավելվածում (**հատոր 2-րդ, գ.թ. 2-24, 54-55**):

7) Ինքնակամ կառույցները քանդելու պայմաններում համասեփականատերերի միջև հողամասի բաժանման տարբերակների, ինչպես նաև Սեյրան Քոչարյանի տան պատուհանն օրինական լինելու և այն փակելու հնարավորության վերաբերյալ փորձագետի կողմից եզրակացություն չի տրվել (**հատոր 2-րդ, գ.թ. 13-14**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ինքնակամ կառույցը քանդել պարտավորեցնելու հայցերով սպացուցման առարկան կազմող փաստերին:*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ յուրաքանչյուր գործով սպացուցման առարկան ձևավորվում է ոչ միայն հայցի կամ դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերից, այլև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վկայակոչված հոդվածը, սահմանելով ինքնակամ կառույցի հասկացությունը, թվարկում է այն խախտումները, որոնցից որևէ մեկի առկայությունը պայմանավորում է կառույցի ինքնակամ բնույթը: Մասնավորապես, ինքնակամ կարող է համարվել այն շենքը, շինությունը կամ այլ կառույցը, որը *կառուցվել* կամ *վերակառուցվել* է.

օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում (հողահատկացում չի կատարվել կամ հողամասը տրամադրված է եղել այլ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար), կամ առանց թույլտվության (քաղաքաշինական փաստաթղթերի բացակայությամբ), կամ թույլտվությամբ սահմանված պայմանների խախտմամբ, կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման հետ կապված ռիսկերը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

---

Վկայակոչված իրավադրույթների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ ինքնակամ կառույցը քանդել պարտավորեցնելու պահանջներով դատարան կարող է դիմել այն սուբյեկտը, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտում է ինքնակամ կառույցը պահպանելը, իսկ ինքնակամ կառույցը քանդելու պարտավորություն կարող է դրվել այդ կառույցով զբաղեցված հողամասի սեփականատիրոջ վրա:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- վեճի առարկա կառույցը ինքնակամ է, թե ոչ: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված փաստը ենթակա է պարզման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորման համատեքստում.
- ում է պատկանում հողամասը, որի վրա գտնվում է ինքնակամ կառույցը.
- արդյոք ինքնակամ կառույցը պահպանելը խախտում է դատարան դիմած շահագրգիռ անձի որևէ իրավունք և օրենքով պահպանվող որևէ շահ:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ վերոնշյալ փաստերը կարող են հաստատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով ձեռք բերված բավարար ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտության և գնահատման արդյունքում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեի բնակելի տնով ծանրաբեռնված 500քմ մակերեսով հողամասն ընդհանուր սեփականության իրավունքով պատկանում է Շուշիկ Ալեքսանյանին, Սեյրան Քոչարյանին և Օսիկ Մալաքյանին: Վերոնշյալ բնակելի տան 88,6քմ մակերեսի սեփականատեր հանդիսանում է Շուշիկ Ալեքսանյանը, 131,5քմ մակերեսի սեփականատեր՝ Սեյրան Քոչարյանը, 94,4քմ մակերեսի սեփականատեր՝ Օսիկ Մալաքյանը:

Շուշիկ Ալեքսանյանը, Սեյրան Քոչարյանը, Նատալյա Դիլանյանը 10.06.2005 թվականին նոտարական կարգով համաձայնություն են տվել այն մասին, որ յուրաքանչյուրը Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 բնակելի տան իր ինքնակամ շինություններն օրինականացնի:

ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2012 թվականի թիվ 11-1669 եզրակացության համաձայն՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում տան հիմնական շենքի ծավալից դուրս կառուցված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2005 թվականը: Սեյրան Քոչարյանի պատուհանին կից գոյություն ունեցող՝ տան երկրորդ հարկ տանող աստիճանների առկա դիրքը չի առնչվում ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող որևէ նորմատիվային պահանջի ապահովման հետ:

Դատարանը հողամասի բաժանման պահանջի մասով հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեի համատեղ սեփականություն հանդիսացող 500քմ մակերեսով հողամասում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը որոշված չէ, այսինքն՝ այն համարվում է հավասար և սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքից բաժին առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնությունը բացակայում է, իսկ համաձայն ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2012 թվականի թիվ 11-1669 եզրակացության՝ Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեի հողամասն ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին առանց անհամաչափ վնաս պատճառելու, ըստ հասանելի բաժնեմասերի հնարավոր չէ տեխնիկապես առանձնացնել: Ինչ վերաբերում է նշված եզրակացությանը փաստացի իրավիճակից ելնելով եզրակացության թիվ 5 հավելվածում տրված եղանակով գույքն առանձնացնելու տարբերակին, ապա դրա վերաբերյալ կողմերը համաձայնության չեն եկել:

Անդրադառնալով ՀՀ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի 15.02.2012 թվականի թիվ 11-1669 եզրակացությանը կից հավելվածներում նշված 32,9քմ մակերեսով Շուշիկ Ալեքսանյանի ավտոտնակին կից պատն ու դարպասը և 10,8քմ մակերեսով Օսիկ Մալաքյանի տանը կից դռն ու պատը քանդել պարտավորեցնելու պահանջին՝ Դատարանն արձանագրել է, որ համաձայն դատաքննությամբ հետազոտված ապացույցների՝ նշված գույքը կառուցվել է 2005 թվականից առաջ, իսկ Շուշիկ Ալեքսանյանը, Սեյրան Քոչարյանը, Նատալյա Դիլանյանը 10.06.2005 թվականին Արաբկիրի նոտարական տարածքում նոտարական կարգով համաձայնություն են տվել այն մասին, որ յուրաքանչյուրը Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 բնակելի տան իր ինքնակամ շինություններն օրինականացնի: Պատճառաբանելով, որ հայցվորը չի ապացուցել պարիսպը 2005 թվականին տրված համաձայնությունից հետո կառուցված լինելու փաստը, Դատարանը գտել է, որ ինքնակամ կառույցները քանդել պարտավորեցնելու պահանջն իրավաչափ չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է աստիճանավանդակը տեղափոխել պարտավորեցնելու պահանջին, Դատարանը գտել է, որ այն ևս անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ համաձայն հետազոտված ապացույցների՝ աստիճանավանդակը հանդիսանում է օրինական կառույց և նման պայմաններում այն պատասխանողներին տեղափոխել պարտավորեցնելու հիմքեր չկան:

Վերաքննիչ դատարանը ինքնակամ կառույցները քանդելու մասով վերաքննիչ բողոքը բավարարելու և դատական ակտը փոփոխելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ նոտարական կարգով 10.06.2005 թվականին տրված համաձայնությունը, դրա հիման վրա և դրանից հետո Կոմիտեի կողմից Սեյրան Քոչարյանին, Օսիկ Մալաքյանին և Շուշիկ Ալեքսանյանին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները բավարար են եղել եզրահանգելու, որ փորձագիտական եզրակացության մեջ արտացոլված և համասեփականատերերի սեփականության իրավունքի վկայականներում չարտացոլված շինությունները ինքնակամ կառույցներ են, որոնք կառուցվել են համաձայնությունից հետո, ինչով խախտվել է համասեփականատերերից Սեյրան Քոչարյանի համասեփականության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ Դատարանը, ի խախտումն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի, չի գնահատել դատական նիստի ընթացքում Կոմիտեի ներկայացուցչի կողմից տրված բացատրությունն առ այն, որ 2005 թվականի համաձայնությունից հետո երկու անգամ կատարվել են չափագրման աշխատանքներ, և ներկայիս ինքնակամ կառույցները չեն եղել, ինչպես նաև փորձագետ Հ. Ավետիսյանի կողմից տրված բացատրությունն առ այն, որ Արաբկիր համայնքի Կոմիտաս փողոցի 1-ին նրբանցքի թիվ 20 հասցեում տան հիմնական շենքի ծավալից դուրս կառուցված ինքնակամ շինությունները մինչև 2005 թվականը կառուցված լինելու վերաբերյալ իր եզրակացությունը հիմնված է սույն գործով պատասխանողների՝ փորձաքննության ժամանակ արած հայտարարության վրա: Նշված բացատրությունների առկայության պայմաններում Դատարանը պետք է հանգեր հետևության, որ փորձագետի եզրակացությունն ամբողջական չէ, քանի որ տրված եզրակացությամբ փորձագետն ամրագրել է, որ կառույցներն ինքնակամ չեն, և հողամասի առանձնացման տարբերակը տրամադրել է՝ դիտելով, որ հասցեում առկա բոլոր կառույցներն օրինական են, հետևաբար փորձագետի կողմից չի տրամադրվել եզրակացություն հասցեում առկա հողամասի բաժանման տարբերակն ինքնակամ կառույցները քանդելու պայմաններում:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանի հետևությունները՝ ինքնակամ կառույցները քանդելու պահանջի

---

մասով, անհիմն են, չեն բխում սույն գործի փաստերից և հիմնված չեն գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

Այսպես՝ Վերաքննիչ դատարանը, համեմատելով վիճելի հասցեի համասեփականատերերի սեփականության իրավունքի գրանցման վկայականները և փորձագիտական եզրակացության հատակագծերը, արձանագրել է, որ «սեփականության իրավունքի վկայականներում չարտացոլված կառույցներն ինքնակամ են, խախտել են համասեփականատեր Սեյրան Քոչարյանի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ուստի ենթակա են քանդման»: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը պետք է հստակ նշեր, թե վիճելի հասցեի որ կառույցներն են իրականացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված որևէ պայմանի խախտմամբ, այսինքն՝ կառուցվել են առանց հողատեղագրման կամ թույլտվության կամ հողվածում նշված այլ խախտումներով, որքան է այդպիսի կառույցի (կառույցների) մակերեսը, այդ կառույցը պահպանելը որևէ կերպ խախտում է հայցվորի իրավունքները: Միայն նշված փաստերը բազմակողմանի և լիարժեք բացահայտելու արդյունքում Վերաքննիչ դատարանը կարող էր հետևություն անել հայցը՝ ինքնակամ կառույցները քանդելու պահանջի մասով, բավարարելու մասին: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նշված հարցադրման կապակցությամբ փորձագետի եզրակացությունն ամբողջական չէ, արդյունքում բավարար ապացույցների բացակայության պայմաններում եզրահանգել է, որ վիճելի հասցեում առկա են ինքնակամ կառույցներ: Հատկանշական է, որ Դատարանի վճիռը նշված մասով բեկանելով, փոփոխելով և հայցը բավարարելով՝ Վերաքննիչ դատարանն այդպես էլ իր որոշման մեջ չի նշել, թե որոնք են քանդման ենթակա՝ Շուշիկ Ալեքսանյանի, Սեյրան Քոչարյանի և Նատալյա Դիլանյանի միջև 10.06.2005 թվականի գրավոր համաձայնության կնքումից հետո կառուցված ինքնակամ կառույցները:

Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է նաև հայցվորի պատուհանին կից աստիճանավանդակը տեղափոխելու վերաբերյալ գործը նոր քննության ուղարկելու մասով, քանի որ գործում առկա են բավարար ապացույցներ այն մասին, որ աստիճանավանդակն օրինական կառույց է, իսկ աստիճանների առկա դիրքը չի առնչվում քաղաքաշինության բնագավառում գործող որևէ նորմատիվ պահանջի ապահովման հետ: Նման պայմաններում Դատարանն իրավացիորեն հայցը նշված մասով մերժել է, իսկ Վերաքննիչ դատարանը, այդ մասով գործը նոր քննության ուղարկելով, այդպես էլ չի հիմնավորել նոր քննության անհրաժեշտությունը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննարկվող մասով անհրաժեշտ է բեկանել Վերաքննիչ դատարանի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի վճիռին:

Ինչ վերաբերում է հողամասն առանձնացնելու պահանջի մասով գործը նոր քննության ուղարկելուն, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն ոչ ամբողջական է համարել այդ կապակցությամբ տրված փորձագետի եզրակացությունը: Քանի որ գործով պարզված չէ ինքնակամ կառույցների առկայության փաստը, իսկ հողամասի առանձնացման տարբերակները փորձագետի կողմից առաջարկվել են հողամասում առկա բոլոր շինություններն օրինական համարելու պարագայում, հետևաբար առկա չէ փորձագիտական եզրակացություն՝ ինքնակամ շինությունների առկայության և դրանց քանդման պարագայում հողամասի բաժիններն առանձնացնելու հնարավորության վերաբերյալ: Նման պայմաններում հողամասի առանձնացման պահանջի մասով անհրաժեշտ է գործի նոր քննություն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակի բեկանելու համար:

---

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2013 թվականի որոշման՝ Օսիկ Մալաքյանին և Շուշիկ Ալեքսանյանին իրենց միջոցների հաշվին Երևանի Կոմիտաս փողոցի 1-ին սրբանցքի թիվ 20 հասցեում կառուցած ինքնակամ կառույցները քանդել պարտավորեցնելու և հողամասը նախկին տեսքին բերելու մասը և այդ պահանջի մասով գործն ուղարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Բեկանել նույն որոշման՝ Սեյրան Քոչարյանի պատուհանին կից աստիճանավանդակը տեղափոխելու մասը և այդ պահանջի մասով օրինական ուժ տալ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.04.2013 թվականի վճռին:

Որոշման մնացած մասը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ-1/0074/02/11  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ-1/0074/02/11  
Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ս. Նազարյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՐԵՆՆԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Վազ քար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ «Օրինեթ Սթոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) հայցի ընդդեմ Ընկերության, երրորդ անձինք ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղապետարանի, ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գույքի ապօրինի տիրապետումը դադարեցնելու, գույքն ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, որոշակի գործողությունների կատարմանը պարտավորեցնելու, որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերության ապօրինի տիրապետումից հետ պահանջել և պարտավորեցնել Ընկերությանն ազատել 16.03.2010 թվականին կնքված վարձակալության իրավունքի վաճառքի թիվ 571 պայմանագրի հիման վրա իր կողմից ձեռք բերված ՀՀ Արարատի մարզի Գոռավան համայնքի Սարալանջի թիվ 1 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության Ցհա մակերեսով հողատարածքի մասը՝ վարձակալության իրավունքի գրանցման թիվ 2385893 վկայականով ամրագրված սահմանների և «Գեոդեզիական և քարտեզագիտական» կենտրոն ՊՈԱԿ-ի տրամադրած հողատարածքի կտորդինատների և գլխավոր հատակագծի սխեմայի համաձայն, նշված տարածքում գտնվող մեխանիզմերը և սարքավորումներն ապամոնտաժել և դուրս հանել Ցհա մակերեսով հողատարածքից, ձեռնպահ մնալ վերոգրյալ հողատարածք մուտք գործելուց կամ դրան առնչվող ցանկացած գործողությունների կատարումից:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) (այսուհետ՝ Դատարան) 31.07.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.11.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.07.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կազմակերպությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ, 277-րդ, 278-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 60-րդ, 62-րդ, 219-րդ, 220-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 29-րդ, 33-րդ, 40-րդ, 43-րդ հոդվածները, Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 16-րդ, 17-րդ հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անվավեր է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությանը ՀՀ Արարատի մարզի Գոռավան համայնքում գտնվող տրավերտինի և կավի հանքավայրի տեղամասից տրամադրված 8,7հա մակերեսով հողամասի նկատմամբ 08.04.2005 թվականից, իսկ «Գևայուզ» ՍՊԸ-ին սույն համայնքում գտնվող Ցհա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և արտադրական նշանակության տրամադրված հողամասի նկատմամբ 04.07.2006 թվականից կազմվել է գլխավոր հատակագծի սխեման, ինչպես նաև կատարվել են համապատասխան գրանցումներ: Ընդ որում, վերոգրյալ հատակագծերը հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից, ով իրավասու է հողամասի վերաբերյալ տրամադրել տեղեկություններ, և օգտվելով իր այդ իրավասությունից՝ ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղապետը հայտնել է, որ Ընկերությանը և Կազմակերպությանը տարանջատում է Ցհա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածք: Այսինքն՝ ՀՀ Արարատի մարզի Գոռավան համայնքի ղեկավարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմել և հաստատել է համայնքի գլխավոր հատակագիծը, քաղաքաշինական գոտիավորման նախագիծն ու հողերի օգտագործման սխեման, ինչպես նաև դրանց համապատասխան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատել է Ընկերությանը և «Գևայուզ» ՍՊԸ-ին տրամադրված հողերի օգտագործման սխեմաները: Հետևաբար, սույն գործում առկա Շախարարության աշխատակազմի ղեկավարի 27.08.2010 թվականի թիվ 08-Ա հրամանի հիմքով ստեղծված հանձնաժողովի 01.09.2010 թվականի արձանագրությունը, ՀՀ էներգետիկայի և բնական

---

պաշարների նախարարի 15.10.2010 թվականի թիվ Ե-2/14-10 գրությունը, Նախարարության աշխատակազմի ընդերքի վերահսկողության պետական տեսչության 30.12.2010 թվականի գրությունը և Նախարարության աշխատակազմի ղեկավարի 27.01.2011 թվականի թիվ 07/26.2/240-11 գրությունը թույլատրելի և վերաբերելի ապացույցներ չեն: Դեռ ավելին, Նախարարության աշխատակազմի ղեկավարի 27.08.2010 թվականի թիվ 08-Ա հրամանի հիմքով ստեղծված հանձնաժողովի 01.09.2010 թվականի արձանագրությունը ՀՀ վարչական դատարանի 02.06.2011 թվականի թիվ ՎԴ-3/0098/05/11 վճռով ճանաչվել է անվավեր:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ սույն գործում առկա են «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությունը՝ անհրաժեշտ ելակետային տվյալների անբավարար լինելու պատճառով Դատարանի որոշումն անկատար թողնելու մասին, «Հողշինմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից կատարված չափագրումները՝ ներկայիս բացահայտված տարածքն Ընկերության հողահատկացման սահմաններում գտնվելու մասին, սակայն նման պայմաններում էլ Դատարանն իր նախաձեռնությամբ չի նշանակել փորձաքննություն, հիմք է ընդունել իրարամերձ ու հակասական գրությունները և գտել է, որ առկա է Ընկերության կողմից Կազմակերպությանը պատկանող հողամասի համադրում: Ավելին, սույն գործում առկա փորձագետի 08.02.2012 թվականի եզրակացությամբ նշվել է, որ 1981 թվականին կազմված երկրաբանական քարտեզը չի արտահայտում ներկայիս իրավիճակը (տրավերտինների արդյունահանման, լցակայանառաջացման հետևանքով տարածքի ռելիեֆը փոխվել է, առաջացել են նոր հանքախորշեր, փոխվել է դաշտամիջյան ճանապարհների տեղադիրքը, չկան էլեկտրական հոսանքագծերի հենասյունները և այլն), իսկ նշված փոփոխությունները հնարավորություն չեն տալիս նույնականացնել երկրաբանական քարտեզում ներկայացված իրավիճակը ներկա իրավիճակի հետ, որի արդյունքում սխալվելու հնարավորությունը մեծ է: Այսինքն՝ Դատարանի կողմից բազմաթիվ հակասական գրավոր փաստաթղթերի և փորձագետների կողմից պահանջվող մասնագիտական հարցին սպառնիչ պատասխան տալու հնարավորություն չունենալու պայմաններում հիմք են ընդունվել գրություններում արծարծված փաստերը, և կայացվել է անհիմն դատական ակտ՝ չնշանակելով լրացուցիչ փորձաքննություն, որպեսզի բացահայտվեր գործի քննությունը վերսկսելու համար հիմք հանդիսացած հանգամանքը՝ կողմերի կողմից զբաղեցված տարածքների՝ բնության մեջ տեղակայվածությունը պարզելու վերաբերյալ: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը պատշաճ իրավական գնահատական չի տվել փորձագետի 08.02.2012 թվականի եզրակացությանը և այն հանգամանքին, որ Կազմակերպության կողմից չի հիմնավորվել իր խախտված իրավունքի առկայության փաստը, թե իր տարածքը բնության մեջ կոնկրետ որ մասում է գտնվում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.11.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ այն փոփոխել՝ հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները**

Ընկերության կողմից բերված վճռաբեկ բողոքում նշված հիմքերը, հիմնավորումները, ինչպես նաև իրավական նորմերով սահմանված պահանջները հիմնավորված չեն, քանի որ Կազմակերպության կողմից բերված փաստերից, դրանք հիմնավորող ապացույցներից և իրավական վերլուծությունից հետևում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից պահպանվել են դատաքննությամբ հիմնավորված փաստարկները և իրավական նորմերով սահմանված պահանջները, որպիսի պարագայում Վերաքննիչ դատարանի



կայացրած դատական ակտն օրինական և հիմնավորված է, իսկ բերված վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ, և այն ենթակա է մերժման:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 16.03.2010 թվականի «Վարձակալության իրավունքի վաճառքի» պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ «Գուսյուզ» ՍՊԸ-ն վաճառել է ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղական համայնքի կողմից վարձակալության պայմանագրով իրեն հանձնված ՀՀ Արարատի մարզի Գոռավան գյուղում գտնվող Ցիա մակերեսով հողի վարձակալության իրավունքը, իսկ Կազմակերպությունը գնել է վարձակալության պայմանագրով սահմանված իրավունքները և պարտավորությունները (**հատոր 1-ին, գ.թ. 33**):

2) 19.03.2010 թվականի «Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման» թիվ 2385893 վկայականի համաձայն՝ ՀՀ Արարատի մարզի Գոռավան գյուղի Սարալանջի թիվ 1 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակությամբ հողատարածքի նկատմամբ 16.03.2010 թվականի վարձակալության իրավունքի վաճառքի թիվ 571 պայմանագրի հիման վրա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 03031-2-2 մատյանի 000255 համարի տակ գրանցված է Կազմակերպության վարձակալության իրավունքը:

Նույն վկայականի «Հողամասի տվյալները» բաժնում որպես հողամասի չափ նշված է՝ Ցիա (**հատոր 1-ին, գ.թ. 9-11**):

3) Նախարարության աշխատակազմի ղեկավարի 27.08.2010 թվականի թիվ 08-Ա հրամանի հիման վրա ստեղծված հանձնաժողովի 01.09.2010 թվականի արձանագրության համաձայն՝ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ՝

- Ընկերությանը թիվ 094 լիցենզային պայմանագրով տրամադրված տեղամասն արտահայտվում է թվով 4 եզրագծային կողողինատներով, իսկ նույն պայմանագրի 1-ին հավելվածի սխեմատիկ քարտեզով տրամադրված տեղամասը պատկերված է թվով 5 եզրագծային ծայրակետային կողողինատներով:
- Պայմանագրում տրամադրված տեղամասը եզրագծվում է պայմանական եզրագծային կողողինատներով, որոնցից 2-րդ կետի կողողինատները դուրս են գտնվում Գոռավան տեղամասի հաստատված պաշարների եզրագծի սահմաններից: Բացի այդ, 1-4-րդ և 2-3-րդ եզրագծերը խաչվում են, որի պատճառով կետերի հերթական դասավորվածության արդյունքում անտրամաբանական է դառնում տրամադրված տեղամասն ու նրա զբաղեցրած մակերեսը:

Ուստի, հանձնաժողովն ի վիճակի կլինի առաջադրված հանձնարարականին լուծում տալ Ընկերության թիվ 094 լիցենզային պայմանագրում առկա նշված թերությունները, անհամապատասխանությունները և 2-րդ կետի կողողինատների անճշտությունը վերացնելու՝ այս պահին Ընկերության կողմից ընդերքի շահագործման տեղամասը գտնվում է թիվ 094 լիցենզային պայմանագրով իրեն տրամադրված տեղամասի կողողինատներից դուրս:

Այսինքն՝ Ընկերությունն այն տարածքի համար, որտեղ իրականացնում է ընդերքշահագործման աշխատանքներ, չունի համապատասխան թույլտվություն (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

4) Նախարարության աշխատակազմի ղեկավարի 27.01.2011 թվականի թիվ

---

07/26.2/240-11 գրության համաձայն՝ երկու (Կազմակերպությանը տրամադրված հողամասի գլխավոր հատակագծով հատկացված 8հա մակերեսով և Ընկերության կողմից փաստացի շահագործում իրականացրած տեղամասը՝ 0,86հա մակերեսով) տարածքները 0,53հա մակերեսով իրար ծածկում են (**հատոր 1-ին, գ.թ. 15**):

5) ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղապետի 08.02.2011 թվականի թիվ 15 գրության համաձայն՝ Ընկերությանը և Կազմակերպությանը տարանջատում է 2հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածք:

ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղապետարանի հաշվեկշռում թիվ 246-001 տարածքում գտնվող 23,34հա մակերեսով արդյունաբերական և ընդերքօգտագործման տարածքի հողերը գտնվում են ՀՀ Արարատի մարզի Գոռավան համայնքի հողային հաշվեկշռում և տրված են վարձակալությամբ:

Կազմակերպությունը հողի վարձակալության առուվանձառքի պայմանագիրը կնքելուց հետո ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղապետարանին հողատարածքի սահմանների անճշտության կապակցությամբ գրավոր դիմում չի ներկայացրել (**հատոր 1-ին, գ.թ. 48**):

6) ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վեդու տարածքային ստորաբաժանման ղեկավարի 11.02.2011 թվականի թիվ 453 գրության համաձայն՝ պետական գրանցման հիմք հանդիսացող հատակագծերը կազմված են առանց կոորդինատային տվյալների, ըստ այդմ՝ գրանցված իրավունքները հնարավոր չէ ճշգրիտ տեղադրել էլեկտրոնային քարտեզում: Ճշգրիտ կոորդինատային տվյալների առկայության դեպքում միայն կարող է պարզվել՝ հողատարածքների միջև համադրում կա, թե ոչ, և ինչպես են հարևանում Ընկերության և Կազմակերպության անվամբ գրանցված հողատարածքները (**հատոր 1-ին, գ.թ. 74**):

7) Դատարանի 11.08.2011 թվականի որոշմամբ սույն գործով նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, և փորձագետներին պարզաբանման համար առաջադրվել են հետևյալ հարցերը՝

- Համապատասխանում է արդյոք Կազմակերպության կողմից փաստացի զբաղեցված տարածքը վերջինիս վարձակալության իրավունքի վկայականում և գլխավոր հատակագծում ամրագրված տվյալներին՝ չափերին և դիրքին:
- Համապատասխանում է արդյոք Ընկերության կողմից փաստացի զբաղեցված տարածքը վերջինիս վարձակալության իրավունքի վկայականում և գլխավոր հատակագծում ամրագրված տվյալներին՝ չափերին և դիրքին:
- Համապատասխանում է արդյոք Ընկերության կողմից փաստացի զբաղեցված տարածքը վերջինիս լիցենզիոն թիվ 094 պայմանագրով ամրագրված տարածքին, և նրա կողմից փաստացի արդյունահանված տարածքը որքանով է համադրվում լիցենզիոն թիվ 094 պայմանագրով իրեն ամրագրված տարածքին:
- Առկա է արդյոք հողամասի ինքնակամ զավթում Կազմակերպության և (կամ) Ընկերության կողմից, և եթե այո, ապա որի կողմից, ինչ չափով, ում սեփականության կամ (և կամ) վարձակալության իրավունքով տրամադրված հողամասից է ինքնակամ զավթվել:
- Ներկա պահին Ընկերությանը պատկանող մեխանիզմները և սարքավորումներն ում սեփականության կամ (և կամ) վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասում են գտնվում:
- Համադրվում են արդյոք Կազմակերպությանը և Ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող հողամասերը, և եթե այո, ապա ինչ չափով և ինչի արդյունք է այդ համադրումը:

Նույն որոշմամբ սույն գործի վարույթը կատարվել է՝ մինչև փորձաքննության եզրա-

կացությունը ստանալը (**հատոր 2-րդ, գ.թ. 28-29**):

8) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 29.06.2012 թվականի փորձագետի թիվ 11-2744 եզրակացության համաձայն՝ փորձաքննությանն առաջադրված հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ է նաև Դատարանի որոշմամբ փորձագետ ճանաչված «Գեոդեզիական և քարտեզագիտական» ՊՈԱԿ-ի բաժնի պետ Ջորի Շահինյանի եզրակացությունը, սակայն նա հայտնել է, որ ծանոթ չէ որոշմանը և իրեն ներգրավել են առանց իր գիտության, միաժամանակ հրաժարվում է մասնագիտական եզրակացություն տրամադրելուց: Նույն եզրակացությամբ Դատարանի 11.08.2011 թվականի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ որոշման պահանջները թողնվել են անկատար՝ անհրաժեշտ ելակետային տվյալների անբավարար լինելու պատճառով (**հատոր 2-րդ, գ.թ. 38-42**):

9) Դատարանի 03.07.2012 թվականի որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 46**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե արդյոք դատարանի որոշմամբ նշանակված փորձաքննության արդյունքում փորձագետի եզրակացությամբ այդ որոշումն անկատար թողնելու, այսինքն՝ փորձաքննությամբ դատարանի որոշմամբ սահմանված հարցերը պարզաբանված չլինելու պայմաններում դատարանն իրավասու է, վերսկսելով գործի վարույթը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով.
- 2) փորձագետների եզրակացություններով.
- 3) վկաների ցուցմունքներով.
- 4) գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ փորձաքննություն նշանակելու մասին դատարանը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ կետի

---

համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով մինևույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացված փորձագիտական հաստատության):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե նշանակել է փորձաքննություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանայույց հետո:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը, իսկ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանն իրավունք ունի նաև նշանակել լրացուցիչ փորձաքննություն: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ: Դրա արդյունքների նկատմամբ դատարանը պարտավոր է լինել հետևողական, որպիսի հետևողականության դեպքում դատարանը չի կարող փորձաքննություն նշանակելու վերաբերյալ իր իսկ որոշմամբ սահմանված հարցերը պարզաբանված չլինելու պայմաններում, վերսկսելով կասեցված գործի վարույթը, կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ, քանի որ այդ դեպքում հատուկ գիտելիքներ պահանջող հարցերը կմնան չպարզաբանված:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման սխալից խուսափելու նպատակով դատարանը պետք է ակտիվորեն օգտագործի իր դատավարական լիազորությունները՝ գործով լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասով: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված լրացուցիչ փորձաքննության նշանակումը թեև դատարանի բացառիկ լիազորությունն է, սակայն դատարանն իր այդ լիազորությունն իրականացնելիս պարտավոր է ապահովել և երաշխավորել նույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմանը հանգելու պարտականության լիարժեք իրականացումը: Հակառակ դեպքում՝ փորձաքննություն նշանակելու հիմքով մինչև փորձագիտական եզրակացություն ստանալը գործի վարույթի կասեցումն ըստ էության կկրի ձևական բնույթ և չի ծառայի իր նպատակին: Արդյունքում նման իրավիճակը կարող է հանգեցնել անձի՝ ողջամիտ ժամկետում իր գործի քննության սահմանադրորեն երաշխավորված իրավունքի խախտմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 11.08.2011 թվականի որոշմամբ նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, այդ նպատակով փորձագետներին պարզաբանման համար առաջադրվել են որոշակի հարցեր, և կասեցվել է գործի վարույթը, սակայն «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 29.06.2012 թվականի փորձագետի թիվ 11-2744 եզրակացությամբ հայտնվել է, որ Դատարանի որոշմամբ փորձագետ ճանաչված «Գեոդեզիական և քարտեզագիտական» ՊՈԱԿ-ի

բաժնի պետ Ջորի Շահինյանը հրաժարվում է մասնագիտական եզրակացություն տրամադրելուց, և Դատարանի 11.08.2011 թվականի որոշման պահանջները (հարցերը) թողնվել են անկատար՝ հիմքում դնելով անհրաժեշտ ելակետային տվյալների անբավարար լինելու հանգամանքը, որից հետո էլ Դատարանի 03.07.2012 թվականի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և կայացվել է վճիռ (գործն ըստ էության լուծող դատական ակտ)՝ հայցը բավարարելու տեսքով:

Վերոնշյալ դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, իր իսկ կայացրած որոշմամբ նշանակելով փորձաքննություն և այդ նպատակից ելնելով փորձագետներին պարզաբանման համար առաջադրելով որոշակի հարցեր, փորձաքննության արդյունքների նկատմամբ չի եղել հետևողական, ինչից հետևում է, որ Դատարանի կողմից փորձաքննության նշանակումը կրել է ձևական բնույթ, որն ազդել է գործի ելքի վրա, քանի որ քննության ժամանակ ծագած հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանված չլինելու պայմաններում սույն գործով հնարավոր չէ պարզել գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև սույն վեճի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Տվյալ դեպքում փորձագետի կողմից փորձաքննության չիրականացումը և փորձագիտական եզրակացության չտրամադրումը պայմանավորված է եղել Դատարանի կողմից փորձագետ ճանաչված անձին փորձաքննության իրականացման համար ելակետային տվյալների ոչ բավարար տրամադրման հետ, որպիսի հանգամանքը չէր բացառում Դատարանի կողմից լրացուցիչ ելակետային տվյալների տրամադրումը կամ փորձաքննության իրականացումն այլ անձի կամ կազմակերպության հանձնարարումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանի կողմից նշանակված փորձաքննության պայմաններում փորձագետի կողմից փորձագիտական եզրակացություն չտրամադրելու պայմաններում Դատարանը կարող էր ավարտել գործի վարույթը միայն այն դեպքում, երբ անհնարին էր փորձագետին անհրաժեշտ ելակետային տվյալների տրամադրումը կամ չկային համապատասխան փորձագետներ: Ընդ որում, այն դեպքերում, երբ փորձագետին անհրաժեշտ տվյալները գտնվում են դատավարության մասնակիցների տիրապետման ներքո, ապա դրանց չտրամադրման դեպքում Դատարանն ապացուցման կանոններին համապատասխան պետք է անդրադառնա դրա բացասական հետևանքներին:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Դատարանը, վերսկսելով գործի վարույթը, հետամուտ չի եղել համոզվելու, թե փորձագետին անհրաժեշտ տվյալները հնարավոր է տրամադրել, թե՛ ոչ, կամ առկա տվյալներով այլ փորձագետ կարող է տալ փորձագիտական եզրակացություն, թե՛ ոչ, ու այդ պայմաններում ավարտել է գործի վարույթը՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները որոշելով թերի ապացույցներով, որպիսի հանգամանքներն էլ անտեսվել են Վերաքննիչ դատարանի կողմից:

*Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքում վկայակոչված մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Դատարանի կողմից թույլ չորված նշված խախտման, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի կողմից դրա անտեսման պայմաններում դրանք չունենալով պահին չեն կարող դառնալ քննության առարկա:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

---

Ելևելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՇԴ3/0325/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ3/0325/02/11

Նախագահող դատավոր՝ Ի. Վարդանյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հենրիկ Երիցյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հենրիկ Երիցյանի ընդդեմ Մերուժան Գևորգյանի, Նուշիկ Մնացյանի, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ Գյումրու նոտարական տարածքի նոտար Ռոբերտ Մուկուչյանի (այսուհետ՝ Նոտար)՝ որպես շինծու գործարք անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագիրն առաջին և ճանաչելու և իրավական հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հենրիկ Երիցյանը պահանջել է առաջին և ճանաչել 28.08.2009 թվականի անշարժ գույքի առուվաճառքի և գրավի թիվ N1C 133102 պայմանագիրը:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Մնացյան) (այսուհետ՝ Դատարան) 28.12.2012 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 04.04.2013 թվականի որոշմամբ Հենրիկ Երիցյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 28.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հենրիկ Երիցյանը:

---

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ, 304-րդ, 306-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառել, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ, 47-րդ, 49-րդ, 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Հենրիկ Երիցյանը դատաքննության ընթացքում ներկայացրել է Մերուծան Ղզրոյանի անվամբ ստացված վարկի մայր գումարը և տոկոսները վճարելու վերաբերյալ բանկային անդորրագրերը: Վարկի գումարը Հենրիկ Երիցյանի և նրա ազգականների կողմից վճարված լինելու փաստը հիմնավորելու համար Հենրիկ Երիցյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ կետով միջնորդել է Ընկերությունից պահանջել անդորրագրերի այն օրինակները, որոնց վրա առկա են վճարումները կատարած անձանց ստորագրությունները, քանի որ միայն այդ կերպ կարող էր հաստատվել, որ վարկը և դրա տոկոսները Մերուծան Ղզրոյանի կողմից չի վճարվել: Սակայն Դատարանն անհիմն կերպով մերժել է միջնորդությունը՝ սահմանափակելով օրենքով սահմանված կարգով ապացույցներ ձեռք բերելու իրավունքը: Ավելին, թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը չեն պարզել, թե վարկի գումարն ու տոկոսները վճարելու վերաբերյալ անդորրագրերն ինչպես են հայտնվել Հենրիկ Երիցյանի մոտ: Բացի այդ չի պարզվել կարևոր մի հանգամանք ևս, թե վճարման անդորրագրերն ինչու են բացակայել վարկային գործից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ Դատարանը մերժել է նաև Հենրիկ Երիցյանի կնոջ՝ Անահիտ Երիցյանի բջջային հեռախոսահամարին Ընկերության աշխատակիցների կատարած հեռախոսազանգերի վերծանումները պահանջելու վերաբերյալ միջնորդությունը, որոնցով կհաստատվեր, որ Ընկերության աշխատակիցները կատարած հեռախոսազանգերով Անահիտ Երիցյանին անհանգստացրել են վարկի մարման համար: Նշված միջնորդությունները բավարարելու և համապատասխան ապացույցները պահանջելու դեպքում հնարավորություն կստեղծվեր ապացուցելու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստը, որ Հենրիկ Երիցյանը և Էմմա Պապոյանն իրականում ցանկություն չեն ունեցել վաճառելու բնակարանը: Հակառակ պարագայում Հենրիկ Երիցյանը չէր վճարի վարկի գումարները:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, անտեսել է, որ Դատարանը որպես վկա չի հրավիրել և չի հարցաքննել Ահարոն Իսկանդարյանին, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման: Այսինքն՝ հայցվորի միջնորդություններն անհիմն մերժելու, Ահարոն Իսկանդարյանին որպես վկա չհարցաքննելու արդյունքում չի պարզվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն հանգամանքը, որ վիճարկվող գործարքը կնքվել է առանց իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 04.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հենրիկ Երիցյանի, Էմմա Պապոյանի՝ որպես վաճառողներ, Մերուծան Ղզրոյանի՝

---



որպես գնորդ-գրավատու-վարկառու, Նուշիկ Մնացյանի՝ որպես գնորդ-գրավատու և Ընկերության միջև 28.08.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի թիվ NIC 133102 պայմանագրի համաձայն՝ Հենրիկ Երիցյանը և Էմմա Պապոյանը վաճառել, իսկ Մերուժան Ղզրոյանը և Նուշիկ Մնացյանը գնել են Արթիկի Տեղյան փողոցի թիվ 11 հասցեի բնակելի տունը: Անշարժ գույքի ձեռքբերման նպատակով Ընկերության և գնորդի միջև և 28.08.2009 թվականին Գյումրի քաղաքում կնքված թիվ 215083 վարկային պայմանագրով Ընկերության հանդեպ գնորդի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով նույն բնակելի տունը գրավադրել է հոգուտ Ընկերության **(հատոր 3-րդ, գ.թ. 123-126):**

2) 31.08.2009 թվականին Ընկերության և Մերուժան Ղզրոյանի միջև կնքված անշարժ գույքի գրավադրմամբ վարկավորման թիվ Վ-215083 պայմանագրով Ընկերությունը Մերուժան Ղզրոյանին տրամադրել է 17.500 ԱՄՆ դոլար վարկ **(հատոր 3-րդ, գ.թ. 118-120):**

3) 02.09.2009 թվականի հանձնարարականով Մերուժան Ղզրոյանն Ընկերությանը հանձնարարել է իր հաշվից Հենրիկ Երիցյանին վճարել անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագրով սահմանված գումարի մնացած մասը՝ 17.500 ԱՄՆ դոլար: Նշված գումարի ստացման փաստը Հենրիկ Երիցյանը հաստատել է 02.09.2009 թվականին տրված ստացականով **(հատոր 3-րդ, գ.թ. 127):**

4) Հենրիկ Երիցյանը հայցադիմումին կից ներկայացրել է վարկի մարման թվով 15 անդորրագրեր, որոնց վրա բացակայում են վճարումները կատարած անձի ստորագրությունը **(հատոր 1-ին, գ.թ. 7-22):**

5) Հենրիկ Երիցյանի ներկայացուցչին հասցեագրված Ընկերության 17.08.2012 թվականի թիվ 1931 գրության համաձայն՝ ... Ձեր կողմից պահանջվող տեղեկությունները հանդիսանում են բանկային գաղտնիք և կարող են տրամադրվել միայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով **(հատոր 3-րդ, գ.թ. 101):**

6) Դատարանի 22.10.2012 թվականի որոշմամբ բավարարվել է Հենրիկ Երիցյանի ներկայացուցչի միջնորդությունը, և որոշվել է Ընկերությունից պահանջել 28.08.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագրի շրջանակներում կազմված ամբողջ բանկային գործը՝ դրանց ծանոթանալու և անհրաժեշտ փաստաթղթերի օրինակներ ստանալու համար **(հատոր 3-րդ, գ.թ. 113-114):**

7) Ընկերության կողմից ներկայացված բանկային գործում բացակայել են վարկի գումարը և տոկոսները վճարելու վերաբերյալ անդորրագրերը **(հատոր 3-րդ, գ.թ. 117):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝*

*- ապացույց պահանջելու ընթացակարգի իրավակարգավորման առաձևահարկություններին,*

*- վկա կանչելու միջնորդությունը մերժելու որոշման իրավաչափությանը:*

---

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Շույն հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ կողմերն իրավունք չունեն ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետազոտմանը և գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը: Ման փաստերի առկայության դեպքում դատարանը խոչընդոտող կողմի վրա է դնում հակառակը ապացուցելու պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք: Շույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը **պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան:** Միջնորդությունում պետք է նշվեն ապացույցը, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել այդ ապացույցով, ինչպես նաև ապացույցի գտնվելու վայրը, եթե այն հայտնի է:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում ... կողմերի միջնորդությամբ, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ իր նախաձեռնությամբ, պահանջում է անհրաժեշտ ապացույցներ, լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կանչելու, թարգմանիչ ներգրավելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու պարտականությունը կրում են կողմերը՝ ապացուցման բեռի բաշխմանը համամասնորեն: Դատավարական օրենքը դատարանին պարտավորեցնում է միայն կողմերի միջնորդությամբ օժանդակել ապացույցների ձեռքբերման հարցում: Ման միջնորդության ներկայացման համար նախապայման է հանդիսանում այն, որ միջնորդող կողմը պետք է հիմնավորի (ապացուցի), որ չունի հնարավորություն ինքնուրույն ձեռք բերելու ապացույցները: Միջնորդությունը պետք է պարունակի կոնկրետ տեղեկություն հայցվող ապացույցի, ապացուցման ենթակա փաստի, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև ապացույցի գտնվելու վայրի վերաբերյալ: Միջնորդությունը ոչ հստակ լինելու դեպքում դատարանը, ելնելով գործի քննության արդյունավետությունից, կարող է պահանջել միջնորդություն ներկայացրած կողմին հստակեցնել այն:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «բանկային անդորրագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարկի և տոկոսի մարումները կատարվել են Մերուծան ԴՂրոյանի անվամբ, սշում չկա Հենրիկ Երիցյանի կողմից վճարումներ կատարելու մասին, ուստի բանկային անդորրագրերը բողոքաբերի մոտ գտնվելը չի կարող մեկ այլ գործարքի քողարկման նպատակով կնքված գործարքի մասին վկայել: Ավելին, Դատարանը 22.10.2012 թվականի որոշմամբ բավարարել է հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը, Ընկերությունից պահանջել է դատարան ներկայացնել 28.08.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի թիվ N1C 133102 պայմանագրի շրջանակներում կազմված ամբողջ բանկային գործը՝ դրանց ծանոթանալու և անհրաժեշտ փաստաթղթերի օրինակները ստանալու համար: Ընդ որում, ներկայացված բանկային գործում բացակայում է բողոքաբերի վկայակոչած փաստերը հիմնավորող որևէ ապացույց: Հետևում է, որ բողոքաբերի կողմից ներկայացված Մերուծան ԴՂրոյանի անվամբ կատարված վարկի և տոկոսի մարումների բանկային

անդորրագրերը դեռևս չեն վկայում այն մասին, որ վերջինս խնդրո առարկա բնակարանի նկատմամբ ունեցել է որևէ իրավունք, կամ որ կողմերի կամքն իրականում ուղղված չի եղել առուվաճառքի և գրավի թիվ NIC 133102 պայմանագրի կնքմանը»:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հենրիկ Երիցյանը հայցադիմումին կից ներկայացրել է վարկի մարման թվով 15 անդորրագրեր, որոնց վրա բացակայում են վճարումները կատարած անձի ստորագրությունը: Ընկերությունն իր 17.08.2012 թվականի թիվ 1931 գրությամբ, ի պատասխան Հենրիկ Երիցյանի՝ վճարումների անդորրագրերը տրամադրելու դիմումի, հայտնել է, որ պահանջվող տեղեկությունները հանդիսանում են բանկային գաղտնիք և կարող են տրամադրվել միայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Դատարանի 22.10.2012 թվականի որոշմամբ բավարարվել է Հենրիկ Երիցյանի ներկայացուցչի միջնորդությունը և որոշվել է Ընկերությունից պահանջել 28.08.2009 թվականին կնքված անշարժ գույքի առուվաճառքի և գրավի պայմանագրի շրջանակներում կազմված ամբողջ բանկային գործը՝ դրանց ծանոթանալու և անհրաժեշտ փաստաթղթերի օրինակներ ստանալու համար, սակայն Ընկերության կողմից ներկայացված բանկային գործում բացակայել են վարկի գումարը և տոկոսները վճարելու վերաբերյալ անդորրագրերը, որոնք պետք է ստարագրված լինեն վճարումները կատարած անձի կամ անձանց կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի 22.10.2012 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի ուժով պարտադիր է իրավունքի բոլոր սուբյեկտների համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Միջնորդությունը ներկայացնելիս Հենրիկ Երիցյանը հիմնավորել է, որ անհրաժեշտ անդորրագրերը հնարավորություն չունի ներկայացնելու, քանի որ Ընկերությունը, հիմք ընդունելով «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը, մերժել է դրանց տրամադրումը: Այդ ապացույցները բողոքաբերը պետք է ներկայացներ ի հիմնավորումն փաստի, որ վճարումները կատարել է ինքը: Վերաքննիչ դատարանը, նշելով, որ բանկային գործում բացակայում է բողոքաբերի վկայակոչած փաստերը հիմնավորող որևէ ապացույց, անտեսել է, որ Դատարանը չի ձեռնարկել որևէ քայլ, որն ուղղված կլիներ պարզելու, թե վճարման անդորրագրերն ինչու են բացակայել վարկային գործից: Իսկ առանց վարկի գումարը և տոկոսները վճարելու վերաբերյալ անդորրագրերի առկայության հարցը լուծելու, գործում առկա բոլոր ապացույցների հետ հետազոտելու և համադրելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված պարտականությունը կատարելու պայմաններում, հնարավոր չէր պարզել վճարումները կատարած անձանց, ինչպես նաև անդորրագրերը Հենրիկ Երիցյանի տիրապետության տակ հայտնվելու հանգամանքները, առավել ևս, որ Հենրիկ Երիցյանի կողմից վիճարկվում է վարկի գումարը և տոկոսները Մերուժան Ղզրոյանի կողմից վճարված լինելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանը, ելնելով սույն գործի փաստերից, հարկ է համարում նշել, որ ապացույց պահանջելու միջնորդության հիմնավորումներում բողոքաբերը նշել է ինչպես պահանջվող ապացույցը, այն ներկայացնելու անհնարիությունը, այնպես էլ այն փաստը, որի հաստատման համար անհրաժեշտ է պահանջվող ապացույցը: Մասնավորապես՝ Հենրիկ Երիցյանի ներկայացրած միջնորդությունն ուղղված է եղել վճարման անդորրագրերի ներկայացմանը:

Այս առումով Վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն է, որ անդորրագրերի բացակայության փաստի բացասական հետևանքները ՀՀ քաղաքացիական դատավարու-

---

թյան օրենսգրքի 48-րդ հոդվածի 7-րդ կետի ուժով կրում է այն կողմը, ով պարտավոր էր ներկայացնել դրանք:

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը վկա կանչում է կողմի միջնորդությամբ: Վկա հրավիրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս պետք է նշվի այն փաստը, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվի, ինչպես նաև վկայի անունը, հասցեն, որով նա պետք է կանչվի դատարան: Բացառիկ դեպքերում դատարանը կարող է վկա կանչել իր նախաձեռնությամբ:

Նշված դրույթից հետևում է, որ վկայի ցուցմունքի՝ որպես ապացույցի հետազոտումն իրենից ներկայացնում է միջնորդավորված դատավարական ընթացակարգ, երբ կողմի՝ իր դատավարական իրավունքի իրացումը՝ ապացույց ներկայացնելը, ուղղակիորեն պայմանավորված է դատարանի լիազորությամբ՝ բավարարել կամ մերժել վկա հրավիրելու միջնորդությունը: Բացառություն է կազմում առանձին դեպքերում դատարանի նախաձեռնությամբ վկա կանչելը: Որպես կանոն, նախ և առաջ անհրաժեշտ է հայցվորի կամ պատասխանողի միջնորդությունը, որում պետք է նշվի այն փաստը, որը, ըստ կողմի, կարող է հաստատվել վկայի հարցաքննությամբ: Որպեսզի վկան հարցաքննվի, նման միջնորդությունը դատարանը պետք է բավարարի: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ միջնորդությունը մերժելիս դատարանի պատճառաբանությունը կարող է պայմանավորված լինել միջնորդության մեջ կոնկրետ փաստի բացակայությամբ, որի վերաբերյալ վկան պետք է հարցաքննվեր կամ եթե նշված չեն վկայի տվյալները (անունը, ազգանունը, հասցեն): Միջնորդության մերժումը կարող է հիմնավորված համարվել նաև այն դեպքում, երբ միջնորդությունում վկայակոչված փաստը վերաբերելի չէ գործին, ինչպես նաև, երբ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետով, արձանագրում է, որ վկայակոչված փաստն օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվի որոշակի ապացույցներով՝ նշելով, թե որոնք են այդ ապացույցները: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում նաև իր որոշումներում ձևավորած դիրքորոշումը (*ի թիվս այլոց յուս՝ Վարդիթեր Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Արարարի մարզի Արտաշատի քաղաքապետարանի, ՀՀ կատավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի գաղափարային ստորաբաժանանն՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ԱՎԴ/0235/02/10 քաղաքացիական գործով, Վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը*):

Բոլոր դեպքերում չհիմնավորված պետք է համարել այնպիսի մերժումը, որը պատճառաբանված չէ՝ նշված չեն մերժման հիմքերը:

Դատարանում գործի քննության ընթացքում բողոքաբերը միջնորդել է որպես վկա հարցաքննել Ահարոն Իսկանդարյանին՝ վճարումներն իր կողմից կատարված լինելու փաստը հաստատելու համար: Դատարանը մերժել է միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ անհրաժեշտության դեպքում այդ անձը կհրավիրվի որպես վկա: Մերժման հետ կապված վերաքննիչ բողոքում ներկայացվել է փաստարկ, սակայն Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել դրան:

Նշված դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը որպես վկա չի հրավիրել և չի հարցաքննել Ահարոն Իսկանդարյանին՝ գրկելով բողոքաբերին իր վկայակոչած փաստն ապացուցելու հնարավորությունից: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքում նշված վերոնշյալ հիմքին:

Վերոգրյալներից ելնելով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ

դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք առնվազն կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման, և որոնք կարող են վերացվել միայն գործի նոր քննության շրջանակներում:

Ինչ վերաբերում է նյութական իրավունքի նորմերի խախտված լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկներին, ապա սույն որոշմամբ նշված դատավարական իրավունքի նորմերի խախտված լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանց հնարավոր չէ անդրադառնալ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0377/02/12  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Լ. Գրիգորյան  
Գ. Մատիկյան  
Ա. Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0377/02/12  
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին,  
դռնբաց դատական նիստում, քննելով Էռհան Ջենիկլիի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Էռհան Ջենիկլիի ընդդեմ Ռ-աֆիկ Ռ-ուշանյանի՝ գումարի բռնագանձման պահանջի  
մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Էռհան Ջենիկլին պահանջել է Ռ-աֆիկ Ռ-ուշանյանից  
բռնագանձել 39.239 ԱՄՆ դոլարին համարժեք 15.303.210 ՀՀ դրամ:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա.Խա-  
չատրյան) (այսուհետ՝ Դատարան) 20.02.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 28.06.2013 թվականի որոշմամբ Էռհան Ջենիկլիի վերաքննիչ բողոքը մերժվել է և  
Դատարանի 20.02.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էռհան Ջենիկլին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 49-րդ և 51-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Էռհան Ջենիկլիի կողմից Դատարան է ներկայացվել պարտավորագիր, որը ստորագրված է Էռհան Ջենիկլիի և Ռաֆիկ Ռուշանյանի կողմից, բացի այդ նշված պարտավորագիրը ստորագրվել է նաև որպես թարգմանիչ և վկա հանդես եկած Արթուր Մարկոսյանի կողմից, և վերջինս էլ գործի քննությանը մասնակից չի դարձվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը մերժել է Արթուր Մարկոսյանին որպես վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.06.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ըստ Էռհան Ջենիկլիի և Ռաֆիկ Ռուշանյանի անունից 29.04.2009 թվականին կազմված և ստորագրված գրավոր փաստաթղթի՝ Ռաֆիկ Ռուշանյանի և Էռհան Ջենիկլիի կտորի առուծախի վերջում Ռաֆիկ Ռուշանյանն Էռհան Ջենիկլիին պարտք է մնացել 39.236 ԱՄՆ դոլար: Հաշիվը կատարված է 29.04.2009 թվականի ամսաթվով, նախկին տարեթվերով կատարված հաշիվները գրոյացվել են, Ռաֆիկ Ռուշանյանի ամեն մի մուծած գումար այդ ընդհանուր գումարից պետք է հանվի և վերջնական գրոյացվի: Նշված պարտավորագիրը ստորագրվել է նաև որպես թարգմանիչ և վկա հանդես եկած Արթուր Մարկոսյանի կողմից (**հատոր 1, գ.թ. 6**):

2) Ըստ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 11.10.2012 թվականին տրված ձեռագրաբանական փորձաքննության թիվ 21031201 եզրակացության և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 10.12.2012 թվականին տրված կրկնակի ձեռագրաբանական փորձաքննության թիվ 12-4641 եզրակացության՝ կատարված փորձաքննության արդյունքում փորձագետները եկել են այն հետևության, որ Ռաֆիկ Ռուշանյանի անունից որպես պարտավորագիր 29.04.2009 թվականին կազմված փաստաթղթի միջին ձախ մասում՝ «Ռաֆիկ Ռուշանյան կարդացի գրածը ճիշտ է» ձեռագիր գրառումների դիմաց տեղավորված ստորագրությունը Ռաֆիկ Ռուշանյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել, պարզել հնարավոր չէ՝ հետազոտելի ստորագրության ինֆորմատիվ գրաֆիկական նյութի սակավության և պարզ կատարման պատճառով (**հատոր 2, գ.թ. 30-31 և 56-57**):

3) Գործի դատաքննության նախապատրաստական փուլում Ռաֆիկ Ռուշանյանը, իսկ գործի դատաքննության փուլում Էռհան Ջենիկլիի ներկայացուցիչը միջնորդել են սույն գործին որպես վկա ներգրավել պարտավորագիրը որպես թարգմանիչ և վկա ստորագրած Արթուր Մարկոսյանին, իսկ Դատարանը արձանագրային որոշմամբ մերժել է միջնորդությունը (**դատական նիստի արձանագրություն, հատոր 2, գ.թ. 122**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռա-

---

բեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է այն իրավական խնդրին, թե արդյոք պարտքային փաստաթուղթը դրանում նշված անձանց կողմից կազմված՝ ստորագրված լինելու հանգամանքը կարող է հաստատվել վկայի ցուցմունքներով:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար Դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը (*տես՝ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի հայցն ընդդեմ Սեդա Մարգարյանի՝ գրավադրված գույքն արգելանքից հանելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Սեդա Մարգարյանի ընդդեմ Էդգար Մարկոսյանի և Զարուհի Գևորգյանի՝ գումարի բռնագանձման և բռնագանձումը գրավի առարկայի վրա փարսածելու պահանջների մասին գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի թիվ ԵԱՆԴ/0479/02/08 որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են **գրավոր և իրեղեն ապացույցներով**, փորձագետների եզրակացություններով, **վկաների ցուցմունքներով**, գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, սահմանելով ապացույցի հասկացությունը, սպառիչ սահմանել է դրանց տեսակները, այն է՝ գրավոր ապացույցները, փորձագետների եզրակացությունները, վկաների ցուցմունքները և



գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Ընդ որում, գործի հանգամանքները, որոնք օրենքի և այլ իրավական ակտի հիման վրա կարող են հաստատվել միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար *(տես՝ ըստ հայցի Սվետլանա Ժուլիկյանի ընդդեմ Անահիտ Խաչատրյանի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը ճանաչելու, գույքն ուրիշի ապօրինի փիրապետումից հետո պահանջելու և վերանորոգման աշխատանքների դիմաց կապարված ծախսերի փոխհատուցման պահանջների մասին թիվ ԵՄԴ/0232/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը)*:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կողմերը զրկված են ի հաստատումն գործարքի՝ վկայի ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից, երբ օրենքով սահմանված դեպքերում գործարքը չի կնքվել գրավոր ձևով: Մինչդեռ այն դեպքում, երբ առկա է գրավոր ձևով կազմված և ստորագրված փաստաթուղթ և վիճարկվում է դրա իսկությունը, ապա որպես ապացույց կարող են ներկայացվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված ապացույցները, այդ թվում՝ վկայի ցուցմունքներ:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ ձեռք բերված ապացույցներով չի հաստատվել այն հանգամանքը, որ Ռ-աֆիկ Ռ-ուշանյանը հայցվոր Էռհան Ջենիկլիի հանդեպ պարտավորություն է ստանձնել հայցադիմումում նշված չափով նրան գումար վճարելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ սույն գործով ձեռք բերված ապացույցներով չի հաստատվել այն հանգամանքը, որ պատասխանողը հայցվորի հանդեպ դրամական պարտավորություն ունի:

Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ որպես վկա պարտավորագիրը կազմած Արթուր Մարկոսյանին հարցաքննելու մասին Էռհան Ջենիկլիի ներկայացուցչի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների վկաների ցուցմունքներ վկայակոչելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրա-

---

վահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (*տես՝ Ռազմիկ Մարությանի հայցն ընդդեմ Սյրեիան և Ասահիյր Մարությանների, ՀՀ Կենտրոն նույրարական գրասենյակի ժառանգական գույքի ընդունման փաստի ճանաչման և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին և Սյրեիան և Ասահիյր Մարությանների հակընդդեմ հայցի՝ սեփականության իրավունքով պարկանտղ բնակելի տան և հողամասի բաժանման պահանջի մասին Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի թիվ 3-54(ՎԴ) որոշումը*):

Սույն գործով թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանն անտեսել են, որ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 11.10.2012 թվականին տրված ձեռագրաբանական փորձաքննության թիվ 21031201 և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 10.12.2012 թվականին տրված կրկնակի ձեռագրաբանական փորձաքննության թիվ 12-4641 եզրակացություններով փորձագետները եկել են այն հետևության, որ Ռ-աֆիկ Ռ-ուշանյանի անունից որպես պարտավորագիր 29.04.2009 թվականին կազմված փաստաթղթի միջին ձախ մասում՝ «Ռ-աֆիկ Ռ-ուշանյան կարդացի գրածը ճիշտ է» ձեռագիր գրառումների դիմաց տեղավորված ստորագրությունը Ռ-աֆիկ Ռ-ուշանյանի, թե մեկ այլ անձի կողմից է կատարվել, պարզել հնարավոր չէ՝ հետազոտելի ստորագրության ինֆորմատիվ գրաֆիկական կոդի սակավության և պարզ կատարման պատճառով, ուստի այդ փորձաքննություններով չի հաստատվում, ինչպես նաև չի հերքվում 29.04.2009 թվականին կազմված պարտավորագիրը Ռ-աֆիկ Ռ-ուշանյանի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Նման պայմաններում այդ պարտավորագրի արժանահավատության հարցը քննարկելու համար կարող էր նաև էական նշանակություն ունենալ պարտավորագիրը որպես թարգմանիչ և վկա ստորագրած Արթուր Մարկոսյանի՝ որպես վկայի ցուցմունքները:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործում առկա է Էռհան Ջենիկլիի և Ռ-աֆիկ Ռ-ուշանյանի անունից 29.04.2009 թվականին կազմված պարտավորագիր, որն էլ տվյալ դեպքում դիտարկվում է որպես գործարք, որի հասարակ գրավոր ձևը պահպանված է, իսկ վկա ներգրավելու մասին միջնորդությամբ հայցվում էր ոչ թե գործարքի կամ դրա առանձին պայմանների առկայության հաստատումը, այլ գործում առկա գրավոր պայմանագիրը Ռ-աֆիկ Ռ-ուշանյանի կողմից ստորագրված լինել կամ չլինելու հարցը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ

հողվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2043/02/12  
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Կ. Զիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2043/02/12**  
**2013թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>Նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ե. ՍՈՂՈՍՏՆՅԱՆԻ
	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Բրենդ Լիդեր» ՀԶ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ «Օլիմպորդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ 78.501,96 ՀՀ դրամ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձելու, ինչպես նաև դատական ծախսերի հարցը լուծելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 78.501,96 ՀՀ դրամ պարտքը, նշված գումարին հաշվեգրել 28.11.2010 թվականից մինչև դրա փաստացի բռնագանձման օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, ինչպես նաև լուծել փաստաբանական ծախսերի և պետական տուրքի հարցը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 01.03.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. վճռվել է Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձել 78.501,96 ՀՀ դրամ պարտքը, ինչպես նաև ՀՀ քաղաքա-

ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսների հաշվարկային դրույքների՝ 78.501,96 ՀՀ դրամի նկատմամբ՝ սկսած 19.09.2012 թվականից մինչև նշված գումարի փաստացի վերադարձման օրը: Հայցը՝ մնացած մասով, մերժել: Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձել 1.570 ՀՀ դրամ պետական տուրքը: Կազմակերպությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 78.501,96 ՀՀ դրամի նկատմամբ հաշվեգրվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների երկու տոկոսի չափով պետական տուրքը՝ մինչև գումարի փաստացի վերադարձման օրը: Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.05.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 01.03.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ, 53-րդ, 68-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, պատշաճ չհետազոտելով Ընկերության և «Համար մեկ փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Փաստաբանական գրասենյակ) միջև 18.09.2012 թվականին կնքված թիվ 1/25 հանձնարարության պայմանագիրը և որպես վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստ հաստատելով, որ Ընկերությունը Դատարանին չի ներկայացրել որևէ ապացույց՝ գումարը վճարված լինելու մասին, հանգել է սխալ եզրահանգման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ օրենսդիրը «դատական ծախս» հասկացությունը սահմանել է ոչ թե որպես արդեն իսկ փաստացի վճարված, այլ նաև որպես վճարվելիք գումար, որը ենթադրում է ինչպես արդեն վճարված, այնպես էլ մոտ ապագայում վճարվելիք ծախսերը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում և՛ ծառայություն ստացողը, և՛ այն մատուցողը հանդիսանում են իրավաբանական անձինք, և ծառայության դիմաց գումարը, անկախ այն հանգամանքից՝ ստացվել է պայմանագրի կնքման պահին, թե որևէ այլ ժամանակահատվածում, ծառայություն մատուցողի կողմից կարող է համարվել ստացված ծառայության մատուցման ավարտից՝ հաշիվ-ապրանքագիրն ու կատարողական (ավարտական) ակտն ստորագրվելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 16.05.2013 թվականի որոշումը՝ Ընկերության և Փաստաբանական գրասենյակի միջև 18.09.2012 թվականին կնքված թիվ 1/25 հանձնարարության պայմանագրով նախատեսված 30.000 ՀՀ դրամը՝ որպես դատական ծախս չդիտելու մասով, բեկանել և փոփոխել՝ նշված գումարը ճանաչել որպես դատական ծախս և այն բռնագանձել Կազմակերպությունից:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

---

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության (Հանձնարարող) և Փաստաբանական գրասենյակի (Հանձնակատար) միջև 18.09.2012 թվականին կնքված թիվ 1/25 հանձնարարության պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնակատարը պարտավորվում է Հանձնարարողի անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, մասնավորապես՝

ա) իրավաբանական խորհրդատվություն,

բ) փաստաթղթերի ուսումնասիրություն, հայցադիմումի կազմում,

գ) Ընկերության շահերի ներկայացում ՀՀ բոլոր դատարաններում՝ կապված դատական վեճի հետ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Կազմակերպության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին **(գ.թ. 17)**:

2) Վերոգրյալ պայմանագրի 3.1-րդ կետի համաձայն՝ հանձնարարության կատարման համար Հանձնարարողը Հանձնակատարին պարտավորվում է անկանխիկ վճարել 30.000 ՀՀ դրամ:

Նույն պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի 3.1-րդ կետով սահմանված վարձատրությունը Հանձնարարողը Հանձնակատարին վճարում է վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում **(գ.թ. 18)**:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությից, իսկ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումն էական նշանակություն ունի նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ փաստաբանի վարձարժեքի՝ որպես դատական ծախսի բաշխման համար անհրաժեշտ ապացույցների ներկայացման հարցին՝ նմանապիսի գործերով նախկինում արտահայտված դիրքորոշումների համալրեքսրում:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, **փաստաբանի խելամիտ վարձատրության** և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենքի ուժով **փաստաբանի խելամիտ վարձատրությունը** ևս հանդիսանում է դատական ծախս, ինչից հետևում է, որ այն սահմանված կարգին համապատասխան ենթակա է բաշխման գործին մասնակցող անձանց միջև:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել նշված իրավադրույթների վերաբերյալ ձևավորած դիրքորոշումը: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով վերոգրյալ իրավական նորմերը, փաստել է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև փաստաբանի խելամիտ վարձատրությունը: Ուստի, փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախ և առաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական

ծախս՝ թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հաստատող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման պահանջի առկայությունից վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը՝ որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար (յրե՛ս՝ ըստ հայցի անհայտ ձեռնարկայւրեր Նարինե Ռոսպոնյանի ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԱԲԴ/1401/02/11 գործով Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը): Հիմք ընդունելով նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս ...:

Նույն հոդվածի 4-րդ կետով սահմանված է, որ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ ...:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 782-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ հանձնարարության պայմանագրով մի կողմը (հանձնակատարը) պարտավորվում է մյուս կողմի (հանձնարարողի) անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ ...:

Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ հանձնարարության պայմանագիրը կնքվում է այն ժամկետի նշումով, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից կամ առանց դրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 783-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ հանձնարարողը պարտավոր է հանձնակատարին վարձատրել, եթե դա նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով կամ հանձնարարության պայմանագրով ...:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հանձնարարության պայմանագրի ուժով հանձնակատարը հանձնարարողի անունից և նրա հաշվին պարտավոր է կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, պայմանագրում կարող է նշվել նաև այն ժամկետը, որի ընթացքում հանձնակատարն իրավունք ունի գործել հանձնարարողի անունից: Միաժամանակ, ինչպես ցանկացած պայմանագիր, այնպես էլ հանձնարարության պայմանագիր կնքելիս կողմերը՝ **հանձնակատարը և հանձնարարողը, չիղիսելով օրենսգրքի իմպերատիվ դրույթներով ամրագրված պայմանները, ազատ են որոշելու պայմանագրի պայմաններն իրենց հայեցողությամբ, այդ թվում նաև՝ հանձնարարողի կողմից հանձնակատարին վարձատրելու չափը և վճարման ժամկետը:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ հանձնարարության պայմանագրի պայմաններով հանձնարարողը հանձնակատարին վարձատրությունը պետք է վճարի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ որոշակի ժամանակ անց, ապա նման պայմանի առկայությունը **կատարվելիք վճարումը հաստատող բավարար ապացույց է:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Փաստաբանական գրասենյակի միջև 18.09.2012 թվականին կնքվել է թիվ 1/25 հանձնարարության պայմանագիրը, որով Ընկերությունը պարտավորվել է վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, Կազմակերպությանը վճարել 30.000 ՀՀ դրամ:

Դատարանը, փաստաբանական ծախսերի մատով դատական ծախսերի բաշխման հարցը համարելով լուծված, իր վճռի հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Ընկերության կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց՝ 30.000 ՀՀ դրամ գումարը Կազմակերպությանը փաստացի վճարելու վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը, համաձայնելով Դատարանի վերոգրյալ եզրահանգմանը,

---

մերժել է վերաքննիչ բողոքը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ փաստաբանական ծառայությունների համար կատարվելիք վճարումը հաստատող ապացույցի ներկայացումը ևս բավարար է այդ մասով դատական ծախսերը բաշխելու համար, իսկ սույն գործում առկա է այդպիսի ապացույց, այն է՝ Ընկերության և Փաստաբանական գրասենյակի միջև 18.09.2012 թվականին կնքված թիվ 1/25 հանձնարարության պայմանագիրը, որով վերջիններս որոշել են հանձնարարության կատարման համար վարձատրության չափը և ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում յուրաքանչյուր ապացույց գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությամբ, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը փաստաբանի վարձատրության մասով դատական ծախսերի բաշխման հարցը լուծելու հետ կապված սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքերի վկայակոչված նորմերը և անտեսել է Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը՝ դրանով խախտելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, ինչի արդյունքում էլ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել սույն գործում առկա փաստաբանական ծառայությունների համար կատարվելիք վճարումը հաստատող ապացույցի առկայությունը՝ Ընկերության և Փաստաբանական գրասենյակի միջև 18.09.2012 թվականին կնքված թիվ 1/25 հանձնարարության պայմանագիրը:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով դատավարական փաստաթղթերի կազմումը, (հայցադիմում, միջնորդություն, վերաքննիչ բողոք), թվով չորս դատական նիստերում ներկայացուցչության ապահովումը, գտնում է, որ սույն գործով փաստաբանի վարձատրության նշված չափը՝ 30.000 ՀՀ դրամ, խելամիտ է, և այն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի կանոններով ենթակա է բռնագանձման Կազմակերպությունից հոգուտ Ընկերության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի

---



4-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.05.2013 թվականի որոշման՝ փաստաբանի խելամիտ վարձատրության գումարը դատական ծախսերի մեջ չընդգրկելու մասը և այդ մասով այն փոփոխել՝ «Օլիմպուրյոլ» ՍՊԸ-ից հոգուտ «Բրենդ Լիդեր» ՀՉ ՍՊԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ փաստաբանի խելամիտ վարձատրության գումար՝ որպես դատական ծախս:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/2561/02/08**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2561/02/08

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

Դատավորներ՝ Ն. Տավարացյան

Ս. Միքայելյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արսեն Ումուրջատյանի ներկայացուցիչ Նվարդ Փիլիպոսյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.12.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ընդդեմ Արսեն Ումուրջատյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Արսեն Ումուրջատյանից բռնագանձել 1.799 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով գումար՝ որպես պատճառված վնասի փոխհատուցում:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 20.08.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.12.2012 թվականի որոշմամբ Արսեն Ումուրջատյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.08.2011 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արսեն Ումուրշատյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ աշխարհաբանության օրենսգրքի 232-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 52-րդ, 53-րդ և 94-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից Դատարան ուղարկված հաղորդագրության մեջ նշված է, որ Արսեն Ումուրշատյանը տարիներ առաջ ժամանակավոր բնակվել է Երևանի Քաջազունի (Կուզնեցովի) փողոցի 7-րդ շենքի թիվ 3 բնակարանում այն դեպքում, երբ համաձայն Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 13 տեղամասի լիազոր ներկայացուցչի 27.10.2012 թվականի թիվ 1 և բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 29.10.2012 թվականի թիվ 328177 տեղեկանքների՝ Արսեն Ումուրշատյանը ծնված օրվանից հաշվառված է և բնակվում է Երևանի Քաջազունի (Կուզնեցովի) փողոցի թիվ 7/3 տանը, երբևիցե նշված հասցեի հաշվառումից չի հանվել և փաստացի բնակության վայրը չի փոխել, իսկ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից Դատարան ուղարկված հաղորդագրության մեջ նշված հասցեն (Քաջազունի (Կուզնեցովի) փողոց 7-րդ շենքի թիվ 3 բնակարան) բազմաբնակարան շենքի հասցե է, իսկ Արսեն Ումուրշատյանի հաշվառման և փաստացի բնակության հասցեն՝ Երևանի Քաջազունի (նախկին Կուզնեցովի) փողոց տուն 7/3՝ սեփական տան հասցե է: Հետևաբար Արսեն Ումուրշատյանը պատշաճ ծանուցված չի եղել դատական նիստի ժամանակի և վայրի մասին և չի մասնակցել գործի քննությանը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանն իր ուշադրությանը չի արժանացրել և չի գնահատել այն հանգամանքը, որ Բանկը չի ներկայացրել որևիցե ապացույց, որով կհիմնավորվեր Արսեն Ումուրշատյանի մեղքը կատարվածի մեջ կամ կհիմնավորվեր այն հանգամանքը, թե ինչ պետք է կատարեր Արսեն Ումուրշատյանը, որը չի կատարել ու պատճառել է վնաս և դրանց միջև պատճառահետևանքային կապը, ավելին՝ Դատարանը որպես Արսեն Ումուրշատյանի մեղքի բացակայության ապացույց չի գնահատել թիվ 1-26 քրեական գործի 01.03.2006 թվականի դատավճիռը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.12.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 02.12.2009 թվականին դատական ծանուցագիր է ուղարկվել Արսեն Ումուրշատյանին՝ Երևանի Կուզնեցովի 7/3 հասցեով, որը հետ է վերադարձվել ծրարի վրա «դուրը փակ է» նշումով (հատոր 1, գ.թ. 32-34):

2) Դատարանի 12.05.2011, 15.06.2011 թվականներին նշանակված նախնական դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատասխանող Արսեն Ումուրշատյանին ուղարկված ծանուցագրերը հետ են վերադարձվել 13.04.2011, 17.05.2011 թվականներին՝

---

ծրարի վրա «դուռը փակ է» նշումով (հատոր 1, գ.թ. 77-81):

3) Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածով, 20.06.2011 թվականին ծանուցում է ուղարկել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Գ.Գյանջումյանին պատասխանող Արսեն Ումուրշատյանին 13.07.2011 թվականի դատական նիստի մասին ծանուցելու խնդրանքով (հատոր 1, գ.թ. 89-91):

4) 06.07.2011 թվականին Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից Դատարան է ուղարկվել հաղորդագրություն, որով հավաստվել է, որ պատասխանող Արսեն Ումուրշատյանը տարիներ առաջ ժամանակավոր բնակվել է Քաջազունի (Կուզնեցովի) փողոց 7-րդ շենքի թիվ 3 բնակարանում, այժմ նա նշված բնակարանում չի բնակվում, և նրա գտնվելու վայրը հայտնի չէ, ուստի ծանուցել նրան կայանալիք դատական նիստի վերաբերյալ հնարավոր չէ (հատոր 1, գ.թ. 92):

5) Դատարանի 12.08.2011 թվականին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատասխանող Արսեն Ումուրշատյանին ուղարկված ծանուցագիրը 20.07.2011 թվականին հետ է վերադարձվել ծրարի վրա «տուներ փակ է մշտապես» նշումով (հատոր 1, գ.թ. 95-106):

6) Երևանի Կենտրոն վարչական շրջանի թիվ 13 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից 27.10.2012 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Արսեն Ումուրշատյանը, 1970-թվականից սկսած, ապրում է Երևանի Քաջազունի (Կուզնեցովի) փողոցի 7/3 տանը (հատոր 2, գ.թ. 15):

7) Արսեն Ումուրշատյանի անձնագրի պատճենի և բնակչության պետական ռեգիստրի անձնագրային և վիզաների վարչության 29.10.2012 թվականի թիվ 328177 տեղեկանքի համաձայն՝ 12.02.1991 թվականից Արսեն Ումուրշատյանը հաշվառված է Երևանի Քաջազունի (Կուզնեցովի) փողոցի 7/3 տուն հասցեում (հատոր 1, գ.թ. 141, հատոր 2, գ.թ. 16-17):

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Մույն գործը վարույթ ընդունելով՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյոք պահպանվել են դատական նիստի ժամանակի և վայրի մասին պարզած ծանուցելու վերաբերյալ Վճարել դատարանի նախկինում արդահայտած դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Շույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

Վճարել դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման հարցին:

Վճարել դատարանը նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Միաժամանակ, Վճարել դատարանն անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում (*յրես՝ Վերգուշ Վարդանյանի հայցն ընդդեմ Երիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*):

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի ընթացակարգի պահպանմամբ գործը քննելով, Արսեն Ումուրշատյանի բացակայությամբ վերջինիս իրավունքները չի խախտել, ավելին, Դատարանը ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոցները՝ Արսեն Ումուրշատյանին դատական նիստի վայրի և ժամանակի մասին տեղեկացնելու համար, և երբ սպառվել են բոլոր միջոցները, գործը քննել է վերջինիս բացակայությամբ:

Վճռաբեկ դատարանն ըստ էության համաձայնում է Վերաքննիչ դատարանի նշված դիրքորոշմանն այն առումով, որ Դատարանը ձեռնարկել է միջոցներ Արսեն Ումուրշատյանին ծանուցելու վերաբերյալ, այդուհանդերձ նման միջոցների ձեռնարկումն ինքնին չի կարող բացառել դատավարական իրավունքի խախտումը, եթե այդպիսին այնուամենայնիվ տեղ է գտնում: Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բավարար չափով հիմնավորված չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ Դատարանը դատավարական իրավունքի խախտում թույլ չի տվել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արսեն Ումուրշատյանին նշանակված դատական նիստերի ժամանակի և վայրի մասին ծանուցումները, համաձայն Դատարանի ուղարկած ծանուցագրերի և Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի 06.07.2011 թվականի գրության, Արսեն Ումուրշատյանին են ուղարկվել Երևանի Քաջազնունի (Կուզնեցովի) փողոցի 7-րդ շենքի թիվ 3 բնակարան հասցեով, մինչդեռ Երևանի Կենտրոն վարչական շրջանի թիվ 13 տեղամասի լիազոր ներկայացուցիչ կողմից 27.10.2012 թվականի և բնակչության պետական ռեգիստրի անձնագրային և վիզաների վարչության 29.10.2012 թվականի թիվ 328177 տեղեկանքների, ինչպես նաև Արսեն Ումուրշատյանի անձնագրի պատճենի համաձայն՝ Արսեն Ումուրշատյանը հաշվառված է և բնակվում է Երևանի Քաջազնունի (Կուզնեցովի) փողոցի 7/3 տուն հասցեում, որպիսի հանգամանքը, սակայն, Վերաքննիչ դատարանն անտեսել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Արսեն Ումուրշատյանը պատշաճ ձևով չի տեղեկացվել նշանակված դատական նիստերի մասին, ինչի արդյունքում խախտվել է Արսեն Ումուրշատյանի՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը:

Նյութական իրավունքի նորմերի խախտման մասին բողոք բերած անձի պատճառաբանություններին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում, քանի որ գործը քննվել և վճիռը կայացվել է Արսեն Ումուրշատյանի դատավարական իրավունքների սահմանափակումների պայմաններում, որի արդյունքում վերջինիս փաստարկները դատավարության ընթացքում քննության առարկա չեն դարձվել: Հետևաբար, այդ պատճառաբանությունները չեն կարող լինել քննության առարկա նաև Վճռաբեկ դատարանում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով

---

Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.12.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/1730/02/11**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/1730/02/11**

Նախագահող դատավոր՝ **Տ. Սահակյան**

Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**

**Տ. Նազարյան**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**

**Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ**

**Վ. ԱՐԵԼՅԱՆԻ**

**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**

**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**

**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**

**Մ. ԴԻՄԵՅԱՆԻ**

**Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ**

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

**Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ**

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով **Լիլիթ Գևորգովայի** վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի **Լիլիթ Գևորգովայի** ընդդեմ **Սվետլանա Միքայելյանի**՝ ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու, տնից վտարելու և գումար բռնագանձելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ **Լիլիթ Գևորգովայի** պահանջել է իրեն սեփականության իրավունքով պատկանող **Երևանի Գ. Մահարի** փողոցի թիվ 34 բնակելի տունը հետ պահանջել **Սվետլանա Միքայելյանի** ապօրինի տիրապետումից, վերջինիս վտարել նշված բնակելի տնից, ինչպես նաև **Սվետլանա Միքայելյանի**ց բռնագանձել 1.500.000 ՀՀ դրամ գումար՝ որպես նշված տունն ապօրինի տիրապետելու արդյունքում ստացված եկամուտ, և 700.000 ՀՀ դրամ գումար՝ որպես փաստաբանի վարձատրության գումար:

**Երևանի Էրեբունի և Նուբարաշեն** վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ **Գ. Խաչատրյան**) (այսուհետ՝ **Դատարան**) 29.06.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է **Սվետլանա Միքայելյանի** ապօրինի տիրապետումից հետ պահանջել **Լիլիթ Գևորգովայի**ն սեփակա-

---

նության իրավունքով պատկանող Երևանի Գ. Մահարի փողոցի թիվ 34 բնակելի տունը և Սվետլանա Միքայելյանին վտարել նշված բնակելի տնից. մնացած պահանջների մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2012 թվականի որոշմամբ Սվետլանա Միքայելյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 29.06.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լիլիթ Գևորգյան:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ և 35-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 8-րդ և 118-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը Սվետլանա Միքայելյանին պատվիրված նամակով պատշաճ ծանուցել է 15.06.2012 թվականի ժամը 16:50-ին կայանալիք դատական նիստի մասին, մինչդեռ նշված ծանուցագիրը հետ է վերադարձվել ծրարի վրա «Բացակայում է հանրապետությունից» նշումով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 29.06.2012 թվականի վճիռն:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Դատարանի 05.12.2011 թվականի որոշմամբ Լիլիթ Գևորգյանի հայցադիմումը ընդունվել է վարույթ, և նախնական դատական նիստեր են նշանակվել 18.01.2012 թվականին, 09.02.2012 թվականին, 01.03.2012 թվականին, 22.03.2012 թվականին, 12.04.2012 թվականին, 14.05.2012 թվականին և 30.05.2012 թվականին: Նշված նախնական դատական նիստերի վայրի և ժամանակի մասին Դատարանը Սվետլանա Միքայելյանին պատշաճ ծանուցել է հայցադիմումում նշված Երևանի Գ. Մահարի փողոցի թիվ 34 տուն հասցեով: Դրանց վերաբերյալ դատական ծանուցագրերը Սվետլանա Միքայելյանը ստացել է (հատոր 1-ին, գ. թ. 23-24, 70-72, 85-87, 91-93, 99, 105, 107, 108, 117-119).

2) Դատարանը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, 30.05.2012 թվականին որոշում է կայացրել 15.06.2012 թվականի ժամը 16:50-ին գործը դատաքննության նշանակելու մասին: Նշված որոշումը պատշաճ ձևով Սվետլանա Միքայելյանին ուղարկվել է նույն Երևանի Գ. Մահարի փողոցի թիվ 34 տուն հասցեով: Որոշումը փոստային ծառայության կողմից հետ է վերադարձվել ծրարի վրա «Հասցեատերը բացակայում է հանրապետությունից» նշումով: Նշանակված դատաքննության օրը Սվետլանա Միքայելյանը և նրա ներկայացուցիչը չեն ներկայացել: Այդ նիստում Դատարանը գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ միաժամանակ հայտարարելով վճռի հրապարակման վայրն ու ժամանակը (հատոր 1-ին , գ.թ. 120, 127-132).



3) Սվետլանա Միքայելյանը Դատարանին և Լիլիթ Գևորգովային չի հայտնել գործի վարույթի ժամանակ իր հասցեն փոխելու մասին:

#### **4. Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է դատական ծանուցումների հետ կապված դատավարական պարտականությունները բարեխիղճ կատարելու, ինչպես նաև գործի քննության ընթացքում հասցեն փոխելու և դրա մասին դատարանին ու գործին մասնակցող անձանց չհայտնելու դատավարական հետևանքների վերաբերյալ միասնական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ:*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա:

Սույն օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանվում են գործին մասնակցող անձանց իրավունքները և պարտականությունները, որի 3-րդ կետը սահմանում է, որ գործին մասնակցող անձինք պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխիղճորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք պարտավոր են դատարանին և գործին մասնակցող այլ անձանց հայտնել գործի վարույթի ժամանակ իրենց հասցեն փոխելու մասին: Մասն հաղորդման բացակայության դեպքում դատավարական փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված, թեև ուղևորված փաստաթղթերն այդ հասցեում այլևս չի բնակվում կամ չի գտնվում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում Վճարելի դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Նշված սկզբունքը դրսևորվում է նաև դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց հասցեի փոփոխության վերաբերյալ գործին մասնակցող անձի կողմից ծանուցելով: Մասն կերպ պաշտպանվում է ոչ միայն հասցեն փոխած անձի իրավունքը, այլև դատավարության մյուս մասնակիցների իրավունքները, քանի որ դատարանը, ծանուցագրերը ուղարկելով փոխված հասցեով, ըստ էության ապահովում է գործի ողջամիտ ժամկետում քննությունը մի կողմից և դատավարության մասնակիցների՝ դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունը մյուս կողմից: Դրանով է պայմանավորված նաև այն, որ օրենսդիրը իր դատավարական իրավունքներից ոչ բարեխիղճ օգտվող կողմի վրա է թողնում հետևանքները կրելու ռիսկը, այն է՝ հասցեն փոփոխելու վերաբերյալ հաղորդման բացակայության դեպքում ծանուցումը համարվում է հանձնված՝ անկախ հասցեատիրոջ՝ այդ հասցեում բնակվելու կամ գտնվելու հանգամանքից:

Սվետլանա Միքայելյանի Վերաքննիչ բողոքը բավարարելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.9-րդ հոդվածի 2-րդ կետի կարգով պատասխանող Սվետլանա Միքայելյանին է ուղարկվել Դատարանի՝

---

գործը դատաքննության նշանակելու մասին որոշումը, որը սակայն հասցեատիրոջը չի հանձնվել: Գործ թերթ 128-130-ում առկա փոստային անդորրագրով, հավաստագրով և վերադարձված փոստային ծրարով հիմնավորվում է, որ հասցեատերը՝ Սվետլանա Միքայելյանը, առաքանին չի ստացել, և ծրարը վերադարձվել է Դատարան «բացակայում է հանրապետությունից» նշումով: Դատարանը դատաքննությունն իրականացրել է Սվետլանա Միքայելյանի բացակայությամբ այն դեպքում, երբ վերջինս 15.06.2012 թվականին նշանակված դատական նիստի վերաբերյալ չի եղել պատշաճ ծանուցված», գտել է, որ «տվյալ պարագայում Դատարանը չի իրականացրել ակտիվ գործողություններ պատասխանողին պատշաճ ծանուցելու ուղղությամբ և վերջինին չի ընձեռել պատշաճ հնարավորություն դատական նիստի օրվա, վայրի և ժամի մասին տեղեկանալու համար, որպիսի պարագայում պատասխանողը գրկվել է հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ դատաքննությանը մասնակցելու և ՀՀ Սահմանադրության ու օրենքներով իրեն վերապահված իրավունքներն իրացնելու հնարավորությունից»:

Վերոնշյալ վերլուծությունների և գործի փաստերի համադրմամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը իրավաչափ չէ: Սույն գործով ստորադաս դատարանի կողմից նախ և առաջ գնահատման առարկա պետք է դարձվեր պատասխանողի դատավարական իրավունքներից օգտվելու և պարտականությունները ոչ բարեխղճորեն կատարելու փաստը, հետո նոր միայն պատշաճ ծանուցված լինելու փաստը: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը ծանուցված չլինելու հիմքին անդրադառնալիս նախ պետք է պարզեր, թե արդյոք դատավարությանը մասնակից կողմը դատական նիստից բացակայել է ոչ պատշաճ ծանուցման հետևանքով, թե ծանուցվելով դատական նիստի ժամի և վայրի մասին՝ արհեստականորեն ձգձգել է դատական նիստի գործընթացն ու ձևական հիմքեր ստեղծել վերաքննիչ բողոք բերելու համար:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի ուսումնասիրել վերը նշված փաստի գոյությունը, քանի որ սույն գործում առկա ապացույցներից պարզ է դառնում, որ Դատարանը, ձեռնամուխ լինելով գործը դատաքննության նախապատրաստելուն, որոշումներ է կայացրել նախնական դատական նիստեր հրավիրելու մասին և կողմերին պատշաճ ծանուցել է դրանց ժամանակի ու վայրի մասին: Այդ նիստերի վերաբերյալ դատական ծանուցագրերը Սվետլանա Միքայելյանին ուղարկվել են Երևանի Գ. Մահարու փողոցի թիվ 34 տուն հասցեով, որոնք նա ստացել է: Հերթական՝ 30.05.2012 թվականին հրավիրված նախնական դատական նիստում Դատարանը, համարելով գործը դատաքննության նախապատրաստված, որոշում է կայացրել 15.06.2012 թվականի ժամը 16:50-ին գործը դատաքննության նշանակելու մասին: Նշված որոշումը պատշաճ ձևով Սվետլանա Միքայելյանին ուղարկվել է նույն՝ Երևանի Գ. Մահարու փողոցի թիվ 34 տուն հասցեով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործը դատաքննության նշանակելու մասին Դատարանի 30.05.2012 թվականի որոշումը համարվում է Սվետլանա Միքայելյանին հանձնված, թեկուզև այդ որոշումը հանձնելու պահին վերջինս այդ հասցեում այլևս չի բնակվել կամ գտնվել, քանի որ Սվետլանա Միքայելյանն ինչպես Դատարանին, այնպես էլ գործին մասնակցող անձ Լիլիթ Գևորգյանին չի հայտնել գործի վարույթի ժամանակ իր հասցեն փոխելու մասին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն գործով դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկվել է միայն դատական նիստի վերաբերյալ պատշաճ ծանուցված չլինելու հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 29.06.2012 թվականի վճռին:
2. Սվետլանա Միքայելյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 26.12.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորազորություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/0402/02/12**  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0402/02/12

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

Դատավորներ՝ Ն. Տավարացյան

Ս. Միքայելյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ.ԱԲԵԼՅԱՆԻ

Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ.ԴՐՄԵՅԱՆԻ

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Կարեն Համբարձումյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Արմինե Հարոյանի հայցի ընդդեմ Կարեն Համբարձումյանի, երրորդ անձինք Ռոզա Մինասյանի և Հենրիկ Համբարձումյանի՝ երեխաների ապրելու իրավունքը ճանաչելու, նախորդ երեք տարիների համար ալիմենտը բռնագանձելու և ալիմենտի չափն ավելացնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արմինե Հարոյանը պահանջել է ճանաչել իր երեխաների՝ Սեդա և Գուրգեն Համբարձումյանների ապրելու իրավունքը Կարեն Համբարձումյանին պատկանող Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 տան նկատմամբ, ինչպես նաև Կարեն Համբարձումյանից բռնագանձել նախորդ 3 տարիների համար չվճարված ալիմենտի գումարը և յուրաքանչյուր երեխայի համար ալիմենտի չափ սահմանել 30.000-ական ՀՀ դրամը:

Դատաքննության ընթացքում Արմինե Հարոյանը հրաժարվել է նախորդ 3 տարիների համար ալիմենտի բռնագանձելու պահանջից:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-

թյան դատարանի (դատավոր՝ Վ.Ասլանյան) (այսուհետ՝ Դատարան) 24.09.2012 թվականի վճռով վճռվել է. «Կարեն Համբարձումյանից հոգուտ Արմինե Հարոյանի յուրաքանչյուր երեխայի համար բռնագանձել ամսական 30.000-ական ՀՀ դրամ՝ որպես ապրուստի միջոց՝ ալիմենտ, վերջինիս խնամքի տակ գտնվող երեխաների՝ 01.06.1997թ. ծնված Գուրգեն Կարենի Համբարձումյանի և 23.09.1995թ. ծնված Սեդա Կարենի Համբարձումյանի համար՝ մինչև երեխաների չափահաս դառնալը: Ալիմենտի բռնագանձումը սկսել 05.04.2012թ.՝ մինչև երեխաների չափահաս դառնալը: Ճանաչել Գուրգեն Կարենի Համբարձումյանի և Սեդա Կարենի Համբարձումյանի ապրելու իրավունքը Կարեն Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեի տան նկատմամբ: Մնացած մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել»:

Կարեն Համբարձումյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 24.09.2012 թվականի վճռի՝ «Գուրգեն Կարենի Համբարձումյանի և Սեդա Կարենի Համբարձումյանի ապրելու իրավունքը Կարեն Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեի տան նկատմամբ» ճանաչելու մասի դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.01.2013 թվականի որոշմամբ Կարեն Համբարձումյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.09.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարեն Համբարձումյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 273-րդ, 277-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 118-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումներ պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը Կարեն Համբարձումյանին պատշաճ ձևով չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է նրա բացակայությամբ և կայացրել վճիռ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ Դատարանը, գործի քննության մասնակից չդարձնելով Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 տան սեփականատեր Կարեն Համբարձումյանին, վերջինիս զրկել է իր շահերը պաշտպանելու, ապացույցներ ներկայացնելու իրավունքից, ինչպես նաև սեփականության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 30.01.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 27.10.2011 թվականի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2847613 վկայականի համաձայն՝ Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեում գտնվող 188,7քմ բնակելի տան և 0,02164հա հողամասի սեփականատերը Կարեն Համբարձումյանն է (հատոր 1-ին, գ.թ.29-30):

---

2) Էրեբունու թիվ 21 տեղամասի լիազոր ներկայացուցչի կնիքով դրոշմված և ստորագրությամբ հաստատված 08.02.2012 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Կարեն Համբարձումյանը 1996 թվականից չի բնակվում Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեում և երբեմն բնակվում է ժամանակավորապես՝ առիթի դեպքում» (հատոր 1-ին, գ.թ.20):

3) Կարեն Համբարձումյանին Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեով առաքված Դատարանի 06.04.2012 թվականի որոշումը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և դատական նիստը 24.05.2012 թվականի ժամը 12:00-ին նշանակելու մասին, հետ է վերադարձվել Դատարան՝ Կարեն Համբարձումյանի Հայաստանի Հանրապետությունից բացակայելու հիմքով (հատոր 1-ին, գ.թ.37-48):

4) Կարեն Համբարձումյանին «Ռ-Դ Լենինգրադսկայայի շրջան, ք. Բոկսիտոգորսկ տուն 8 կամ 10 «Բրիկանտինա» բառ» և «Ռ-Դ Լենինգրադսկայայի շրջան, ք. Բոկսիտոգորսկ, Շկոլնայա փողոց 30 շենք բն. 4» հասցեներով Դատարանի 06.04.2012 թվականի որոշումը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և դատական նիստը 24.05.2012 թվականի ժամը 12:00-ին նշանակելու մասին, և 09.07.2012 թվականի ժամը 11:00-ին դատական նիստ նշանակելու մասին ծանուցագիրը հանձնելու նպատակով 30.05.2012 թվականին տրվել է Արմինե Հարոյանի ներկայացուցիչ Թեհմինե Հովսեփյանին (հատոր 1-ին, գ.թ.53, 55):

5) Դատարանին հասցեագրված Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 06.06.2012 թվականի թիվ 24/1-5/122/1296 գրությամբ հաստատվել է 25.05.2012 թվականի թիվ ԴԴ-16/Ե-6751/12 գրությամբ թիվ ԵԷԴ/0402/02/12 քաղաքացիական գործով Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից Կարեն Համբարձումյանի ծանուցումը ստանալու փաստը: Միաժամանակ հայտնվել է, որ Կարեն Համբարձումյանի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ այլ տեղեկություններ Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում առկա չեն (հատոր 1-ին, գ.թ.59):

6) 24.05.2012 թվականին նշանակված դատական նիստը հետաձգվել է մինչև 09.07.2012 թվականի ժամը 11:00-ը (հատոր 1-ին, գ.թ.51-52), իսկ 09.07.2012 թվականին նշանակված դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 03.08.2012 թվականի ժամը 10:00-ին (հատոր 1-ին, գ.թ.72-73):

7) Կարեն Համբարձումյանին Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեով առաքված Դատարանի 09.07.2012 թվականի որոշումը՝ գործով երրորդ անձ ներգրավելու և դատական նիստը 03.08.2012 թվականի ժամը 10:00-ին նշանակելու մասին, հետ է վերադարձվել Դատարան Կարեն Համբարձումյանի՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու հիմքով (հատոր 1-ին, գ.թ.78-80):

8) 03.08.2012 թվականին նշանակված դատական նիստը հետաձգվել է և նշանակվել 07.09.2012 թվականի ժամը 17:00-ին (հատոր 1-ին, գ.թ.89-90):

9) Կարեն Համբարձումյանին Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեով առաքված 07.09.2012 թվականի ժամը 17:00-ին նշանակված դատական նիստի մասին ծանուցագիրը հետ է վերադարձվել Դատարան Կարեն Համբարձումյանի՝ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու հիմքով (հատոր 1-ին, գ.թ.91-94):

10) 07.09.2012 թվականին նշանակված դատական նիստով գործի քննությունն ավարտվել է, և 24.09.2012 թվականի ժամը 17:50-ին նշանակվել է վճռի հրապարակում (հատոր 1-ին, գ.թ.98-99):

11) Արմինե Հարոյանի ներկայացուցիչ Թեհմինե Հովսեփյանը դատարանին հասցեագրված 18.09.2012 թվականի դիմումով հայտնել է, որ ներկայացվում է Կարեն Համբարձումյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով տեղեկացնելու վերաբերյալ հավաստագրերը (հատոր 1-ին, գ.թ.102):

12) 26.07.2012 թվականի թիվ RR 062694214AM և թիվ RR 062694228AM

---

հավաստագրերի համաձայն՝ Կարեն Համբարձումյանը 07.07.2012 թվականին «Ռ-Դ Լենինգրադսկայայի շրջան, ք. Բոկսիտոգորսկ տուն 8 կամ 10 «Բրիկանտինա» բառ» և «Ռ-Դ Լենինգրադսկայայի շրջան, ք. Բոկսիտոգորսկ, Շկոլնայա փողոց 30 շենք բն. 4» հասցեներով ստացել է փաթեթ (հատոր 1-ին, գ.թ.103-104):

13) 24.05.2012 թվականի ժամը 12:00-ին, 09.07.2012 թվականի ժամը 11:00-ին, 03.08.2012 թվականի ժամը 10:00-ին, 07.09.2012 թվականի ժամը 17:00-ին նշանակված դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, 24.09.2012 թվականի ժամը 17:50-ին նշանակված վճռի հրապարակման ժամանակի և վայրի մասին Կարեն Համբարձումյանի պատշաճ ձևով տեղեկացված լինելու մասին քաղաքացիական գործում որևէ ապացույց առկա չէ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևակերտելու համար:

Սույն բողոքով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցը վերաբերում է նրան, թե արդյոք հիմնավորված է Վերաքաննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ Կարեն Համբարձումյանը պատշաճ ծանուցվել է Դատարանում գործի քննության վայրի և ժամանակի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացակաճով:

Նույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական նիստի քարտուղարը զեկուցում է դատարանին՝ գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների՝ նիստին ներկա լինելու մասին, ծանուցված են արդյոք չներկայացած անձինք պատշաճ ձևով, ինչպես նաև տեղեկություններ է հաղորդում նրանց բացակայության պատճառների մասին:

Նույն օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Վճռաբեկ դատարանն իր՝ նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման հարցին:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ:

---

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում (*տես՝ Վերգուշ Վարդանյանի հայցն ընդդեմ Երիշ Թորոսյանի թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*): Վկայակոչելով վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի հետ բովանդակային առումով փոխկապված է նաև նույն օրենսգրքի 117-րդ հոդվածը: Եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը նախատեսում է դատարանի պոզիտիվ պարտականությունը պատշաճ ծանուցման հարցում, ապա նույն օրենսգրքի 117-րդ հոդվածը նախատեսում է այն դատավարական ձևը, որով դատարանը վերջնականապես համոզվում է անձի՝ պատշաճ ծանուցված լինելու մասին: Այլ կերպ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի խախտումը տեղի է ունենում նույն օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածների հետ զուգորդված, երբ դատարանը պատշաճ չի ծանուցում գործին մասնակցող անձին և չունենալով հավաստի ապացույց՝ շարունակում է գործի քննությունը՝ այդ անձանց բացակայությունը գործի քննության համար արգելք չհամարելով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 24.05.2012 թվականի ժամը 12:00-ին, 09.07.2012 թվականի ժամը 11:00-ին, 03.08.2012 թվականի ժամը 10:00-ին, 07.09.2012 թվականի ժամը 17:00-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին, 24.09.2012 թվականի ժամը 17:50-ին նշանակված վճռի հրապարակման ժամանակի և վայրի մասին Կարեն Համբարձումյանի պատշաճ ձևով տեղեկացված լինելու մասին քաղաքացիական գործում որևէ ապացույց առկա չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Կարեն Համբարձումյանին պատշաճ ձևով չի տեղեկացրել նշանակված դատական նիստերի ժամանակի և վայրի մասին և գործը քննել է նրա բացակայությամբ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր Դատարանի կողմից ակտիվ գործողություններ ձեռնարկելու և բողոք բերած անձին դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կերպով ծանուցելու փաստերը:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության 78-րդ հոդվածը, Կարեն Համբարձումյանի վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ 25.05.2012 թվականին դատական ծանուցագիր է ուղարկվել Կարեն Համբարձումյանին՝ ՌԴ Լենինգրադսկայայի շրջան քաղաք Բոկսիտոգորսկ տուն 8 կամ 10 «Բրիկանտինա» բառ հասցեով, որը վերջինս, ըստ գործում առկա հանձնման հավաստագրի, ստացել է 07.09.2012 թվականին, ինչի մասին վկայում է վերջինիս ստորագրությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չի գնահատել համակցության մեջ, որպիսի ապացույցները փաստական տվյալներ են պարունակում առ այն, որ Դատարանի կողմից նշանակված դատական նիստերի ժամանակ Դատարանը չի ունեցել Կարեն Համբարձումյանի պատշաճ ծանուցված լինելը հավաստող որևէ ապացույց: Ավելին, Կարեն Համբարձումյանին 09.07.2012 թվականի դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցագիրը հասցեատիրոջը հանձնելու համար Արմինե Հարոյանի ներկայացուցիչ Թեհմինե Հովսեփյանին հանձնվել է 30.05.2012 թվականին,

---



իսկ նշված ծանուցագիրը Կարեն Համբարձումյանին հանձնելու վերաբերյալ փոստային հավաստագրերը Դատարան է մուտքագրվել միայն 18.09.2012 թվականին՝ դատաքննության ավարտից հետո: Փաստերի դասավորվածության նման պայմաններում Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 117-րդ և 118-րդ հոդվածների ուժով չէր կարող շարունակել գործի քննությունը և նշանակել դատական ակտի հրապարակման օր:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածով, 25.05.2012 թվականին ծանուցում է ուղարկել Երևան քաղաքի Էրեբունու վարչական շրջանի ղեկավար Ա.Հարությունյանին՝ պատասխանող Կարեն Համբարձումյանին 09.07.2012 թվականի դատական նիստի մասին ծանուցելու խնդրանքով: 06.06.2012 թվականին Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից Դատարան է ուղարկվել հաղորդագրություն, որով հավաստվել է, որ Կարեն Համբարձումյանի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ այլ տեղեկություններ Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում առկա չեն: 18.07.2012, 14.08.2012 թվականներին դատական ծանուցագրեր են ուղարկվել, որոնք կրկին հետ են վերադարձվել ծրարի վրա «բացակայում է հանրապետությունից» նշումով: Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պատասխանող Կարեն Համբարձումյանը նշանակված դատական նիստերի մասին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի իմաստով պատշաճ ծանուցված է եղել»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն *Արմեն Մարգարյանն ընդդեմ Աշոտ Մարգարյանի գործով* կայացրած որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի վերաբերյալ: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ծանուցման ընթացակարգի պահպանմամբ գործը քննելով, խախտել է պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով նախատեսված սեփականության իրավունքը, ինչպես նաև 19-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Սույն եզրահանգումն ունի հետևյալ հիմնավորումը. պատասխանողի վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին կամ նրա վերջին հայտնի աշխատավայրի տնօրինությանը դատաքննության մասին ծանուցելու՝ օրենսդրի տրամաբանությունը կայանում է նրանում, որ այս երկու սուբյեկտների ենթադրյալ կապը պատասխանող ֆիզիկական անձի հետ հնարավոր է և իրատեսական, և ողջամտորեն ենթադրելի է, որ այս սուբյեկտներից որևէ մեկը կարող է անձի համար տեղեկատվության աղբյուր հանդիսանալ դատաքննության մասին: Սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելիս դատարանը պետք է ողջամտորեն գնահատի օրենսդրի այս կարգավորման նպատակի իրագործելիության հնարավորությունը՝ տվյալ գործի փաստերից ելնելով: Նման գնահատման ողջամիտ չափորոշիչներ կարող են լինել, մասնավորապես՝ համայնքի ղեկավարի և դրա բնակիչների համայնքային կապերի ակտիվության մակարդակը, վերջին հայտնի աշխատավայրից անձի հեռանալու ժամկետը և այլ հանգամանքներ: Բոլոր դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետի կիրառումը չպետք է և չի կարող սահմանափակել ու ի չիք դարձնել անձի՝ արդար դատաքննության սահմանադրական իրավունքը (*տես Արմեն Մարգարյանն ընդդեմ Աշոտ Մարգարյանի թիվ 3-24(Ա) գործով Վճռաբեկ դատարանի 26.01.2007 թվականի որոշումը*):

Այս առումով Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը, վերոնշյալ վերլուծությունների և գործի փաստերի համադրմամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, արձանա-

---

գրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն իրավաչափ չէ: Ավելին, տիրապետելով Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 06.06.2012 թվականի թիվ 24/1-5/122/1296 գրությամբ տրված տեղեկությանն առ այն, որ Կարեն Համբարձումյանի գտնվելու կամ բնակության վայրի վերաբերյալ այլ տեղեկություններ Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում առկա չեն, և տեղեկանալով Էրեբունի վարչական շրջանի կողմից նրան ծանուցելու հնարավորության բացակայության մասին՝ այդուհանդերձ Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ և 94-րդ հոդվածների պահանջներին համապատասխան Կարեն Համբարձումյանին պատշաճ ձևով տեղեկացրել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ և 94-րդ հոդվածների պահանջներին համապատասխան Կարեն Համբարձումյանին պատշաճ ձևով չի տեղեկացրել նշանակված դատական նիստերի ժամանակի և վայրի մասին և գործը քննել է նրա բացակայությամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, որի պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննությունն անհրաժեշտ է իրականացնել այն ծավալով, որով Դատարանի վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, այն է՝ Գուրգեն Կարենի Համբարձումյանի և Սեդա Կարենի Համբարձումյանի ապրելու իրավունքը Կարեն Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նոր Արեշ 34-րդ փողոցի թիվ 56/1 հասցեի տան նկատմամբ ճանաչելու պահանջի մասով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.01.2013 թվականի որոշումը և գործը Գուրգեն Կարենի Համբարձումյանի և Սեդա Կարենի Համբարձումյանի ապրելու իրավունքը Կարեն Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Նոր Արեշ 34 փողոցի թիվ 56/1 հասցեի տան նկատմամբ ճանաչելու պահանջի մասով ուղարկել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ **ԳԴ-4/0069/02/13**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ **ԳԴ-4/0069/02/13**  
Նախագահող դատավոր՝ **Ա. Թումանյան**  
Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**  
**Դ. Խաչատրյան**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**  
**Վ. ԱԲԵԼՅԱՆԻ**  
**Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ. ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ**

2013 թվականի նոյեմբերի 29-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «ՀԱՆ-ՔԱՎԱՆ» հանքային ջրերի գործարան» ԲԲԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.08.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ «ՀԱՆ-ՔԱՎԱՆ» հանքային ջրերի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 266.352 ՀՀ դրամ և լուծել 10.03.2005 թվականին կնքված «Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից բարձր տարածքներում հողամասի վարձակալության մասին թիվ 073 պայմանագիրը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Մանուկյան) (այսուհետ՝ Դատարան) 03.05.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.08.2013 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.05.2013 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

---

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 78-րդ, 86-րդ, 218-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ներկայացված հայցապահանջը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված բացառիկ ընդդատության ենթակա հայցապահանջ չէ, որպիսի պարագայում հայցը պետք է հարուցվեր և վարույթ ընդունվեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված ընդդատության ընդհանուր կանոնին համապատասխան: Վերոգրյալից հետևում է, որ Դատարանը իրավասու չէր քննելու «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հայցը, այլ պետք է կայացներ որոշում գործը պատասխանողի գտնվելու վայրի, այն է՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին հանձնելու մասին, ինչը, սակայն, չի արել՝ թույլ տալով դատավարական իրավունքի կոպիտ խախտում, որի արդյունքում պատասխանողին գրկել է իրավասու դատարանում հանդես գալու և իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը, հայցը բավարարել է՝ հիմք ընդունելով հայցվորի կողմից ներկայացված տեղեկանքը, որով պարտքի չափը չի ապացուցվել:

Գումարի բռնագանձման պահանջով ապացուցման բեռը կրում է հայցվորը, որը պետք է ապացուցեր պատասխանողի պարտքի չափը: Սույն գործով պարտքի չափի վերաբերյալ որպես ապացույց հայցվորը ներկայացրել է իր իսկ կազմած տեղեկանքը, որը սուբյեկտիվ փաստաթուղթ է և չի կարող հանդիսանալ փաստը հաստատող պատշաճ ապացույց:

Սույն գործով Վերաքննիչ բողոքի քննությունը նշանակվել է 21.08.2013 թվականին՝ ժամը 12:15-ին, որը չի կայացել, իսկ նոր նիստի վերաբերյալ Կազմակերպությունը չի ծանուցվել և առանց պատշաճ ծանուցման Կազմակերպության վերաքննիչ բողոքը քննվել և մերժվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.08.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վերաքննիչ դատարանի 21.08.2013 թվականի ժամը 12:15-ին նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին Ընկերությունը և Կազմակերպության ներկայացուցիչը ծանուցագրերով ծանուցվել են (**գ.թ. 69-79**):

2. Դատական նիստի արձանագրության համաձայն՝ սույն գործով դատական նիստը սկսվել է 21.08.2013 թվականի ժամը 13:10-ին: Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով տեղեկացվել են դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն չեն ներկայացել, գործը քննել է նրանց բացա-

կայությունը: Նույն օրը դատարանը գործի քննությունը հայտարարել է ավարտված (**գ.թ. 86**):

3. Վերաքննիչ բողոք ներկայացրած անձ Կազմակերպությունը պատշաճ ձևով չի տեղեկացվել 21.08.2013 թվականի ժամը 13:10-ին տեղի ունենալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է այն իրավական խնդրին, թե արդյոք դատարանը, գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելով դատական նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն այն սկսելով ուշացմամբ, խախտում է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատարարական սկզբունքները:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝ բողոք բերած անձն իրավունք ունի ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին: Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի համաձայն՝ ծանուցագիրը պետք է պարունակի դատարանի անվանումը և ստույգ հասցեն, նշում՝ **ներկայանալու ժամանակի և վայրի մասին**, գործը, որի վերաբերյալ անձը ծանուցվում է, նշում՝ դատարան կանչվող կամ ծանուցվող անձի մասին, նշում, թե անձը որպես ինչ է ծանուցվում կամ կանչվում, նշում՝ չներկայանալու հետևանքների մասին:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման հարցին: Մասնավորապես, նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (*յրեն՝ ըստ հայցի Վերգուշ Վարդանյանի ընդդեմ Եղիշ Թորոսյանի, Արամյիս Օհանջանյանի և Միշա Գրիգորյանի՝ ընդհանուր գույքում բաժինն առանձնացնելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամի և վայրի մասին

---

գործին մասնակցող անձանց **տեղեկանալու իրավունքը** և դատարանի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն (*տե՛ս Վարդան Նավասարդյանն ընդդեմ ՀՀ կատավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանան, երրորդ անձ Հանկեր Ավդալյանի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականը մասնակիորեն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ 3-1867(Ա) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 25.12.2007 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախագահողը **դատական նիստը բացում է գործի քննության համար նշանակված ժամին**: Այսինքն՝ դատական նիստը սահմանված ժամին սկսելը գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ տեղեկացված լինելու տարրերից է:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (*տե՛ս ըստ հայցի Շենգավիթի թաղապետարանի ընդդեմ Ալվինա, Լիանա Կազկոնների, Արամ, Ֆրունզ և Նարեկ Սարկոսյանների՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը փոխհատուցմամբ դադարեցնելու պահանջի մասին թիվ 3-2236/Ա քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի որոշումը*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանը դատական նիստը նշանակել է 21.08.2013 թվականին՝ ժամը 12:15-ին, որի վերաբերյալ վերաքննիչ բողոք բերած անձ Կազմակերպությունը պատշաճ ձևով ծանուցվել է: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը դատական նիստը սկսել է 21.08.2013 թվականին՝ ժամը 13:10-ին, այնինչ սույն գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ Վերաքննիչ դատարանը կողմերին պատշաճ ձևով տեղեկացրել է 21.08.2013 թվականի ժամը 13:10-ին տեղի ունենալիք դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ, 79-րդ և 218-րդ հոդվածների պահանջները, գործը քննել է վերաքննիչ բողոք բերած անձ Կազմակերպության բացակայությամբ, ինչը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով արձանագրված կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նույն դատարան նոր քննության

---

ուղարկելու համար, որի պայմաններում վճարելի բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճարելի դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.08.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2924/02/11  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան  
Դատավորներ՝ Ս. Միքայելյան  
Դ. Խաչատրյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2924/02/11  
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի  
ներկայացուցիչ Գագիկ Թովմասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի 02.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանի և  
Կարինե Բաղդասյանի ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ըն-  
կերություն) գումարի բռնագանձման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանը և Կարինե Բաղդասյանը պահանջել են  
պարտավորեցնել Ընկերությանը վերադարձնել 5.528.180 ՀՀ դրամ, որից 5.400.180 ՀՀ  
դրամը՝ որպես անհիմն ձեռք բերած գումար, իսկ 128.000 ՀՀ դրամը՝ որպես նախապես  
վճարված պետական տուրքի գումար, և պարտավորեցնել Ընկերությանը կատարել  
5.400.180 ՀՀ դրամի վրա հաշվարկված տույժի վերահաշվարկ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Գ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 26.12.2012 թվա-  
կանի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է «Հայաստանի Էլեկտրական  
ցանցեր» ՓԲ Ընկերությունից հոգուտ ԱՁ Էդմոնդ Ասատրյանի բռնագանձել 3.505.683  
ՀՀ դրամ, որից 3.397.680 ՀՀ դրամը՝ որպես պարտավորությունների խախտմամբ



պատճառված վնասի հատուցում, իսկ 108.003 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրքի գումար: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունից հոգուտ Կարինե Բաղդյանի բռնագանձել 2.002.500 ՀՀ դրամ՝ որպես պարտավորությունների խախտմամբ պատճառված վնասի հատուցում: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը պարտավորեցնել կատարելու 3.397.680 ՀՀ դրամի և 2.002.500 ՀՀ դրամի վրա հաշվարկված տույժի վերահաշվարկ՝ համապատասխանաբար այն բռնագանձելով հոգուտ Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանի և Կարինե Բաղդյանի, միաժամանակ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից հոգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել հաշվեգրվելիք տույժերի ընդհանուր հանրագումարի 2 (երկու) տոկոսը՝ որպես հայցապահանջի բավարարված մասին համապատասխան պետական տուրքի գումար: Հայցը՝ մնացած մասով, մերժել՝ անհիմն լինելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 26.12.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը դուրս է եկել հայցապահանջների շրջանակից և հայցը բավարարել է որպես պայմանագրային պարտավորությունների խախտման արդյունքում համահայցվորներին պատճառված վնաս, մինչդեռ համահայցվորները Դատարանից պահանջել էին Ընկերությունից բռնագանձել 5.400.180 ՀՀ դրամ՝ որպես անհիմն հարստացում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը պարտավոր է հիմնավորել Ընկերության ոչ օրինաչափ վարքագծի, այն է՝ Ընկերության կողմից կատարված գործողության կամ անգործության առկայությունը, համահայցվորների կողմից կրած վնասների առկայությունը, վնասների և Ընկերության ոչ օրինաչափ վարքագծի (գործողության կամ անգործության) միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, Ընկերության մեղավորությունը: Դատարանի կողմից հաստատված է համարվել վնասի հատուցման համար պարտադիր պայմաններից միայն մեկը, այն է՝ վնասի առկայությունը: Վնասի հատուցման համար պարտադիր մյուս երեք պայմանների առկայությունը սույն գործով Դատարանի կողմից չի ապացուցվել: Բացի այդ հայցվորների կողմից չեն ներկայացվել համապատասխան ապացույցներ, որոնցով կհաստատվեր սխալ հաշվարկը Ընկերության կողմից կատարված լինելու փաստը: Ինչ վերաբերում է ներկայացված ապացույցներին, ապա դրանցով չի հաստատվում, որ Ընկերությունը կատարել է որևէ անօրինական (պայմանագրին հակասող կամ պայմանագրով չսահմանված) գործողություն կամ գերծ է մնացել որևէ գործողություն կատարելուց, որը սահմանված է եղել Պայմանագիր 1-ով կամ Պայմանագիր 2-ով:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը որպես վնասի հատուցման պարտադիր պայման պետք է հիմնավորեր, որ Ընկերության մեղքով է, որ հոսանքի տրանսֆորմացիայի գործակիցը պայմանագրում գրանցվել է 40, մինչդեռ փաս-

---

տացի հոսանքի տրանսֆորմատորը եղել է 20, ինչը համահայցվորների և Դատարանի կողմից չի կատարվել: Տրանսֆորմատորը փաստացի չի համապատասխանել վերջինիս վրա փակցված պիտակին: Տվյալ պարագայում ամբողջ պատասխանատվությունն ընկնում է այդ տրանսֆորմատորն արտադրողի վրա, քանզի հենց վերջինս է, որ տրանսֆորմատորի վրա փակցրել է սխալ գործակցով պիտակ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 01.09.2008 թվականին Ընկերության և Ա/Չ Էդմոնդ Ասատրյանի միջև կնքվել է թիվ 180-074045 էլեկտրաէներգիայի մատակարարման և բարձր լարման ցանցերից սնվող սպառող (բացառությամբ՝ բնակչության) պայմանագիրը, որի Հավելված 1-ով սահմանվել է, որ տրանսֆորմացիայի գործակիցը 40 է (գ.թ. 101):

2) Կարինե Բաղջյանի և Ա/Չ Էդմոնդ Ասատրյանի միջև 12.09.2008 թվականին կնքվել է բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր, որը ՀՀ ԿԱ ԱԳ-Կ ՊԿ ՏՍ-ի կողմից 17.09.2008 թվականին ստացել է պետական գրանցում և տրվել է թիվ 2614051 վկայականը (գ.թ. 97):

3) Ա/Չ Էդմոնդ Ասատրյանը 25.09.2008 թվականին դիմում է ներկայացրել Ընկերության մասնաճյուղին՝ խնդրելով թիվ 180-074045 բաժանորդային քարտը (Կարինե Բաղջյան) անվանափոխել իր անունով (գ.թ. 100):

4) 13.07.2009 թվականին Ընկերության Փարաքար-2 տեղամասի ճարտարագետ Շ.Հ. Գևորգյանի կողմից կազմված և Ա/Չ Էդմոնդ Ասատրյանի կողմից ստորագրված և կնքված արձանագրության համաձայն՝ էլեկտրաէներգիայի հաշվիչ սարքի և հոսանքի տրանսֆորմատորի ստուգաչափման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ վահանակի մեջ տեղադրված հոսանքի տրանսֆորմատորների գործակիցը պայմանագրի մեջ նշված 40-ի փոխարեն իրականում մոտավորված է 20 գործակցով (գ.թ. 8):

5) 13.08.2009 թվականին Ա/Չ Էդմոնդ Ասատրյանին պատկանող արտադրամասում բաժանորդի խնդրանքով կատարվել է էլ. հաշվարկային սարքերի աշխատանքի վերաբերյալ կրկնակի տեխնիկական գնում, որի կապակցությամբ կազմվել է համապատասխան մասնագիտական արձանագրություն, համաձայն որի՝ 2005 թվականի մայիսից մինչև 2009 թվականի մայիս ամսվա ժամանակահատվածում հաշվիչը գրանցել է կրկնակի էլեկտրաէներգիայի ծախս (գ.թ. 9):

6) 18.04.2011 թվականին Ա/Չ Էդմոնդ Ասատրյանը դիմել է Ընկերությանը՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ծառայություններին կատարելու վերահաշվարկ և հետ վերադարձնելու կրկնակի ավել վճարված գումարները, սակայն պատասխանողի կողմից հայտնվել է. «Ի պատասխան Ձեր 18.04.2011 թվականի թիվ 05-775 գրությանը կապված Ա/Չ Էդմոնդ Ասատրյանի բաժանորդային քարտում ավել գրանցված ծախսերի հետ՝ հայտնում ենք, Ընկերության վիճահարույց հարցերի քննարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով բաժանորդի կողմից բարձրացված հարցը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը, առաջնորդվելով էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 56, 57 կետերի պահանջներով՝ իր 26.03.2010 թվականի թիվ 03/05 արձանագրությամբ ԱՉ-ի բաժանորդային քարտում 2010 թվականի մարտ ամսին կատարել է 29320 կվտ/ժ և դրան համապատասխան 810.700 ՀՀ դրամի, ինչպես նաև

136.376,71 ՀՀ դրամի տույժի վերահաշվարկ, ուստի ելնելով վերը շարադրվածից՝ Ձեր խնդրանքը լրացուցիչ վերահաշվարկ կատարելու մասով բավարարել չենք կարող» (գ.թ. 10):

7) Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանի կողմից ներկայացվել է կրկնակի հաշվարկված գումարի հաշվարկ, համաձայն որի՝ վերադարձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 5.400.180 ՀՀ դրամ, որից 2.002.500 ՀՀ դրամը՝ Կարինե Բաղջյանի մասով, իսկ 3.397.680 ՀՀ դրամը՝ Ա.Ձ Էդմոնդ Ասատրյանի մասով (գ.թ. 109):

8) 01.06.2005 թվականին, 13.03.2009 թվականին, 13.08.2009 թվականին, 06.10.2008 թվականին կազմված հանման-տեղադրման և հավաքակցման սխեմաների համաձայն՝ 01.06.2005 թվականին տեղադրվել է հաշվիչ, որը հետագայում համապատասխանաբար փոփոխվել է, սակայն բոլոր սխեմաներում հոսանքի տրանսֆորմատրի գործակիցը նշված է 40 (գ.թ. 118-119):

**4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն սնանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքով Վճարել դատարանի առջև բարձրացված հարցը վերաբերում է Դատարանի կողմից հայցի իրավական հիմքի շրջանակներից դուրս գալուն:*

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել հայցի հիմքի և առարկայի վերաբերյալ նախկինում ձևավորած հետևյալ դիրքորոշումը.

Հայցի առարկան այն նյութաիրավական պահանջն է, որը հայցվորը ներկայացնում է պատասխանողի դեմ, և որի վերաբերյալ դատարանը որոշում է կայացնում: Ընդ որում, հայցի առարկայից պետք է տարբերել հայցի օբյեկտը, այսինքն՝ այն առարկան, որին ուղղված է հայցի առարկայի բովանդակությունը կազմող պահանջը:

Վճարել դատարանն արձանագրել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

Վճարել դատարանը գտել է նաև, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերն են, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (ի թիվս այլոց *յուս՝ Վիզեն Ուրուշանյանն ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ հայցի Սուրիկ Սեդրակյանի ընդդեմ Վիզեն Ուրուշանյանի՝ անհիմն հարստացմամբ ստացած գումարը վերադարձնելու պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0473/02/10*

---

*քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*:

Փաստորեն հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը մինևույն սուբյեկտային կազմի դեպքում: ՀՀ օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու հնարավորությունը, ընդ որում, հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին կետ):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը հայցի հիմքը և առարկան փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ առարկան փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: Բոլոր դեպքերում, եթե հայցի հիմքում ներառված են փաստական և իրավական հիմքերը, դատարանը գործով սպացուցման առարկան որոշում է հայցվորի վկայակոչած և ենթադրյալ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմի և փաստական հանգամանքների համադրության հիման վրա: Հակառակ դեպքում, երբ դատարանը փոխում է հայցվորի վկայակոչած և ենթադրաբար կիրառման ենթակա նորմերը, դուրս է գալիս հայցի իրավական հիմքի շրջանակից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Սույն գործով Դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ վահանակի մեջ տեղադրված հոսանքի տրանսֆորմատորների գործակիցը պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 Հավելվածով սահմանված 40-ի փոխարեն իրականում մոնտաժված է 20 գործակցով, որի արդյունքում 2005 թվականի մայիսից մինչև 2009 թվականի հուլիսի 01-ի ժամանակահատվածի համար ձեռնարկությունում մոնտաժված էլեկտրական հաշվիչ սարքի վրա ֆիքսվել է ծախս՝ 567.320 կվտ/ժ, որը կազմել է 14.382.134 ՀՀ դրամ, այնինչ իրականում հայցվորների կողմից պետք է վճարվեր 7.191.067 ՀՀ դրամ, ուստի Դատարանը գտել է, որ Ընկերությունից հոգուտ Կարինե Բաղջյանի պետք է բռնագանձել 2.002.500 ՀՀ դրամ, իսկ հոգուտ Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանի՝ 3.397.680 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրային պարտավորության խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցում:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ համահայցվորների և պատասխանողի (բողոք բերած անձ) միջև առկա են պայմանագրային հարաբերություններ, իսկ բողոք բերած անձը, կրելով հաշվիչի, ինչպես նաև հոսանքի և լարման տրանսֆորմատորների գործարանային համարները և տեխնիկական հարաչափերը պայմանագրում նշելու, առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության, իսկ առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից հետո պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու պարտավորություն, խախտել է այն, որի արդյունքում համահայցվորները կրել են վնաս, ուստի այս իրավահարաբերության նկատմամբ կիրառելի են պայմանագրային պարտավորության չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորող պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն

նախատեսող նորմերը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-422-րդ հոդվածներ):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Ա/Ձ Էդմոնդ Ասատրյանի և Կարինե Բաղդյանի *պահանջն* ուղղված Ընկերությանը եղել է գումարի բռնագանձումը, ընդ որում, *հայցի փաստական հիմքն* է եղել այն հանգամանքը, որ Ընկերությունն առանց օրինական հիմքի հայցվորների հաշվին ձեռք է բերել գումար և պարտավոր է այն վերադարձնել որպես անհիմն ձեռք բերած գումար (անհիմն հարստացում) (*հայցի իրավական հիմքը*), սակայն թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը, անտեսելով այս հանգամանքը, որպես պահանջ դիտարկել են պայմանագրային պարտավորությունների խախտման արդյունքում համահայցվորներին պատճառված վնասը:

Հիմք ընդունելով վերոգյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը վեճը լուծելիս կիրառելի են համարել պայմանագրային պարտավորությունների պատշաճ չկատարման հետևանքով պատճառված վնասը կարգավորող դրույթները՝ չնայած այն հանգամանքին, որ հայցվորը որպես իրավական հիմք նշել էր անհիմն հարստացումը: Արդյունքում Դատարանը դուրս է եկել հայցի իրավական հիմքի շրջանակներից, իսկ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել դատարանի նման դիրքորոշումը՝ այդ կերպ թույլ տալով դատավարական իրավունքի խախտում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար, որի պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.05.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ *սպորազրույթուն*  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ *սպորազրույթուններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **SԴ-1/0011/04/12**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ SԴ-1/0011/04/12

Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան

Դատավորներ՝ Ա. Մկրտչյան

Ի. Վարդանյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի Իջևանի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝  
Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2013  
թվականի որոշման դեմ՝ ըստ Տեսչության դիմումի ընդդեմ անհատ ձեռնարկատեր  
Արտաշես Մատիսյանի՝ 4.104.890 ՀՀ դրամ հարկային պարտավորության չկատարման  
համար սնանկ ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը խնդրել է 4.104.890 ՀՀ դրամ հարկային պար-  
տավորությունը չկատարելու համար անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատիսյանին  
ճանաչել սնանկ:

ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի  
(նախագահող դատավոր՝ Ա.Շահոյան) (այսուհետ՝ Դատարան) 18.09.2012 թվականի  
վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 08.02.2013 թվականի որոշմամբ բավարարվել է գործին մասնակից չդարձված

անձ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 18.09.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը և 46-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Բանկը 60-օրյա ժամկետում անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմում չի ներկայացրել դատարան: Այս պարագայում Բանկը կարող էր օգտվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով իրեն վերապահված համապատասխան պահանջ ներկայացնելու իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.02.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 18.09.2012 թվականի վճիռն:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 28.12.2010 թվականին տրված թիվ ՎԳ-2/0311/05/10 կատարողական թերթի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանը 17.11.2010 թվականին վճռել է անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.253.792 ՀՀ դրամ, որից ապառք՝ 943.200 ՀՀ դրամ, ապառքի նկատմամբ հաշվարկված տույժ՝ 286.008 ՀՀ դրամ, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրք՝ 24.584 ՀՀ դրամ: Նշված կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 11-47/11 կատարողական վարույթը: **(հատոր 1-ին, գ. թ. 51-52):**

2) 09.02.2011 թվականին տրված թիվ ՏԳ-1/0361/02/10 կատարողական թերթի համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանն ըստ Բանկի հայցի ընդդեմ Արտաշես Կառլենի Մատինյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին քաղաքացիական գործով 25.11.2010 թվականին վճռել է անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանից հօգուտ Բանկի բռնագանձել 6.045.025 ՀՀ դրամ, որից 5.642.464 ՀՀ դրամ՝ որպես վարկի գումարի պարտք, 370.353 ՀՀ դրամ՝ որպես կուտակված տոկոսագումար, 11.347 ՀՀ դրամ՝ որպես տուգանք, 20.861 ՀՀ դրամ՝ որպես տուժանք, 5.642.464 ՀՀ դրամ վարկի պարտքի գումարին, սկսած 16.07.2010 թվականից, հաշվեգրել տոկոսներ վճարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց գումարների 0,1 տոկոսի չափով, ինչպես նաև բռնագանձել 120.901 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար և մինչև պարտավորության դադարման օրը վարկի պարտքի գումարին հաշվարկված տոկոսների գումարի 2 տոկոսի չափով պետական տուրքի գումար, սակայն ոչ պակաս 1.500 ՀՀ դրամից: Բռնագանձումը տարածվել է Արտաշես Մատինյանի կողմից գրավադրված գույքի՝ ք. Իջևան, Արցախյան փողոց թիվ 5/1 հասցեում գտնվող 0,00941 հա ընդհանուր մակերեսով հողամասի և նրա վրա գտնվող 76,5 քմ ընդհանուր մակերեսով ավտոտեխսպասարկման կետի վրա **(հատոր 2-րդ, գ. թ. 16-17):**

3) Ի կատարումն ՀՀ վարչական դատարանի կողմից 28.12.2010 թվականին տրված թիվ ՎԳ-2/0311/05/10 կատարողական թերթի՝ 01.06.2011 թվականին ք. Իջևան,

---

Արցախյան փողոց թիվ 5/1 հասցեում գտնվող անշարժ գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, սակայն գույքի արժեքը նվազել է, ինչի հետևանքով գույքը հանվել է էլեկտրոնային աճուրդից: Այնուհետև 19.06.2012 թվականին թիվ 11-47/11 կատարողական վարույթը կասեցվել է 60-օրյա ժամկետով, և կողմերին առաջարկվել է սնանկության հայց ներկայացնել դատարան (**հատոր 1-ին, գ. թ. 57**):

#### **4. Վճարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարեկ դատարանն անդրադառնում է հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի դեմ այլ պարտավորոջ կողմից՝ որպես գործին մասնակից չդարձված անձ վերաքննիչ բողոք բերելու խնդրին:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության յուժող դատական ակտ:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում, պարտապանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում, պարզվում է, որ այդ գույքն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության որևէ կատարողական վարույթով (վարույթներով) պարտատիրոջ (պահանջատիրոջ) պահանջը բավարարելու դեպքում գույքի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի և ավելի չափով անբավարարության դեպքում անհնարին կդառնա այդ կամ այլ կատարողական վարույթով (վարույթներով) որևէ այլ պարտատիրոջ (պահանջատիրոջ) հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումը, ապա հարկադիր կատարողը պարտավոր է անհապաղ կասեցնել կատարողական վարույթը (վարույթները) և առաջարկել պարտատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ ոչ պակաս, քան 60-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Նշված դրույթներից բխում է, որ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով սեփական նախաձեռնությամբ՝ կամավոր սնանկության դիմումի հիման վրա, կամ պարտատիրոջ պահանջով՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա: Կամավոր կամ հարկադրված սնանկության դիմում ներկայացնելու հիմքեր կարող են առաջանալ նաև կատարողական գործողությունների ընթացքում պարտապանի գույքի անբավարարության դեպքում: Նման դեպքերում հարկադիր կատարողն այդ մասին տեղյակ է պահում պարտատիրոջը և պարտապանին, որպեսզի նրանցից որևէ մեկը պարտապանին սնանկ ճանաչելու հայց ներկայացնի դատարան: Մի քանի



պարտատերերի առկայության դեպքում միայն մեկի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու հայց ներկայացնելը չի գրկում մյուս պարտատերերին սնանկության վարույթի մյուս փուլերին մասնակցելու, մասնավորապես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով համապատասխան պահանջները դատարան ներկայացնելու իրավունքից: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության վարույթի ընթացքում առաջացող հարաբերությունների իրավակարգավորումը ենթադրում է այնպիսի կառուցակարգ, որն ուղղված է բոլոր պարտատերերի պահանջների համաչափ բավարարմանը: Անկախ այն հանգամանքից՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը որ պարտատերն է ներկայացրել, մնացած բոլոր պարտատերերը պարտապանի գույքի հաշվին կարող են ստանալ հավասարաչափ բավարարում՝ սնանկության մասին հայտարարությունից մեկ ամիս հետո իրենց պահանջները դատարան ներկայացնելով: Սնանկ ճանաչելու դիմումի վարույթի քննության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վարույթի այս փուլում դատարանը քննում է պարտապանի դեմ դիմում ներկայացրած պարտատիրոջ պահանջը՝ անկախ այն հանգամանքից՝ առկա են արդյոք նույն պարտապանի նկատմամբ այլ պարտատերեր, թե ոչ: Միայն սնանկության հիմքերի առկայության դեպքում է սնանկ ճանաչելու վճիռ կայացնելուց հետո վարույթին ներգրավվում են սնանկ ճանաչված անձի մյուս պարտատերերը: Նման կարգավորվածությունը մի կողմից ապահովում է դիմումի քննության արագությունը և արդյունավետությունը, քանի որ դատարանը չի քննում բոլոր հնարավոր պարտատերերի պահանջները և չի անդրադառնում դրանցից յուրաքանչյուրի հիմնավորվածությանը, իսկ մյուս կողմից երաշխավորում է բոլոր հնարավոր պարտատերերի իրավունքների (պահանջի իրավունքի) պաշտպանությունը՝ նրանց հնարավորություն տալով գրանցելու իրենց պահանջները և այդ կերպ ներգրավվելու սնանկության վարույթին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանը 17.11.2010 թվականին վճռել է անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.253.792 ՀՀ դրամ, որից ապառք՝ 943.200 ՀՀ դրամ, ապառքի նկատմամբ հաշվարկված տույժ՝ 286.008 ՀՀ դրամ, ինչպես նաև նախապես վճարված պետական տուրքը՝ 24.584 ՀՀ դրամ: Նշված կատարողական թերթի հիման վրա հարուցվել է թիվ 11-47/11 կատարողական վարույթը: 19.06.2012 թվականին կատարողական վարույթը կասեցվել է 60-օրյա ժամկետով, և կողմերին առաջարկվել է սնանկության հայց ներկայացնել դատարան: Տեսչությունը դիմում է ներկայացրել Դատարան՝ անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու համար: Գործով հաստատված չէ փաստ, որ անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու համար Բանկը դատարան է դիմել: Դատարանի 18.09.2012 թվականի վճռով անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանը ճանաչվել է սնանկ:

Վերաքննիչ դատարանը, քննելով նշված վճռի դեմ Բանկի՝ որպես գործին մասնակից չդարձված անձի վերաքննիչ բողոքը, բեկանել է Դատարանի վճիռը և գործն ուղարկել նոր քննության՝ պատճառաբանելով, որ Արտաշես Մատինյանը դրամային պարտավորություն ունի Բանկին նկատմամբ, որի հիման վրա պարտապանից Բանկի նկատմամբ ունեցած պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ, ավելին, ի կատարում վերջինիս՝ հարուցված է կատարողական վարույթ, որը կասեցնելու հիմք է հանդիսացել բողոքարկվող դատական ակտը: Հաշվի առնելով այն, որ սնանկության վարույթի և Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի հետևանքներն ուղղակիորեն ազդում են բողոքաբերի իրավունքների և օրինական շահերի վրա, բողոքաբերը գործին մասնակից չի դարձվել, վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է պարտապանի գույքային դրության վերաբերյալ ապացույցներ, որոնք էական նշանակություն ունեն պարտապանի սնանկության հարցը լուծելու համար:

---

Հաշվի առնելով սնանկության վարույթի մասնակիցների դատավարական կարգավիճակի առանձնահատուկ բնույթը, որով նրանք տարբերվում են քաղաքացիադատավարական այլ բնույթի գործերով մասնակիցների դատավարական կարգավիճակից, ինչպես նաև սնանկության վարույթի ընթացքում ծագող հարաբերությունների վերը նշված առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերահաստատել նախկինում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածը գործին մասնակից չդարձված անձանց վերապահում է գործին մասնակցող անձանց իրավունքներ և նրանց համար սահմանում պարտականություններ միայն այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ (*ի թիվս այլոց* *տե՛ս* ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի գյուղապետարանն ընդդեմ Լարիսա Եղիազարյանի, Գագիկ Մալխասյանի թիվ ԱՐԱԴ/0242/02/10 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի որոշումը): Սույն գործով Բանկին գործի քննությանը մասնակից չդարձված անձ դիտարկելու համար անհրաժեշտ էր, որպեսզի ծանրակշիռ հիմնավորմամբ հաստատվեր, որ սնանկ ճանաչելու վճիռն ուղղակիորեն վերաբերում է Բանկի իրավունքներին և պարտականություններին: Այլ կերպ՝ պետք է հիմնավորվեր այն փաստը, որ Բանկի վրա այդ վճռով դրվել են պարտականություններ, կամ սահմանափակվել են Բանկի իրավունքները՝ առանց վերջինիս մասնակից դարձնելու գործի քննությանը:

Մասնկության վարույթի իրավակարգավորման վերաբերյալ վերը նշված դիրքորոշման համատեքստում անդրադառնալով գործի փաստերին և գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը թույլ է տալիս պարտատիրոջը (պարտատերերին) նշված հոդվածում շարադրված պայմանների առկայության դեպքում պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան՝ այդպիսով իսկ ձեռք բերելով դիմողի կարգավիճակ: Բանկն իր այդ իրավունքից չի օգտվել՝ բաց թողնելով սնանկության վարույթի այդ փուլին մասնակցելու իր հնարավորությունը: Այդուհանդերձ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը հնարավորություն է տալիս բոլոր պարտատերերին՝ նույն հոդվածով սահմանված կարգով իրենց պահանջները ներկայացնելու դատարան:

Վերոնշյալից հետևում է, որ Դատարանում անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու գործին Բանկին մասնակից չդարձնելը չի զրկում վերջինիս սնանկության վարույթի այդ փուլին հաջորդող համապատասխան այլ փուլում մասնակցելու և իր պահանջները ներկայացնելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ անհատ ձեռնարկատեր Արտաշես Մատինյանին սնանկ ճանաչելու մասին Դատարանի 18.09.2012 թվականի վճիռն ուղղակիորեն չի վերաբերում Բանկի իրավունքներին և պարտականություններին, հետևաբար վերջինս չի կարող օգտվել գործին մասնակից չդարձված անձի իրավունքներից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է

կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը քեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, սույն գործով կայացված վճռի դեմ գործին մասնակցող անձանց կողմից վերաքննիչ բողոք չներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև տվյալ իրավիճակում գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 18.09.2012 թվականի վճռին:

2. «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Իջևանի տարածքային հարկային տեսչության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՇԴ/0021/02/12**  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0021/02/12  
Նախագահող դատավոր՝ **Ս. Սահակյան**  
Դատավորներ՝ **Կ. Հակոբյան**  
**Տ. Նազարյան**

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ*  
*մասնակցությամբ դատավորներ*

**Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ**  
**Գ.ՀԱԿՈԲՅԱՆԻ**  
**Վ.ԱԲԵԼՅԱՆԻ**  
**Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ**  
**Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ**  
**Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ**  
**Մ.ԴՐՄԵՅԱՆԻ**  
**Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ**  
**Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**  
**Ե.ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ**

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Արշակյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի  
Վարդան Պողոսյանի ընդդեմ Տիգրան Արշակյանի՝ գումար բռնագանձելու պահանջի  
մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Վարդան Պողոսյանը պահանջել է Տիգրան Արշակյանից  
hoգուտ իրեն բռնագանձել 28.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես  
փոխառության գումար և այդ գումարի նկատմամբ վճարման ենթակա տոկոսները՝ սկսած  
26.11.2010 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, ինչպես  
նաև փաստաբանի վարձատրության գումարը և ուրիշի դրամական միջոցներն ապօրինի  
պահելու համար օրենքով սահմանված տոկոսները՝ սկսած 30.12.2011 թվականից մինչև  
պարտավորության փաստացի կատարման օրը:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի  
դատարանի (դատավոր Ա. Չիչոյան) (այսուհետ՝ **Դատարան**) 22.06.2012 թվականի վճռով  
հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.09.2012 թվականի որոշմամբ Վարդան Պողոսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 22.06.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Արշակյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, 118-րդ հոդվածը, 207-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղի է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հարցերին պատասխանելուց կամ ցուցմունքներ տալուց կողմի հրաժարվելու դեպքում հրաժարումն անհիմն համարելը ոչ թե դատարանի պարտականությունն է, այլ՝ իրավունքը, իսկ կողմն իրավունք ունի դատարանին խնդրել վեճը լուծելու իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա: Տվյալ դեպքում պատասխանողը օգտվել է իրեն վերապահված իրավունքից՝ նշանակված դատական նիստին չի ներկայացել և խնդրել է գործը քննել իր բացակայությամբ՝ Դատարանին ներկայացնելով իր գրավոր բացատրությունը, որի պայմաններում իր չներկայանալը չի կարող դիտվել որպես ցուցմունք տալուց հրաժարում կամ խուսափում:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ Դատարանի 22.06.2012 թվականի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 23.07.2012 թվականին, իսկ այդ վճիռի դեմ վերաքննիչ բողոքը փոստի միջոցով առաքվել է 24.07.2012 թվականին, այսինքն՝ վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ, ինչպես նաև միջնորդություն չի ներկայացվել ժամկետը վերականգնելու մասին, Վարդան Պողոսյանի բերած վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.09.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.06.2012 թվականի վճիռին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- 1) Սույն գործով Դատարանը վճիռը կայացրել է 22.06.2012 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 77-79).
- 2) Դատարանի 22.06.2012 թվականի վճիռի դեմ վերաքննիչ բողոքը Վարդան Պողոսյանը ներկայացրել է 24.07.2012 թվականին (հատոր 2-րդ, գ.թ. 4).
- 3) Վերաքննիչ բողոքը միջնորդություն չի պարունակել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին (հատոր 2-րդ, գ.թ. 4-7).
- 4) Բողոքի հետ մեկտեղ ներկայացվել է նաև միջնորդություն պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ (հատոր 2-րդ, գ.թ.8).
- 5) 30.07.2012 թվականին Վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին (հատոր

2-րդ, գ.թ. 13).

6) Վերաքննիչ դատարանի 28.09.2012 թվականի որոշմամբ Վարդան Գողոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 22.06.2012 թվականի վճիռը, գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության: Միաժամանակ որոշվել է դատական ծախսերի, այդ թվում Վերաքննիչ դատարանի որոշմամբ հետաձգված պետական տուրքի բռնագանձման հարցին անդրադառնալ գործի նոր քննությամբ (հատոր 2-րդ, գ.թ. 39-42):

#### **4. Վճարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի շրջանակներում Վճարեկ դատարանն անդրադառնում է առաջին ապրիլի դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետների հաշվարկման հարցին:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվվող դատավարական ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթվի չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե գումարը բռնագանձելու պահանջի մասին կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ այդ ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ եթե ներկայացված չէ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարը բռնագանձելու մասին պահանջ կամ դրամական արտահայտությամբ գնահատված հայցի առարկայի արժեքը չի գերազանցում այդ չափը, ապա ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նշված ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև

այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Նշված ժամկետից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից: Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ժամկետների հաշվարկի դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել քաղաքացիական դատավարությունում ժամկետների հաշվարկի համար նախատեսված ընդհանուր կանոններով, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներում:

Վերաքննիչ բողոք բերելու ժամկետները բաց թողնելու կամ բաց թողած ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժելու դեպքում օրենսդիրը նախատեսել է որոշակի իրավական հետևանքներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու վերջնաժամկետը լրանալուց հետո վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վերոգրյալից հետևում է, որ վերաքննիչ բողոքը բոլոր դեպքերում վերադարձվում է, եթե այն բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, իսկ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում վերաքննիչ դատարանը կարող է կայացնել այն դեպքում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերը:

Վերը նշված վերլուծության համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը վճիռը կայացրել է **22.06.2012 թվականին**, իսկ այդ վճռի դեմ վերաքննիչ բողոքը Վարդան Պողոսյանը ներկայացրել է **24.07.2012 թվականին**: Փաստերի նման դասավորվածության դեպքում վերաքննիչ բողոք բերելու ժամկետի հաշվարկը սկսվում է Դատարանի վճիռը կայացնելու հաջորդ օրը՝ 2012 թվականի հունիսի 23-ին և լրանում 2012 թվականի հուլիսի 23-ին: Հետևաբար Վարդան Պողոսյանը, վերաքննիչ բողոքը ներկայացնելով 2012 թվականի հուլիսի 24-ին, բաց է թողել օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը: Ունենալով հնարավորություն՝ Վարդան Պողոսյանը չի ներկայացրել միջնորդություն բաց թողած ժամկետը վերականգնելու մասին: Վերաքննիչ դատարանը, անտեսելով նշված հանգամանքը, 30.07.2012 թվականին որոշում է կայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի վերը նշված նորմերի խախտման ձևով, որը հետագայում ազդել է գործի ելքի վրա՝ 28.09.2012 թվականի որոշմամբ բավարարել է Վարդան Պողոսյանի վերաքննիչ բողոքը, Դատարանի 22.06.2012 թվականի վճիռը բեկանել է և գործն ուղարկել է նոր քննության:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ Վերաքննիչ դատարանը, վարույթ ընդունելով օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված բողոքը, խախտել է իրավական որոշակիության սկզբունքը: Նշված սկզբունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած դիրքորոշման համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ

---

հողվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է, որ երբ համապատասխան ժամկետն անցնելուց հետո դատարանի կողմից որևէ հարցի տրված լուծումը դարձել է վերջնական, ապա այն այլևս չի կարող կասկածի տակ դրվել (*տես Բրունսվերտսկուն ընդդեմ Ռումինիայի, 1999 թվականի հոկտեմբերի 28, գանգառ թիվ 28342/95, պարբ. 61*):

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և վճռաբեկ բողոքում նշված մյուս փաստարկին չանդրադառնալու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.06.2012 թվականի վճռին:

2. Վարդան Պողոսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 1.058 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք, 1.058 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.12.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք,



ինչպես նաև 30.12.2011 թվականից մինչև 28.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը վերադարձնելու օրը նշված գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա և հետաձգված պետական տուրք ու նույն գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, գումար՝ որպես վճարելի բողոքի համար վճարման ենթակա և հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2017/02/11  
2013թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2017/02/11  
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան  
Դատավորներ՝ Լ. Գրիգորյան  
Գ. Մատինյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ.ՀԱԿՈՔՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ.ԴՐՄԵՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե.ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Տիգրան Կովկասյանի և Կարինե Հարությունյանի ընդդեմ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրո), «Ռ-ԱՄԿՈ» ԱՄԳԼ-ի (ներկայումս՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՄԳԼ-ի) (այսուհետ՝ Ընկերություն), երրորդ անձ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), Արթուր Դանիելյանի և Արայիկ Զաքարյանի՝ Բյուրոյի գրությունը և գործողությունները, այդ գրության հիման վրա տրված եզրակացությունը, ինչպես նաև Ընկերության որոշումն ու գրությունն անվավեր ճանաչելու և վնասը հատուցելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տիգրան Կովկասյանը և Կարինե Հարությունյանը պահանջել են անվավեր ճանաչել Բյուրոյի՝ Կազմակերպությանը հասցեագրած 27.05.2011 թվականի թիվ Բ/SU-167 գրությունը և գործողությունները, այդ գրության հիման վրա 03.06.2011 թվականին Կազմակերպության փորձագետի տված թիվ 11-0101Պ եզրակացությունը, Ըն-

կերության որոշումը և 07.06.2011 թվականի թիվ Ռ/ԲԱ-387 գրությունը, ինչպես նաև Ընկերությունից հոգուտ իրենց բռնագանձել 1.326.000 ՀՀ դրամ գումար՝ որպես պատճառված վնասի հատուցում, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ մինչև պարտավորության կատարման օրը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր Գ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 22.11.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Ընկերության 07.06.2011 թվականի որոշումը (եզրակացությունը), Ընկերությունից հոգուտ Կարինե Հարությունյանի բռնագանձել 1.326.000 ՀՀ դրամ՝ որպես ավտովթարի հետևանքով պատճառված վնասի հատուցման գումար, այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 07.09.2011 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը. մնացած պահանջների մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.09.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Տիգրան Կովկասյանը և Կարինե Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, նույն կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 53-րդ, 212-րդ, 214-րդ, 217-րդ, 219-րդ, 220-րդ, 204.30-204.38-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք՝ նշված պնդումը պարճատարանում են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս չի հիմնավորել, թե ինչու Ընկերությունը չի իմացել կամ չէր կարող իմանալ առավել արագության սահմանափակման նշանի առկայության մասին, կամ իմացել է, սակայն իրենից անկախ պատճառներով չի կարողացել ներկայացնել Դատարանին, և այդ հանգամանքը գործի լուծման համար ինչ էական նշանակություն ունի: Այսպես՝ Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ճանապարհային նշանի առկայության մասին եզրակացության մեջ չնշելը ինչ պատճառահետևանքային կապ ունի ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության հետաքննության բաժանմունքի կողմից 26.04.2011 թվականին տրված եզրակացության (այսուհետ՝ Եզրակացություն) մեջ Տիգրան Կովկասյանի վարած ավտոմեքենայի՝ ավտովթարին նախորդող պահին ունեցած արագության հետ, և այն չարտացոլելը տվյալ քաղաքացիական գործի ճիշտ ու օբյեկտիվ լուծման վրա ինչ ազդեցություն կարող է ունենալ:

Վերաքննիչ դատարանը, դուրս գալով իր լիազորությունների շրջանակներից, բողոքը քննելիս ստանձնել է ՀՀ վարչական դատարանի լիազորություններ՝ իր 05.09.2012 թվականի որոշման մեջ նշելով, որ վարչական մարմնի կողմից տրված Եզրակացության մեջ բացակայում են համապատասխան նշումներ Տիգրան Կովկասյանի վարած

---

ավտոմեքենայի՝ ավտոլթարին նախորդող պահին ունեցած արագության վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի նյութերը, այդ թվում նաև չի անդրադարձել Տիգրան Կովկասյանի ներկայացրած՝ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից 27.08.2012 թվականին տրված թիվ 17/12-9386 գրությանը, որով հերքվում է նոր երևան եկած հանգամանքի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 05.09.2012 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 22.11.2011 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա մերժման, քանի որ Եզրակացությունը հիմնված է սխեմայի վրա, իսկ սխեմայում բացակայում է դեպքի վայրում առկա ճանապարհային երթևեկության «առավելագույն արագությունը սահմանող» նշանը, որը վկայում է Եզրակացության կեղծ լինելու մասին:

Վերը նշված ճանապարհային նշանը սխեմայում արտացոլելու դեպքում տեղի կունենար իրավիճակի էական փոփոխություն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 24.03.2011 թվականին Արթուր Դանիելյանն իրեն պատկանող «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան վարելիս թույլ է տվել ՃԵԿ-ի 39-րդ և 40-րդ կետերի պահանջների խախտում, որի հետևանքով բախվել է Կարինե Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող և Տիգրան Կովկասյանի վարած «Նիսսան» մակնիշի ավտոմեքենային, որի հետևանքով նշված ավտոմեքենան հարկադրաբար դուրս է եկել հանդիպակաց ուղեմաս և ընդհարվել «Միցուբիշի» մակնիշի ու կայանված վիճակում գտնվող «Ֆոլկվագեն» մակնիշի ավտոմեքենաներին և դրանց սեփականատերերին պատճառել նյութական վնաս (հատոր 1-ին, գ.թ. 19-22, 138-150).

2) ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության հետաքննության բաժանմունքի պետի 10.05.2011 թվականի որոշմամբ Արթուր Դանիելյանը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124<sup>6</sup> հոդվածի 1-ին մասի համաձայն, ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակվել է տուգանք 20.000 ՀՀ դրամի չափով (հատոր 1-ին, գ.թ. 23).

3) «Փորձագետների միություն» ՍՊԸ-ի փորձագետի տված եզրակացության համաձայն՝ «Նիսսան» մակնիշի ավտոմեքենայի սեփականատիրոջը վթարի հետևանքով պատճառված նյութական վնասի չափի շուկայական գինը գնահատվել է 1.326.000 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 10-16).

4) Արթուր Դանիելյանին պատկանող «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի ապահովագրողն է Ընկերությունը: Վերջինս 07.06.2011 թվականի թիվ Ռ/ԲԱ-387 գրությամբ Կարինե Հարությունյանին հայտնել է, որ Ընկերությունը որոշում է կայացրել ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին (հատոր 1-ին, գ.թ. 38).

5) 15.06.2012 թվականին Ընկերությունը Վերաքննիչ դատարան է ներկայացրել նոր երևան եկած հանգամանքներով Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը վերանայելու մասին բողոք (հատոր 2-րդ, գ.թ. 3-8)՝ որպես նոր երևան եկած հանգամանք վկայակոչելով ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում «Առավելագույն արագության

սահմանափակում» ճանապարհային նշանի առկայությունը և որպես այդ հանգամանքը հաստատող ապացույց ներկայացնելով «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից 15.05.2012 թվականին տրված տեղեկանքը: Նշված տեղեկանքի համաձայն՝ Կիևյան փողոցի թիվ 11/3 շենքի դիմաց տեղադրված, Օրբելի փողոցի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցների 3.24 40 կմ/ժ «Առավելագույն արագության սահմանափակում» ճանապարհային նշանը գործել է 1.23 «Երեխաներ» ճանապարհային նշանի հետ համատեղ, 2011 թվականի ընթացքում այդ նշանի բացակայության փաստ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի անվտանգ երթևեկության կազմակերպման բաժնի կողմից չի հայտնաբերվել, և ճանապարհային նշանի վերականգնման հայտ չի ուղարկվել (հատոր 4-րդ, գ. թ. 11):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետում նշված հիմքին՝ հաշվի առնելով նման գործերով դատական պրակտիկայի միասնականության ապահովումը:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Նշված դրույթի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայվում է, եթե բողոք բերած անձն ապացուցում է, որ՝

1. այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ

2. այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և

3. այդ հանգամանքներն էական նշանակություն ունեն գործի լուծման համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի տասներորդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է **«և»** կամ **«ու»** շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Վերոնշյալ հոդվածը համադրելով նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետում նշված հիմքի վերաբերյալ մեկնաբանության հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար բողոք բերած անձը պետք է միաժամանակ ապացուցի ինչպես այն, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել **և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց**, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, այնպես էլ՝ որ այդ հանգամանքներն էական նշանակություն ունեն գործի լուծման համար, իսկ դատարանն իր հերթին պետք է ապացուցված համարի այդ հանգամանքների միաժամանակյա առկայությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքներով Դատարանի 22.11.2011 թվականի վճիռը վերանայելու մասին վերաքննիչ բողոք ներկայացրած Ըն-

---

կերությունը նշել է, որ երրորդ անձ Արթուր Դանիելյանի 23.04.2012 թվականի դիմումից պարզվել է, որ «վերջերս դեպքի վայրով անցնելիս նա նկատել է այնտեղ տեղադրված 40 կմ/ժ «Առավելագույն արագության սահմանափակում» ճանապարհային նշանը, որն այնտեղ տեղադրված է եղել մի քանի տարի առաջ»: Վերաքննիչ բողոքի նման ձևակերպումը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ կատարելու հետևություն այն մասին, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը բերվել է այն հիմքով, որ գործին մասնակցող անձանց այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել:

Մինչդեռ Ընկերությունը չի ապացուցել, իսկ Վերաքննիչ դատարանն իր հերթին նշելով, որ նոր երևան եկած հանգամանքի մասին գործին մասնակցող անձինք չգիտեին և **չէին կարող իմանալ**, տվյալ դեպքում չի հիմնավորել, թե ինչու գործին մասնակցող անձինք չէին կարող իմանալ այդ հանգամանքի մասին:

Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի վերը նշված հետևությունը հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը որպես նոր երևան եկած հանգամանքը հաստատող ապացույց վկայակոչել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից 15.05.2012 թվականին տրված տեղեկանքը: Նշված տեղեկանքի համաձայն՝ Կիլյան փողոցի թիվ 11/3 շենքի դիմաց տեղադրված, Օրբելի փողոցի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցների 3.24 40 կմ/ժ «Առավելագույն արագության սահմանափակում» ճանապարհային նշանը գործել է 1.23 «Երեխաներ» ճանապարհային նշանի հետ համատեղ: 2011 թվականի ընթացքում այդ նշանի բացակայության փաստ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի անվտանգ երթևեկության կազմակերպման բաժնի կողմից չի հայտնաբերվել, և ճանապարհային նշանի վերականգնման հայտ չի ուղարկվել: Նշված տեղեկանքի բովանդակությունից բխում է, որ 2011 թվականի ընթացքում, որպիսի ժամանակահատվածն իր մեջ ներառում է նաև ճանապարհատրանսպորտային պատահարի օրը՝ 24.03.2011 թվականը, և Դատարանում սույն գործի քննության ավարտի օրը՝ 07.11.2011 թվականը, այդ նշանը նույն վայրում գործել է, և ինչպես Ընկերությունն է նշել իր վերաքննիչ բողոքում, դեպքի վայրի մոտ ապրող բնակիչների ու տաքսու վարորդների հայտարարության համաձայն՝ այդ նշանը տեղադրված է եղել մի քանի տարի առաջ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը: Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան

---

նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի (նորմերի), որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին: Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրագրված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (*տես՝ Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեհան Մարությանի և մյուսների թիվ 3-54(ՎԴ)գործով Վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի կողմից ապացույցների հետազոտման գործընթացը թեև ձևական առումով կարող է տարբերվել վարույթի այս կամ այն տեսակից կախված (հայցային վարույթներ, հատուկ վարույթներ, հատուկ հայցային վարույթներ), այդուհանդերձ բովանդակային առումով այն նույնն է բոլոր վարույթներում. գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի հաստատումը պայմանավորված է ապացույցների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտմամբ: Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայման վարույթը բացառություն չէ նշված կանոնից, հետևաբար գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի կամ որ նույնն է ապացուցման առարկան կազմող փաստի հաստատված լինելը կարող է իրականացվել բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված կանոնի պահպանմամբ, ինչն էլ նույն օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի ուժով արտացոլվում է դատական ակտում:

Վերոնշյալ դիրքորոշման հաշվառմամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ նոր երևան եկած հանգամանքի մասին գործին մասնակցող անձինք չգիտեին և **չէին կարող իմանալ** Վճռաբեկ դատարանն այն համարում է անհիմն, քանի որ այդ հանգամանքը՝ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում համապատասխան նշանի առկայությունը, գործին մասնակցող անձանց կարող էր հայտնի լինել ավելի վաղ՝ մինչև Դատարանում գործի քննության ավարտը:

Այսինքն՝ բացակայում է դատական ակտը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու համար պարտադիր պայմաններից մեկը՝ որ վերը նշված հանգամանքը չէր կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրա-

---

վունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.09.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.11.2011 թվականի վճռին:

2. «Արմենիա Ինշուրանս» ԱՄԳԸ-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 59.780 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 28.11.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրք, 49.780 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրք, ինչպես նաև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.11.2011 թվականի վճռով բռնագանձման ենթակա 1.326.000 ՀՀ դրամի նկատմամբ մինչև նշված գումարը վերադարձնելու օրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով գումար՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրք ու նույն գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսագումարի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, գումար՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և հետաձգված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ԵԷԴ/1130/02/10**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ԵԷԴ/1130/02/10

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Առաքելյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱՐԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ արդարադատության նախարարու-  
թյան դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝  
Ծառայություն) և Տիգրան Անանյանի վճռաբեկ բողոքները ՀՀ վարչական վերաքննիչ դա-  
տարանի 03.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Սուսաննա և Հասմիկ Փոթոյանների  
հայցի ընդդեմ Ծառայության, երրորդ անձինք Տիգրան Անանյանի, Ֆելիքս Փոթոյանի՝  
պաշտոնատար անձի գործողությունները վիճարկելու և որպես հետևանք՝ աճուրդն  
անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սուսաննա և Հասմիկ Փոթոյանները պահանջել են ոչ  
իրավաչափ ճանաչել Ծառայության գործողությունները և որպես հետևանք՝ անվավեր  
ճանաչել հարկադիր աճուրդը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան)  
03.05.2011 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
03.10.2012 թվականի որոշմամբ Սուսաննա և Հասմիկ Փոթոյանների վերաքննիչ բողոքը

---

բավարարվել է՝ որոշվել է բեկանել Դատարանի 03.05.2011 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը բավարարել՝ ոչ իրավաչափ ճանաչել Ծառայության գործողությունները (անգործությունը) և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի թիվ 2<sup>ա</sup> հասցեում գտնվող անշարժ գույքի իրացման համար Ծառայության կողմից անցկացված աճուրդը:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Ծառայությունը և Տիգրան Անանյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան են ներկայացրել Սուսաննա և Հասմիկ Փոթոյանները:

## **2. Ծառայության վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը, որը պետք է կիրառել, խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեսել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ կատարողական վարույթում որպես պահանջատեր կարող է մասնակցել բացառապես այն անձը, ով ներկայացրել է կատարողական թերթ, և դրանում նշված է որպես պահանջատեր: Անգամ այն պարագայում, երբ դատական ակտը կայացվել է հօգուտ մեկից ավելի հայցվորների, և որոնցից մեկն այդ դատական ակտի վրա հիմնված կատարողական թերթը ներկայացրել է կատարման, մյուս հայցվորները չեն ներգրավվում կատարողական վարույթում որպես պահանջատեր, քանի որ դրա համար «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի ուժով հենց տվյալ հայցվորը պետք է ստանա և կատարման ներկայացնի իր մասով տրված կատարողական թերթը:

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման օրենսդրությունը ելնում է այն սկզբունքից, որ կատարողական վարույթը հարուցվում է, հարկադրանքի միջոցները ձեռնարկվում են, և անձը դառնում է պահանջատեր միայն այն դեպքում, երբ նա՝ որպես շահագրգիռ անձ, նախաձեռնում է դատական կարգով վերականգնված իր իրավունքների հարկադիր կատարումը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել նաև վերաքննիչ բողոք բերած անձանց այն պնդումը, թե Ծառայության կողմից չեն կատարվել համապատասխան գործողություններ վճռի և կատարողական թերթի առաջին մասի կատարման ուղղությամբ: Մինչդեռ, նշված մասն իրենից ներկայացնում է միայն նշում այն մասին, որ հակընդդեմ հայցը բավարարվել է, իսկ բուն բավարարված հայցապահանջը նշված է կատարողական թերթի երկրորդ մասում, որն էլ կատարվել է կատարողական վարույթի շրջանակներում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 03.05.2011 թվականի վճռին:

### **2.1. Տիգրան Անանյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 18-րդ, 19-րդ, 31-րդ, 91-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ հոդվածները, 6-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, 7-րդ, 8-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 29-րդ, 30-րդ, 35.1-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 117.13-րդ, 117.14-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և անկասկածաբար և անհերքելի փաստարկներով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ կատարողական վարույթի մասնակիցներն են կողմերը՝ պահանջատերը և պարտապանը: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից որոշումը կայացնելիս հիմք ընդունված Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 15.08.2009 թվականի թիվ ԵԷԴ/0379/02/09 վճռի հիման վրա Ֆելիքս Փոթոյանին տրված կատարողական թերթով կողմեր են հանդիսացել վերջինս (պահանջատեր) և Մուսանսա Փոթոյանը (պարտապան): Այսինքն՝ Հասմիկ Փոթոյանը սույն գործով չի կարող համարվել որպես կատարողական վարույթի կողմ կամ պահանջատեր:

Այսպիսով, հարկադիր կատարողն ինչպես «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով պարտավորված չի եղել իրազեկել կատարողական վարույթի կողմ չհանդիսացող անձին և վերջինիս մասնակից դարձնել կատարողական գործողություններին:

Միաժամանակ, անհիմն է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Ծառայության կողմից չեն կատարվել համապատասխան գործողություններ վճռի և կատարողական թերթի առաջին մասի կատարման ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.10.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ այն փոփոխել՝ հայրը մերժել:

**2.2. Վճռաբեկ բողոքների պատասխանի փաստարկները**

Դատարանը նշել է, թե իբր Հասմիկ Փոթոյանը որևէ կարգավիճակով կատարողական վարույթին չի մասնակցել: Մինչդեռ, դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ վերջինս սահմանված ժամկետում դիմել է դատարան, ստացել է կատարողական թերթը և այն սահմանված ժամկետում հանձնել է կատարման, սակայն Ծառայությունը չի կատարել օրենքի պահանջը:

**3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 15.08.2009 թվականի թիվ ԵԷԴ/0379/02/09 վճռի եզրափակիչ մասի 2-րդ կետով վճռվել է Հասմիկ և Ֆելիքս Փոթոյանների հակընդդեմ հայցն ընդդեմ Մուսանսա Փոթոյանի՝ ժառանգությունը բաժանելու և նախապատվության իրավունքով մյուս ժառանգներին հասանելիք բաժնի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով նրանց իրավունքը կորցրած ճանաչելու կամ դրա անհնարինության դեպքում գույքը սակարկություններով վաճառելու և ստացված գումարը բաժանելու պահանջների մասին, բավարարել:

---

Վճռի եզրակացության մասի 3-րդ կետով վճռվել է հրապարակային սակարկություններով վաճառել Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի թիվ 2<sup>ա</sup> հասցեի անշարժ գույքի օրինական մասը՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների (Հասմիկ, Սուսաննա և Ֆելիքս Փոթոյանների) միջև նրանց բաժիններին համաչափ՝ յուրաքանչյուրին 1/3 մասի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 5-7**):

2) Ֆելիքս Փոթոյանը 12.03.2010 թվականին Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի պետին է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 24.02.2010 թվականին տրված թիվ ԵԷԴ/0379/02/09 կատարողական թերթը, որում նշվել է, որ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 15.08.2009 թվականին վճռել է Հասմիկ և Ֆելիքս Փոթոյանների հակընդդեմ հայցն ընդդեմ Սուսաննա Փոթոյանի՝ ժառանգությունը բաժանելու և նախապատվության իրավունքով մյուս ժառանգներին հասանելիք բաժնի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով նրանց իրավունքը կորցրած ճանաչելու կամ դրա անհնարինության դեպքում գույքը սակարկություններով վաճառելու և ստացված գումարը բաժանելու պահանջների մասին, բավարարել: Հրապարակային սակարկություններով վաճառել Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի թիվ 2<sup>ա</sup> հասցեի անշարժ գույքի օրինական մասը՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների (Հասմիկ, Սուսաննա և Ֆելիքս Փոթոյանների) միջև նրանց բաժիններին համաչափ՝ յուրաքանչյուրին 1/3 մասի չափով:

Նույն կատարողական թերթում որպես պահանջատեր է նշված Ֆելիքս Փոթոյանը, իսկ որպես պարտապան՝ Սուսաննա Փոթոյանը (**հատոր 2-րդ, գ.թ. 2-3**):

3) Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի հարկադիր կատարողի 17.03.2010 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշմամբ հարուցվել է թիվ 01/01-616/10 կատարողական վարույթը՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ԵԷԴ/0379/02/09 կատարողական թերթի պահանջը կատարելու համար (**հատոր 2-րդ, գ.թ. 10**):

4) Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի հարկադիր կատարողի 03.05.2010 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ Ֆելիքս և Սուսաննա Փոթոյաններին պատկանող գույքը (ք. Երևան, Նոր Արեշի 24-րդ փողոց, թիվ 2<sup>ա</sup> տուն) ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով (**հատոր 1-ին, գ.թ. 25-26**):

5) 31.05.2010 թվականի «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» թիվ 616/10-10/01 արձանագրության համաձայն՝ Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի թիվ 2<sup>ա</sup> առանձնատունը վաճառվել է Տիգրան Անանյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 50**):

6) Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 24.02.2010 թվականին տրված թիվ ԵԷԴ/0379/02/09 կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթում Հասմիկ Փոթոյանին որպես մասնակից ներգրավելու և վերջինիս կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքների շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք հարկադիր կատարողը պարտավոր է կատարողական վարույթում ներգրավել և կատարողական վարույթի ընթացքում*

կայացված որոշումներն ուղարկել այն անձին, ով կատարողական թերթում նշված չէ որպես պահանջատեր կամ պարտապան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի մասնակիցներն են կողմերը և (կամ) նրանց ներկայացուցիչները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը:

Նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն մասնակցել կատարողական գործողություններին:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ:

Հարկադիր կատարողի որոշումը կողմերին է ուղարկվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պատշաճ ծանուցմամբ՝ կատարողական թերթում կամ յուրաքանչյուր կողմի նշված հասցեով:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը դատարանի կողմից տրված կատարողական թերթն է, որի հիման վրա հարուցված կատարողական վարույթի մասնակիցները կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը, և (կամ) նրանց ներկայացուցիչները, որոնց վերաբերյալ էլ նշումը կատարվում է հենց կատարողական թերթում: Միաժամանակ, հարկադիր կատարողը պարտավոր է կատարողական գործողությունների ընթացքում իր կողմից կայացված որոշումների պատճենները դրանց կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկել պահանջատիրոջը և պարտապանին: Հետևաբար, հարկադիր կատարողը կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան չնշված անձին այդ որոշումներն ուղարկելու որևէ պարտավորություն չունի, և դա չի կարող դիտվել որպես վերջինիս կողմից թույլ տրված օրենքի խախտում: Այսինքն՝ կատարողական վարույթում ներգրավվում և կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկվում են բացառապես կատարողական վարույթի կողմերին՝ կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան նշված անձանց:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ֆելիքս Փոթոյանը 12.03.2010 թվականին Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի պետին է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 24.02.2010 թվականին տրված թիվ ԵԷԴ/0379/02/09 կատարողական թերթը, որում որպես պահանջատեր է նշված Ֆելիքս Փոթոյանը, իսկ որպես պարտապան՝ Մուսաննա

---

Փոթոյանը: Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի հարկադիր կատարողի 17.03.2010 թվականի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշմամբ հարուցվել է թիվ 01/01-616/10 կատարողական վարույթը՝ նշված կատարողական թերթի պահանջը կատարելու համար: Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի հարկադիր կատարողի 03.05.2010 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ Ֆելիքս և Սուսաննա Փոթոյաններին պատկանող գույքը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ Ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով: Իսկ 31.05.2010 թվականի «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լոտի մասին» թիվ 616/10-10/01 արձանագրությամբ հաստատվում է, որ Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի թիվ 2<sup>ա</sup> առանձնատունը վաճառվել է Տիգրան Անսյանին: Միաժամանակ, վերոգրյալ կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթում Հասմիկ Փոթոյանը որպես մասնակից չի ներգրավվել, և վերջինիս կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումները չեն ուղարկվել:

Դատարանը հայցը մերժելու հիմքում դրել է նաև պատճառաբանությունն այն մասին, որ Սուսաննա և Հասմիկ Փոթոյաններին կատարողական վարույթին առնչվող որևէ որոշում չհանձնելու մասին վերջիններիս փաստարկները հիմնավոր չեն, քանի որ գործում առկա Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի 18.03.2010 թվականի թիվ ԵԷ-2551/01 գրության վրա կատարված գրառմամբ հիմնավորվում է, որ կատարողական վարույթի մասնակից Սուսաննա Փոթոյանը ստացել է կատարողական վարույթ հարուցելու մասին, գույքի վրա արգելանք դնելու մասին և ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին հարկադիր կատարողի որոշումները, իսկ Ծառայության Էրեբունի և Նուբարաշեն բաժնի 03.05.2010 թվականի թիվ ԵԷ-4161/01 գրության (Սուսաննա Փոթոյանը դրա վրա 06.05.2010 թվականին կատարել է համապատասխան գրառում) համաձայն՝ վերջինս ստացել է նաև աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին տեղեկություն պարունակող հարկադիր էլեկտրոնային աճուրդով գույքը վաճառելու մասին հարկադիր կատարողի որոշումը, ինչպես նաև գույքի իրացման համար նախատեսված համապատասխան ինտերնետային կայքի մասին տեղեկությունը: Դատարանը նաև արձանագրել է, որ Հասմիկ Փոթոյանը կատարողական վարույթին չի մասնակցել, քանի որ համապատասխան կատարողական թերթ չի ներկայացրել հարկադիր կատարման համար, այսինքն՝ վերջինս չի հանդիսացել կատարողական վարույթի կողմ:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ կատարողական թերթ չներկայացնելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ Հասմիկ Փոթոյանին վարույթում չներգրավելու համար, քանի որ Հասմիկ Փոթոյանը համապատասխան վճռին և տրված կատարողական թերթին համապատասխան հանդիսանում է հակընդդեմ հայցով հայցվոր և պարտատեր, հետևաբար Ծառայությունը պարտավոր էր վերջինիս ներգրավել կատարողական վարույթում՝ նրան հնարավորություն տալով օգտվել իր իրավունքներից, որոնք սահմանված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչած պատճառաբանությունն անհիմն է, քանի որ կատարողական վարույթում ներգրավվում և կատարողական վարույթի ընթացքում կայացված որոշումներն ուղարկվում են բացառապես կատարողական վարույթի կողմերին՝ կատարողական թերթում որպես պահանջատեր և պարտապան նշված անձանց, որպիսին Հասմիկ Փոթոյանը չի հանդիսացել:

Մասնավորապես՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 24.02.2010 թվականին տրված թիվ ԵԷԴ-0379/02/09 կատարողական թերթում որպես պահանջատեր է նշված Ֆելիքս

---

Փոթոյանը, իսկ որպես պարտապան՝ Սուսաննա Փոթոյանը, որոնք էլ ծանուցվել են կատարողական վարույթի և դրա ընթացքում կայացված որոշումների վերաբերյալ:

Հետևաբար, Հասմիկ Փոթոյանի՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 24.02.2010 թվականին տրված թիվ ԵԷԴ/0379/02/09 կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթում որպես պահանջատեր կամ պարտապան չհանդիսանալու պայմաններում հարկադիր կատարողը նշված վարույթում վերջինիս ներգրավելու և դրա ընթացքում կայացված որոշումները նրան ուղարկելու որևէ պարտականություն չի ունեցել:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 6-րդ, 7-րդ և 28-րդ հոդվածները և հարկադիր կատարողի վրա դրել է այնպիսի պարտականություն, որը նախատեսված չէ օրենքով, ինչի արդյունքում անտեսել է, որ տվյալ դեպքում որևէ կերպ չի խախտվել նշված օրենքի 8-րդ հոդվածով սահմանված Հասմիկ Փոթոյանի՝ կատարողական գործողություններին մասնակցելու իրավունքը, ինչից հետևում է, որ այդ մասով Դատարանի վճիռը հիմնավոր է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է նաև այն պատճառաբանությունը, որ Ծառայությունը չի կատարել համապատասխան գործողություններ վճռի և կատարողական թերթի առաջին մասի («Հասմիկ և Ֆելիքս Փոթոյանների հակընդդեմ հայցն ընդդեմ Սուսաննա Փոթոյանի՝ ժառանգությունը բաժանելու և նախապատվության իրավունքով մյուս ժառանգներին հասանելիք բաժնի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու միջոցով նրանց իրավունքը կորցրած ճանաչելու կամ դրա անհնարինության դեպքում ...») կատարման ուղղությամբ՝ դրանով իսկ խախտելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչած պատճառաբանությունն անհիմն է, քանի որ կատարողական թերթի նշված մասն ընդամենը նշում է պարունակում հակընդդեմ հայցը բավարարելու մասին, իսկ կոնկրետ կատարման ենթակա գործողությունները (Հրապարակային սակարկություններով վաճառել Երևանի Նոր Արեշի 24-րդ փողոցի թիվ 2<sup>ա</sup> հասցեի անշարժ գույքի օրինական մասը՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների (Հասմիկ, Սուսաննա և Ֆելիքս Փոթոյանների) միջև նրանց բաժիններին համաչափ՝ յուրաքանչյուրին 1/3 մասի չափով) սահմանված են կատարողական թերթի հաջորդ նախադասությամբ, որոնք էլ տվյալ դեպքում հարկադիր կատարողի կողմից կատարվել են:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի

---

համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության վճռաբեկ բողոքը բավարարել, իսկ Տիգրան Անանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 03.05.2011 թվականի վճռին:

2. Սուսաննա և Հասմիկ Փոթոյաններից համապարտությամբ հօգուտ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

3. Սուսաննա և Հասմիկ Փոթոյաններից համապարտությամբ հօգուտ Տիգրան Անանյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրք:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **2-4247/2004թ.**  
**2013թ.**

Քաղաքացիական գործ թիվ 2-4247/2004թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Խատատյան

Դատավորներ՝ Ա. Պետրոսյան

Կ. Չիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցիչ Անահիտ Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Նինա Չալտիկյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Նինա Չալտիկյանը պահանջել է հաստատել Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 50 շենքի տանիքային հատվածից 140 քմ մակերեսն իր կողմից սեփականության իրավունքով տիրապետելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձ Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճիռը, և դիմումը թողնվել է առանց քննության:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրա-

---

վատության դատարանի (դատավոր՝ Ռ.Ափինյան) (այսուհետ՝ Դատարան) 24.12.2012 թվականի որոշմամբ Անդրեյ Օգանեսյանի դիմումը՝ վճռի կատարման շրջադարձ կատարելու պահանջի մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2013 թվականի որոշմամբ Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.12.2012 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցիչ Անահիտ Հակոբյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նինա Չալտիկյանի ներկայացուցիչ Նաիրա Մխիթարյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ խախտվել է գործին մասնակից չդարձված անձ Անդրեյ Օգանեսյանի սեփականության իրավունքը, և նրան պատկանող տարածքն առանց օրինական հիմքերի դարձել է այլ անձի սեփականությունը: Թեև Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 50 շենքի տանիքային հատվածից 168,4 քմ մակերեսի նկատմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի՝ 30.06.2004 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն գրանցվել է Նինա Չալտիկյանի սեփականության իրավունքը, սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ բեկանվել է նշված վճիռը և Նինա Չալտիկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակարանի վրայի տանիքի հատվածին սեփականության իրավունքով տիրապետելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին, թողնվել է առանց քննության:

Երկայումս, երբ վերացել է Նինա Չալտիկյանի սեփականության իրավունքի գրանցման հիմքը, Վերաքննիչ դատարանը, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջների համաձայն, պետք է կատարեր վճռի շրջադարձ՝ վերականգնելով բողոք բնակիչների սեփականության իրավունքը Երևան քաղաքի Մաշտոցի թիվ 50 շենքի տանիքի նկատմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2013 թվականի որոշումը, լուծել վճռի կատարման շրջադարձի հարցը՝ վերականգնելով մինչև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռի կայացման վիճակը կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Նինա Չալտիկյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մաշտոցի 50-րդ շենքի թիվ 15 բնակարանը, ինչպես նաև թիվ 14 և 15 բնակարանների վրա գտնվող 168,4 քմ մակերեսով տանիքային տարածքը վաճառել է Լևոն Բալասանյանին: Նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը, և 11.05.2009 թվականին տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական: Տանիքին տրվել է նոր հասցե՝ թիվ 29 տանիք: 25.10.2011 թվականին Լևոն Բալասանյանը

սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մաշտոցի 50-րդ շենքի թիվ 15 բնակարանի վրա գտնվող թիվ 29 տանիքն օրենքով սահմանված կարգով վաճառել է Նանա Բաբայանին: Նշված գույքի նկատմամբ գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը, և 28.10.2011 թվականին 168,4 քմ մակերեսով տանիքի նկատմամբ տրվել է թիվ 2805072 սեփականության իրավունքի գրանցման վկայականը: 31.10.2011 թվականին Լևոն Բալասանյանը Երևանի Մաշտոցի 50-րդ շենքի թիվ 15 բնակարանը վաճառել է Նանա Բաբայանին, և նշված գույքի նկատմամբ գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը, և տրվել է թիվ 2807663 սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Այսպիսով, վճռի կատարման շրջադարձ կատարելու պահանջն անհիմն է, քանի որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռով Անդրեյ Օգանեսյանին սեփականության կամ այլ իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չի ճանաչվել Նինա Չալտիկյանի սեփականության իրավունքը, այսինքն՝ Անդրեյ Օգանեսյանի գույքի վերաբերյալ չի կայացվել դատական ակտ, որպեսզի վերջինիս «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի հիմքով վճռի կատարման շրջադարձ կատարելու եղանակով վերադարձվի որևէ գույք: Նման պայմաններում վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռով հաստատվել է Նինա Չալտիկյանի կողմից Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 50-րդ շենքի թիվ 14 և 15 բնակարանների տանիքի վրա չափագրված, ըստ հատակագծի 168,4 քմ մակերեսով տարածքը սեփականության իրավունքով տիրապետելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը (հատոր 1, գ.թ. 26-28):

2) ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 17.08.2011 թվականին տրված թիվ Ել-5427 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռի հիման վրա Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 50-րդ շենքի թիվ 14 և 15 բնակարանների տանիքի նկատմամբ գրանցվել է Նինա Չալտիկյանի սեփականության իրավունքը (հատոր 1, գ.թ. 55):

3) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձ Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճիռը և Նինա Չալտիկյանի դիմումը թողնվել է առանց քննության (հատոր 1, գ.թ. 102-105):

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն որոշման շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի իրավական վերլուծությանը:*

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի

---

1-ին մասի համաձայն՝ եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման բովանդակությունից հետևում է, որ դատավարական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

1. առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և

2. դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն է դատական կարգով վերականգնել պատասխանողի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք խախտվել են բեկանված դատական ակտով: Բեկանված դատական ակտի փոխարեն համապատասխան դատարանի կողմից կայացվում է գործն ըստ էության լուծող այլ դատական ակտ՝ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին, որից հետո պարտապանը (գույքի նախկին սեփականատերը) իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռով հաստատվել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 50-րդ շենքի թիվ 14 և 15 բնակարանների տանիքի վրա չափագրված, ըստ հատակագծի 168,4 քմ մակերեսով տարածքը Նինա Չալտիկյանի կողմից սեփականության իրավունքով տիրապետելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը, և նշված վճռի հիման վրա վիճելի գույքի նկատմամբ կատարվել է վերջինիս սեփականության իրավունքի պետական գրանցում: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձ Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճիռը և Նինա Չալտիկյանի դիմումը թողնվել է առանց քննության:

Դատարանը, պատճառաբանելով, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռի հիման վրա Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի 50-րդ շենքի թիվ 14 և 15 բնակարանների տանիքի նկատմամբ Նինա Չալտիկյանի անվամբ կատարված իրավունքի պետական գրանցումը չի վիճարկվել և անվավեր չի ճանաչվել, արձանագրել է, որ նման պայմաններում հնարավոր չէ վերականգնել մինչև վճիռ կայացնելը եղած դրությունը, և 24.12.2012 թվականի որոշմամբ դիմումը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Անդրեյ Օգանեսյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածից բխում է, որ գույքը պետք է լրիվ կամ մասնակի վերադարձվի պարտապանին, մինչդեռ Անդրեյ Օգանեսյանը սույն գործով պարտապան չի հանդիսանում:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված դրույթները և հանգել

են գործի փաստերի վերաբերյալ սխալ եզրահանգման: Մասնավորապես՝ տվյալ դեպքում մինչև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 30.06.2004 թվականի վճռի օրինական ուժի մեջ մտնելը եղած դրության վերականգնումը պետք է կատարվի ոչ թե գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը վիճարկելու և անվավեր ճանաչելու առանձին վարույթով, այլ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ՝ գույքը լրիվ կամ մասնակի վերադարձնելով պարտապանին, քանի որ վճռի կատարման շրջադարձի նպատակն է վերացնել ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքները՝ այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ վերականգնել շահագրգիռ կողմի խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները: Հետևաբար, տվյալ դեպքում վիճելի գույքի նկատմամբ Նինա Չալտիկյանի սեփականության իրավունքը գրանցված լինելու հանգամանքը չի կարող արգելք հանդիսանալ վճռի շրջադարձ կատարելու և գույքի նախկին վիճակը վերականգնելու համար, քանի որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.02.2012 թվականի որոշմամբ բեկանվել և առանց քննության է թողնվել այն դատական ակտը, որի հիման վրա վճռի առարկա տարածքի նկատմամբ գրանցվել է Նինա Չալտիկյանի սեփականության իրավունքը, այսինքն՝ վերացել է սեփականության իրավունքի գրանցման հիմքը:

Ինչ վերաբերում է Անդրեյ Օգանեսյանի՝ սույն գործով պարտապան չհանդիսանալու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով նշված «պարտապան» եզրույթը մեկնաբանելիս պետք է հասկանալ ոչ միայն պարտավորաիրավական հարաբերությունների կողմերին, այլ նաև քաղաքացիաիրավական հարաբերության այն մասնակցին, որը վճռի առարկա գույքի նկատմամբ ունեցել է կոնկրետ իրավունքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին քաժնային սեփականության իրավունքով պատկանում են** շենքը կրող կառուցվածքները, շենքի միջհարկային ծածկերը (առաստաղները, հատակները), նկուղը, ձեղնահարկը, տեխնիկական հարկերը, **սանիքը**, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերը, աստիճանավանդակները, աստիճանները, վերելակները, վերելակային և այլ հորերը, մեխանիկական, էլեկտրական, սանիտարատեխնիկական և այլ սարքավորումներն ու տարածքները, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը, որոնք չեն հանդիսանում այլ անձանց սեփականություն:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է կատարել վճռի շրջադարձ և սոր դատական ակտին համապատասխան կայացնել դատական ակտ՝ գույքը շահագրգիռ անձին վերադարձնելու մասին՝ վերացնելով առանց քննության թողնված գործով կայացված դատական ակտի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումները:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում նշված փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը դրանց չի անդրադառնում, քանի որ նշված հանգամանքները ինչպես դատարանում, այնպես էլ Վերաքննիչ դատարանում քննության առարկա չեն դարձվել:

---

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/4969/05/11**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ/4969/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան  
Դատավորներ՝ Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հովհաննես Նահապետյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2012 թվականի որոշման դեմ, ըստ Հովհաննես Նահապետյանի հայցի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն)՝ 15.07.2011 թվականի թիվ ԱԳ 477254 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հովհաննես Նահապետյանը պահանջել է անվավեր ճանաչել Ոստիկանության 15.07.2011 թվականին կազմված վարչական իրավախախտման թիվ ԱԳ 477254 արձանագրությունը և դրա հիման վրա կայացված որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 22.09.2011 թվականի որոշմամբ հայցադիմումը որոշման վիճարկման մատվ ընդունվել է վարույթ, իսկ արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մատվ դրա ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 12.03.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ Ոստիկանության 15.07.2011 թվականի

---

թիվ ԱԳ 477254 որոշումը ճանաչվել է անվավեր:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.11.2012 թվականի որոշմամբ Ոստիկանության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 12.03.2012 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հովհաննես Նահապետյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ նշված հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսված առանց ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (այսուհետ՝ ԱՊՊԱ) կտրոնը սահմանված տեղում փակցնելու տրանսպորտային միջոց վարելու համար, այսինքն՝ նշված հոդվածի 1-ին մասով պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում կտրոնը սահմանված տեղում փակցված լինելու հանգամանքի պարզումը: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում ի թիվս այլոց նաև չգործող ԱՊՊԱ կտրոնով տրանսպորտային միջոց վարելու համար, այսինքն՝ տվյալ դեպքում նշանակություն չունի կտրոնի փակցված լինելու կամ չլինելու հարցը, այլ իրավական նշանակություն ունի կտրոնի առկայությունը:

Մինչդեռ սույն գործով վարչական ակտը կայացրած պաշտոնատար անձը չի պարզել ԱՊՊԱ կտրոնի առկայության փաստը, այլ միայն բավարարվել է՝ պարզելով դիմապակուն այն փակցված չլինելու և ժամկետանց կտրոն փակցված լինելու փաստերը, ինչի արդյունքում խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.11.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.03.2012 թվականի վճիռն:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ 15.07.2011 թվականին արձանագրվել է Հովհաննես Նահապետյանի կողմից «ԲԵ-ԷՄ-ՎԵ» մակնիշի 25ՍՍ117 համարանիշի մեքենան չգործող ԱՊՊԱ կտրոնով վարելու և երթևեկության գոտիների սահմանները նշող հոծ գիծ գծանախշերը հատելու փաստը: Արձանագրությունում Հովհաննես Նահապետյանի կողմից կատարվել է նշում. «Պետավտոտեսուչը տրանսպորտային միջոցը կանգնեցրել է հոծ գիծը խախտելու համար, սակայն խախտել է իր որոշումը 94 կետով, որը չի համապատասխանում իրականությանը» (գ.թ. 44):

2. Վարչական իրավախախտման վերաբերյալ 15.07.2011 թվականի թիվ ԱԳ 477254 որոշման համաձայն՝ Հովհաննես Նահապետյանը չգործող ԱՊՊԱ կտրոնով տրանս-



պորտային միջոցը վարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ ենթարկվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժի (**գ.թ. 6**):

3. Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG 218901 պայմանագրի համաձայն՝ Հովհաննես Նահապետյանի կողմից «ԲԵ-ԷՄ-ՎԵ» մակնիշի 25ՍՍ117 հաշվառման համարանիշի մեքենան ապահովագրվել է 12.07.2011 թվականին (**գ.թ. 9**):

4. «ԲԵ-ԷՄ-ՎԵ» մակնիշի 25ՍՍ117 հաշվառման համարանիշի մեքենայի ԱՊՊԱ կտրոնը տրվել է Հովհաննես Նահապետյանին: Պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվել 12.07.2011 թվականից մինչև 11.10.2011 թվականը (**գ.թ. 10**):

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ չգործող ԱՊՊԱ կտրոնով տրանսպորտային միջոցներ վարելու և առանց ԱՊՊԱ կտրոնի տրանսպորտային միջոցներ վարելու զանցակազմերի տրանսպորտման խնդրին՝ հաշվի առնելով այդ իրավախախտումների տարածվածությունը և իրավական որոշակիություն ապահովելու անհրաժեշտությունը:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **առանց ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության կտրոնը (այսուհետ՝ ԱՊՊԱ կտրոն) սահմանված տեղում փակցնելու՝** Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կեղծված, **չգործող** կամ այլ տրանսպորտային միջոցի համար տրված **ԱՊՊԱ կտրոնով** Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով **տրանսպորտային միջոց վարելն** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրիսնասպատիկի չափով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԲԵ-ԷՄ-ՎԵ» մակնիշի 25ՍՍ117 համարանիշի մեքենայի սեփականատերը Հովհաննես Նահապետյանն է: Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG 218901 պայմանագրի և թիվ SG 218901 կտրոնի համաձայն՝ «ԲԵ-ԷՄ-ՎԵ» մակնիշի 25ՍՍ117 հաշվառման համարանիշի մեքենան ապահովագրվել է 12.07.2011 թվականին, և պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է **12.07.2011 թվականից մինչև 11.10.2011 թվականը**: Վարչական մարմինը, արձանագրելով հիշյալ ավտոմեքենայի դիմապակուն չգործող կտրոն փակցված լինելու փաստը, Հովհաննես Նահապետյանին վարչական պատասխանատվության է ենթարկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սանկցիայով: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության համաձայն՝ Հովհաննես Նահապետյանը վարչական իրավախախտման գործի քննության ժամանակ առարկություն է ներկայացրել վարչական մարմնին՝ նշելով, որ արձանագրված խախտումը չի համապատասխանում իրականությանը:

Դատարանը հայցը բավարարել է՝ գտնելով, որ սույն գործով վարչական մարմինը

---

չի պարզել ԱՊՊԱ կտրոնի առկայության փաստը, այլ միայն բավարարվել է դիմնապակուն այն փակցված չլինելու և ժամկետանց կտրոն փակցված լինելու փաստերը պարզելով, որով խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ արարքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու համար անհրաժեշտ է ԱՊՊԱ կտրոնի համար սահմանված տեղում չգործող կտրոն փակցված լինելու հանգամանքը՝ անկախ գործող պայմանագրի առկայության:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համեմատական վերլուծության արդյունքում եզրահանգում է, որ նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ունեն տարբեր զանցակազմեր, որոնց օբյեկտիվ կողմն իրարից էապես տարբերվում է, ուստի տարբեր են նաև նշված մասերից յուրաքանչյուրի խախտման համար նախատեսված սանկցիաները: Մասնավորապես՝ 129.1-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվությունը վրա է հասնում առանց ԱՊՊԱ կտրոնը սահմանված տեղում փակցնելու տրանսպորտային միջոց վարելու համար: Առանց ԱՊՊԱ կտրոնի տրանսպորտային միջոցի վարումը կարող է դրսևորվել երկու պարագայում՝ նախ կնքված է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիրը, սակայն է գործող կտրոնը, որը սակայն փակցված չէ սահմանված տեղում: Այս դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար:

Երկրորդ՝ պայմանագիրն ու կտրոնն ընդհանրապես առկա չեն, ինչի պատճառով էլ կտրոնը փակցված չէ սահմանված տեղում: Այս դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված զանցակազմի շրջանակներում, որտեղ անձը ցուցաբերում է անգործություն և չի կնքում ԱՊՊԱ պայմանագիր՝ այդ կերպ ոտնձգելով ճանապարհային երթևեկության ոլորտում առաջացող հարաբերությունների նկատմամբ:

**Վերոնշյալից հետևում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում կտրոնը սահմանված տեղում փակցված չլինելու հանգամանքի պարզումը: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ պայմանն առկա կտրոնի կեղծված, չգործող և սովյալ տրանսպորտային միջոցի համար տրված չլինելու հանգամանքի պարզումն է:**

Իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև վարչական վարույթների ժամանակ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի կիրառման միասնական պրակտիկա ապահովելու անհրաժեշտությամբ Վճռաբեկ դատարանը նշված հոդվածը հարկ է համարում մեկնաբանել երկու և ավելի վարչական իրավախախտումների համար պատասխանատվության իրավակարգավորման համատեքստում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ գործերը միաժամանակ քննվում են նույն մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, տույժը նշանակվում է առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիայի շրջանակներում:

Այդ դեպքում հիմնական տույժին կարող է միացվել կատարված իրավախախտումներից ցանկացածի համար պատասխանատվության վերաբերյալ հողվածներով նախատեսված լրացուցիչ տույժերից մեկը:

Հիշատակված իրավադրույթը առավելագույնի սկզբունքի դրսևորման ձևերից է, որը վարչական մարմինների կողմից կամայականությունների զսպման կամ կանխարգելման գործառույթ է իրականացնում: Սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ նույն անձի կողմից մեկից ավելի վարչական զանցանքներ կատարելու դեպքում առավել վտանգավոր կամ առավել լուրջ խախտման համար սահմանված սանկցիան իրենում ներառում է առավել նվազ զանցանքների համար սանկցիաները:

Այդուհանդերձ հարկ է նկատել, որ հնարավոր են դեպքեր, երբ երկու զանցանքների զուգորդումը լինի նվազ հանրային վտանգավորություն առաջացնող, թեկուզև դրանում ներառված լինեն առավել և նվազ հանրային վտանգավորություն ունեցող զանցանկազմեր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի կիրառումը պրակտիկայում առաջ է բերում խնդիրներ, որոնք արդյունք են այդ հողվածներով նախատեսված զանցանքների բովանդակության ոչ միատեսակ ընկալման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված զանցանքն օրենսդիրը նախատեսել է այն հաշվով, որ պատասխանատվության ենթարկվեն բոլոր այն սուբյեկտները, ովքեր, կնքելով ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիր, ձեռք են բերել կտրոն, սակայն այն չեն փակցրել ավտոտրանսպորտային միջոցի դիմապակուն: Հարկ է նկատել, որ այս դեպքում զանցանք կատարող սուբյեկտը ցուցաբերում է դիտավորություն առ այն, որ ունենալով գործող ԱՊՊԱ կտրոն՝ այն չի փակցնում տրանսպորտային միջոցի դիմապակուն: Այնուամենայնիվ, զանցանքի սուբյեկտիվ կողմի դրսևորմանն օրենսդիրը նշանակություն չի տվել և անկախ այն հանգամանքից՝ արարքը սուբյեկտիվ կողմի առումով ինչպես է դրսևորվել, անձը ենթակա է պատասխանատվության: Մյուս կողմից նշված զանցանքը չունի հանրային մեծ վտանգավորություն, քանի որ անձը փաստացի կնքել է երրորդ անձանց հանդեպ իր պատասխանատվության ապահովագրման պայմանագիր և ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում տուժողը կստանա համապատասխան փոխհատուցում:

Նույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված զանցանքը և դրա համար սահմանված սանկցիան շատ ավելի խիստ է, ինչը պայմանավորված է արարքի հանրային վտանգավորության առավել բարձր աստիճանով: Ի տարբերություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի՝ այս դեպքում անձը չի ապահովագրում երրորդ անձանց հանդեպ իր պատասխանատվությունը և շարունակում է երթևեկել չգործող (ժամկետանց) կտրոնով կամ կեղծում է կտրոնի վրա առկա թվանշաններն այնպես, որ արտաքուստ տպավորություն ստեղծվի, թե կտրոնը գործում է, և կամ էլ տրանսպորտային միջոցի դիմապակուն փակցնում է մեկ այլ տրանսպորտային միջոցի համար տրամադրված կտրոն: Այնուհայտ է, որ այս դեպքում անձը միջոցներ է ձեռնարկում խուսափել իր պատասխանատվությունն ապահովագրելուց, ինչը ենթադրում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի վրա հասնելու դեպքում տուժող կողմի վրա է ընկնում ապահովագրական հատուցում չստանալու ռիսկը:

Նշված վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի արարքները զուգորդմամբ կատարելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ոչ թե վարչական հարաբերություններում գործող առավելագույնի սկզբունքով, այլ համաչափության սկզբունքով, երբ նպատակին հասնելու համար օգտագործվող միջոցները կլինեն ոչ

---

միայն պիտանի, այլև անհրաժեշտ և չափավոր: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ երկու արարքների գույզողման դեպքում նվազում է այն հանրային վտանգավորությունը, որը կարող էր առկա լինել բացառապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի դեպքում:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն իրավիճակներում, երբ անձը վարում է տրանսպորտային միջոցը, որի դիմապակուն փակցված է չգործող ԱՊՊԱ կտրոն, և միաժամանակ անձի մոտ է գտնվում ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի հիման վրա տրված **գործող ԱՊՊԱ կտրոնը**, սակայն այն փակցված չէ սահմանված տեղում, ապա արարքը պետք է որակվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Համադրելով վերոնշյալ մեկնաբանությունները սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրակացության, որ Հովհաննես Նահապետյանը չգործող ԱՊՊԱ կտրոնով տրանսպորտային միջոցը վարելու համար Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ ենթարկվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տույժի, թեև վերջինիս ավտոմեքենայում առկա էր թիվ 218901 ԱՊՊԱ պայմանագրի հիման վրա տրված գործող կտրոն: Այսինքն՝ գործող ԱՊՊԱ կտրոնն առկա էր, սակայն փակցված չէր սահմանված տեղում, որպիսի պարագայում արարքը ենթակա էր որակման Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման դեպքերում վարչական մարմինը չպետք է սահմանափակվի տրանսպորտային միջոցի դիմապակուն փակցված կտրոնի գործող լինելու փաստը պարզելով, այլ ելնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից՝ պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ **բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները**:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի սույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Առաջին ատյանի դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.11.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 12.03.2012 թվականի վճռին:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/8645/05/11

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/8645/05/11  
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՏՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերության տնօրեն Ալեքսանդր Աբրահամյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Ալեքսանդր Աբրահամյանի (այսուհետ՝ Ընկերության տնօրեն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ Տեսչության որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով ՀՀ վարչական դատարան՝ Ընկերության տնօրենը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 26.07.2011 թվականի թիվ 155947 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.10.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.03.2013 թվականի որոշմամբ Ընկերության տնօրենի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.10.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության տնօրենը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարել քողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարել քողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 83.5-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Տեսչության կողմից 26.07.2011 թվականին ընդունված որոշմամբ Ընկերության տնօրենի նկատմամբ նշանակվել է 300.000 ՀՀ դրամի չափով տուգանք՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի հատկանիշներով, մինչդեռ 26.07.2011 թվականի դրությամբ գործող նշված նորմն առաջացնում էր տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով: Մինչև 01.04.2011 թվականը գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով որպես տուգանքի չափ նախատեսված էր սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկը: Վիճարկվող որոշումը կայացնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մինչև 01.04.2011 թվականի խմբագրությամբ գործող 170.12-րդ հոդվածի հիման վրա՝ Տեսչությունը հայցվորին պատասխանատվության է ենթարկել չգործող նորմով: Վերաքննիչ դատարանը, վերահաստատելով Դատարանի դիրքորոշումը, գտել է, որ 600.000 ՀՀ դրամի փոխարեն 300.000 ՀՀ դրամի տույժի կիրառումը չի վկայում վարչական պատասխանատվության ենթարկված անձի որևէ իրավունքի և ազատության խախտման մասին, ուստի այդպիսի իրողությունը վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու հիմք չէ: Մինչդեռ, բողոք բերող անձի պնդմամբ որոշումը, որն ընդունվել է ուժը կորցրած նորմի հիման վրա, ենթակա է անվավեր ճանաչման:

Ըստ բողոք բերող անձի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի հիման վրա անձը կարող է պատասխանատվության ենթարկվել դրանում նշված ապրանքների իրացման համար, մինչդեռ վիճարկվող որոշմամբ ինքը պատասխանատվության է ենթարկվել ցուցասրահում ապրանքները ցուցադրելու համար: Վերաքննիչ դատարանը վկայակոչված նորմի վերաբերյալ կատարել է սխալ եզրահանգում՝ վերահաստատելով Դատարանի այն դիրքորոշումը, որ այդ նորմի հիման վրա պատասխանատվությունը ծագում է ոչ միայն դրանում նշված ապրանքի ուղղակի վաճառքի, այլ նաև վաճառարահի հատուկ կահավորված վայրում՝ վաճառելու համար, հաճախորդներին տեսանելի մասում ցուցադրելու համար:

Բողոք բերող անձի պնդմամբ չեն պարզվել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են ակոհոլային խմիչքների նկատմամբ օֆերտա անելու և դրանք իրացնելու փաստերը, ինչի պարագայում Վերաքննիչ դատարանի որոշումը չի կարող համարվել պատճառաբանված:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ բավարարելով Ընկերության տնօրենի հայցը:

## **3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

---

1) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների կամ ապօրինի ձեռք բերված դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների շրջանառության, ինչպես նաև ապրանքների դրոշմավորման կարգի պահպանման նկատմամբ իրականացված հսկողություն իրականացնելու մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 24.02.2011 թվականի թիվ 67-Ա հրամանի հիման վրա Ընկերությունում իրականացված ստուգայցի արդյունքում հայտնաբերված խախտման վերաբերյալ 17.03.2011 թվականի արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությանը պատկանող «Cucina» իտալական խոհանոցի խմիչքների ցուցասրահում առկա էր 2005-2007 թվականներին թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված թվով 9 շիշ ակոհոլային խմիչք (գ. թ. 8):

2) Տեսչության 26.07.2011 թվականի թիվ 155947 որոշմամբ Ընկերության տնօրենը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի համաձայն ենթարկվել է տուգանքի՝ 300.000 դրամի չափով: Որոշման մեջ նշված է. «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ին պատկանող «Cucina» իտալական խոհանոցի ցուցասրահում նախատեսված խմիչքների համար իրացման նպատակով ցուցադրել է 2005, 2006, 2007թթ. թվագրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված թվով 9 շիշ ակոհոլային խմիչքներ» (գ. թ. 9):

3) Ընկերության տնօրենի կողմից Տեսչության 26.07.2011 թվականի թիվ 155947 որոշման դեմ բերվել է վարչական բողոք (գ. թ. 11-13):

4) Վարչական բողոքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից քննության չի առնվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ (գ. թ. 14):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Քննության առարկա վճռաբեկ բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է.

- վարչական պատասխանատվություն սահմանող նորմերի՝ ժամանակի մեջ գործողության խնդրի հստակեցումը,

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով նախատեսված գանցակազմի բովանդակության մեկնաբանությունը՝ այդ նորմի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով:

ա) ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Մույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:



Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խտացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խտացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խտացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խտացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե սույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ **վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ** և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Վերոհիշյալ իրավանորմերի համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ.

- եթե վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքը նախատեսում է ավելի խիստ պատասխանատվություն (պատասխանատվությունը խտացնող օրենք), քան նախատեսված էր իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքով, ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը մեղմացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ,

- եթե վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքը նախատեսում էր ավելի խիստ պատասխանատվություն, քան նախատեսված է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքով (պատասխանատվությունը մեղմացնող օրենք), ապա վարչական տույժը նշանակվում է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը կայացնելու պահին գործող օրենքին համապատասխան, եթե այդ օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

---

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս տրված է հետադարձ ուժ,

- եթե վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքն ուժը կորցնում է, այսինքն՝ տվյալ վարչական իրավախախտման համար նախատեսված պատասխանատվությունը վերացվում է, ապա անձը ենթակա է պատասխանատվության վարչական իրավախախտումը կատարելու ժամանակ գործած օրենքին համապատասխան, եթե պատասխանատվությունը վերացնող օրենքով վերջինիս հետադարձ ուժ տրված չէ:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում կարևորվում է նաև վարչական իրավախախտում կատարելու ժամանակը որոշելու խնդիրը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ, ի թիվս այլ տեղեկությունների, նշվում է վարչական իրավախախտում կատարելու ժամանակը:

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածին համապատասխան վարչական տույժ նշանակելու ժամկետները հաշվելու համար որպես էլակետ հիմք է ընդունվում վարչական իրավախախտումը կատարելու օրը, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտելու օրը:

Վերոհիշյալ նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական իրավախախտումը կատարելու ժամանակը որոշելու համար հիմք պետք է ընդունվի իրավախախտման վերաբերյալ արձանագրությունում նշված՝ իրավախախտման կատարման ժամանակը: Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, այն է՝ 170.5-րդ, 189.7-րդ հոդվածներով, 198.2-րդ հոդվածի հինգերորդ մասով և 257-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, երբ արձանագրություն չի կազմվում, վարչական իրավախախտում կատարելու ժամանակը որոշվում է՝ հիմք ընդունելով օրենսգրքի 251-րդ հոդվածում նշված մյուս ապացույցները:

Սույն գործի փաստական հանգամանքները վկայում են, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունն իրավասու անձանց կողմից կազմվել է 17.03.2011 թվականին, որում որպես իրավախախտման կատարման ժամանակ է նշված 17.03.2011 թվականը: Ընդ որում, հայցվորն այս ամսաթվի վերաբերյալ որևէ առարկություն չունի: Ավելին, վաղեմության երկամսյա ժամկետը հաշվարկելու համար հայցվորը Դատարանին ներկայացրած իր փաստարկներում հիմք է ընդունել նշված ամսաթիվը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ նշված արձանագրությունը կազմելու պահի դրությամբ գործած խնրագրությամբ, որպես տուգանքի չափ էր նախատեսում սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկը: Նշված չափը փոփոխվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 22.12.2010 թվականի թիվ ՀՕ-12-Ն օրենքով: Վերջինս ուժի մեջ է մտել **01.04.2011 թվականից**: Ըստ նշված օրենքի՝ տուգանքի սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկ չափը փոխարինվել է 600-ապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով նախատեսված 17.03.2011 թվականին արձանագրված վարչական իրավախախտման հա-

մար հայցվորի նկատմամբ տուգանք է նշանակվել **26.07.2011 թվականին** Տեսչության պետի Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 155947 որոշմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հաստատված է համարում, որ իրավախախտումը տեղի է ունեցել 17.03.2011 թվականին, իսկ դրանից հետո (01.04.2011 թվականին) ուժի մեջ մտած և 170.12-րդ հոդվածը նոր խմբագրությամբ վերաշարադրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի կողմից 22.12.2010 թվականին ընդունված ՀՕ-12-Ն ՀՀ օրենքով տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը խստացվել է:

Հիմք ընդունելով նշված հանգամանքները և վերոհիշյալ իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի նկատմամբ կիրառելի է տուգանքի այն չափը, որը նախատեսված է եղել մինչև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 01.04.2011 թվականին ուժի մեջ մտնելը, այն է՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից մինչև 300-ապատիկը, քանզի նշված օրենքը հանդիսանում է պատասխանատվությունը խստացնող օրենք: Հետևաբար, պատասխանողի կողմից վարչական պատասխանատվության վերաբերյալ 26.07.2011 թվականի որոշմամբ օրենսգրքի 170.12-րդ հոդվածը մինչև 01.04.2011 թվականը գործած խմբագրությամբ կիրառելը եղել է իրավաչափ: Հակառակ դեպքում հայցվորի նկատմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի կողմից 22.12.2010 թվականին ընդունված ՀՕ-12-Ն ՀՀ օրենքով նախատեսված տուգանքի չափի կիրառումը կնշանակեր հետադարձ ուժ տալ պատասխանատվությունը խստացնող օրենքին, ինչը կհանդիսանար ինչպես ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասի, այնպես էլ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում:

Վճռաբեկ դատարանն իրավաչափ համարելով հայցվորի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի մինչև 01.04.2011 թվականը գործած խմբագրությամբ կիրառումը, ելնելով վերոհիշյալ հիմնավորումներից՝ անընդունելի է համարում այդ նորմի կիրառելիության վերաբերյալ Դատարանի և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքում նշված այն փաստարկին, որ «...ուժը կորցրած իրավական ակտը կիրառելը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի համաձայն բոլոր դեպքերում առաջացնում է պատասխանատվություն (կարգապահական, վարչական կամ քրեական)», ապա դա հայցվորի՝ նշված նորմի սուբյեկտիվ մեկնաբանության արդյունքն է: Նման մեկնաբանությունը հակասության մեջ է մտնում ինչպես ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 6-րդ մասի, 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, այնպես էլ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի ողջ տրամաբանության հետ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասում խոսքը վերաբերում է «**Սույն օրենքի համաձայն՝ իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտին**»: Օրենքի վերլուծությունը վկայում է, որ այդ օրենքի համաձայն իրավաբանական ուժ չունեցող ակտեր են համարվում, մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով չնախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտերը (6-րդ հոդվածի 3-րդ մաս), համապատասխան հղում չունեցող կամ սխալ հղումով գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը և տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը (43-րդ հոդվածի 4-րդ մաս), «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտեր:

---

րը (46-րդ հոդվածի 3-րդ մաս): Մինչդեռ կիրառման պահին ուժը կորցրած օրենքը, որն օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան կիրառելի է տվյալ իրավահարաբերության նկատմամբ, **«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իմաստով** չի կարող համարվել **իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտ**:

Վերոնշյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի նշված փաստարկը հիմնավոր չէ:

բ) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի դիսպոզիցիան սահմանում է. «Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որոշակի թվագրումով դրոշմանիշերով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների իրացման թույլատրելի ժամկետներից հետո այդպիսի ապրանքներ իրացնելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը»:

Մանրածախ առևտրի հետ կապված առանձնահատկությունները կանոնակարգվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Մանրածախ առուվաճառք» վերտառությամբ պարագրաֆով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքի ցուցադրումը վաճառքի վայրում (վաճառասեղանների վրա, ցուցափեղկերում և այլն), դրանց նմուշների ցուցադրումը կամ վաճառվող ապրանքների մասին դրանց վաճառքի վայրում տեղեկություններ (նկարագրություններ, կատալոգներ, ապրանքների լուսանկարներ և այլն) տրամադրելը համարվում է հրապարակային օֆերտա, **անկախ այն բանից, դրանցում նշված են ապրանքի գինը և մանրածախ առուվաճառքի պայմանագրի մյուս էական պայմանները, թե ոչ, բացառությամբ այն դեպքի, երբ վաճառողը պարզորոշ սահմանել է, որ համապատասխան ապրանքները նախատեսված չեն վաճառքի համար**:

Վերոհիշյալ նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է ոչ միայն այդ հոդվածում նշված ապրանքներն ուղղակի վաճառելով (իրացնելով): Նշված իրավադրույթում օգտագործված «իրացնել» եզրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ներառվի այդ երևույթի բովանդակությունը: Իրացումը ոչ միայն կոնկրետ ապրանքը փաստացի վաճառելն է՝ գնորդին հանձնելը և դրա դիմաց գումար ստանալը, այլև այդպիսի գործարքի իրականացմանն ուղղակիորեն նախորդող գործընթացը ևս, մասնավորապես՝ ապրանքի վաճառքի վերաբերյալ հայտարարելը, օֆերտայի հրավեր անելը, ապրանքը, որպես վաճառքի ենթակա, ցուցադրելը և այլն: Հետևաբար **ապրանքները հաճախորդներին տեսանելի վայրերում, այն է՝ վաճառարահում, վաճառասեղանների վրա, ցուցափեղկերում, ցուցասրահում և այլն, վաճառքի նպատակով ցուցադրելը ևս ներառվում է հիշատակված զանցակազմի օբյեկտիվ կողմում**:

Այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի հիման վրա անձը կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել նաև այդ հոդվածում նշված ապրանքը վաճառելու նպատակով՝ **հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրված լինելու հանգամանքի առկայության դեպքում**: Վաճառելու նպատակը բացակայում է, եթե **վաճառողը պարզորոշ սահմանել է, որ համապատասխան ապրանքները նախատեսված չեն վաճառքի համար**: Այսինքն՝ օրենսգրքի նշված հոդվածի հիման վրա վարչական պատասխանատվություն չի կարող ծագել, եթե վաճառողը տվյալ ապրանքը ցուցադրելով հաճախորդների համար տեսանելի վայրում՝ միաժամանակ պարզորոշ կերպով սահմանել է, որ այդ ապրանքը վաճառքի համար նախատեսված չէ:

---

Հիմք ընդունելով վերոհիշյալ մեկնաբանությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարչական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստն է ակտիվային խմիչքների՝ հաճախորդներին տեսանելի վայրում վաճառքի նպատակով ցուցադրված լինելու հանգամանքը:

Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված ընդհանուր կանոնի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում:

Ապացուցման վերոհիշյալ կանոնին համապատասխան՝ հաճախորդներին տեսանելի վայրում խմիչքների ցուցադրված լինելու հանգամանքը Դատարանն ապացուցված է համարել՝ հիմք ընդունելով հայցվորի ներկայացուցչի կողմից այդ փաստը չվիճարկելու հանգամանքը: Այս առնչությամբ Դատարանի 24.10.2012 թվականի վճռում, մասնավորապես, արձանագրված է. «Հայտնաբերված ապրանքները վաճառարահի հատուկ կահավորված՝ հաճախորդներին տեսանելի վայրում ցուցադրված լինելու փաստն ընդունվեց նաև հայցվորի ներկայացուցչի կողմից» (գ. թ. 78):

Ինչ վերաբերում է վաճառելու նպատակի առկայության հանգամանքը պարզելուն, ապա Վճռաբեկ դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ կետի համադրված վերլուծության արդյունքում արձանագրում է, որ վաճառելու նպատակը բացակայում է, եթե **վաճառողը պարզորոշ սահմանել է, որ համապատասխան ապրանքները նախատեսված չեն վաճառքի համար:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համակցված 26-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, կողմը կրում է իր պահանջները կամ առարկությունները հիմնավորելու պարտականություն: Տվյալ դեպքում նշված նորմերին համապատասխան հայցվորից պահանջվում էր հիմնավորել, որ ակտիվային խմիչքները հաճախորդների համար տեսանելի վայրում ցուցադրելով՝ իր կողմից պարզորոշ սահմանվել է, որ դրանք վաճառքի համար նախատեսված չեն:

Հայցվորի կողմից նշված հանգամանքը հիմնավորելու համար ներկայացված միակ ապացույցն ակտիվային խմիչքների վրա գնանշման բացակայությունն է: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մանրածախ առևտրի դեպքում գնանշումը չի համարվում հրապարակային օֆերտայի պարտադիր պայման: Բացի այդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.12-րդ հոդվածը ևս հնարավոր է համարում դրանում նշված ապրանքների իրացումն առանց գնանշման: Այդ մասին է վկայում նշված հոդվածում «եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով» ձևակերպումը: Ելնելով նշված իրավակարգավորումից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գնանշման բացակայությունը չի վկայում այն մասին, որ հայցվորը պարզորոշ կերպով սահմանել է, որ ցուցադրված ապրանքը վաճառքի համար նախատեսված չէ:

Հետևաբար Դատարանի եզրահանգումը ցուցաբերումն առկա ակտիվային խմիչքների վաճառքի նպատակով ցուցադրված լինելու հանգամանքի վերաբերյալ հիմնվում է գործում առկա ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ գնահատման վրա:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի նշված փաստարկը ևս անհիմն է:

Վերոնշյալ հիմնավորմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ան-

---

հրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ Վճռաբեկ դատարանի՝ դատական ակտը անփոփոխ թողնելու լիազորությունը սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշումը թողնել անփոփոխ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ-6/0207/05/09  
2013թ.

Վարչական գործ թիվ ՎԴ-6/0207/05/09

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան  
Դատավորներ՝ Հ. Բեդկյան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահողությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Վանաձորի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Թումանյանի տարածքային հարկային տեսչության (ներկայումս՝ Վանաձորի տարածքային հարկային տեսչություն) ընդդեմ Արաքսյա Աբգարյանի, երրորդ անձ «Ալավերդու հացի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Արաքսյա Աբգարյանից 831.700 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ալավերդյան) (այսուհետ՝ Դատարան) 20.06.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.10.2012 թվականի որոշմամբ Արաքսյա Աբգարյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Դատարանի 20.06.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

---

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 113-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում անտեսել է այն հանգամանքը, որ Տեսչության կողմից պատվիրված նամակով ակտն ուղարկվել է հասցետախրոջը, որն էլ վերջինս ստացել և ստորագրել է փոստային ծառայության առաքանու գրքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 20.06.2012 թվականի վճռին:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի 13.11.2008 թվականի թիվ 2303109 հանձնարարագրով Տեսչության աշխատակիցներին հանձնարարվել է Արաքսյա Աբգարյանի մոտ կատարել առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի գործունեության իրականացման ստուգում: Ստուգման արդյունքներով 13.11.2008 թվականին կազմված թիվ 2303109 ակտով Արաքսյա Աբգարյանին առաջադրվել է 831.700 ՀՀ դրամ հարկային պարտավորություն (**հատոր 1-ին, գ.թ. 3-4**):

2) «Հայփոստ» ՓԲԸ-ի Թումանյանի փոստային մասնաճյուղի 28.02.2011 թվականի թիվ 01/19 գրության համաձայն՝ Ալավերդի քաղաքի բնակիչ Արաքսյա Աբգարյանի անվամբ 2008 թվականի նոյեմբերի 18-ին հանձնված է պատվիրված փոստային առաքանի (R-99) ուղարկված Ալավերդի քաղաքից, ինչը հաստատվում է թիվ 1702 փ/բ Ալավերդի քաղաքի Ջրավազանի փողոցը սպասարկող փոստատարի «Հանձնվող առաքանու» գրքում կատարված գրառմամբ (Գ-8) (**հատոր 1-ին, գ.թ. 65-66**):

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է պրուգման ակտը հասցետախրոջը հանձնելու խնդրին՝ որպես վարչական ակտի ուժի մեջ մտնելու նախապայման:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վճռը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատա-



րանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող ինկորպորացիայով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **կազմված ստուգման ակտը ստուգում իրականացնող անձինք երեք օրվա ընթացքում պետք է ներկայացնեն տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:** Կազմված ակտն ստորագրում են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք և **տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը:** Տարածայնությունների դեպքում կողմերի կարծիքներն արձանագրվում են ակտում: **Ակտն ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա մասին ակտում կատարվում է համապատասխան գրառում:** Ակտի պատճենի մեկ օրինակը հանձնվում է տնտեսվարող սուբյեկտին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին **իրազեկում է նույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով:**

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, **պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին:** Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով:

Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին **ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:**

Նույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպ-

---

քում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վերահաստատել նախկինում արտահայտած իր այն դիրքորոշումը, որ նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ստուգման կազմակերպման և անցկացման վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, քանի որ դրա առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ հիշյալ օրենքը, վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող ինկորպորացիայով, ստուգում իրականացնող անձի վրա դնելով ստուգման ակտը երեք օրվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտին ներկայացնելու պարտականություն, չէր կարգավորում ներկայացման եղանակը: Հետևաբար, ստուգում իրականացնող անձը ստուգման ակտի մասին տնտեսվարող սուբյեկտին պետք է իրազեկեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Մասնավորապես՝ **ստուգման ակտը պետք է հանձնվեր ստորագրությամբ առձեռն ստանալու միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ** (ի թիվս այլոց *յո՛ւս ըստ հայցի ՀՀ Կոնստիտուցիայի մրցակցության պետական հանձնաժողովն ընդդեմ «Վագրա» ՍՊԸ-ի թիվ 3-1714(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի որոշումը*):

Սույն գործով հայցը բավարարելիս Դատարանը, գնահատելով վարչական ակտը, որպես ուժի մեջ մտած ակտ, միաժամանակ պատճառաբանել է, որ «13.11.2008 թվականի թիվ 2303109 ակտն օրենքով սահմանված կարգով վերադատության կամ դատական կարգով չի բողոքարկվել»:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու, դատական ակտը բեկանելու և փոփոխելու հիմքում դրել է պատճառաբանությունն այն մասին, որ «գործով հաստատված փաստերն ինքնին բացառում են պատասխանողի կողմից պատշաճ կարգով ստուգման ակտը ստացած լինելու հանգամանքը և հետևաբար, բացառում են դրա ուժի մեջ մտնելը: Տեսչության ուժի մեջ չմտած ակտը չի կարող իրավական հետևանքներ առաջացնել, այսինքն՝ հիմք հանդիսանալ այդ ակտով առաջադրված պարտավորությունը բռնագանձելու համար»:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի Թումանյանի փոստային մասնաճյուղի 28.02.2011 թվականի թիվ 01/19 գրության համաձայն՝ Ալավերդի քաղաքի բնակիչ Արաքսյա Աբգարյանի անվամբ 2008 թվականի նոյեմբերի 18-ին հանձնված է պատվիրված փոստային առաքանի (R-99) ուղարկված Ալավերդի քաղաքից:

Վերոգրյալներից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել «Հայփոստ» ՓԲԸ-ի Թումանյանի փոստային մասնաճյուղի 28.02.2011 թվականի թիվ 01/19 գրությունը և դրան կից ներկայացված Ալավերդի քաղաքի թիվ 1702 փ/բ Ջրավազանի փողոցը սպասարկող փոստատարի «Հանձնվող առաքանու» գրքի (Գ-8) լուսապատճենը, որոնցով հիմնավորվում է 13.11.2008 թվականի թիվ 2303109 ակտը Արաքսյա Աբգարյանի կողմից ստանալու փաստը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 20.06.2012 թվականի վճռին:

2. Արաքսյա Աբգարյանից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Վանաձորի տարածքային հարկային տեսչության բռնագանձել 24.951 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0909/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0909/05/10

2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Արթուր Բուլղադարյանի ներկայացուցիչ Շուշանիկ Նիկողոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սվետլանա Օհանյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձ Արթուր Բուլղադարյանի՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 28.04.2008 թվականի թիվ 1911-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սվետլանա Օհանյանը պահանջել է անվավեր ճանաչել Քաղաքապետի 28.04.2008 թվականի թիվ 1911-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 04.03.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.06.2011 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 04.03.2011 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.08.2011 թվականի որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 09.06.2011 թվականի որոշման դեմ Սվետլանա Օհանյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ք. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 06.03.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.09.2012 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի և Արթուր Բուլղադարյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 06.03.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Բուլղադարյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սվետլանա Օհանյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ հոդվածները, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Սվետլանա Օհանյանը Երևանի Չկայովի թիվ 48 հասցեի նկատմամբ սեփականության կամ այլ իրավունք ձեռք բերելու վերաբերյալ որևէ իրավական հիմքեր չի ունեցել, որևէ վարչական մարմնի կողմից ոչ մի իրավական ակտ չի կայացվել, որն ուղղված լիներ Սվետլանա Օհանյանի համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, ինչն էլ իր հերթին սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի տպավորություն կառաջացներ: Տվյալ դեպքում Սվետլանա Օհանյանի և նրա ընտանիքի անդամների մոտ չէին կարող առկա լինել բավականաչափ հիմքեր ենթադրելու, որ գույքը ձեռք են բերել որպես սեփականություն: Այսինքն՝ Քաղաքապետի որոշմամբ Սվետլանա Օհանյանի ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված որևէ իրավունք չի խախտվել, որպիսի պարագայում միայն վերջինս ձեռք կբերեր վարչական ակտը բողոքարկելու իրավունք:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ գործում առկա գրավոր ապացույցներով, ինչպես նաև դատական ակտերով հիմնավորվել է, որ վիճելի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Արթուր Բուլղադարյանին, իսկ Սվետլանա Օհանյանը չի ներկայացրել բնակելի տունն օրենքի կամ պայմանագրի հիման վրա տիրապետելու փաստը հաստատող որևէ ապացույց: Այսինքն՝ վիճարկվող վարչական ակտով որևէ կերպ չեն խախտվել Սվետլանա Օհանյանի իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ վիճելի բնակելի տան նկատմամբ որևէ իրավունք չի ունեցել, այդտեղ բնակվել է առանց իրավական հիմքերի, ուստի Սվետլանա Օհանյանն այն իրավասու անձը չէ, որի կողմից կարող է վիճարկվել Քաղաքապետի որոշման օրինականությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանը, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով և գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, կայացրել է հիմնավորված և ճիշտ որոշում: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելիս Վերաքննիչ դատարանն իրավացիորեն եկել է եզրահանգման այն մասին, որ Քաղաքապետի որոշման ըն-

---

դունման հիմքում դրվել է ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի թիվ 114 ուժը կորցրած որոշումը: Ավելին, Քաղաքապետի վիճարկվող որոշումն արհեստականորեն խոչընդոտ է առաջացրել Սվետլանա Օհանյանի կողմից գույքի նկատմամբ սեփականության ձեռքբերման իրավունքի իրացման համար և գրկել է փաստացի իր սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ իրավունքի ձևակերպման, ինչպես նաև օրենքի ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք ունենալու հնարավորությունից:

### **3. Վճռարեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռարեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Չկալովի թիվ 48 հասցեի բնակիչ Շուշանիկ Կարապետյանը 03.03.1953 թվականին իր կիսաքանդ տունը վաճառել է Աստղիկ Բուլղադարյանին, որի դիմաց ստացել է 2.000 ռուբլի (**հատոր 2-րդ, գ.թ. 122**):

2) Երևանի Սպանդարյանի շրջափոխի գործկոմը 13.07.1987 թվականին որոշել է Երևանի Դավթաշեն 1-ին թաղամասի 24-րդ շենքի 2-րդ մուտքի 2-րդ հարկի թիվ 21 բնակարանը հատկացնել Աստղիկ Բուլղադարյանի ընտանիքի 5 անձերին՝ իրեն, տղային՝ Ալբերտ Բուլղադարյանին, հարսին՝ Ավարդ Բուլղադարյանին և երկու թոռներին՝ Արտյոմ և Մարինե Բուլղադարյաններին: Միաժամանակ որոշվել է Չկալովի թիվ 48 հասցեի տունը թողնել բնակվելու Արթուր Բուլղադարյանին (**հատոր 2-րդ, գ.թ. 159-160**):

3) Քաղաքապետի 28.04.2008 թվականի թիվ 1911-Ա որոշմամբ Երևանի Սիմեոն Երևանցու փողոցի թիվ 48/1 (Չկալովի փողոց թիվ 48) հասցեի գույքային միավորների նկատմամբ վերականգնվել է Արթուր Բուլղադարյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 72,24 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով Արթուր Բուլղադարյանի սեփականության իրավունքը 72,24 քմ մակերեսով բնակելի տան և նշված հողամասի նկատմամբ (**հատոր 1-ին, գ.թ. 77**):

4) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 010064-144 մատյանի թիվ 00127 համարի տակ Երևանի Սիմեոն Երևանցու փողոցի թիվ 48/1 հասցեի գույքի նկատմամբ 29.05.2008 թվականին գրանցվել է Արթուր Բուլղադարյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 124-126**):

5) Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 26.02.2010 թվականի թիվ ԵԿԴ/1992/02/09 վճռով բավարարվել է Արթուր Բուլղադարյանի հայցն ընդդեմ Սվետլանա, Արսեն, Նարեկ Օհանյանների և Ավետիք Սարգսյանի՝ Երևանի Սիմեոն Երևանցու 48/1 հասցեից վտարելու պահանջի մասին: Նշված վճռով հայցը բավարարելիս դատարանը հաստատված հանգամանք է համարել, որ պատասխանողները չեն ներկայացրել որևէ փաստաթուղթ այն մասին, որ վիճելի հասցեում գտնվող գույքը պատկանում է իրենց (**հատոր 2-րդ, գ.թ. 105-106**):

### **4. Վճռարեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռարեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հարկ է պահպանվում այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքներ չունեցող անձի կողմից կարող է վիճարկվել այդ գույքի նկատմամբ ընդունված քաղաքապետի որոշումը:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետա-

կան կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, էթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է **դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են**: Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), իր նախադեպային որոշումներում անդրադառնալով այս հարցին, նշել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (*Կրեյս Լը Քոմպլեյն և մյուսներն ընդդեմ Բելիզիայի թիվ 6878/75 դիմումում ՄԻԵԴ 23.06.1981 թվականի որոշումը, պարբ. 47, Բենթոնի ընդդեմ Նիդերլանդների, թիվ 8848/80 դիմումում ՄԻԵԴ 23.10.1985 թվականի որոշում, պարբ. 32*):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով. բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

---

վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Այսինքն՝ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի դիմելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում, չի կարող անվավեր ճանաչվել այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «սույն գործի փաստական հանգամանքներով հաստատվում է, որ տվյալ դեպքում Քաղաքապետը վիճարկվող՝ 28.04.2008 թվականի թիվ 1911-Ա որոշումը կայացնելիս ղեկավարվել է նաև ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների հաշվառման և պետական գրանցման մասին» թիվ 114 որոշման 2-րդ կետով: Մինչդեռ, դեռևս ՀՀ կառավարության 15.05.2003 թվականի «Մինչև «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը հաշվառումից դուրս մնացած ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների, ինքնակամ զբաղեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտումներով օտարված (տրամադրված, ձեռք բերված) պետական սեփականության հողամասերի վերաբերյալ դիմումների և հայտերի քննարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1748-Ն որոշմամբ (4-րդ կետով) ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների հաշվառման և պետական գրանցման մասին» թիվ 114 որոշումը ճանաչվել է ուժը կորցրած»: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը նշել է, որ «... Սվետլանա Օհանյանն ունեցել է օրինական ակնկալիք, սպասելիք խնդրո առարկա հանդիսացող տան նկատմամբ, քանի որ վերջինս 10 տարուց ավելի ապրում է Չկալովի փողոցի 48 հասցեում գտնվող տանը, մինչդեռ գործով երրորդ անձ Արթուր Բուլղադարյանը շուրջ 14 տարի բնակվում է արտասահմանում: Նշված հանգամանքն ապացուցվում է 23.03.2003թ. Կենտրոն համայնքի թիվ 5 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից տրված տեղեկանքով, ըստ որի՝ Չկալովի փողոցի 48 հասցեում գրանցված են երկու անձ՝ Արթուր Բուլղադարյանը և Աստղիկ Բուլղադարյանը, որոնք շուրջ 14 տարի բացակայում են բնակության վայրից, և տունն իրենց թույլտվությամբ զբաղեցրել է տանտիրոջ քրոջ աղջիկը՝ Սվետլանա Օհանյանը, առանց նշված հասցեում գրանցման: Բացի այդ, հայցվորի օրինական ակնկալիքները սեփականության իրավունքի ձեռքբերման հարցում հիմնավորվում են նաև նրանով, որ վերջինս, բնակվելով խնդրո առարկա հանդիսացող տանը, հանդիսանում է նշված տան բաժանորդը: Փաստը հաստատվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի «Կենտրոն» ցանցի կողմից 08.02.2010 թվականին տրված բաժանորդի էպիկրիզով, որի համաձայն՝ Սվետլանա Օհանյանը 1997 թվականի հոկտեմբերի 20-ից հանդիսանում է Երևանի Միմեոն Երևանցու փողոցի թիվ 48 (նախկին Չկալովի փողոց 48) հասցեի բաժանորդը ...»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հիմք չեն կարող հանդիսանալ վիճարկվող վարչական ակտն անվավեր ճանաչելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

---



դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչպես նաև պարզում է այս կամ այն ապացույցի վերաբերելիության հարցը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Չկալովի թիվ 48 հասցեի բնակիչ Շուշանիկ Կարապետյանի 03.03.1953 թվականի ստացականի համաձայն՝ Շուշանիկ Կարապետյանն իր կիսաքանդ տունը վաճառել է Աստղիկ Բուլղադարյանին, որի դիմաց ստացել է 2.000 ռուբլի: Երևանի Սպանդարյանի շրջափակի գործկոմի 13.07.1987 թվականի թիվ 18 արձանագրությունից քաղվածքի համաձայն՝ գործադիր կոմիտեն որոշել է Երևանի Դավթաշեն 1-ին թաղամասի 24-րդ շենքի 2-րդ մուտքի 2-րդ հարկի թիվ 21 բնակարանը հատկացնել Աստղիկ Բուլղադարյանի ընտանիքի 5 անձերին՝ իրեն, տղային՝ Ալբերտ Բուլղադարյանին, հարսին՝ Ալվարդ Բուլղադարյանին և երկու թոռներին՝ Արտյոմ և Մարինե Բուլղադարյաններին: Միաժամանակ **որոշվել է Չկալովի թիվ 48 հասցեի տունը թողնել բնակվելու Արթուր Բուլղադարյանին**: Այնուհետև Քաղաքապետի 28.04.2008 թվականի թիվ 1911-Ա որոշմամբ Երևանի Սիմեոն Երևանցու փողոցի թիվ 48/1 (Չկալովի փողոց թիվ 48) հասցեի գույքային միավորների նկատմամբ վերականգնվել է Արթուր Բուլղադարյանի հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան գրառեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 72,24 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով Արթուր Բուլղադարյանի սեփականության իրավունքը բնակելի տան և հողամասի նկատմամբ: Իսկ նշված որոշումից ծագած Արթուր Բուլղադարյանի սեփականության իրավունքը Երևանի Սիմեոն Երևանցու փողոցի թիվ 48/1 հասցեի գույքի նկատմամբ Կադաստրի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 010064-144 մատյանի թիվ 00127 համարի տակ գրանցվել է 29.05.2008 թվականին: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 26.02.2010 թվականի թիվ ԵԿԴ-1992/02/09 վճռով բավարարվել է Արթուր Բուլղադարյանի հայցն ընդդեմ Սվետլանա, Արսեն, Նարեկ Օհանյանների և Ավետիք Սարգսյանի՝ Երևանի Սիմեոն Երևանցու 48/1 հասցեից վտարելու պահանջի մասին: Նշված վճռով հայցը բավարարելիս դատարանը հաստատված հանգամանք է համարել, որ պատասխանողները չեն ներկայացրել որևէ փաստաթուղթ այն մասին, որ վիճելի հասցեն պատկանում է իրենց:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Քաղաքապետի 28.04.2008 թվականի թիվ 1911-Ա որոշման կայացման համար հիմք է ընդունվել նաև ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների հաշվառման և պետական գրանցման մասին» թիվ 114 ուժը կորցրած որոշումը, այդուհանդերձ այն որպես ոչ իրավաչափ վարչական ակտ ճանաչելու համար նախ անհրաժեշտ է պատշաճ հայցվորի կողմից հայց հարուցելու հանգամանքը, այնինչ նշված ակտը Սվետլանա Օհանյանի հայցով չի կարող անվավեր ճանաչվել, քանի որ դրանով Սվետլանա Օհանյանի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմա-

---

նագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքներ ու ազատություններ չեն խախտվել:

Ինչ վերաբերում է վիճելի հասցեում Աստղիկ և Արթուր Բուլղադարյանների թույլտվությամբ 10 և ավելի տարի բնակվելու, ինչպես նաև էլեկտրաէներգիայի բաժանորդ լինելու հանգամանքներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար հիմքեր չեն փաստելու համար, որ Սվետլանա Օհանյանը վիճելի բնակելի տան նկատմամբ ունի «օրինական ակնկալիք», ինչից էլ հետևում է, որ Սվետլանա Օհանյանին չի պատկանում վերը նշված վարչական ակտը վիճարկելու իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել. Սվետլանա Օհանյանի հայցը մերժել:

2. Սվետլանա Օհանյանից հոգուտ Արթուր Բուլղադարյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Սվետլանա Օհանյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.12.2012 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արդրագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արդրագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/2731/05/11  
Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան  
Դատավորներ՝ Ա. Աբովյան  
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2731/05/11  
2013թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռարեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռարեկ դատարան)

նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝  
Նախարարություն) վճռարեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.10.2012  
թվականի որոշման դեմ ըստ հայցի Փառանձեմ Գևորգյանի ընդդեմ Նախարարության՝  
ատղիտորի որակավորումը շնորհված համարելու և ատղիտորի որակավորման վկայա-  
կանը տրամադրելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Փառանձեմ Գևորգյանը պահանջել է ատղիտորի որակավորումը  
համարել շնորհված և պարտավորեցնել Նախարարությանը տրամադրել ատղիտորի  
որակավորման համապատասխան վկայական:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան)  
26.03.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
03.10.2012 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դա-  
տարանի 26.03.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

---

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի, ՀՀ դատական օրենսգրքի 15րդ հոդվածի 4րդ մասի, 44րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6րդ հոդվածի 2րդ, 3րդ մասերի, 64րդ, 65րդ, 67րդ, 68րդ հոդվածների, 144-րդ հոդվածի 3րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48րդ հոդվածի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը պատշաճ գնահատական չի տվել սույն գործի շրջանակներում առկա փաստերին, ճիշտ չի մեկնաբանել համապատասխան իրավական ակտերի նորմերը, մանրամասն չեն ուսումնասիրվել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչը հանգեցրել է սույն վարչական գործով սխալ որոշման կայացմանը:

Թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը անտեսել են այն հանգամանքը, որ սույն գործի շրջանակներում խոսքը գնում է ոչ թե իրավահարաբերության ճանաչման, այլ փաստի ճանաչման մասին: Դատարանների կողմից հաշվի չի առնվել այն, որ որակավորման վկայականը կարող է տրամադրվել բացառապես որակավորման քննությունները հանձնելու արդյունքում, այսինքն՝ անձի մասնագիտական գիտելիքների ստուգման ճանապարհով և ոչ թե դատական կարգով: Ավելին, Դատարանն անգամ չի հիմնավորել այն փաստը, որ Նախարարության կողմից վարչարարության ընթացքում թույլ է տրվել օրենսդրության պահանջներից չբխող որևէ գործողություն կամ խախտում:

Բացի այդ, աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու համար ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 03.02.2005 թվականի թիվ 123-Ն որոշմամբ հաստատված «Լիազորված մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգով»: Կարգի 2-րդ կետով նախատեսվում է, որ աուդիտորների որակավորումը «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված պահանջները բավարարող աուդիտորի որակավորում ստանալու համար լիազորված մարմին դիմում ներկայացրած ֆիզիկական անձի (դիմողի) մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա աուդիտորի որակավորման վկայական տալու ընթացակարգ է: Աուդիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով: Մինչդեռ Փառանձեմ Գևորգյանն աուդիտորների որակավորման քննություններին մասնակցելու համար առաջին անգամ դիմել է 17.09.2008 թվականին: 30.09.2010 թվականին մասնակցել է անցկացված քննությանը (արձանագրություն թիվ 16, 30.09.2010 թվական), որի արդյունքում չի որակավորվել, երկրորդ անգամ դիմել է 09.12.2010 թվականին, նրա դիմումին ընթացք է տրվել, և ՀՀ կառավարության 03.02.2005 թվականի թիվ 123Ն որոշմամբ հաստատված «Լիազորված մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգի» համաձայն՝ պետք է հրավիրվեր առաջիկայում կազմակերպվելիք քննություններին, որը տեղի չի ունեցել, հետևաբար հայցվորը քննություններ չի հանձնել: Օրենսդիրը նախատեսել է մի շարք պարտադիր պահանջներ և պայմաններ, այսինքն՝ հայցվորը պետք է մասնակցեր իր մասնագիտական գիտելիքների ստուգման համար նախատեսված քննությանը և հետո հանձնաժողովի կողմից

դրական արդյունքի հիման վրա ստանար աուդիտորի որակավորման վկայական, որից հետո նա կարող էր ձեռնամուխ լինել իր իրավունքի իրականացմանը: Այնինչ տվյալ դեպքում Փառանձեմ Գևորգյանը վերը նշված քննություններին դեռևս չի մասնակցել, իսկ Դատարանը, վերազանցելով իր լիազորությունները, նրան համարել է աուդիտորի որակավորում ստացած:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.10.2012 թվականի որոշումը և այն փոփոխել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը:

1. 09.12.2010 թվականին Փառանձեմ Գևորգյանը դիմել է Նախարարություն աուդիտորի որակավորում ստանալու նպատակով քննություններին մասնակցելու համար (գ.թ. 8):

2. Փառանձեմ Գևորգյանի կողմից դիմումը ներկայացնելուց հետո մինչ սույն գործով հայցադիմումը ներկայացնելու պահը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից չի կազմակերպվել աուդիտորի որակավորման քննություն:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե արդյոք աուդիտորի որակավորում ստանալու քննություններին մասնակցելու հայր ներկայացնելու և սահմանված ժամկետում քննություն չկազմակերպվելու դեպքում հայր ներկայացրած անձին իրավասու մարմինը պետք է շնորհի աուդիտորի որակավորում և տրամադրի համապատասխան վկայական:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունվելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հայցվող ցանկացած վարչական ակտի ընդունված լինելը հաստատող նորմ: Հայցվող վարչական ակտը, ինչպես նաև հայցվող իրավունքը պետք է հիմնված լինեն օրենքի հիման վրա, չխախտեն այլոց իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար նշված նորմի բովանդակության մաս պետք է կազմի նաև հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը (տես՝ Սերգեյ Գասպարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/5557/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը): Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով իր դիրքորոշումը, միաժամանակ արձանագրում է, որ վերոնշյալ հոդ-

---

վածը չի ենթադրում վարչական մարմնի կողմից վարչարարություն չիրականացվելու դեպքում վարչարարությունն իրականացված լինելու և հայցվորի կողմից պահանջվող վարչական ակտն ընդունված լինելու կանխավարկածի առկայություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետով սահմանված կանոնի կիրառման համար անհրաժեշտ է նաև ուսումնասիրել վարչարարության այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են աուդիտորների որակավորմանը:

ՀՀ կառավարության 03.02.2005 թվականի թիվ 123-Ն որոշմամբ հաստատված «Լիազորված մարմնի կողմից աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետով նախատեսվում է, որ աուդիտորների որակավորումը «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածով սահմանված պահանջները (սույն կարգի 3-րդ կետ) բավարարող աուդիտորի որակավորում ստանալու համար լիազորված մարմին դիմում ներկայացրած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող) **մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա աուդիտորի որակավորման վկայական (այսուհետ՝ վկայական) տալու ընթացակարգ է: Աուդիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով:**

Նույն կարգի 5-րդ կետի համաձայն՝ աուդիտորների որակավորման քննություններն անցկացնում է լիազորված մարմնի կողմից ստեղծված աուդիտորների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով): Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է առնվազն ինն անդամ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի երկու ներկայացուցիչ: Հանձնաժողովի կազմում լիազորված մարմնի ներկայացուցիչների թիվը չի կարող չորսից պակաս լինել:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ քննությունները կարող են անցկացվել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած աուդիտորների որակավորման քննությունների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր), ինչպես նաև լիազորված մարմնի կողմից այդ ծրագրի շրջանակներում հաստատված հարցերը (թեստերը) և տիպային խնդիրները պաշտոնապես հրապարակվելու օրվանից ոչ շուտ, քան 2 ամիս հետո:

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ քննություններն անցկացվում են պարբերաբար՝ լիազորված մարմնի կողմից սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, եթե առկա է սույն կարգի 3-րդ կետի պահանջները բավարարող առնվազն մեկ դիմում: Քննության անցկացման օրվա, ժամի և տեղի մասին դիմողին տեղեկացվում է քննությունից առնվազն 7 օր առաջ:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը քննության անցկացման օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է քննության երկրորդ փուլի (խնդիրների) պատասխանները և, հաշվի առնելով սույն կարգի 17-րդ կետի պահանջները, ընդունում է որոշում դիմողներին աուդիտորի որակավորում շնորհելու վերաբերյալ: Այդ նպատակով յուրաքանչյուր խնդիր ստուգվում և գնահատվում է հանձնաժողովի առնվազն 2 անդամի կողմից:

Հանձնաժողովը քննության արդյունքներն ամփոփում է դոնփակ: Հանձնաժողովի եզրակացությունը հրապարակվում է:

Քննության արդյունքների մասին դիմողին պատշաճ ձևով հայտնվում է, կամ դրանք նրան են ուղարկվում ոչ ուշ, քան քննությունների ավարտի օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ աուդիտորների որակավորման քննությունների անցկացումը՝ որպես վարչարարության առանձին տեսակ, ունի իր առանձ-

նահատկությունները:

Առաջին հերթին այն իրականացվում է մասնագիտական գիտելիքների ստուգման ճանապարհով, որի արդյունքների հիման վրա միայն կարող է ընդունվել համապատասխան որոշում: Այսինքն՝ վարչարարության այս տեսակի պայմաններում միայն դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար չեն համապատասխան վարչական ակտ կայացնելու համար:

Երկրորդ. աուդիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով: Այսինքն՝ վարչարարության այս տեսակն ունի իրականացման հատուկ կարգ քննության ձևաչափով, իսկ քննության ընթացքում համապատասխան ձևով ստուգվում են անձի մասնագիտական գիտելիքները: Քննությունից բացի այլ եղանակով վարչարարության այս տեսակն իրականացվել չի կարող:

Երրորդ. աուդիտորների որակավորման քննություններն անցկացնում է լիազորված մարմնի կողմից ստեղծված աուդիտորների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով): Այսինքն՝ միայն այդ մարմնի ձևավորման պարագայում է հնարավոր համապատասխան վարչարարության իրականացում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի «ա» կետի կիրառման հարցը քննարկելիս դատարանները պետք է հաշվի առնեն Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև վարչական վարույթի առանձնահատկությունները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառման համար հայցվող վարչական ակտի իրավաչափությունը, որի առկայությունը հաստատվելուց հետո միայն հնարավոր կլինի փաստել վարչական ակտի և դրա հիման վրա ծագող իրավունքի գոյությունը, հնարավոր չէ պարզել առանց քննությունների անցկացման և համապատասխան հանձնաժողովի կողմից անձի մասնագիտական գիտելիքների ստուգման: Այսինքն՝ վարչարարության որոշակի տեսակների դեպքում իրավունքի գոյության հարցն ուղղակիորեն կապված է վարչարարության իրականացման հետ, որի արդյունքում է միայն հնարավոր որոշել հայցվող վարչական ակտի իրավաչափությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 09.12.2010 թվականին Փառանձեմ Գևորգյանը դիմել է Նախարարություն աուդիտորի որակավորում ստանալու նպատակով քննություններին մասնակցելու համար, սակայն դիմումը ներկայացնելուց հետո մինչ սույն հայցադիմումը ներկայացնելու ժամանակահատվածը Նախարարության կողմից քննություններ չեն կազմակերպվել:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի այն եզրահանգումները, որ «տվյալ դեպքում Նախարարությունը պնդում է, որ աուդիտորի որակավորման վկայականն անձանց շնորհվում է համապատասխան քննություններից հետո, որպիսի փաստ տվյալ դեպքում առկա չէ: Դատարանը ևս գտնում է, որ աուդիտորի որակավորման վկայականն անձանց շնորհվում է համապատասխան քննություններից հետո, որպիսի փաստ տվյալ դեպքում առկա չէ, սակայն Դատարանը միևնույն ժամանակ գտնում է, որ հենց այդ քննությունների չկազմակերպումը, կամ, այլ կերպ ասած, վարչարարության չիրականացումն է, որ հանգեցնում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված այն իրադրությանը, որ որակավորման վկայականը պետք է համարել շնորհված այն պարզ պատճառով, որ հենց վարչարարության չիրականացումն է հանգեցրել համապատասխան վարչական ակտի չընդունմանը»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառա-

---

բանություններն անհիմն են, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ հնարավոր էր և չէր բացառվում Փառանձեմ Գևորգյանի կողմից հայց ներկայացվեր դատարան Նախարարությանը պարտավորեցնելու աուդիտորի որակավորման քննություններ անցկացնելու պահանջով:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով քննությունները չանցկացվելու պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող հանգել հայցվող վարչական ակտի իրավաչափության վերաբերյալ եզրահանգման, որն անհրաժեշտ պայման է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառման համար: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Փառանձեմ Գևորգյանի հայցն **աուդիտորի որակավորման վկայականը տրամադրելու պահանջի մասով** ենթակա է մերժման:

*Անդրադառնալով Փառանձեմ Գևորգյանի՝ աուդիտորի որակավորումը շնորհված համարելու պահանջին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ մասով գործի վարույթը ենթակա է կարճատև հետևյալ պատճառաբանությանը.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ճանաչման հայց կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ ներկայացնել վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց: Ճանաչման այնպիսի հայցի ներկայացման պարագայում, որի բավարարումը պայմանավորված է վարչական մարմնի կողմից մեկ այլ վարչական ակտի ընդունմամբ, այսինքն՝ որոշակի իրավահարաբերության առկայության ճանաչմանը նախորդում է վարչական ակտի ընդունում, վեճը ենթակա չէ քննության դատարանում: Կիրառելով նշված կանոնը սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վ ճ ո ա բ է կ դատարանն արձանագրում է, որ աուդիտորների որակավորման քննություն անցկացված չլինելու և համապատասխան վկայական տրամադրված չլինելու պարագայում աուդիտորի որակավորում շնորհված համարելու պահանջը ենթակա չէ դատարանում քննության, հետևաբար տվյալ վեճն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Փառանձեմ Գևորգյանի ներկայացրած պահանջն իրենից ներկայացնում է ճանաչման հայց, քանի որ ըստ էության խնդրել է ճանաչել այն փաստը (իրավահարաբերության առկայությունը), որ իրեն շնորհվել է աուդիտորի որակավորում:



Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հաշվի չի առնվել այն, որ ատոլիտորի որակավորում շնորհված լինելու պահանջը քննության է ենթակա բացառապես որակավորման քննությունները հանձնված լինելու արդյունքում, այսինքն՝ անձի մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքում: Հետևաբար քանի դեռ բացակայում է նման ստուգումը և դրա հիման վրա կայացված համապատասխան որոշումը, Փառանձեմ Գևորգյանի պահանջը նշված մասով ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227րդ և 228-րդ հոդվածների և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.10.2012 թվականի որոշումը և ատոլիտորի որակավորման վկայականը տրամադրելու պահանջի մասով այն փոփոխել. Փառանձեմ Գևորգյանի հայցը՝ ատոլիտորի որակավորման վկայականը տրամադրելու պահանջի մասով, մերժել, իսկ ատոլիտորի որակավորումը շնորհված համարելու պահանջի մասով գործի վարույթը կարճել:

2. Փառանձեմ Գևորգյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0687/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝

Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/0687/05/12**

**2013թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական սրահայրը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)*

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Եղիշե Հարությունյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 վարչական ակտն անվավեր ճանաչելու և բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Եղիշե Հարությունյանը պահանջել է անվավեր ճանաչել Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 վարչական ակտը և պարտավորեցնել Քաղաքապետարանին կայացնել իր համար բարենպաստ որոշում՝ Երևանի Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության նպատակային նշանակությունը հասարակականից արտադրականի փոխելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Բ. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան)

09.07.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2012 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.07.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1) *Վերաքննիչ դատարանը կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 55-րդ, 57-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությունը հանդիսանում է վարչական ակտ, անհիմն է, քանի որ նշված գրությունը կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով վարչական մարմին չհանդիսացող անձի կողմից, ինչպես նաև այն նույն օրենքի 53-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում Եղիշե Հարությունյանի դիմումի քննարկման արդյունքում կայացված վարչական ակտ:

2) *Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքաշինության նախարարի 01.10.2001 թվականի «Նորմատիվ-լեգիսլատիվական ակտերի կանոնակարգման մասին» թիվ 82 հրամանով հաստատված թիվ ԾՆ և Կ 2.08.02-89 նորմերը, Քաղաքապետի 12.03.2011 թվականի թիվ 747-Ն որոշումը, որոնք պետք է կիրառել, չպետք է կիրառել ՀՀ Կառավարության 02.02.2002 թվականի թիվ 88 որոշումը, որը կիրառել է, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ, 22-րդ, 24-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 130-րդ, 132-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում գույքի գործառնական նշանակության փոփոխության հնարավորությունը պայմանավորված է թիվ ԾՆ և Կ 2.08.02-89 պահանջներին համապատասխանելու հետ, և Դատարանը պետք է որպես ապացուցման ենթակա փաստ դիտել Եղիշե Հարությունյանի պահանջի առարկա հանդիսացող գույքի՝ նշված պահանջներին համապատասխանելու հանգամանքը: Այսինքն՝ Քաղաքապետին բարենպաստ վարչական ակտ կայացնելու պարտավորեցնելու համար Դատարանը պետք է ապացուցված համարել, որ վճռի արդյունքում ակնկալվելիք բարենպաստ վարչական ակտը լինելու է իրավաչափ:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը չի իրականացրել վերաքննիչ բողոքի լիարժեք քննություն, որի արդյունքում կայացված որոշմամբ Քաղաքապետարանը ծանրաբեռնվել է ոչ իրավաչափ պարտականությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

---

1) 18.11.1999 թվականի «Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման» թիվ 0103725 վկայականի համաձայն՝ Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեի նկատմամբ անշարժ գույքի պետական գրանցման միասնական թիվ 5-3 մատյանի 000002 համարի տակ գրանցված է Եղիշե Հարությունյանի սեփականության իրավունքը: Նույն վկայականի «Շենքի տվյալները» բաժնում նպատակային նշանակությունը նշված է՝ հասարակական, օգտագործման նպատակը՝ լվացքատուն, ընդհանուր մակերեսը՝ 3.164,3քմ (**հատոր 1-ին, գ.թ. 42-47**):

2) Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 21.10.2011 թվականի թիվ 18-08/1-Հ-5132 գրությամբ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին հայտնվել է հետևյալը. «Դիմումը քննարկվել է վարչությունում և հաշվի առնելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 18.11.1999թ. հ.0103725 վկայականը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 02.02.02թ. հ.88 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով՝ վարչությունը հնարավոր է գտնում Հաղթանակ գյուղի 1-ին փողոց հ.50 հասցեում գտնվող շինությունների տարածքներն առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես արտադրական (ՇՆ և Կ 2.08.02-89 պահանջներին չհակասելու պայմանով)» (**հատոր 1-ին, գ.թ. 38**):

3) Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությամբ Եղիշե Հարությունյանին հայտնվել է հետևյալը. «Երևանի քաղաքապետարան ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 18.11.1999թ. տրված հ.0103725 վկայականի՝ շենքերի, շինությունների նպատակային նշանակությունները գրանցված են որպես հասարակական նշանակության, իսկ գլխավոր մասնաշենքի օգտագործման նպատակը՝ լվացքատուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շենքը նախատեսված է եղել և մասնավորեցվել է որպես լվացքատուն, ուստի գործառնական նշանակության փոփոխումն արտադրականի գտնում ենք ոչ նպատակահարմար» (**հատոր 1-ին, գ.թ. 17**):

#### **4. Վճռարեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները**

1) *Վճռարեկ դատարանը վճռարեկ բողոքի առաջին հիմքի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչպիսի պայմանների պետք է բավարարի վարչական մարմնի արտաբաժանման կողմից տրված գրությունը, որպեսզի հանդիսանա վարչական ակտ:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով վարչական մարմինները բնորոշվում են որպես Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ, իսկ վարչարարությունը՝ որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

Նույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է ան-

ձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Վերոգրյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ որևէ փաստաթուղթ որպես վարչարարության արդյունք հանդիսացող վարչական ակտ դիտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է վարչական ակտի բաղկացուցիչ մասերը կազմող տարրերի միաժամանակյա առկայությունը: Այսպես՝ վարչական ակտը պետք է ընդունվի վարչական մարմնի կողմից և ունենա արտաքին ներգործություն, ընդունվի հանրային իրավունքի բնագավառում և հետապնդի կոնկրետ գործի կարգավորման նպատակ, ուղղված լինի անձի համար իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Իսկ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է վարչական ակտի առկայությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությամբ, ի պատասխան Եղիշե Հարությունյանի 12.10.2011 թվականի թիվ Պ-5132 դիմումի՝ կապված Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունն արտադրական սահմանելու հետ, հայտնվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շենքը նախատեսված է եղել և մասնավորեցվել է որպես լվացքատուն, գործառնական նշանակության փոփոխումն արտադրականի նպատակահարմար չէ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վիճարկման հայցի մասով վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությունը պարունակում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով միջամտող վարչական ակտին ներկայացվող բոլոր տարրերը, մասնավորապես՝ նշված գրությունն արտաքին ներգործություն ունեցող այնպիսի անհատական իրավական ակտ է, որը Քաղաքապետարանը (նրա անունից հանդես եկող պաշտոնատար անձը) ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և որի միջոցով վարչական մարմինը՝ Քաղաքապետարանը, մերժել է Եղիշե Հարությունյանի դիմումը՝ կապված Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունն արտադրական սահմանելու հետ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությունը պարունակում է վարչական ակտի բաղկացուցիչ մասերը կազմող բոլոր տարրերը: Մասնավորապես՝ այն

1) ունի արտաքին ներգործություն՝ կարգավորում է վարչական մարմնի՝ Քաղաքապետարանի և ֆիզիկական անձի՝ Եղիշե Հարությունյանի միջև առաջացած իրավահարաբերությունները,

2) անհատական իրավական ակտ է՝ ուղղված է Եղիշե Հարությունյանին,

3) ընդունվել է վարչական մարմնի՝ Քաղաքապետարանի կողմից,

4) ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում. կարգավորում է Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառ-

---

նական նշանակությունը փոփոխելու հետ առաջացած իրավահարաբերությունները,

5) հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ. կարգավորում է Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունն արտադրական սահմանելու հետ կապված հարցը,

6) ուղղված է Եղիշե Հարությունյանին իրավունքների տրամադրման մերժմանը՝ Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունը չփոփոխելուն:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Շ-5132 գրությունը որպես վարչական ակտ դիտարկելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, իսկ բողոքն այդ հիմքով անհիմն է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքի սույն հիմքը վերաբերում է Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի գրությունը վարչական ակտ դիտելուն, և քանի որ բողոքում բացակայում են հիմքեր վիճարկվող ակտի իրավաչափության վերաբերյալ, ուստի Վճռաբեկ դատարանը համաձայնում է նշված ակտի անվավերության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանության և եզրահանգման հետ:

*2) Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե արդյոք վիճարկվող գրությամբ նշված պայմանի առկայության չպարզման դեպքում Դատարանն իրավասու էր պարտավորեցնել Քաղաքապետարանին ընդունել բարենպաստ վարչական ակտ:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը պարտավորեցման հայցի մասով վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 21.10.2011

թվականի թիվ 18-08/1-Հ-5132 գրությամբ հնարավոր է համարվել Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինությունների տարածքներն առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես արտադրական (ՇՆ և Կ 2.08.02-89 պահանջներին չհակասելու պայմանով), սակայն Քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի 20.12.2011 թվականի թիվ 20/1-Հ-5132 գրությամբ Եղիշե Հարությունյանի դիմումը, կապված Երևանի Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունն արտադրական սահմանելու հետ, մերժվել է գործառնական նշանակության փոփոխման նպատակահարմար չլինելու հիմքով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Այսպես՝ սույն գործի փաստերի համաձայն՝ Քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի 21.10.2011 թվականի թիվ 18-08/1-Հ-5132 գրությամբ նշված վարչությունը հնարավոր է համարել Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինությունների տարածքներն առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես արտադրական (ՇՆ և Կ 2.08.02-89 պահանջներին չհակասելու պայմանով):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված ապացույցով հաստատվում է այն փաստը, որ վարչական մարմինը՝ Քաղաքապետարանը, հնարավոր է համարել Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինությունների տարածքներն առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում՝ որպես արտադրական բացառապես շինարարական նորմերի (ՇՆ և Կ 2.08.02-89) պահանջներին չհակասելու պայմանով, որպիսի պայմանի պարզումը սույն գործի լուծման համար ունի էական նշանակություն, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, որպիսի խախտման արդյունքում առանց շինարարական նորմերի (ՇՆ և Կ 2.08.02-89) պահանջներին չհակասելու մասին ապացույցի առկայության հաստատված է համարել այն հանգամանքը, որ պարտավորեցման հայցի մատով Եղիշե Հարությունյանի պահանջը ևս հիմնավոր է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արդեն իսկ արտահայ-

---

տել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է սույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*տե՛ս՝ ՀՀ Կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության հայցն ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդն» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը պարտավոր էր ձեռնարկել ողջամիտ միջոցներ, այսինքն՝ Երևանի Հաղթանակ գյուղի (թաղամասի) 1-ին փողոցի թիվ 50 հասցեում գտնվող շինությունների տարածքներն առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների ոչ բնակելի ֆոնդում որպես արտադրական ընդգրկելու համար շինարարական նորմերի (ՇՆ և Կ 2.08.02-89) պահանջներին չհակասելու հանգամանքը (փաստը) ի պաշտոնե պարզելու համար, ինչը սույն գործի լուծման համար ունի էական նշանակություն, քանի որ այդ փաստի պարզման հիմքով է միայն հնարավոր կանխորոշել սույն գործի ելքը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2012 թվականի որոշման՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասը և այդ մասով գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության: Որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արդրագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արդրագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ-2/0302/05/12**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0302/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան  
Դատավորներ՝ Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)*

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով «Ռուբեն Գևորգյան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Սևանի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտով վարչական վարույթը վերսկսելուն, այն մասնակիորեն փոփոխելուն և նշված ակտով բյուջեի նկատմամբ տույժերը և տուգանքները 34.530.000 ՀՀ դրամ սահմանելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Ինչպես նաև դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Տեսչությանը վերսկսել 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտով վարչական վարույթը, մասնակիորեն փոփոխել այն և նշված ակտով բյուջեի նկատմամբ տույժերը և տուգանքները սահմանել 34.530.000 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Թորոսյան) (այսուհետ՝ Դատարան) 16.11.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

---

26.03.2013 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.11.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 33-րդ, 51-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետությունում սպորտումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 117.12-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը ներկայացրել է ոչ թե երկու միմյանցից չածանցվող, այլ մեկ ընդհանուր պահանջ, որը բխել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածից: Եթե Վերաքննիչ դատարանը ճիշտ ըմբռներ նշված հոդվածի իմաստը, ապա կգար այն հետևություն, որ դրա բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմինը վարչական ակտը փոփոխելու համար սկզբում պետք է վերսկսի վարչական վարույթը, որից հետո նոր հնարավորություն կունենա մասնակիորեն կամ ամբողջությամբ փոփոխել վարչական ակտը:

Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ Տեսչությունը կամ Տեսչության պետը վարույթը վերսկսելու և ստուգման ակտը փոփոխելու լիազորություններ չունեն, ուստի Տեսչությանը հնարավոր չէ պարտավորեցնել կատարել այն: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Տեսչությունը նման հիմնավորմամբ չի մերժել Ընկերության կողմից ներկայացված վարչական վարույթը վերսկսելու վերաբերյալ դիմումը և այդպիսի հիմնավորումներ չի ներկայացրել Դատարան: Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջն այն մասին, որ եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա այն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին:

Վերաքննիչ դատարանն ավարտված վարչական վարույթը վերսկսելը նույնականացրել է վերստուգման անցկացման հետ: Մինչդեռ, վերստուգումը նախկին վարչական վարույթի (ստուգման) հետ կապ չունեցող նոր վարչական վարույթ է, և այն չի կարող նույնականացվել ավարտված վարչական վարույթը վերսկսելու հետ: Մասնավորապես՝ տվյալ դեպքում առկա են եղել 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտը վերանայելու վերաբերյալ վարչական վարույթը վերսկսելու համար օրենքով սահմանված բոլոր նախապայմանները, մինչդեռ Տեսչությունը, հաշվի չառնելով վերոգրյալը, մերժել է Ընկերության դիմումը: Այսպես՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԳԴ/0022/01/10 քրեական գործով 30.01.2012 թվականին կայացված «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշմամբ, ինչպես նաև դրանում ներառված դատահաշվապահական, շինարարատեխնիկական, փաստաթղթաբանական հանձնաժողովային համալիր փորձաքննության թիվ 05651109 եզրակացությամբ հիմնավորվում է այն փաստը, որ Ընկերության հարկային պարտավորությունը կազմում է ոչ թե 38.830.000 ՀՀ դրամ (տույժ և տուգանքներով՝ 86.175.200 ՀՀ դրամ), այլ 13.252.100 ՀՀ դրամ (տույժ և տուգանքներով՝ 34.530.000 ՀՀ դրամ):

Վերաքննիչ դատարանը դատական ակտը չի վերանայել վերաքննիչ բողոքի պա-

հանջի սահմաններում, ընդհանրապես չի անդրադարձել բողոքում բարձրացված հարցերին, դրա հիմքերին և հիմնավորումներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 26.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 23.07.2009 թվականի թիվ 1000253 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 10-11**):

2) Նշված ստուգման արդյունքում Տեսչության կողմից 05.11.2009 թվականին կազմվել է թիվ 1000253 ակտը, որով Ընկերությանն առաջադրվել է ընդհանուր 87.221.400 ՀՀ դրամի պարտավորություն (**հատոր 1-ին, գ.թ. 13-19**):

3) ՀՀ վարչական դատարանի 15.12.2010 թվականին կայացրած վճռով Ընկերության հայրը բավարարվել է՝ Տեսչության 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտը ճանաչվել է անվավեր, իսկ Տեսչության հայրը՝ 80.491.990 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, մերժվել է (**հատոր 1-ին, գ.թ. 48-64**):

4) ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.05.2011 թվականին կայացրած որոշմամբ Տեսչության բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վարչական դատարանի 15.12.2010 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Ընկերության հայրը մերժվել է, իսկ Տեսչության հայրը՝ բավարարվել (**հատոր 1-ին, գ.թ. 34-42**):

5) Վճռաբեկ դատարանի 29.06.2011 թվականին կայացրած որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 05.05.2011 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, իսկ 13.06.2012 թվականի որոշմամբ վերադարձվել է նաև նույն որոշումը նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ Ընկերության տնօրենի վճռաբեկ բողոքը (**հատոր 1-ին, գ.թ. 44-47**):

6) ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 30.01.2012 թվականի թիվ ԳԳ/0022/01/10 որոշմամբ Գևորգ Գևորգյանի նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է, և քրեական հետապնդումը դադարեցվել է: Նույն որոշմամբ հաստատված է համարվել այն հանգամանքը, որ Ընկերության հարկային պարտավորությունները կազմում են ոչ թե 38.830.000 ՀՀ դրամ (տույժ և տուգանքներով՝ 86.175.200 ՀՀ դրամ), այլ 13.252.100 ՀՀ դրամ (տույժ և տուգանքներով՝ 34.530.000 ՀՀ դրամ), որպիսի եզրահանգման հիմքում դրվել են «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 04.10.2010 թվականի դատահաշվապահական թիվ 10-2220 եզրակացությունը, ինչպես նաև դատահաշվապահական, շինարարատեխնիկական, փաստաթղթաբանական հանձնաժողովային համալիր փորձաքննության թիվ 05651109 եզրակացությունը (**հատոր 2-րդ, գ.թ. 57-64**):

7) «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 04.10.2010 թվականի թիվ 10-2220 եզրակացության «Հետևություններ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտում արձանագրված դրվագներով, նախաձեռնողի կողմից ներկայացված հսկիչ-դրամարկղային մեքենայի թվով 167 կտրոնում, ֆիզիկական անձանց գնման ակտերում և ձեռք բերված ապրանքների վերաբերյալ պայմանագրում արտացոլված տվյալներով, փորձաքննությամբ կատարված ճշգրտումներով, Ընկերության հարկային պարտավորությունները, ըստ հարկատեսակների, հաշվի առնելով մինչև ստուգումն առկա

---

գերավճարները, կազմում են տույժ և տուգանքներով հանդերձ ընդամենը՝ 34.530.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 24-32**):

8) Ընկերությունը Տեսչությանն ուղղված 09.07.2012 թվականի դիմումով հայտնել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 30.01.2012 թվականի «Քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին» որոշման համաձայն (որի հիմքում դրվել է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի թիվ 10-2220 եզրակացությունը)՝ 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտում նշված գումարի չափը՝ տույժի և տուգանքի հետ միասին, պետք է կազմեր ոչ թե 80.550.450 ՀՀ դրամ, այլ 34.530.000 ՀՀ դրամ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է նշված ակտը փոփոխել՝ սահմանել, որ Ընկերության հարկային պարտավորությունների չափը՝ ապառքի մասով, կազմում է 13.252.100 ՀՀ դրամ (տույժ և տուգանքների մասով՝ 21.277.900 ՀՀ դրամ), իսկ Ընկերությունից 57.607.913 ՀՀ դրամի բռնագանձման գործընթացը դադարեցնել (**հատոր 1-ին, գ.թ. 65**):

9) Տեսչության պետի 12.07.2012 թվականի թիվ 13696-05 գրությամբ, ի պատասխան Ընկերության վկայակոչված դիմումի, հայտնվել է, որ 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտը վերջինս դատական կարգով բողոքարկել է, առկա է վերջնական դատական ակտ, և այն ենթակա է կատարման: Հետևաբար այդ դիմումը չի կարող բավարարվել (**հատոր 1-ին, գ.թ. 66**):

#### **4. Վճարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն վճարեկ բողոքի քննության ընդունումը Վճարեկ դատարանը պայմանավորում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի կիրառման առնչությամբ միասնական դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ: Այդ նպատակով Վճարեկ դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրումները.*

*ա) արդյո՞ք Տեսչությունն ունի ստուգման կազմակերպման և անցկացման վարչական վարույթը (այսուհետ՝ ստուգման վարույթ) վերսկսելու լիազորություն, կամ կիրառելի են արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի դրույթները ստուգման վարույթի առնչությամբ,*

*բ) արդյո՞ք ստուգման վերսկսումը և վերստուգման վարչական վարույթը նույնական իրավական գործընթացներ են,*

*գ) ի՞նչ է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասի իմաստով բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտի բնույթումը:*

*«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա պարտավոր է որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե՝*

*ա) վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հոգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել.*

*բ) առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի բարենպաստ որոշում ընդունելուն.*

*գ) ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց, կամ թեև հայտնի են եղել նրանց, սակայն այդ անձանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին.*

դ) առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում բազմիցս ընդգծել է, որ ստուգման կազմակերպման և անցկացման վարույթը հանդիսանում է առանձին տեսակի վարչական վարույթ, որի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (*տե՛ս օրինակ՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն ընդդեմ «Վազրա» ՍՊԸ-ի՝ 500.000 ՀՀ դրամ փուզանքի գումարը բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 26.10.2006 թվականի թիվ 3-1714(ՏԴ) որոշումը*):

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ստուգման վարույթը վերսկսելու ինստիտուտ և ընթացակարգ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով վարչական վարույթը վերսկսելու վերաբերյալ նորմերը կիրառելի են նաև ստուգման վարույթի առնչությամբ և հետևաբար ըստ այդմ հարկային մարմինն օժտված է նշված օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ստուգման վարույթը վերսկսելու իրավասությամբ:

բ) Երկրորդ հարցադրման առնչությամբ Վճռաբեկ դատարանը նախնառաջ կարևորում է «վարչական վարույթի վերսկսում» ինստիտուտի բովանդակության բացահայտումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով նախատեսված՝ այդ ինստիտուտի իրավակարգավորման հիմնական տարրերի միջոցով:

Վերոնշյալ հոդվածի իրավակարգավորման հիմնական տարրերն են.

- վարույթը վերսկսվում է նշված հոդվածով և/կամ այլ օրենքներով նախատեսված՝ վարույթը վերսկսելու հիմքերի առկայության դեպքում,
- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է վարչական ակտի ընդունմամբ արդեն իսկ ավարտված վարչական վարույթի նկատմամբ,
- վարույթը վերսկսելու արդյունքում վերանայվում է՝ փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում վարչական ակտը,
- վարույթը վերսկսելու ինստիտուտը կիրառելի է միայն բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտերի առնչությամբ, և այդ ինստիտուտի կիրառմամբ կարող է վերանայվել միայն բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

Հիմք ընդունելով վարչական վարույթը վերսկսելու իրավակարգավորման վերոհիշյալ տարրերը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունմամբ **արդեն իսկ ավարտված** վարչական վարույթի վերաբացումն է, նորոգումն է, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման արդյունքներն ամփոփվում են տեղեկանքում (խախտումներ չհայտնաբերելու դեպքում) կամ ստուգման ակտում (խախ-

---

տումներ հայտնաբերելու դեպքում), ստուգման ակտը՝ որպես վարչական ակտ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ է մտնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) հանձնելուն հաջորդող օրվանից, իսկ նույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ստուգման ակտը դառնում է բողոքարկման ոչ ենթակա (անբողոքարկելի), եթե բաց է թողնված դրա ուժի մեջ մտնելուն հաջորդող՝ վարչական կարգով բողոքարկման համար սահմանված վեցամսյա ժամկետը:

Վերոհիշյալ նորմերի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման վարչական վարույթն սկսվում է ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրաման կամ հանձնարարագիր հրապարակելու միջոցով ստուգումն իրականացնող մարմնի նախաձեռնության դրսևորմամբ և ավարտվում ստուգման ակտի կազմմամբ:

Հիմք ընդունելով «վարչական վարույթի վերսկսում» ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը և ստուգման վարույթի առնչությամբ նշված իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման վարույթի վերսկսումն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ստուգումն իրականացնող մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) կողմից ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա սկսված և ստուգման ակտի կազմմամբ ավարտված ստուգման վարույթի վերաբացումն է, նորոգումը, որի արդյունքում փոփոխվում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվում բողոքարկման ոչ ենթակա ստուգման ակտը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վերստուգման հասկացությունը: Ըստ այդ նորմի՝ վերստուգումն ստուգում իրականացնող մարմնի կողմից նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամանակահատվածում կատարված երկրորդ (կրկնակի) ստուգումն է, բացի նույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-9-րդ կետերով սահմանված, ինչպես նաև հարկային հաշվանցումներ և (կամ) վերադարձ ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձ իրականացնելուց առաջ տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարվող ստուգման դեպքերի, երբ վերստուգումները մեկից ավելի ստուգումներն են:

Միաժամանակ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածն սպառիչ կերպով ամրագրում է վերստուգման հիմքերը:

Օրենքի նշված նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ վերստուգման վարույթը ստուգման վարույթից տարանջատված՝ առանձին, ինքնուրույն վարչական վարույթ է, որի հարուցմամբ ոչ թե վերաբացվում, նորոգվում է նախորդ ստուգման վարույթը, այլ հարուցվում է երկրորդ (կրկնակի) ստուգման վարույթ, որի արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ: Եթե ստուգման վարույթի վերսկսման նպատակն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում արդեն իսկ ավարտված վարույթի արդյունքում ընդունված ստուգման ակտի վերանայումն է, ապա վերստուգման արդյունքում նախորդ ստուգման ակտի վերանայում տեղի չի ունենում, այլ կրկնակի ստուգման արդյունքում ընդունվում է նոր ստուգման ակտ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ օրենսդիրը հստակ տարբերակում է կատարել վերստուգման և ստուգման վարույթը վերսկսելու հիմքերի, խնդիրների ու նպատակների միջև, անընդունելի է համարում այդ վարույթների՝ որպես իրավական գործընթացների նույնացումը:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել

է այն պատճառաբանությունը, որ Ընկերության պահանջը՝ ստուգման ակտով վարչական վարույթը վերսկսելու մասին, կարող է վերաբերել միայն վերստուգման անցկացմանը, որը կանոնակարգված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, իսկ վարչական վարույթը վերսկսելու վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումը՝ նույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չէ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ստուգման վարույթի վերսկսումը որևէ կերպ չի կարող նույնացվել վերստուգման հետ, քանի որ դրանք միմյանցից էականորեն տարբերվող ընթացակարգեր են, և վարչական վարույթը վերսկսելու վերաբերյալ դիմումի ներկայացման դեպքում դրա նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ վարչական վարույթի վերսկսման հետ կապված հարաբերությունները կարգավորող, այլ ոչ թե «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի՝ վերստուգման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ Ընկերությունը 09.07.2012 թվականի դիմումով Տեսչությանը խնդրել է փոփոխել Տեսչության 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտը, ինչը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետք է իրականացվեր վարչական վարույթը վերսկսելու միջոցով, այսինքն՝ Ընկերությունը նշված դիմումով չի ներկայացրել վերստուգման պահանջ, սակայն Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Ընկերության պահանջը՝ ակտով վարչական վարույթը վերսկսելու մասին, կարող է վերաբերել միայն վերստուգման անցկացմանը, որը կանոնակարգված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, ինչի արդյունքում Դատարանը նույնացրել է վերստուգման և վարչական վարույթի վերսկսման՝ իրարից էականորեն տարբերվող ընթացակարգերը:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի դրույթները, ինչի արդյունքում սույն գործով եկել է սխալ եզրահանգման:

գ) Վերոհիշյալ երրորդ հարցադրման առնչությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախևառաջ ճշգրտել այն վարչական ակտերի շրջանակը, որոնց առնչությամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի իրավակարգավորումը: Այդ նպատակով մեկնաբանության անհրաժեշտություն ունի նշված հոդվածում «բողոքարկման ոչ ենթակա ակտ» եզրույթը: Նշված հասկացությունը համարժեք է «անբողոքարկելի» հասկացության հետ, որի բովանդակությունը բացահայտված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածը սահմանում է վարչական ակտը բողոքարկելու երկու այլընտրանքային հնարավորություն՝ վարչական կամ դատական կարգով: Նույն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ վարչական կարգով վարչական ակտը կարող է բողոքարկվել դրա ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Դատական կարգով բողոքարկման համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածը սահմանում է ավելի սեղմ ժամկետ, այն է՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետ:

---

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը վարչական կարգով բողոքարկելու համար սահմանված 6-ամսյա ժամկետը բաց թողնելուց հետո դառնում է անբողոքարկելի:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում «բողոքարկման ոչ ենթակա ակտեր» ձևակերպումը վերաբերում է այն վարչական ակտերին, որոնք օրենքով սահմանված ժամկետում չեն բողոքարկվել ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով, ինչը նշանակում է, որ նշված դրույթը **կիրառելի չէ այն դեպքերի վրա, երբ տվյալ վարչական ակտի իրավաչափությունը վիճարկվել է դատական կարգով և առկա է դրա իրավաչափությունը գնահատող վերջնական դատական ակտ:** Այն դեպքում, երբ վարչական ակտը վիճարկվել է դատական կարգով, և առկա է այդ ակտի իրավաչափությունը գնահատող օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ, նոր երևան եկած հանգամանքի հիման վրա վերանայման է ենթակա ոչ թե վարչական ակտը, այլ համապատասխան դատական ակտը:

Ավելին, դատական պաշտպանության իրավունքը, *inter alia*, ներառում է դատարանի մատչելիության իրավունքը, դատական ակտի բողոքարկման իրավունքը, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքների ուժով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքը: Վերջինս հանդիսանում է դատական պաշտպանության բացառիկ և լրացուցիչ միջոց, որը կիրառվում է օրենքով սահմանված հանգամանքների առկայության դեպքում:

Օրենսդիրը նոր երևան եկած հանգամանքների ուժով վերանայման ինստիտուտ նախատեսել է նաև վարչական վարույթում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում նախատեսելով այդ ինստիտուտը՝ օրենսդիրն այն դիտարկում է որպես վարչական ակտի դեմ վարչական կարգով պաշտպանության բացառիկ և լրացուցիչ միջոց:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է: Նշված դրույթը նշանակում է, որ անձի կողմից ընդդեմ վարչական ակտի դատական պաշտպանության միջոցի ընտրությունը բացառում է վարչական կարգով պաշտպանությունից, դրա բաղադրիչներից, այդ թվում՝ նոր երևան եկած հանգամանքների ուժով վարչական ակտի վերանայման ինստիտուտից օգտվելու հնարավորությունը: Հետևաբար, եթե անձի կողմից ընտրվել է դատական պաշտպանության միջոցը, ապա նոր երևան եկած հանգամանքի առկայության պայմաններում անձն իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետք է իրականացնի դատական պաշտպանության շրջանակներում: Նոր երևան եկած հանգամանքի ուժով վարչական ակտի վերանայումը, հանդիսանալով վարչական կարգով իրավական պաշտպանության տարր, կիրառելի է վարչական կարգով պաշտպանության շրջանակներում:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա սույն վճռաբեկ բողոքի քննության նպատակով Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքի պարզումը, թե արդյոք դատարանների կողմից օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտով գնահատական է տրվել վեճի առարկա վարչական ակտի՝ Տեսչության 05.11.2009 թվականի թիվ 1000253 ստուգման ակտի իրավաչափությանը:

Այսպես՝ սկզբնապես նշված ակտի իրավաչափությունը վիճարկվել է Վարչական դատարանում, որն իր 15.12.2010 թվականի վճռով Ընկերության հայցը բավարարել է մասնակիորեն՝ վճռելով անվավեր ճանաչել վիճարկվող ստուգման ակտը:

05.05.2011 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանը, քննության առնելով նշված



վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը, գտել է, որ «Վարչական դատարանի կողմից քննվել է անբողոքարկելի վարչական ակտի անվավերության պահանջ, որպիսի պարագայում այն չէր կարող քննվել, ուստի անվավերության պահանջը ենթակա է մերժման»: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը շեշտադրել է, որ նման եզրահանգման պայմաններում անհրաժեշտ չի համարում անդրադառնալ վերաքննիչ բողոքի՝ վիճարկվող ակտի իրավաչափությանը վերաբերող հիմնավորումներին: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ բեկանել է Դատարանի վճիռը և փոփոխել այն՝ մերժելով վիճարկվող ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջը: Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով վերաքննիչ բողոքի բավարարման վերոհիշյալ հիմնավորումը, գտնում է, որ **վիճարկվող ստուգման ակտի իրավաչափությունը գնահատելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտ առկա չէ:**

Հաշվի առնելով նշված հանգամանքը և հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը կիրառելի է Տեսչության 05.11.2009 թվականի թիվ 1000253 ստուգման ակտի նկատմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով պարտավորեցման հայցը սահմանող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը, վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է նաև այն պատճառաբանությունը, որ Ընկերության դիմումի և դրա պատասխանի բովանդակությունից հետևում է, որ մինչև սույն գործով հայց ներկայացնելու Ընկերությունը վարչական մարմին չի դիմել ակտով վարչական վարույթը վերսկսելու մասին պահանջով, հետևաբար հայցը՝ այդ պահանջը բավարարելուն պարտավոր

---

րեցնելու մասին, ենթակա չէ դատարանի քննությանը, ուստի ենթակա է մերժման:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ չի գնահատել գործում առկա Շնչեղության 09.07.2012 թվականի դիմումը, որով վերջինս Տեսչությանը խնդրել է փոփոխել Տեսչության 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վարչական վարույթը վերսկսելուն պարտավորեցնելու պահանջի մատով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ինչ վերաբերում է թիվ 1000253 ստուգման ակտը մասնակիորեն փոփոխելու և այդ ակտով բյուջեի նկատմամբ տույժերը և տուգանքները 34.530.000 ՀՀ դրամ սահմանելուն պարտավորեցնելու պահանջին, ապա հաշվի առնելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածին համապատասխան վարույթն իրականացրած մարմինն է վերապահված վարույթը վերսկսելու արդյունքում վարչական ակտը փոփոխելու լիազորությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս պահանջի մերժման մատով վիճարկվող դատական ակտը բեկանման ենթակա չէ, և այդ մատով այն պետք է թողնել անփոփոխ, սակայն սույն պարբերության մեջ նշված պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.03.2013 թվականի որոշման՝ վարչական վարույթը վերսկսելուն պարտավորեցնելու պահանջի մասը և այն փոփոխել՝ հայցն այդ մատով բավարարել. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչությանը պարտավորեցնել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի առաջին մասի «գ» կետի հիմքով վերսկսել 05.11.2009 թվականի թիվ 1000253 ակտով վարչական վարույթը:

Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2603/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝

Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/2603/05/10

2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական սրահայրը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)*

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Գրիգոր Խաչերյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Գրիգոր Խաչերյանի հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձինք Ամասիկ և Լուսինե Մանասերյանների՝ Երևանի քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գրիգոր Խաչերյանը պահանջել է անվավեր ճանաչել Քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.12.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.05.2013 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի ու Ամասիկ և Լուսինե Մանասերյանների վերաքննիչ բողոքները բավարարվել են. որոշվել է բեկանել Դատարանի 17.12.2012 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիգոր Խաչերյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Ամասիկ և Լուսինե Մանասերյանները, ինչպես նաև Քաղաքապետարանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ, 132-րդ, 188-րդ հոդվածները, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ, 345-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 4-րդ մասի «բ» կետը, «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ, 24-րդ, 117.14-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունառքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի հետազոտել և գնահատման չի ենթարկել գործում առկա մի շարք ապացույցներ, որոնք միանշանակ հաստատում են, որ Ազատուհի Խաչերյանն իր ընտանիքով Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 տուն տեղափոխվելիս Գրիգոր Խաչերյանի նկատմամբ ստանձնել է պարտավորություն, այն է՝ կատարել նշված հասցեի տան կոմունալ վճարումները և համապատասխան օրենքի առկայության դեպքում տունն օրինականացնել Գրիգոր Խաչերյանի երեխաների անուններով:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև Հայկանուշ Սահակյանի անունից դատարան ներկայացված հայտարարությանը, որով վերջինս հերքել է Լուսինե Մանասերյանին տրված գրությունն այն մասին, որ 1992 թվականին ինքը եղել է Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի լիազորը, բայց ոչ մի թուղթ չի կնքել, որովհետև չի ունեցել փաստաթուղթ կնքելու իրավունք՝ նշելով, որ Լուսինե Մանասերյանն իրեն թյուրիմացության մեջ է գցել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը որպես ապացույց է ճանաչել Հայկանուշ Սահակյանի անունից 14.05.2010 թվականին գրված, սակայն հերքված հայտարարությունը: Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում եղած՝ Անահիտ Տիգրանյանի, Էլմիրա Պողոսյանի, Թագուհի Կարայանի և Սամսոն Խալոթյանի հայտարարությունները, որոնք որպես ապացույցներ կարևոր են նաև այն առումով, որ նշված անձինք ևս 1992 թվականին ստորագրել են «Բացատրագիր» վերնագրված, Ազատուհի Խաչերյանի կողմից ստորագրված փաստաթուղթը, ինչը նաև հաստատվում է այդ հայտարարություններով:

Վերաքննիչ դատարանը սույն վեճը լուծելիս կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, մինչդեռ պետք է կիրառեր «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածները:

Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի թիվ 23/35-122/346 գրությունը, որում ընդամենը նշվել է, որ տան ընթացիկ վերանորոգման, պահպանման աշխատանքները կատարվել են Ամասիկ և Լուսինե Մանասերյանների կողմից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Մանասերյանները Քաղաքապետարան ներկայացրած կեղծ տեղեկությունների միջոցով իրենց անունով են սեփականացրել Գրիգոր Խաչերյանի և նրա ընտանիքի կողմից կառուցված Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 հասցեի տունը, ինչի արդյունքում գրկել են վերջիններիս այդ գույքն օրենքով սահմանված կարգով սեփականացնելու իրավունքից:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել նաև այն փաստը, որ Ազատուհի Խաչերյանը և նրա ընտանիքի անդամները՝ Ամասիկ և Լուսինե Մանասերյանները, գիտակցել են, որ վիճելի տունը տիրապետում են ժամանակավոր, ուստի չէին կարող վստահել Քաղա-

---

քապետի վիճարկվող որոշմանը: Մասնավորապես, այն փաստը, որ Ամասիկ Մանասերյանի կինը՝ Ազատուհի Իսաչեյանը, ստորագրել է «Բացատրագիր» վերնագրով գրությունը, որում առկա ստորագրության պատկանելիությունը հաստատվել է փորձաքննությամբ, հիմնավորում է, որ նրա ընտանիքի մյուս անդամները, տեղափոխվելով բնակվելու Գրիգոր Իսաչեյանի տուն, տեղյակ են եղել, թե ինչ պայմաններով են բնակվելու այդ տանը, հետևաբար և նրանք չէին կարող վճարել նշված տան համար, իսկ Գրիգոր Իսաչեյանը չէր կարող վերցնել գումար, քանի որ նա իր տունը չէր վաճառել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.05.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 17.12.2012 թվականի վճիռ:

### **2.1. Ամասիկ և Լուսինե Մանասերյանների Վճռարեկ բողոքի պատասխանի փաստարկները**

Գրիգոր Իսաչեյանը չունի որևէ իրավահաստատող փաստաթուղթ, որով կարող է հաստատել իր՝ որպես սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի իրավունքները Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 տան նկատմամբ, ինչից հետևում է, որ վերջինս չունի Քաղաքապետի վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք: Ավելին, Գրիգոր Իսաչեյանը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ նշված տունը կառուցվել է իր կողմից, կամ այն անշարժ գույքի կադաստրում հաշվառված էր իր անվամբ: Ման փաստաթղթերի բացակայության պայմաններում գուտ «Բացատրագիր» վերնագրված փաստաթուղթը չի կարող հիմք հանդիսանալ օրինական տիրապետողներից գույքը պահանջելու և Քաղաքապետի վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու համար:

Գրիգոր Իսաչեյանը ներկայացրել է շինծու «Բացատրագիր» վերնագրված ինչ-որ փաստաթուղթ, որը դիտել է որպես պահատվության պայմանագիր, մինչդեռ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հիմնավորվել է, որ վերջինիս կողմից վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ գլխով սահմանված պահատվության պայմանագրի դրույթներն այդ փաստաթղթի նկատմամբ կիրառելի չեն: Նշված շինծու բացատրագրի վերաբերյալ Ազատուհի Իսաչեյանը գրություն է ուղարկել ԱՄՆ-ից, որով հայտնել է, որ ինքը երբևէ նման բացատրություն չի գրել և չի ստորագրել: Այդ կապակցությամբ նույնիսկ նախկին լիազորը՝ Հայկանուշ Սահակյանը, հայտարարություն է տվել այն մասին, որ 1992 թվականին եղել է Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի տնային լիազորը, բայց ոչ մի թուղթ չի կնքել, որովհետև չի ունեցել փաստաթուղթ կնքելու իրավունք և կնիք:

Այսպիսով, Ամասիկ և Լուսինե Մանասերյանները Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 հասցեի գույքը տիրապետում են 1992 թվականից որպես սեփական գույք, ուստի վերջիններս ունեն ձեռքբերման վաղեմության իրավունք, և որպես այդ գույքի օրինական տիրապետողներ, տնօրինողներ և օգտագործողներ՝ միայն նրանք իրավունք ունեն ղիմելու Քաղաքապետարան՝ դրա սեփականաշնորհման համար:

### **2.2. Քաղաքացիական իրավահարաբերությունների օրյեկտները**

Քաղաքացիական իրավահարաբերությունների օրյեկտները, որոնց կապակցությամբ առաջանում են իրավահարաբերության մասնակիցների իրավունքները և պարտականությունները, սպառիչ կերպով թվարկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում, որում «ինքնակամ կառույցի» բացակայությունը նշանակում է, որ ինքնակամ կառուցված շենքը կամ շինությունը չեն կարող հանդիսանալ քաղաքացիական հարաբերությունների օրյեկտ, իսկ «ինքնակամ կառույցի» նկատմամբ իրականացված գործողություն-

ների հետևանքով չեն կարող առաջանալ իրավունքներ և պարտականություններ:

«Բացատրագիր» վերնագրված փաստաթուղթն իրավական բնույթ չունի, իրավական հետևանքներ չի առաջացնում, դրա հետ կապված հարաբերությունների կարգավորում քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված չլինելու պայմաններում ընդհանրապես առկա չեն քաղաքացիական իրավահարաբերության տարրերը՝ իրավահարաբերության սուբյեկտը, օբյեկտը, բովանդակությունը: Նշված փաստաթուղթը սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստ չի հաստատում կամ հերքում: Հետևաբար, վերոգրյալ փաստաթուղթն Ազատուհի Խաչերյանի կողմից տրված լինելու փաստը ևս գործի լուծման համար որևէ էական նշանակություն չունի, բացառապես այդ փաստաթղթի հիման վրա հնարավոր չէ փաստել, որ Ամասիկ և Լուսինե Մանասերյանները վիճարկվող որոշումը կայացրած վարչական մարմին կեղծ տվյալներ են ներկայացրել:

Միաժամանակ, գործում առկա մի շարք անձանց տված հայտարարությունները սույն գործով վերաբերելի ապացույցներ չեն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ազատուհի Խաչերյանը 05.02.1992 թվականին տվել է բացատրագիր հետևյալ բովանդակությամբ. «Ես՝ Ազատուհի Մանվելի Խաչերյանս, համաձայն եմ իմ ընտանիքով մնալու եղբորս՝ Գրիգոր Մանվելի Խաչերյանի տանը՝ ժամանակավոր, և պարտավորվում եմ ժամանակին վճարել բոլոր վճարումները, տունն օրինականացնելու դեպքում ձևակերպել եղբորս երեխաների՝ Մանվել և Կարինե Գրիգորի Խաչերյանների անունով ... , որի համաձայն՝ տալիս եմ անձնագրիս համարը՝ VI-CJI N 539272, տրված Սովետականի շրջգործկոմի ներքին գործերի բաժնի կողմից 7/VII/79թ., և անձնական ստորագրությունը ...»: Նշված բացատրագիրը ստորագրվել է Ազատուհի և Հովհաննես Խաչերյանների, ինչպես նաև հարևանների՝ Էլմիրա Պողոսյանի, Անահիտ Տիգրանյանի և Թագուհի Կարայանի կողմից, և հաստատվել է տնային լիազոր Սահակյանի կողմից (կնիքով և ստորագրությամբ) **(հատոր 2-րդ, գ.թ. 100)**:

2) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 01.10.2012 թվականի փորձագետի թիվ 28971201 եզրակացության «Հետևություն»-ների համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված դեղնավուն ստանդարտ գրելաթղթում՝ «Բացատրագիր ...» բառով սկսվող ու «... 5/II 1992թ.» թվերով ավարտվող ձեռագիր տեքստի միջնամասում՝ «անձնական ստորագրությունը» բառերի դիմաց տեղավորված ստորագրությունը կատարվել է Ազատուհի Խաչերյանի կողմից **(հատոր 3-րդ, գ.թ. 5-7)**:

3) Քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշմամբ Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ վերականգնվել են Ամասիկ և Լուսինե Մանասերյանների (հանդիսանում են Ազատուհի Խաչերյանի ընտանիքի անդամներ) հողօգտագործման իրավունքները՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 212,65քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքները 115,5քմ մակերեսով արտաքին և 95,3քմ մակերեսով ներքին չափերով շենք-շինությունների և նշված հողամասի նկատմամբ **(հատոր 1-ին, գ.թ. 9)**:

4) Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի 21.02.2008 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 տունը կառուցվել է մինչև 1992 թվականը **(հատոր 2-րդ, գ.թ. 208)**:

5) Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի թիվ 23/35-122/346 գրության համաձայն՝ Ամասիկ և Լուսինե Մանասերյաններն Այգեստան 11-րդ փողոցի 1-ին

---

նրբանցքի թիվ 5 տանը բնակվում են 1992 թվականից: Տան ընթացիկ վերանորոգման, պահպանման աշխատանքները կատարվել են Ամասիկ և Լուսինե Մանասերյանների կողմից (**հատոր 2-րդ, գ.թ. 45**):

6) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 12.06.2009 թվականի թիվ 25/01-33618 գրության համաձայն՝ մինչ ԱՄՆ մեկնելը Գրիգոր Խաչերյանը հաշվառված է եղել քաղաք Երևան, Այգեստան 1-ին նրբանցք, տուն 5 հասցեում, որի հաշվառումից հանվել է 04.02.1992 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 172**):

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությանից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Քննության առարկա վճարելի բողոքի շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա ընդունված վարչական ակտի անվավերության հարցին:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) **կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա**, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Վկայակոչված հոդվածից հետևում է, որ վարչական ակտը ոչ իրավաչափ որակելու և այն անվավեր ճանաչելու իրավական հիմք է, ի թիվս այլոց, այդ ակտի՝ **կեղծ տեղեկությունների** հիման վրա ընդունված լինելը: Վճարելի դատարանը նշված իրավանորմի միատեսակ կիրառությունն ապահովելու նկատառումով հարկ է համարում մեկնաբանել «**կեղծ փաստաթուղթ**» և «**կեղծ տեղեկություններ**» հասկացությունները:

Մասնավորապես՝ **վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացած փաստաթուղթը կեղծ է, եթե այն որպես այդպիսին** (բովանդակությամբ, վավերապայմաններով և այլ հատկանիշներով) **իրականության մեջ երբևէ գոյություն չի ունեցել** (օրինակ՝ փաստաթուղթը կազմված չէ այն անձի կողմից, ում կողմից այն ստորագրված է, ներկայացվել է մի փաստաթուղթ, որն իրականում չի կազմվել, փաստաթղթում առկա են ուղղումներ, լրացումներ, ջնջումներ և այլ փոփոխություններ, որոնց արդյունքում փոխվել է փաստաթղթի նախնական բովանդակությունը և այլն): **Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացած տեղեկությունը կեղծ է, եթե տեղեկությունն ամբողջությամբ կամ դրանում պարունակվող առանձին տվյալները չեն համապատասխանում իրականությանը:** Վճարելի դատարանը գտնում է, որ կեղծ փաստաթուղթը կամ կեղծ տեղեկությունը կարող են հանգեցնել վարչական ակտի անվավերության, եթե վճռորոշ ազդեցություն են ունեցել վարչական ակտի՝ նման բովանդակությամբ ընդունվելու համար, այլ կերպ ասած՝ առանց այդ փաստաթղթի կամ տեղեկության վարչական ակտը չէր ունենա այնպիսի բովանդակություն, որն ունի դրա առկայության պայմաններում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճա-



ոել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով.

բ) **համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով.**

գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն ուղղակիորեն բացառել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով ընդունված վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ ակտի գոյությանը վստահելու իրավունքը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտի հասցեատերը, դիտավորությամբ չբացահայտելով իրեն մատչելի տեղեկությունը, որը կարող էր բացառել ակնկալվող ակտի ընդունումը կամ հանգեցնել ակտի ընդունմանն այլ բովանդակությամբ, հասել է ոչ իրավաչափ վարչական ակտի ընդունման, ըստ էության նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ, այդ ակտին վստահելու իրավունք չունի:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ազատուհի Բաչերյանը 05.02.1992 թվականին տվել է բացատրագիր, որով հայտնել է իր համաձայնությունն ընտանիքով ժամանակավոր բնակվելու եղբոր՝ Գրիգոր Բաչերյանի տանը, ինչպես նաև պարտավորվել է ժամանակին կատարել բոլոր վճարումները, իսկ տունն օրինականացնելու դեպքում՝ այն ձևակերպել եղբոր երեխաների անուններով: Նշված բացատրագիրն Ազատուհի Բաչերյանի կողմից ստորագրվելու հանգամանքը հաստատվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն»՝ ՊՈԱԿ-ի 01.10.2012 թվականի փորձագետի թիվ 28971201 եզրակացությամբ: Քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշմամբ Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ **վերականգնվել են** Ամասիկ և Լուսինե Մանասերյանների հողօգտագործման իրավունքները՝ բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 212,65քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքները 115,5քմ մակերեսով արտաքին և 95,3քմ մակերեսով ներքին չափերով շենք-շինությունների և նշված հողամասի նկատմամբ:

Դատարանը, բավարարելով հայցը, պատճառաբանել է, որ երրորդ անձինք (Ամասիկ և Լուսինե Մանասերյանները)՝ որպես Ազատուհի Բաչերյանի ընտանիքի անդամներ, ուղղակիորեն գիտակցել են, որ 1992 թվականից վիճելի հասցեում բնակվելու են ժամանակավոր և այն տիրապետելու են որպես Գրիգոր Բաչերյանին պատկանող գույք: Նշանակում է, որ երրորդ անձինք չեն ունեցել բավարար հիմք ենթադրելու, որ գույքը տիրապետելու են որպես **սեփականը**, հետևաբար հիմնավոր չէ վերջիններիս փաստարկն առ այն, որ իրավունք ունենին գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար Քաղաքապետարան ներկայացնելու համապատասխան փաստաթղթեր: Երրորդ անձինք կարող էին հավակնել վիճելի գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն այն դեպքում, եթե ունենային վստահություն, որ գույքը տիրապետում են որպես սեփականը:

Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «Բացատրագիր» վերնագրված փաստաթուղթը՝ որպես ապացույց, սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստ չի հաստատում կամ հերքում: Նշված

---

փաստաթուղթն Ազատուհի Խաչերյանի կողմից տրված լինելու փաստը ևս գործի լուծման համար որևէ էական նշանակություն չունի. բացառապես նշված փաստաթղթի հիման վրա հնարավոր չէ փաստել, որ երրորդ անձինք վիճարկվող որոշումը կայացրած վարչական մարմին կեղծ տվյալներ են ներկայացրել, ուստի անհիմն է Դատարանի այն եզրահանգումը, որ երրորդ անձինք, ըստ էության, չվկայակոչելով հիշյալ փաստը, վարչական մարմնին ներկայացրել են միայն այնպիսի փաստաթղթեր, որոնք ավելի հավանական են դարձրել վարչական մարմնի համոզմունքը, որ վիճելի գույքը տիրապետվում է որպես սեփական:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի որոշման իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջինս բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ չի գնահատել գործում առկա ապացույցները: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշման կայացման համար իրավական հիմք են հանդիսացել «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների հաշվառման և պետական գրանցման մասին» ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի թիվ 114 որոշման 2-րդ կետը, «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման 3-րդ կետի «ը» ենթակետը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ և ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածները:

«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների հաշվառման և պետական գրանցման մասին» ՀՀ կառավարության 25.02.1998 թվականի թիվ 114 որոշման 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված, այգեգործական հողամասերում, մինչև 1998 թվականի հունվարի 1-ը ինքնակամ կառուցված բնակելի (բնակելի, այգեգոր-

ծական տներ), տնտեսական, կենցաղային, ինչպես նաև մինչև 50 տոկոսով կառուցված անավարտ (կիսակառույց) շենքերի և շինությունների սկստմամբ ճանաչվում է քաղաքացիների սեփականության իրավունքը:

«Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման 3-րդ կետի «ը» ենթակետի համաձայն՝ այն համայնքներում, **որտեղ չեն պահպանվել հողամասերի նկատմամբ քաղաքացիների իրավունքը հաստատող փաստաթղթերը՝** սեփականաշնորհման հանձնաժողովների որոշումներն ու քաղվածքները, տնտեսական գրքերը (ծխամատյան, ժապավենավոր մատյան), հողամասերի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքի պետական գրանցման համար կարող է հիմք հանդիսանալ քաղաքացիների կողմից տիրապետվող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով նրանց տրամադրելու մասին համայնքի ղեկավարի որոշումը՝ հարկային տեսչություններում բնակչահագործման, տեղամասերում նախկին կոմունալ տնտեսություններում պահպանվող փաստաթղթերի, հողամասերի սեփականաշնորհման մասնակի հատուցման վճարումների ցուցակների հիման վրա, որոշման մեջ դրանց առկայության մասին պարտադիր նշմամբ:

Վկայակոչված իրավադրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ վիճարկվող վարչական ակտի կայացման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստերը՝

- 1) բնակելի տունը կառուցված է եղել մինչև 1998 թվականի հունվարի 1-ը,
- 2) ինքնակամ կառույցով ծանրաբեռնված հողամասը հատկացված է եղել սեփականության իրավունքով,
- 3) հողամասի նկատմամբ իրավահաստատող փաստաթղթերը պահպանված չեն եղել,
- 4) առկա են եղել ձեռքբերման վաղեմության ուժով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման անհրաժեշտ պայմանները:

Տվյալ պարագայում Ազատուհի Խաչերյանի 05.02.1992 թվականի բացատրագրով հաստատվում է, որ վերջինս իր ընտանիքի անդամներով (Ամասիկ և Լուսինե Մանասերյաններ) համաձայնել է ժամանակավոր բնակվելու եղբոր՝ Գրիգոր Խաչերյանի տանը, ինչպես նաև պարտավորվել է ժամանակին կատարել բոլոր վճարումները, իսկ տունն օրինականացնելու դեպքում այն ձևակերպել եղբոր երեխաների անուններով: Նշված բացատրագրում բովանդակվող տեղեկությունների (մասնավորապես, բնակելի տունը մինչև Ազատուհի Խաչերյանի ընտանիքի անդամների տեղափոխվելն արդեն իսկ կառուցված է եղել, փաստացի պատկանել է այլ անձի, Ազատուհի Խաչերյանի ընտանիքը նշված հասցեում բնակվելու էր ժամանակավոր, Ազատուհի Խաչերյանը պարտավորվել է բնակելի տունն օրինականացնել այլ անձանց անունով) վերլուծությունից հետևում է, որ բնակելի տնով ծանրաբեռնված հողամասը հատկացված չի եղել Ամասիկ և Լուսինե Մանասերյաններին, հետևաբար վերջիններս չէին կարող ունենալ որևէ հավակնություն այդ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու և ինքնակամ կառուցված բնակելի տունն օրինականացնելու հարցում: Ավելին, վերջիններս չէին կարող նշված գույքը տիրապետել նաև որպես սեփական գույք, այլ կերպ ասած՝ բացակայել է նաև ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ պայմաններից բարեխղճության պայմանը: Այլ կերպ ասած՝ Քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշմամբ վկայակոչված գույքային միավորների նկատմամբ Ամասիկ և Լուսինե Մանասերյանների իրավունքների վերականգնման հիմքերը բացակայել են: Մինչդեռ, Ամասիկ և Լուսինե Մանասերյանները, հանդես գալով գույքի օրի-

---

նական տիրապետողներ, կեղծ տեղեկություն ներկայացնելու միջոցով հասել են իրենց համար բարենպաստ վարչական ակտի կայացման:

Վերոնշյալ հիմնավորումներով Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ անհիմն է գնահատում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ «Բացատրագիր» վերնագրված փաստաթուղթը՝ որպես սպացույց, սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստ չի հաստատում կամ հերքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա սպացույցներով հաստատվում է այն հանգամանքը, որ Ամասիկ և Լուսինե Մանասերյանները վիճարկվող վարչական ակտի ընդունմանը հասել են կեղծ տեղեկություն՝ Քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշմամբ վկայակոչված գույքային միավորների նկատմամբ իրավունքներ ունենալու փաստի վերաբերյալ, ներկայացնելու միջոցով, հետևաբար Քաղաքապետի վիճարկվող որոշումը ոչ իրավաչափ է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով ենթակա է անվավեր ճանաչման: Միաժամանակ, Ամասիկ և Լուսինե Մանասերյանները նույն հոդվածի 4-րդ մասի «գ» կետի հիմքով նշված վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունեն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում բողոքաբերի փաստարկը՝ սույն վեճը լուծելիս «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 3-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ, քանի որ քաղաքապետի վիճարկվող որոշումը կայացվել է 27.03.2008 թվականին, մինչդեռ վերոնշյալ օրենքն ընդունվել է 10.06.2008 թվականին և ուժ մեջ է մտել 19.07.2008 թվականին, որպիսի պարագայում այն սույն գործով կիրառելի չէ:

*Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխաններում բերված փաստարկները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.05.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 17.12.2012 թվականի վճռին:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ Գրիգոր Խաչերյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ-3/0293/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ-3/0293/05/11  
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.05.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Գեպետ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ ստուգման ակտն առ ոչինչ կամ անվավեր ճանաչելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ 21.374.067 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է առ ոչինչ կամ անվավեր ճանաչել Տեսչության աշխատակիցների կողմից 19.10.2011 թվականին կազմված թիվ 1000805 ստուգման ակտը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 21.374.067 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Դատարան) 30.12.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. առ ոչինչ է ճանաչվել Տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ

1-ին կետը, իսկ նույն ակտի «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 5-րդ կետը ճանաչվել է անվավեր: Հայցի մնացած մասով վարչական գործի վարույթը կարճվել է, իսկ Տեսչության հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.05.2012 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, Դատարանի 30.12.2011 թվականի վճիռը բավարարված մասով բեկանվել և փոփոխվել է. անվավեր է ճանաչվել Տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին կետը, իսկ նույն ակտի 5-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը մերժվել է: Մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը (01.01.2010 թվականին գործող խմբագրությամբ), «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, 30.1-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումները պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը՝ անտեսելով, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը սահմանում է հարկային հաշիվների պահպանման նվազագույն ժամկետ (առնվազն 3 տարի), իսկ պահպանման առավելագույն ժամկետը սահմանված է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով, որտեղ սահմանված է, որ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերը կազմակերպության կողմից պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան 5 տարի:

Այսինքն՝ վերոնշյալ նորմերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ հարկ վճարողի սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերը կազմակերպությունը պարտավոր է պահպանել մինչև դրանց դուրս գրման օրվան հաջորդող առնվազն 3 տարին լրանալը, բայց ոչ պակաս 5 տարուց:

Վերաքննիչ դատարանը, մանրամասն վերլուծության չի ենթարկել գործող օրենսդրությունը, այլպես կնկատեր մի կարևոր հանգամանք, որը կարող էր փոխել գործի ողջ ընթացքը: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ամեն հարկատեսակ ունի իր համար նախատեսված հաշվարկի ներկայացման և վճարման առանձին ժամկետներ: Ավելացված արժեքի հարկ վճարող սուբյեկտները հարկային տեսչություն ներկայացնում են եռամսյակային և ամսական հաշվետվություններ՝ մինչև համապատասխանաբար եռամսյակին հաջորդող ամսվա 20ը կամ ամսվան հաջորդող 20ը: Հատկանշական է, որ վիճարկվող դեպքում հարցը վերաբերում է շահութահարկին, իսկ վերջինս կարող է ներկայացվել միայն հաշվետու տարին ավարտվելուց հետո: Այսինքն հաշվետու տարին դեռ չավարտված հարկային մարմինը չէր կարող արձանագրել սուբյեկտի կողմից կատարված խախտումը: Տվյալ

---

դեպքում, Դատարանի եզրահանգումներն ինչոր պայմաններում ընդունելի կարող էին լինել, եթե խոսվեր այլ հարկատեսակի, բայց ոչ շահութահարկի մասին: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի փորձել անդրադառնալ վերը նշված նորմերի վերլուծությանը և վիճելի հարաբերությունը կարգավորող օրենսդրության պահանջներին:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն իր որոշման պատճառաբանական մասում նշել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը հակասություն, երկիմաստություն կամ տարբերություն են պարունակում, այնինչ դրանք օբյեկտիվորեն լրացնում են մեկը մյուսին՝ հարկային հաշիվների պահպանման 5 տարուց ոչ պակաս հստակ ժամկետի սահմանմամբ, ինչը հաշվի չի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.05.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ընկերության հայրը մերժել, իսկ հակընդդեմ հայրը բավարարել:

### **3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 26.07.2011 թվականի թիվ 1000805 հանձնարարագրի հիման վրա Տեսչության կողմից Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում (**գ.թ. 39**):

2) Նշված ստուգման արդյունքում 19.10.2011 թվականին կազմվել է թիվ 1000805 ակտը, որի 1-ին՝ «Շահութահարկ» կետով արձանագրվել է, որ 2007 թվականի տարեկան արդյունքներով 15.04.2008 թվականին ներկայացված շահութահարկի հաշվարկում ցույց է տրվել իրացված ապրանքների գծով ձեռքբերման ծախս՝ 52.665.000 ՀՀ դրամ, նշված ծախսերը փաստաթղթերով չեն հիմնավորվել: Խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ համախառն եկամուտը նվազեցվել է առանց փաստաթղթերով հիմնավորված ծախսերով՝ 52.665.000 ՀՀ դրամ: Նույն ժամանակաշրջանում իրացման շրջանառությունում չի ներառվել 20.000.000 ՀՀ դրամ իրացումից հասույթ, որի ձեռքբերման արժեքը կազմել է (ըստ ներկայացված փաստաթղթերի) 22.900.000 ՀՀ դրամ, նշված գործարքից ունեցել է վնաս՝ 2.900.000 ՀՀ դրամ: 2007 թվականի տարվա արդյունքներով հաշվարկվել է լրացուցիչ հարկվող շահույթ՝ 49.765.000 ՀՀ դրամ, որից հաշվարկվել է 9.953.000 ՀՀ դրամ շահութահարկ, որը ենթակա է առաջադրման:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածների համաձայն՝ կիրառվում է տուգանք պակաս ցույց տված հարկի գումարի 50%-ի չափով՝ 4.976.500 ՀՀ դրամ, 10%-ի չափով՝ 995.300 ՀՀ դրամ, և հաշվարկվում է ժամկետանց օրերի տույժ՝ 5.449.267 ՀՀ դրամ: 2010 թվականին կազմակերպության (Ընկերության) կողմից իրացված թվով 2 ավտոմեքենաների իրացումից հասույթը կազմել է 11.000.000 ՀՀ դրամ, որոնց ձեռքբերման արժեքը, ըստ ներկայացված փաստաթղթերի, կազմել է 20.991.300 ՀՀ դրամ կամ ունեցել է 9.991.300 ՀՀ դրամ վնաս: Նշված (2010 թվականի) ժամանակաշրջանի վերաբերյալ կազմակերպությունը (Ընկերությունը) չի ներկայացրել շահութահարկի հաշվարկ: 2010 թվականի գործունեության մասով լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջադրել, քանի որ ունեցել է վնաս, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47/1 հոդվածով սահմանված նվազագույն շահութահարկ չի հաշվարկվում, քանի որ իրացրել է հիմնական միջոց: Ընդամենը շահութահարկի գծով առաջադրվել է 21.374.067 ՀՀ դրամ» (**գ.թ.40-43**):



#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Սույն բողոքի շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ տրեյդինգի սուբյեկտների կողմից հարկային հաշիվների պահպանման ժամկետների խնդրին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում: Վերը նշված նորմերից հետևում է, որ վարչական ակտն առ ոչինչ լինելու համար անհրաժեշտ է, որ այդ ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվի ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն կամ նրան տրամադրվի ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք, իսկ անվավեր կարող է ճանաչվել միայն առ ոչինչ չհանդիսացող վարչական ակտը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի (վիճելի իրավահարաբերության առաջացման պահին գործող ինկորպորացիայով) համաձայն՝ սույն օրենքի ԱԱՀ վճարող անձինք պարտավոր են ժամանակագրական կարգով հաշվառել և դուրսգրման օրվան հաջորդող առնվազն երեք տարի պահպանել իրենց կողմից տրված բոլոր հարկային հաշիվների պատճենները, ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման ժամանակ ԱԱՀ-ի վճարումը հաստատող հաշիվները, ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին ԱԱՀ-ի վճարումը հաստատող հայտարարագրերը, ինչպես նաև ԱԱՀ-ի հաշվարկմանը և վճարմանը վերաբերող այլ փաստաթղթեր (...):

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերը կազմակերպության կողմից պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի:

Վճարելի դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիշատակված դրույթի բովանդակության բացահայտումը և ճիշտ կիրառումը պայմանավորված է ոչ միայն նշված հոդվածի տառացի մեկնաբանմամբ, այլև այդ հոդվածի՝ այլ իրավական ակտերում առկա դրույթների հետ համակցության մեջ մեկնաբանելով:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում ամրագրված դրույթը տնտեսվարող սուբյեկտի համար սահմանում է պարտականություն նախ ժամանակագրական առումով հաշվառել որոշակի փաստաթղթեր, այդ թվում դուրս գրված հարկային հաշիվները, ապա դրանք պահպանել դուրսգրման օրվան հաջորդող երեք տարիների ընթացքում: Նշված ժամկետը օրենսդիրը սահմանում է որպես փաստաթղթերի պահպանման ժամկետի նվազագույն շեմ՝ օգտագործելով «առնվազն» եզրույթը:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում ևս սահմանված է որոշակի ժամկետ, որի ընթացքում տնտեսվարող սուբյեկտները պետք է պահպանեն հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և այլ տեղեկություններ: Այդպիսի ժամկետ է սահմանված հինգ տարին: Այս դեպքում ևս օրենսդիրը նշված ժամկետը դիտում է որպես նվազագույն ժամկետ: Սակայն ի տարբերություն «Ավելացված արժեքի

---

հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում ամրագրված դրույթի «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում օրենսդիրը սահմանում է լրացուցիչ պայման, այն է՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում»: Նշվածից հետևում է, որ բոլոր դեպքերում հաշվապահական հաշվառման փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգով պահվում են սահմանված ժամկետներում, սակայն եթե այդ ժամկետը նվազ է հինգ տարուց, ապա այդ փաստաթղթերը պահպանվում են առնվազն հինգ տարի: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում ամրագրված դրույթն ըստ էության առավել լայն է և կիրառելի է այլ հարկատեսակների գծով հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանման ժամկետների նկատմամբ, քանի որ դրանում պարունակվող ժամկետի հաշվարկման պայման է Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով համապատասխան փաստաթղթերի պահպանման համար սահմանված կարգի և ժամկետների պահպանումը:

Վերոնշյալ մեկնաբանությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածում սահմանված եռամյա ժամկետը նվազ է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածում սահմանված հնգամյա ժամկետից, հետևաբար գործում է վերջինս: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ նշված հոդվածները ժամկետների առումով չեն պարունակում հակասություններ, քանի որ դրանցում ամրագրված դրույթները փոխլրացնող են:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 26.07.2011 թվականի թիվ 1000805 հանձնարարագրի հիման վրա Տեսչության կողմից Ընկերությունում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Նշված ստուգման արդյունքում 19.10.2011 թվականին կազմվել է թիվ 1000805 ակտը, որի 1-ին՝ «Շահութահարկ» կետով արձանագրվել է, որ 2007 թվականի տարեկան արդյունքներով 15.04.2008 թվականին ներկայացված շահութահարկի հաշվարկում ցույց է տրվել իրացված ապրանքների գծով ձեռքբերման ծախս 52.665.000 ՀՀ դրամի չափով, սակայն նշված ծախսերը փաստաթղթերով չեն հիմնավորվել: Խախտվել են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ համախառն եկամուտը նվազեցվել է առանց փաստաթղթերով հիմնավորված ծախսերով՝ 52.665.000 ՀՀ դրամի չափով: Նույն ժամանակաշրջանում իրացման շրջանառությունում չի ներառվել 20.000.000 ՀՀ դրամ իրացումից հասույթ, որի ձեռքբերման արժեքը կազմել է (ըստ ներկայացված փաստաթղթերի) 22.900.000 ՀՀ դրամ, նշված գործարքից ունեցել է վնաս 2.900.000 ՀՀ դրամի չափով: 2007 թվականի տարվա արդյունքներով հաշվարկվել է լրացուցիչ հարկվող շահույթ՝ 49.765.000 ՀՀ դրամ, որից հաշվարկվել և առաջադրվել է շահութահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորություն 9.953.000 ՀՀ դրամի չափով:

Նշված կետով նաև արձանագրվել է. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ, 27-րդ հոդվածների համաձայն՝ կիրառվում է տուգանք պակաս ցույց տված հարկի գումարի 50%-ի չափով՝ 4.976.500 ՀՀ դրամ, 10%-ի չափով՝ 995.300 ՀՀ դրամ, և հաշվարկվում է ժամկետանց օրերի տույժ՝ 5.449.267 ՀՀ դրամ: 2010 թվականին կազմակերպության (Ընկերության) կողմից իրացված թվով 2 ավտոմեքենաների իրացումից հասույթը կազմել է 11.000.000 ՀՀ դրամ, որոնց ձեռքբերման արժեքը, ըստ ներկայացված փաստաթղթերի, կազմել է 20.991.300 ՀՀ դրամ կամ ունեցել է 9.991.300 ՀՀ դրամ վնաս: Նշված (2010 թվականի) ժամանակաշրջանի վերաբերյալ կազմակերպությունը (Ընկերությունը) չի ներկայացրել շահութահարկի հաշվարկ: 2010 թվականի գործունեության մասով լրացուցիչ հարկային պարտավորություն չի առաջադրել, քանի որ ունեցել է վնաս, «Շահութահարկի

մասին» ՀՀ օրենքի 47/1 հոդվածով սահմանված նվազագույն շահութահարկ չի հաշվարկվում, քանի որ իրացրել է հիմնական միջոց: Ընդամենը շահութահարկի գծով առաջադրվել է 21.374.067 ՀՀ դրամ»:

Անդրադառնալով վերաքննիչ բողոքի այն հիմնավորմանը, որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պահպանելու համար սահմանված է ոչ թե երեք, այլ հինգ տարի ժամկետ՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ նշված փաստարկն անհիմն է, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարրնթերցումներ, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են, ինչպես նաև հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից (տեղական հարկերի դեպքում՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից) կիրառվում են հարկ վճարողի օգտին:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ Տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի 1-ին՝ «Շահութահարկ» կետով արձանագրված իրացված ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը չներկայացվելու հետևանքով Ընկերության նկատմամբ որևէ պարտավորություն առաջադրվել չէր կարող, քանի որ նշված կետը վերաբերում է 2007 թվականին, իսկ սույն գործով վիճարկվող ակտը կազմվել է միայն 19.10.2011 թվականին, հետևաբար Ընկերությունն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով վերոգրյալ փաստաթղթերը պահպանելու պարտավորություն է ունեցել մինչև 31.12.2010 թվականը ներառյալ:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, գտնում է, որ վերջինս սխալ է մեկնաբանել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19րդ հոդվածը, որպիսի հանգամանքն ազդել է գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի 1-ին՝ «Շահութահարկ» կետով արձանագրված իրացված ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը չներկայացվելու հետևանքով Ընկերության նկատմամբ առաջադրված պարտավորությունների հիմքում դրվել է նաև այն փաստը, որ Ընկերությունը չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերը, մինչդեռ դրանք պահպանելու պարտականություն Ընկերությունն ունեցել է 2007 թվականից սկսած՝ ոչ պակաս քան հինգ տարի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի 1-ին կետով առաջադրված լրացուցիչ պարտավորության առաջադրումն իրավաչափ է և բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված անվավերության հիմքերը:

Այսպիսով՝ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար, որի պայմաններում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ

---

կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.05.2012 թվականի որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին կետը անվավեր ճանաչելու և նշված կետի հիմքով գումարի բռնագանձման հակընդդեմ հայցը մերժելու մասերը և այդ մասերով այն փոփոխել. հայցը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի «Շահութահարկ» վերտառությամբ 1-ին կետը անվավեր ճանաչելու պահանջի մասով մերժել, իսկ հակընդդեմ հայցը բավարարել. «Գեպետ» ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 21.374.067 ՀՀ դրամ: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.05.2012 թվականի որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության 19.10.2011 թվականի թիվ 1000805 ակտի «Ավելացված արժեքի հարկ» վերտառությամբ 5-րդ կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը մերժելու մասը թողնել անփոփոխ:

2. «Գեպետ» ՍՊԸ-ից հոգուտ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչության բռնագանձել 427.481 ՀՀ դրամ՝ որպես առաջին ատյանի դատարանում հակընդդեմ հայցի համար վճարված պետական տուրքի գումար, 651.222 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև 661.222 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախատեսված պետական տուրք:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/4728/05/12**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ/4728/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բաբայան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) վճռա-  
բեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.04.2013 թվականի որոշման դեմ՝  
ըստ հայցի Տեսչության ընդդեմ անհատ ձեռնարկատեր Սուրեն Ռշտունու (այսուհետ՝ Ձեռ-  
նարկատեր)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ձեռնարկատիրոջից բռնագանձել  
332.566 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Մաթևոսյան) (այսուհետ՝ Դատարան)  
24.12.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
15.04.2013 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի  
24.12.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Անհայր ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 4-րդ հոդվածները, «Անհայր ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ հոդվածները, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 113-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և չի գնահատել գործում առկա ապացույցները, ինչի հետևանքով հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ձեռնարկատերը 2005 թվականի և դրան նախորդող ժամանակաշրջանի համար ունեցած պարտավորությունները կատարել է: Այսինքն՝ տվյալ դեպքում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով Ձեռնարկատիրոջ պարտավորություններն առաջացել են 2005 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար, հետևաբար «Անհայր ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը սույն գործով կիրառելի չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.04.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ձեռնարկատերը սոցիալական ապահովագրության վճարի գծով 01.08.2006 թվականի դրությամբ ունեցել է 200 ՀՀ դրամ գերավճար, իսկ 01.08.2006 թվականից մինչև 10.07.2012 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվել է 190.000 ՀՀ դրամ նվազագույն սոցիալական վճար: Նույն ժամանակահատվածի համար հաշվարկվել է նաև 142.566 ՀՀ դրամ տույժ: Նույն տեղեկանքի համաձայն՝ Ձեռնարկատերը 30.10.2008 թվականին կատարել է 90.000 ՀՀ դրամ վճարում, իսկ 31.03.2009 թվականին՝ 80.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 8-15**):

2) Գործում առկա չէ 2003-2005 թվականների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորություններ ունենալու փաստը հավաստող ապացույց:

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է իրավական հարցադրմանն այն մասին, թե արդյո՞ք «Անհայր ձեռնարկատերերի*

*համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» և ««Անհայր ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքները կիրառելի են այն դեպքում, երբ 2003-2005 թվականների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունները կատարված են:*

01.01.2013 թվականին ուժը կորցրած «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2006 թվականի մայիսի 01-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից:

Նույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 01-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Նույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի դիմումները և պետական գրանցման վկայականները հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի հունիսի 01-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության տարածքային ստորաբաժանումներ՝ մինչև 2006 թվականի օգոստոսի 01-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու և նրանց վկայականներն օրենքով սահմանված կարգով ոչնչացնելու համար:

**«Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներում չնշված անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից (բացառությամբ նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված դեպքի):**

Նույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի կողմից 2006 թվականի հունվարի 01-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ չեն հաշվարկվում (չեն վճարվում):

Նույն հոդվածում նշված անհատ ձեռնարկատերերի ցանկերը (2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների պարտադիր նշումով) հարկային տեսչությունները մինչև 2006 թվականի սեպտեմբերի 01-ը ներկայացնում են պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ մինչև 2006 թվականի

---

նոյեմբերի 01-ը պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականներն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքով սահմանված արտոնություններից օգտվող անհատ ձեռնարկատերերն արտոնությանը վերաբերող հաշվետու ժամանակաշրջանների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և եկամտահարկի գծով տարեկան եկամուտների մասին հայտարարագրեր կարող են չներկայացնել:

Նույն օրենքով սահմանված արտոնություններից օգտվող անհատ ձեռնարկատերերն արտոնությանը վերաբերող հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և հարկային օրենսդրությունների պահանջները խախտելու համար չեն ենթարկվում պատասխանատվության:

Վճարել դատարանը, նախկինում կայացրած իր որոշումներում անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունը **2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված** եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի համար նախատեսել է արտոնություններ՝ անկախ պարտավորությունների առաջացման հիմքերից: Բացի այդ, հարկային մարմինների համար սահմանվել է 2006 թվականի հունվարի 01-ից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը նշված արտոնություններից օգտվող անհատ ձեռնարկատերերի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների հաշվարկման արգելք: Միաժամանակ, նույն նորմով հարկային մարմինները ծանրաբեռնվել են անհատ ձեռնարկատերերի ցանկերը պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացնելու պարտականությամբ՝ պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, նրանց վկայականներն անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար (*տես ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Աշխարհակի տարածքային հարկային տեսչության հայցն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գեղամ Թումանյանի՝ 542.440 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով Վճարել դատարանի 16.10.2009 թվականի թիվ ՎԴ3/0088/05/09 որոշումը*):

01.01.2013 թվականին ուժը կորցրած ««Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 11-ի թիվ ՀՕ-215-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատերերը, որոնք մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը դեռևս չեն օգտվել այդ արտոնություններից, կարող են օգտվել Օրենքով իրենց վերապահված արտոնություններից՝ առանց ժամկետային սահմանափակման:

Սույն գործով վերաքննիչ բողոքը մերժելիս և Դատարանի վճիռն անփոփոխ թողնելիս Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Ձեռնարկատերը «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտո-



նություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով ամբողջությամբ ազատված էր իր նկատմամբ հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից, ինչպես նաև նրա նկատմամբ 01.01.2006 թվականից հետո մինչև պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառման պահը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներ նույնպես չէին կարող հաշվարկվել»: Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Տեսչությունը, օրենքի ուժով պարտավոր լինելով անհատ ձեռնարկատերերի ցանկերը, այդ թվում նաև՝ Ձեռնարկատիրոջ մասով մինչև 01.09.2006 թվականը ներկայացնել պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանում, այդ պարտականությունն այդպես էլ չի կատարել, և ի խախտումն նշված պահանջի՝ 2006 թվականից մինչև 2012 թվականը հաշվարկել է պարտադիր սոցիալական ապահովության վճար ու տույժ»:

Մինչդեռ սույն գործի փաստերի համաձայն՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ձեռնարկատերը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով 01.08.2006 թվականի դրությամբ ունեցել է 200 ՀՀ դրամ գերավճար, իսկ 01.08.2006 թվականից մինչև 10.07.2012 թվականն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվել է 190.000 ՀՀ դրամ նվազագույն սոցիալական վճար: Նույն ժամանակահատվածի համար հաշվարկվել է նաև 142.566 ՀՀ դրամ տույժ: Նույն տեղեկանքի համաձայն՝ Ձեռնարկատերը 30.10.2008 թվականին կատարել է 90.000 ՀՀ դրամ վճարում, իսկ 31.03.2009 թվականին՝ 80.000 ՀՀ դրամ, իսկ 2003-2005 թվականների համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով պարտավորություններ ունենալու փաստը հավաստող ապացույց գործում առկա չէ:

Վերոգրյալներից ելնելով և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված արտոնություններից օգտվում են **2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված** եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերը: Այսինքն՝ 2003-2005 թվականների համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները կատարած անհատ ձեռնարկատերերը չեն օգտվում վերը նշված օրենքով սահմանված արտոնություններից: Այլ կերպ, այն դեպքում, երբ չկա պարտավորություն, հնարավոր չէ օգտվել դրա համար նախատեսված արտոնությունից: Նշվածից էլ հետևում է, որ պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման (լուծարման) մասին գրառում կատարելու, վկայական անվավեր ճանաչելու և պարտավորությունները հրապարակելու համար պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ ներկայացվող անհատ ձեռնարկատերերի ցանկերում Ձեռնարկատիրոջը ներառելու օրենքով նախատեսված պարտավորություն հարկային մարմինը տվյալ դեպքում չի կրել: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» ՀՀ

---

օրենքը տվյալ դեպքում կիրառելի չեն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ ՀՕ-258-Ն օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2006 թվականի հունվարի 01-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների (այդ թվում՝ հաշվարկված և չվճարված տույժերի) վճարումից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի նոր քննության ընթացքում անհրաժեշտ է անդրադառնալ «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ ՀՕ-258-Ն օրենքի կիրառելիության հարցին:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ թեև սույն որոշմամբ արձանագրվել են թե՛ Դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումներ, այդուհանդերձ սույն որոշման 4-րդ կետում նշված հանգամանքների պարզումը հնարավոր է տալ միայն առաջին ստյանի դատարանում գործի նոր քննության ընթացքում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15- 118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 15.04.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ պրորազորություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ պրորազորություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Առաքելյան  
Ա. Աբովյան  
Գ. Դարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԳ/6025/05/12**  
**2013թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)*

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով Երևան համայնքի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.08.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Երևան համայնքի հայցի ընդդեմ Վահե Փայտյանի՝ 4.095.494 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Երևան համայնքը պահանջել է Վահե Փայտյանից բռնագանձել 4.095.494 ՀՀ դրամ՝ որպես Երևանի Ազատության թիվ 1/20 հասցեում գտնվող շինության գույքահարկի գումար, ինչպես նաև վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ 3.632.381 ՀՀ դրամի չափով: Հայցապահանջը՝ մնացած մասով, մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.08.2013 թվականի որոշմամբ Վահե Փայտյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 15.03.2013 թվականի վճիռը հայցի բավարարված մասով բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարված մասով մերժվել է: Մնացած մասով վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան համայնքը:

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Վահե Փայտյանը և նրա ներկայացուցիչ Տաթևիկ Մատինյանը:

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս անտեսել է այն հանգամանքը, որ Վահե Փայտյանի այլ գույք չունենալու վերաբերյալ հիմք կարող է հանդիսանալ միայն անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված տեղեկանքը, որը գործի քննության ժամանակ գործի կյուրթերում առկա չի եղել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն փաստը, որ առկա չէ ապացույց հաշվառող մարմնի կողմից այլ շինության մասով արտոնություն կիրառված չլինելու մասին:

Ավելին, Երևան համայնքի կողմից կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ Վահե Փայտյանը բացի Երևանի Ազատության թիվ 1/20 հասցեում գտնվող շինությունից ունի այլ բնակարաններ և հողամասեր, մասնավորապես՝ Երևանի Անտառային փողոցի 124/1-րդ շենքի 13 հասցեում գտնվող բնակարանի, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 5ա հասցեում գտնվող հողամասի, Վանաձորի Խորենացու փողոցի 1գ/ե հասցեում գտնվող հողամասի, Վանաձորի Մոսկովյան 66-րդ շենքի է թիվ 35 հասցեում գտնվող բնակարանի, Վանաձորի Շիրակի խճուղու 14-րդ հասցեում գտնվող արտադրամասի նկատմամբ գրանցված է վերջինիս սեփականության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.08.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Սույն գործով գույքահարկի գծով արտոնություն չունենալու փաստը վիճարկվում է հայցվորի կողմից, հետևաբար արտոնությունը Վահե Փայտյանի նկատմամբ կիրառելի չլինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրել է հայցվորը: Վերջինս ապացույցներ չի ներկայացրել այլ շինությունների մասով արտոնություն կիրառված լինելու վերաբերյալ, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն օրինաչափ է: Իրականում Վահե Փայտյանն իրեն պատկանող մնացած շինությունների մասով կատարել է գույքահարկի վճարումները, հետևաբար, նույնիսկ այլ շինությունների մասով արտոնություն կիրառված չլինելու վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում վեճը ճիշտ է լուծվել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 23.12.2010 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2720163 վկայականի համաձայն՝ Երևանի Ազատության պողոտայի թիվ 1/20 հասցեում գտնվող բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Վահե Փայտյանին (**գ.թ. 87-93**):

2) Երևանի Արաբկիր վարչական շրջանի կողմից 28.08.2012 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Երևանի Ազատության թիվ 1/20 հասցեում գտնվող շինության համար 2008-2011 թվականների գույքահարկի գծով Վահե Փայտյանի պարտավորությունները 28.08.2012 թվականի դրությամբ կազմում են 4.095.494 ՀՀ դրամ, որից ապառք՝ 2.742.726 ՀՀ դրամ, տույժ՝ 1.352.768 ՀՀ դրամ (**գ.թ. 6**):

3) ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության պետի 07.08.2013 թվականի տեղեկանքի համաձայն՝ Վահե Փայտյանը 01.09.1998 թվականից մինչև 01.09.2018 թվականը գտնվում է հետուսումնական 20 տարվա պայմանագրային զինծառայության մեջ ՀՀ զինված ուժերում (**գ.թ. 94**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

***Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքահարկի գծով արտոնությունների կիրառման նախապայմաններին:***

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող շենքերի և շինությունների և (կամ) փոխադրամիջոցների մասով:

Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ սեփականության իրավունքով հարկ վճարողին մեկից ավելի շինություն պատկանելու դեպքում արտոնությունը կիրառվում է հարկ վճարողի կողմից ընտրված շինության նկատմամբ, իսկ արտոնությունների կիրառման համար հիմք է ընդունվում անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ անձին սեփականության իրավունքով պատկանող շինությունների թվաքանակի և վայրի (վայրերի) հաշվառող մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ այլ շինության մասով արտոնություն կիրառված չլինելու մասին:

Վկայակոչված իրավադրույթների փոխկապակցված վերլուծությունից հետևում է, որ գույքահարկի գծով արտոնությունը վերոնշյալ հիմքով կարող է կիրառվել միայն մեկ՝ ոչ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինության մասով, հետևաբար յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է պարզի՝

ա) արտոնություն հայցող հարկ վճարող սուբյեկտը սեփականության իրավունքով իրեն պատկանող այլ շինություններ ունի, թե ոչ:

բ) եթե այո, արդյոք դրանցից յուրաքանչյուրի մասով արտոնությունը կիրառելի է (պայմանավորված շինության նպատակային նշանակությամբ), թե ոչ:

գ) եթե կիրառելի է, արտոնություն հայցող հարկ վճարող սուբյեկտն արտահայտել է արդյոք իր կամքը՝ կոնկրետ շինության մասով արտոնություն կիրառելու վերաբերյալ:

գ) տվյալ հարկ վճարողին պատկանող այլ շինության կամ շինությունների մասով արտոնություն կիրառված է, թե ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը թվարկված հանգամանքներն էական նշանակություն ունեն նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի լուծման համար՝ ձևավորելով ապացուցման ենթակա փաստերի շրջանակը (ապացուցման առարկան): Ընդ որում, օրենսդիրը մատնանշել է նաև այն թույլատրելի ապացույցների շրջանակը, որոնցով ենթակա են պարզման վերոնշյալ հանգամանքները՝ որպես այդպիսին նա-

---

խատեսելով **անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը**, անձին սեփականության իրավունքով պատկանող շինությունների թվաքանակի և **վայրի (վայրերի) հաշվառող մարմնի կողմից տրված տեղեկանքը**, այլ շինության մասով արտոնություն կիրառված չլինելու մասին:

Սույն գործով Դատարանը Երևան համայնքի հայրը մասնակիորեն բավարարելու հիմքում դրել է այն փաստը, որ Վահե Փայտյանի գույքահարկի գծով պարտավորությունները հաշվարկվել են 28.08.2012 թվականի դրությամբ՝ 2008-2011 թվականների համար ներառյալ, որը կազմել է 4.095.494 ՀՀ դրամ, որից ապառք՝ 2.742.726 ՀՀ դրամ, տույժ՝ 1.352.768 ՀՀ դրամ: Դատարանը գտել է, որ սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի է իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, որի ուժով 2008 թվականի համար հաշվարկված գույքահարկի համար Վահե Փայտյանի մոտ հարկային պարտավորություններ չէին կարող առաջանալ: Հաստատված համարելով, որ Վահե Փայտյանը 2009-2011 թվականների համար հաշվարկված 2.443.461 ՀՀ դրամ գույքահարկի պարտավորությունը չի կատարել, որի հետևանքով այդ գումարի նկատմամբ 28.08.2012 թվականի դրությամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվել է 1.188.920 ՀՀ դրամ տույժ, Դատարանը հայրը բավարարել է 3.632.381 ՀՀ դրամի մասով, իսկ մնացած մասով հայրը մերժել է:

Վերաքննիչ դատարանը, Դատարանի վճիռը մասնակիորեն բեկանելու, փոփոխելու և հայրը մերժելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ 23.12.2010 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համաձայն՝ Երևանի Ազատության թիվ 1/20 հասցեում գտնվող շինությունը հանդիսանում է բնակելի տուն, այսինքն՝ այն հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չէ: Նշված գույքը հնարավոր չէ հանձնել և չի հանձնվել վարձակալության կամ հավատարմագրային կառավարման՝ ի հիմնավորումն որի դատարան են ներկայացվել համապատասխան լուսանկարներ, ինչի մասին առկա է նշում սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում: Բացի այդ, առկա չեն տվյալներ Վահե Փայտյանի՝ մեկից ավելի շինություններ ունենալու վերաբերյալ: Այսինքն՝ բացակայում են «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված արտոնությունները չկիրառելու սահմանափակումները:

Վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը՝ Վճռաբեկ դատարանն այն գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործում առկա չէ ապացույց՝ Երևանի Ազատության թիվ 1/20 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գույքահարկի գծով արտոնության կիրառման համար հարկ վճարողի դիմելու վերաբերյալ, ինչպես նաև առկա չէ ապացույց՝ այլ շինության մասով արտոնություն կիրառված չլինելու մասին:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքահարկի գծով արտոնության կիրառումը ենթադրում է վերը թվարկված հանգամանքների բացահայտում, առանց որի հնարավոր չէ հետևություն անել արտոնության կիրառման նախապայմանների առկայության վերաբերյալ: Մինչդեռ ստորադաս դատարանը, առանց պարզելու նշված հանգամանքները, միայն արձանագրելով, որ «առկա չեն տվյալներ պատասխանողի՝ մեկից ավելի շինություններ ունենալու վերաբերյալ», կիրառել է «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արտոնությունը, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ անթույլատրելի է, քանի որ չի բխում հոդվածի իրավակարգավորումից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակու-

թյուն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում ստորադաս դատարանը, ելնելով գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքից, չսահմանափակվելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, պարտավոր էր ձեռնարկել ողջամիտ միջոցներ, մասնավորապես՝ պահանջել ապացույցներ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքահարկի գծով արտոնության կիրառման վերը թվարկված նախապայմանները պարզելու ուղղությամբ, որից հետո միայն հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով որոշել հայրը բավարարելու կամ մերժելու հարցը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.08.2013 թվականի որոշման՝ Երևան համայնքի հայրը 3.632.381 ՀՀ դրամ գույքահարկի գումար բռնագանձելու մասով մերժելու մասը և այդ մասով գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության: Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ-2/0311/05/12

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Աբովյան  
Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ **ՎԴ-2/0311/05/12**  
**2013թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արտկա-Տեքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Սևանի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, և ըստ Տեսչության հայցի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտը:

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է բռնագանձել Ընկերությունից 21.809.481 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի 28.08.2012 թվականի որոշմամբ վարչական գործերը միացվել են մեկ վարույթում:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Թորոյան) (այսուհետ՝ Դատարան)

---



31.10.2012 թվականի վճռով Ընկերության և Տեսչության հայցերը բավարարվել են մասնակիորեն: Վճռվել է անվավեր ճանաչել Տեսչության 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտի 3-րդ և 14-րդ կետերն ամբողջությամբ, 8-րդ կետը՝ 18.658.012 ՀՀ դրամի չափով, իսկ 15-րդ կետը՝ 1.500.000 ՀՀ դրամի չափով: Մնացած՝ 1.017.096 ՀՀ դրամի չափով 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտն անվավեր ճանաչելու մասով Ընկերության հայցը մերժվել է: Միաժամանակ վճռվել է Ընկերությունից բռնագանձել 1.017.096 ՀՀ դրամ, իսկ մնացած մասով Տեսչության հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.03.2013 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.10.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Հասարակագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ կետերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառել, կիրառել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, սխալ է մեկնաբանել «Հասարակագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.7-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 113-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Ընկերությունը գործունեություն է իրականացրել ավտոմայրուղու երկու կողմերում տեղակայված երկու տարբեր գազալցակայանների միջոցով, որոնցից յուրաքանչյուրում առկա են գազալիցքավորման համար հարմարեցված սարքավորումներ:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, մասնավորապես՝ վիճարկվող ակտի 8-րդ կետի 2-րդ ենթակետն անվավեր ճանաչելիս հաշվի չի առել և անտեսել է Ընկերության հիմնադիր տնօրեն Արտուշ Դուկայանի կողմից տրված բացատրությունը: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել ակտի 3-րդ, 14-րդ, 15-րդ կետերն անվավեր ճանաչելը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Ընկերության հայցը բավարարելու և Տեսչության հայցը մերժելու մասերով, բեկանել Վերաքննիչ դատարանի 19.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Ընկերության հայցը մերժել, իսկ Տեսչության հայցը բավարարել:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանը, իրականացնելով գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ինչպես նաև ղեկավարվելով գործող օրենսդրության պահանջներով, իրավացիորեն եզրահանգել է, որ Ընկերությունը գազալիցքավորման գործունեություն իրականացրել է մեկ կայանի միջոցով:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

---

1) Կոմիտեի նախագահի 21.03.2012 թվականի թիվ 1002425 հանձնարարագրով Տեսչության աշխատակիցներին հանձնարարվել է Ընկերությունում կատարել բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտով Ընկերությանն առաջադրվել է 21.809.481 ՀՀ դրամ լրացուցիչ հարկային պարտավորություն, ներառյալ՝ տույժերի և տուգանքների գումարները:

Ակտի 3-րդ կետով արձանագրվել է, որ «Եկամտահարկի գծով ստուգվող ժամանակաշրջանում պակաս հաշվարկված ԱՎՈՒՄ-ից լրացուցիչ եկամտահարկ է հաշվարկված 108.132 ՀՀ դրամ ...», որը հաշվարկված տույժ և տուգանքներով կազմել է 228.553 ՀՀ դրամ:

Ակտի 8-րդ կետով արձանագրվել է, որ «... 01.04.2010 թվականից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանում Սևանի ՏՀՏ ներկայացված ավտոտրանսպորտային միջոցների գազայցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների և հաստատագրված վճարի չափի մասին տեղեկություններով գազայցման կայանի (կետի) գտնվելու վայր է ցույց տրվել մեկ հասցեով (կալանով)՝ Երևան-Սևան մայրուղու 64-րդ կմ-ի ձախակողմյան հատվածը (կոմպրեսորի գտնվելու վայրը): Նշված ժամանակաշրջանում Ընկերությունը գազալիցքավորման գործունեություն իրականացրել է երկու վայրերում (հասցեներում)՝ Երևան-Սևան մայրուղու 64-րդ կմ-ի ձախակողմյան հատվածում (ՀԴՄ-ի գրանցման համարը 328000226) և Երևան-Սևան մայրուղու 64-րդ կմ-ի աջակողմյան հատվածում (ՀԴՄ-ի գրանցման համարը 328000222) և ամսական յուրաքանչյուր ՀԴՄ-ով ունեցել է ֆինանսական հասույթներ: ... ստուգվող ժամանակաշրջանում հավելված 1-ի աղյուսակ 1-ով հաշվարկվում է հաստատագրված վճար առանձին կայանների (կետերի) համար (առանձին կայաններով ստացված և իրացված գազի ծավալները վերցվել են ՀԴՄ-ների ֆիսկալային հասույթների համամասնությամբ): Ստուգմամբ գազալիցքավորման գործունեության համար հաստատագրված վճար հաշվարկվել է 55.930.158 ՀՀ դրամ, իսկ ներկայացված հաշվարկներով ցույց է տրվել 48.171.080 ՀՀ դրամ կամ լրացուցիչ հաստատագրված վճարը կազմում է 7.759.078 ՀՀ դրամ ...», որը հաշվարկված տույժ և տուգանքներով կազմել է 17.046.808 ՀՀ դրամ:

Նույն կետով արձանագրվել է նաև, որ «Հաշվի առնելով Կոմիտեի հետաքննության վարչության կողմից տրամադրված Ընկերության վերաբերյալ նյութերից Ընկերության հիմնադիր Արտուշ Դուկասյանի գրավոր բացատրությունները, ավտոտրանսպորտային գործունեություն (տաքսի-ավտոմեքենա) իրականացնելու համար հաստատագրված վճար հաշվարկվում է. 2010 թվականի ապրիլ, մայիս, հունիս ամիսներին հարկային մարմին ներկայացված ելակետային տվյալներով ամեն ամիս պակաս է ցույց տվել 8-ական տաքսի ավտոմեքենա (ամսական 12-ի փոխարեն ցույց է տվել 4 տաքսի), 2010 թվականի հուլիս ամսվանից մինչև 2012 թվականի մարտ ամիսը ներառյալ ամեն ամիս պակաս է ցույց տվել 6 տաքսի ավտոմեքենա (ամսական 12-ի փոխարեն ցույց է տվել 6 տաքսի): ... ավտոտրանսպորտային գործունեության համար լրացուցիչ հաստատագրված վճար է հաշվարկվում 840.000 ՀՀ դրամ», որը հաշվարկված տույժ և տուգանքներով կազմել է 1.728.300 ՀՀ դրամ: Ընդամենը հաստատագրված վճար՝ 18.775.108 ՀՀ դրամ:

Ակտի 14-րդ կետով արձանագրվել է, որ «Ապահովադիրը 2010 թվականի ապրիլ և 2011 թվականի ապրիլ-դեկտեմբեր ամիսների համար պակաս է հաշվարկել 1.114.810 (207.340+100.830x9) ՀՀ դրամ ԱՎՈՒՄ, որի սոցվճարը կազմում է 200.670 ՀՀ դրամ: ... ապահովադիրից գանձվում է պակաս ցույց տված սոցվճարը 200.670 ՀՀ դրամ», որը հաշվարկված տույժ և տուգանքներով կազմել է 405.820 ՀՀ դրամ:

Ակտի 15-րդ կետով արձանագրվել է, որ «Հաշվի առնելով Կոմիտեի հետաքննության

վարչության տրամադրած կյուբերը՝ Ընկերությունում փաստացի աշխատանք իրականացնողների և գործող աշխատանքային պայմանագրերի համադրումից պարզվեց, որ թվով 8 (ութ) աշխատողների՝ Արա Միմոնյանի, Արայիկ Միմոնյանի, Հովհաննես Անտոնյանի, Արմեն Գևորգյանի, Կարեն Հովսեփյանի, Կարեն Ղահրամանյանի, Գրիգոր Պապոյանի և Վազգեն Հովեյանի աշխատանքի ընդունումը ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացակայում էր գրավոր աշխատանքային պայմանագրերը: Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ և 85-րդ հոդվածների պահանջները: Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի 4-րդ մասի, գործատուն տվյալ ամսում յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար հաշվարկում և վճարում է սոցվճար 300.000 ՀՀ դրամի չափով, եթե չձևակերպված վարձու աշխատողների թվաքանակը յոթից ինն է՝ ընդամենը 2.400.000 ՀՀ դրամ» **(հատոր 1-ին, գ.թ. 60-71):**

2) Ընկերության հիմնադիր Արտուշ Ղուկասյանի կողմից 22.03.2012 թվականի, 13.04.2012 թվականի և 20.04.2012 թվականի բացատրությունների համաձայն՝ Ընկերությունը 2005 թվականից շահագործում է թվով 2 գազալիցքավորման կետեր, որոնք տեղակայված են Երևան-Սևան մայրուղու 64-րդ կմ-ի աջակողմյան և ձախակողմյան մասերում: Ընկերությունը 2008 թվականից շահագործում է նաև «21+» անվանումով տաքսի ծառայությունը: Ըստ ներկայացված ելակետային տվյալների տաքսի ծառայության կողմից պետք է շահագործվեն թվով 6 մարդատար ավտոմեքենաներ, որոնց վարորդների հետ օրենքով սահմանված կարգով կնքվել են աշխատանքային պայմանագրեր, իսկ վարորդներ Արա Միմոնյանի, Արայիկ Միմոնյանի, Հովհաննես Անտոնյանի, Արմեն Գևորգյանի, Կարեն Հովսեփյանի, Կարեն Ղահրամանյանի, Գրիգոր Պապոյանի և Վազգեն Հովեյանի հետ աշխատանքային պայմանագրեր չեն կնքվել: 2009 թվականից հիմնականում շահագործվել է 12 ավտոմեքենա, սակայն Տեսչություն ներկայացվել է 6 ավտոմեքենաների ելակետային տվյալներ **(հատոր 1-ին, գ.թ. 113-115, հատոր 2-րդ, գ.թ.26-31):**

3) Արա Միմոնյանի, Արայիկ Միմոնյանի, Հովհաննես Անտոնյանի, Արմեն Գևորգյանի, Կարեն Հովսեփյանի, Կարեն Ղահրամանյանի կողմից 20.04.2012 թվականին տրված բացատրությունների համաձայն՝ վերջիններս որպես վարորդ աշխատում են Ընկերության «21+» տաքսի ծառայությունում, սակայն նրանց հետ աշխատանքային պայմանագրեր չեն կնքվել **(հատոր 2-րդ, գ.թ. 15-23):**

4) Իրավաբանական անձի պետական գրանցման թիվ 03Ա067757 վկայականի 23.10.2007 թվականի թիվ 003 և 30.08.2011 թվականի թիվ 005 ներդիրների համաձայն՝ 23.10.2007 թվականից մինչև 30.08.2011 թվականն ընկած ժամանակահատվածում Արտուշ Ղուկասյանը եղել է Ընկերության տնօրեն **(հատոր 1-ին, գ.թ. 6-11):**

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն վճարել բողոքի շրջանակներում կարևորվում են հետևյալ իրավական խնդիրները.

1. արդյո՞ք տարածության մեջ տարբեր տեղաբաշխվածություն ունեցող (տարբեր հասցեներ ունեցող), սակայն մեկ ընդհանուր գազահաշվիչի և ճնշակի (կոմպրեսոր) միջոցով շահագործվող գազալիցքավորման մեկից ավելի կետերը «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.7-րդ հոդվածի իմաստով պետք է դիտել մեկ ամբողջական գա-

---

գալցման կայան կամ գազալցման համար հարմարեցված սարքավորումների ամբողջություն,

2. արդյո՞ք ստուգման ընթացքում ընկերության հիմնադրի կողմից ներկայացված տվյալները կարող են լրացուցիչ հարկային պարտավորություններ հաշվարկելու հիմք հանդիսանալ:

Տեսչության 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտի 8-րդ կետի՝ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման հաստատագրված վճարին վերաբերող մասով.

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.7-րդ հոդվածի համաձայն՝ գազալցման կայան (կետ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) համար հարմարեցված սարքավորումների ամբողջությունը:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ ավտոտրանսպորտային միջոցների գազալիցքավորման համար հարմարեցված սարքավորումների ամբողջությունը դիտվում է որպես գազալիցքավորման կայան: Սակայն «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ սարքավորումների այն ցանկը, որոնցից որևէ մեկի բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ սարքավորումների ամբողջականությունն ապահովված չհամարելու համար: Այլ կերպ, սահմանված չէ այն սարքավորումների ցանկը, որոնց առկայությունը և միմյանց հետ տեխնոլոգիական փոխկապակցվածությունը բնորոշում է գազալիցքավորման կայանի սարքավորումների կազմի ամբողջականությունը, հետևաբար, եթե հարմարեցված սարքավորումների միջոցով՝ անկախ ֆիզիկական տեղադրվածությունից, իրականացվում է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն, ապա տվյալ վայրը պետք է դիտվի որպես գազալցման կայան:

Սույն գործով վիճարկվող ակտի վերը նշված դրվագով վերաքննիչ բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ «... մայրուղու աջ և ձախ կողմերում Ընկերության կողմից գազալիցքավորումն իրականացվում է այնպիսի ամբողջություն կազմող սարքավորումների միջոցով, որոնք հնարավորություն չեն տալիս ճանապարհի մյուս կողմում գտնվող սարքավորումների միջոցով ինքնուրույն գազալիցքավորման գործունեություն իրականացնել: Այսինքն՝ Ընկերությունը Երևան-Սևան մայրուղու 64-րդ կիլոմետրի վրա չունի միմյանցից անկախ և ինքնուրույն կերպով գազալիցքավորում ապահովող հարմարեցված սարքավորումների այնպիսի ամբողջություն, որոնք հնարավորություն ունենային գործել միմյանցից անկախ և հանդես գալ որպես առանձին ամբողջություններ և գազալիցքավորում իրականացնել առանձին-առանձին՝ մայրուղու աջ և ձախ կողմերում»:

Վերոգրյալներից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ տարածության մեջ տարբեր տեղաբաշխվածություն ունեցող, սակայն մեկ ընդհանուր գազահաշվիչի և ճնշակի միջոցով շահագործվող գազալիցքավորման կետերը պետք է դիտել մեկ ամբողջական գազալցման կայան կամ գազալցման համար հարմարեցված սարքավորումների ամբողջություն, քանի որ գազալիցքավորման սարքավորումների ամբողջությունը որոշելու համար նշանակություն չունի այն հանգամանքը, թե այդ սարքավորումները Երևան-Սևան մայրուղու 64-րդ կմ-ի միայն մեկ, թե նաև հակառակ կողմում են գտնվում: Էականը սարքավորումների այնպիսի ամբողջությունն է, որը ապահովում է գազալցման իրականացումը սարքավորումների մեկ համակարգ սպասարկող գազալիցքավորման սնուցման մեկ սարքի կամ հարմարանքի, այն է՝ ճնշակի միջոցով: Ճանապարհի աջ և ձախ կողմերում Ընկերության կողմից գազալիցքավորումն իրականացվում է այնպիսի ամբողջություն կազմող սարքավորումների միջոցով, որոնք հնարավորություն չեն տալիս ճանապարհի մյուս կողմում գտնվող սարքավորումների միջոցով ինքնուրույն գազալիցքավորման գործունեություն իրականացնելը: Այսինքն՝ Ընկերությունը չունի միմյանցից անկախ և ինքնուրույն կերպով գազալիցքավորում

---

ապահովող հարմարեցված սարքավորումների այնպիսի ամբողջություն, որոնք կարող են գործել միմյանցից անկախ: Այսինքն՝ մեկից ավելի կայանների շահագործումն ապահովող գազահաշվիչը և ճնշակը յուրաքանչյուր կայանի համար պետք է դիտել ավտոտրանսպորտային միջոցների գազայցման համար հարմարեցված սարքավորումների ամբողջության կազմի մեջ մտնող և մնացած սարքավորումների հետ գազալիցքավորման տեխնոլոգիական պրոցեսն ապահովող սարքավորումներ, քանի որ դրանց բացակայության պայմաններում անհնարին կդառնա գազալիցքավորման կայաններից յուրաքանչյուրի շահագործումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այս մասով վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ:

## 2. Ընկերության հիմնադրի բացատրությունների վերաբերելիության և թույլատրելիության մասով.

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ հաստատագրված վճարով հարկվող օբյեկտ է համարվում նաև ավտոտրանսպորտային գործունեությունը:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող վճարողների մոտ հաստատագրված վճարի (հարկային պարտավորության) մեծությունը համարվում է չհիմնավորված, և հարկային տեսչության մարմնի կողմից նույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարվում է հաստատագրված վճարի մեծության հաշվարկում (գնահատում), եթե վճարողի կողմից սահմանված կարգով համապատասխան ժամանակաշրջանի համար ներկայացված ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների, ինչպես նաև 7-րդ հոդվածի «իա» ենթակետում նշված գործունեության հաստատագրված վճարի չափի մեծությունը ցածր է հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով սահմանված կարգով հարկային տեսչության մարմնի կողմից իրականացված ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված հաստատագրված վճարի ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունից (հաստատագրված վճարի չափից):

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված՝ հաստատագրված վճարի մեծության չհիմնավորված լինելու դեպքում հարկային տեսչության մարմինն այն հաշվարկում է՝ հիմք ընդունելով ելակետային տվյալների և համապատասխան ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը (բացառությամբ ամսվա մեջ աշխատած օրերի թվի):

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների արդյունքում **արձանագրված** հաստատագրված վճարի ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը **մեծ է** հաստատագրված վճար վճարողի կողմից ներկայացված ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների **չափից**, ապա հաստատագրված վճարի մեծությունը համարվում է **չհիմնավորված**: Ընդ որում, նման դեպքում հարկային մարմինը հաստատագրված վճարը հաշվարկում է՝ հիմք ընդունելով **ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը**:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառման և (կամ) գրանցումների վերաբերող) սահմանված փաստաթղթերը կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ

---

խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում հարկային մարմին ներկայացրած հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունը կամ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարողի շրջանառությունները համարվում են չհիմնավորված, ապա հարկվող օբյեկտները և հարկային պարտավորությունները հաշվարկում է հարկային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, մասնավորապես, հիմնվելով՝ ի թիվս այլնի, օրենքով սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունների վրա:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն՝ հարկային մարմին ներկայացվող տեղեկություն է համարվում նաև երրորդ անձի կողմից ներկայացվող տեղեկությունը: Մույն օրենքի իմաստով երրորդ անձ է համարվում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինը, առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը, նոտարը, որը հարկային մարմին է ներկայացնում այլ հարկ վճարողի կամ այլ ֆիզիկական անձի գործարքի կամ գործառնության կամ գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Նշված մասով վերաքննիչ բողոքը մերժելիս Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ «... ակտի քննարկվող դրվագում անհասկանալի է Տեսչության մոտեցումն այնքանով, որ ինչպես վերը նշվեց հիմնադրի բացատրությունը, որպես ապացույց չէր կարող դրվել ստուգման ակտի հիմքում, իսկ այն երրորդ անձից ստացված տեղեկություն դիտարկելու պարագայում, Տեսչությունը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը ...»:

Վերոգրյալից ելնելով և սույն գործի փաստերի համադրմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վիճարկվող ակտը կազմելիս «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը Տեսչության կողմից չկիրառելու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ակտը կազմելիս Տեսչությունը հիմք է ընդունել Կոմիտեի հետաքննության վարչությունից ստացված ելակետային տվյալները: Այսինքն՝ Տեսչությունը տեղեկատվությունը ստացել է հարկային մարմնի, այն է՝ մինևսույն վարչական մարմնի մեկ այլ կառուցվածքային ստորաբաժանման կողմից, հետևաբար Կոմիտեի հետաքննության վարչությունը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել երրորդ անձ: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում վարչական մարմինը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի խախտում թույլ չի տվել: Ավելին, հաստատագրված վճարը հաշվարկել է հիմք ընդունելով արձանագրված **ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների փաստացի մեծությունը:**

Դատարանի վճռի և Վերաքննիչ դատարանի որոշման վերլուծությունը վկայում է, որ վերջիններս Ընկերության հիմնադրի բացատրությունները որակել են որպես անթույլատրելի ապացույց՝ հիմնականում պատճառաբանելով, որ «ստուգումն իրականացնող անձանց իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք է վերապահված պահանջել նաև բացատրություններ, այս պարագայում հատկանշական է այն հանգամանքը, որ ստուգում իրականացնողների բացատրություն պահանջելու իրավունքն ամրագրված է տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ, այսինքն՝ բացատրություն կարող է վերցվել տնտեսավարող սուբյեկտի համապատասխան ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձից կամ աշխատակցից, սակայն ոչ տնտեսավարող սուբյեկտի գործունեությանը չափանշվող անձանցից, այդ թվում, հիմնադրից, մասնակցից և այլն» (հատոր 3, գ. թ. 53):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

---

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլինեք առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Մույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով էական են վեճի լուծման համար և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ապացույցների թույլատրելիության ընդհանուր կանոնը, որի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Մշված կանոնին համապատասխան՝ Ընկերության հիմնադրի բացատրությունները կարող էին որակվել որպես անթույլատրելի ապացույց, եթե ստուգման ակտի 8-րդ կետում արձանագրված խախտման փաստի հաստատման համար օրենքը կամ այլ իրավական ակտ մատնանշեր կոնկրետ ապացույցներ՝ այդ շրջանակից բացառելով Ընկերության հիմնադրի բացատրությունները: Դատարանը և Վերաքննիչ դատարանը հիմնադրի բացատրությունները բացառել են ապացույցների շարքից՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետը: Մինչդեռ, ինչպես նշված դրույթը, այնպես էլ նշված օրենքի 7-10-րդ



---

հողվածների նորմերը սահմանում են ստուգումն իրականացնող անձի և տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, և նշված օրենքի 7-րդ հոդվածում՝ ստուգումն իրականացնող անձի իրավունքների շարքում հիմնադրից բացատրություններ պահանջելու իրավունքի բացակայությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որ բացառվի ստուգման ակտի 8-րդ կետում արձանագրված խախտման փաստի հաստատումն այն անձանց բացատրություններով, որոնցից բացատրություն պահանջելու իրավունքն ամրագրված չէ նշված հոդվածով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստուգման ակտի 8-րդ կետում արձանագրված խախտման փաստի առնչությամբ թույլատրելի ապացույց են ինչպես Ընկերության հիմնադրի բացատրությունները, այնպես էլ այլ անձանց բացատրությունները:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ Կոմիտեի նախագահի 21.03.2012 թվականի թիվ 1002425 հանձնարարագրով իրականացվող ստուգմամբ հաստատագրված վճարների ստուգման ժամանակաշրջանն ընդգրկել է 01.04.2010-11.06.2012 թվականները, սակայն Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ 23.10.2007 թվականից մինչև 30.08.2011 թվականն ընկած ժամանակահատվածում Ընկերության հիմնադիր Արտուշ Դուկասյանը եղել է Ընկերության տնօրեն:

Վերը նշված պատճառաբանություններից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության հիմնադիր և 23.10.2007 թվականից մինչև 30.08.2011 թվականն ընկած ժամանակահատվածում Ընկերության տնօրեն Արտուշ Դուկասյանի բացատրությունը սույն գործով թույլատրելի և վերաբերելի ապացույց է, որն իրավացիորեն դրվել է վիճարկվող ակտի հիմքում և առաջացրել իրավական հետևանք:

Ինչ վերաբերում է Տեսչության 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտի 3-րդ, 14-րդ, 15-րդ կետերին, ապա Վերաքննիչ դատարանը այդ մասերով նույնպես Դատարանի վճիռը հիմնավոր է համարել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի չկիրառման հիմնավորմամբ, որը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ևս անհիմն է արդեն իսկ արտահայտված պատճառաբանությունների ուժով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 19.03.2013 թվականի որոշման՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչության 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտը՝ 3-րդ, 14-րդ և 15-րդ կետերի մասով, ինչպես նաև 8-րդ կետի՝ ավտոտրասպորտային գործունեության մասով անվավեր ճանաչելու մասին «Արտկա-Տեքս» ՍՊԸ-ի հայցը բավարարելու մասը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչության 09.07.2012 թվականի թիվ 1002425 ակտի 3-րդ, 14-րդ և 15-րդ կետերի հիմքով, ինչպես նաև 8-րդ կետի հիմքով (ավտոտրասպորտային գործունեության մասով) գումար բռնագանձելու մասին



ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սևանի տարածքային հարկային տեսչության հայցը մերժելու մասը և գործն այդ մասերով ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/4109/05/10  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Գ. Ղարիբյան  
Ա. Աբովյան  
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4109/05/10**  
**2013թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ **Վճռաբեկ դատարան**)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴԻՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Արեն-Մեկ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.08.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Արեն-Մեկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն)՝ 18.09.2010 թվականի թիվ 2329514 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 18.09.2010 թվականի թիվ 2329514 ստուգման ակտը (այսուհետ՝ Ստուգման ակտ):

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Հակոբյան) 06.08.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.12.2011 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 06.08.2011 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 13.03.2013 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.08.2013 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը բավարարվել է, Դատարանի 13.03.2013 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ հոդվածները, «Հասարակագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի «գ» կետը, 34-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում անտեսել է այն հանգամանքը, որ Տեսչության կողմից ստուգումն իրականացնելիս թույլ են տրվել օրենսդրությամբ սահմանված մի շարք խախտումներ: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Տեսչությունը չի ապացուցել այն հանգամանքը, որ 16քմ մակերեսով տարածքը չի նշվել Ընկերության կողմից ներկայացված հայտարարության մեջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 07.08.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 13.03.2013 թվականի վճռին:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերությունը Երևանի Կիևյան թիվ 15 հասցեում իրականացնում է հանրային սննդի ոլորտում գործունեություն, որի համար Տեսչություն է ներկայացրել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն՝ 2010 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների համար 46քմ մակերեսի համար (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

2) Տեսչության պետի 17.09.2010 թվականի թիվ 2329514 հանձնարարագրի հիման վրա Ընկերությունում իրականացվել է հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում (ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան՝ 01.06.1995 թվականից մինչև ստուգման ավարտ), ինչպես նաև վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում (ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջան՝ 28.12.2007 թվականից մինչև ստուգման ավարտ): Ստուգման արդյունքում 18.09.2010 թվականին կազմվել է թիվ 2329514 ստուգման ակտը, որով Ընկերությանը հաստատագրված վճարների գծով առաջադրվել է 265.000 ՀՀ դրամի պարտավորություն (**հատոր 1-ին, գ.թ. 21-23**):

3) Ստուգման ակտի 3-րդ կետով արձանագրվել է, որ «...կազմակերպությունը ք. Երևան, Կիևյան թիվ 15 հասցեում իրականացրել է հանրային սննդի գործունեություն, որի համար ՀՏ է ներկայացրել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն հուլիս-դեկտեմբեր ամիսների համար 46քմ: Միաժամանակ պարզվեց, որ կազմակերպությունը ՀՏ ներկայացրած ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հայտարարության մեջ չի ներառել 16քմ տարածք, որով խախտվել է «Հաստատագրված

վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը: Նույն օրենքի 34-րդ, 35-րդ, 36-րդ հոդվածների համաձայն՝ կազմակերպության մոտ տեղի է ունենում ուղղիչ գործակցի փոփոխություն նախկին 0,75 փոխարեն 1 (50քմ ավելի դեպքում) և հաշվարկվում է հաստատագրված վճարի գումար՝ 124.000 ՀՀ դրամ՝ մեկ ամսվա համար (62,2քմ x 2000 x 1): Այսպիսով ենթակա է վճարման բյուջե պակաս վճարված հաստատագրված վճարի գումար՝ 165.000 ՀՀ դրամ (3 ամիս (62,2քմ x 2000 x 1) -(46,2քմ x 2000 x 0,75) ): Ինչպես նաև համաձայն «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի՝ տուգանք՝ պակաս հաշվարկված հաստատագրված վճարի 50% -ի չափով՝ 82.500 ՀՀ դրամ (165.000 x 50%): Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի՝ հաշվարկվում է տուգանք՝ 11.000 ՀՀ դրամ՝ հուլիս-օգոստոս ամիսների համար: Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ հաշվարկվում է տույժ՝ 2.000 ՀՀ դրամ: Այսպիսով ենթակա է պետական բյուջե գանձման հաստատագրված վճար՝ 265.000 ՀՀ դրամ» (**հատոր 1-ին, գ.թ. 20-23**):

4) Համաձայն թիվ 2506673 սեփականության իրավունքի վկայականի «Շենքի հատակագիծը» բաժնում նշված հատակագծի՝ Երևանի Կիևյան փողոցի 15-րդ շենքի թիվ 35 շինության թիվ 6, 7, 10 և 1 սենյակների ընդհանուր մակերեսը կազմում է 64,1քմ, այդ թվում թիվ 6, 7, 10 սենյակների մակերեսը կազմում է 29,6քմ, թիվ 1 սենյակի մակերեսը՝ 34,5քմ: Ընկերության կողմից Տեսչություն է ներկայացվել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն 46քմ մակերեսի վերաբերյալ, որն իր մեջ ներառել է թիվ 6, 7, 10 սենյակների մակերեսներն ամբողջությամբ և թիվ 1 սենյակի մի մասը՝ 16,4քմ մակերեսով» (**հատոր 1-ին, գ.թ. 17-19**):

5) Ստուգման ակտում նշված և հայտարարության մեջ չներառված 16քմ մակերեսով տարածքը կազմում է Ընկերության կողմից վարձակալված բնակելի տարածքի թիվ 1 սենյակի (ըստ սեփականության իրավունքի գրանցման վկայականի 34,5քմ մակերես) մի մասը, որից Ընկերությունը որպես սպասարկման սրահ օգտագործում է 16,8քմ մակերեսը, մնացած՝ 12,3 և 9 քմ մակերեսներով տարածքները, համապատասխանաբար ընդգրկում են բարի տարածքը և միջանցքը, որով հաճախորդները ելք ու մուտք են գործում մյուս սենյակներ (**հատոր 1-ին, գ.թ. 17-19, 65-67**):

#### **4. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարելի վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել հաստատագրված վճարների մասին օրենսդրության մեջ կիրառվող «սպասարկման սրահ» հասկացության բովանդակությունը:*

Վիճելի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «գ» ենթակետի համաձայն՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը հանդիսանում է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն:

Վերոնշյալ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝

ա) հանրային սննդի ոլորտում գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպումը.

բ) խոհարարական արտադրանք է համարվում կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսաֆաբրիկատների համախումբը.

գ) **հանրային սննդի սպասարկման սրահ է համարվում պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածքը.**

դ) **բացօթյա վայրերում հանրային սննդի սպասարկման սրահ է** համարվում հանրային սննդի գործունեության իրականացման ընդհանուր մակերեսը:

Նույն օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք... իսկ 34-րդ հոդվածը սահմանում է, որ հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի (գործակիցների) արտադրյալի 2000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած **սպասարկման սրահի մակերեսը՝** քառակուսի մետրերով:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 101-րդ հոդվածի հիմքով ընդունված՝ ««Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգչական նամակը հաստատելու մասին» ՀՀ հարկային տեսչության 30.12.1998 թվականի թիվ 01/60 հրամանի 4.2 կետի 1-ին պարբերության համաձայն՝ հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը, քառակուսի մետրերով արտահայտված, պատրաստի խոհարարական արտադրանքի **իրացման և սպառման** կազմակերպման համար նախատեսված, հատուկ կահավորված այն տարածքն է, որը ներառում է սպառողների կողմից պատրաստի խոհարարական արտադրանքի սպառման և հանրային սննդի գործունեության իրականացման վայրում նրանց ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածքները (մասնավորապես՝ բեմահարթակների, պարահրապարակների, առանձնասենյակների և այլն):

Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը հանդիսանում է հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, իսկ հանրային սննդի ոլորտում գործունեություն է համարվում խոհարարական պատրաստի արտադրանքի՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսաֆաբրիկատների սպառման և իրացման կազմակերպումը համապատասխան տարածքում՝ հանրային սննդի սպասարկման սրահում: Մասնավորապես՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալ է համարվում հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը՝ արտահայտված քառակուսի մետրերով, իսկ հանրային սննդի գործունեության իրականացման վայրի զբաղեցրած սպասարկման սրահի մակերեսը՝ քառակուսի մետրերով արտահայտված, պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված, հատուկ կահավորված այն տարածքն է, որը ներառում է սպառողների կողմից պատրաստի խոհարարական արտադրանքի սպառում և կազմակերպում, ինչպես նաև նրանց ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածքները՝ բեմահարթակներ, պարահրապարակներ, առանձնասենյակներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը գործունեություն է իրականացրել հանրային սննդի ոլորտում և հանդիսացել է հաստատագրված վճար վճարող, որի համար Տեսչություն է ներկայացրել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն 2010 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների համար՝ 46քմ մակերեսի չափով: Տեսչության պետի 17.09.2010 թվականի թիվ 2329514 հանձնարարագրի հիման

---

վրա Ընկերությունում իրականացվել է հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում, որի արդյունքում 18.09.2010 թվականին կազմվել է թիվ 2329514 ստուգման ակտը, համաձայն որի՝ Ընկերությանը հաստատագրված վճարների գծով առաջադրվել է 265.000 ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն: Մասնավորապես՝ Ստուգման ակտում նշվել է, որ Ընկերության կողմից ներկայացված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հայտարարության մեջ չի ներառվել 16քմ մակերեսով տարածքը, որով խախտվել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, դրա հիման վրա էլ հաշվարկել է պակաս վճարված հաստատագրված վճարի գումարը, տուգանքները և տույժերը:

Դատարանը հայցը բավարարելիս պատճառաբանել է, որ Ստուգման ակտով արձանագրված 16քմ մակերեսով տարածքը, որը չի ներառվել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության մեջ, հանդիսանում է վերը նշված հասցեում գործող հանրային սննդի օբյեկտի թիվ 1 տարածքի մի մասը՝ ընդգրկելով բարի և միջանցքի տարածքը, որտեղից մուտք է բացվում սեփականության իրավունքի գրանցման վկայականում ներառված հատակագծով նշված թիվ 6, 7, 10 սենյակները: Տվյալ դեպքում Դատարանի գնահատմամբ թիվ 1 սենյակի՝ բարի համար օգտագործվող տարածքը և միջանցքը չեն կարող դիտվել հանրային սննդի սպասարկման սրահ և համարվել հաստատագրված վճարով հարկվող օբյեկտ, քանի որ այն չի համարվում օրենքով սահմանված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար նախատեսված տարածք: Մասնավորապես՝ բարի սեղանի առջև տեղադրված չեն աթոռներ, իսկ միջանցքում հնարավոր չէ իրացնել պատրաստի խոհարարական արտադրանք, քանի որ չկան տեղադրված սեղաններ և աթոռներ, հնարավոր չէ դիտել որպես ժամանցը կազմակերպելու համար նախատեսված տարածք, քանի որ այնտեղ տեղադրված չէ բեմահարթակ կամ չի կարող ծառայել որպես պարահրապարակ: Վարչական մարմինը չի հիմնավորել, որ ակտով արձանագրված, հայտարարության մեջ նշված 16քմ մակերեսով տարածքում Ընկերությունը խոհարարական արտադրանքի իրացում է կազմակերպել, այսինքն՝ իրականացրել է հանրային սննդի ոլորտում գործունեություն, որպիսի պարագայում միայն Ընկերությանը կարող էր վերագրվել ակտով արձանագրված խախտումը և առաջադրվել 265.000 ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն:

Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարելիս իր պատճառաբանությունների հիմքում դրել է այն հանգամանքը, որ Ընկերության կողմից վարձակալվել է 131,5քմ ընդհանուր մակերեսով տարածք, որը բաժանված էր առանձին սրահների: Ընկերության կողմից Տեսչություն է ներկայացվել ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն՝ նշված շինության թիվ 6, 7, 10 սենյակների և թիվ 1 սենյակի տարածքի մի մասի՝ ընդհանուր 46քմ մակերեսի վերաբերյալ, որն իր մեջ ներառել է թիվ 6, 7, 10 սենյակներն ամբողջությամբ և թիվ 1 սենյակից 18,5քմ մակերեսը, և հայտարարության մեջ չի ընդգրկվել թիվ 1 սենյակից 16քմ մակերեսով տարածքը: Նշված 16քմ մակերեսով տարածքում տեղադրված են բազմոցներ և սեղաններ, սրահի մնացած մասով ելակետային տվյալների հայտարարություն չի ներկայացվել այն չօգտագործելու պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով գործով հավաքված ապացույցները, ներկայացված լուսանկարները, գտել է, որ նշված տարածքն Ընկերությունը պետք է ընդգրկեր Տեսչություն ներկայացված հայտարարության մեջ, քանի որ այն հանդիսանում է սպասարկման սրահ՝ տարածք, որտեղ կազմակերպվում է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացումը և սպառումը: Հետևաբար առկա չեն հիմքեր ստուգման ակտն անվավեր ճանաչելու համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ բողոքարկվող որոշման մեջ առկա չէ որևէ իրա-

---

վական հիմնավորում խնդրո առարկա 16քմ մակերեսով տարածքի՝ սպասարկման սրահ հանդիսանալու վերաբերյալ այն պայմաններում, երբ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ հանրային սննդի սպասարկման սրահն իրենից ներկայացնում է հատուկ կահավորված այնպիսի տարածք, որն անմիջականորեն նախատեսված է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար: Իսկ սույն գործով Ստուգման ակտում նշված 16քմ մակերեսով տարածքն իր մեջ ներառում է բարի և միջանցքի տարածքները, որոնք ունեն սահմանափակ նպատակային նշանակություն և նախատեսված չեն պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար: Տվյալ դեպքում բարը բարմենի աշխատավայրն է, այն հարմարեցված չէ սննդատեսակ իրացնելու և սպառելու համար, քանի որ բացակայում են հաճախորդների համար նախատեսված այթոռները, իսկ ինչ վերաբերում է այլ սենյակներ մուտքի և ելքի համար նախատեսված տարածքին՝ միջանցքին, ապա օրենքի իմաստով այն նույնպես չի կարող համարվել սպասարկման սրահ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ խնդրո առարկա 16քմ մակերեսով վերոնշյալ տարածքը, անմիջականորեն նախատեսված չլինելով արտադրանքի իրացման և սպառման համար, հաստատագրված վճարով հարկման օբյեկտ չէ, և ըստ այդմ Ընկերության կողմից նշված տարածքը ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարության մեջ չներառելը եղել է իրավաչափ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայրը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, որևէ կերպ չի պատճառաբանել իր այն համոզմունքի ձևավորումը, թե

որ ապացույցների գնահատումից և հետազոտությունից է հաստատել այն փաստը, որ բարի և միջանցքի տարածքները հանդիսանում են սպասարկման սրահ, քանի որ գործում առկա ապացույցներով չի հիմնավորվում, որ բարի և միջանցքի տարածքներն օրենքի

---

իմաստով կարող են համարվել սպասարկման սրահ՝ տարածք, որտեղ կազմակերպվում է պատրաստի խոհարարական արտադրանքի իրացում և սպառում, ինչպես նաև այն, որ այնտեղ տեղադրված է բեմահարթակ, կամ այն կարող է ծառայել որպես պարահրապարակ, որպիսի հանգամանքների ապացուցման բեռն էլ կրում էր սույն գործով վարչական մարմինը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սովյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.08.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 13.03.2013 թվականի վճռին:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչությունից հօգուտ «Արեն-Մեկ» ՍՊԸ-ի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արդարագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արդարագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3932/05/09  
2013թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/3932/05/09

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան  
Դատավորներ՝ Հ. Բեդկյան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱՐԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական  
եկամոտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 11.09.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայկ Մարգարյանի ընդդեմ  
Կոմիտեի՝ Կոմիտեի 22.07.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որո-  
շումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հայկ Մարգարյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի  
22.07.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 01.04.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 29.06.2011 թվականի որոշմամբ Կոմիտեի  
վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ ՀՀ վարչական դատարանի 01.04.2011  
թվականի վճիռը բեկանվել, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան)  
13.03.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

---

11.09.2012 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.03.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:  
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 51-րդ, 139-րդ, 197-րդ և 198-րդ հոդվածները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ, 14-րդ, 17-րդ և 32-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պայքառարանում է հեղուկալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Հայկ Մարգարյանի կողմից ցուցաբերվել է անգործություն: Վերջինս, 13.06.2009 թվականից տեղյակ լինելով մաքսային ձևակերպումների մաքսային հսկողության ապրանքի արտահանման և վրացական կողմի հետ վարվող բանակցությունների ողջ գործընթացին, կարող էր դիմել մաքսային մարմիններին՝ խնդրելով թույլատրել մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքի նկատմամբ կատարել որոշակի գործողություններ: Սակայն նշված ժամանակահատվածում մաքսային մարմինն որևէ դիմում չի ներկայացվել, չի կատարվել որևէ գործողություն ինչպես կենդանի մնացած ճուրղի, այնպես էլ շրջապատի անվտանգության ապահովման համար: Հայկ Մարգարյանը, 2003 թվականից կատարելով «Փյունիկ տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) մաքսային գործարքները, քաջատեղյակ է եղել գործող մաքսային օրենսդրությանը և մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ կատարվող գործողությունների սահմանափակ շրջանակին: Հետևաբար նա պարտավոր էր կանխատեսել, որ առանց մաքսային մարմնի թույլտվության մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքը՝ տվյալ դեպքում մեկ օրական ճուրղ, բեռնաթափելն առաջացնում է ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ընկերության լիազոր ներկայացուցիչ Հայկ Մարգարյանը 13.06.2009 թվականին թիվ C-12792 բեռնամաքսային հայտարարագրով «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է 23.500 հատ 940 կգ ընդհանուր քաշով 7.991.401 ՀՀ դրամ մաքսային արժեքով մեկ օրական կենդանի ճուրղ, որոնք պետք է արտահանվեին Վրաստանի Հանրապետություն (**հատոր 1-ին, գ.թ. 30**):

2. Կոմիտեի հետաքննության վարչությունում 16.07.2009 թվականին տրված բացատրությամբ Հայկ Մարգարյանը հայտնել է, որ 18.05.2009 թվականի պայմանագրի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատանը 13.06.2009 թվականի թիվ C-12792 բեռնամաքսային հայտարարագրով ձևակերպել են 23.500 հատ 940 կգ քաշով 7.991.401 ՀՀ դրամ մաքսային արժեքով մեկ օրական ճուրղ «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, պատվիրատուն 21.06.2009 թվականին վերջնականապես հրաժարվել է ճուրղն ընդունելուց, ինչի արդյունքում դրանք բոլորը սատկել են, սատկած

վիճակում ընկերության գործունեության տարածքից տեղափոխվել են աղբանոց, որտեղ բեռնաթափվել և ոչնչացվել են, իսկ 22.06.2009 թվականին դիմել է Կոմիտե թիվ C-12792 բեռնամաքսային հայտարարագիրն անվավեր ճանաչելու խնդրանքով (**հատոր 1-ին, գ.թ.33-35**):

3. Համաձայն 22.06.2009 թվականի տեղեկանքի՝ «Փյունիկ» ՍՊԸ-ն կուտակված աղբը թափել է Ստեփանավանի աղբակայան (**հատոր 1-ին, գ.թ.37**):

4. Կոմիտեի հետաքննության վարչության պետի 22.07.2009 թվականի որոշմամբ Հայկ Մարգարյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով և տուգանվել 3.995.700 ՀՀ դրամով, մաքսային հսկողության ներքո գտնվող և առանց մաքսային մարմնի թույլտվության բեռնաթափած 23.500 հատ, 940 կգ ընդհանուր քաշով մեկ օրական կենդանի ճտերի մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով (**հատոր 1-ին, գ.թ.6-8**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն բողոքի սահմաններում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե որ գործողությունները կարող են որակվել որպես մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ոչնչացում և որոնք՝ բեռնաթափում:*

ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները, ըստ մաքսային ռեժիմների, մաքսային հսկողության տակ են գտնվում՝ «արտահանում» ազատ շրջանառության համար» և «վերաարտահանում» ռեժիմների դեպքում՝ մաքսային մարմնում մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման պահը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 139.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ արգելվում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը կամ ոչնչացնելը, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնումը, բեռնաթափումը, փոխաբեռնումը, փաթեթների վնասվածքների վերացումը, փաթեթների բացումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը, կամ այդ ապրանքների կամ դրանց ուղեկցող փաթեթների վրա դրված մաքսային ապահովման միջոցները փոխելը: Նույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքները և տրանսպորտային միջոցները կորցնելու դեպքում անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների բեռնումը, բեռնաթափումը, փոխաբեռնումը, փաթեթների վնասվածքների վերացումը, փաթեթների բացումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը կամ այդ ապրանքների կամ դրանց ուղեկցող փաթեթների վրա դրված մաքսային ապահովման միջոցների փոխումն առանց մաքսային մարմնի թույլտվության՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Համադրելով վերը նշված հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը սահմանել է երկու տարբեր զանցակազմեր, որոնք օբյեկտիվ կողմով արտահայտ-

---

վում են տարբեր գործողությունների կատարմամբ: Մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանված զանցանքը դրսևորվում է այնպիսի գործողությունների կատարմամբ, որոնք առնչվում են ուղղակիորեն ապրանքին որպես գույքային միավորի և չեն որոշում դրա ճակատագիրը: Մասն գործողությունների արդյունքում գույքը շարունակում է գտնվել անձի փաստացի տիրապետման ներքո: Մինչդեռ նույն օրենսգրքի 198-րդ հոդվածում ամրագրված արարքը կատարվում է այնպիսի գործողություններով, որոնցով որոշվում է մաքսային հսկողության ներքո գտնվող գույքի ճակատագիրը: Այլ կերպ ասած՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները դուրս են գալիս անձի փաստացի տիրապետումից: Այդպիսիք են ապրանքների **հանձնումն այլ անձի**, ապրանքի **օտարմանն ուղղված գործարքների կնքումը**, դրանք **ոչնչացնելը** կամ **կորցնելը**: Նշված գործողություններից **ոչնչացումը** պետք է դիտել որպես անձի կողմից կատարված գործողության ուղղակի հետևանք: Օրենսդիրը նշված եզրույթի օգտագործմամբ ընդգծել է ապրանքների կամ տրանսպորտային միջոցների ոչնչացման մեջ անձի մասնակցության հանգամանքը: Այլ կերպ՝ ապրանքի ոչնչացումը պետք է ներառվի անձի դիտավորության մեջ: Հետևաբար այն դեպքերում, երբ ապրանքների ոչնչացումը դիտավորությամբ կատարված արարքի հետևանք չէ կամ այդ արարքը կատարվել է անզգուշությամբ, ապա բացակայում է ՀՀ մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված զանցակազմը:

Տվյալ դեպքում որպես Հայկ Մարգարյանի կողմից մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների **ոչնչացման** փաստ Կոմիտեի կողմից գնահատվել է 23.500 հատ 940 կգ ընդհանուր քաշով մեկ օրական ճտերի սատկելու հանգամանքը: Գնահատելով նշված փաստը վերը նշված մեկնաբանության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 23.500 հատ 940 կգ ընդհանուր քաշով մեկ օրական ճտերը ոչ թե ոչնչացվել են Հայկ Մարգարյանի կողմից, այլ դրանք սատկել են՝ տեղափոխման, տվյալ ապրանքատեսակի պահպանման համար անհարաժեշտ տեխնոլոգիական կանոնների բացակայության հետևանքով: Հետևաբար այս դեպքում բացակայում է մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների ոչնչացման փաստը:

Թեև Կոմիտեի 22.07.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշման մեջ արձանագրվել է, որ Հայկ Մարգարյանի կողմից խախտումը կատարվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ, 198-րդ հոդվածներով, սակայն վերջինս ճանաչվել է զանցանու ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների **մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ**, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է վերը նշված հոդվածների իրավական վերլուծությանը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշել է, որ մաքսային ռեժիմի ներքո ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները **ներմուծման պահից մինչև այլ մաքսային ռեժիմով բացթողնման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ**, և այդ ժամանակահատվածում առանց մաքսային մարմնի թույլտվության նշված ապրանքները կամ տրանսպորտային միջոցներն այլ անձի հանձնելը որակվում է մաքսային կանոն-

---

ների խախտում, և նման իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով տուգանքի տեսքով (յուև՝ Արթուր Մարտիրոսյանի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի թիվ ՎԴ/4709/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը): Վերահաստատելով իր դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ վերը նշված կանոնակարգումը կիրառելի է նաև մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների արտահանման հարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով այդ հարաբերությունների առանձնահատկությունները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության լիազոր ներկայացուցիչ Հայկ Մարգարյանը 13.06.2009 թվականին թիվ C-12792 բեռնամաքսային հայտարարագրով «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է 23.500 հատ 940 կգ ընդհանուր քաշով 7.991.401 ՀՀ դրամ մաքսային արժեքով մեկ օրական կենդանի ճուռեր, որոնք նույն օրը պետք է արտահանվեին Վրաստանի Հանրապետություն՝ «Գիորգի և կոմպանիա» ընկերությանը: Բեռը գնվելուց և բաց թողնվելուց հետո «Իվելո» 327 ԼԼ 62 պետհամարանիշի ավտոմեքենայով շարժվել է դեպի արտահանման մաքսակետ՝ Երևան-Բաղրատաշեն-Վրաստան մեքենայի երթուղով: Նշանակման մաքսային կետ չհասած՝ Ընկերությունը տեղեկացվել է, որ վրացական կողմը ներմուծման հետ կապված ունի որոշակի խնդիրներ, որի հետ կապված չի կարող ընդունել ապրանքը, և ավտոմեքենան ուղարկվել է Ընկերության գործունեության հասցե՝ Լոռու մարզի Բովսաձոր գյուղ, որտեղ էլ ավտոմեքենան գտնվել է 13.06.2009 թվականից մինչև 22.06.2009 թվականն ընկած ժամանակահատվածում: Նշված ժամանակահատվածում ավտոմեքենայում բարձրված 23.500 հատ ճուռերը սատկել են: 21.06.2009 թվականին վրացական ընկերությունը վերջնականապես հրաժարվել է ապրանքն ընդունելուց: 21.06.2009 թվականին կազմվել է ակտ այն մասին, որ 23.500 հատ մեկ օրական ճուռերը տեղափոխվել են Ստեփանավանի քաղաքային ադրահանման վայր: 22.06.2009 թվականին կազմվել է տեղեկանք, համաձայն որի «Փյունիկ» ՍՊԸ-ն կուտակված աղբը թափել է Ստեփանավանի աղբակայան: Նույն օրն Ընկերության լիազոր ներկայացուցիչ Հայկ Մարգարյանը դիմել է Կոմիտե՝ խնդրելով անվավեր ճանաչել 13.06.2009 թվականի C-12792 բեռնամաքսային հայտարարագիրը:

Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրվել է այն պատճառաբանությունը, որ մեկ օրական ճուռերը սատկել են ոչ բնականոն պայմաններում պահպանելու հետևանքով, որպիսի հանգամանքը չէր կարող դիտվել որպես մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքի առանց մաքսային մարմնի թույլտվության ռյուսացում: Նշված հանգամանքը պետք է գնահատվեր որպես ՀՀ մաքսային օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված բացառություն:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ վերլուծությունն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

**ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժգ» կետի համաձայն՝ մաքսային հսկողություն է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգի պահպանումն ապահովելու նպատակով իրականացվում է մաքսային հսկողություն: Մաքսային հսկողության ենթակա են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր ապրանքներն ու տրանսպորտային միջոցները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

---

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մաքսային հսկողությունն իրականացվում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից՝

ա) մաքսային նպատակներով անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ստուգմամբ.

բ) մաքսային գնմամբ (ապրանքների և տրանսպորտային միջոցների գնում, անձի քննում՝ որպես մաքսային հսկողության առանձնահատուկ ձև).

գ) ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառմամբ.

դ) ֆիզիկական անձանց բանավոր հարցմամբ.

ե) հաշվառման և հաշվետվության համակարգերի կիրառման ստուգմամբ.

զ) մաքսային պահեստների, ազատ մաքսային պահեստների և ազատ տնտեսական գոտիների, անմաքս առևտրի խանութների, մաքսային հսկողության գոտիների և այլ շինությունների ու տարածքների գնմամբ, որտեղ կարող են գտնվել մաքսային հսկողության ենթակա ապրանքներ և տրանսպորտային միջոցներ կամ իրականացվել այնպիսի գործողություններ, որոնք ենթակա են մաքսային հսկողության.

է) մաքսային ապահովումների կիրառմամբ.

թ) օրենքով նախատեսված հսկողության այլ ձևերով.

ձ) ապրանքների և տրանսպորտային միջոցների հետբացթողումային հսկողությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային հսկողության իրականացումը նպատակ ունի ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ **իրավական ակտերով**, ինչպես նաև միջազգային պայմանագրերով **ամրագրված դրույթների պահպանումը**, ինչպես նաև պահպանել ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը:

Համադրելով վերը նշված մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը, ՀՀ մաքսային օրենսգրքի 139-րդ հոդվածի «բ» կետի ուժով ամրագրելով, որ «արտահանում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով գրանցված ապրանքներն անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պահից մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանման պահը գտնվում են մաքսային հսկողության տակ, միաժամանակ ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով սահմանել է արգելք, որով մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների բեռնաթափումն առանց մաքսային մարմնի թույլտվության՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

Վերոնշյալ հիմնավորմամբ, ինչպես նաև հաշվի առնելով սույն գործով 23.500 հատ մեկ օրական սատկած ճուղի բեռնաթափման վերաբերյալ մաքսային մարմնի թույլտվության բացակայությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայկ Մարգարյանի կողմից խախտվել են ՀՀ մաքսային օրենսգրքի 197-րդ հոդվածով նախատեսված պահանջները, այն է՝ վերջինս մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների **բեռնաթափումը** կատարել է առանց մաքսային մարմնի թույլտվության: Հետևաբար վիճարկվող վարչական ակտն իրավաչափ է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 11.09.2012 թվականի որոշումը և այն փոփոխել: Հայկ Մարգարյանի հայցն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 22.07.2009 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին մերժել:

2. Հայկ Մարգարյանից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումար, ինչպես նաև 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5828/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5828/05/12

2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արթուր Զազյանի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի 11.10.2012 թվականի թիվ Մ-4264/11-5 որոշումն անվավեր ճանաչելու

և վերջինիս բարենպաստ վարչական ակտ ընդունելուն, այն է՝ անձնական օգտագործման «Mercedes Benz CL» մակնիշի ավտոմեքենան «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով առանց մաքսատուրքի վճարման վերաձևակերպել թույլատրելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արթուր Զազյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 11.10.2012 թվականի թիվ Մ-4264/11-5 որոշումը և պարտավորեցնել վերջինիս ընդունելու բարենպաստ վարչական ակտ, այն է՝ պարտավորեցնել թույլատրելու վերաձևակերպել անձնական օգտագործման «Mercedes Benz CL» մակնիշի ավտոմեքենան «Ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով առանց մաքսատուրքի վճարման:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Սարգսյան) (այսուհետ՝ Դատարան) 10.12.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:



ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.05.2013 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.12.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «խա» կետը, ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետը, ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ և 133-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Արթուր Զազյանը պարտավոր էր ներկայացնել ավտոմեքենան վերջին անգամ ԱՄԵ-ում հաշվառումից հանված կամ հաշվառումը դադարեցված լինելու փաստը հաստատող ապացույց: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ 2008 թվականին ձեռք բերված ավտոմեքենայի նկատմամբ մինչև 16.06.2011 թվականը՝ Արթուր Զազյանի կողմից վերջինիս արժեքն ամբողջությամբ վճարելու օրը, Սուսբեհահաննա բանկին է պատկանել գրավի իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.05.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայրը մերժել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ կացության թիվ AG 0000584 քարտի համաձայն՝ Արթուր Զազյանը Հայաստանի Հանրապետությունում ունի մշտական կացության կարգավիճակ (**հատոր 1-ին, գ.թ. 17**):

2) «Պորշե Աուդի Ուեսթ Հյուսթոն» ընկերության 06.02.2012 թվականի գրության համաձայն՝ Արթուր Զազյանի կողմից 2008 թվականին իրենց ընկերությունից ձեռք բերված ավտոմեքենայի արժեքն ամբողջությամբ վճարվել է 16.06.2011 թվականին, և այն արտահանվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներից (**հատոր 1-ին, գ.թ. 14**):

3) Տեխասի ՄՏՄ բաժնի 01.02.2012 թվականի հաշվետվության համաձայն՝ «Mercedes Benz CL» մակնիշի ավտոմեքենան ձեռք է բերվել Արթուր Զազյանի կողմից, և մեքենայի նկատմամբ գրանցված է եղել գրավի իրավունք (**հատոր 1-ին, գ.թ. 15**):

4) Կոմիտեի 11.10.2012 թվականի թիվ Մ-4264/11-5 գրության համաձայն՝ «Mercedes Benz CL» մակնիշի ավտոմեքենան «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով առանց մաքսատուրքի վճարման վերաձևակերպելու համար անհրաժեշտ է ներկայացնել ավտոմեքենան Արթուր Զազյանի անվամբ հաշվառված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (**հատոր 1-ին, գ.թ. 42**):

## **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

---

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսադրոքի վճարման անձնական օգտագործման ավտոմեքենան ներմուծելու պայմանների հարցին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «իս» կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք է համարվում ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, **անձնական օգտագործման ավտոմեքենան** և տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում և ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը: **Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:** Հայաստանի Հանրապետության կառավարությունն առանձին ապրանքատեսակների համար կարող է սահմանել Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքի բնահրային սահմանափակումներ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը:

Սույն կետով նախատեսված արտոնությունից նույն անձը կարող է օգտվել հինգ տարվա ընթացքում մեկ անգամ:

Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ պետություն մշտական բնակության մեկնած՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայրի հաշվառումից դուրս եկած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում նախկինում մշտական բնակության վայր չունեցած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք Հայաստանի Հանրապետություն ժամանելուց

հետո «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառվում են որպես մշտական բնակիչ և մաքսային մարմիններին են ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը՝ ֆիզիկական անձի մշտական բնակության վայրի նշումով անձնագիրը (կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթը):

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության տարածքից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ պետություն մշտական բնակության մեկնած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանելիս մաքսային մարմիններին պետք է ներկայացնեն նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» և «Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան՝ օտարերկրյա պետություններում մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը՝ քաղաքացու անձնագիրը՝ օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական ծառայության՝ «Վերցված է հյուպատոսական հաշվառման մշտական բնակության համար» դրոշմով, և (կամ) օտարերկրյա պետության պետական լիազոր մարմնի կողմից տրված մշտական բնակության փաստը հավաստող տեղեկանք, որի խկության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարու-

թյան կողմից տրվել է դրական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը պետք է ներմուծվի մշտական բնակության նպատակով Հայաստանի Հանրապետությունում հաշվառվելու օրվան նախորդող կամ հաջորդող 180 օրերի ընթացքում:

ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է մաքսային մարմիններ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ:

Նույն օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ժամանակ մաքսային մարմիններ ներկայացվում են մաքսային նպատակների համար պահանջվող փաստաթղթեր և տեղեկություններ:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք օրենքի ուժով իրավունք ունեն առանց մաքսատուրքի վճարման ներմուծել **իրենց անձնական օգտագործման գույքը**, որպիսի գույքի մեջ է մտնում նաև ֆիզիկական անձի անձնական օգտագործման ավտոմեքենան, որը սակայն ֆիզիկական անձի կողմից պետք է ձեռք բերված և **հաշվառված լինի** նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը: Ավելին, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ մինչև Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը: Նշված իրավունքից օգտվելու համար անձը (հայտարարատուն) պարտավոր է մաքսային մարմիններ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Սույն գործի փաստերից հետևում է, որ Արթուր Զազյանը, հանդիսանալով ԱՄՆ քաղաքացի, տեղափոխվել է Հայաստանի Հանրապետություն՝ մշտական բնակության: Վերջինս Հայաստանի Հանրապետություն է ներմուծել նաև «Mercedes Benz CL» մակնիշի ավտոմեքենա, որը, ձեռք բերելով 2008 թվականին՝ «Պորշե Աուդի Ուեսթ Հյուսթոն» ընկերությունից, ավտոմեքենայի ամբողջական վճարումը կատարել է 16.06.2011 թվականին: Արթուր Զազյանը 24.09.2012 թվականին դիմել է Կոմիտե՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետով առանց մաքսատուրքի վճարման իր անձնական օգտագործման ավտոմեքենան ձևակերպելու խնդրանքով: Ի պատասխան նշված դիմումի՝ Կոմիտեն 11.10.2012 թվականի թիվ 4264/11-5 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է ներկայացնել

---

ավտոմեքենան ԱՄՆ-ում Արթուր Չազյանի անվամբ հաշվառված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ, որպիսի փաստաթուղթը ներկայացնելու պահանջը բխում է ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ և 133-րդ հոդվածների մեկնաբանությունից:

Սույն գործով վերաքննիչ բողոքը մերժելով՝ Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է. «...սույն գործում առկա ապացույցներով, մասնավորապես՝ Տեխասի ՄՏՍ բաժնի 01.02.2012 թվականի հաշվետվությամբ և «Աուդի Վեստ Հյուսթոն» ընկերության 06.02.2012 թվականի գրությամբ հաստատվում են այն փաստական հանգամանքները, որ հայցվոր Արթուր Չազյանի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված «MERCEDES BENZ CL63» մակնիշի ավտոմեքենան հանդիսանում է նրա սեփականությունը, վերջինիս կողմից այն ձեռք է բերվել 2008 թվականին՝ «Պորշե Աուդի Ուեստ Հյուսթոն» ֆիրմայից, ինչպես նաև նշված ավտոմեքենան արտահանվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Այսինքն՝ սույն գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ հայցվոր Արթուր Չազյանի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծված անձնական օգտագործման ավտոմեքենան վերջինս ձեռք է բերել նախքան Հայաստանի Հանրապետություն ժամանելը, և այն վերջին անգամ հաշվառումից հանվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ այն երկրում, որտեղ հայցվորը՝ որպես Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձ, վերջին անգամ մշտապես բնակվել է՝ մինչև Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը: Հետևաբար, հայցվոր Արթուր Չազյանը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձ, օգտվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետով իրեն վերապահված անձնական օգտագործման ավտոմեքենան առանց մաքսատուրքի վճարման ներմուծելու իր իրավունքից»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մաքսային ձևակերպման կատարումը կախվածության մեջ չի դրվում միայն սեփականության իրավունքի ծագման փաստի հետ: Այսինքն՝ բացի ավտոմեքենայի սեփականատեր լինելու պահանջից, անհրաժեշտ են լրացուցիչ այլ պայմաններ, որպեսզի ավտոմեքենան ներմուծվի ազատ շրջանառության համար: Մասնավորապես՝ գույքն անձնական օգտագործման համար ձեռք բերելը, գույքն օտարերկրյա պետությունում ձեռք բերելը, գույքն այն երկրում հաշվառումից հանելը, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ սույն գործում բացակայում է Արթուր Չազյանի կողմից իր վերջին բնակության վայրում՝ ԱՄՆ-ում, ավտոմեքենան հաշվառումից հանված լինելու հանգամանքը հավաստող որևէ ապացույց:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 16.05.2013 թվականի որոշումը և այն փոփոխել: Արթուր Զազյանի հայցը մերժել:

2. Արթուր Զազյանից հօգուտ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 60.000 ՀՀ դրամ, որից 20.000 ՀՀ դրամը՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, 40.000 ՀՀ դրամը՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4928/05/11

Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Ա. Բաբայան

Հ. Բեդկյան

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/4928/05/11  
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական սրահայրը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)*

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորները*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 22.02.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հայցի ընդդեմ Կարեն Կարապետյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և ըստ Կարեն Կարապետյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Կոմիտեի՝ Կոմիտեի հետաքննության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Աբրահամյանի 18.08.2011 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է բռնագանձել Կարեն Կարապետյանից հոգուտ պետական բյուջեի 55.015.243 ՀՀ դրամ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կարեն Կարապետյանը պահանջել է անվավեր ճանաչել Վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Աբրահամյանի 18.08.2011 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Թովմասյան) (այսուհետ՝ Դատարան) 27.06.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.02.2013 թվականի որոշմամբ Կարեն Կարապետյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, որոշվել է բեկանել Դատարանի 27.06.2012 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը: Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացվել Կարեն Կարապետյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժա» ենթակետը, 131-րդ, 132-րդ հոդվածները, 134-րդ հոդվածի 3-րդ մասը, 189-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ մաքսային վարչության պետի 12.06.1998 թվականի թիվ 71-ՄՎԸ հրամանով հաստատված կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետը, որոնք պետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ, 113-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ «Արմավիսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և անհատ ձեռնարկատեր Կարեն Կարապետյանի միջև 02.05.2011 թվականին կնքված «Ծառայությունների մատուցման մասին» թիվ 44 պայմանագրով Կարեն Կարապետյանը պարտավորվել է Ընկերության համար, նրա անունից, հանձնարարությամբ, լիազորագրով և միջոցների հաշվին իրականացնել մաքսային ձևակերպումներ և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն, ինչպես նաև մաքսային գործին վերաբերող այլ միջնորդական գործառնություններ, իսկ Ընկերությունը պարտավորվել է վճարել դրա համար:

Այսպես՝ 28.06.2011 թվականի թիվ 2011/06 7394, թիվ 2011/06 7553, թիվ 2011/06 5963, թիվ 2011/06 3596 և թիվ 2011/06 3385 հաշիվ-ապրանքագրերով Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 19,3կգ քաշով ոսկյա ձուլակտորներ, որոնք Կարեն Կարապետյանը 29.06.2011 թվականի թիվ C 9402 ԲՄՀ-ով «ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրել է Ընկերության անվամբ, և այդ հայտարարագիրն ընդունվել է մաքսային մարմնի կողմից: Վերոգրյալից հետևում է, որ 02.05.2011 թվականի թիվ 44 պայմանագրի, ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժա» ենթակետի, 131-րդ և 132-րդ հոդվածների ուժով մաքսային մարմնի հետ իրավահարաբերություններում Կարեն Կարապետյանը հանդես է եկել որպես հայտարարատու, ուստի մաքսային օրենսդրությամբ պատասխանատվություն է կրում հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել 02.05.2011 թվականի թիվ 44 պայմանագիրը, 28.06.2011 թվականի թիվ 020/VIE/8396-4694 բեռնագիրը, թիվ 2011/06 7394, թիվ 2011/06 7553, թիվ 2011/06 5963, թիվ 2011/06 3596 և թիվ 2011/06 3385 հաշիվ-ապրանքագրերը, 29.06.2011 թվականի թիվ C 9402 ԲՄՀ-ն, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 20.07.2011 թվականի գրությունը, որի արդյունքում եկել է սխալ եզրահանգման:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ ոսկու ձուլակտորների ընդհանուր նետոտ քաշի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ հայտարարագրելը չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով և չափով մաքսային վճարներ վճարելու պարտականության ոչ պատշաճ կատարմանը, ապա ոսկու ձուլակտորները հայտարարագրվել են «ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռե-

---

ծինով, որի շրջանակներում գանձվել է ՀՀ մաքսային օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված չափի մաքսային վճար և տվյալ տեսակի ապրանքի մաքսային ձևակերպման համար այն փոփոխվել չէր կարող, իսկ 3կգ նետոտ քաշով ոսկու ձուլակտորները չհայտարարագրելը փաստացի հանգեցրել է մաքսային կանոնների՝ մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի խախտման, հետևաբար այդ արարքի համար պատասխանատվությունը բխում է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի ընդհանուր իրավակարգավորման առարկայից և իրավաչափ է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.02.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանի փաստարկները**

Բողոք բերած անձն անտեսել է այն հանգամանքը, որ ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումների, ինչպես նաև մաքսային վճարների կատարման հետ կապված հարաբերություններում անմիջական շահագրգիռ մասնակիցը հանդիսանում է ապրանքներ տեղափոխող անձը, այսինքն՝ ներմուծվող ապրանքի սեփականատերը, դրա գնորդը կամ այն անձը, ով օժտված է իր անունից տվյալ ներմուծվող ապրանքը տնօրինելու լիազորությամբ և հանդիսանում է տվյալ ապրանքի ֆինանսական պատասխանատուն (եթե կնքված գործարքով այլ բան նախատեսված չէ): Մինչդեռ, ապրանքներ տեղափոխող անձի լիազորված անձը կամ համապատասխան պայմանագրի հիման վրա և տրված լիազորագրով տեղափոխողի անունից գործող մաքսային բորքերը հանդիսանում է ծագած հարաբերության պասիվ մասնակից, վերջինիս մասնակցությունը ծագած հարաբերություններում պայմանավորվում է միայն տեղափոխողի կողմից տրված լիազորագրի, կնքված պայմանագրի շրջանակներով:

Հաշվի առնելով ապրանքներ տեղափոխող անձի և վերջինիս հանձնարարությամբ, նրա անունից և ի շահ նրա գործող լիազորված անձի դերն ու մասնակցությունը ծագած հարաբերություններում՝ մաքսային մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս ուղղակի պարտավոր է պարզել և գնահատել նրանցից յուրաքանչյուրի գործողությունները (անգործությունը) կատարված իրավախախտման մեջ և ըստ դրա՝ որոշել իրավախախտման համար մեղավոր և պատասխանատվության ենթակա սուբյեկտին:

Հետևաբար, տվյալ դեպքում ապրանքներ տեղափոխողի լիազորված անձի կողմից ներմուծվող ապրանքները միայն ֆիզիկապես հայտարարագրելու փաստը, ինքնին, որևէ կերպ չի կարող վկայել Կարեն Կարապետյանի կատարած արարքում մեղքի առկայության մասին, և նման մոտեցումը կհանգեցնի անձնական պատասխանատվության սկզբունքի խախտման:

Կարեն Կարապետյանի մեղքի բացակայության մասին վկայում են նաև վերջինիս գործողությունները՝ ապրանքները տեղափոխող անձից՝ Ընկերության ներկայացուցչից առաքված ապրանքի փաստացի նետոտ քաշի վերաբերյալ տեղեկություններն ստանալուց, մասնավորապես՝ թիվ C 9402 ԲՄՀ-ն ներկայացնելուց հետո՝ Կարեն Կարապետյանը նույն օրը՝ 29.06.2011 թվականին, «Զվարթնոց» մաքսատան պետին ուղղված դիմումով հայտնել է, որ, ստացված տեղեկությունների համաձայն, ներմուծվող ապրանքի՝ ոսկյա ձուլակտորների փաստացի նետոտ քաշը հայտարարագրված 19,3կգ քաշից ավել է 3կգ-ով, և խնդրել է անվավեր ճանաչել հայտարարագիրը՝ ներմուծվող ապրանքի վերաբերյալ ճիշտ տեղեկություններով նոր հայտարարագիր ներկայացնելու նպատակով, որից հետևում է, որ նշված գործողություններով Կարեն Կարապետյանը հետապնդել է կատար-



ված արարքի հնարավոր բացասական հետևանքները կանխելու նպատակ: Ընդ որում, 01.07.2011 թվականին կազմված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է Կարեն Կարապետյանի կողմից 29.06.2011 թվականին ներկայացված դիմումի հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքում:

Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի 12.10.2010 թվականի թիվ ՍԳՈ-920 որոշմամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշման եզրաքարերից է համաչափության սկզբունքը, որն ապահովում է նշված նորմով սահմանված վարչական պատասխանատվության և դրանով հետապնդվող նպատակի՝ հարկեր, տուրքեր և պարտադիր այլ վճարներ մուծելու՝ անձանց սահմանադրական պարտականության կատարման հավասարակշռությունը, այլ կերպ ասած՝ սահմանված պատասխանատվությունը պետք է համաչափ լինի կատարված իրավախախտման հասարակական վտանգավորության աստիճանին և դրա հետևանքներին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերության (Պատվիրատու) և «Կարեն Կարապետյան» ԱԶ-ի (Կատարող) միջև 02.05.2011 թվականին կնքված «Ծառայությունների մատուցման մասին» թիվ 44 պայմանագրի 1.1-րդ կետով Կատարողը պարտավորվել է Պատվիրատուի համար, նրա անունից, հանձնարարությամբ, լիազորագրով և միջոցների հաշվին իրականացնել մաքսային ձևակերպումներ և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն, ինչպես նաև այլ միջնորդական գործառնություններ, որոնք վերաբերում են մաքսային գործին, իսկ Պատվիրատուն էլ պարտավորվել է վճարել այդ ծառայությունների համար (**հատոր 1-ին, գ.թ. 71-72**):

2) «Կարեն Կարապետյան» ԱԶ-ի կողմից 29.06.2011 թվականին թիվ C 9402 ԲՄՀ-ով Ընկերության անվամբ հայտարարագրվել են 19,3կգ քաշով, 939.575,47 ԱՄՆ դոլար արժեքով (մաքսային արժեք՝ 349.425.763 ՀՀ դրամ) ոսկյա ձուլակտորներ (**հատոր 1-ին, գ.թ. 30**):

3) Անհատ ձեռնարկատեր Կարեն Կարապետյանը «Չվարթնոց» մաքսատան պետին ուղղված 29.06.2011 թվականի դիմումով հայտնել է, որ Ընկերության անվամբ Ավստրիայից Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել բեռ (ոսկյա ձուլակտորներ): Վերոգրյալ բեռը ձևակերպվել է 29.06.2011 թվականին թիվ C 9402 ԲՄՀ-ով: Ուղեկցող փաստաթղթերի մեջ առկա հաշիվ-ապրանքագրերում ձուլակտորների զուտ նետտո քաշը կազմել է 19,3կգ, որը և ձևակերպվել է այդ քաշով, սակայն ձևակերպելուց ընդհանուր առմամբ ավստրիական «Raiffeisen Bank International» կազմակերպությունից (այսուհետ՝ Կազմակերպություն) տեղեկացվել է այն մասին, որ տվյալ բեռի մեջ փաստացի քաշը և քանակը չի համապատասխանում հաշիվ-ապրանքագրում նշված քանակին և քաշին՝ ավել է 3կգ-ով: Այդ տեղեկությունն ստանալուց հետո կատարվել է բեռի գնում և հայտնաբերվել է, որ, իսկապես, ձուլակտորների նետտո քաշը կազմում է 22,3կգ, բայց նույնիսկ պարկերի մեջ բացակայում էր 3կգ քաշով և քանակով հաշիվ-ապրանքագիրը:

Վերոգրյալի հիման վրա անհատ ձեռնարկատեր Կարեն Կարապետյանը խնդրել է թիվ C 9402 ԲՄՀ-ն ճանաչել անվավեր՝ նորը հայտարարագրելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 78**):

4) Կոմիտեի «Չվարթնոց» մաքսատան 01.07.2011 թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ բացահայտվել է, որ Ընկերության անվամբ Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել փաստացի 22,3կգ նետտո քաշով

---

նսկյա ձուլակտորներ, սակայն Կարեն Կարապետյանի կողմից 29.06.2011 թվականի թիվ С 9402 ԲՄՀ-ով դրանք հայտարարագրվել են 19,3կգ նետտո քաշով (**հատոր 1-ին, գ.թ. 27**):

5) ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 20.07.2011 թվականի թիվ 06.4.15-06/000910-11/821 «ԲԳ» գրությամբ հայտնվել է, որ Կազմակերպության կողմից Ընկերությանն առաքված նսկյա ձուլակտորների վերաբերյալ խնդրի հետ կապված՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացված ուսումնասիրության, այդ թվում նաև՝ Կազմակերպությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ պարզվել է հետևյալը.

Ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ 29.06.2011 թվականին Երևան են ուղարկվել 22,3կգ քաշով նսկյա ձուլակտորներ, սակայն Կազմակերպության մեղքով՝ մոռացության պատճառով, «Falcon Airfreight» բեռնափոխադրող կազմակերպությանը չի ուղարկվել 3կգ քաշով նսկյա ձուլակտորների վերաբերյալ թիվ 201106103097 հաշիվ-ապրանքագիրը, որն ուղարկվել է ուշացումով՝ նսկյա ձուլակտորները Երևան առաքելուց հետո:

Միաժամանակ, «Falcon Airfreight» բեռնափոխադրող կազմակերպության կողմից 29.06.2011 թվականին և Կազմակերպության կողմից 30.06.2011 թվականին «Զվարթնոց» օդանավակայանի մաքսային ծառայությանն ուղարկվել են գրություններ, որոնցով նշվել է, որ Կազմակերպության կողմից թույլ տրված սխալի արդյունքում վերջինս մոռացել է «Falcon Airfreight» բեռնափոխադրող կազմակերպությանն ուղարկել թիվ 201106103097 հաշիվ-ապրանքագիրը (3կգ քաշով նսկյա ձուլակտորների համար), այն բեռնափոխադրող կազմակերպությանն է ուղարկվել ավելի ուշ, երբ նսկյա ձուլակտորներն արդեն առաքվել էին Երևան: Բացի այդ, «Falcon Airfreight» բեռնափոխադրող կազմակերպությունը 29.06.2011 թվականին «Զվարթնոց» օդանավակայանի մաքսային ծառայությանն է ուղարկել Վիեննա-Երևան չվերթով առաքված թիվ AWB020-83964694 բեռնագրով ուղեբեռին կից փաստաթղթերի ամբողջական փաթեթը, այդ թվում նաև՝ թիվ 201106103097 հաշիվ-ապրանքագիրը:

Նշված փաստերը վկայում են այն մասին, որ առաջացած խնդիրներում բացակայում է Ընկերության մեղավորությունը (**հատոր 1-ին, գ.թ. 18-19**):

6) Վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Աբրահամյանի 18.08.2011 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ Կարեն Կարապետյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով, և տուգանվել է չհայտարարագրված 3կգ նետտո քաշով նսկյա ձուլակտորի մաքսային արժեքի չափով՝ 55.015.243 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 7-10**):

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճարել բողոքի քննության ընդունումը Վճարել դատարանը պայմանավորում է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ միասնական դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ:*

Վիճելի իրավահարաբերության ծագման (վիճարկվող որոշումն ընդունելու) պահին գործող խմբագրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, այսինքն՝ **դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելը**, ինչպես նաև հայտարարագրումը ոչ

իրենց անվանմամբ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժ» և «Ժա» կետերի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝

**ապրանքներ տեղափոխող անձ է** համարվում ապրանքների սեփականատեր, գնորդ հանդիսացող կամ ապրանքների նկատմամբ տիրապետման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքներն իր անունից նույն օրենսգրքով նախատեսված կարգով տնօրինման լիազորություններով օժտված անձը:

**հայտարարատու է համարվում ապրանքներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձը, որը մաքսային մարմիններում հայտարարագրում և ներկայացնում է ապրանքները և տրանսպորտային միջոցները:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **հայտարարատուն նույն օրենսգրքի համաձայն կրում է պատասխանատվություն՝ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **մինչև հայտարարագրումը հայտարարատուն իրավունք ունի մաքսային հսկողության ներքո գննել և չափել ապրանքները** և տրանսպորտային միջոցները, մաքսային մարմնի համաձայնությամբ վերցնել նմուշներ կամ փորձանմուշներ այն պայմանով, որ դրանք կներառվեն ներկայացված հայտարարագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում՝ նույն օրենսգրքով նախատեսված կարգով:

ՀՀ մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատուն մաքսային հայտարարագիրը ներկայացնում է մաքսային մարմին: Ներկայացված մաքսային հայտարարագիրը գրանցվում է մաքսային մարմնում, ինչի կապակցությամբ մաքսային մարմինը մաքսային հայտարարագրի վրա նշում է գրանցման հերթական համարը և գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին:

Ներկայացված մաքսային հայտարարագիրն ընդունում է մաքսային մարմինը, ինչի կապակցությամբ վերջինս մաքսային հայտարարագրի վրա նշում է ընդունման հերթական համարը, ամսաթիվը, ամիսը, տարին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մաքսային հայտարարագրի ընդունման պահից այն համարվում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ մաքսային հայտարարագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մինչև դրա ընդունումը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

---

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **Ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է սույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի սույն գլխին չհակասող մասով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անզգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անզգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքների առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

Նշված իրավական նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը, որը կարող է արտահայտվել նաև դրանց մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելու միջոցով, մեղավոր անձի նկատմամբ առաջացնում էր այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով տուգանքի նշանակում: Ընդ որում, **մաքսային կանոնները խախտած անձը պատասխանատվության է ենթակա այդ կանոններն ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշորեն խախտելու համար** (*Տես նաև՝ ըստ հայցի Արամ Բաբայանի ընդդեմ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ Կոմիտեի հետաքննության վարչության պետի 23.04.2009 թվականի որոշումը չեղյալ համարելու պահանջի մասին թիվ ՎԴ/2122/05/09 գործով ՀՀ Վճարելի դատարանի 12.03.2010 թվականի որոշումը:*

**Իսկ որպես մաքսային կանոնների խախտման սուբյեկտ (զանցառու) կարող է հանդես գալ հայտարարատուն, այն է՝ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը՝ կախված նրանց մեղքի աստիճանից:** Այսինքն՝ յուրաքանչյուր խախտման դեպքում մաքսային մարմինը պետք է պարզի հայտարարատուի մեղքի աստիճանը, որից հետո միայն հնարավոր կլինի բացահայտել իրավախախտում թույլ տված անձին: Միաժամանակ, հայտարարատուի մեղքը պարզելու համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ ապրանքներ տեղափոխող անձի կողմից լիազորված անձը՝ որպես հայտարարատու հանդես գալիս, ունի նաև որոշակի իրավունքներ և պարտականություններ, որոնք ուղղված են ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացնելուն: Այսպես՝ վերջինս մինչև հայտարարագրումն իրավունք ունի զննել և չափել ապրանքները և տրանսպորտային միջոցները, մաքսային մարմնի համաձայնություններ վերցնել նմուշներ կամ փորձանմուշներ, և նա պարտավոր է ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումն իրականացնել օրենքով նախատեսված կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ **ապրանքներ տեղափոխող անձի կողմից լիազորված անձը չի օգտվում իր՝ օրենքով երաշխավորված իրավունքներից, այլ հիմնվում է բացառապես ապրանքներ տեղափոխող անձի կողմից իրեն ներկայացված տեղեկությունների վրա, ապա նա է կրում ոչ արժանահավատ տեղեկությունների ներկայացման բացասական հետևանքների ռիսկը:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և «Կարեն Կարապետյան» ԱԶ-ի միջև 02.05.2011 թվականին կնքված «Ծառայությունների մատուցման մասին» թիվ 44 պայմանագրով վերջինս պարտավորվել է Ընկերության համար, նրա անունից և հանձնարարությամբ, լիազորագրով և միջոցների հաշվին իրականացնել մաքսային ձևակերպումներ և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն, ինչպես նաև այլ միջնորդական գործառնություններ: Դրանից հետո «Կարեն Կարապետյան» ԱԶ-ի կողմից 29.06.2011 թվականին թիվ C 9402 ԲՄՀ-ով Ընկերության անվամբ հայտարարագրվել են 19,3կգ քաշով, 939.575,47 ԱՄՆ դոլար արժեքով (մաքսային արժեք՝ 349.425.763 ՀՀ դրամ) ոսկյա ձուլակտորներ: Մինչդեռ, Կոմիտեի «Զվարթնոց» մաքսատան 01.07.2011 թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրությամբ հաստատվում է, որ Ընկերության անվամբ Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել փաստացի 22,3կգ նետոտ քաշով ոսկյա ձուլակտորներ, սակայն Կարեն Կարապետյանի կողմից 29.06.2011 թվականի թիվ C 9402 ԲՄՀ-ով դրանք հայտարարագրվել են 19,3կգ նետոտ քաշով: Նշված հանգամանքը հաստատվում է նաև անհատ ձեռնարկատեր Կարեն Կարապետյանի՝ «Զվարթնոց» մաքսատան պետին ուղղված 29.06.2011 թվականի դիմումով, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 20.07.2011 թվականի թիվ 06.4.15-06/000910-11/821 «ԲԳ» գրությամբ: Արդյունքում, Վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 18.08.2011 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ Կարեն Կարապետյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով, և տուգանվել է չհայտարարագրված 3կգ նետոտ քաշով ոսկյա ձուլակտորի մաքսային արժեքի չափով՝ 55.015.243 ՀՀ դրամ:

Տվյալ դեպքում Դատարանը հայցը բավարարելու, իսկ հակընդդեմ հայցը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածով օրենսդիրը հնարավորություն է տվել հայտարարատուին մինչև հայտարարագրումը գննել և չափել ապրանքները: Մինչդեռ, Կարեն Կարապետյանը չի օգտվել իրեն ընձեռված այդ հնարավորությունից: Ավելին, Դատարանը գտել է, որ Կարեն Կարապետյանը, Ընկերության հետ 02.05.2011 թվականին կնքելով «Ծառայությունների մատուցման մասին» թիվ 44 պայմանագիրը և լինելով պատասխանատու՝ մաքսային մարմնում հայտարարագրվող ապրանքների վերաբերյալ ճիշտ տեղեկություններ ներկայացնելու հարցում, իր վրա է վերցրել ռիսկը՝ Ընկերության կողմից սխալ տվյալներ ներկայացվելու դեպքում:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում ապրանքներ տեղափոխող անձի՝ Ընկերության հանձնարարությամբ, վերջինիս անունից և ի շահ նրան գործող լիազորված անձ Կարեն Կարապետյանի կատարած արարքի՝ Ընկերության անվամբ ներմուծված ապրանքը՝ ոսկյա ձուլակտորները, այդ ապրանքի վերաբերյալ տրամադրված տեղեկությունների՝ հաշիվ-ապրանքագրերի հիման վրա թիվ C 9402 ԲՄՀ-ով հայտարարագրելիս ապրանքի փաստացի նետոտ քաշի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ հայտարարագրելու մեջ բացակայում է Կարեն Կարապետյանի մեղքը: Այսինքն՝ բացակայում է զանցակազմի այն պարտադիր տարրը, որը թույլ կտար վերջինիս կատարված արարքի համար ենթարկել վարչական պատասխանատվության: Դեռ ավելին, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Կարեն Կարապետյանի մեղքի բացակայության մասին վկայում են նրա գործողությունները:

Անդրադառնալով փաստարկին այն մասին, որ Կարեն Կարապետյանը՝ որպես հայտարարատու, իրավունք ուներ մինչև ապրանքը հայտարարագրելն իրականացնել դրա գնում՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ այն անհիմն է, քանի որ Կարեն Կարապետյանը գործել է Ընկերության հետ կնքված պայմանագրի և դրա հիման վրա տրված լիազորագրի շրջանակներում, որպիսի փաստաթղթերով նրան չի վերապահվել վաճառո-

---

դի (առաքողի) կողմից առաքված ապրանքը գնորդի (տեղափոխողի) անունից ընդունելու լիազորություն, որի բացակայության դեպքում վերջինիս կողմից ապրանքի տարան (կապարակնքված արկղը) բացելու դեպքում նա կանցներ պայմանագրով և լիազորագրով իրեն վերապահված լիազորությունները:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վկայակոչված պատճառարանություններն անհիմն են, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 132-րդ հոդվածի ուժով հայտարարատուն պարտավոր է ապրանքի հայտարարագրումն իրականացնել վկայակոչված օրենսգրքով նախատեսված կարգով, որպիսի պարտավորության պատշաճ կատարման համար հայտարարատուին իրավունք է վերապահվել նաև առանց որևէ բացառության մինչև հայտարարագրումը գնել և չափել ապրանքները: Իսկ սույն վարչական գործի փաստերով էլ հաստատվում է այն հանգամանքը, որ Կարեն Կարապետյանը մինչև հայտարարագրումը չի օգտվել իր այդ իրավունքից և հայտարարագիրը ներկայացնելիս հիմնվել է բացառապես Ընկերության ներկայացրած տվյալների վրա:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառարանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

- 1) գնահատում է ապացույցները.
- 2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.
- 3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.
- 4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ընկերության և «Կարեն Կարապետյան» ԱԶ-ի միջև 02.05.2011 թվականին կնքված «Ծառայությունների մատուցման մասին» թիվ 44 պայմանագրի 1.1-րդ կետով վերջինս պարտավորվել է Ընկերության համար, նրա անունից, հանձնարարությամբ, լիազորագրով և միջոցների հաշվին իրականացնել մաքսային ձևակերպումներ և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն, ինչպես նաև այլ միջնորդական գործառնություններ, որոնք վերաբերում են մաքսային գործին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված պայմանագրով Ընկերության կողմից Կարեն Կարապետյանին տրված լիազորությունների ծավալն ամբողջությամբ ներառում է վերջինիս կողմից ՀՀ մաքսային օրենսգրքին համապատասխան իր պարտականությունները պատշաճ կատարելու համար անհրաժեշտ իրավունքները, այդ թվում նաև՝ ապրանքների գնման և չափման մասով:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն անհիմն է գնահատում Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Կարեն Կարապետյանը գործել է Ընկերության հետ կնքված պայմանագրի և դրա հիման վրա տրված լիազորագրի շրջանակներում, որպիսի փաստաթղթերով նրան չի վերապահվել վաճառողի (ատաբրոլի) կողմից առաքված ապրանքը գնորդի (տեղափոխողի) անունից ընդունելու լիազորություն, որի բացակայության դեպքում վերջինիս կողմից ապրանքի տարան (կապարակնաքված արկղը) բացելու դեպքում նա կանցներ պայմանագրով և լիազորագրով իրեն վերապահված լիազորությունները:

Իսկ Կարեն Կարապետյանի գործողությունների գնահատման մասով Վերաքննիչ դատարանի եզրահանգման հետ կապված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հաստատում են միայն նրա կողմից մաքսային կանոնների խախտումն անգուշությամբ կատարելու հանգամանքը, այլ ոչ թե մեղքի բացակայությունը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանն այն մասին, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվություն սահմանելիս իրավակիրառողը պարտավոր է պարզել, թե արդյոք հայտարարատուի կողմից թույլ տրված այդ խախտումը հանգեցրել է ապրանքի կամ տրանսպորտային միջոցի մաքսային արժեքի նվազեցմանը և օրենքով սահմանված կարգով ու չափով մաքսատուրք վճարելու պարտականության ոչ պատշաճ կատարմանը, թե՛ ոչ, իսկ սույն գործով Ընկերության անվամբ առաքված ապրանքի՝ ոսկյա ձուլակտորների ընդհանուր նետտո քաշի վերաբերյալ 29.06.2011 թվականի թիվ C 9402 ԲՄՀ-ում ոչ ճիշտ տեղեկությունները հայտարարագրելը չի հանգեցրել օրենքով սահմանված կարգով և չափով մաքսային վճարներ վճարելու պարտականության ոչ պատշաճ կատարմանը, ապա Վճռաբեկ դատարանը նշված պատճառաբանությունը համարում է անհիմն, քանի որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը որևէ կերպ պատճառաբանված չէ:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը վկայակոչված պատճառաբանությանը հանգելու մասով որևէ կերպ չի անդրադարձել և գնահատական չի տվել սույն գործի այն փաստերին, որ Ընկերության անվամբ Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել փաստացի 22,3կգ նետտո քաշով ոսկյա ձուլակտորներ, սակայն Կարեն Կարապետյանի կողմից 29.06.2011 թվականի թիվ C 9402 ԲՄՀ-ով դրանք հայտարարագրվել են 19,3կգ նետտո քաշով:

Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է պարզել այն հանգամանքը, թե տվյալ դեպքում տեղափոխվող ապրանքի մասին ճշգրիտ տեղեկություններ չհայտարարագրելն արդյոք հանգեցրել է այդ ապրանքի մաքսային արժեքի նվազեցմանը և օրենքով սահմանված կարգով և չափով մաքսատուրք վճարելու պարտականության ոչ պատշաճ կատարմանը, թե՛ ոչ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

---

*Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայասխանում  
քերված փաստարկները:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի  
118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 22.02.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝  
նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ըն-  
թացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և  
ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/0990/05/11**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ /0990/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահողությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի նոյեմբերի 29-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ վարչական ակտերն ամբողջությամբ վերացնելու, բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու, վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և գործողություն կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 10.02.2011թվականի թիվ 3577/8 որոշումը և 18.02.2011 թվականի թիվ 4494/8-2 որոշումը, պարտավորեցնել Կոմիտեին ընդունել նոր որոշում՝ թույլատրելով Կազմակերպությանը շարունակել ինքնահայտարարագրել ներմուծվող կրոնական գրականությունը՝ առանց մաքսային ձևակերպումների մասնագետի ծառայությունների, պարտավորեցնել Կոմիտեին ակտիվացնել TWM մաքսային ձևակերպումների ավտոմատ համակարգչային

---

ծրագիր մուտք գործելու Կազմակերպության կողմը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 12.12.2012 թվականի վճռով հայրը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.05.2013 թվականի որոշմամբ Կազմակերպության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը, 132-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ Կառավարության «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 1779-Ն որոշումը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն է հետևյալ փաստարկներով.*

Դատարանն օրենքի խախտմամբ եզրահանգել է, որ Կազմակերպությունը չի կարող ինքնուրույն հայտարարագիր ներկայացնել, քանի որ որպես հայտարարատու հանդես գալու անհրաժեշտ լիազորությունները հավաստող պարտադիր փաստաթուղթ է դիտարկվում նաև մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթը: Վերաքննիչ դատարանի որոշման արդյունքում իմաստագրվում է բեռի սեփականատիրոջ կողմից սեփական բեռն առանց մաքսային միջնորդի ծառայությունից օգտվելու հայտարարագրելու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը: Մինչդեռ, ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժ» և «ժա» կետերի, 131-րդ հոդվածի 1-ին մասի, 132-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 1779-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 6-րդ կետի համադրված վերլուծության հիման վրա բողոք բերող անձը եզրահանգում է, որ ապրանք տեղափոխող անձը կարող է հայտարարագրումը կատարել ինքնուրույնաբար, որի դեպքում չի կարող ներկայացվել մասնագետի որակավորումը հաստատող վկայական ներկայացնելու պահանջ: Ըստ բողոք բերող անձի՝ նման պահանջ կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հայտարարագրումը կատարվում է մաքսային բրոքերի միջոցով: Որոշման 6-րդ կետի «բ» ենթակետը կիրառելի է միայն այն դեպքի առնչությամբ, երբ որպես հայտարարատու հանդես է գալիս մաքսային միջնորդը:

Դատարանը նաև, ի խախտում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների, պատշաճ գնահատականի չի արժանացրել Կազմակերպության կողմից 2008-2011 թվականներին իր կողմից ստացվող բեռներն առանց մասնագետի օգնության ինքնուրույնաբար հայտարարագրելու փաստը հաստատող ապացույցներն ու իրավական հիմնավորումները:

Դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ ի կատարումն Դատարանի 08.06.2011 թվականի «Անհրաժեշտ ապացույցների հետազոտման նպատակով պահանջելու մասին» որոշման Կոմիտեն այդպես էլ Դատարանին չի ներկայացրել որևէ տեղեկատվություն՝ հիմնավորելու համար իր կողմից դեռևս 2008 թվականի Կազմակերպությանը տրամադրված հայտարարագրի ներկայացման ավտոմատ համակարգ մուտք գործելու

ծածկագրի և դրա ակտիվացման հիմքերի վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2013 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կազմակերպության լիազորված անձ Գևորգ Զաքարյանը 2008 թվականից մինչև 2011 թվականի փետրվար ամիսը, շահադիսանալով մասնագիտական որակավորում ունեցող անձ, կատարել է հայտարարագրում էլեկտրոնային եղանակով՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային TWM ծրագրով: 2011 թվականի փետրվարին հերթական ձևակերպում կատարելիս պարզվել է, որ նշված ծրագրին մուտքն արգելափակված է մաքսային մարմնի կողմից՝ մասնագիտական որակավորում չունենալու պատճառաբանությամբ:

2) Կազմակերպության կողմից 08.02.2011 թվականին Կոմիտեի նախագահին ուղղված թիվ 6 դիմումի համաձայն՝ Կազմակերպությունը խնդրել է ցուցում տալ Կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետին ակտիվացնելու Կազմակերպության անունով գոյություն ունեցող գաղտնաբառը, ցուցում տալու վարչության պետին ապագայում անցկացվելիք մաքսային միջնորդի որակավորման հերթական քննություններից հետո ապակտիվացնել Կազմակերպության կողմից ինքնահայտարարագրման նպատակով օգտագործվող գաղտնաբառը (**հատոր 1-ին, գ.թ. 89-90**):

3) Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 10.02.2011 թվականի թիվ 3577/8-2 գրությամբ Կազմակերպությանը պատասխան է տրվել, որ համաձայն ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1779-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի «բ» ենթակետի՝ մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթը համարվում է անձի՝ որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթղթերից մեկը (**հատոր 1-ին, գ.թ. 92**):

4) Կազմակերպության կողմից 15.02.2011 թվականին Կոմիտեի Նախագահին ներկայացվել է նույնաբովանդակ թիվ 9 դիմումը (**հատոր 1-ին, գ.թ. 93-94**):

5) Կոմիտեի նախագահի տեղակալի 18.02.2011 թվականի թիվ 4494/8-2 գրության համաձայն՝ ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1779-Ն որոշումը չի կարող հակասել ՀՀ մաքսային օրենսգրքի դրույթներին, քանի որ համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 141-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ և տրանսպորտային միջոցներ տեղափոխող կամ այնպիսի գործունեություն իրականացնող անձինք, որոնց նկատմամբ մաքսային մարմիններն իրականացնում են վերահսկողություն, պարտավոր են մաքսային մարմիններ ներկայացնել մաքսային հսկողությունն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (**հատոր 1-ին, գ.թ. 96**):

### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

---

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրման պարզաբանումը. արդյո՞ք առանց մաքսային միջնորդի (բրոքերի) ծառայությունից օգտվելու ապրանքների հայտարարագրում կատարելու դեպքում ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը պարտավոր է ներկայացնել մաքսային մասնագետի որակավորումը հաստատող փաստաթուղթ:*

Ելված իրավական հարցադրման պարզաբանման միջոցով Վճռաբեկ դատարանի խնդիրն է օրենքների միատեսակ կիրառումն ապահովելու իր գործառույթի շրջանակներում ապահովել միասնական դատական պրակտիկա ապրանքների հայտարարագրման գործընթացում պահանջվող փաստաթղթերի առկայությամբ:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժա» կետում սահմանված է «հայտարարատու» հասկացությունը: Ըստ այդ դրույթի՝ հայտարարատու է համարվում ապրանքներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձը, որը մաքսային մարմիններում հայտարարագրում և ներկայացնում է ապրանքները և տրանսպորտային միջոցները:

ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ժ» կետը սահմանում է «ապրանքներ տեղափոխող անձ» հասկացությունը: Ըստ այդ դրույթի՝ ապրանքներ տեղափոխող անձ է համարվում ապրանքների սեփականատեր, գնորդ հանդիսացող կամ ապրանքների նկատմամբ տիրապետման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքներն իր անունից օրենսգրքով նախատեսված կարգով տնօրինման լիազորություններով օժտված անձը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային միջնորդը (բրոքերը) մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն իրականացնող ՀՀ անձն է, որը գործում է ապրանքներ տեղափոխող անձանց հանձնարարությամբ՝ իր անունից: Մաքսային միջնորդի և նրա կողմից ներկայացվող անձի հարաբերությունները կարգավորվում են օրենքով և նրանց միջև կնքված պայմանագրով:

Նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային միջնորդի (բրոքերի) անունից մաքսային ձևակերպումները կարող է իրականացնել միայն վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված կարգով մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ստացած Հայաստանի Հանրապետության քաղաքացին: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է մասնագետին ներկայացվող պահանջները:

Վերոհիշյալ նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ հայտարարագրում կարող է կատարվել.

Ապրանքներ տեղափոխող անձի կողմից՝ անձամբ,

Ապրանքներ տեղափոխող անձի կողմից՝ իր լիազորած անձի միջոցով,

Մաքսային բրոքերի կողմից:

ՀՀ մաքսային օրենսգրքը մաքսային ձևակերպումները մասնագետի որակավորում ունեցող անձի միջոցով իրականացնելու պահանջ սահմանում է միայն այն դեպքում, երբ որպես հայտարարատու հանդես է գալիս մաքսային բրոքերը (հոդված 70): Մինչդեռ այն դեպքում, երբ հայտարարագրումն իրականացնում է ապրանքներ տեղափոխող անձն անձամբ կամ լիազորված անձի միջոցով, ՀՀ մաքսային օրենսգրքով նման որակավորման առկայության պահանջ չի նախատեսվում: ՀՀ մաքսային օրենսգրքը չի բովանդակում որևէ դրույթ, որը հայտարարագրումը կատարող՝ տեղափոխող անձի համար սահմանի մասնագետի որակավորում ունենալու պարտականություն կամ հայտարարագրումը մաս-

նագետի որակավորում ունեցող անձին լիազորելու պարտականություն:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Սահմանադրական այս սկզբունք-նորմն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածում, որի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները կարող են սահմանվել բացառապես օրենքով: Այս սահմանադրական դրույթը բացառում է գործադիր իշխանության մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պարտականություններ սահմանելու իրավազորությունը: Սահմանադրական այս նորմին համահունչ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1-րդ մասը սահմանում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ օրենքով նախատեսված իրավունքների կամ պարտականությունների իրականացումը կանոնակարգող կանոններ, կարգեր կամ տեխնիկական նորմեր օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում և սահմաններում կարող են նախատեսվել իրավական այլ ակտերով, որոնք **չեն կարող պարունակել իրավունքների նոր սահմանափակումներ կամ պարտականություններ:**

ՀՀ մաքսային օրենսգրքի 141-րդ հոդվածը մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու լիազորությունը պատվիրակել է կառավարությանը: ՀՀ կառավարությունը նշված լիազորությունն իրացնելիս սահմանափակված է ՀՀ Սահմանադրության և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ դրույթներով: Այսինքն՝ սահմանելով մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ ՀՀ կառավարության որոշմամբ չեն կարող սահմանվել հայտարարատուի համար պարտականություններ, որոնք սահմանված չեն ՀՀ մաքսային օրենսգրքով:

ՀՀ կառավարությունը, իրացնելով ՀՀ մաքսային օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունը, ընդունել է «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» 21.11.2003 թվականի թիվ 1779-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում): Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքին համապատասխան՝ անձի անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթղթերն են՝

ա) անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ,

բ) անձի՝ որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթուղթը (լիազորագիր կամ նմանատիպ այլ փաստաթուղթ, մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավամեկնաբանողական կանոնը, համաձայն որի՝ եթե իրավական ակտն ընդունվել է ի կատարումն կամ համաձայն նույն կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, ապա այդ ակտը մեկնաբանվում է՝ առաջին հերթին հիմք ընդունելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի դրույթներն ու սկզբունքները: Նշված կանոնի հիման վրա Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթի մեկնաբանությունը պահանջում է նշված դրույթը դիտարկել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 83.5-րդ հոդվածի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1-րդ հոդվածի պահանջների լույսի ներքո՝ հաշվի առնելով, որ ՀՀ մաքսային օրենսգիրքը չի սահմանել հայտարարատու հանդիսացող՝ ապրանքներ տեղափոխող անձի՝ մասնագետի որակավորում ունենալու պարտականություն կամ հայտարարագրումը մասնագետի որակավորում ունեցող անձին լիազորելու պարտականություն: Որոշման նշված դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ հանգեցվի հայտարարատու հանդիսացող՝ ապրանքներ տեղափոխող

---

անձի համար օրենքով չնախատեսված պարտականություն սահմանելուն:

Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետում ստորակետով տարանջատված «լիազորագիր կամ նմանատիպ այլ փաստաթուղթ», « մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ» ձևակերպումները վերցված են փակագծերի մեջ, ինչը նշանակում է, որ դրանք որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթղթի տարատեսակներ են, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնելու պահանջը պետք է որոշվի ըստ ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված վերոնշյալ իրավակարգավորման: Այսինքն՝ հաշվի առնելով, որ ՀՀ մաքսային օրենսգրքը մասնագետի որակավորում ունեցող անձի միջոցով մաքսային ձևակերպումները կատարելու պարտականություն սահմանում է միայն մաքսային միջնորդի (բրոքերի) համար, մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթը հայտարարատուի լիազորությունը հաստատող փաստաթուղթ է, և նման փաստաթուղթ ներկայացնելու պահանջ կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հայտարարատուն մաքսային միջնորդն է: Մինչդեռ, այն դեպքում, երբ հայտարարագրումը կատարում է ապրանքներ տեղափոխող անձն իր կողմից լիազորված անձի միջոցով, նկատի ունենալով, որ ՀՀ մաքսային օրենսգրքին այդ դեպքերում ապրանքներ տեղափոխող անձի համար չի սահմանում մասնագետի որակավորում ունեցող անձին լիազորելու պարտականություն, հայտարարատուի լիազորությունը հաստատող փաստաթուղթ է հանդիսանում լիազորագիրը կամ նման այլ փաստաթուղթ: Նույն հիմնավորմամբ՝ եթե հայտարարագրումն իրականացնում է անձամբ ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը, ապա լիազորությունները հաստատող անհրաժեշտ փաստաթղթերի շրջանակը սահմանափակվում է 6-րդ կետի «ա» ենթակետում նշված փաստաթղթով, այն է՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետում նշված մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պահանջը չի վերաբերում այն դեպքերին, երբ հայտարարագրումն իրականանցում է ապրանքներ տեղափոխող անձն անձամբ կամ լիազորված անձի միջոցով:

Սույն գործով Դատարանը, մերժելով հայցը, իր 12.12.2012 թվականի վճիռը պատճառաբանել է հետևյալ կերպ. «Մաքսային հայտարարագրերի լրացման ավտոմատ համակարգում մուտքի ծածկագիր անձին կարող է տրամադրվել ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1779-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերի, այն է՝ անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, անձի՝ որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթուղթ (լիազորագիր կամ նմանատիպ այլ փաստաթուղթ, մաքսային մասնագետի որակավորում ունենալը հաստատող փաստաթուղթ) ներկայացնելու դեպքում: ...«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ պարբերության մեկնաբանմամբ որպես հայտարարատու հանդես գալու համար անհրաժեշտ լիազորությունները հաստատող փաստաթուղթ հասկացության տակ ի նկատի է ունեցվում ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի «Մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 1779-Ն որոշման թիվ 1 հավելվածի 6-րդ կետի բ) կետով թվարկված բոլոր պայմանների պարտադիր առկայությունը, տվյալ դեպքում և լիազորագիրը, և մաքսային մասնագետի որակավորման համապատասխան վկայականը»:

Վերաքննիչ դատարանը ևս, մեկնաբանելով Որոշման 1-ին հավելվածի 6-րդ հոդվածի «բ» ենթակետի դրույթները «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի

---

կանոններով, գտել է, որ դրանում նշված պայմանների ստորակետով անջատված լինելու հանգամանքը նշանակում է, որ այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է: Վերաքննիչ դատարանը մասնավորապես նշել է. «ՀՀ կառավարության 21.11.2003 թվականի թիվ 1779-Ն որոշման թիվ 1 հավելվածի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված փաստաթղթի պահանջը հավասարապես վերաբերում է նաև ապրանքներ տեղափոխող անձին նաև մաքսային միջնորդին: Սա նշանակում է, որ մաքսային մարմիններում որպես հայտարարատու հանդես գալու համար ապրանքներ տեղափոխող անձի կամ նրա լիազորված անձի համար անհրաժեշտ է ունենալ լիազորությունները հավաստող փաստաթուղթ և մաքսային մասնագետի որակավորման վկայական:», «...բողոքաբերը նույնացրել է «մաքսային միջնորդ» և «մաքսային մասնագետ» եզրույթները, և կրկին եկել եզրահանգման, որ Որոշման 6-րդ կետի «բ» ենթակետը չի տարածվում սեփականատիրոջ կողմից բեռների ինքնահայտարարագրման դեպքերի վրա: ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի «ը» կետի և 68-րդ հոդվածի նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ մաքսային միջնորդը (բողոքերը) մաքսային ձևակերպումների և մաքսային հսկողության հետ կապված գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետության անձն է (իրավաբանական կամ ֆիզիկական), որը գործում է ապրանքներ տեղափոխող անձանց հանձնարարությամբ՝ իր անունից, իսկ օրենսգրքի 70-րդ հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ մաքսային մասնագետը վերադաս մաքսային մարմնի կողմից սահմանված կարգով մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ստացած Հայաստանի Հանրապետության քաղաքացին է, հետևաբար իրավական այս եզրույթները նույնական չեն: Ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա լիազորված անձը, գործող օրենսդրության պահանջները պահպանելով, կարող են ինքնուրույն, առանց մաքսային միջնորդի ծառայությանը դիմելու, հայտարարագրել ՀՀ ներմուծված ապրանքները: Սակայն ապրանքներ տեղափոխող անձը, հանդես գալով որպես հայտարարատու, պարտավոր է մաքսային մարմնին ներկայացնել իր լիազորությունը հաստատող փաստաթուղթ և մաքսային մասնագետի որակավորում ունենալու փաստը հաստատող ապացույց»:

Նշված դատական ակտերի վերլուծությունից բխում է, որ Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետին դատարանների կողմից տրված մեկնաբանության համաձայն՝ ապրանքներ տեղափոխող անձը կարող է լիազորել հայտարարագրումը միայն մասնագիտական որակավորում ունեցող անձի, լիազորված անձի միջոցով հայտարարագրում կատարելու դեպքում լիազորված անձը պետք է ունենա մասնագետի որակավորում: Ավելին, նույնիսկ եթե անձամբ է հայտարարագրում՝ առանց լիազորված անձի, այս դեպքում ապրանքներ տեղափոխող անձն ինքը պետք է ունենա մասնագիտական որակավորում:

Դատարանի և Վերաքննիչ դատարանի նման մեկնաբանությունը հիմնվել է միայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավական նորմի տառացի մեկնաբանության իրավամեկնաբանողական կանոնի վրա՝ անտեսելով նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրված կանոնակարգումները:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը և Վերաքննիչ դատարանը նման մեկնաբանության արդյունքում ապրանքներ տեղափոխող անձին վերագրել են պարտականություն, որը սահմանված չէ օրենքով: Մասն մեկնաբանությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասի, 83.5-րդ հոդվածի, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4.1-րդ հոդվածի պահանջներից:

Վերոհիշյալ վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը և Վերաքննիչ դատարանը սխալ են մեկնաբանել ՀՀ մաքսային օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը, 132-րդ հոդվածի 2-րդ մասը, Որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետը, ինչը հանգեցրել է վեճի սխալ լուծման:

---

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.05.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5445/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/5445/05/12  
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճարելի դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճարելի դատարան)

Նախագահող յայտարար

մասնակցության դատավորներ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Վ. ԱՐԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վճարելի բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սերգեյ Գրիգորյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի), ՀՀ ֆինանսների նախարարության՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու, ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված կարգով հայցվորի կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելուն Կոմիտեին պարտավորեցնելու և հայցվորի կողմից կատարված ծախսերը փոխհատուցելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սերգեյ Գրիգորյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի՝ 25.07.2012 թվականի հայցվորի դիմումը մերժելու մասին վարչական ակտը, որպես հայցվորի խախտված իրավունքի վերականգնում՝ պարտավորեցնել Կոմիտեին հայցվորի կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարությունից հոգուտ հայցվորի բռնագանձել վճարված պետական տուրքի գումարը և հայցվորի ավտոմեքենայի մաքսային պատասխանատու պահպանության հանձնելու հետ կապված ծախսի հաշվարկված գումարը, որը հաշվարկ-

---

վում է՝ սկսած 26.07.2012 թվականից մինչև հայցվորի ավտոմեքենայի մաքսագերծման պահը, և կազմում է մաքսային մարմինների կողմից ապրանքների պահպանման յուրաքանչյուր օրվա համար 1.300 ՀՀ դրամի չափով գանձման ենթակա գումար՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 110-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 15.03.2013 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.09.2013 թվականի որոշմամբ Սերգեյ Գրիգորյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Դատարանի 15.03.2013 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել: Սերգեյ Գրիգորյանի հայցն ընդդեմ Կոմիտեի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու, Կոմիտեին ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված կարգով հայցվորի կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարվել է: Անվավեր է ճանաչվել Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Աֆրիկյանի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությունը: Կոմիտեն պարտավորեցվել է Սերգեյ Գրիգորյանի կողմից ներմուծված «MERCEDES-BENZ CLK 320» (VIN-WDB209365-1F105934) մակնիշի 2004 թվականի արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը: Թիվ ՎԴ/5445/05/12 վարչական գործի վարույթն ըստ հայցի Սերգեյ Գրիգորյանի ընդդեմ Կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ հայցվորի կողմից կատարված ծախսերը փոխհատուցելու պահանջի մասին, կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի, ՀՀ մաքսային օրենսգրքի 81-84-րդ, 86-88-րդ հոդվածների պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաքանում է հետևյալ փաստարկներով.*

Ապրանքի մաքսային արժեքն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև ՀՀ մաքսային սահմանը տեղափոխելու համար: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի որոշման տրամաբանությունից հետևում է, որ ապրանքների մաքսային արժեքը ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված մեթոդի կիրառմամբ պետք է որոշվի բոլոր այն դեպքերում, երբ ապրանքի ձեռքբերման հաշիվ-ապրանքագիրն անարժանահավատ ճանաչելու հիմքեր չկան՝ անկախ ապրանքը ՀՀ մաքսային սահման հասցնելու համար կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի առկայությունից: Ըստ Վերաքննիչ դատարանի դիրքորոշման՝ Կոմիտեն յուրաքանչյուր դեպքում պետք է ապացուցի, թե ապրանքը տեղափոխողի կողմից մինչև ՀՀ մաքսային սահմանը հասցնելն ինչպիսի ծախսեր են կատարվել և նոր միայն առաջարկի ապրանք տեղափոխողին ներկայացնել այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթեր: Մինչդեռ, ապրանքի ձեռքբերման և մինչև ՀՀ մաքսային սահման տեղափոխման համար կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը մաքսային մարմիններին ներկայացնելու պարտականությունը, ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն, կրում է ապրանքներ տեղափոխողը: Իսկ վերջինիս կողմից դրանք չներկայացնելու կամ ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում մաքսային մարմիններն ապրանքի

մաքսային արժեքը որոշում են ՀՀ մաքսային օրենսգրքի 89-93-րդ հոդվածներով սահմանված կարգով:

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել Կոմիտեի փաստարկն այն մասին, որ «FOB» պայմանով գնված մեքենայի ձեռքերման փաստաթուղթը չի պարունակում նշված առաքման պայմանի կիրառման դեպքում պարտադիր նավի վրա բարձելու ծախսը: Իսկ թիվ 133342 հաշիվ-ապրանքագրում բացակայում են առանձին տողերով ավտոմեքենան մինչև Մագոյա նավահանգիստ տեղափոխելու և նավի վրա բեռնելու համար կատարված ծախսերը:

Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով եկել է այն եզրակացության, որ Սերգեյ Գրիգորյանը նշված ավտոմեքենան Բայթումի նավահանգստում նավից բեռնաթափելու պարտականություն չի կրել և այդ նպատակով որևէ ծախս չի կատարել: Մասնավորապես, 04.07.2012 թվականի թիվ MSCUJO859399 ապրանքների բեռնման, ստացման և փոխանցագրի կանոնավոր ձևաթղթից հետևում է, որ ապրանքն առաքման վայր՝ Բայթումի է հասցվել կոնտեյներով: Տվյալ փաստաթղթից պարզ է դառնում, որ քննարկվող դեպքում գործ ունենք «Ֆրախտ» հասկացության հետ, որում չի կարող ներառվել ապրանքների բեռնումը կամ բեռնաթափումը:

Ինչ վերաբերում է «Վիտլ Պետրոլի ԵՄ Ջորջիա» ՍՊ ընկերության կողմից 100 վրացական լարիի վճարման վերաբերյալ տրված դրամարկղային կտրոնին, ապա դրա ուսումնասիրությունից անգամ պարզ չէ, թե ում է այն տրվել և ինչ ապրանք գնելու համար:

*2) Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ մաքսային օրենսգրքի 95-րդ և 96-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումներ պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Սերգեյ Գրիգորյանի կողմից ներմուծված ավտոմեքենայի վերաբերյալ մաքսային հայտարարագիր ներկայացված չլինելու պարագայում, երբ դեռևս չի որոշվել մեքենայի մաքսային արժեքը, չի ընտրվել մաքսային արժեքի որոշման մեթոդը, մաքսային արժեքի որոշման մասին որևէ տեղեկություն տրամադրվել չի կարող, քանի որ մաքսային արժեք դեռևս որոշված չէ: Մաքսային արժեքը որոշվում է ապրանքի վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելուց հետո ՀՀ մաքսային օրենսգրքի 14-րդ գլխով սահմանված մեթոդներով և հերթականությամբ:

Կոմիտեի պատասխանը չի կարող դիտվել որպես վարչական ակտ, որը սահմանում կամ սահմանափակում է հայցվորի իրավունքը՝ որոշելու իր կողմից հայտարարագրվող ապրանքի արժեքը ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված մաքսային արժեքի մեթոդով: Դրա պատճենը մաքսատուն ուղարկելու փաստը կարող է դիտարկվել որպես Կոմիտեին ներկայացված դիմումին կից փաստաթղթերի և տվյալների շրջանակում մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդ կիրառելու վերաբերյալ դիրքորոշման մասին տեղեկացում, այլ ոչ թե հանձնարարական:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 24.09.2013 թվականի որոշումը՝ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու և Կոմիտեին իր կողմից ներմուծված Ավտոմեքենայի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը կիրառելուն պարտավորեցնելու մասով և այդ մասով օրինական ուժ տալ Դատարանի 15.03.2013 թվականի վճռին:

---

---

### **3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 25.04.2012 թվականի թիվ 776923 «ՊՐՈՖՈՐՄԱ ԻՆՎՈՅՄԻ» և 19.05.2012 թվականի թիվ 133342 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը «Թրասթ Քամփնի» ՍՊԸ-ից ճապոնիայում 10.000 ԱՄՆ դոլարով ձեռք է բերել 2004 թվականի արտադրության օգտագործված «Մերսեդես-Բենց CLK 320» ավտոմեքենա (այսուհետ՝ Ավտոմեքենա): Նույն հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Ավտոմեքենան ձեռքբերման վայրից մինչև ճապոնիայի Նագոյա նավահանգիստ (FOB Նագոյա) տեղափոխելու համար Սերգեյ Գրիգորյանի կողմից ենթակա է վճարման 300 ԱՄՆ դոլար (**Հատոր 1-ին, գ.թ. 19-20, Հատոր 3-րդ, գ.թ. 8-10**):

2) «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի 27.04.2012 թվականի արժույթի վճարման հանձնարարականի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը «Թրասթ Քամփնի» ՍՊԸ-ին փոխանցել է 10.300 ԱՄՆ դոլար, միջնորդավճարը կազմել է 11.000 ՀՀ դրամ: Վճարման հանձնարարականի «Վճարման մանրամասները/Գործարքի նպատակը» տողում կատարված նշումների համաձայն՝ կատարված վճարման հիմք է հանդիսացել թիվ 776923 հաշիվ-ապրանքագիրը (**Հատոր 1-ին, գ.թ. 21**):

3) 02.07.2012 թվականի թիվ 11135 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ ճապոնիայի Նագոյա նավահանգստից մինչև Վրաստանի Բաթումի նավահանգիստ Ավտոմեքենան տեղափոխելու համար (Ծովային բեռնափոխադրում MEDU 8921128) Սերգեյ Գրիգորյանի կողմից «ՋՈՐՋԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին վճարման է ենթակա 1.265 ԱՄՆ դոլար (**Հատոր 1-ին, գ.թ. 22-23**):

4) «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի 04.07.2012 թվականի արժույթի վճարման հանձնարարականի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը «ՋՈՐՋԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին է փոխանցել 1.265 ԱՄՆ դոլար, միջնորդավճարը կազմել է 16.000 ՀՀ դրամ: Վճարման հանձնարարականի «Վճարման մանրամասները/Գործարքի նպատակը» տողում կատարված նշումների համաձայն՝ կատարված վճարման հիմք է հանդիսացել 02.07.2012 թվականի թիվ 11135 ինվոյսը (**Հատոր 1-ին, գ.թ. 24**):

5) 04.07.2012 թվականի ապրանքների բեռնման, ստացման և փոխանցագրի կանոնավոր ձևաթղթի համաձայն՝ բեռնառաքիչ/արտահանող հանդիսանում է «Թրասթ Քամփնի» ՍՊԸ-ն, ապրանք ստացող՝ Սերգեյ Գրիգորյանը, ծանուցող կողմը՝ «ՋՈՐՋԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, բեռնման նավահանգիստը՝ ճապոնիա, Նագոյա, բեռնաթափման նավահանգիստը՝ Վրաստան, Բաթումի, փոխադրման տեսակը՝ նավ, կոնտեյներով, փոխադրավարձը պետք է վճարվի բեռն ստացողի կողմից: Նույն ձևաթղթի մեջ որպես փոխադրվող ապրանք նշված է Ավտոմեքենան (**Հատոր 2-րդ, գ.թ. 54-55**):

6) «ՋՈՐՋԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից տրված 11.09.2012 թվականի գրության համաձայն՝ «ՋՈՐՋԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն իրականացրել է «MEDU 8921128» կոնտեյների փոխադրումը «MSC» նավարկության երթուղով, որի համար թիվ MSCUJO859399 բեռնագիրը տրվել է Սերգեյ Գրիգորյանին: Թիվ MSCUJO859399 բեռնագիրը կնքված է ընկերության պաշտոնական կնիքով: Սովորաբար այն չի ստորագրվում պաշտոնյայի կողմից, եթե այն կնքված է ընկերության պաշտոնական կնիքով (**Հատոր 2-րդ, գ.թ. 9, 11**):

7) «ԴԱԻՐԵՔՏ ԴԵԲԻՏ ՋՈՐՋԻԱ» ՍՊԸ-ի 15.07.2012 թվականի դրամարկղային անդորրագրի համաձայն՝ 01, 02, 03 բաժիններում վճարվել է համապատասխանաբար 51,00, 21,00 և 31,00 լարի, ընդհանուր՝ 103 լարի (**Հատոր 2-րդ, գ.թ. 12**):

8) «ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎ 0832260 ԾԱՆՈՒՑՄԱՆ» համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանի կողմից հայտարարագրով վճարման է ենթակա (գումարի վճարման

վերջնաժամկետը՝ 20.07.2012 թվական) ծառայության հարկ՝ 50 լարի, տերմինալային ծառայություն՝ 20 լարի, արտաքին տրանզիտ՝ 30 լարի (**Հաստր 2-րդ, գ.թ 13**):

9) «ՎԻՍՈՒՆ ՊԵՏՐՈՒԼԻ ԵՄ ԶՈՐԶԻԱ» ՍՊԸ-ի 16.07.2012 թվականի դրամարկղային անդորրագրի համաձայն՝ 01 բաժնում վճարվել է 50,00 և 50,00 լարի, ընդհանուր՝ 100 լարի (**Հաստր 2-րդ, գ.թ 13**):

10) 16.07.2012 թվականի թիվ 2012/33/25799 փոխադրման ամփոփագրի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը «MERCEDES CLK 320, 2004, VIN-WDB209365 1F105934» տրանսպորտային միջոցը ներմուծել է ՀՀ մաքսային տարածք (INV-133342) (**Հաստր 1-ին, գ.թ. 28**):

11) Կոմիտեի նախագահին ուղղված 20.07.2012 թվականի դիմումի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը խնդրել է. «հանձնարարել համապատասխան պաշտոնատար անձին ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման նպատակով կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված մեթոդը» (**Հաստր 1-ին, գ.թ. 29-33**):

12) Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրության համաձայն՝ ի պատասխան Սերգեյ Գրիգորյանի 20.07.2013 թվականի դիմումի՝ հայտնվել է, որ «թիվ 2011/33/25799 փ/ա-ով ՀՀ մաքսային տարածք ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը չի կարող որոշվել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի պահանջների համապատասխան, քանի որ ներկայացված փաստաթղթերում բացակայում է Վրաստանի «Փոթի» նավահանգստում կատարված ավտոմեքենայի բեռնաթափման և մինչև ՀՀ մաքսային սահման Ձեր կողմից ավտոմեքենայի տեղափոխման համար կատարված հիմնավոր ծախսերը:

Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի, եթե հայտարարատուի կողմից մաքսային մարմիններին չի ներկայացվում նույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված հաշիվ ապրանքագիրը կամ այլ փաստաթղթեր, ապա ՀՀ մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի, նույն հոդվածի 1-ին կետի «բ»-«է» ենթակետերով նախատեսված կարգով մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է մաքսային մարմինների կողմից՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 91-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, համաձայն որի՝ ՀՀ ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնից կատարվում է 91-րդ հոդվածով նախատեսված նվազեցումները» (**Հաստր 1-ին, գ.թ. 34**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*1) Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի առաջին հիմքի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման համար անհրաժեշտ հիմքերին և դրանք հաստատող ապացույցները չներկայացնելու իրավական հետևանքներին:*

ՀՀ մաքսային օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, այսինքն՝ այն գումարը, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար:

ՀՀ մաքսային օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է

---

հայտարարատուի կողմից, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված այն դեպքերի, երբ դա որոշվում է մաքսային մարմինների կողմից:

ՀՀ մաքսային օրենսգրքի 83-րդ հոդվածի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ մաքսային արժեքը ներառում է արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը, մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 83 հոդվածի «բ»-«է» ենթակետերում նշված ծախսերը ներառվում են մաքսային արժեքի մեջ, եթե դրանք հաշվի չեն առնված ապրանքների ձեռքբերման գնում:

ՀՀ մաքսային օրենսգրքի իրավահարաբերության ծագման պահին գործող 87-րդ հոդվածի 1-ին կետի խմբագրության համաձայն՝ «Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու համար հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագրի հետ միասին պետք է ներկայացվի ապրանքների ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթը (հաշիվ-ապրանքագիրը կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ), որը պետք է պարունակի փաստաթղթի տրման ամիս-ամսաթվի, հերթական համարի, վաճառողի (առաքողի), գնորդի (ստացողի), ապրանքի մանրամասն նկարագրի (անվանումը), առկայության դեպքում՝ ապրանքային նշանը կամ առևտրային անվանումը), տեղերի քանակի, չափի միավորի, միավորի արժեքի, քաշի, ընդհանուր արժեքի մասին տեղեկություններ, **ինչպես նաև վաճառողի (մատակարարի) կողմից առաքման (մատակարարման) պայմաններով նախատեսված լինելու դեպքում առանձին տողերով՝ մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերի, կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերի (բացառությամբ ապրանքների ձեռքբերման համար կատարված կոմիսիոն և միջնորդային ծախսերի), ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված և ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարների մասին»:**

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքը գործարքի գինն է, որը, ի թիվս այլ գումարների, ներառում է նաև արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը, **ինչպես նաև մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը:**

Վճարելի դատարանը նախկինում կայացված որոշումներում արձանագրել է, որ գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշման համար հայտարարատուն պետք է ներկայացնի ապրանքի ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթը, որը վաճառողի (մատակարարի) կողմից առաքման (մատակարարման) պայմաններով նախատեսված լինելու դեպքում առանձին տողերով պետք է պարունակի նաև **մինչև ՀՀ մաքսային սահմանն ապրանքը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման և փոխաբեռնման ծախսերը:** Նշված պահանջը պարտադիր է և չի կարող համարվել ձևական: Հետևաբար, այն չպահպանելու դեպքում ապրանքի տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման և փոխաբեռնման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը համարվում են չներ-

կայացված, և հայտարարատուի որոշած մաքսային արժեքը որպես հիմք չի ընդունվում (*Տե՛ս ըստ «Եվրոմոնոթորս» ՍՊԸ-ի հայցի ընդդեմ Կոմիտեի՝ «Եվրոմոնոթորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարագիրը մերժելու, ներմուծված ապրանքը ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի դրույթներին համապատասխան չձևակերպելու վերաբերյալ Կոմիտեի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և Կոմիտեի նշված գործողությունների արդյունքում Ընկերության համար առաջացած հետևանքները վերացնելու, այն է՝ ավել վճարված 157.000 ՀՀ դրամը հոգույր Ընկերության գանձելու պահանջների մասին վարչական գործով Վճարեկ դատարանի 27.05.2010 թվականի թիվ ՎԴ/2166/05/09 որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտված վերոնշյալ դիրքորոշումը՝ Վճարեկ դատարանն արձանագրում է, որ նշված ծախսերը պետք է առանձին տողերով արտացոլված լինեն ապրանքների ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթղթում (հաշիվ-ապրանքագիր կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ) միայն այն դեպքում, երբ մինչև ՀՀ մաքսային սահման առաքման պարտականությունը, ըստ մատակարարման պայմանների, կրում է վաճառողը (մատակարարը):

Միաժամանակ, ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 2-րդ կետի խմբագրության համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է գործարքի գնի մեթոդով, եթե՝ ա) մաքսային մարմինները չունեն բավարար հիմքեր նույն հոդվածի 1-ին կետով սահմանված փաստաթուղթն անարժանահավատ ճանաչելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուի որոշած մաքսային արժեքը հիմք չի ընդունվում, եթե հայտարարատուն չի ներկայացնում ապրանքների՝ մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահման կատարված տեղափոխման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրական ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

Վերոնշյալ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճարեկ դատարանն արձանագրում է, որ **անկախ այն հանգամանքից, թե ով է կրել ապրանքի փոխադրման պարտականությունը՝ գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքը որոշելու համար հայտարարատուն պարտավոր է, ի թիվս ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված այլ փաստաթղթերի, մաքսային մարմին ներկայացնել մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը**: Այսինքն՝ հայտարարատուի կողմից ներկայացվում են այն ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, որոնք փաստացի կատարվել են ապրանքը մինչև ՀՀ մաքսային սահման տեղափոխման ընթացքում: Ընդ որում, հայտարարատուի որոշած մաքսային արժեքը հիմք չի ընդունվում, եթե հայտարարատուն չի ներկայացրել նշված փաստաթղթերը կամ մաքսային մարմիններն ունեն բավարար հիմքեր հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերն անարժանահավատ ճանաչելու համար:

Սույն գործով Դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվորի կողմից դիմումին կից ներկայացված Ավտոմեքենայի համար վճարման փաստաթուղթն առանձին տողերով չի պարունակում տեղեկություններ մինչև ՀՀ մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրական և այլ համանման ծախսերի մասին, որի հիմքով Կոմիտեի կողմից 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությամբ մերժվել է հայցվորի դիմումը: Ավտոմեքենայի համար վճարման փաստաթղթերում բացակայում է առանձին տողերով Բաթումի նավահանգստում Ավտոմեքենայի բեռնաթափման համար կատարված ծախսի, Նագոյա նավահանգստում նավի վրա բեռնման, տախտակամածի վրա տեղադրելու համար կատարված ծախսի մասին տեղեկությունները, ինչպես նաև առկա չէ



---

այդ փաստաթղթերում նշում, որ այդ ծախսերը ներառված են գնորդի կողմից կատարված վճարումների մեջ: Բացի այդ, Ավտոմեքենայի համար վճարման փաստաթղթերը չեն բովանդակում նաև Բաթումի նավահանգստից մինչև ՀՀ մաքսային սահման Ավտոմեքենայի տեղափոխման համար կատարված ծախսերը, քանի որ առկա չէ համապատասխան հաշիվ-ապրանքագրի կատարված վառելանյութի գնման վերաբերյալ:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ «վճարման փաստաթղթում առանձին տողերով՝ մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերի մասին տեղեկությունները պետք է նշվեն այն դեպքում միայն, երբ գործարքի կողմերի՝ վաճառողի և գնորդի միջև նախատեսված են վաճառողի (մատակարարի) կողմից ապրանքի առաքման (մատակարարման) պայմաններ: ... Սույն գործի փաստերից հետևում է, որ վաճառողի (մատակարարի)՝ «Թրասթ Քամփնի» ՍՊԸ-ի և Սերգեյ Գրիգորյանի միջև Ավտոմեքենայի առաքման (մատակարարման) պայման նախատեսված չի եղել և ապրանքի փոխադրման պարտականությունը կրել է «Ջորջիան Կարգո Գրուպ» ՍՊԸ տրանսպորտային ընկերությունը»: Վերաքննիչ դատարանը նշել է, որ ««ՋՈՐՋԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին Սերգեյ Գրիգորյանի կողմից վճարված 1.265 ԱՄՆ դոլարը վճարվել է Ավտոմեքենան նշված ընկերության կողմից Ճապոնիայի Նագոյա նավահանգստից Վրաստանի Բաթումի նավահանգիստ փոխադրելու և բեռը Բաթումի նավահանգստում ստացողին՝ Սերգեյ Գրիգորյանին առաքելու՝ հանձնելու համար, հետևաբար, հակառակ ապացույցի բացակայության պայմաններում գտել է, որ Սերգեյ Գրիգորյանը նշված ավտոմեքենան Բաթումի նավահանգստում նավից բեռնաթափելու պարտականություն չի կրել և այդ նպատակով որևէ ծախս չի կատարել, ուստի դրա վերաբերյալ ծախսը հիմնավորող փաստաթուղթ վերջինիս կողմից չէր կարող և չպետք է ներկայացվեր»:

Սույն գործի փաստերը դիտարկելով վերնոշյալ վերլուծությունների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 25.04.2012 թվականի թիվ 776923 «ՊՐՈՖՈՐՄԱ ԻՆՎՈՅՍԻ» և 19.05.2012 թվականի թիվ 133342 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը «Թրասթ Քամփնի» ՍՊԸ-ից Ճապոնիայում 10.000 ԱՄՆ դոլարով ձեռք է բերել 2004 թվականի արտադրության օգտագործված Ավտոմեքենա: Նույն հաշիվ-ապրանքագրերում առանձին տողերով նշված է ավտոմեքենայի արժեքը և այն ձեռքբերման վայրից մինչև Ճապոնիայի Նագոյա նավահանգիստ (FOB Նագոյա) տեղափոխելու համար Սերգեյ Գրիգորյանի կողմից վճարման ենթակա գումարը՝ 300 ԱՄՆ դոլար:

Ընդ որում, թիվ 133342 հաշիվ-ապրանքագրում նշված «FOB» տերմինն առևտրի միջազգային կանոններով՝ ԻՆՎՈՏԵՐՄՍ, ամրագրված միջազգային առևտրային տերմին է, որը կիրառվում է միայն ծովային կամ ներքին ջրային փոխադրումների ժամանակ և նշանակում է, որ վաճառողը պարտավոր է գնված ապրանքը հասցնել նավահանգիստ և այն բեռնել գնորդի կողմից նշված նավի վրա, որից հետո միայն վաճառողի կողմից ապրանքը փոխադրելու պարտականությունը համարվում է կատարված և այդ պահից բոլոր ծախսերը և ռիսկերը կրելու է գնորդը:

Նշվածից հետևում է, որ Ճապոնիայի Նագոյա նավահանգստում ձեռքբերված Ավտոմեքենան նավի վրա բեռնման պարտականությունը կրել է վաճառողը՝ «Թրասթ Քամփնի» ՍՊԸ-ն: Այսինքն՝ նշված թիվ 133342 հաշիվ-ապրանքագրով հիմնավորվում է Ավտոմեքենայի ձեռքբերման համար արտահանման երկրում վճարված և Նագոյա քաղաք տեղափոխման, ինչպես նաև նավի վրա բեռնման համար կատարված ծախսերի չափը, որը կազմել է 10.300 ԱՄՆ դոլար:

Ինչ վերաբերում է Ճապոնիայի Նագոյա նավահանգստից մինչև Վրաստանի Բաթումի նավահանգիստ Ավտոմեքենան տեղափոխելուն, ապա 02.07.2012 թվականի թիվ



11135 հաշիվ-ապրանքագրով, ինչպես նաև «ԶՈՐԶԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից տրված 11.09.2012 թվականի գրությամբ հաստատվում է, որ Նագոյա նավահանգստից մինչև Բաթումի նավահանգիստ Ավտոմեքենան տեղափոխելու պարտականությունը կրել է «ԶՈՐԶԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որի համար Սերգեյ Գրիգորյանը վճարել է 1.265 ԱՄՆ դոլար:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առաքման պայմաններով նախատեսված չի եղել «Թրասթ Քամինի» ՍՊԸ-ի կողմից մինչև ՀՀ մաքսային սահման Ավտոմեքենան տեղափոխելու պայման, այլ «Թրասթ Քամինի» ՍՊԸ-ի կողմից Ավտոմեքենան տեղափոխելու պարտականությունը սահմանափակվել է Ավտոմեքենան ձեռքբերման վայրից մինչև Նագոյա նավահանգիստ տեղափոխելով և դեպի Բաթումի նավահանգիստ գնացող նավի վրա բեռնելով: Իսկ Ավտոմեքենայի մինչև Բաթումի նավահանգիստ հետագա տեղափոխման պարտականությունը կրել է «ԶՈՐԶԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն: Հետևաբար, Սերգեյ Գրիգորյանը պարտավոր չէր և չէր կարող ներկայացնել ապրանքների ձեռքբերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթ, որի մեջ **առանձին տողերով արտացոլված կլինեին մինչև ՀՀ մաքսային սահմանն ապրանքների տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրման և համանման այլ ծախսերը:**

Անդրադառնալով Վրաստանի Բաթումի նավահանգստում Ավտոմեքենայի բեռնաթափման, ինչպես նաև մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահման այն տեղափոխելու համար կատարված ծախսերը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու հայցվորի պարտականության կատարմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

Մինչդեռ սույն գործով հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհիմնավորվեր Բաթումի նավահանգստում Ավտոմեքենայի բեռնաթափման համար հայցվորի կողմից կատարված ծախսերը: Ինչ վերաբերում է 02.07.2012 թվականի թիվ 11135 հաշիվ-ապրանքագրին, որի համաձայն Սերգեյ Գրիգորյանը Նագոյա նավահանգստից մինչև Բաթումի նավահանգիստ Ավտոմեքենան տեղափոխելու համար «ԶՈՐԶԻԱՆ ԿԱՐԳՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին վճարել է 1.265 ԱՄՆ դոլար, ապա դրանով չի հաստատվում այն հանգամանքը, որ նույն ընկերությունը կրել է Ավտոմեքենան Բաթումի նավահանգստում նավից բեռնաթափելու պարտականություն և նշված գումարը ներառել է նաև բեռնաթափման ծախսերը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Սերգեյ Գրիգորյանի պնդումն այն մասին, որ Վրաստանի Բաթումի նավահանգստից մինչև ՀՀ մաքսային տարածք Ավտոմեքենան փոխադրվել է իր կողմից այն վարելու միջոցով, որի համար կատարել է վառելիքային ծախս 100 վրացական լարիի չափով, որը հաստատվում է սույն գործում առկա՝ «Վիսոլ Պետրոլիեմ Զորջիա» ՍՊԸ-ի 16.07.2012 թվականի թիվ 039232 դրամարկղային անդորրագրով: Ընդ որում, նշված դիրքորոշման համար հիմք է ընդունվում

---

այն հանգամանքը, որ Կոմիտեի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, որով կհերքվեն հայցվորի նշված պնդումները, որպիսի պարագայում Վճռաբեկ դատարանը ներկայացված անդորրագիրը դիտում է որպես Ավտոմեքենան Բաթումի նավահանգստից մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահման տեղափոխելու համար վառելիքի համար կատարված ծախսը հիմնավորող բավարար ապացույց:

2) Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդորրադատնալ ապրանքի մաքսային արժեքի հայտարարագրման ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրման ենթակա այլ տեղեկությունների հետ մեկտեղ հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող կամ նրա կողմից լիազորված անձը:

ՀՀ մաքսային օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ենթակա են հայտարարագրման տարածաշրջանային կամ մասնագիտացված մաքսատներում կամ մաքսային կետերում վերադաս մաքսային մարմնի սահմանած կարգով, եթե դրանք տեղափոխվում են Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրումն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով՝ գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ՝ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

ՀՀ մաքսային վարչության պետի 12.06.1998 թվականի թիվ 71-ՄՎր հրամանով (նշված հրամանում կատարվել են փոփոխություններ և լրացումներ Կոմիտեի 26.01.2011 թվականի թիվ 22-Ն հրամանով) հաստատվել է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների բեռնային մաքսային հայտարարագրման, ըստ բացթողման մաքսային ռեժիմների բեռնային մաքսային հայտարարագրի լրացման կարգը, ինչպես նաև բեռնային մաքսային հայտարարագրի հիմնական և լրացուցիչ թերթիկների ձևը: Նշված կարգի 2.1 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով փոխադրվող ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը ֆիզիկական անձանց կողմից կատարվում է այն սահմանային մաքսային կետերում և մաքսատներում, որոնցով տեղափոխվում են հայտարարագրման ենթակա ապրանքները և տրանսպորտային միջոցները, կամ մաքսատներում, որոնք սահմանված կարգով լրացված ներքին տարանցման փաստաթղթով (փոխադրման ամփոփագրով) տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների համար հանդիսանում են նշանակման մաքսային մարմին:

Նույն կարգի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքները հայտարարագրման է ներկայացնում ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը բեռնային մաքսային հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի հետ միասին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարատուն մաքսային հայտարարագիրը ներկայացնում է մաքսային մարմին: Ներկայացված մաքսային հայտարարագիրը գրանցվում է մաքսային մարմնում, ինչի կապակցությամբ մաքսային մարմինը մաքսային հայտարարագրի վրա նշում է գրանցման հերթական համարը և գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին: Ներկայացված մաքսային հայտարարագիրն ընդունում է մաքսային մարմինը, ինչի կապակցությամբ վերջինս մաքսային հայտարարագրի վրա նշում է

ընդունման հերթական համարը, ամսաթիվը, ամիսը, տարին:

ՀՀ մաքսային օրենսգրքի 96-րդ հոդվածի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 2-րդ կետի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս, հայտարարագրի ներկայացման օրը կազմում և հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանած ձևով մերժման եզրակացություն, որտեղ հիմնավորվում է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափը կամ որոշման եղանակը չընդունելու պատճառները, և նշվում է այն վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, ում կարող է բողոքարկման համար դիմել հայտարարատուն: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն մերժման եզրակացությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին կամ դատարան:

ՀՀ պետական եկամուտների նախարարության «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 70-րդ հոդվածի, 96-րդ հոդվածի 2-րդ կետի և 117-րդ հոդվածի պահանջներն ապահովելու մասին» 05.12.2000 թվականի թիվ 02/1508 հրամանի 1-ին կետով հաստատվել է հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում տրվող մերժման եզրակացության ձևը:

**Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 95-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում էր. «Ապրանքներ տեղափոխող անձի գրավոր դիմումի հիման վրա, հինգ օրվա ընթացքում, մաքսային մարմինները պարտավոր են գրավոր տեղեկացնել մաքսային արժեքի չափի և դրա որոշման եղանակի մասին»: Նշված կետն ուժը կորցրել է ՀՀ մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ 05.12.2012 թվականի ՀՕ-224-Ն օրենքով:**

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքների մաքսային արժեքի որոշման նպատակով հայտարարատուի կողմից մաքսային մարմիններին տրամադրված տեղեկությունները վերջիններիս կողմից կարող են օգտագործվել միայն նույն օրենսգրքի 73-րդ հոդվածում նշված նպատակներով: Այդ տեղեկություններն առանց հայտարարատուի համաձայնության չեն կարող տրամադրվել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Վերոնշյալ նորմերի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ մաքսային օրենսգրքը սահմանել է ապրանքի մաքսային արժեքը, այդ թվում՝ գործարքի գնի մեթոդով այն որոշելու որոշակի ընթացակարգ, այն է՝ հայտարարագրի ներկայացնելու և այն մաքսային մարմնի կողմից ընդունելու ձևով: Մասնավորապես, ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը հայտարարագրում է ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը, որից հետո մաքսային մարմինների կողմից որոշվում է գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքն ընդունելու հարցը: Հայտարարագրված մաքսային արժեքի կամ դրա որոշման եղանակի հետ մաքսային մարմինների անհամաձայնության դեպքում վերջիններս հայտարարագրի ներկայացման օրը կազմում և հայտարարատուին են տրամադրում վերադաս մաքսային մարմնի սահմանված ձևով մերժման եզրակացություն, որն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմին կամ դատարան:

Միաժամանակ, վիճելի իրավահարաբերության ծագման պահին ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված էր մաքսային մարմիններից գրավոր դիմումով համապա-

---

տասխան տեղեկություններ տրամադրելու դեպքում ապրանքի մաքսային արժեքի և դրա որոշման եղանակի մասին տեղեկատվություն ստանալու՝ ապրանքներ տեղափոխողի իրավունքը և նշված տեղեկությունների մասին վերջինիս գրավոր տեղեկացնելու մաքսային մարմինների պարտականությունը: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ապրանքի մաքսային արժեքի և դրա որոշման եղանակի մասին **տեղեկատվության տրամադրմանը**, որը որևէ կերպ չի կարող դիմվել որպես նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված մերժման եզրակացություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Սերգեյ Գրիգորյանը Կոմիտեի նախագահին ուղղված 20.07.2012 թվականի դիմումով հայտնել է, որ 20.07.2012 թվականին ներկայացել է Կոմիտեի ավտոմեքենաների մաքսագերծման մասնագիտացված մաքսատան մաքսասակագնային և մաքսային ձևակերպումների բաժին՝ ներկայացնելով իր ունեցած փաստաթղթերը, որտեղ տեղեկացել է, որ իր կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման համար գործարքի գնի մեթոդի կիրառումը բացառվում է և մաքսային արժեքը պետք է որոշվի «MERCEDES-BENZ CLK 350» մոդելի ավտոմեքենայի համար նախատեսված մաքսային արժեքով՝ 17.200 ԱՄՆ դոլար: Սերգեյ Գրիգորյանը խնդրել է հանձնարարել համապատասխան պաշտոնատար անձին Ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման նպատակով կիրառել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված մեթոդը: Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրության համաձայն՝ ի պատասխան Սերգեյ Գրիգորյանի 20.07.2013 թվականի դիմումի՝ հայտնվել է, որ ՀՀ մաքսային տարածք ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը չի կարող որոշվել ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի պահանջների համապատասխան, քանի որ ներկայացված փաստաթղթերում բացակայում է Վրաստանի «Փոթի» նավահանգստում կատարված Ավտոմեքենայի բեռնաթափման և մինչև ՀՀ մաքսային սահման այն տեղափոխման համար կատարված հիմնավոր ծախսերը:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելիս պատճառաբանել է, որ Սերգեյ Գրիգորյանի՝ մաքսային մարմնին դիմելու նպատակը հանդիսացել է իր կողմից ձեռք բերված Ավտոմեքենայի մաքսային արժեքը ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված գործարքի գնի մեթոդով որոշելը և այն ընդունելը, իսկ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Աֆրիկյանը 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությամբ փաստացի մերժել է այդ իրավունքի տրամադրումը, որպիսի պարագայում իրատեսական չէ Սերգեյ Գրիգորյանի կողմից հայտարարագիր ներկայացնելը և Ավտոմեքենայի մաքսային արժեքի չափը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ Սերգեյ Գրիգորյանի կողմից մաքսային ձևակերպումները կատարելու նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով մաքսային մարմին չի ներկայացվել հայտարարագիր և չի որոշվել Ավտոմեքենայի մաքսային արժեքը, հետևաբար մաքսային մարմինը հնարավորություն չի ունեցել ընդունել վերջինիս կողմից որոշված մաքսային արժեքը կամ ներկայացնել մերժման մասին եզրակացություն, որից հետո միայն նրա մոտ կարող էր ծագել նման մերժումը վիճարկելու և գործարքի գնի մեթոդ կիրառելուն պարտավորեցնելու վերաբերյալ հայց ներկայացնելու իրավունք: Ընդ որում, Ավտոմեքենան երբևէ հայտարարագրված չլինելու և 20.07.2012 թվականի դիմումը ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 95-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված լինելու հանգամանքն ընդունել է նաև Սերգեյ Գրիգորյանը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածները, գտել է, որ Սերգեյ Գրիգորյանի կողմից ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները

որը բովանդակային առումով կատարվել են, հետևաբար վերջինիս նշված հոդվածով սահմանված կարգով ավտոմեքենայի մաքսային արժեքի որոշման իրավունքի տրամադրման մերժումը ոչ իրավաչափ է: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մերգեյ Գրիգորյանի կողմից մաքսային մարմին հայտարարագիր ներկայացնելու և ապրանքի մաքսային արժեքը հայտարարագրելու պարտականությունը նախատեսված է ՀՀ մաքսային օրենսգրքով և չի կարող դիտվել որպես ձևական պահանջ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Նշված նորմերից հետևում է, որ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, այսինքն՝ այն վարչական ակտը, որով

1. մերժվում են անձանց իրավունքների իրականացմանն ուղղված պահանջները,
2. սահմանափակվում են նրանց իրավունքները,
3. որևէ պարտականություն է դրվում նրանց վրա,
4. որևէ այլ կերպ վատթարացվում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Վերը նշված վերլուծությունների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի նախագահի առաջին տեղակալի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությամբ չի հանդիսանում միջամտող վարչական ակտ: Մասնավորապես, նշված գրությամբ ՀՀ մաքսային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 95-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով տեղեկատվություն է տրամադրվել ապրանքի մաքսային արժեքի որոշման եղանակի մասին, որպիսի պայմաններում վիճարկվող գրությունը չի հանդիսանում միջամտող վարչական ակտ, հետևաբար, այն անվավեր ճանաչելու պահանջի մասով վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին և այդ պահանջի մասով սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն պահանջի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և տվյալ պահանջի մասով գործի վարույթը կարճելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Ինչ վերաբերվում է Կոմիտեին ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված կարգով հայցվորի կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելուն պարտավորեցնելու պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը

---

րանն արձանագրում է, որ Սերգեյ Գրիգորյանի կողմից օրենքով սահմանված կարգով հայտարարագիր չներկայացնելու և Ավտոմեքենայի մաքսային արժեքը չհայտարարագրելու պայմաններում Կոմիտեին ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված կարգով հայցվորի կողմից ներմուծված ավտոմեքենայի մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով որոշելուն պարտավորեցնելու պահանջը ենթակա է մերժման, որպիսի պահանջի մասով Դատարանի լուծումն իրավաչափ է, սակայն սույն որոշման պատճառաբանություններով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն պահանջի մասով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և ՀՀ վարչական դատարանի դատական ակտին սույն որոշման պատճառաբանություններով մասնակիորեն օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը ենթակա է կիրառման հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտին մասնակիորեն օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.09.2013 թվականի որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Աֆրիկյանի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների

կոմիտեին Սերգեյ Գրիգորյանի կողմից ներմուծված «MERCEDES-BENZ CLK 320» (VIN-WDB209365-1F105934) մակնիշի 2004 թվականի արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը կիրառելուն պարտավորեցնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից հոգուտ Սերգեյ Գրիգորյանի 8.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումարներ բռնագանձելու մասերը:

Վարչական գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Ա. Աֆրիկյանի 25.07.2012 թվականի թիվ 23001/8-1 գրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճել:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին Սերգեյ Գրիգորյանի կողմից ներմուծված «MERCEDES-BENZ CLK 320» (VIN-WDB209365-1F105934) մակնիշի 2004 թվականի արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքի հաշվարկման նպատակով ՀՀ մաքսային օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսված գործարքի գնի մեթոդը կիրառելուն պարտավորեցնելու պահանջի մասով օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 15.03.2013 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Սերգեյ Գրիգորյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 40.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4590/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Բաբայան

Դատավորներ՝

Հ. Բեդկյան

Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4590/05/10**  
**2013թ.**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.03.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արայիկ Բաբայանի ընդդեմ «ՀՀ դատախազության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժելուն ուղղված գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և պատասխանողին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արայիկ Բաբայանը պահանջել է երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժելուն ուղղված Հիմնարկի գործողությունը ճանաչել ոչ իրավաչափ և որպես պահանջի հետևանքի վերացման ածանցյալ պահանջ՝ Հիմնարկին պարտավորեցնել նշանակել երկարամյա ծառայության կենսաթոշակ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Բաղդասարյան) (այսուհետ՝ Դատարան) 25.10.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.03.2013 թվականի որոշմամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վերաքննիչ բողոքը



մերժվել է, և Դատարանի 25.10.2012 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արայիկ Բաբայանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի «ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 701-Ն որոշումը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը, 73-րդ հոդվածի 2-րդ մասը, «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հիմնավոր չի համարել այն փաստարկները, որ ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թվականի թիվ 778 որոշման 1-ին կետի «գ» ենթակետը և այդ ենթակետով հաստատված «Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ գինվորական ծառայության ստացում հաշվարկվող, այդ թվում՝ արտոնյալ պայմաններով, ծառայողական կամ այլ բնույթի գործունեության տեսակների ցանկի, հաշվառման կարգի ու պայմանների» 2-րդ կետի 1-ին պարբերության «գ» ենթակետը և նույն կետի 2-րդ պարբերության «դ» ենթակետը սույն իրավահարաբերության համար կիրառելի չեն, քանի որ ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի «ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թվականի թիվ 778 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 701-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 778 որոշման 1-ին կետի «գ» ենթակետով կատարված փոփոխության արդյունքում նշված կետից հանվել է «այդ թվում՝ արտոնյալ պայմաններով» բառակապակցությունը, որից հետևում է, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» կետի հիմքով գինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքը ծագում է օրացուցային հաշվարկով հաշվառված ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին 20 և ավելի տարվա գինվորական ծառայության ստաժի առկայության պայմաններում, մինչդեռ Արայիկ Բաբայանի դատախազությունում ծառայության ստաժն աշխատանքից ազատվելու դրությամբ օրացուցային հաշվարկով կազմում է 11 տարի 10 ամիս և 17 օր, հետևաբար վերջինս չի կարող օգտվել 01.07.1998 թվականի՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածին համապատասխան երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Այսպիսով, ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի թիվ 701-Ն որոշումն ուժի մեջ է մտել 30.06.2005 թվականին, հետևաբար մինչև նշված որոշումն ուժի մեջ մտնելն Արայիկ Բաբայանի ծառայության ստաժն արտոնյալ պայմաններով հաշվարկելու պահանջն անհիմն է, քանի որ հայցվորը ՀՀ գլխավոր դատախազի հրամանով աշխատանքից ազատվել է 01.12.2007 թվականին, այսինքն՝ վիճելի իրավահարաբերությունը ծագել է 01.12.2007 թվականին, իսկ ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է տվյալ պահին գործող օրենսդրությունը:

Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի

---

3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասով, գտել է, որ ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի թիվ 701-Ն որոշմամբ հաստատված կարգը չի կարող հետադարձ ուժ ունենալ, քանի որ այն ունի վատթարացնող բնույթ, և Հիմնարկի՝ Արայիկ Բաբայանին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելը մերժելուն ուղղված գործողությունները դիտել է ոչ իրավաչափ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՍԴՈ-723 գործով ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման նոր համակարգ, սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա, այսինքն՝ տվյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանն անդրադարձել է նախկինում գործող օրենսդրության հիման վրա կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց իրավունքներն օրենսդրության փոփոխությունների արդյունքում վերացնող կամ սահմանափակող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքին, մինչդեռ սույն գործով վիճարկվում է Արայիկ Բաբայանի երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու, այլ ոչ թե նախկին օրենսդրության հիման վրա ձեռք բերված իրավունքներն օրենսդրության փոփոխությունների արդյունքում վերացնելու կամ սահմանափակելու հարցերը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Արայիկ Բաբայանին երկարամյա կենսաթոշակ չի կարող նշանակվել նաև այն պատճառով, որ ՀՀ գլխավոր դատախազի 27.11.2007 թվականի թիվ 697 հրամանով Արայիկ Բաբայանն աշխատանքից ազատվելուց հետո տեղափոխվել և շարունակում է իր ծառայությունը՝ աշխատում է ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում, իսկ տվյալ իրավահարաբերությունները ծագելու պահին գործող «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի և գործող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ է նշանակվում և վճարվում միայն ծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.03.2013 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանի փաստարկները**

Վճարել բողոքի ներկայացված հիմքերը և հիմնավորումներն անհիմն են, դրանցում նշված են ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող իրավական վերլուծություններ, փաստերի ակնհայտ խեղաթյուրումներ, ինչպես նաև կամայական մեկնաբանություններ:

Մինչև 30.06.2005 թվականի ՀՀ Կառավարության 12.05.2005 թվականի թիվ 701-Ն որոշման ուժի մեջ մտնելը «ՀՀ Կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի թվականի թիվ 778 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշմամբ իր զինվորական ծառայության ստաժը պետք է հաշվարկվի արտոնյալ կարգով, իսկ դրանից հետո մինչև 27.11.2007 թվականը՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ զինվորական դատախազության քննիչի պաշտոնից, այսինքն՝ զինվորական ծառայությունից ազատվելը, օրացուցային օրերի հաշվարկով, որոնց ընդհանուր գումարը ստացվում է 20 տարի, 8 ամիս, 24 օր, որը բավարար զինվորական ծառայության ստաժ է հանդիսացել իր կողմից

տվյալ ժամանակ օրենքով սահմանված կարգով ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու համար: Բողոքաբերը, փաստացի ընդունելով, որ 30.06.2005 թվականի դրությամբ իր զինվորական ծառայության ընդհանուր ստաժն արտոնյալ հաշվարկով կազմել է 18 տարի և ավելի, սխալ պատճառաբանությամբ դրան չի գումարել իր կողմից նույն համակարգում ծառայության 30.06.2005 թվականից մինչև 27.11.2007 թվականն ընկած ժամանակահատվածը: Այսինքն՝ բողոքաբերը 30.06.2005 թվականից հետո օրինական ուժի մեջ մտած, իր վիճակը վատթարացնող ՀՀ Կառավարության թիվ 701-Ն որոշմանը տվել է հետադարձ ուժ: Ընդ որում, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը և այլ իրավական ակտեր թույլատրում են երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակ նշանակելուց հետո դրա վճարումը կասեցնել, ինչն էլ կազմել է դատախազությանն ուղղված իր պահանջի բովանդակությունը:

ՀՀ վճարել դատարանը 29.10.2010 թվականի թիվ ՎԴ/4892/05/09 վարչական գործով կայացրել է որոշում, որն ունի նույնանման փաստական հանգամանքներ: Բողոքաբերը դիտարկողյալ ոչ վերաքննիչ, ոչ էլ վճարել բողոքներում չի անդրադարձել վճարել դատարանի նշված որոշմանն այն պարզ պատճառով, որ այն նույնանման փաստական հանգամանքներ ունի սույն գործի հետ և հիմնավորում է իր օրինական պահանջները:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ գլխավոր դատախազի 13.10.1999 թվականի թիվ 510 հրամանով Արայիկ Բաբայանը նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնում, 27.11.2007 թվականին ազատվել է այդ պաշտոնից և 01.12.2007 թվականին ծառայության նշանակվել ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ քննիչ (**հատոր 1-ին, գ.թ. 13-14, 16-18**):

2) Ի պատասխան Արայիկ Բաբայանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումի՝ «Հիմնարկի ղեկավարն իր 09.12.2008 թվականի թիվ 28/257-08 գրությամբ պատասխանել է, որ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո, և քանի որ Արայիկ Բաբայանը շարունակում է ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարությունում, ապա առայժմ նրան կենսաթոշակ նշանակել հնարավոր չէ (**հատոր 1-ին, գ.թ. 7**):

3) 28.07.2010 թվականին Արայիկ Բաբայանը ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու դիմումով դիմել է «Հիմնարկի ղեկավարին՝ հայտնելով, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերով հիմնավորվում է, որ Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնից 27.11.2007 թվականին ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնի տեղափոխվելու ժամանակ ինքն արդեն իսկ ունեցել է ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու իրավունք, սակայն այդ իրավունքից չի օգտվել, և համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ կարող է այդ իրավունքից օգտվել դիմում տալու օրվանից: Միաժամանակ հայցվորը խնդրել է համապատասխան հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել իր երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու հարցը և կենսաթոշակ նշանակելու դեպքում կենսաթոշակի վճարումը կասեցնել, քանի որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ

---

հողվածը և այլ օրենսդրական նորմերը թույլ են տալիս կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակի վճարումը կասեցնել և շարունակել զինվորական ծառայությունը (**հատոր 1-ին, գ.թ. 8-11**):

4) Արայիկ Բաբայանի 28.07.2010 թվականի դիմումին ի պատասխան՝ «Հիմնարկի ղեկավարը 05.11.2010 թվականին թիվ 28/8-1045-10 գրությամբ հայտնել է, որ «Ի պատասխան ՀՀ դատախազության համակարգից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու Ձեր 28.07.2010 թվականի դիմումի՝ հայտնվում է, որ այն քննարկվել է ՀՀ դատախազության կենսաթոշակների նշանակման հանձնաժողովի 07.10.2010 թվականի նիստում, և տրվել է բացասական եզրակացություն՝ նկատի ունենալով, որ Ձեր զինվորական ծառայության ստաժը (օրացուցային օրերով) կազմում է 11 տարի, 10 ամիս 17 օր և չի բավարարում «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի ոչ մի մասի պահանջներին՝ Ձեզ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար» (**հատոր 1-ին, գ.թ. 12**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի հետևյալ իրավական հարցի պարզաբանումը. արդյո՞ք զինծառայողին կարող է նշանակվել երկարամյա ծառայության կենսաթոշակ, եթե նա սահմանված կարգով չի արձակվել ծառայությունից:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

- 1) գնահատում է ապացույցները.
- 2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.
- 3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված նորմերից հետևում է, որ Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը, և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

01.07.1998 թվականի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ դատախազների և քննիչների թոշակավորումն իրականացվում է ներքին գործերի մարմիններում ծառայության անցնող ղեկավար կազմի անձանց համար կիրառվող պայմաններով, նորմերով և կարգով (ուժի մեջ է եղել մինչև 01.01.2008 թվականը):

«Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները:

«Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի համաձայն՝ զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և շարքային անձնակազմի ծառայողները:

«Չինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 53.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի քննիչը (այսուհետ՝ քննիչ) պաշտպանության բնագավառի զինվորական ծառայող է:

«Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո (7-րդ հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին ՀՕ-248-Ն):

«Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության անցնելու դեպքում նույն օրենքով նշանակված կենսաթոշակների վճարումը դադարեցվում է ծառայության անցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից (7-րդ հոդվածն ուժը կորցրել է 22.12.2010 թվականին ՀՕ-248-Ն):

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատախազության քննիչների թոշակավորումը, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելն իրականացվել է «Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով զինվորական ծառայողների համար սահմանված կարգով: Ընդ որում, «Չինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով վիճելի իրավահարաբերության ժամանակ սահմանված կարգով զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվել և վճարվել է **զինվորական ծառայությունից** սահմանված կարգով արձակվելուց հետո: Ընդ որում, նշանակված կենսաթոշակների վճարման դադարեցումը պայմանավորվել է **զինվորական ծառայության անցնելու** հանգամանքով: Նույն օրենքով է կարգավորվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության քննիչների՝ որպես զինվորական ծառայողների թոշակավորման կարգը:

Սույն գործով Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ արտոնյալ պայմաններով Արայիկ Բաբայանի ծառայության ստաժի օրացուցային հաշվարկը պետք է կատարվի մինչև 30.06.2005 թվականի՝ ՀՀ կառավարության թիվ 701-Ն որոշումն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով: Դատարանը հաստատված է համարել, որ 27.11.2007 թվականի դրությամբ՝ ծառայությունից ազատվելու պահին, Արայիկ Բաբայանի ծառայությունը կազմել է 20 տարի, 8 ամիս, 24 օր, որը բավարար զինվորական ծառայության ստաժ է օրենքով սահմանված կարգով երկարամյա ծառայության

---

կենսաթոշակ նշանակելու համար:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Արայիկ Բաբայանը, ունենալով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող առնվազն 20 տարվա զինվորական ծառայության ընդհանուր ժամկետ (ստաժ), իր երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքը վիճարկում է 27.11.2007 թվականի դրությամբ, սահմանված կարգով ՀՀ դատախազության համակարգից ազատվելու պահին, այսինքն՝ «Հիմնարկը պետք է Արայիկ Բաբայանի կողմից ՀՀ դատախազությունից երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից նշանակել կենսաթոշակը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի 13.10.1999 թվականի թիվ 510 հրամանով Արայիկ Բաբայանը նշանակվել է Սևանի կայազորի զինվորական դատախազության քննիչի պաշտոնում, դատախազության համակարգում փոփոխությունների կատարման պատճառով 27.11.2007 թվականին ազատվել է այդ պաշտոնից և 01.12.2007 թվականին ծառայության է նշանակվել ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնում որպես ՀԿԳ քննիչ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ վիճելի իրավահարաբերության ժամանակ գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ զինծառայողին երկարամյա ծառայության կենսաթոշակ կարող է նշանակվել և վճարվել **միայն զինծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արայիկ Բաբայանին երկարամյա ծառայության կենսաթոշակ չէր կարող նշանակվել այն պատճառով, որ վերջինս ՀՀ գլխավոր դատախազի 27.11.2007 թվականի թիվ 697 հրամանով աշխատանքից ազատվելուց հետո նշանակվել է ՀՀ ՊՆ քննչական վարչության ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ քննիչի պաշտոնում, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով անցել է զինվորական ծառայության: Մինչդեռ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված երկարամյա ծառայության կենսաթոշակ կարող էր նշանակվել միայն զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ նշված օրենքը նշանակված կենսաթոշակի վճարման դադարեցումը պայմանավորել է զինվորական ծառայության անցնելու փաստով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Արայիկ Բաբայանի այն պատճառաբանությունը, թե «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը թույլատրում է կենսաթոշակ նշանակելուց հետո դրա վճարումը կատարել: Նշված հոդվածը, որով կարգավորվել են կենսաթոշակների նշանակման պայմանները, նման հնարավորություն չի սահմանել: Ընդհակառակը՝ դրա 1-ին կետը կատեգորիկ կերպով սահմանել է, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում և վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո, իսկ հոդվածի 2-րդ կետը կարգավորել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ստացած և զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողների ամսական դրամական բավարարմանը հավելումների նշանակման հարցը, ինչը ոչ մի առնչություն չունի կենսաթոշակ նշանակելու և կատարելու հարցի հետ:

*Նշված պարճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայտասխանում բերված փաստարկները:*

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն այլևս չի անդրադառնում Արայիկ Բաբայանի զինվորական ծառայության ստաժը երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակ նշանակելու համար բավարարելու հարցին, քանի որ այն կարող է էական

նշանակություն ունենալ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վե-րաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սվլյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոն-վենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի ան-հարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյու-նից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշ-ման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

2. Արայիկ Բաբայանից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գու-մար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4566/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/4566/05/11

2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հոկտեմբերի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Երևանի քաղաքապետի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.05.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գևորգ Քիչոյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևան տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր), երրորդ անձ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան)՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Չեյթոն տարածքային ստորաբաժանման 02.09.2011 թվականի թիվ ԵԼ 619 միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու (վերացնելու) և որպես իրավական հետևանք՝ Կադաստրին վիճահարույց հողակտորի սեփականության իրավունքի առաջին պետական գրանցումն (գրառում) իր անվամբ կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գևորգ Քիչոյանը պահանջել է անվավեր ճանաչել (վերացնել) Կադաստրի 02.09.2011 թվականի թիվ ԵԼ 619 միջամտող վարչական ակտը և որպես իրավական հետևանք պարտավորեցնել վերջինիս իր անվամբ կատարելու վիճահարույց հողակտորի սեփականության իրավունքի առաջին պետական գրանցում (գրառում):



ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 09.11.2012 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.05.2013 թվականի որոշմամբ Դատարանի 09.11.2012 թվականի վճռի դեմ Գևորգ Քիչոյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 09.11.2012 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Գևորգ Քիչոյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ՀՀ հողային օրենսգրքի վկայակոչած իրավադրույթի հիմքով սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ է կադաստր ներկայացնել հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում չգտնվելու վերաբերյալ տեղեկանք, որը, սակայն, հայցվորի կողմից չի ներկայացվել:

Ավելին, Վերաքննիչ դատարանը չի իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ճիշտ չի գնահատել գործում առկա ապացույցները, ինչն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.05.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 09.11.2012 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները**

Երևանի քաղաքապետի կողմից բերված վճռաբեկ բողոքն անհիմն է, քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ջեյթուն տարածքային ստորաբաժանումը, մերժելով իրավունքի գրանցման դիմումը, չի նշել այն փաստաթղթի անունը, որը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին: Ավելին, խնդրո առարկա հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկանքը ներկայացնելու Գևորգ Քիչոյանի պարտականությունը պետք է սահմանված լիներ օրենքով, որպեսզի վերջինս պարտավոր լիներ ներկայացնելու այդ տեղեկանքը, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ջեյթուն տարածքային ստորաբաժանումն իրավունք ունենար պահանջելու նշված տեղեկանքը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Երևանի քաղաքապետի 11.03.2005 թվականի թիվ 478-Ա որոշման հ.1 հավելվածի 291-րդ կետի համաձայն՝ ճանաչվել է Գևորգ Քիչոյանի սեփականության իրավունքը

---

Երևանի Դ. Անհաղթի փողոցի ուսանողական հանրակացարանների 6-րդ մասնաշենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված շինության նկատմամբ, իսկ զբաղեցրած 152,7քմ մակերեսով հողամասը տրամադրվել է վարձակալությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 67, 90**):

2) Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետի, որի անունից հանդես է եկել Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի ղեկավարը, և Գևորգ Քիչոյանի միջև Երևանի քաղաքապետի 11.03.2005 թվականի թիվ 478-Ա որոշման հիման վրա 17.06.2005 թվականին կնքվել է հողամասի վարձակալության Հ. 115 պայմանագիրը, որով վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց երեք տարի ժամկետով՝ մինչև 11.03.2008 թվականը, վարձակալի տիրապետմանն ու օգտագործմանն է տրամադրել Երևանի Դ. Անհաղթի փողոցի ուսանողական հանրակացարանների 6-րդ մասնաշենքի դիմաց գտնվող 152,7քմ մակերեսով կառուցապատված հողամասը (սրճարան և աստիճանավանդակ): Նշված պայմանագիրը նոտարական կարգով վավերացվել է 29.07.2005 թվականին (գրանցվել է սեղանամատյանի թիվ 4408 համարի տակ) (**հատոր 1-ին, գ.թ. 10-13**):

3) Երևանի Դ. Անհաղթի փողոցի ուսանողական հանրակացարանների 6-րդ մասնաշենքի դիմաց գտնվող 79,8քմ մակերեսով սրճարանի և 11,1քմ մակերեսով աստիճանավանդակի և դրանցով զբաղեցված 152,7քմ մակերեսով հողամասի նկատմամբ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-25 մատյանի 000117 համարի տակ 15.08.2005 թվականին գրանցվել է Գևորգ Քիչոյանի համապատասխանաբար սեփականության և վարձակալության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 5-7**):

4) Գևորգ Քիչոյանը 30.08.2011 թվականին դիմում է ներկայացրել Կադաստր՝ Երևանի Դ. Անհաղթի փողոցի ուսանողական հանրակացարանների 6-րդ մասնաշենքի դիմաց գտնվող սրճարանով և աստիճանավանդակով զբաղեցված 152,7քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու վերաբերյալ: Կադաստրի 02.09.2011 թվականի թիվ ԵԼ 619 գրությամբ Գևորգ Քիչոյանի 30.08.2011 թվականի թիվ 2690 դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով մերժվել է՝ ներկայացված փաստաթղթերը ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, մասնավորապես՝ չի ներկայացվել հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներում չգտնվելու վերաբերյալ ապացույց (**հատոր 1-ին, գ.թ. 4**):

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա սեփականության իրավունքի պետական գրանցման առանձնահատկություններին՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում հողամասի ընդգրկված չլինելու պայմանի մասով:*

«ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական կամ համայնքային սեփականություն

հանդիսացող հողերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց, ներառյալ՝ օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված (բացառությամբ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի)՝ նույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են՝

1) տնամերձ, այգեգործական, ինչպես նաև բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասերը.

2) հասարակական և արտադրական օբյեկտների կառուցման և սպասարկման համար նախատեսված և սահմանված կարգով կառուցված, այդ թվում՝ կիսակառույց շենքերով, շինություններով զբաղեցված հողամասերը՝ անկախ շենքերի, շինությունների ավարտվածության աստիճանից:

Վերը նշված հոդվածի իրավակարգավորումից հետևում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ վկայակոչված իրավադրույթի հիմքով իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության իրավունքի ծագման համար պարտադիր նախապայմաններ են՝ օգտագործման կամ վարձակալության իրավունքի առկայությունը, ինչպես նաև հողամասի՝ **ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու փաստը**: Վերջինիս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին՝

ա) հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող սուբյեկտին,

բ) նշված տեղեկատվության բովանդակությանը,

գ) այդ տեղեկատվության առկայությանը՝ **որպես** «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա սեփականության իրավունքի պետական գրանցման հիմք:

ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 2093-Ն որոշման 3-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) և առաջարկել համայնքների ղեկավարներին մեկամսյա ժամկետում՝ շաբաթական պարբերականությամբ (տվյալ շաբաթվա ընթացքում ստուգված հողամասերի մասով), Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ներկայացնել տեղեկատվություն նույն որոշման 2-րդ կետում նշված հողամասերը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում ընդգրկված լինելու կամ չլինելու մասին: Ընդ որում, համայնքների ղեկավարները նշված տեղեկատվությունն ուղարկում են համապատասխան մարզպետների միջոցով:

Նշված տեղեկատվությունը գործարք կնքելու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրվում է դիմումն ստանալու օրվան հաջորդող 2 օրվա ընթացքում, եթե դրա մասին տեղեկատվությունը դեռևս չի փոխանցվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

---

Վերոնշյալից հետևում է, որ հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված լինելու կամ չլինելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կարող է տրամադրվել համայնքի ղեկավարի (կամ վերջինիս աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման) կողմից: Նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր դեպքում պետք է բովանդակի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համապատասխան կետը, որին վերաբերում է սահմանափակումը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված տեղեկատվությունը բովանդակող փաստաթուղթը «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով սեփականության իրավունք ձեռք բերելիս պետք է դիտարկել որպես անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման նախադրյալը հաստատող փաստաթուղթ, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենքով սահմանված այլ փաստաթղթերի հետ մեկտեղ պետք է ներկայացվի սեփականության իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմին, տվյալ պարագայում՝ Կադաստր:

Սույն գործով Դատարանը, հայցը մերժելով, պատճառաբանել է, որ Գևորգ Քիչոյանին 152,7 քմ մակերեսով հողամասի հատկացումը կատարվել է ոչ թե ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին կամ 2-րդ ենթակետերի հիմքերով, այլ որպես նրա կողմից ինքնակամ կառուցված սրճարանի և աստիճանավանդակի զբաղեցրած տարածք: Նշվածից հետևում է, որ սկզբնապես Գևորգ Քիչոյանին որևէ չափի հողամաս վարձակալությամբ չի տրամադրվել, մինչդեռ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթը վերաբերում է օրինական կարգով վարձակալությամբ տրամադրված հողամասի վրա օրինական ճանապարհով հասարարական կամ արտադրական նշանակության օբյեկտ կառուցելուն, հետևաբար վկայակոչված իրավադրույթի հիմքով հողամասը որպես սեփականություն չի կարող փոխանցվել հայցվորին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարելով, արձանագրել է. «(...)գործում առկա ապացույցներով հաստատվում են այն փաստական հանգամանքները, որ Երևանի քաղաքապետը 11.03.2005 թվականի թիվ 478-Ա որոշման 1-ին կետով, ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, **ճանաչել է** վեճի առարկա 152,7քմ մակերեսով սրճարան-աստիճանավանդակի և **դրանով զբաղեցված 152,7քմ մակերեսով հողամասի** նկատմամբ Գևորգ Քիչոյանի սեփականության իրավունքը, որի հիման վրա վերջինիս հետ 17.06.2005 թվականին կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիրը (նոտարական կարգով վավերացվել է 29.07.2005 թվականին), այնուհետև Երևանի քաղաքապետի 11.03.2005 թվականի թիվ 478-Ա որոշման և 17.06.2005 թվականին կնքված ու 29.07.2005 թվականին նոտարական կարգով վավերացված հողամասի վարձակալության պայմանագրի հիման վրա վեճի առարկա գույքի նկատմամբ Գևորգ Քիչոյանի սեփականության և վարձակալության իրավունքները 15.08.2005 թվականին ստացել են պետական գրանցում 4-25 միասնական մատյանի 000117 համարի տակ, և տրվել է թիվ 2017786 վկայականը: Այսինքն՝ Գևորգ Քիչոյանի սեփականության իրավունքն արդեն իսկ ճանաչված է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005 թվականի թիվ ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 12-րդ կետերի ուժով, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանն անհիմն է գնահատում պետական գրանցման կատարումը Կադաստրի կողմից նշված հիմքով մերժելը»:

Վերոնշյալ մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը եկավ

հետևյալ եզրահանգման.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Գևորգ Քիչոյանի և Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղային համայնքի ղեկավարի միջև Երևանի քաղաքապետի 11.03.2005 թվականի թիվ 478-Ա որոշման հիման վրա 17.06.2005 թվականին կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր, որով վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց երեք տարի ժամկետով՝ մինչև 11.03.2008 թվականը, վարձակալի տիրապետմանն ու օգտագործմանն է տրամադրել Դ. Անհաղթի փողոցի ուսանողական հանրակացարանների 6-րդ մասնաշենքի դիմաց գտնվող 152,7քմ մակերեսով կառուցապատված հողամասը (սրճարան և աստիճանավանդակ): Նշված պայմանագիրը նոտարական կարգով վավերացվել է 29.07.2005 թվականին, իսկ պայմանագրից ծագող վարձակալության իրավունքը ենթարկվել է պետական գրանցման: Գևորգ Քիչոյանը 30.08.2011 թվականին դիմել է Կադաստր՝ Երևանի Դ. Անհաղթի փողոցի հանրակացարանի 6-րդ մասնաշենքի դիմացի հասցեում գտնվող անշարժ գույքի հողամասի նկատմամբ իր անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու խնդրանքով: Կադաստրը 02.09.2011 թվականի թիվ 619 գրությամբ հայտնել է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով պետական գրանցումը մերժվել է, քանի որ պետական գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը կամ դրանցով խախտվել են օրենսդրության պահանջները:

Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումները գտնում է անհիմն հետևյալ պատճառաբանությամբ. նախ Երևանի քաղաքապետի 11.03.2005 թվականի թիվ 478-Ա որոշմամբ Երևանի Դ. Անհաղթի փողոցի ուսանողական հանրակացարանների 6-րդ մասնաշենքի դիմաց գտնվող սրճարանով և աստիճանավանդակով զբաղեցված 152,7քմ մակերեսով հողամասի նկատմամբ ոչ թե ճանաչվել է Գևորգ Քիչոյանի սեփականության իրավունքը, այլ որոշվել է հողամասը վերջինիս տրամադրել վարձակալության իրավունքով: Բացի այդ, ինչպես արդեն նշվեց, «Հ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2005 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ ՀՕ-199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սեփականության իրավունքի ծագման նախապայման է հանդիսանում հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն բովանդակող փաստաթուղթը, որը միաժամանակ հանդիսանում է նշված հիմքով սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթուղթ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, այսինքն՝ **չեն համապատասխանում օրենսդրությանը, կամ դրանցով խախտվել են օրենսդրության պահանջները, կազմված են օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան:**

Տվյալ պարագայում Գևորգ Քիչոյանը Երևանի Դ. Անհաղթի փողոցի հանրակացարանի 6-րդ մասնաշենքի դիմացի հասցեում գտնվող անշարժ գույքի հողամասի նկատմամբ իր անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար սահմանված կարգով լիազոր մարմին չի ներկայացրել հողամասի՝ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում չգտնվելու վերաբերյալ տեղեկատվություն, այսինքն՝ պետական գրանցման ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել ՀՀ օրենսդրությանը, կամ դրանցով խախտվել են օրենսդրու-

---

թյան պահանջները, հետևաբար կադաստրի մերժումը Վճռաբեկ դատարանը համարում է իրավաչափ:

Վերոնշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել կյութական իրավունքի նորմի խախտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոգրյալ հոդվածներով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտին օրինական ուժ տալով՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով Դատարանի վճռում առկա թերի պատճառաբանությունները, հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 14.05.2013 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 09.11.2012 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Գևորգ Բիշոյանից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ-2087/05/12  
2013թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/2087/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Հ. Բեդկյան  
                                  Ա. Բարսյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.01.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ Արտաշես Արտաշեսյանի հայցի ընդդեմ Կոմիտեի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու և որպես հետևանք դիմումի հիման վրա վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Արտաշես Արտաշեսյանը պահանջել է անվավեր ճանաչել 27.02.2012 թվականի թիվ 11-5/1566-12 վարչական ակտը (գրությունը) և պարտավորեցնել Կոմիտեին Արտաշես Արտաշեսյանի կողմից 17.02.2012 թվականին վարչական կարգով ներկայացված դիմումի հիման վրա ընդունել վարչական ակտ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Դարբիսյան) (այսուհետ՝ Դատարան) 25.09.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 24.01.2013 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.09.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

---

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, կիրառել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, չի կիրառել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածը, որը պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ, 65-րդ հոդվածները, 117<sup>12</sup>-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Կոմիտեն հանդես է եկել ոչ թե որպես հանրային իշխանության կրող, գործադիր գերատեսչական մարմնի գործառույթներ իրականացնող, այլ որպես գործատու: Հետևաբար, Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանն անհատական իրավական ակտ է, որով դադարեցվել են գործատուի և աշխատողի միջև աշխատանքային հարաբերությունները, ուստի դրա հետ կապված վեճը նույնպես պետք է դիտել որպես աշխատանքային վեճ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Արտաշես Արտաշեսյանն աշխատանքից ազատվել է Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի հրամանի համաձայն: Վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը:

Կոմիտեի նախագահը, հանդիսանալով մաքսային ծառայության ղեկավար, իրավասու չէ վերանայել իր իսկ կողմից ընդունված հրամանը, իսկ նման լիազորություն մաքսային մարմնում որևէ այլ անձ չունի:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.01.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանով Գուգարքի տարածաշրջանային մաքսատան կապի խմբի ավագ մաքսային տեսուչ-կապավոր-խմբի ղեկավար Արտաշես Արտաշեսյանը 30.06.2011 թվականից ազատվել է մաքսային ծառայության պաշտոնից՝ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի և 129-րդ հոդվածի հիման վրա (**հատոր 1-ին, գ.թ. 8**):

2) Կոմիտեի նախագահին հասցեագրված դիմումով Արտաշես Արտաշեսյանը խնդրել է անվավեր ճանաչել Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին համապատասխան հատուցել իրեն պատճառված վնասը՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար (**հատոր 1-ին, գ.թ.16-19**):

3) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 27.02.2012 թվականի թիվ 11-5/1566-12 գրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով վերադարձվել են Արտաշես Արտաշեսյանի դիմումը և կից փաստաթղթերը՝ դիմումով առաջադրված պահանջը Կոմիտեի իրավասությունից դուրս լինելու պատճառաբանությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 20**):



#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Սույն բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում վարչական և աշխատանքային օրենսդրության կիրառման և հանրային ծառայության հետ կապված վեճերի ընդդատության վերաբերյալ միասնական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում վերոնշյալ հարցերի վերաբերյալ օրենսդրության միատեսակ կիրառությունն ապահովելու համար անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

Աշխատանքային և հանրային ծառայության իրավահարաբերությունների սահմանադրաիրավական և միջազգային իրավական հիմքերին

Հանրային ծառայության ոլորտում աշխատանքային օրենսդրության կիրառման շրջանակներին և բնույթին

Հանրային ծառայության ոլորտում վարչական օրենսդրության կիրառման շրջանակներին և բնույթին

Հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և հանրային ծառայությունը դադարեցնելու իրավահարաբերությունների բնույթին

Հանրային ծառայության հետ կապված վեճերի վերաբերյալ գործերի ընդդատության հարցերին

#### **1) Հանրային ծառայության և աշխատանքային իրավահարաբերությունների սահմանադրաիրավական և միջազգային իրավական հիմքերը**

ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք: Հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:

Վերոնշյալ հոդվածները նախատեսում են քաղաքացու՝ հանրային ծառայության անցնելու իրավունքի իրացման երեք նախապայման. ՀՀ քաղաքացիություն, ընդհանուր հիմունքներ և դրանց՝ օրենքով կանոնակարգվածություն: Հանրային ծառայության ընդունվելու իրավունքը ՀՀ քաղաքացու սահմանադրական հիմնական իրավունքներից է, որի իրացումն իրավական, ժողովրդավարական պետության պայմաններում ոչ միայն աշխատանքի ազատ ընտրության, այլև ժողովրդաիշխանության իրացման դրսևորում է: Այդ իրավունքը պաշտպանվում է ՀՀ Սահմանադրության ուժով, որի իրացման կարգն ու պայմանները, ըստ 30.2-րդ հոդվածի 1-ին մասի, սահմանվում են օրենքով:

Բացի հանրային ծառայության ընդունվելու իրավունքից, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է նաև անձի աշխատանքի ընտրության ազատություն:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:

Վերոնշյալ հոդվածների համադրումը և անձի երկու սահմանադրական իրավունքների հարաբերակցությունը հանգում է նրան, որ ՀՀ Սահմանադրությունը, անձին ընձեռնելով աշխատանքի ընտրության ազատություն, որպես դրա յուրօրինակ դրսևորում նախատեսում է քաղաքացու հանրային ծառայության ընդունվելու իրավունքը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային ծառայության ընդուն-

---

վելու իրավունքը պետք է դիտարկել նաև աշխատանքի ընտրության իրավունքի հետ համատեղ, քանի որ սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում պետական իշխանության համակարգում աշխատանքի իրավունքը՝ որպես աշխատանքի ընտրության ազատության դրսևորում, աստիճանաբար վերաճել է առանձին սահմանադրական իրավունքի՝ դրանից բխող օրենսդրական կարգավորման առանձնահատկություններով: Այն հանգամանքը, որ միջազգային և սահմանադրական իրավունքների զարգացման համատեքստում հանրային (պետական) ծառայությունը դիտարկվում է աշխատանքի իրավունքի շրջանակներում, դրսևորվում է նաև միջազգային իրավական այլ նորմերի ուսումնասիրության արդյունքում:

Մասնավորապես, «Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին» 1978 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայողները, ինչպես և մյուս աշխատողները, ունեն այն քաղաքացիական ու քաղաքական իրավունքները, որոնք էական նշանակություն ունեն միավորվելու ազատության բնականոն իրականացման համար, միակ պայմանով՝ պահպանել իրենց կարգավիճակից և իրենց գործառույթների բնույթից բխող պարտավորությունները:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հանրային ծառայության ընդունվելու սահմանադրական իրավունքը, որը նախատեսվում է նաև միջազգային իրավունքի նորմերով, աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի դրսևորման եղանակներից մեկն է, որն ունի նաև որոշակի առանձնահատկություններ՝ կապված այդ իրավունքի միջոցով պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի (ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդված) և հանրային ծառայողների կողմից իրականացվող գործառույթների բնույթի հետ:

2) Հանրային ծառայության ոլորտում աշխատանքային օրենսդրության կիրառման շրջանակները և բնույթը

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների **առանձին բնագավառների կարգավորման առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքով:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված **այլ պետական (հատուկ) ծառայությունների** և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների **աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:**

Վերոնշյալ հոդվածները, սահմանելով ՀՀ աշխատանքային օրենսդրության գործողության ոլորտները, դրա մեջ ներառել են նաև քաղաքացիական և պետական ծառայության հետ կապված իրավահարաբերությունները: Այսինքն՝ նշված ծառայությունների հետ կապված իրավահարաբերությունները դուրս չեն աշխատանքային օրենսդրության կարգավորման շրջանակներից: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերի կիրառումը հանրային ծառայության նկատմամբ ամբողջական չէ, և հանրային ծառայությունը և դրա տեսակները կարգավորող օրենքներով այլ բան նախատեսված լինելու դեպքերում կիրառվում են այդ իրավական ակտերով նախատեսված կանոնակարգումները: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հստակեցնել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի տրամաբանության լույսի ներքո աշխատանքային օրենսգրքի դրույթները հանրային ծառայության ոլորտում կիրառվում են ոչ թե սուբսիդիարության (լրացու-

ցի) սկզբունքով, այլ հակառակը՝ դրանք օրենսգրքի 7-րդ հոդվածի ուժով ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման ոլորտում, և այդ հարցերի վերաբերյալ հանրային ծառայության օրենսդրության նորմերը պետք է կիրառվեն սուբսիդիարության (լրացուցիչ) կարգով՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտում դրանց միասնական և տարբերակված կարգավորման սկզբունքների հիման վրա:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ օրենսդրական վերոնշյալ կանոնակարգումը չպետք է դիտարկվի և մեկնաբանվի որպես հանրային ծառայության հետ կապված բոլոր իրավահարաբերությունների ներառում հանրային իրավունքի կարգավորման ոլորտում, քանի որ գործող օրենսդրական կանոնակարգումների ընդհանուր տրամաբանության համատեքստում հանրային ծառայության հետ կապված իրավահարաբերություններն ունեն աշխատանքային բնույթ, սակայն հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները՝ օրենսդիրն այլ իրավական կարգավորումների նախատեսման հնարավորություն է ընձեռել: Այդ հանգամանքը պայմանավորված է մի կողմից հանրային ծառայության առանձնահատկություններով, հանրային ծառայության մեջ ներգրավված ծառայողների կարգավիճակի առանձնահատկություններով, մյուս կողմից դրա բազմաբնույթ և բազմաֆունկցիոնալ նշանակությամբ և հետևաբար՝ հանրային ծառայության տարբեր տեսակների գործառության հանդեպ առանձնահատկություններով, որոնք իրենց ազդեցությունն են ունենում նաև դրանց աշխատանքային իրավակարգավորման վրա: Արդյունքում գործող օրենսդրական զարգացումները նման իրավահարաբերությունները դարձրել են որոշակիորեն երկակի իրավակարգավորման ազդեցություն ունեցող օբյեկտ, և վերջինս կարելի է դիտարկել որպես աշխատանքային իրավունք հանրային իրավունքի ոլորտում:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ եզրահանգումները հիմնավորվում են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի և հանրային ծառայության և դրա տեսակները կարգավորող օրենսդրության համակարգային ուսումնասիրությամբ:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների նկատմամբ սույն օրենսգրքի 2-րդ բաժնի նորմերը կիրառվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով: Հատուկ ծառայողների, քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ չեն կիրառվում սույն օրենսգրքի 2-րդ բաժնով սահմանված նորմերը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքն օգտագործում է աշխատանքային պարտականություններ (5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ), քաղաքացիական աշխատանք (5-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ) եզրույթները, հանրային ծառայողին ընձեռում է աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալու իրավունք, աշխատանքի, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածության իրավունք (20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 7-րդ կետեր), օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները պահպանելու պարտականություն (21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ), ծառայողական պարտականությունների կատարման համար անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների երաշխիք (26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) և այլն:

«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մաքսային ծառայության պաշտոնատար անձանց՝ **սույն օրենքով չկարգավորվող աշխատանքային հարաբերությունները** կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և իրավական այլ ակտերով: Ավելին, սույն օրենքի 14-րդ հոդվածի 3.1-ին մասը նախատեսում է, որ մաքսային ծառայության ժամանակա-

---

վոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում (հղիության և ծննդաբերության արձակուրդ, պարտադիր զինվորական ծառայության գորակոչում), ինչպես նաև մաքսային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության և օրենքով նախատեսված այլ դեպքերում այդ պաշտոնը կարող են զբաղեցնել մաքսային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող և տվյալ պաշտոնի նկարագրին բավարարող անձինք, որոնց հետ կնքվում է **Ժամկետային աշխատանքային պայմանագիր**, իսկ դրա անհնարինության դեպքում հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ, 9-րդ հոդվածների և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով: Օրենսդիրն օգտագործում է նաև աշխատանքի ներկայանալու, աշխատանքում ցուցաբերած առանձնահատուկ ծառայություններ հասկացությունները, մաքսային ծառայողին ընձեռում աշխատանքի, վարձատրության, առողջության պաշտպանության, անվտանգ և անհրաժեշտ աշխատանքային պայմանների ապահովվածության իրավունք և այլն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ իրավական կարգավորումները աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված իրավունքների և կանոնակարգումների դրսևորումներ են հանրային ծառայության ոլորտում, քանի որ վերոնշյալ կանոններն առավել մանրամասն նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հանրային ծառայողի գործունեության հետ կապված հարցերը, որոնք չեն բխում նրա վարչաիրավական կարգավիճակից, կրում են աշխատանքային բնույթ, իսկ դրանց իրավակարգավորման հիմքը ՀՀ աշխատանքային օրենսգրքն է և հանրային ծառայության վերաբերյալ օրենքների համապատասխան դրույթները: Հետևաբար դրանք պետք է դիտարկվեն միասնության մեջ՝ որպես մեկ իրավակարգավորում:

3) Հանրային ծառայության ոլորտում վարչական օրենսդրության կիրառման շրջանակները և բնույթը

Վճռաբեկ դատարանը հանրային ծառայության ոլորտում վարչական օրենսդրության կիրառման շրջանակները հստակեցնելու համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ հանրային ծառայության բնույթին և նշանակությանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային ծառայությունը սոցիալ-իրավական ինստիտուտ է, որն ուղղակիորեն կապված է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան պետության գործունեության ապահովման հետ: Այն նաև պետության (հանրային իշխանության մարմինների) և քաղաքացու միջև ծագող հանրային-իրավական բնույթի հասարակական հարաբերությունների (վարչակառավարչական գործընթացների) ամբողջություն է, որը միտված է օրենսդրությամբ նախանշված կարգով ու շրջանակներում պետության (հանրային իշխանության մարմինների) քաղաքականության իրականացմանը:

Այդ հանգամանքը հաստատվում է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, որի համաձայն՝ հանրային ծառայությունը **պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է**, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները: Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն **ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը**: Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, **մաքսային**, փրկարար ծառայության հանրապետական գործադիր **մարմիններում**, Հա-

յաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայությունը, Ազգային անվտանգության խորհրդում, ինչպես նաև օրենքներով նախատեսված այլ ծառայություններ: Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների միասնական կենտրոնացված համակարգն է:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային ծառայությունը հիմնվում է աստիճանակարգված ենթակայության սկզբունքի վրա:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հանրային ծառայությունը և հետևաբար հանրային ծառայողների գործունեությունն ունի նաև վարչաիրավական դրսևորումներ, քանի որ հանրային ծառայության (ծառայողների) միջոցով իրագործվում են պետության լիազորությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրները և գործառույթները: Բացի այդ, պետական ծառայության տեսակ համարվող մաքսային ծառայությունը միասնական կենտրոնացված համակարգ է և հիմնվում է աստիճանակարգված ենթակայության սկզբունքի վրա: Այսինքն՝ հանրային (մաքսային) ծառայության իրականացման ժամանակ վարչաիրավական հարաբերությունները դրսևորվում են արտաքին, ներկազմակերպական, ենթակայական, ուղղահայաց և հորիզոնական իրավահարաբերությունների ձևով:

Հետևաբար հանրային ծառայության իրականացման ժամանակ կարող են կիրառվել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները, քանի որ նշված օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները, իսկ օրենքի գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային ծառայության ոլորտում գործերի քննության և կիրառման ենթակա իրավունքի նորմերի ընտրության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն վերոնշյալ վերլուծությունները և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հստակեցնեն հանրային ծառայության վարչաիրավական և աշխատանքային կողմերը:

#### **4) Հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և հանրային ծառայությունը դադարեցնելու իրավահարաբերությունների բնույթը**

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքով, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և հանրային ծառայության տեսակները կարգավորող այլ իրավական ակտերով:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն (առանց մրցութային կամ այլ ընթացակարգերի) համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը՝ կնքելով սույն օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրեր: Աշխատող փնտրող գոր-

---

ծառուն կարող է թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը համալրել նաև իր կազմակերպած մրցույթով կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից: Թափուր աշխատատեղերի համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մրցույթում հաղթած անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է գործատուն: **Քաղաքացիական, օրենքով սահմանված պետական (հատուկ) այլ ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների թափուր պաշտոնները համալրելու կարգը և պայմանները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով:**

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցվում են մրցույթով կամ օրենքով սահմանված այլ կարգով: Հանրային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու հետ կապված հարաբերությունները սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ մաքսային ծառայությունն իրականացվում է մաքսային ծառայության անցնելու մասին կնքված պայմանագրին համապատասխան, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Մաքսային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են մրցույթով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ աշխատանքի (հանրային ծառայության) անցնելու կարգում օրենսդիրը դրել է ընդհանուր տրամաբանություն, որը նախատեսված է աշխատանքային օրենսդրությամբ: Դա մրցույթով կամ առանց մրցույթի աշխատանքի (ծառայության) ընդունելն է՝ համապատասխան պայմանագիր կնքելու եղանակով: Ընդ որում, մաքսային ծառայության անցնելիս կնքվում է մաքսային ծառայության անցնելու մասին պայմանագիր, որում նույնպես սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, որը բնորոշ է նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրին:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ օրենսդիրը հանրային ծառայության անցնելու ընթացակարգն առավել մանրամասն կանոնակարգել է հանրային ծառայության վերաբերյալ օրենսդրությամբ՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածի պահանջների կատարումը: Հետևաբար, ի տարբերություն սովորական աշխատանքային հարաբերությունների, հանրային ծառայության անցնելու իրավահարաբերությունների դեպքում օրենսդիրն առավել մանրամասն է կարգավորել դրա ընթացակարգային հարցերը (հանրային ծառայության ընդունվելու իրավունք ունեցող անձանց ներկայացվող պահանջները, մրցույթի անցկացման կարգը և այլն)՝ նախատեսելով այն ընդհանուր հիմունքները, որոնց միջոցով քաղաքացիներն իրավունք ունեն ընդունվելու հանրային ծառայության:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հանրային ծառայության անցնելու հետ կապված իրավահարաբերությունները նույնպես կրում են աշխատանքային բնույթ՝ հանրային ծառայության ընդգրկվելու պայմանների առավել մանրամասն կանոնակարգմամբ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ հարցին պատասխանելուց հետո անհրաժեշտ է համարում անդրադառնալ հանրային ծառայության իրականացման իրավահարաբերությունների բնույթին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային ծառայության իրականացման հետ

կապված իրավահարաբերությունները կարող են ունենալ ինչպես զուտ աշխատանքային, այնպես էլ վարչաիրավական բնույթ, քանի որ հանրային ծառայողը գործատուի (պետության) հետ կարող է իր կարգավիճակից ելնելով մտնել և աշխատանքային, և վարչական իրավահարաբերությունների մեջ:

Մնան պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հանրային ծառայության իրականացման բնույթը դատարանները պետք է որոշեն կոնկրետ իրավիճակից ելնելով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյոք այդ իրավահարաբերությունները կապված են հանրային ծառայողի վարչական գործառույթների, թե զուտ աշխատանքային գործառույթների հետ:

Ինչ վերաբերում է հանրային ծառայությունը դադարեցնելու հետ կապված իրավահարաբերությունների բնույթին, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ **պետական կամ համայնքային ծառայության առանձնահատկություններից ելնելով՝** հանրային ծառայության պաշտոնից ազատելու հիմքերը սահմանվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատման հիմք է նաև նույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը, հանրային ծառայությունը դադարեցնելու (հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու) իրավահարաբերությունները դիտարկելով որպես աշխատանքային, այնուամենայնիվ, դրա համար նախատեսել է առանձնահատուկ հիմքեր, որոնք սահմանվում են հանրային ծառայության կոնկրետ տեսակների վերաբերյալ օրենքներով (մաքսային ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերը սահմանված են «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածում): Հետևաբար այդ իրավահարաբերությունները կրում են աշխատանքային (ծառայողական) բնույթ, սակայն դրանց առանձնահատկություններից ելնելով՝ հանրային ծառայությունը դադարեցնելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքը, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը և հանրային ծառայության տեսակները կարգավորող այլ իրավական ակտերը:

##### **5) Հանրային ծառայության հետ կապված վեճերի վերաբերյալ գործերի ընդդատությունը**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան**, իրականացնում է դատարանը:

Նույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային վեճերը ենթակա են քննության դատական կարգով՝ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն **ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:**

Նշված դրույթներից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են միայն քաղաքացիական գործերը (*տե՛ս «Օթյակ» ՓԲԸ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի թիվ ԵԿԴ/2028/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 23-ի որոշումը*): Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել,

---

որ օրենսդիրն աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտի վեճը դիտարկում է որպես քաղաքացիական գործ, որն ընդդատյա է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝ **հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **վարչարարությունը** վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև այն **գործողությունը** կամ անգործությունն է, որն **անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:**

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը ենթադրում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Այսինքն՝ հանրային իրավահարաբերություններն այն հարաբերություններն են, որոնք ծագում են **պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝** վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (*յուև ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱԲԴ/1369/02/09 գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 03-ի որոշումը*):

Չարգացնելով վերոնշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի տառացի մեկնաբանությունը հանգեցնում է նրան, որ հանրային ծառայության անցնելու և իրականացնելու հետ կապված վեճերը հանրային իրավահարաբերություններից ծագող գործեր են և ընդդատյա են ՀՀ վարչական դատարանին, իսկ հանրային ծառայությունը դադարեցնելու հետ կապված վեճերը չունեն հանրային իրավահարաբերություններից ծագող բնույթ և ՀՀ վարչական դատարանին ընդդատյա չեն: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, ելնելով այն տրամաբանությունից, որ հանրային ծառայության անցնելու և իրականացնելու գործընթացները զուգորդվում են վարչարարությամբ, և դրանց ընթացքում ընդունվում են վարչական ակտեր, չի կանտոնակարգել հանրային ծառայությունը դադարեցնելու հետ կապված իրավահարաբերությունների բնույթը և ընդդատության հարցերը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հանրային ծառայության դադարեցումը ևս կարող է զուգորդվել վարչարարության իրականացմամբ և վարչական ակտի ընդունմամբ: Օրենսդրական նման անհստակության հետևանքով թյուրըմբռնումներից խուսափելու համար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանները վերոնշյալ հոդվածը մեկնաբանելիս պետք է հաշվի առնեն նաև հանրային ծառայության օրենսդրության համակարգային վերլուծությունը, ինչպես նաև դրա հարաբերակցությունն աշխատանքային օրենսդրության հետ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված ոչ բոլոր վեճերն են ընդդատյա ՀՀ վարչական դատարանին: Մասնավորապես, այն վեճերը, որոնք կրում են աշխատանքային բնույթ և ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման տիրույթում, ընդդատյա են ոչ թե ՀՀ վարչական դատարանին, այլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի ընդ-



հանուր իրավասության դատարանին:

Վճռարենկ դատարանը գտնում է նաև, որ յուրաքանչյուր գործով հանրային ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված վեճերի ընդդատության հարցը լուծելիս դատարանները պետք է հաշվի առնեն վերոնշյալ վերլուծությունները՝ իրավահարաբերության բնույթը պարզելու համար:

#### **4.6. Վերոնշյալ կանոնների կիրառումը սույն գործի նկատմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանով Գուգարքի տարածքային մաքսատան կապի խմբի ավագ մաքսային տեսուչ-կապավոր-խմբի ղեկավար Արտաշես Արտաշեսյանը 30.06.2011 թվականից ազատվել է մաքսային ծառայության պաշտոնից՝ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի և 129-րդ հոդվածի հիման վրա: Կոմիտեի նախագահին հասցեագրված դիմումով Արտաշես Արտաշեսյանը խնդրել է անվավեր ճանաչել Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներին համապատասխան հատուցել Արտաշես Արտաշեսյանին պատճառված վնասը՝ հարկադիր պարսպորդի ամբողջ ժամանակահատվածի համար: Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 27.02.2012 թվականի թիվ 11-5/1566-12 գրությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով վերադարձվել են Արտաշես Արտաշեսյանի դիմումը և կից փաստաթղթերը՝ դիմումով առաջադրված պահանջը Կոմիտեի իրավասությունից դուրս լինելու պատճառաբանությամբ:

Դատարանը, սույն գործով անդրադառնալով պատասխանողի այն փաստարկին, որ վիճարկվող որոշումը չի հանդիսանում վարչական ակտ, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 30.2-րդ հոդվածի 1-ին մասը, ուսումնասիրելով Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանը, գտել է, որ այն վարչական ակտ է, քանի որ վերոնշյալ օրենսդրական դրույթների վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ վարչական ակտը պարտադիր պետք է տարածվի վարչական մարմնից (վերջինիս ազդեցության ոլորտից, ենթակայությունից) դուրս գտնվող անձանց վրա, այսինքն՝ ունենա արտաքին ներգործություն: Արդյունքում Դատարանը եզրակացրել է, որ հանրային ծառայությունը դադարեցնելու մասին հրամանը հանդիսանում է վարչական ակտ, քանի որ, առաջին՝ ներգործում է մասնավոր անձի սուբյեկտիվ իրավունքների վրա և երկրորդ՝ դրա ներգործությունն անձի իրավունքների ոլորտին այնպիսին է, որ փոխում է անձի կարգավիճակը:

Վերաքննիչ դատարանը, Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 30.2-րդ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածները, պատճառաբանել է, որ քաղաքացուն վերապահված է օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք, իսկ հանրային ծառայությունը պետությանը ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է նաև պետական ծառայությունը, որն էլ ընդգրկում է հատուկ ծառայությունները, այդ թվում նաև՝ մաքսային ծառայությունը, որպիսի ծառայության անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերի վերաբերյալ գործերն օրենքի ուժով ընդդատյա են Դատարանին, այսինքն՝ դիտվում են որպես հանրային իրավահարաբերություններից ծագող

---

գործեր:

Վերաքննիչ դատարանը գտել է նաև, որ Դատարանի պատճառաբանությունը հիմնավոր է, քանի որ Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանը, հետևաբար նաև Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 27.02.2012 թվականի թիվ 11-5/1566-12 գրությունը պարունակում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով միջամտող վարչական ակտին ներկայացվող բոլոր տարրերը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոնշյալ պատճառաբանություններն անհիմն են և չեն բխում սույն գործով կիրառման ենթակա իրավական նորմերի բնույթից հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է **հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով** և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով վարչական ակտի բնորոշման հատկանիշ է համարվում արտաքին ներգործությունը, հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելը, և այդ ակտը պետք է ուղղված լինի անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն (յրես՝ ՀՀ կառավարությանն առնչվող հարկային պետական ծառայության հանքարդյուրողների ոլորտային հարկային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» սահմանափակ պարտախանութային ընկերության թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.07.2007 թվականի որոշումը):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանը պետք է գնահատի վիճարկվող ակտի անհատական ակտ լինելու, վարչական մարմնի կողմից ընդունված լինելու, արտաքին ներգործություն ունենալու, **հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու**, կոնկրետ գործի կարգավորման նպատակ հետապնդելու, անձի համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու հանգամանքների միաժամանակյա առկայությունը (յրես «Օլիմպ» արդյուրական կոոպերատիվն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4538/05/09 գործով Վճռաբեկ դատարանի 29.10.2010 թվականի որոշումը):

Մինչդեռ սույն գործով Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանը, որով Գուգարքի տարածքային մաքսատան կապի խմբի ավագ մաքսային տեսուչ-կապավոր-խմբի ղեկավար Արտաշես Արտաշեսյանը 30.06.2011 թվականից ազատվել է մաքսային ծառայության պաշտոնից՝ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի և 129-րդ հոդվածի հիման վրա, չի համարվում վարչական ակտ, քանի որ այն հանրային իրավունքի բնագավառում ընդունված անհատական ակտ չէ: Վճռաբեկ դատարանը սույն որոշումամբ կատարված վերլուծությունների հաշվառմամբ գտնում է, որ Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի թիվ 1/756 հրամանի վիճարկման հետ կապված իրավահարաբերությունները ներառված են ոչ թե հանրային իրավունքի, այլ աշխատանքային իրավունքի կարգավորման ոլորտում, հետևաբար հրամանը չի պարունակում վարչական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները, այլ աշխատանքային իրավահարաբերությունների ոլորտում ընդունված անհատական իրավական ակտ է: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ

դիրքորոշումը հիմնվում է նաև այն հանգամանքի վրա, որ Գուգարքի տարածքային մաքսատան կապի խմբի ավագ մաքսային տեսուչ-կապավոր-խմբի ղեկավար Արտաշես Արտաշեսյանն աշխատանքից ազատվել է հաստիքների կրճատման հիմքով, որպիսի իրավահարաբերությունը կրում է աշխատանքային բնույթ:

Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ստորադաս դատարանների այն պատճառաբանությանը, թե հայցվորին աշխատանքից ազատելու մասին անհատական իրավական ակտը վարչական ակտ է՝ նրա սուբյեկտիվ իրավունքների վրա ներգործության ինտենսիվությամբ պայմանավորված անձի կարգավիճակը փոխելու ունակության պատճառով: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, 33-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, ինչպես նաև «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և 51-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նախատեսում են հաստիքների կրճատման պատճառով պաշտոնից ազատված մաքսային ծառայողի գրանցումը մաքսային ծառայության կադրերի ռեգերվում՝ հետագայում ծառայությունը շարունակելու նպատակով: Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտաշես Արտաշեսյանը Կոմիտեի նախագահի 30.06.2011 թվականի հրամանով ազատվել է ոչ թե մաքսային ծառայությունից ընդհանրապես, այլ մաքսային ծառայության կոնկրետ պաշտոնից: Հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատելու իրավական հետևանքը վերոհիշյալ օրինադրույթների պահանջների հաշվառմամբ կարող է լինել այն, որ Արտաշես Արտաշեսյանը գրանցվի մաքսային ծառայության կադրերի ռեգերվում՝ հետագայում ծառայությունը շարունակելու նպատակով: Հետևաբար, պաշտոնից ազատելու մասին հրամանն ուղղված չի եղել Արտաշես Արտաշեսյանի հետագա ծառայությունը մաքսային մարմիններում ընդհանրապես դադարեցնելուն, ինչը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ հրամանով կարգավորվել են կողմերի միջև եղած զուտ աշխատանքային հարաբերությունները, իսկ ծառայությունից ազատված աշխատողի իրավական կարգավիճակն էլ փոխվել է այնքանով, որքանով որ նա այլևս չի կարող աշխատել մաքսային տեսուչ-կապավոր-խմբի ղեկավարի պաշտոնում՝ նշված հաստիքը կրճատվելու պատճառով, այլ խոսքով՝ հանրային ծառայողի նրա կարգավիճակը չի փոխվել այն աստիճան, որ նա այլևս իրավասու չլինի շարունակելու հանրային ծառայությունը: Մնան պայմաններում հիմնավոր է նաև Կոմիտեի այն փաստարկը, որ Կոմիտեի նախագահն իրավասու չէ վերանայել իր իսկ արձակած հրամանն աշխատողին աշխատանքից ազատելու վերաբերյալ, հակառակ պարագայում կառաջանա մի իրավիճակ, երբ մինևույն անձը կհանդիսանա և գործատու, և աշխատանքային վեճը լուծող մարմին:

Ամփոփելով վերոշարադրյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի ընդդատության հարցը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն վիճելի իրավահարաբերության բնույթով, իսկ այն աշխատանքային իրավահարաբերություն է, ուստի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դրա վերաբերյալ գործն ընդդատյա է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

---

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե վեճն ընդդատյա չէ վարչական դատարանին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը: Բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ վերլուծությունների հիման վրա գտնում է, որ սույն գործն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանի քննությանը, հետևաբար սույն վարչական գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.01.2013 թվականի որոշումը և գործի վարույթը կարճել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ արորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ արորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ5/0018/05/12**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ5/0018/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)*

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի ապրիլի 05-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Սեղա Առաքելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ Սեղա Առաքելյանի հայցի ընդդեմ Գյումրու քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան), երրորդ անձ Ռ-աֆիկ Առաքելյանի՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սեղա Առաքելյանը պահանջել է պարտավորեցնել Քաղաքապետարանին իրականացնել վարչական վարույթ՝ ընթացք տալով իր 14.06.2011 թվականի «ք. Գյումրի, Աթարբեկյան թիվ 121/157 հասցեի ինքնակամ շինությունն օրինականացնելու մասին» թիվ Ա-3659 դիմումին, և բավարարել այն՝ որպես օրինաչափ, այն է՝ Գյումրիի Աթարբեկյան թիվ 121/157 հասցեի ինքնակամ շինությունն օրենքով սահմանված կարգով օրինականացնել իր անվամբ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 25.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

---

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.10.2012 թվականի որոշմամբ Ռ-աֆիկ Առաքելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Դատարանի 25.05.2012 թվականի վճիռը և այն փոփոխվել է. հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սեդա Առաքելյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ռ-աֆիկ Առաքելյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 731-Ն որոշումը, որը պետք է կիրառեր, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետը, ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետը, որոնք չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, 24-րդ, 35-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը սույն գործով չի կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ճիշտ չի գնահատել ապացույցները, կատարել է սխալ եզրահանգումներ, հիմնվել է միայն Ռ-աֆիկ Առաքելյանի հայտարարությունների վրա, որոնք հիմնավորող ապացույցներ գործում առկա չեն, չի հերքել Դատարանի պարզաբանումները և բողոք բերած անձի պատճառաբանությունները, վերլուծել և անդրադարձել է այնպիսի հարցերի, որոնք դատաքննությանը ընդհանրապես քննարկման առարկա չեն դարձվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գործում առկա չէ նույնիսկ հողամասերի դիրքի փաստացի հաստակագիծ: Ավելին, Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոք բերած անձի այն պատճառաբանությանը, որ իր զբաղեցրած տարածքը Գյումրիի Աթարբեկյան թիվ 6<sup>ա</sup> հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի հետ բացարձակապես կապ չունի: Մասնավորապես՝ «Պ.Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ-ի եզրակացությամբ հաստատվում է, որ Ռ-աֆիկ Առաքելյանի սեփական 250քմ մակերեսով տարածքն ընդհանրապես կից չէ բողոք բերած անձի հողամասին և շինությանը, այն ավելի հեռու է, պարզապես Ռ-աֆիկ Առաքելյանն ապօրինաբար հողազավթում է կատարել, և բողոք բերած անձի ու Ռ-աֆիկ Առաքելյանի հողամասի միջևամատում գտնվող համայնքապատկան հողամասն արհեստականորեն կցվել է վերջինիս հողամասին: Այսինքն՝ նրա կողմից զբաղեցված ոչ թե օրինական, այլ զավթած հողամասն է կից բողոք բերած անձի զբաղեցրած հողամասին:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև Քաղաքապետարանի տված մերժման գրության բովանդակությանն այն մասին, որ բողոք բերած անձի պահանջն օրինական է, բայց այն վիճահարույց է, որի պատճառով դրան ընթացք չի տրվել:

Վերաքննիչ դատարանը չպետք է կիրառեր ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետը, քանի որ սույն գործով նման խնդիր ընդհանրապես քննության առարկա չի դարձվել, այլ պետք է կիրառեր ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 731-Ն որոշումը, քանի որ հողամասը համայնքապատկան է, որպիսի փաստն ընդունել է նաև Քաղաքապետարանը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում խնդիրը քաղաքաշինության հետ առնչվող հանգամանքներն են, ուստի Վերաքննիչ դատարանը դրանց մասով որպես ապացույց կարող էր գնահատել և եզրահանգումներ անել միայն համապատասխան փորձաքննության եզրակացության առկայության պայմաններում, առանց որի իրավասու չէր հատուկ գիտելիքների վերաբերյալ եզրակացություններ կատարել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.10.2012 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 25.05.2012 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստաթղթերը**

Ռաֆիկ Առաքելյանը, դեռևս 2007 թվականից հանդիսանալով Գյումրու Աթարբեկյան թիվ 6<sup>ա</sup> հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի սեփականատերը, չի կարող լիարժեք օգտագործել իր բակը, քանի որ ոչ միայն նրա բակի նախագծով նշված մուտքն է փակված Սեդա Առաքելյանի մետաղյա ժամանակավոր տնակով, այլև Ռաֆիկ Առաքելյանի սեփական հողամասի մի հատվածը գտնվում է ժամանակավոր տնակի տակ:

Սեդա Առաքելյանը ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող և ոչ ճիշտ տվյալներ:

Նշված ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել միայն որպես հողի սեփականատիրոջ, այն է՝ Ռաֆիկ Առաքելյանի սեփականությունը: Այդ եզրահանգումը հիմնավորվում է նաև ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետի «բ» ենթակետով, ինչպես նաև նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ և 9-րդ կետերով:

Բողոք բերած անձն անտեսել է այն հանգամանքը, որ վիճելի կառույցը չի գտնվում պետական կամ համայնքային սեփականություն համարվող հողամասի վրա:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Գյումրու քաղաքապետի (այսուհետ՝ Քաղաքապետ) տեղակալի 14.11.2011 թվականի թիվ 1/2-009/3659 գրությամբ՝ ի պատասխան Քաղաքապետին ուղղված Սեդա Առաքելյանի 14.06.2011 թվականի թիվ Ա-3659 դիմումի՝ հայտնվել է, որ վերջինիս կողմից կառուցված շինության օրինականացման պահանջը չի հակասում քաղաքաշինության նորմերին, սակայն այն մերժվել է վիճահարույց լինելու պատճառով (**հատոր 1-ին, գ.թ. 4**):

2) Քաղաքապետի 23.01.2006 թվականի թիվ 53 որոշման 1.1-րդ կետով Գյումրու Աթարբեկյան փողոցի հարևանությամբ գտնվող պետական սեփականություն հանդիսացող 250քմ մակերեսով հողամասը (ծածկագիր՝ Ա05-97) սեփականության իրավունքով հանձնվել է նշված հողամասի օտարման աճուրդում հաղթած Ռաֆիկ Առաքելյանին՝ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 9**):

3) 22.11.2011 թվականին տրված հաշվառման մասին տեղեկանքի համաձայն՝ Սեդա Առաքելյանը «Շիրակի մարզ, Գյումրի, տնակ 121/157» հասցեում հաշվառվել է 05.01.2001 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 13**):

4) 01.06.2007 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2398361 վկայականի համաձայն՝ Գյումրու Աթարբեկյան փողոցի թիվ 6<sup>ա</sup> տան նկատմամբ Քաղաքապետի 23.01.2006 թվականի թիվ 53 որոշման և 24.01.2006 թվականի հողամասի առուվաճառքի թիվ 427 պայմանագրի հիման վրա գրանցվել է Ռաֆիկ Առաքելյանի սեփականության իրավունքը (**հատոր 2-րդ, գ.թ. 29-31**):

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է դատարանի կողմից գործի փաստերն ի պաշտոնե պարզելու, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու լիազորության լիարժեք իրականացման, ինչպես նաև գործի իրական փաստերի բացահայտման գործընթացում վարչական-դատարանական օրենսգրքով դատարանին վերապահված լիազորու-

---

*թյուններն ակտիվորեն օգտագործելու հարցերին:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

- 1) գնահատում է ապացույցները.
- 2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.
- 3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը.

- 4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է անմիջականորեն գնահատել գործում եղած բոլոր ապացույցները, ապա դրանց հետազոտման և գնահատման միջոցով պարզել նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և այդ պահանջների պահպանման արդյունքում միայն որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցերը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ տվյալ դեպքում ինքնակամ կառույցը (տնակը՝ որպես այդպիսին համարելու պարագայում) կարող է ճանաչվել միայն հողի սեփականատիրոջ, այն է՝ Ռ-աֆիկ Առաքելյանի սեփականությունը: Հետևաբար, անհիմն է Դատարանի այն պնդումը, որ Քաղաքապետարանը, մերժելով Սեդա Առաքելյանի դիմումը, խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումների դրույթները՝ հաշվի առնելով, որ Սեդա Առաքելյանի կողմից օրինականացման դիմում ներկայացնելու պահին՝ 14.06.2011 թվականին, ինքնակամ կառույցով զբաղեցված հողատարածքը հանդիսացել է այլ անձի՝ Ռ-աֆիկ Առաքելյանի սեփականությունը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի վերոգրյալ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործում առկա ապացույցներով որևէ կերպ չի հաստատվում այն փաստական հանգամանքը, որ Քաղաքապետին ուղղված Սեդա Առաքելյանի 14.06.2011 թվականի թիվ Ա-3659 դիմումում նշված շինությունը գտնվում է Ռ-աֆիկ Առաքելյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի գնահատել Քաղաքապետի տեղակալի 14.11.2011 թվականի թիվ 1/2-009/3659 գրությունը, որով հայտնվել է, որ Սեդա Առաքելյանի կողմից կառուցված շինության օրինականացման պահանջը չի հակասում քաղաքաշինության նորմերին, սակայն այն մերժվել է միայն վիճահարույց լինելու պատճառով:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հե-

---



տազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, որպիսի խախտման արդյունքում առանց համապատասխան ապացույցի առկայության հաստատված է համարել այն հանգամանքը, որ Սեդա Առաքելյանի կողմից օրինականացման դիմում ներկայացնելու պահին՝ 14.06.2011 թվականին, ինքնակամ կառույցով զբաղեցված հողատարածքը հանդիսացել է այլ անձի՝ Ռաֆիկ Առաքելյանի սեփականությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio»):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգեցնելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (*յրե՛ս՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կումիտեի Արաբկիրի հարկային տեսչությունն ընդդեմ «Զորջ ընդ Բրանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

Վերահաստատելով իր դիրքորոշումը և նշվածի համատեքստում անդրադառնալով սույն գործի փաստերին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, հաստատված համարելով այն հանգամանքը, որ Սեդա Առաքելյանի զբաղեցրած տարածքն իր ելք ու մուտքով տարբեր է երրորդ անձի ինքնակամ շինությունից, պարտավոր էր նշված հանգամանքը պարզելու համար ձեռնարկել ողջամիտ միջոցներ, այսինքն՝ Գյումրու քաղաքապետին ուղղված Սեդա Առաքելյանի 14.06.2011 թվականի թիվ Ա-3659 դիմումում նշված ինքնակամ կառույցի դիրքի վերաբերյալ փաստերը պարզել ի պաշտոնն:

Նման պայմաններում անհիմն են դառնում նաև Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն առ այն, որ օրինականացման դիմում ներկայացնելու պահին ինքնակամ կառույցով զբաղեցված հողատարածքը հանդիսացել է այլ անձի՝ Ռաֆիկ Առաքելյանի սեփականությունը: Վերաքննիչ դատարանի սույն պատճառաբանության անհիմն լինելը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է նրանով, որ սույն գործի ապացուցման

---

առարկան կազմող փաստերում բացակայում է փաստն այն մասին, որ Սեդա Առաքելյանի ինքնակամ շինությամբ ծանրաբեռնված հողամասը համընկնում է Ռ-աֆիկ Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի հետ կամ որ նույնն է՝ ինքնակամ շինությունը կառուցված է Ռ-աֆիկ Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում:

Նշված պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ փաստը սույն գործի լուծման համար ուներ էական նշանակություն, քանի որ այդ փաստի պարզման հիմքով է հնարավոր կանխորոշել սույն գործի ելքը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման՝ «Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը» մասում արձանագրված այն հանգամանքին, որ տվյալ դեպքում Դատարանում կողմերի տված հայտարարությունների համաձայն՝ վիճելի տևակը (ինքնակամ կառույցը) ամբողջությամբ գտնվում է Ռ-աֆիկ Առաքելյանի սեփականությունը հանդիսացող 250քմ մակերեսով հողատարածքի սահմաններում, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքն ինքնին առանց համապատասխան բավարար ապացույցների առկայության չէր կարող հիմք հանդիսանալ հայցի մերժման համար հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր ապացույցները և իրեղեն ապացույցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ապացույցը գնահատելու կամ փաստը հաստատելու համար դատարանին կօգնի գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ իմացությունը, ապա անձը, որն իր կրթության, ունակության, հմտության կամ փորձի շնորհիվ կարող է փորձագետ համարվել, կարող է դատարանին ցուցմունք տալ տվյալ ապացույցի կամ փաստի վերաբերյալ եզրակացության ձևով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է նշանակել փորձագետ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 35-րդ և 36-րդ հոդվածներով սահմանված ապացույցը գնահատելու կամ փաստը հաստատելու համար փորձագետ նշանակելու հետ կապված դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանն իր այդ իրավունքն իրականացնելիս պարտավոր է ապահովել նույն օրենսգրքի 6-րդ և 24-րդ հոդվածներով ամրագրված գործի փաստերն ի պաշտոնե պարզելու և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու պարտականությունների լիարժեք իրականացումը, ինչպես նաև տվյալ գործի իրական փաստերի բացահայտման գործընթացում ակտիվորեն օգտագործի վարչական-դատավարական օրենսգրքով իրեն վերապահված իրավունքները, որպիսի գործընթացում սակայն դատարանը պարտավոր է ելնել բացառապես անձին սահմանադրական նորմի ուժով երաշխավորված արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթի գերակայությունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անշարժ գույքի՝ տեղանքում որոշակի դիրք ունենալու, հողամասի կարգավիճակի և պատկանելիության վերաբերյալ փաստերը կարող են ապացուցվել որոշակի այնպիսի ապացույցներով, որոնցով հավաստվում է տվյալ շինության կարգավիճակը, հողամասի նկատմամբ առկա իրավունքները, սահմանափակումները, հողամասի չափերը, այլ հողամասերի նկատմամբ ունեցած դիրքը: Այդպիսի ապացույցներ, հաշվի առնելով անշարժ գույքի հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները, կարող են լինել վարչական մարմինների կողմից ընդունված

համապատասխան ակտերը, չափագրման արդյունքները, տեղագրական հանույթները և վերջիններիս հավասարագոր այլ ապացույցներ: Մինչդեռ, կողմերի ցուցմունքների հիման վրա ապացուցման առարկայում ընդգրկված նշված փաստերի հաստատումը դատական ակտին զրկում է հիմնավորված լինելուց, քանի որ այդ փաստերը հաստատված չեն որոշակի ապացույցներով:

Նշված պատճառաբանությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձ Սեդա Առաքելյանի 14.06.2011 թվականի թիվ Ա-3659 դիմումում նշված ինքնական կառույցի՝ սեփականության իրավունքով Ռ-աֆիկ Առաքելյանին պատկանող հողամասի նկատմամբ դիրքի վերաբերյալ ապացույցներ պահանջելու և դրանց հիման վրա գործի փաստերն ի պաշտոնե պարզելու համար սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության:

Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի փաստարկին՝ կապված «Պ.Ա.Գ. ԷՍԹ-ԵՅԵ» ՍՊԸ-ի եզրակացության հետ, քանի որ վերոգրյալ եզրակացությունը չի ներկայացվել ստորադաս ատյաններում և դրա վերաբերյալ վերջիններս որևէ դիրքորոշում չեն հայտնել:

*Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պայրասխանում բերված փաստարկները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.10.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴՅ/0011/05/10  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ ՎԴՅ/0011/05/10  
2013թ.  
Գ. Ղարիբյան  
Ա. Աբովյան  
Ա. Առաքելյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական սրահայրը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)*

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2013 թվականի հուլիսի 04-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական  
եկամոտների կոմիտեի Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝  
Տեսչություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվակա-  
նի որոշման դեմ՝ ըստ Տեսչության հայցի ընդդեմ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսե-  
փյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և ըստ անհատ ձեռնարկատեր Արթուր  
Հովսեփյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Տեսչության՝ ակտը և որոշումն անվավեր ճանա-  
չելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է արձակել անհատ ձեռնարկատեր Ար-  
թուր Հովսեփյանից 165.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ վճարման կարգադրու-  
թյուն:

ՀՀ վարչական դատարանի կողմից 17.12.2009 թվականին արձակվել է վճարման  
կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյա-  
նը պահանջել է անվավեր ճանաչել Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտը և  
Տեսչության պետի 03.09.2009 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբեր-

յալ» թիվ 106558 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 02.03.2010 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) 31.05.2010 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշմամբ Տեսչության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ որոշվել է բեկանել ՀՀ վարչական դատարանի 31.05.2010 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 16.10.2012 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.03.2013 թվականի որոշմամբ Տեսչության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 16.10.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ Կառավարության 26.08.2004 թվականի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 1325-Ն որոշումը, որոնք պետք է կիրառել, խախտել է ՀՀ վարչական դատարանի որոշման օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 26-րդ, 113-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ ամրագրել է Դատարանի այն դիրքորոշումը, թե անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի առևտրակետում հսկիչ-դրամարկղային մեքենայի շահագործման կանոնների պահպանման կարգի խախտում տեղի չի ունեցել, որի հիմքում դրել է հսկիչ-դրամարկղային մեքենան սարքին և կապարակն քված վիճակում լինելու հանգամանքը և անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի ներկայացրած երկու լուսանկարները, որոնցում «21.06.2009թ.» ամսաթվով հսկիչ-դրամարկղային մեքենային ամրացված կապարակն իքները ստորագրված և կնքված են: Սակայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմունք ձևավորելու համար Վերաքննիչ դատարանը չի պարզել, թե երբ, ինչ հանգամանքներում և ով է կապարակն քվել հսկիչ-դրամարկղային մեքենան:

Վերաքննիչ դատարանը, ինչպես նաև Դատարանը վերոգրյալի մասով չեն վերլուծել Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշմամբ հաստատված հանգամանքները, ինչի հետևանքով 20.08.2009 թվականի հայտարարությունը վերաբերելի, հետևաբար թույլատրելի ապացույց չեն համարել և այն վիճարկվող ակտի իրավաչափության ստուգման հիմքում չեն դրել՝ չպարզելով այն հանգամանքները, թե առանց համապատասխան հայտարարություն ներկայացնելու 21.06.2009 թվականին ինչ հիմքով է հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակն քվել, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանն ինչ նպատակով է 20.08.2009 թվականին հայտարարություն ներկայացրել արդեն իսկ 21.06.2009 թվականին կապարակն քված հսկիչ-դրամարկղային մեքենան կրկին կապարակն քվելու համար: Այսինքն՝ ինչպես Վերաքննիչ դատարանը, այնպես էլ Դատարանը

---

նը սույն գործի քննությունը չեն իրականացրել Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշմամբ արձանագրված թերությունները ճշտելու և վերացնելու ուղղությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Տեսչության հայցը բավարարել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Տեսչության պետի 15.05.2009 թվականի թիվ 2311343 հանձնարարագրի հիման վրա անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և դրանց շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 4**):

2) Նշված ստուգման արդյունքում Տեսչությունը 31.07.2009 թվականին կազմել է թիվ 2311343 ակտը, որով արձանագրվել է, որ Վայքի Ջերմուկի խճուղի թիվ 15 հասցեի հարևանությամբ գտնվող անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանին պատկանող առևտրի կետից 28.07.2009 թվականին՝ ժամը 17:52-ին, իրականացվել է 8.000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ զույգ տղամարդու կոշիկի գնում: Վաճառողը տրամադրել է հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն: Միաժամանակ պարզվել է, որ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի խանութում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենան ՀՀ Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնի կողմից կապարակնքված չէ (**հատոր 1-ին, գ.թ. 5-7**):

3) Տեսչության պետի 03.09.2009 թվականի «Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ» թիվ 106558 որոշմամբ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածով ենթարկվել է 15.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի (**հատոր 1-ին, գ.թ. 10**):

4) Անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանը Տեսչության պետին հասցեագրված 19.05.2009 թվականի հայտարարությամբ խնդրել է թույլտվություն՝ Վայքի Ջերմուկի խճուղի թիվ 14 հասցեում գտնվող հսկիչ-դրամարկղային մեքենան վերանորոգելու համար և պարտավորվել է մինչև դրա վերանորոգումը դադարեցնել առևտրի կետի գործունեությունը (**հատոր 1-ին, գ.թ. 78**):

5) Անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանը Տեսչության պետին հասցեագրված 20.08.2009 թվականի հայտարարությամբ հայտնել է, որ Վայքի Ջերմուկի խճուղի թիվ 14 հասցեում գտնվող հսկիչ-դրամարկղային մեքենան տարել է վերանորոգման, այն վերանորոգված է և գտնվում է սարքին վիճակում, ուստի խնդրել է նշված հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքել (**հատոր 1-ին, գ.թ. 79**):

6) Գործում առկա երկու լուսանկարից երկուսն է, որ որպես դրանցում պատկերված հսկիչ-դրամարկղային մեքենայի կապարակնքելու ամսաթիվ նշված է 21.06.2009 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 80-81**):

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից, և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.*

- 1) ստորադաս դասարանում գործի նոր քննությունը վերադաս դասարանի որոշման հիման վրա՝ վերադաս դասարանի կողմից սահմանված ծավալով իրականացնելը,  
 2) հաշվիչ-դրամարկղային մեքենաների վերանորոգման փաստի հաստատումը վիճելի հարաբերության առաջացման պահին գործող իրավակարգավորման համապետքաբար:

1) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի:** Ոչ վերաբերելի ապացույցն ակթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **ստորադաս դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վերադաս դատարանի որոշման հիման վրա՝ վերադաս դատարանի սահմանած ծավալով:**

Սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի նոր քննության ժամանակ կողմերը չեն կարող ներկայացնել նոր ապացույցներ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի նոր քննության ժամանակ դատարանը կարող է մատնանշել ապացուցման ենթակա նոր փաստ և պահանջել ներկայացնելու դրա հետ կապված նոր ապացույցներ:

Վերոնշյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ վարչական դատավարությունում գործի նոր քննության ծավալը պայմանավորված է վերադաս դատական ատյանի կայացրած որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով: Վերջիններս ընդգծում են այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է իրականացվի գործի քննությունը դատական ակտի բեկանումից հետո: Այդ դատողությունների և եզրահանգումների բնույթը չի կարող լինել սահմանափակված միայն դատավարական իրավունքի կամ միայն կույթական իրավունքի նորմերի կիրառման շրջանակով: Բողոքի ցանկացած հիմքի և դրանում ներառված ցանկացած փաստարկի վերաբերյալ դատարանի եզրահանգումները կարող են պայմանավորել գործի նոր քննության սահմանները: Այս առումով Վճռաբեկ դատարանը չի տեսնում որևէ առանձնահատկություն այն հարցի հետ կապված, թե արդյոք նույն կանոնն է գործում այն դեպքերում, երբ բողոքաբերը բարձրացրել է ապացույցի վերաբերելիության հարց: Եթե դատական ակտի բեկանումը վերադաս դատական ատյանն իրականացրել է այն հաշվով, որ նշված ապացույցը ներառվի գնահատման ենթակա մյուս ապացույցների կազմում, ապա գործի քննությունը պետք է իրականացվի այդ սահմաններում:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ վերոնշյալ կառուցակարգի համապետքաբար է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 3-րդ մասով դատարանի հայեցողական լիազորության սահմանումն այն հարցում, որ գործի նոր քննության ժամանակ դատարանը կարող է մատնանշել ապացուցման ենթակա նոր փաստ և պահանջել ներկայացնելու դրա հետ կապված նոր ապացույցներ: Նշված լիազորությունը չի կարող գործել ինքնուրույնաբար և ըստ էության կիրառելի է այն դեպքում, երբ այդ լիազորությամբ անհրաժեշտ է ապահովել գործի քննությունը վերադաս դատական ատյանի որոշմամբ նշված սահմաններում:

---

Հետևաբար, եթե վերադաս դատական ատյանում բարձրացված հարցի վերաբերյալ դատարանը ելել է որոշակի հետևության և դրանով պայմանավորել գործի նոր քննության ծավալը, ապա ստորադաս դատական ատյանում գործի նոր քննությունը պետք է իրականացվի նույն ծավալի շրջանակներում (նույն սահմաններում):

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, 01.07.2011 թվականի որոշմամբ բեկանելով ՀՀ վարչական դատարանի 31.05.2010 թվականի վճիռը և գործն ուղարկելով նույն դատարան՝ նոր քննության, պատճառաբանել է, որ ՀՀ վարչական դատարանը, 31.05.2010 թվականի վճռով հաստատված համարելով այն փաստը, որ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի կողմից շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենայի վրա առկա երկու կապարակները հարկային մարմնի կողմից դրվել են դեռևս 21.06.2009 թվականին, անտեսել է, որ հսկիչ-դրամարկղային մեքենայի կապարակնքման ամսաթվի հետ կապված առկա է հակասություն, իսկ նշված ամսաթվի պարզումը սույն վեճի լուծման համար ունի էական նշանակություն:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործում առկա երկու լուսանկարից երևում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքվել է 21.06.2009 թվականին, սակայն 20.08.2009 թվականի հայտարարությամբ էլ իր հերթին հաստատվում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքելու պահանջը ներկայացվել է միայն 20.08.2009 թվականին, որպիսի փաստն էլ հաստատվում է Տեսչության 31.07.2009 թվականի թիվ 2311343 ակտով, որում որպես խախտման ամսաթիվ է արձանագրված 28.07.2009 թվականը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործն անհրաժեշտ է ուղարկել նոր քննության, քանի որ Դատարանի հետևությունն այն մասին, որ հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքվել է 21.06.2009 թվականին, իսկ 20.08.2009 թվականի հայտարարությամբ պահանջված գործողությունն այդպես էլ չի կատարվել, չի կարող նշված ապացույցների միջև հակասությունների պայմաններում համարվել հաստատված:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը 01.07.2011 թվականի որոշմամբ 20.08.2009 թվականի հայտարարությունը դիտել է որպես վերաբերելի ապացույց, և դրա հիման վրա սահմանել է գործի նոր քննության ծավալ՝ գործում առկա լուսանկարների և նշված հայտարարության միջև առկա հակասության գնահատում և պարզում (վկայակոչված ապացույցների միջև առկա հակասությունների հաղթահարում):

Գործի նոր քննության ընթացքում Դատարանը հայցը մերժելու, իսկ հակընդդեմ հայցը բավարարելու հիմքում դրել է պատճառաբանությունն այն մասին, որ սույն գործում առկա լուսանկարներից երևում է, որ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանին պատկանող հսկիչ-դրամարկղային մեքենայի վրա առկա է «21.06.2009թ.» ամսաթվով, «33200262» գրանցման համարով, Տեսչության պետի ստորագրությամբ և Տեսչության կնիքով կնքված կապարակնիք, որը ստուգման պահին առկա է եղել հսկիչ-դրամարկղային մեքենայի վրա, իսկ ինչ վերաբերում է անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի կողմից ներկայացված հայտարարությանը, որով վերջինս խնդրել է կապարակնքել իր հսկիչ-դրամարկղային մեքենան, ապա այն սույն վեճի համար էական նշանակություն չունի, քանի որ վիճարկվող ակտը կազմվել է 31.07.2009 թվականին, և բացի այդ, եթե նույնիսկ հսկիչ-դրամարկղային մեքենան եղել է անսարք վիճակում, և այն ենթարկվել է վերանորոգման, ապա դա տեղի է ունեցել վիճարկվող ակտի կայացումից հետո:

Միաժամանակ գործի նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի մոտ ստուգման ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենան կապարակնքված է եղել 21.06.2009 թվականին, այսինքն՝ թիվ 2311343 ակտի կայացման օրը՝ 31.07.2009 թվականին, վերջինս ունեցել է կապարակնքված հսկիչ-դրամարկղային մեքենա:



Ինչ վերաբերում է անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի կողմից ներկայացված 20.08.2009 թվականի հայտարարությանը, որով վերջինս խնդրել է կապարակնքել իր հսկիչ-դրամարկղային մեքենան, ապա այդ մասով Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի այն եզրահանգումը, որ նշված հայտարարությունը սույն վեճի համար էական նշանակություն չունի, քանի որ թիվ 2311343 ակտը կազմվել է 31.07.2009 թվականին, և որ տվյալ իրավիճակում վերաբերելի և թույլատրելի են համարվում այն ապացույցները, որոնք նախորդած կլինեն ակտի կայացմանը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները սույն գործի նոր քննությունը նշված ապացույցների հետազոտման և գնահատման մասով չեն իրականացրել Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշման հիման վրա՝ վերջինիս սահմանած ծավալով և անտեսել են այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանը 20.08.2009 թվականի հայտարարությունն արդեն իսկ համարել է սույն գործին վերաբերելի, հետևաբար նաև թույլատրելի և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց, ինչի արդյունքում ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածով սահմանված գործի նոր քննության սահմանների խախտում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ինչպես նաև Դատարանը, սույն գործով վերաբերելի և թույլատրելի համարելով այն ապացույցները, որոնք նախորդած կլինեն վիճարկվող ակտի կայացմանը, խախտել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի դրույթները, որոնց ուժով որևէ ապացույց որպես վերաբերելի դիտելու համար դրա ձեռքբերման ժամանակահատվածը չունի նշանակություն, այլ այն գնահատվում է բացառապես վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյության հավանականության տեսանկյունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները գործի նոր քննությունը չեն իրականացրել Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշմամբ սահմանված ծավալով՝ թույլ տալով դատավարական իրավունքի նորմի այնպիսի խախտում, որն ազդել է գործի ելքի վրա:

2) Վիճելի իրավահարաբերության ծագման (վիճելի ակտը կազմելու) պահին գործող խմբագրությամբ ՀՀ Կառավարության 26.08.2004 թվականի թիվ 1325-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման» կանոնների 13-րդ կետով սահմանված է, որ կազմակերպությունը (այն է՝ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը) վարում է ՀԴՄ-ի և նրա հանգույցների՝ բոլոր տեսակի խախտումների, կենտրոնում կատարվող նորոգումների և կազմակերպությունում կատարվող տեխնիկական սպասարկման (որոնք նախատեսված են տվյալ մոդելի ՀԴՄ-ի շահագործման կանոններով) մասին տվյալների գրանցման գիրք՝ համաձայն N 2 ձևի: Գրանցման գրքի էջերը համարակալվում և թելակարվում են կազմակերպության կողմից: Գիրքը կնքվում և համարակալվում է հարկային տեսչության կողմից: Կազմակերպություններն այդ տվյալները յուրաքանչյուր եռամսյակ, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, ներկայացնում են ՀԴՄ-ի գրանցման վայրի հարկային տեսչություն:

Նույն կանոնների 14-րդ կետով սահմանված է, որ կենտրոնը (այն է՝ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնողը) իր կողմից կատարված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների գծով վարում է հաշվառում այդ նպատակով բացված գրքում (N 3 ձև): Այդ գրքի էջերը համարակալվում և թելակարվում են սպասարկող կենտրոնի կողմից: Գիրքը կնքվում և համարակալվում է հարկային տեսչության կողմից: Կենտրոնները յուրաքանչյուր սպասարկվող և նորոգվող ՀԴՄ-ի նորոգման (տեխնիկական սպասարկման) աշխատանքների ավարտից անմիջապես հետո ՀԴՄ-ի գրանցման

---

վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տեղեկանք տվյալ ՀԴՄ-ի վրա կատարված սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

Կենտրոնները յուրաքանչյուր եռամսյակի համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից սահմանված կարգով և ժամկետում տեղեկություններ են ներկայացնում իրենց կողմից իրականացված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով դրանց գործարկման, տեխնիկական սպասարկման, ինչպես նաև նորոգման համար սահմանված էր հստակ ընթացակարգ: Մասնավորապես՝ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր էին վարել հսկիչ-դրամարկղային մեքենայի և դրա հանգույցների՝ բոլոր տեսակի խախտումների տեխնիկական սպասարկում, ինչպես նաև նորոգում իրականացնող կենտրոնում կատարվող նորոգումների և իրենց մոտ կատարվող տեխնիկական սպասարկման մասին տվյալների գրանցման գիրք, որպիսի գիրքը կնքվում և համարակալվում էր հարկային տեսչության կողմից, ապա նաև իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր եռամսյակ այդ տվյալները պարտավոր էին նաև ներկայացնել հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման վայրի հարկային տեսչություն: Միաժամանակ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոններն իրենց կողմից կատարված տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների գծով պարտավոր էին վարել հաշվառում, և յուրաքանչյուր սպասարկվող և նորոգվող հսկիչ-դրամարկղային մեքենայի նորոգման (տեխնիկական սպասարկման) աշխատանքների ավարտից անմիջապես հետո դրա գրանցման վայրի հարկային տեսչություն ներկայացնել տեղեկանք՝ կատարված սպասարկման և նորոգման աշխատանքների մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված կանոններով սահմանված ընթացակարգի վերաբերյալ տվյալ դեպքում որևէ քննություն չի իրականացվել և այդ մասով ապացույցներ ձեռք չեն բերվել այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշմամբ մատնանշված լուսանկարների և հայտարարության միջև առկա հակասության հաղթահարման տեսանկյունից վերոգրյալը կարող էր ունենալ էական նշանակություն: Մասնավորապես՝ անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի և նորոգում իրականացնող կենտրոնի կողմից վարվող գրքերով, ինչպես նաև վերջինիս կողմից հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման վայրի հարկային տեսչություն ներկայացված տեղեկանքով կարող էին պարզվել դրա նորոգմանը վերաբերող տվյալներ, այդ թվում՝ նաև՝ ժամկետների մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներով արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացումը թեև դատարանի իրավունքն է, սակայն դատարանի այդ իրավունքը սահմանափակված է նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից (յրե՛ս՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պեպարական եկամուտների կումիլիտի Արաբկիրի հարկային տեսչության հայցն ընդդեմ «Ջորջ ընդ Բրանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը սույն գործի նոր քննության ընթացքում Վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշմամբ մատնանշված լուսանկարների և հայտարարության միջև առկա հակասության պայմաններում և այն հաղթահարելու համար պարտավոր էր գործի փաստերը պարզել ի պաշտոնե, և այդ գործընթացում ձեռնարկել ողջամիտ միջոցներ, մասնավորապես՝ Դատարանը կարող էր կողմերից պահանջել ներկայացնել հսկիչ-դրամարկղային մեքենայի նորոգման կանոններով սահմանված ընթացակարգին վերաբերող ապացույցներ (անհատ ձեռնարկատեր Արթուր Հովսեփյանի և նորոգում իրականացնող կենտրոնի կողմից վարվող գրքեր, վերջինիս կողմից Տեսչություն ներկայացված տեղեկանք և այլն), որն էլ Դատարանին հնարավորություն կտար բացահայտելու հսկիչ-դրամարկղային մեքենայի կապարակնքման իրական ժամանակահատվածը, ինչը, սակայն, Դատարանը չի արել:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ սույն գործը կրկին անհրաժեշտ է ուղարկել նոր քննության, քանի որ վկայակոչված ապացույցների միջև առկա հակասությունները պարզված չլինելու պայմաններում հնարավոր չէ ի պաշտոնե ստուգել վարչական ակտի իրավաչափությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 13.03.2013 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ սպորտագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ սպորտագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1956/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Հ. Բեդկյան

Ա. Բարսյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1956/05/11  
2013թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի դեկտեմբերի 26-ին  
դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ քաղաքաշինության նախարարության վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.07.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Լևոն Ղոչիկյանի ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն), երրորդ անձինք Անահիտ Զակյանի, Արմեն, Թերմինես և Հերմինես Ղոչիկյանների՝ վարչական ակտը, դրա հիման վրա տրված քաղվածքը մասնակիորեն անվավեր ճանաչելու և հաշվառման վերցնելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Լևոն Ղոչիկյանը պահանջել է անվավեր ճանաչել Ադետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների՝ (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի 23.02.2011 թվականի ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացած արտագնա նիստի թիվ 2 որոշման թիվ 2 արձանագրությունը և դրա հիման վրա տրված քաղվածքը, որով Լևոն Ղոչիկյանի ընտանիքը չի ընդգրկվել ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակա-

րանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տներից բնակելի տուն ստացողների ցուցակում և պարտավորեցնել Նախարարությանն ընդունելու որոշում ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում Լևոն Ղոչիկյանի ընտանիքը հաշվառման վերցնելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ք. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 20.02.2013 թվականի վճռով վարչական գործի վարույթը վարչական ակտի հիման վրա տրված քաղվածքն անվավեր ճանաչելու պահանջի մատով կարճվել է, Լևոն Ղոչիկյանի հայցն ընդդեմ Նախարարության, երրորդ անձանց Անահիտ Զանյանի, Արմեն, Թերմինե և Հերմինե Ղոչիկյանների՝ վարչական ակտը, դրա հիման վրա տրված քաղվածքը մասնակիորեն անվավեր ճանաչելու և հաշվառման վերցնելու վերաբերյալ որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի 23.02.2011 թվականի թիվ 2 արձանագրության թիվ 4 հավելվածի 1-ին կետը, իսկ մնացած մատով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.07.2013 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.02.2013 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հասարակարկված կարգի 2-րդ և 11-րդ կետերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարունակում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Սպիտակ» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանքով չի հիմնավորվում այն փաստը, որ Լևոն Ղոչիկյանի ընտանիքը երկրաշարժի պահին ունեցել է բնակարան, քանի որ նույն ընկերության մեկ այլ տեղեկանքի համաձայն հիմնավորվում է, որ շենքի շինարարական աշխատանքները երկրաշարժի պահին դեռևս ավարտական փուլում էին, և Լևոն Ղոչիկյանի ընտանիքը պայմանագրային կարգով ունեցել է ընդամենը բնակարանի ամրացման թերթիկ, այսինքն՝ որևէ կերպ չի հիմնավորվում հայցվորի կողմից սեփականության իրավունքով բնակարան ունենալու փաստը: Մինչև 01.01.1999 թվականը գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ բնակարանի կամ բնակելի տան նկատմամբ իրավունքը ծագում է պատգամավորների շրջանային, քաղաքային կամ գյուղական խորհրդի գործադիր կոմիտեում գրանցվելու պահից, հետևաբար նշված ժամանակահատվածում բնակարանի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթուղթ կարող էր հանդիսանալ կատարված գրանցումը հավաստող փաստաթուղթը, մինչդեռ Լևոն Ղոչիկյանի կողմից նման փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.07.2013 թվականի որոշումը:

---

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի գյուղապետին հասցեագրված 18.11.2008 թվականի դիմումով Լևոն Ղոչիկյանը հայտնել է, որ երկրաշարժի ժամանակ քանդվել է իր տունը, և խնդրել է իրեն ընդգրկել պետական աջակցությամբ կատարվող անհատական շինարարության ծրագրերի հերթացուցակում (**հատոր 1-ին, գ.թ. 60**):

2) Բնակարանային պայմանների ստուգման ակտի, ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետարանի կողմից տրված տեղեկանքի և տնային տնտեսության անդամների ցուցակների համաձայն՝ Լևոն Ղոչիկյանի ընտանիքը ժամանակավոր բնակվում է Մեծ Պարնի գյուղում գտնվող վագոն-տնակում, որը պատկանում է Լևոն Ղոչիկյանին: Տվյալ բնակելի տարածությունում բնակվում են Լևոն Ղոչիկյանը, Ասահիտ Զանյանը, Արմեն, Թերմինե և Հերմինե Ղոչիկյանները (**հատոր 1-ին, գ.թ. 61, 64, 66**):

3) «Սպիտակ-1» ԲԲԸ-ի կողմից 06.02.2006 թվականին տրված թիվ 31 տեղեկանքի համաձայն՝ Լևոն Ղոչիկյանը 1988 թվականին «Սպիտակ-1» ԲԲԸ-ի (նախկին «Սպիտակ Միջտնտշին») կողմից կառուցված Սպիտակ քաղաքի Թորոսյան թիվ 5 շենքից ստացել է երեքսենյականոց բնակարան (**հատոր 1-ին, գ.թ. 63**):

4) «Սպիտակ-1» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ «Սպիտակ-1» ԲԲԸ-ն 1988 թվականին գործող միջտնտեսային շինարարական կազմակերպության իրավահաջորդն է: Այդ ձեռնարկությունը 1987-1988 թվականներին Սպիտակ քաղաքի Թորոսյան թիվ 5 հասցեում տնտեսաշվարկային եղանակով իրականացնում էր հիսուն բնակարանանոց բնակելի շենքի շինարարություն, որն այդ պահին գտնվում էր ավարտական փուլում: Ձեռնարկության աշխատակից Լևոն Ղոչիկյանը պայմանագրային կարգով ունեցել է բնակարանի ամրացման թերթիկ (**հատոր 1-ին, գ.թ. 62**):

5) Բնակարանային պայմանների ստուգման 18.11.2008 թվականի ակտի համաձայն՝ Լևոն Ղոչիկյանն ընտանիքի չորս անդամների հետ միասին բնակվում է Մեծ Պարնի գյուղում՝ վագոն-տնակում, որը շարքից դուրս է եկել և պիտանի չէ բնակվելու (**հատոր 1-ին, գ.թ. 61**):

6) ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնիի գյուղապետարանի կողմից 16.12.2008 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ հայցվոր Լևոն Ղոչիկյանը 1988 թվականին երկրաշարժից կորցրած տան փոխարեն որպես փոխհատուցում բնակարան չի ստացել (**հատոր 1-ին, գ.թ. 65**):

7) «Սպիտակ-1» ԲԲԸ-ի տնօրենի կողմից 09.11.2012 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Լևոն Ղոչիկյանը 1988 թվականին «Սպիտակ-1» ԲԲԸ-ի (նախկին «Սպիտակ Միջտնտշին») կողմից կառուցված Սպիտակ քաղաքի Թորոսյան թիվ 5 հասցեի բնակելի շենքից ստացել է երեքսենյականոց բնակարան: Մեկ այլ տեղեկանքով նշվել էր, որ Թորոսյան թիվ 5 հասցեի շենքը 1988 թվականին գտնվել է ավարտական փուլում: Նշված տեղեկանքի մասին մանրամասնվում է, որ ավարտական փուլ ասելով՝ նկատի է առնվել այն, որ Սպիտակ քաղաքի Թորոսյան թիվ 5 հասցեի բնակելի շենքը 1988 թվականի դեկտեմբերի 07-ի դրությամբ ամբողջովին կառուցված, ավարտված էր, բնակարաններն ամրացման թերթիկներով հատկացվել էին աշխատակիցներին, որոնցից մեկն էլ հատկացվել էր Լևոն Ղոչիկյանին, բնակիչներն արդեն իրենց գույքերով բնակվում էին իրենց բնակարաններում: «Սպիտակ Միջտնտշին» կազմակերպությունը բնակարանների բաշխման վերաբերյալ փաստաթղթերը հանձնել էր Սպիտակի քաղխորհրդի գործկոմ՝ բնակիչների անվամբ օրդերներ դուրս գրելու համար: Սակայն 1988 թվականի դեկտեմբերի 07-ի երկրաշարժի հետևանքով նշված շենքի օրդերները դուրս չեն գրվել և բնակիչներին չեն հատկացվել: Ուստի, նախկին տեղեկանքում նշված «այդ պահին Թորոսյան թիվ 5 շենքը գտնվում էր ավարտական փուլում» արտահայտությամբ նկատի է ունեցվել միայն այն հանգամանքը,

որ օրդերները չէին հանձնվել բնակիչներին (**հատոր 2-րդ, գ.թ. 75**):

8) Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 23-ին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքում կայացած արտագնա նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ և 11-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1402-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում չընդգրկել մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթների համաձայն 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ համայնքի ղեկավարի կողմից հաստատված բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում հաշվառված 59 ընտանիքների, որոնցից է նաև Լևոն Ղոչիկյանի ընտանիքը՝ հաշվառված հինգ անձով՝ ինքը, կինը, երեք երեխաները, երեքսենյականոց բնակելի տուն ստանալու համար: Առկա է «Սպիտակ-1» ԲԲԸ-ի կողմից տրված տեղեկանք՝ «Սպիտակ-1 Միջտնտշին» ձեռնարկության կողմից կառուցված Թորոսյան փողոցի թիվ 5 շենքից Լևոն Ղոչիկյանի ընտանիքի՝ երեքսենյականոց բնակարան ստանալու մասին: Սակայն նշված տեղեկանքով չի հիմնավորվում երկրաշարժի պահին բնակարան ունենալու փաստը, քանի որ նույն ընկերության մեկ այլ տեղեկանքի համաձայն՝ շենքի շինարարական աշխատանքները երկրաշարժի պահին գտնվել են դեռևս ավարտական փուլում, և Լևոն Ղոչիկյանը պայմանագրային կարգով ունեցել է բնակարանի ամրացման թերթիկ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե արդյո՞ք պայմանագրային կարգով բնակարանի ամրացման թերթիկի առկայությունը կարող է դիտվել որպես 1988 թվականի դեկտեմբերի 07-ի երկրաշարժի պահին բնակարան ունենալու փաստը համապատասխանաբար ասպացույց:*

ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» թիվ 1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության» կարգի (այսուհետ՝ Կարգ) ընդհանուր դրույթների 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով սահմանվում են աղետի գոտու գյուղական բնակավայրերում պետական աջակցության միջոցով իրականացվող

---

բնակարանային ապահովման ծրագրերի (այսուհետ՝ բնակարանային ապահովման ծրագիր) շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային ապահովության առաջնահերթության որոշման չափանիշները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և տվյալ բնակավայրում հաշվառված ու մշտական բնակություն հաստատած (այդ թվում՝ երկրաշարժից հետո աղետի գոտու այլ բնակավայրերից տվյալ բնակավայր մշտական բնակության տեղափոխված) այն անձինք ու նրանց ընտանիքի անդամները, որոնց բնակելի տները երկրաշարժի հետևանքով քանդվել կամ 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն ենթակա են քանդման:

Կարգի 6-րդ կետը սահմանում է, որ անձը դիմումին կից ներկայացնում է՝

1) ընտանիքի անդամների անձնագրերի (անչափահաս անդամների՝ ծննդյան վկայականների) պատճենները.

2) ամուսնալուծության դեպքում՝ ամուսնալուծության) վկայականների պատճենները.

3) 1988 թվականի դեկտեմբերի 07-ի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև տուն ունենալու մասին քաղվածք՝ համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին տուն ունենալու փաստը.

4) ընտանիքի մահացած անդամների մահվան վկայականների պատճենները.

5) անավարտ շինարարության բնակելի տան և տնամերձ հողամասի սեփականության վկայականի պատճենները.

6) անապահովության համակարգում ընդգրկվածության և ընտանիքի անապահովության մեծության բալային ցուցանիշի մասին տեղեկանք:

Կարգի 9.1-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկելու համար համայնքի ղեկավարը հիմք է ընդունում տվյալ համայնքի ավագանու որոշումը՝ 1988 թվականի դեկտեմբերի 07-ի դրությամբ ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

Կարգի 11-րդ կետի համաձայն՝ դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձինք, ովքեր՝

1) ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն՝ բացառությամբ նախորդ տարիներին պետական միջոցների հաշվին առանց վարկային միջոցների ներգրավմամբ շինարարությունը սկսած անավարտ շինարարության բնակելի տների.

2) նախորդ տարիներին իրականացված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում օգտվել են բնակարանային պայմանների բարելավման համար իրենց իրավունքից.

3) 2004 թվականի հունվարի 01-ից հետո օտարել են բնակարան (բնակելի տուն), որի հետևանքով արհեստականորեն վատթարացրել են իրենց բնակարանային պայմանները.

4) երկրաշարժից հետո հրաժարվել են բնակարանի (բնակելի տան) ժառանգությունից կամ ժառանգության բացման օրվանից սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացրել բնակարանի (բնակելի տան) ժառանգման իրավունքի վկայական ստանալու համար.



5) սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա բնակելի տան դիմաց նախկին Հայխնայբանկում բացված իրենց ավանդային հաշիվներին փոխանցված փոխհատուցման միջոցներով կառուցել են բնակելի տուն:

6) չեն ներկայացրել նույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև 9.1-ին կետի համաձայն անհրաժեշտ փաստաթղթեր:

7) ներկայացրել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Կարգի վերոնշյալ կետերի վերլուծությունից հետևում է, որ Կարգով նախատեսված է բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում աղետի գոտու գյուղական բնակավայրերում **երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած** բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների հաշվառման, նրանց հաշվառումից հանելու և բնակարանային առաջնահերթության որոշման չափանիշները: **Կարգով սահմանված է, որ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու** իրավունքը ծագում է Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր մինչև երկրաշարժը՝ 07.12.1988 թվականը, ունեցել են բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է կամ ենթակա է քանդման՝ 15.12.2008 թվականի դրությամբ բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտացված կազմակերպության կողմից տրված եզրակացության համաձայն:

**Կարգի համապատասխան դրույթներով սահմանված է, որ բնակարանային** պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիները դիմումներին կից պարտավոր են ներկայացնել 07.12.1988 թվականի դրությամբ ընտանիքի կազմի, ինչպես նաև բնակելի տուն ունենալու մասին ապացույցներ. քաղվածք՝ համապատասխան բնակավայրի տնտեսությունների հաշվառման գրքից, դրա բացակայության դեպքում՝ արխիվային տեղեկանք և (կամ) այլ փաստաթղթեր, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը: Նշված փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության դեպքում՝ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում ընդգրկվելու համար համայնքի ղեկավարը հիմք է ընդունում տվյալ համայնքի ավագանու որոշումը՝ 07.12.1988 թվականի դրությամբ ընտանիքի կազմի և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին: Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով քաղաքացիների դիմումների քննության արդյունքներով մերժվում են այն անձանց դիմումները, ովքեր չեն ներկայացրել Կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև 9.1-ին կետով պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը: Այսինքն՝ Կարգի վերոնշյալ դրույթներին համապատասխան այն փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում է երկրաշարժի պահին բնակելի տուն ունենալու փաստը:

Շախկինում գործող ՀՀ բնակարանային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.07.1983 թվականին, ուժը կորցրել է 26.11.2005 թվականին) 49-րդ հոդվածի համաձայն՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տանը բնակելի տարածություն հատկացնելու վերաբերյալ որոշման հիման վրա պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային, ավանային, գյուղական խորհրդի գործադիր կոմիտեն քաղաքացուն տալիս է օրդեր, որը հատկացված բնակելի տարածությունն զբաղեցնելու միակ հիմքն է: Օրդերը կարող է տրվել միմիայն ազատ, մեկուսացված բնակելի տարածության համար: Օրդերի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը:

Շախկինում գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1965 թվականին, ուժը կորցրել է 01.01.1999 թվականին) 299-րդ հոդվածի համաձայն՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանից օգտվելն իրականացվում է բնակարանի վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում է վարձատուի՝ բնակարանային-շահագործման կազմակերպության (իսկ այդպիսին չլինելու դեպ-

---

քում՝ համապատասխան ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության) և վարձակալ քաղաքացու միջև, որի անունով տրված է օրդերը:

Վկայակոչված հողվածների վերլուծությունից հետևում է, որ բնակելի տարածությունը զբաղեցնելու միակ հիմքը հանդիսանում էր օրդերը: Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանից օգտվելն իրականացվում է բնակարանի վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում է վարձատուի և վարձակալ քաղաքացու միջև, որի անունով տրված է օրդերը: Օրդերը կարող է տրվել միմիայն ազատ, մեկուսացված բնակելի տարածության համար: Այսպիսով օրդերն իր էությունը հանդիսանում է իրավահաստատող փաստաթուղթ, համաձայն որի՝ իրականացվում է ազատ բնակելի տարածության բնակեցումը կոնկրետ անհատի և (կամ) նրա ընտանիքի անդամների կողմից, և որի հիման վրա անձի հետ, ում անունով տրվել է օրդերը, կնքվում է բնակելի տարածության վարձակալության պայմանագիր: Այսինքն՝ օրդերը փաստացի հավաստում է տվյալ բնակելի տարածության նկատմամբ քաղաքացու օգտագործման իրավունքի ծագման պահը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լևոն Ղուչիկյանը 1983 թվականից աշխատել է Սպիտակ քաղաքի «Սպիտակ Միջտնտշին» ձեռնարկությունում և բնակվել է Սպիտակ քաղաքում, իսկ երկրաշարժից հետո տեղափոխվել է Մեծ Պարնի գյուղ: Սույն գործում առկա տեղեկանքների համաձայն՝ «Սպիտակ Միջտնտշին» ձեռնարկությունը 1987-1988 թվականներին Սպիտակ քաղաքի Թորոսյան թիվ 5 հասցեում տնտեսաշարժային եղանակով իրականացնում էր հիսուն բնակարանանոց բնակելի շենքի շինարարություն, որն այդ պահին գտնվում էր ավարտական փուլում: Ձեռնարկության աշխատակից Լևոն Ղուչիկյանը պայմանագրային կարգով ունեցել է բնակարանի ամրացման թերթիկ: Այնուհետև վերը նշված ձեռնարկության իրավահաջորդի մեկ այլ տեղեկանքով նշվել է, որ ավարտական փուլ ասելով՝ նկատի է առնվել այն, որ բնակելի շենքը 07.12.1988 թվականի դրությամբ ամբողջովին կառուցված, ավարտված էր, իսկ բնակարաններն ամրացման թերթիկներով հատկացվել էին աշխատակիցներին, որոնցից մեկն էլ հատկացվել էր Լևոն Ղուչիկյանին, սակայն երկրաշարժի հետևանքով նշված շենքի օրդերները դուրս չեն գրվել և բնակիչներին չեն հատկացվել, ուստի ավարտական փուլ արտահայտությամբ նկատի է ունեցվել միայն այն հանգամանքը, որ օրդերները չէին հանձնվել բնակիչներին: Հետևաբար, Լևոն Ղուչիկյանը 07.12.1988 թվականի դրությամբ չի ունեցել իրեն հատկացված բնակարանի օրդերը:

Վերաբնիչ դատարանի որոշման հիմքում դրվել են այն պատճառաբանությունները, որ գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ Լևոն Ղուչիկյանի կողմից պահպանվել են ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված Կարգի պահանջները, իսկ մերժման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ գործում առկա է տեղեկանք՝ «Սպիտակ Միջտնտշին» ձեռնարկության կողմից կառուցված Թորոսյան փողոցի թիվ 5 շենքից Լևոն Ղուչիկյանի ընտանիքին երեքսենյականոց բնակարան հատկացնելու մասին, սակայն նշված տեղեկանքով չի հիմնավորվում երկրաշարժի պահին բնակարան ունենալու փաստը, քանի որ նույն ընկերության մեկ այլ տեղեկանքի համաձայն՝ շենքի շինարարական աշխատանքները երկրաշարժի պահին գտնվել են դեռևս ավարտական փուլում, և Լևոն Ղուչիկյանը պայմանագրային կարգով ունեցել է բնակարանի ամրացման թերթիկ: Այսինքն՝ վարչական մարմնի պնդմամբ գործում առկա են երկու՝ իրարամերժ տեղեկանքներ, ինչի պայմաններում դրա բացասական հետևանքները կրել է հայցվորը: Տվյալ դեպքում վարչական մարմինն էր պարտավոր ապացուցել հայցվորի՝ երկրաշարժի ժամանակ բնակարան չունենալու հանգամանքը, ինչը փաստորեն պատասխանողի կողմից չի արվել, հետևաբար հայցվորի կողմից ներկայացված ապացույցները պետք է գնահատվեին հավաստի, քանի որ գործում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ այդ ապացույցները վարչական մարմնի կողմից համարվել են անթույլատրելի կամ որևէ կերպ հերքվել են:

Բացի այդ, վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռներից ակնհայտ է դառնում, որ «սեփականություն» կարող է համարվել ոչ միայն փաստաթղթերով հիմնավորվող սեփականության իրավունքը, այլ դրա նկատմամբ «ողջամիտ ակնկալիքը», այսինքն՝ պաշտպանության ենթակա է ոչ միայն արդեն իսկ գոյություն ունեցող սեփականության իրավունքը, այլ դրա նկատմամբ ողջամիտ ակնկալիքը: Սույն գործում առկա փաստաթղթերով՝ հատկապես «Սպիտակ-1» ԲԲԸ-ի տնօրենի կողմից 09.11.2012 թվականին տրված տեղեկանքով, հաստատվում է, որ հայցվորն ունեցել է սեփականության իրավունք, իսկ օրդեր չունենալու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս հայցվորի:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ իրավահարաբերության պահին գործող օրենսդրության համաձայն՝ բնակելի տարածությունը զբաղեցնելու միակ հիմքը կարող էր հանդիսանալ օրդերը: Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակարանից օգտվելը պետք իրականացվեր բնակարանի վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում էր վարձատուի և վարձակալ քաղաքացու միջև, որի անունով տրված էր օրդերը: Տվյալ դեպքում Լևոն Ղոչիկյանի կողմից դատարան ներկայացված տեղեկանքներով հաստատվում է այն հանգամանքը, որ 07.12.1988 թվականի դրությամբ բնակարաններն ամրացման թերթիկներով հատկացվել էին աշխատակիցներին, սակայն բնակարանների օրդերները դուրս չեն գրվել և բնակիչներին չեն հատկացվել: Հետևաբար, Լևոն Ղոչիկյանը 07.12.1988 թվականի դրությամբ չի ունեցել իրեն հատկացվելիք բնակարանի օրդերը:

Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանություններին, որ «Սպիտակ-1» ԲԲԸ-ի տնօրենի կողմից 09.11.2012 թվականին տրված տեղեկանքով հաստատվում է այն հանգամանքը, որ հայցվորն ունեցել է սեփականության իրավունք, իսկ օրդեր չունենալու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս հայցվորի այն պարագայում, երբ հայցվորն ունեցել է ողջամիտ ակնկալիք, որ օրդերը ևս կստանա, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Լևոն Ղոչիկյանը կարող էր «ողջամիտ ակնկալիք» ունենալ, որ կստանա իրեն ամրացված բնակարանի օրդերը, սակայն այդ «ողջամիտ ակնկալիքը» վերաբերում էր մինչև 07.12.1988 թվականը բնակարան ունենալուն և օգտագործելուն, իսկ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Կարգի դրույթներով սահմանված է, որ բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու իրավունքից կարող են օգտվել միայն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր մինչև երկրաշարժը՝ 07.12.1988 թվականն արդեն իսկ ունեցել են բնակելի տուն, որը քանդվել է կամ ենթակա է քանդման: Քննարկվող պարագայում մինչև երկրաշարժը բնակելի տուն ունենալու պայմանը ենթադրում է քաղաքացուն տրամադրված օրդերի պարտադիր առկայություն, որը հատկացված բնակելի տարածությունն զբաղեցնելու միակ հիմքն է:

Հետևաբար աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման հարցերով հանձնաժողովի 23.02.2011 թվականի ՀՀ Լոռու մարզի Կաթնաշոր համայնքում կայացած արտագնա նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 2-րդ և 11-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 26.11.2009 թվականի թիվ 1402-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակելի տներից տուն

---

ստացողների ցուցակում չընդգրկել մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած Կարգի դրույթների համաձայն 15.12.2008 թվականի դրությամբ համայնքի ղեկավարի կողմից հաստատված բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում հաշվառված Լևոն Ղուչիկյանի ընտանիքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի 23.02.2011 թվականի թիվ 2 արձանագրության թիվ 4 հավելվածի 1-ին կետն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցապահանջը ենթակա է մերժման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.07.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ Լևոն Ղուչիկյանի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության, երրորդ անձինք Անահիտ Չանյանի, Արմեն Ղուչիկյանի, Թերմինե Ղուչիկյանի և Հերմինե Ղուչիկյանի՝ ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատ-

կացման հարցերով հանձնաժողովի 23.02.2011 թվականի թիվ 2 արձանագրության թիվ 4 հավելվածի 1-ին կետն անվավեր ճանաչելու պահանջի մասով, մերժել:

2. Լևոն Ղուչիկյանից հոգուտ ՀՀ քաղաքաշինության նախարարության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումարներ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1346/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/1346/05/10  
2013թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Նազիկ, Սեդա Մելքումյանների, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանների ներկայացուցիչ Գագիկ Պապոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.10.2012 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամվել Մելքոնյանի ընդդեմ ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն), երրորդ անձինք Նազիկ, Սեդա Մելքոնյանների, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ մասնակի՝ Նազիկ, Սեդա Մելքոնյանների, Հասմիկ, Աստղիկ, Հրաչյա, Հրայր Մելքոնյանների մասով, Մաշտոցի շրջադրոհի 02.11.1995 թվականի թիվ 24/187 որոշումը և դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Սամվել Մելքոնյանը պահանջել է Նազիկ, Սեդա Մելքոնյանների, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանների մասով անվավեր ճանաչել Մաշտոցի շրջադրոհի 02.11.1995 թվականի թիվ 24/187 որոշումը և դրա հիման վրա Երևանի

Բաշինջաղյան փողոցի թիվ 174 շենքի 6-րդ բնակարանի նկատմամբ Նազիկ, Սեդա Մելքունյանների, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանների իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 13.07.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2012 թվականի որոշմամբ Դատարանի 13.07.2012 թվականի վճռի դեմ Նազիկ, Սեդա Մելքունյանների, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանների վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.07.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նազիկ, Սեդա Մելքունյանների, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սամվել Մելքունյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 8-րդ, 31-րդ հոդվածները, այսպե՛ս է մեկնաբանել «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 13-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործով ձեռք բերված ապացույցները, ինչի արդյունքում արձանագրել է, որ Նազիկ, Սեդա Մելքունյանները, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանները «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի սեփականաշնորհման սուբյեկտներ են:

Դատարանը գործին է կցել Սամվել Մելքունյանի ստորագրությունը չպարունակող ոչ թե երկու լիազորագրերը, այլ չստորագրված լիազորագրերի տեքստեր և դրա հիման վրա ճանաչել է նախ՝ Վ. Մախմուրյանի, ապա՝ Հասմիկ Մելքունյանի, այնուհետև՝ Մ. Փանոսյանի լիազորություններն այն դեպքում, երբ Դատարանը պետք է մերժեր հայցադիմումի ընդունումը կամ այն վերադարձներ: Մինչդեռ դրանց հիման վրա Դատարանը վճիռ է կայացրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2012 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

## **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանը, հետազոտելով և ճիշտ գնահատելով գործի ապացույցները, իրավացիորեն եկել է այն եզրահանգման, որ Նազիկ, Սեդա Մելքունյանները, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանները չեն հանդիսացել Սամվել Մելքունյանի ընտանիքի անդամներ, նրա հետ միասին չեն բնակվել վիճելի բնակարանում, ինչպես նաև բնակարանի վարձակալի հետ չեն վարել համատեղ տնտեսություն: Հետևաբար Նազիկ, Սեդա Մելքունյանները, Աստղիկ, Հրաչյա, Հրայր, Հասմիկ Մելքոնյանները չեն եղել սեփականաշնորհման սուբյեկտներ, ուստի չէին կարող վիճելի բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերել:

---

---

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հայկական ՍՍՀ պատգամավորների Երևանի Շահումյանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի 05.05.1971 թվականի թիվ 15025 միասնական օրդերի համաձայն՝ Բաշինջաղյան փողոցի թիվ 174 շենքի 6-րդ բնակարանը հատկացվել է Վաղարշակ Մելքումյանին: Նույն օրդերի համաձայն՝ որպես բնակելի տարածության իրավունք ունեցողներ Վաղարշակ Մելքումյանի հետ նշվել են Վարինկա Ադամյանը, Սամվել, Սեդա և Նազիկ Մելքումյանները (**հատոր 1-ին, գ.թ. 50**):

2) 26.08.1995 թվականի «Բնակելի տարածության սեփականաշնորհման մասին» դիմումով, ստորագրված՝ Սամվել, Սեդա, Նազիկ Մելքումյանների, Սահակյանուշ Տիգրանյանի կողմից, խնդրել են Բաշինջաղյան փողոցի թիվ 174 շենքի 6-րդ բնակարանը սեփականաշնորհել որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ սեփականություն: Նույն դիմումով որպես բնակելի տարածությունում բնակվելու իրավունքով վարձակալի՝ Սամվել Մելքումյանի հետ միասին բնակվողներ նշվել են Սահակյանուշ Տիգրանյանը, Սեդա, Նազիկ Մելքումյանները, Սոնա և Հասմիկ Սամվելի Մելքումյանները, Հասմիկ, Աստղիկ, Հրայր, Հրաչյա Մելքոնյանները (**հատոր 1-ին, գ.թ. 49**):

3) Սույն գործում առկա չէ վիճարկվող՝ Մաշտոցի շրջխորհրդի 02.11.1995 թվականի թիվ 24/187 որոշումը:

4) Սույն գործում առկա չէ նաև վիճարկվող՝ Մաշտոցի շրջխորհրդի 02.11.1995 թվականի թիվ 24/187 որոշումից ծագած սեփականության իրավունքի գրանցումը հավաստող ապացույց:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից, և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի շրջանակներում կարևորվում է երեք իրավական խնդիր՝

*ա) Վճռաբեկ դատարանի որոշումների՝ ժամանակի ընթացքում գործողության խնդրի հարակեցումը,*

*բ) վիճարկվող վարչական ակտի՝ գործում բացակայության պայմաններում դրա իրավաչափության սրուգումը,*

*գ) վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և դրանում ներառված փաստարկներին անդրադառնալը:*

ա) ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթից բխում է իրավունքի զարգացմանը նպաստելը, որն ամրագրված է ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում: Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը ենթադրում է ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության հարցում միասնական դիրքորոշման ձևավորում՝ մասնավորապես, իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում, որն իրավաչափորեն կարող է հանգեցնել Վճռաբեկ դատարանի



կողմից արդեն իսկ մեկնաբանված նորմի նոր մեկնաբանման: Ման իրավիճակներում կարևորվում է Վճռաբեկ դատարանի որոշման՝ որպես իրավական ակտի, ժամանակի ընթացքում գործողության, ինչպես նաև նախորդ որոշումներում արտահայտած դիրքորոշումների կիրառելիության հարցերի հստակեցումը:

Իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթի նպատակից և բովանդակությամբ տրամաբանորեն բխում է, որ իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար: Այլապես կիմաստագրկվի իրավունքի զարգացմանը նպաստելու գործառույթը:

Բնակարանի վարձակալ չհանդիսացող անձի՝ սեփականաշնորհման արդյունքում սեփականության իրավունք ձեռք բերելու իրավական խնդրին և դրա համար անհրաժեշտ վավերապայմաններին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր նախկին որոշումներում: Մասնավորապես, թիվ ի./4729/05/08 վարչական գործով իր 30.04.2009 թվականի որոշման մեջ Վճռաբեկ դատարանն ամրագրել է. «Բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք 3 պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այն է՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը, ինչպես նաև բնակարանի վարձակալի ընտանիքի անդամ լինելը»:

Հետագայում թիվ ի./0476/05/08 վարչական գործով իր 25.06.2010 թվականի որոշման մեջ Վճռաբեկ դատարանը, կաշկանդված չլինելով իր նախկին որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով և գործելով իրավունքի զարգացմանը նպաստելու իր գործառույթի շրջանակներում, ամրագրել է. «Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Այդպիսիք են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը»: Իր այս դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը շարունակաբար վերահաստատել է թիվ ՎԴ/4925/05/09, թիվ ՎԴ-2/0127/05/10, թիվ ԵԱՔԴ-2487/02/10, թիվ ՎԴ/4957/05/09 գործերով կայացված որոշումներում՝ կատարելով հղում վերը հիշատակված թիվ ի./0476/05/08 վարչական գործով 25.06.2010 թվականի որոշմանը:

Հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառումն ապահովող նշանակության որոշումների՝ ժամանակի մեջ գործողության խնդրի վերաբերյալ վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, ինչպես նաև ելնելով իրավական որոշակիության և կանխատեսելիության ապահովման անհրաժեշտությունից, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով դատարանների համար պարտադիր է ի./0476/05/08 վարչական գործով իր 25.06.2010 թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ բնակարանի վարձակալ չհանդիսացող անձը սեփականաշնորհման արդյունքում կարող է ձեռք բերել սեփականության իրավունք պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, որպիսիք են **Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելը, տվյալ բնակտարածությունում գրանցում ունենալը:**

Մինչդեռ քննության առարկա վարչական վեճը լուծելիս և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը հիմք են ընդունել թիվ ի./4729/05/08 վարչական գործով իր 30.04.2009

---

թվականի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ քննության առարկա դարձնելով պատասխանողների՝ հայցվորի ընտանիքի անդամ լինելու հարցը՝ անտեսելով Վճռաբեկ դատարանի թիվ Ն/0476/05/08 վարչական գործով 25.06.2010 թվականի որոշմամբ իրավունքի զարգացմանն ուղղված դիրքորոշումները:

բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի առարկան է միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու կամ փոփոխելու պահանջը: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը: Հետևաբար, առանց վիճարկվող ակտի հետազոտման ոչ միայն անհնարին է ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջի կատարումը, այլև հայցի նյութական օբյեկտի՝ վիճարկվող վարչական ակտի բացակայությունն ընդհանրապես բացառում է այդ ակտի իրավաչափությունը գործում առկա ապացույցների միջոցով գնահատելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործում առկա չէ վիճարկվող վարչական ակտը, այն է՝ Մաշտոցի շրջխորհրդի 02.11.1995 թվականի թիվ 24/187 որոշումը, ինչպես նաև նշված որոշումից ծագած և լիազոր պետական մարմնի կողմից կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը հավաստող ապացույցը: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թե՛ Դատարանը և թե՛ Վերաքննիչ դատարանը չեն իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ թույլ տալով դատավարական նորմի խախտում:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում ամրագրված՝ փաստերն ի պաշտոնե պարզելու վարչադատավարական սկզբունքի բովանդակության վերաբերյալ իր նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ Դատարանն այդ սկզբունքի պահանջներին համապատասխան պարտավոր էր միջոցներ ձեռնարկել վիճարկվող ակտի առկայությունը գործում ապահովելու ուղղությամբ:

գ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Նույն օրենսգրքի 117.14-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշվում են (...) վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմը ոչ միայն նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը կաշկանդված է վերաքննիչ բողոքի հիմքերով, այլ նաև նշանակում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ ի պաշտոնե (ex officio) նշված հիմքերի շրջանակներում իրականացնել քննություն, իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտել ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածի վերը նշված դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե դատարանները սահմանափակվեն զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ

բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադատնան այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ: Այդուհանդերձ, հիշատակված դրույթների նման մեկնաբանումը չի նշանակում բողոքի յուրաքանչյուր հիմքում ներառված ցանկացած փաստարկի գնահատում և վերլուծում: Բողոքը քննող դատարանը բողոքի հիմքերում ներառված փաստարկներին պետք է անդրադառնա այն հաշվով, որ նախ դրանք լինեն վերաբերելի բողոքի հիմքերին, և այդ փաստարկներն ունենան ազդեցություն բողոքի հիմքը կամ հիմքերը հիմնավորված համարելու տեսանկյունից:

Վերոնշյալ դիրքորոշման հաշվառմամբ անդրադառնալով վճռաբեկ բողոքի հիմքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ի թիվս այլ հիմքերի՝ վերաքննիչ բողոքում որպես Դատարանի ակտը բեկանելու հիմք նշված է նաև այն հանգամանքը, որ սկզբնապես հայցվոր Ս. Մելքումյանի շահերը վարչական դատարանում ներկայացրած Վ. Մախմուրյանին Ս. Մելքումյանի, Սահանուշ և Սոնա Տիգրանյանների կողմից տրված՝ 06.05.2010 թվականի Իսպանիայի Հանրապետության նոտարի հաստատած թիվ 389 լիազորագրի և դրա թարգմանության պատճեններում բացակայում է հայցվոր Սամվել Մելքումյանի ստորագրությունը: Ըստ վերաքննիչ բողոք բերողի՝ հետագայում հայցվորի կողմից Դատարանում իր շահերը ներկայացնելու համար Հասմիկ Մելքումյանին տրված և 01.02.2012 թվականի Իսպանիայի Հանրապետության նոտարի հաստատած թիվ 346 լիազորագիրը ևս ստորագրված չէ հայցվորի կողմից: Բողոք բերողի պնդմամբ «փաստորեն գործին մասնակից է դարձվել պատշաճ դատավարական լիազորություններ չունեցող անձ և այդ լիազորությունները չունեցող անձի միջնորդությունների ու ներկայացրած ապացույցների հիման վրա, ըստ էության գոյություն չունեցող հայցվորի օգտին կայացվել է դատական ակտ, այսինքն՝ թույլ է տրվել դատական սխալ...»:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի որոշման մեջ բացակայում են բողոքի նշված հիմքի վերաբերյալ պատճառաբանությունները: Վերաքննիչ բողոքի նշված հիմքին որևէ անդրադարձ չկատարելով՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ թեև սույն որոշմամբ արձանագրվել են թե՛ Դատարանի և թե՛ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումներ, այդուհանդերձ սույն որոշման 4-րդ կետում նշված հանգամանքների պարզումը հնարավոր է տալ միայն առաջին ատյանի դատարանում գործի նոր քննության ընթացքում: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15- 118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 25.10.2012 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ-6/0076/05/12**  
**2013թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ-6/0076/05/12  
Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան  
Դատավորներ՝ Ա. Առաքելյան  
Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2013 թվականի մայիսի 24-ին

դռնբաց դատական նիստում, քննելով Անուշ Իսախիրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.01.2013 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի (այսուհետ՝ Ծառայություն) ընդդեմ Անուշ Իսախիրյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է Անուշ Իսախիրյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ալավերդյան) (այսուհետ՝ Դատարան) 14.08.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով Անուշ Իսախիրյանի նկատմամբ նշանակել 50.000 ՀՀ դրամ տուգանք:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.01.2013 թվականի որոշմամբ Դատարանի 14.08.2012 թվականի վճռի դեմ Անուշ Իսախի-

---

րյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.08.2012 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անուշ Իսպիրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել Վարչական իրավաստիպումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հեղուկալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Անուշ Իսպիրյանի կողմից օրինական ուժի մեջ մտած վճռի կատարմանը խոչընդոտող որևէ գործողություն չի կատարվել: Ավելին, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ երեխայի հետ տեսակցության ժամի խախտումը պայմանավորված է եղել երեխայի քնած լինելու հանգամանքով, որի պատճառով տեսակցությունը տեղի է ունեցել նախատեսված ժամի խախտումով:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 08.01.2013 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 31.03.2011 թվականի վճռով թույլատրվել է հայցվորներ Խաչիկ Շամիրի Իսպիրյանին, Սուսանա Սուրենի Իսպիրյանին, Դավիթ և Տիգրան Իսպիրյաններին շփվել երեխայի՝ Խաչիկ Գագիկի Իսպիրյանի (ծնված 20.04.2010 թվականին) հետ՝ սահմանելով տեսակցության հետևյալ կարգը՝ յուրաքանչյուր ամսվա 22-ին, 25-ին և 28-ին օրական 4 ժամ տևողությամբ, ժամը 14.00-ից մինչև 18.00-ն (**հատոր 1-ին, գ.թ. 9-15**):

2) ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 31.03.2011 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա 18.05.2011 թվականին տրվել է թիվ ԼԿԹ-3-502 կատարողական թերթը (**հատոր 1-ին, գ.թ. 7-8**):

3) 01.09.2011 թվականի «երեխայի տեսակցության մասին» արձանագրության համաձայն՝ ... սույն թվականի օգոստոսի 22-ին և 25-ին չկայացած տեսակցությունները կողմերի համաձայնությամբ տեղափոխվել են սեպտեմբերի 1-ին և 5-ին: ... սեպտեմբերի 1-ին տեսակցությունը կատարվեց Ստեփանավանի «Անահիտ» հանգստյան համալիրում, մասնակցում և շփվում էին երեխայի հետ տատը՝ Սուսանա Իսպիրյանը, Դավիթ Իսպիրյանը և մայրը՝ Անուշ Իսպիրյանը (**հատոր 1-ին, գ.թ. 20**):

4) 05.09.2011 թվականի արձանագրության համաձայն՝ ... երեխայի տեսակցությունը տեղի ունեցավ ժամը 11.00-ին, ք. Ստեփանավան, «Անահիտ» հանգստյան համալիրում: Տեսակցությանը մասնակցում էին երեխայի տատը՝ Սուսանա Իսպիրյանը, հորեղբայրը՝ Դավիթ Իսպիրյանը և մայրը՝ Անուշ Իսպիրյանը: Տեսակցությունն անցավ նորմալ պայմաններում (**հատոր 1-ին, գ.թ. 22**):

5) 25.09.2011 թվականի արձանագրության համաձայն՝ ... երեխայի տեսակցությունը տեղի ունեցավ ժամը 10.00-ին, ք. Ստեփանավան, «Անահիտ» հանգստյան համալիրում: Տեսակցությանը մասնակցում էին երեխայի պապը՝ Իսաչիկ Իսախրյանը, տատը՝ Սուսաննա Իսախրյանը, հորեղբայրը՝ Տիգրան Իսախրյանը և մայրը՝ Անուշ Իսախրյանը: Տեսակցությունն անցավ նորմալ պայմաններում (**հատոր 1-ին, գ.թ. 23**):

6) 28.09.2011 թվականի արձանագրության համաձայն՝ ... երեխայի տեսակցությունը տեղի ունեցավ ժամը 16.00-ին, ք. Ստեփանավան, «Անահիտ» հանգստյան համալիրում: Տեսակցությանը մասնակցում էին երեխայի պապը՝ Իսաչիկ Իսախրյանը, տատը՝ Սուսաննա Իսախրյանը, հորեղբայրը՝ Տիգրան Իսախրյանը և մայրը՝ Անուշ Իսախրյանը: Տեսակցությունն անցավ բարեկիրթ և նորմալ պայմաններում (**հատոր 1-ին, գ.թ. 24**):

7) 28.10.2011 թվականի արձանագրության համաձայն՝ ... երեխայի տեսակցությունը տեղի ունեցավ Ստեփանավան քաղաքի վերջնամասում գտնվող հյուրանոցում: Տեսակցությանը մասնակցում էին Անուշ Իսախրյանը, Տիգրան Իսախրյանը, պապը՝ Իսաչիկ Իսախրյանը: Երեխայի հետ շփումն անցավ նորմալ, բողոքներ և առարկություններ չեղան: Տեսակցությունը կողմերի համաձայնությամբ տեղի ունեցավ ժամը 16.00-ից մինչև 20.00-ն (**հատոր 1-ին, գ.թ. 25**):

8) 28.12.2011 թվականի արձանագրության համաձայն՝ ... տեսակցությունը տեղի ունեցավ ժամը 16.00-ին, կողմերի համաձայնությամբ՝ երեխայի քնի ռեժիմը չխախտելու պատճառով: Տեսակցությանը մասնակցում էին տատը՝ Սուսաննա Իսախրյանը, հորեղբայրը՝ Դավիթ Իսախրյանը, մայրը՝ Անուշ Իսախրյանը: Տեսակցությունն անցավ նորմալ (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

9) 22.01.2012 թվականի արձանագրության համաձայն՝ կատարողական թերթի պահանջը կատարելու նպատակով հարկադիր կատարող Արտակ Տեր-Ստեփանյանն այցելել է կատարողական թերթում նշված Անուշ Իսախրյանի հասցե: Այցելությամբ պարզվել է, որ երեխան՝ Իսաչիկ Իսախրյանը, քնած է մոտավորապես ժամը 13.00-ից: Երեխան արթնացել է ժամը 15.03-ին: Անուշ Իսախրյանը հայտնել է, որ պահանջատերերը կարող են գալ իր տուն, և տեսակցությունը տեղի ունենա երեխայի և մոր սենյակում: Տեսակցությունն անցել է ժամը 15.20-ից մինչև ժամը 18.00-ն՝ նորմալ վիճակում: Մեկ ժամ 20 րոպե ուշացման մասին Անուշ Իսախրյանը նախօրոք չի հայտնել և չի համաձայնեցրել ո՛չ պահանջատերերի, ո՛չ էլ Ծառայության հետ, ինչը հանգեցրել է որոշման ոչ պատշաճ կատարմանը, այն է՝ հանդիպումը կայացել է ոչ թե 4 ժամ տևողությամբ, այլ ընդամենը 2 ժամ 40 րոպե (**հատոր 1-ին, գ.թ. 30-32**):

10) 25.01.2012 թվականի արձանագրության համաձայն՝ հարկադիր կատարող Արտակ Տեր-Ստեփանյանը 24.01.2012 թվականին հեռախոսագրույց է ունեցել երեխայի մայր Անուշ Իսախրյանի հետ հերթական տեսակցությունը կազմակերպելու մասին: Անուշ Իսախրյանը հայտնել է, որ երեխան ունի բարձր ջերմություն, պառկած է և, եթե հաջորդ օրն էլ ջերմություն ունենա, պահանջատերերը կարող են գալ իր և երեխայի սենյակում առանձին պայմաններում տեսակցությունն անցկացնելու: 2012 թվականի հունվարի 25-ի առավոտյան հարկադիր կատարողը կրկին հեռախոսագրույց է ունեցել Անուշ Իսախրյանի հետ, որի ժամանակ նա հայտնել է, որ երեխան դեռևս չի ապաքինվել: Նշված հանգամանքների իսկությունը պարզելու նպատակով հարկադիր կատարողն այցելել է պարտապանի բնակության վայր, որտեղ տեսել է, որ երեխան քնած է: Անուշ Իսախրյանը խնդրել է, որ պահանջատերերը երեխային գան տեսակցելու իր տանը, ինչը լավ կանդրադառնա երեխայի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 33-35**):

---

11) «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին» Ծառայության 27.01.2012 թվականի որոշմամբ հարկադիր կատարող Արտակ Տեր-Ստեփանյանը որոշել է պարտավորեցնել պարտապան Անուշ Իսպիրյանին չխոչընդոտել դատական ակտի կատարմանը և յուրաքանչյուր ամսի 22-ին, 25-ին և 28-ին օրական 4 ժամ տևողությամբ, ժամը 14.00-ից մինչև 18.00-ն ապահովել երեխայի տեսակցությունը (**հատոր 1-ին, գ.թ. 36**):

12) «Երեխայի տեսակցության համար պարտապանի հասցե այցելելու մասին» 28.01.2012 թվականի արձանագրության համաձայն՝ այցելությամբ պարզվեց, որ երեխան՝ Իսաչիկ Գագիկի Իսպիրյանը, քնած էր: Երեխան արթնացավ ժամը 16.12-ին: Երեխայի քնելու (քնած լինելու) պատճառով տեսակցությունը տեղի ունեցավ ժամը 16.28-ին: Տեսակցությունը ժամը 16.28-ից մինչև 18.00-ն անցավ նորմալ վիճակում: Պահանջատերերի առաջարկն այն մասին, որ հանդիպման ժամանակը երկարացվի պարտապանի ուշացման ժամանակին համապատասխան՝ ներժվեց պարտապանի կողմից: Պարտապանն իր ուշացման մասին նախօրոք չէր տեղեկացրել ոչ պահանջատերերին և ոչ էլ Ծառայությանը և նման վարքագծով խոչընդոտեց դատարանի որոշման պատշաճ կատարմանը (**հատոր 1-ին, գ.թ. 38-40**):

13) 03.02.2012 թվականի «Վարչական իրավախախտում կատարելու մասին» արձանագրության համաձայն՝ Անուշ Իսպիրյանը թույլ է տվել վարչական իրավախախտում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածի հատկանիշներով (**հատոր 1-ին, գ.թ. 5**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է այն իրավական խնդրին, թե արդյո՞ք երեխայի քնած լինելու հետևանքով տեսակցությունը ուշ սկսելու կամ տեղի չունենալու դեպքում պարտապանի գործողություններում առկա է երեխայի տեսակցության կարգ սահմանող օրինական ուժի մեջ մտնող դատական ակտի չկատարելու դիտարկություն:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթում պետք է նշվի դատական ակտի եզրափակիչ մասը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարաժամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողի պար-



տականությունն է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան, իսկ հարկադիր կատարման, այսինքն՝ կատարողական գործողություններ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, որում նշվում է դատական ակտի եզրափակիչ մասը: Ընդ որում, հարկադիր կատարողը կրում է իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ և ժամանակին կատարելու պարտավորություն: Այսինքն՝ նշվածից հետևում է, որ դատական ակտի հարկադիր կատարման ժամանակ թե՛ հարկադիր կատարողը և թե՛ կատարողական վարույթի մասնակիցներն իրավասու չեն միմյանց ներկայացնելու այնպիսի պահանջներ, որոնք նախատեսված չեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթում: Հակառակ դեպքում նման գործողությունները կհանգեցնեն կատարողական թերթի պահանջների կատարման եղանակի կամ կարգի փոփոխման: Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է դատական ակտի կատարումը հետաձգելու, տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու հնարավորություն:

Դա նախատեսված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն՝ կատարողական թերթ տված դատարանը պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով իրավունք ունի հետաձգելու կամ տարաժամկետելու դատական ակտի կատարումը, փոփոխելու դրա կատարման եղանակն ու կարգը: Այսինքն՝ դատական ակտի կատարումը հետաձգելու, տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու իրավունքը վերապահված է կատարողական թերթ տված դատարանին և, քանի դեռ առկա չէ դատական ակտի կատարումը հետաձգելու, տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոփոխելու մասին դատարանի համապատասխան որոշում, թե՛ հարկադիր կատարողը և թե՛ կատարողական վարույթի մասնակիցները պարտավոր են իրականացնելու միայն այնպիսի գործողություններ, որոնք բխում են կատարողական թերթի պահանջներից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթը համապարտադիր ուժ է տալիս օրինական ուժ ստացած բոլոր ակտերին՝ նշելով սուբյեկտների այն շրջանակը, ում վրա տարածվում է օրինական ուժ ստացած դատական ակտի գործողությունը, ինչպես նաև այն տարածքը, որտեղ պարտադիր կատարման է ենթակա օրինական ուժ ստացած դատական ակտը: Սուբյեկտների նկատմամբ դատական ակտերի պարտադիրության աստիճանի առումով հարկ է ընդգծել, որ այն առաջնային նշանակություն ունի վիճելի հարաբերության կողմերի համար, քանի որ դատական ակտով նախ և առաջ վեճի կողմերի համար են սահմանվում որոշակի գործողություններ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու պարտադիր պահանջներ:

Նշված պահանջների կատարման բացակայության փաստը պահանջատեր հանդիսացող կողմին հնարավորություն է տալիս հարկադիր կատարման միջոցով հասնել իր պահանջի փաստացի բավարարմանը կամ, որ նույնն է՝ պարտադրել մյուս կողմին կատարելու օրինական ուժ ստացած դատական ակտի պահանջները: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապա-

---

հովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը: Այս առումով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ամրագրած հետևյալ իրավական դիրքորոշումը. «6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնար երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնային անկատար: Դժվար կլիներ պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով» (տե՛ս ի թիվս այլոց, Հորնսթին ընդդեմ Հունաստանի, թիվ 18357/91 գանգատով ՄԻԵԴ 1997 թվականի մարտի 19-ի վճիռ, կետ 40):

Այդուհանդերձ հնարավոր են իրավիճակներ, երբ նույնիսկ հարկադիր կատարման փուլում գտնվող դատական ակտի կատարումը փաստացի տեղի չունենա պարտապանի գործողությունների կամ անգործության հետևանքով: Նման պարագայում վրա է հասնում վարչաիրավական պատասխանատվությունը: Մասնավորապես, դատական ակտերի կատարման ապահովմանն է ուղղված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված նորմը: Վերջինս իրավական երաշխիք է ստեղծում դատական ակտերի կատարման, հետևաբար նաև արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման համար:

Հիշատակված հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

Վճռաբեկ դատարանը, իրավակիրառ պրակտիկայում միասնական մեկնաբանման անհրաժեշտությամբ պայմանավորված, հարկ է համարում նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով ամրագրված զանցակազմի կիրառելիությունը պայմանավորված է դատական ակտի հարկադիր կատարման վարույթի հարուցված լինելով: Նման դիրքորոշման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), իսկ վարչական դատարանի իրավասությանը վերապահված հարցերով (...) նույն օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմինը (պաշտոնատար անձը):

Նշված իրավակարագավորումը համադրելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված դրույթի հետ՝ Վճռաբեկ դա-

տարանը գտնում է, որ քանի դեռ չկա հարուցված կատարողական վարույթ, չի կարող գործել դատական ակտի հարկադիր կատարման մեխանիզմը, ուստի հարկադիր կատարողի մոտ չեն կարող առաջանալ լիազորություններ դատական ակտի կատարմանը դիտավորությամբ խոչընդոտելու դեպքում ներգործության միջոցներ կիրառելու համար: Այլ կերպ՝ քանի դեռ չկա հարուցված կատարողական վարույթ, պարտապանը չի կարող ենթարկվել պատասխանատվության: Հետևաբար հիշատակված զանցակազմում նախատեսված ժամկետների հաշվարկը ևս պետք է կատարվի կատարողական վարույթի հարուցումից հետո:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված զանցանքն օբյեկտիվ կողմից դրսևորվում է օրինական ուժի մեջ մտած ցանկացած դատական ակտի պահանջները չկատարելու (գործողությամբ կամ անգործությամբ) ձևով:

Սուբյեկտիվ կողմից նշված զանցանքը կարող է դրսևորվել միայն դիտավորությամբ: Այլ կերպ՝ պարտապանը, ում համար պարտադիր է դատական ակտի կատարումը վերը նշված ժամկետներում, այդ ժամկետների ընթացքում չի կատարում դատական ակտի պահանջները, գիտակցաբար ցուցաբերում է այնպիսի հակաիրավական վարքագիծ, որով ցանկանում է դատական ակտի կատարման խոչընդոտում և գիտակցում կամ գիտակցաբար թույլ է տալիս, որ իր գործողությունները կամ անգործությունը հանգեցնեն նման հետևանքի առաջացմանը: Նշված մեկնաբանությունը բխում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի կանոնակարգումներից:

Նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Նշված իրավադրույթները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված զանցանքի վերաբերյալ արտահայտված դիրքորոշման հետ համադրելու արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձին վարչական պատասխանատվության ենթարկող մարմինը, նախ պետք է հիմնավորի անձի արարքում իրավախախտման առկայությունը, ինչը ենթադրում է ինչպես օբյեկտիվ կողմի, այնպես էլ սուբյեկտիվ կողմի բացահայտումը և ապա քննարկման առարկա դարձնի կատարված իրավախախտման բնույթի, խախտողի անձի, նրա մեղքի աստիճանի, գույքային դրության հետ կապված հարցերը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները և դրանց հաշվառմամբ նշանակի տույժ:

Վերաքննիչ դատարանի որոշման մեջ դիտավորության հարցի առնչությամբ մասնավորապես ասված է. «... բողոքով դատաքննության և վերոշարադրյալ վերլուծության արդյունքում Վերաքննիչ դատարանը հաստատված է համարում, որ տվյալ դեպքում, եթե նույնիսկ առկա չէ Անուշ Իսախիրյանի ուղղակի դիտավորությունը, ապա առկա է առնվազն նրա անուղղակի դիտավորությունը ...»: Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը հիմնվում է բացառապես՝ որոշման մեջ նշված հետևյալ փաստարկման վրա. «Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դեռևս երկու տարեկան չդարձած երեխայի քնած լինելը ոչ բոլոր դեպքերում կարող է խոչընդոտ գնահատվել նրա տեղափոխմանը: Բացի այդ, ստանձնելով պարտապանի պարտականությունները՝ Անուշ Իսախիրյանը պարտավոր էր կազմակերպել գործընթացն այնպես, որ ապահովեր այդ պարտականությունների կատարումը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

---

Ինչպես վերը նշվեց, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.9-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունն առաջանում է անձի կողմից դատական ակտը **դիտավորությամբ** չկատարելու դեպքերում: Այսինքն՝ դատական ակտը չկատարելու, դրա կատարմանը խոչընդոտելու հետ կապված անձի գործողությունները պետք է փոխկապակցված լինեն նույն անձի կողմից դրսևորած դիտավորության, վարքագծի, կանխամտածվածության և այլ հանգամանքների հետ: Ուստի, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք անձի կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելու հիմքում առկա է դիտավորություն, արդյո՞ք տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ, արդյո՞ք նա ենթակա է վարչական պատասխանատվության, կամ արդյո՞ք պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, ինչպես նաև պարզել իրավահարաբերության ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ, որոնք կապահովեն կատարողական վարույթի մասնակիցների՝ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու ազատությունները երաշխավորող պահանջների կատարումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Վերաբերելի ապացույցը թույլատրելի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը վճռի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ընդ որում, գործի լուծման համար **էական նշանակություն ունեցող փաստի** հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Վերոգրյալ դիրքորոշման լույսի ներքո և գործի փաստերի համադրմամբ անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով նախատեսված՝ ժամը 14.00-ին տեսակցությունը սկսելու պայմանը պարտապան Անուշ Իսախյանի կողմից

խախտելը պայմանավորված է եղել բացառապես նրա **մանկահասակ երեխայի քնած լինելու հանգամանքով**: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Անուշ Իսայիրյանի գործողություններում առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը **դիտավորությամբ** չկատարելուն ուղղված այնպիսի վարքագիծ, որով կհիմնավորվեր դատական ակտը դիտավորությամբ չկատարելու հանգամանքը: Վարչական պատասխանատվության ենթարկելիս դատարանը բավարար ապացույցների համակցության արդյունքում պետք է գար այն եզրահանգման, որ Անուշ Իսայիրյանը երեխային քնեցնելու միջոցով յուրաքանչյուր անգամ ցանկացել է խուսափել դատարանի վճռի կատարումից: Այն, որ վարչական մարմնի կողմից արձանագրվել են երեխայի քնած լինելու արդյունքում տեսակցությունն ուղևակցելու փաստերը, դեռևս չի վկայում այդ հարցում Անուշ Իսայիրյանի դիտավորության առկայության մասին: Դիտավարությունն առկա կարող էր լինել այն դեպքում, երբ հաստատվեին փաստեր, որ Անուշ Իսայիրյանը յուրաքանչյուր անգամ ստեղծել է պայմաններ տեսակցությունը սկսելու ժամին երեխայի քնած լինելու համար՝ գիտակցելով, որ երեխայի քնելու հետևանքով նվազում է տեսակցության սահմանված ժամաքանակը և ցանկանալով այդպիսի հետևանքների վրա հասնելը:

Մինչդեռ, պարտապան Անուշ Իսայիրյանը, ելնելով իր մանկահասակ երեխայի շահերից, ինչպես նաև հաշվի առնելով ազգականների հետ շփվելու երեխայի իրավունքը, բազմիցս առաջարկել է տեսակցությունը կազմակերպել իր և երեխայի բնակության վայրում, ինչը սույն գործի փաստերի շրջանակներում ևս մեկ անգամ հավաստում է, որ պարտապան Անուշ Իսայիրյանի գործողություններում բացակայում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը դիտավորությամբ չկատարելու հանգամանքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

---

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.18-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 08.01.2013 թվականի որոշումը և այն փոփոխել. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի հայցն ընդդեմ Անուշ Իսախրյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին, մերժել:

2. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 3.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար, 8.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարներ:

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնից հոգուտ Անուշ Իսախրյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 44 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 700 օրինակ:

ԷԶԱԴՐՈՒՄ և ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ **Printinfo**  
www.printinfo.am

ՀՀ, Երևան, Ծարուրի 37/1  
հեռ.՝ (374 10) 465 382, 465 385  
Էլ.փոստ՝ info@printinfo.am